Հ. Կ. ԹՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՐ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. К. ТРЯН

РАЗМЕЩЕНИЕ НЕФТЯНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ И ПРОТИВОРЕЧИЕ МЕЖДУ АНГЛО-АМЕРИКАНСКИМИ ИМПЕРИАЛИСТАМИ В СТРАНАХ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1957

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՅՈՒՐՈՒՄ է 1991 թ.

Հ. Կ. ԹՐՅԱՆ

338.4:622.323(72:5)

ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1957

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Ա II
11364

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գլխավոր իմպերիալիստական երկրների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի՝ միջև ստեղծվել է ժամանակավոր «համաձայնություն», որի արտահայտման նմուշներից են ՆԱՏՕ-ն (Ատլանտյան պակտ), նրա ասիական վարիանտ՝ ՍԵԱՏՕ-ն, ՄԵՏՕ-ն (Բաղդադի պակտ), և այլն։ Չնայած դրան, այդ ագրեսիվ բլոկների ընդերքում գոյություն ունեն խոր հակասություններ, որոնք ներկայումս ընդունել են ավելի սուր բնույթ։

Հայտնի է, թե ինչպես առաջին, նույնպես և երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո փոխվեցին կապիտալիստական առանձին երկրների տնտեսական հզորությունն ու քաղաքական և ռազմական ուժը։ Ուժերի փոփոխված այս նոր հարաբերությունը հակասության մեջ մտնելով կապիտալիստական երկրների միջև ազդեցության ոլորտների նախկին բաժանման հետ, սուր պայքար առաջ բերեց իմպերիալիստական պետությունների միջև՝ ազդեցության ոլորտների նոր վերաբաժանման համար։ «Այսպիսի վերաբաժանման փորձի, վերաբաժանման համար մղվող պայքարի մի ուսանելի օրինակ է ներկայացնում նավթարդյունաբերությունը»[1]։ Նավթի տնտեսական դերը, ինչպես խաղաղության, այնպես էլ պատերազմի ժամանակ չափազանց կենսական է։

Կապիտալիստական աշխարհում, նավթային հարստությունները գլխավորապես գտնվում են ԱՄՆ-ում, Կարիբյան շրջանում, Մերձավոր ու Միջին Արևելքում և Ինդոնեզիայում։

Նավթային պաշարներով այդ հարուստ շրջաններից օրեց-օր աճող նշանակություն է ստանում Մերձավոր և Միջին Արևելքը, որի շուրջը իմպերիալիստական պետությունների միջև ծավալվող պայքարը ընդունել է սուր բնույթ։

---

[1] Վ. Ի. Լենին. Երկեր. հատ. 22. Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 328։

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ինչպես և դրանից հետո մի որոշ ժամանակ, անգլիական իմպերիալիզմը Մերձավոր և Միջին Արևելքում հեգեմոն դիրք էր գրավում։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ինչպես ամենուրեք, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքում, ամերիկյան իմպերիալիզմը նվաճեց և ամրապնդեցնում է մինչև այդ բրիտանական դաղութարարների կողմից գրավված դիրքերը։ Այս պայքարի գլխավոր առանցքն է ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետություն ստեղծելու պլանը։ Ինքնին հասկանալի է, որ ամերիկյան իմպերիալիզմի որդեգրած այս քաղաքականությունը չի կարող բողոք և հակամիջոցառումներ առաջ չբերել անգլիական կապիտալի կողմից։ Նշած փաստերը ցույց են տալիս, որ անգլիական և ամերիկյան զանազան ասպարեզներում գործող խոշոր մոնոպոլիստների միջև պայքարը մեծ ծավալ է ընդունել, իսկ նավթային մեծ ընկերությունները կատաղորեն հարձակվում են միմյանց վրա՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթային հարստությունները իրար ձեռքից խլելու համար։ Ակնհայտ է, որ նրանք բնավ չեն կարող հաղթահարել գոյություն ունեցող ու գնալով ավելի խորացող այդ հակասությունները, քանի որ դրանք բխում են մոնոպոլիստական-իմպերիալիստական սիստեմի բուն էությունից։

Մեր այս գրքում նպատակ է դրված տալ նավթի արդյունաբերության տեղադրումը, վեր հանել Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթի պաշարների կարևոր նշանակությունը միջազգային ներկա իրադրության պայմաններում, վերլուծել հիշյալ երկրներում նավթի համար մղվող պայքարի էությունը այս երկու մրցակից «պարտնյորների» միջև, և մերկացնել անգլիական և ամերիկյան իմպերիալիստներին որպես Մերձավոր և Միջին Արևելքի ժողովրդների կողմից մղվող ազգային ազատագրական շարժումների ճնշողներ։ Այս գրքում փորձում ենք նաև պարզել, որ Մերձավոր և Միջին Արևելքի նավթային հարստությունների զավթումը և շահագործումը ամերիկյան և անգլիական իմպերիալիստների կողմից միևնույն ժամանակ մտնում է ՍՍՌՄ և դեմոկրատական երկրների դեմ նոր ագրեսիվ պլանների նախապատրաստման ընդհանուր ծրագրի մեջ։

Մայիս 1956 թ.
Երևան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԻՄԱԿԸ: ՊԱՅՔԱՐ ՆԱՎԹԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կապիտալիստական աշխարհի նավթարդյունաբերությունը ամբողջությամբ վերցրած՝ խոշոր մոնոպոլիստական միավորումների մի տարածուն ցանց է: Ահա թե ինչու չի կարելի անմիջական պատկերացում կազմել մի շրջանի նավթարդյունաբերության մասին, առանց թեկուզ համառոտակի ծանոթություն ունենալու կապիտալիստական աշխարհի նավթարդյունաբերության այն բազմաթիվ փոխադարձ կապերի մասին, որոնց միջոցով նավթային խոշոր մոնոպոլիաներին հաջողվում է տիրապետող դիրք գրավել նավթի թե աղբյուրների նկատմամբ և թե շուկաներում: Տվյալ դեպքում, կապիտալիստական աշխարհի նավթարդյունաբերության մեջ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների դերը լավ հասկանալու համար հարկավոր է մինիմում ծանոթություններ ունենալ կապիտալիստական մյուս նավթարդյունաբերող երկրների մասին:

* * *

Համաշխարհային նավթային մոնոպոլիաները իմպերիալիստական նպատակներով նավթի պաշարների մասին տարածում են ստահոդ լուրեր: ԱՄՆ-ի տերիտորիայում նավթի պաշարների մոտալուտ սպառման վտանգի մասին 1901 թվականին առաջին անգամ «ահազանգեց» Պետական երկրաբանական վարչության պետը: Այնուհետև, երկրորդ անգամ, 1928 թվականին այս մասին աղդարարեց օդային տրանսպորտի դեպարտամենտի քարտուղարը: Այդ առիթով ռենատում դիսկուսիա կազմակերպվեց և որոշում ընդունվեց կառավարության կից ստեղծել հատուկ օրգան, որը պետք է առաջարկու-

թյուններ կազմեր օտար երկրներում նավթային հարստություններ ձեռք բերելու նոր միջոցառումների մասին։ Այդ թվականից սկսած՝ ամերիկյան նավթային իմպերիալիզմը ավելի սուր բնույթ ընդունեց։

ԱՄՆ-ի տերիտորիայում կատարվող հետազոտությունների հետագայում հրապարակված արդյունքները ցույց տվեցին, որ տեղական նավթի պաշարների մոտալուտ սպառման վտանգի մասին եղած ահազանգը դիտումնավոր էր, հետապնդում էր խոշոր մոնոպոլիստների կողմից օտարերկրյա ոլորտներ սեռնելու գործն արդարացնելու նպատակ։ Շատ երկրների ընդերքում, ինչպես ցույց են տալիս երկրաբանական տվյալները, պետք է գտնվեն նավթի պաշարներ։ Նավթային խոշոր մոնոպոլիստները, որոնք ձգտում են համաշխարհային շուկաներում ապահովել իրենց արդյունահանած նավթի համար բարձր գներ, արհեստականորեն սահմանափակում են կապիտալիստական աշխարհի նավթի արդյունահանումը։ Այսպիսով, նավթի պաշարները սահմանափակ լինելու մասին կարծիքը չի համապատասխանում իրականությանը և հանդիսանում է միայն մոնոպոլիստների կողմից տարածված հորինվածքներ։ Այս մասին բուրժուական տնտեսագետ Թ. Ս. Լովրինգին մատնանշում է, որ «...նավթի կապակցությամբ, Ամերիկայի Միացյալ Նահանգների համար հիմնական պրոբլեմը հանդիսանում է, ամենից առաջ, գերարտադրության պրոբլեմը»[1]։ Հատկանշական է, որ նա այսպես է հայտարարում այն ժամանակ, երբ ԱՄՆ-ի ղեկավար շրջաններն իրենց երկրի նավթի պաշարների մոտալուտ սպառման մասին ահազանգում են փաստորեն իրենց ոտնձգություններ Մերձավոր Արևելքում և այլուր արդարացնելու նպատակով։

Ճիշտ է, արդյունահանման ներկա մասշտաբները շարունակվելու դեպքում ԱՄՆ-ի նավթային պաշարները նվազելու են, սակայն, եթե հիմնվենք նույնիսկ 1955 թվականի արդյունահանման մասշտաբի վրա, նրա սեփական տերիտորիայի նավթային պաշարները կարող են մի քանի տասնամյակներ ևս բավարարել։ 1935 թվականի 1739 միլիոն տոննայի դիմաց 1955 թվականին երկրի պաշարները հաշվվում են 4010 միլիոն տոննա, և հետագայում նավթային նոր պաշարներ հայտնաբերվելու բոլոր հավանական տվյալներն էլ կան։ Համաձայն ամերիկյան նավթային մոնոպոլիաների օրգան «Ուորլդ Պետրոլյում»-ի տվյալների պարզվում է, որ 1938 թվականից հետո ԱՄՆ-ում արդյունահանված նավթի ընդհա-

---

[1] T. S. Lovering, Minerals in World Affairs, New York, 1944, p. 166.

նուր քանակը այժմ արդեն գերազանցել է հենց այդ թվականին երկրի ընդհանուր պաշարների ենթադրվող քանակին[1]։ Ուալլաս Է. Պրատտը ԱՄՆ-ի Կոնգրեսում վերջերս (1956 թ. փետրվարին) հանդես գալով հայտնեց, որ գալիք 20 տարվա ընթացքում ամենայն հավանականությամբ ԱՄՆ-ում կհայտնաբերվեն 10-ից 13 միլիարդ տոննայի հասնող նավթի նոր պաշարներ[2]։

Իսկ ի՞նչն է անհանգստացնում ԱՄՆ-ի նավթային մոնոպոլիստներին։ Այն, որ համաշխարհային նավթարդյունաբերության ասպարեզում ԱՄՆ-ի տեսակարար կշիռն ընդունել է վայրէջքի ընթացք, չնայած նրան, որ այս երկրի տարեկան նավթարդյունահանումը վիթխարի չափով աճել է։ Դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին միայն ԱՄՆ-ը արդյունահանում էր կապիտալիստական աշխարհի նավթի 60 տոկոսը, մինչդեռ 1955 թվականի տվյալների համաձայն, այդ տոկոսն արդեն իջել էր 43-ի։ Ընդամենը, եթե ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիաներն իրենց գործունեության ասպարեզը պարփակեն միայն երկրի սահմաններում, ապա չեն կարող ապահովել այն համաշխարհային հեգեմոն դիրքը, որ ունեն այսօր։ Ահա թե ինչու ամերիկյան իմպերիալիզմը այսօր Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում հանդես է գալիս ավելի քան ագրեսիվ քաղաքականությամբ։

«Միջին Արևելքի նավթը,— ասում է Կերմիտ Ռուզվելտը,— ԱՄՆ-ի ներքին պահանջների համար չի օգտագործվում, քանի որ մեր երկիրը այդ նյութը բավարար չափով ստանում է իր ընդերքից»[3]։ Սակայն, նույն հեղինակը մի ուրիշ տեղ նշում է. «...եթե ամերիկյան ընկերությունները չզրաղվեն Միջին Արևելքի նավթով, շուտով ուրիշ երկրների ընկերություններն այդ կանեն, ԱՄՆ-ն էլ թողնելով դուրս»[4]։

Ռուզվելտը տվյալ դեպքում փորձում է պատճառաբանել նավթային մոնոպոլիաների ագրեսիան։ Մոնոպոլիստական կապիտալը չի զարգանում միայն երկրի ներքին շուկաներն իրեն ենթարկելու միջոցով։ Մաքսիմալ շահույթ հետապնդող մոնոպոլիստները նավթի աղբյուրներ են ձեռք բերում նաև օտար երկրներում, և օգտագործում են դրանք նավթի միջազգային շուկան տնօրինելու համար։

---

[1] World Petroleum, October 1954, p. 77.

[2] Ու. Է. Պրատտը Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Նյու. Ջերսիի նախկին վիցե-պրեզիդենտն է։ Այս մասին մանրամասնությունների համար տե՛ս World Petroleum, March, 1956, p. 98.

[3] Kermit Roosevelt, Arabs, Oil and History, New York, 1949, p. 31

[4] Idem, p. 27.

* * *

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Ամերիկայի Միացյալ Նահանգները ամենախոշոր նավթարդյունաբերողներն ու արտահանողներն էին։ Պատերազմից անմիջապես հետո ԱՄՆ-ը սկսեց, ընդհակառակը, մեծ քանակությամբ անմշակ նավթ ներմուծել գլխավորապես Կարիբյան շրջանից։ Այդ տարիներին Կարիբյան շրջանն անմշակ նավթի արտահանության ասպարեզում կապիտալիստական երկրների շարքում առաջին տեղն էր գրավում։ Կարիբյան շրջանից փոքր ինչ հետ էր մնում Մերձավոր և Միջին Արևելքը, որը, սակայն, նավթի արդյունահանման հարաճուն տեմպերի շնորհիվ ներկայումս արդեն գրավում է առաջին տեղը։ Թեև առանձին երկրների շարքում Վենեսուելան դեռևս շարունակում է այս ասպարեզում մնալ առաջին դիրքում։

Նավթի արդյունահանման տեսակետից կապիտալիստական երկրների մեջ ԱՄՆ-ը դեռևս գրավում է առաջին տեղը։ 1955 թվականին կապիտալիստական երկրների արդյունահանված 760 միլիոն տոննա նավթից ԱՄՆ-ի բաժինը կազմում է 357 միլիոն։ Կարիբյան շրջանը 1955 թվականին արդյունահանել է 115 միլիոն տոննա, որից Վենեսուելան առանձին 111 միլիոն և, վերջապես, Մերձավոր Արևելքը այդ նույն թվականին արդյունահանել է 162 միլիոն տոննա[1]։

Ինչ վերաբերում է ՍՍՌՄ-ին, 1955 թվականին 1950 թվականի համեմատությամբ նավթահանումը աճել է 185 տոկոսով։

Հաշվի առնելով տիպիկ տարիները, կապիտալիստական երկրների նավթի արդյունահանումը ներկայացնում է հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 1)։

Այս աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ կապիտալիստական երկրներից ԱՄՆ-ը սկզբից ևեթ նավթարդյունաբերողների շարքում գրավել է առաջին տեղը։

Մինչև 1874 թվականը համաշխարհային նավթարդյունաբերության մեջ ԱՄՆ-ի տեսակարար կշիռը կազմում էր 90 տոկոս։ Սկսած 70-ական թվականների կեսերից, ցարական Ռուսաստանը

---

[1] Սրանք դեռևս նախնական տվյալներն են, որի հետևանքով դանազան աղբյուրների միջև տարբերություններ կան։ Այսպես, օրինակ, անգլիական նավթային մոնոպոլիաների օրգան Petroleum Press Service-ի տվյալներով, 1955 թ. անմշակ նավթի համաշխարհային արդյունահանումը հաշվվում է 760 միլիոն տոննա, մինչդեռ ամերիկյան նավթային մոնոպոլիաների օրգան Petroleum Information Bureau-ի տվյալների համաձայն, այն հաշվվում է 785 միլիոն տոննա։

Աղյուսակ 1

Կապիտալիստական երկրներում նավթարդյունահանումը սկզբից մինչև մեր օրերը ըստ տիպիկ տարիների
(հազար տոննաներով)

Երկրներ	1881 թ.	1891 թ.	1901 թ.	1911 թ.	1914 թ.	1918 թ.	1928 թ.	1930 թ.	1938 թ.	1946 թ.	1955 թ.
ԱՄՆ	3790	7439	9506	30202	36410	48762	123502	123028	166367	237550	357000
Մեքսիկա	—	—	—	1720	3594	8744	6871	5416	5275	6745	13000
Կանադա	38	103	104	40	29	42	85	209	954	1039	16500
Վենեսուելա	—	—	—	—	—	46	14488	18721	25780	51222	111700
Իրան	—	—	—	—	27	89	5884	7178	10737	20114	16000
Իրաք	—	—	—	—	—	—	97	129	4472	4836	33700
Եգիպտոս	—	—	—	3	103	265	252	273	216	1243	1800
Բահրեյն	—	—	—	—	—	—	—	—			
Սաուդական Արաբիա	—	—	—	—	—	—	—	—	1137	1097	1500
Կուվեյտ	—	—	—	—	—	—	—	—	67	8212	47600
Բորնեո	—	—	—	—	—	—	716	672	947	812	54800
Հնդկաստան և Բիրմա	—	—	—	—	—	—	1198	1136	1374	281	5500
Ինդոնեզիա	—	—	550	1668	1565	1751	4400	5717	7853	396	
Ռուսաստան	493	4737	11668	9037	9182	3722			ՍՍՌՄ	288	11411
Ռումինիա	17	67	230	1523	1757	1196	4216	5701	6643	4306	ԺԴՌ
Լեհաստան	39	86	445	1441	882	826	752	672	516	119	ԺԴՌ
Գերմանիա	4	15	43	139	107	37	86	162	599	622	3000
Ֆրանսիա	—	—	—	—	—	50	76	80	85	62	900

հանդես է գալիս որպես համաշխարհային խոշորագույն նավթարդյունաբերողներից մեկը և նույնիսկ 1901 թվականին իր նավթի արդյունահանմամբ գերազանցում է ԱՄՆ-ին, որի հետևանքով վերջինիս տեսակարար կշիռը, այդ նույն թվականին, իջնում է 41 տոկոսի, մինչդեռ Ռուսաստանինը բարձրանում է 51 տոկոսի։

Հետագայում, երբ ԱՄՆ-ի տերիտորիայում նավթային նոր պաշարներ հայտնաբերվեցին, այդ թվում Գոլֆ Կոստի հարուստ պաշարները, նրա տեսակարար կշիռը նորից բարձրացավ և 1910 թվականին կազմեց 64 տոկոս։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, մյուս երկրների նավթի արդյունահանման կրճատման հետևանքով, ԱՄՆ-ի տեսակարար կշիռը բարձրացավ մինչև 72 տոկոսի։ Այդ տարիներին նավթի արդյունահանման նվազումը Եվրոպայում եղել է պատերազմական գործողությունների պատճառով և Ռուսաստանում՝ բոլշևիկյան կռիվների հետևանքով։ Այն թվականներից հետո, երբ Հարավային Ամերիկայում, Մերձավոր և Միջին Արևելքում և մի շարք այլ երկրներում հայտնաբերվեցին նավթի հարուստ պաշարներ, ԱՄՆ-ի նավթահանման տեսակարար կշիռը տարեց տարի նվազեց և 1955 թվականին իջավ 43 տոկոսի[1], թեև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ի նավթարդյունաբերության տեսակարար կշիռը ժամանակավորապես բարձրացել էր, և 1945 թվականին հասել էր 66 տոկոսի։ Այդ տարին ԱՄՆ-ը արդյունահանել էր այնքան նավթ, որ տեղական պահանջները բավարարելուց հետո, հնարավոր էր եղել արտահանել 29 միլիոն տոննա։

ԱՄՆ-ի նավթարդյունաբերության տեսակարար կշիռը կշռաբաշխի իր վայրէջքը, որովհետև ուրիշ երկրներում, այդ թվում Մերձավոր և Միջին Արևելքում կատարվող հետախուզությունների շնորհիվ շարունակ հայտնաբերվում են նավթի նորանոր և հարուստ պաշարներ, մինչդեռ ԱՄՆ-ի ընդերքն, որը համեմատաբար ավելի է հետախուզված, ներկա տվյալներով զուրկ է խոշոր հեռանկարներից, թեև նոր հայտնաբերումների հավանականություններ միշտ էլ կան, սակայն սահմանափակ մասշտաբներով։

ԱՄՆ-ի արդյունահանած նավթի մեծագույն մասն սպառվում է տեղում։ Բայց չի նշանակում, որ նավթի և այլ նավթամթերքների արտահանում ու ներմուծում գոյություն չունի։ Ընդհակառակը, ձգտելով նավթամշակման գործարանների վիթխարի սիստեմի թերբեռնվածության առաջն առնել, ԱՄՆ-ը նավթի խոշոր ներմուծող-

[1] Ուրիշ տվյալների համաձայն 44,1 տոկոս և 44,6 տոկոս, տես World Petroleum, November, 1955, p. 85; Idem. January, 1956. p. 38.

ներից է։ 1954 թվականին ԱՄՆ-ը ներմուծել է 69,29 միլիոն տոննա նավթ։ Ներմուծված նավթը, ինչպես որ այդ պետք է եզրակացնել, համարյա միշտ եղել է անմշակ վիճակում, իսկ ընդհակառակը, արտահանված նավթը եղել է մշակված վիճակում։ Այդ նույն թվականին արտահանվել է 20,86 միլիոն տոննա նավթ, 1945 թվականի 29 միլիոն տոննայի դիմաց։ Այս անկումը հետևանք է այն բանի, որ Մերձավոր և Միջին Արևելքը սկսել է նավթ և նավթամթերք մատակարարել այն շուկաներին, որոնք մի ժամանակ մատակարարվում էին ԱՄՆ-ի կողմից։ Իսկ սա բացատրվում է նրանով, որ Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունաբերության մեջ ներդրված է մեծ մասամբ ամերիկյան կապիտալ։ Ահա թե ինչու ամերիկյան խոշոր մոնոպոլիստները թույլատրում են, որ Արաբիայի և Բահրեյնի նավթը մուտք գործի իրենց նախկին շուկաները։ Դա նրանց համար ապահովում է գերշահույթներ և միաժամանակ հնարավորություն է տալիս ԱՄՆ-ում արդյունահանված հավելյալ նավթից խոշոր պաշարներ ամբարել «ստրատեգիական հումքային ռեսուրսների կուտակման» քաղաքականության համաձայն։

1955 թվականին ԱՄՆ-ի ամբողջ նավթարդյունաբերությունը կենտրոնացած էր 384 ընկերության ձեռքում։ Այդ բոլոր ընկերությունները իրար հետ սերտորեն կապված են մոնոպոլիստական կապերով։ ԱՄՆ-ի նավթարդյունաբերության մեծագույն մասը դասվում է հետևյալ տասը խոշորագույն մոնոպոլիաների հսկողության տակ՝ Ստանդարդ Օյլ օֆ Նյու Ջերզի, Սոկոնի-Վակում Օյլ Կոմպանի, Ստանդարդ Օյլ օֆ Ինդիանա, Տեխաս Կորպորեյշն, Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիա, Գուլֆ Օյլ Կորպորեյշն, Սիտիզ Սերվիս, Շելլ Յունյն Օյլ Կորպորեյշն, Կոնսոլիդեյտեդ Օյլ Կոմպանի և Ֆիլիպս Պետրոլյում Կոմպանի, որոնցից երեքը մտնում են Ստանդարդի 35 ընկերությունների խմբի մեջ։

1945 թվականի 14 միլիարդ դոլլարի դիմաց 1954 թվականին ամերիկյան նավթարդյունաբերության մեջ ներդրված կապիտալը կազմում էր 28 միլիարդ դոլլար[1], որի 54 տոկոսը ներդրված էր հորատման գծով, 17,9 տոկոսը՝ նավթաթորման գծով, իսկ մնացածը՝ տրանսպորտի, վաճառահանման և սրանց հետ կապված այլ ճյուղերի գծով։ Միայն 1954 թվականի ընթացքում կապիտալ ներդրումները կազմել են 4,6 միլիարդ դոլլար։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նավթարդյունահանման հսկայական զարգացման զուգահեռ աճել են նաև նավ-

[1] World Petroleum, June, 1954, p. 39.

թի ու նավթամթերքների սպառումները։ Վերջին տվյալների համաձայն, կապիտալիստական երկրների նավթամթերքների համախառն սպառումները կազմել են 610 միլիոն տոննա, որից միայն ԱՄՆ-ը սպառել է 356 միլիոն տոննա, այլ կերպ ասած ընդհանուրի 58,5 տոկոսը։ Ավտոմոբիլային արանսպորտն սպառել է այդ ընդհանուրի 45 տոկոսը։ Ապա գալիս է Արևմտյան Եվրոպան, որը սպառել է ընդհանուրի 15 տոկոսը, իսկ Մերձավոր և Հեռավոր Արևելքը միասին վերցրած՝ 7,5 տոկոսը։

1955 թվականին համաշխարհային շուկա մտած 300 միլիոն տոննա նավթից միայն 120 միլիոն տոննան է եղել մշակված վիճակում, այլ խոսքով ասած՝ ընդհանուրի 40 տոկոսը, մինչդեռ 1952 թվականին այդ տոկոսը եղել է 55։ Այս բացատրվում է նրանով, որ իրանական նավթի աղտայնացման փորձից հետո, արևմտյան տերությունները նավթը վերցնում են առավելապես անմշակ վիճակում և թորման են ենթարկում հենց սպառման վայրում։ Այս քաղաքականության շնորհիվ վերջին տարիներս նավթաթորման նոր գործարաններ կառուցվեցին Կենտում (Անգլիա), Հոլլանդիայում, Ֆրանսիայում, Ադենում, Ավստրալիայում և այլն։

Մեքսիկան, մինչև երկրի նավթային պաշարների պետականացումը[1], անգլո-ամերիկյան նավթային մոնոպոլիաների հակասությունների տիպիկ թատերաբեմն էր հանդիսանում։ Այս մրցակցությունը հասավ այն աստիճանի, որ բացասաբար անդրադարձավ երկրի նավթարդյունաբերության հետագա զարգացման վրա։

Մեքսիկան նավթարդյունաբերության մեջ երկար ժամանակ երկրորդ տեղն էր գրավում։ 1920 թվականին Մեքսիկայում նավթի տարեկան հանույթը կազմում էր 24,4 միլիոն տոննա, 1921 թվականին այն բարձրացավ մինչև 29 միլիոն տոննայի։ Այդ ժամանակ (չհաշված ՍՍՌՄ) Մեքսիկան տալիս էր նավթի համաշխարհային արդյունահանման 29 տոկոսը. Վենեսուելայում և Մերձավոր Արևելքում նավթի հարուստ պաշարներ հայտնաբերելու, ինչպես նաև համաշխարհային տնտեսական ճգնաժամերի հետևանքով (1929—1933), Մեքսիկայի արդյունահանումը տարեց տարի նվազեց և այդ երկիրը, որ նավթ արդյունահանող կապիտալիստական երկրների շարքում մինչ այդ գրավում էր երկրորդ տեղը, իջավ ութերորդ տեղը և հետագայում մի քանի տարի շարունակ նավթահանումը ստաբիլիզացվեց տարեկան միջին հաշվով 6 միլիոն տոննայի սահմաններում։ Վերջին ժամանակները համաշխարհային նավթար-

---

[1] 1938 թվականին։

գյուղատնտեսության ընդհանուր աճին զուգահեռ, այս երկրի արդյունահանումը նույնպես որոշ չափով բարձրացավ։

Չնայած նրան, որ 1917 թվականի սահմանադրության համաձայն, երկրի ընդերքի հարստությունները հայտարարված էին ազգային սեփականություն, դեռևս 1938 թվականին Մեքսիկայի նավթարդյունաբերության 95 տոկոսը գտնվում էր օտարերկրյա կապիտալիստների ձեռքում՝ 60 տոկոսը ԱՄՆ-ի (Ստանդարդ Օյլ խմբի) և 35 տոկոսը անգլո-հոլանդական խմբին (Ռոյալ Դեչ Շելլ)։ Դրանից հետո էր, որ պրեզիդենտ Կարդենասը երկրի նավթահորերը դեկրետով վերջնականապես պետականացրեց և նրանց հետագա շահագործման համար կազմակերպեց Պետրոլիոս Մեքսիկանոս պետական ընկերությունը։

1942 թվականին ԱՄՆ-ի նավթային ընկերությունների ֆինանսական պրեսինդիանները կարգավորվեցին երկու կառավարությունների միջև կայացած համաձայնությամբ։ Մեքսիկայի կառավարությունը համաձայնեց ԱՄՆ-ի նավթային ընկերություններին վճարել նրանցից վերցված կոնցեսիոն իրավունքների դիմաց մոտ 24 միլիոն դոլար։ Մեքսիկայի կառավարությունն այս պարտքը վճարեց հանձնելով իր նավթի արդյունահանման 80 տոկոսը։

1955 թվականին Մեքսիկայի նավթային պաշարները հաշվվում էին 228 միլիոն տոննա, իսկ նավթի արդյունահանումը այդ նույն թվականին եղել է 13 միլիոն տոննա։

Նավթարդյունաբերող երկրների շարքում Կանադան մինչև վերջին ժամանակներս դրավում էր ամենահետին տեղերից մեկը։ Կանադայում 1932 թվականին տարեկան նավթահանումը չափազանց ցածր էր՝ մոտ 130 հազար տոննա։ 1938 թվականին արդյունահանումը բարձրանում է 898 հազար տոննայի, իսկ 1948 թվականին՝ 1.435 հազար տոննայի։ Լայնակի շատ հարուստ նավթավայրերի հայտնաբերումից հետո, 1949 թվականից սկսած՝ երկրի նավթարդյունաբերությունը մեծ թափ ստացավ և նույն թվականին հանույթը հասավ մինչև 4 միլիոն տոննայի։ Հետագա տարիներում այս ընթացքը շարունակվեց և 1955 թվականին արդյունահանվեց 17 միլիոն տոննա նավթ։ Կանադայի նավթային պաշարները այդ նույն թվականին հաշվվում էին 302 միլիոն տոննա։

Այս երկրի նավթարդյունաբերության մեջ սկզբում գերիշխում էր անգլո-կանադական կապիտալը, որը 1945 թվականին կազմում էր նավթարդյունաբերության մեջ ընդհանուր կապիտալ ներդրումների 58 տոկոսը, մինչդեռ ամերիկյանը կազմում էր միայն 39 տոկոսը։ Այժմ, ինչպես ամենուրեք, նաև Կանադայի նավթարդյունա-

թերության մեջ ամերիկյան կապիտալը գերիշխողն է՝ (52 տոկոս ամերիկյան, իսկ 47 տոկոս անգլո-կանադական)։

Հարավային Ամերիկայի կոնտինենտում նավթահանման ասպարեզում առաջին տեղը գրավում է Կարաիբյան շրջանը՝ Վենեսուելայի գլխավորությամբ։ Այս կոնտինենտի մյուս երկրները համաշխարհային նավթարդյունաբերության մեջ համեմատաբար երկրորդական դեր են խաղում։

Կապիտալիստական նավթարդյունաբերող երկրների շարքում Վենեսուելան իր նավթահանման վիթխարի աճի շնորհիվ վերջին ժամանակներս գրավեց երկրորդ տեղը, ԱՄՆ-ից անմիջապես հետո, իսկ նավթ արտահանող երկրների շարքում նա գրավում է արդեն առաջին տեղը, այսպիսով գերազանցելով ԱՄՆ-ին։

Վենեսուելան 1940 թվականի 26,5 միլիոն տոննայի դիմաց, 1955 թվականին արդյունահանել է 111 միլիոն տոննա նավթ։ Այլ կերպ ասած՝ 15 տարվա ընթացքում երկրի նավթահանումը աճել է ավելի քան 4 անգամ։ Այդ նույն թվականին արդյունահանված նավթի 94,7 տոկոսը մտել է միջազգային շուկա, որից 24,44 տոկոսը ներմուծվել է ԱՄՆ։ Վենեսուելայի արդյունահանված նավթի միայն 23,4 տոկոսն է, որ մշակվում է տեղում, իսկ 76,6 տոկոսն արտահանվում է անմշակ վիճակում։

Նավթային պաշարներով այնքան հարուստ այս երկիրը չէր կարող հենց սկզբից չգրավել նավթային խոշոր մոնոպոլիաների ուշադրությունը և չդառնալ համաշխարհային տիրապետության համար նրանց միջև մղվող պայքարի գլխավոր թատերաբեմերից մեկը։

Վենեսուելայի նավթարդյունաբերության 95 տոկոսը գտնվում է օտարերկրյա կապիտալի ձեռքում՝ 55 տոկոսը ամերիկյան նավթային մոնոպոլիաների, իսկ 40 տոկոսը անգլո-հոլանդական և 5 տոկոսը՝ ուրիշ նավթային մոնոպոլիաների ձեռքում։ Ամերիկյան կապիտալը ներկայացված է հետևյալ ընկերություններով՝ Կրեոլ Սինդիկատ, Լագո Օյլ էնդ Տրանսպորտ Կոմպանի, Վենեսուելա Պետրոլյում և այլն։ Անգլիական կապիտալը ներկայացված է հետևյալ ընկերություններով՝ Վենեսուելա Օյլ Կոնսեշըն, Կարաիբյան Պետրոլյում Կոմպանի, Բրիտիշ Կոնտրոլդ Օյլ Ֆիլդ, Բրիտիշ Պետրոլյում և այլն։ Ֆրանսիական կապիտալը ներկայացված է Պետրոլը Կարակաս ընկերության միջոցով։ Ամերիկյան ընկերությունների մեջ գլխավոր դեր է խաղում Ստանդարդ Օյլի խումբը, իսկ բրիտանականի մեջ՝ Ռոյալ Դեչ Շելլի խումբը։

1955 թվականին Վենեսուելայի նավթային պաշարները հաշվում էին 1,397 միլիոն տոննա։

Կոլումբիայի նավթարդյունաբերությունը նույնպես գտնվում է օտարերկրյա կապիտալի ձեռքում՝ 85 տոկոսը ԱՄՆ-ի, իսկ 15 տոկոսը անգլիական կապիտալի հսկողության տակ։ Գործող ընկերություններն են՝ Սաութ Ամերիկըն Գոլֆ, Տրոպիկալ Օյլ, Ստանդարդ Օյլ օֆ Նյու Ջերզեյ և-ուրիշներ։ Կոլոմբիայի նավթային պաշարները առ 1955 թվականը հաշվվել են 60,28 միլիոն տոննա։ Այդ նույն թվականին նավթահանումը եղել է մոտ 5,7 միլիոն տոննա։

Մինչև 1947 թվականը բրիտանական նավթարդյունաբերող գաղութների շարքում Տրինիդադը գրավում էր առաջին տեղը, բայց 1948 թվականից առաջին տեղն սկսեց գրավել Բրիտանական Բորնեոն։

1955 թվականին Տրինիդադի նավթի պաշարները հաշվվում էին 37,78 միլիոն տոննա։ Այդ նույն թվականին այս երկրի նավթահանումը եղել է ավելի քան 3,47 միլիոն տոննա։ Տրինիդադի նավթարդյունաբերությունը հիմնականում գտնվում է անգլիական կապիտալի հսկողության տակ։

Էկվադորի նավթարդյունաբերությունը մեծ մասամբ գտնվում է անգլիական կապիտալի ձեռքում։ Շահագործող ամենագլխավոր ընկերությունը Անգլո-Էկվադորյան Օյլ ֆիլձն է Ռոյալ Դեչ Շելլի խմբից։ Տարեկան միջին նավթահանումը կազմում է 500 հազար տոննայից ոչ ավելի։

Հարավային Ամերիկայի նավթարդյունահանող երկրների շարքում Պերուն երկար ժամանակ գրավում էր առաջին տեղը։ Սակայն այժմ նա այդ դիրքը զիջել է և վերջին ժամանակաշրջանում նրա տարեկան միջին նավթահանումը եղել է շատ ցածր։ 1955 թվականին այս երկրի նավթահանումը եղել է 2,29 միլիոն տոննա։ Այդ նույն թվականին Պերուի նավթային պաշարները հաշվվում էին 29,9 միլիոն տոննա։

Երկրի ամբողջ նավթարդյունաբերությունը գտնվում է ամերիկյան և անգլիական կապիտալի հսկողության տակ։ Գործող ընկերությունների թվումն են՝ Ինտերնեշընալ Պետրոլյում Կոմպանին (անգլիական) և Ստանդարդ Օյլը (ամերիկյան)։

Արգենտինայի նավթարդյունաբերության մեծագույն մասը ներկայումս գտնվում է Յասիմենտոս Պետրոլիֆերոս Ֆիսկալես պետական կազմակերպության ձեռքում։ Վերջին ժամանակներս համաշխարհային խոշոր մոնոպոլիաները պայքար են ծավալել այս կազմակերպության դեմ և, դիմելով ամեն տեսակի ենթադ միջոցների, արգելում են նավթահորատման գործիքներ և սարքավորումներ մատակարարել Արգենտինային։

30277

1955 թվականին երկրի նավթային պաշարները հաշվվում էին 60,95 միլիոն տոննա։ Այդ նույն թվականին նավթահանումը եղել է 4,45 միլիոն տոննա։

Շատ թե քիչ քանակությամբ նավթի պաշարներ կան նաև Կուբայում և Բրազիլիայում։ Մինչև վերջին ժամանակները նավթային խոշոր մոնոպոլիաները թույլ չէին տալիս հրապարակել Բրազիլիայում կատարված նավթահետախուզական աշխատանքների արդյունքները (այս մասին ավելի հանդամանորեն կխոսենք հետագայում)։

Եվրոպայի գլխավոր նավթաբեր շրջանների մեծագույն մասը գտնվում է այն երկրներում, որոնք դարձել են ժողովրդական դեմոկրատական երկրներ և, այսպիսով, դուրս են եկել կապիտալիստական երկրների նավթարդյունաբերողների շարքից։

Եվրոպայի մյուս երկրները՝ Արևմտյան Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան և Անգլիան նավթահանման տեսակետից չափազանց աղքատ են։ Գերմանիայում (թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան), բացի բնական նավթից, արտադրում են նաև սինթետիկ նավթ։ Արևմտյան Գերմանիայի բնական նավթի տարեկան միջին արդյունահանումն է մոտ 3 միլիոն տոննա, Ֆրանսիայում՝ 900 հազար, Իտալիայում՝ 300 հազար, Անգլիայում՝ 100 հազար տոննա, իսկ Ավստրիայում տեղի է ունեցել հսկայական աճ, և 1955 թվականին տվել է 3,75 միլիոն տոննա նավթ, այսպիսով Եվրոպայում Ռումինիայից հետո գրավելով երկրորդ տեղը։

Թեև Եվրոպայի վերոհիշյալ երկրների տեսակարար կշիռը նավթահանման տեսակետից աննշան է, սակայն նավթաթորման ասպարեզում նրանք շատ կարևոր դեր են խաղում, և ունենալով համապատասխան հարմարանքներ, ներքին սպառման նավթի մեծագույն մասը մշակում են հենց տեղում (այս մասին տե՛ս աղյուսակներ 24 և 25)։

Աֆրիկայի տերիտորիան նավթահանման տեսակետից շատ ետ է մնացել։ Դա հավանորեն պետք է բացատրել նրանով, որ այնտեղ դեռևս չեն կատարվել լրիվ և լուրջ հետախուզական աշխատանքներ։ Ամենավերջին տվյալների համաձայն, Մարոկկոյում (շատ սակավաթիվ), Ալժիրում և Թունիսում հայտնաբերվել են բավական կարևոր նավթաբեր շերտեր։

Ներկայումս Թունիսում և Ալժիրում հետախուզական աշխատանքներ են կատարվում ամերիկյան, անգլիական և ֆրանսիական խոշոր մոնոպոլիաների կողմից։ Հետախույզ ընկերություններից են՝ Սոսիետե դ՝ Էքսպլուատասիոն (Ֆրան-

սիական կապիտալ), Սոսինեն Նոր Աֆրիկեն դը Պետրոլ (65 տոկոսը պատկանում է ամերիկյան կապիտալին և, փաստորեն, Գոլֆ Օյլ Կորպորեյշընին, իսկ 35 տոկոսը՝ ֆրանսիական կապիտալին), իսկ երրորդ կոնցեսիան պատկանում է Կոմպանի դե Պետրոլ դը լա Բյունիվի (65 տոկոսը՝ Շելլի խմբին և 35 տոկոսը՝ ֆրանսիական կապիտալին)։

Ինչպես տեսնում ենք, Աֆրիկայում սկսել են գործել նավթային խոշորագույն մոնոպոլիաները, և եթե հետախուզական աշխատանքները տան ակնկալած արդյունքները, ապա շուտով այս երկրները նույնպես կդառնան խոշոր նավթային տերությունների ուժեղ պայքարի մի նոր թատերաբեմ։ Ներկայումս ամերիկյան կապիտալը, ինչպես և ամենուրեք, փորձում է դուրս մղել անգլիական ու ֆրանսիական կապիտալները, ձգտելով այստեղ ևս իր համար հեգեմոն դիրք ձեռք բերել։

Բացի Մերձավոր և Միջին Արևելքից, որի մասին հանդամանորեն խոսելու ենք առանձին գլխում, Ասիայի մյուս շրջանները նույնպես հարուստ են նավթային պաշարներով։ Հնդկաստանում դեռևս հայտնաբերված չեն նավթային հարուստ պաշարներ։ Այս երկրի տարեկան միջին նավթահանումը 300 հազար տոննայից չի անցնում։

Բիրմայում շատ վաղուց է հայտնաբերվել նավթը։ 1955 թվականի տվյալների համաձայն, այս երկրի նավթային պաշարները կազմում են ընդամենը 6,3 միլիոն տոննա, իսկ տարեկան միջին նավթահանումը 250 հազար տոննայից չի անցնում։

Ինդոնեզիան աշխարհի խոշորագույն նավթային մոնոպոլիստական ընկերություններից մեկի՝ Ռոյալ Դեչ Շելլի, այսպես ասած, ծննդավայրն է եղել։ Այս երկրում նավթային հարստությունների շահագործումը սկսվեց անցյալ դարի 90-ական թվականներից։ Ինդոնեզիայում արդյունահանվող նավթի 50 տոկոսը ստացվում է Սումատրա կղզուց։

1939 թվականին Ինդոնեզիան (այդ ժամանակներին գեռևս հոլանդական Հնդկաստան) կապիտալիստական աշխարհի ընդհանուր նավթարդյունահանման ասպարեզում հինգերորդ տեղն էր գրավում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ինդոնեզիան մեծապես տուժեց և նավթարդյունահանումը մեծ չափով նվազեց։ 1948 թվականին նավթահանումն արդեն իջել էր տարեկան 4 միլիոն տոննայի՝ 1941 թվականի 9 միլիոն տոննայի դիմաց։ Հետագա տարիներին այս երկրի նավթարդյունաբերությունը որոշ չափով վերականգնվեց և 1955 թվականին Նոր Գվինեայի հետ միասին

տվեց մոտ 12 միլիոն տոննա նավթ։ Այս նույն թվականին երկրի նավթային պաշարները հաշվվում էին 148,5 միլիոն տոննա։

Բորնեոյի հյուսիս-արևմտյան ափը նույնպես նավթային պաշարների տեսակետից հարուստ շրջան է համարվում։ 1955 թվականին այս շրջանի նավթահանումը բարձրացավ 5 միլիոն տոննայի, այսպիսով բրիտանական գաղութների շարքում, Բորնեոն, առաջնությունը խլեց Տրինիդադից։

Պայմար նավթի համաշխարհային աղբյուրների և շուկաների համար։ Նավթարդյունաբերության համար հենց սկզբից բնորոշ էր մոնոպոլիստական տենդենցը։ Այդ երևույթին նպաստում էին, հիմնականում, հետևյալ երեք պայմանները, առաջին՝ նավթարդյունաբերությունը ինդուստրիալ մասշտաբներով սկսեց զարգանալ մոնոպոլիաների առաջացման երրորդ ժամանակաշրջանում, երբ կարտելները դարձել էին արդեն ամբողջ տնտեսական կյանքի հիմքերից մեկը։ Երկրորդ՝ նավթի շահագործումը պահանջում է բարձր տեխնիկա և թանկարժեք սարքավորումներ, որի հետևանքով,— ինչպես Վ. Ի. Լենինն է վկայակոչում գերմանական պրոֆեսոր Հերման Լևիից,— «հարկ է լինում» այդ տիպի «ձեռնարկությունների վրա ծախսել վիթխարի գումարների հասնող կապիտալ»[1]։ Երրորդ՝ «Այնտեղ, որտեղ կարելի է՝ զավթել հումքի բոլոր կամ գլխավոր աղբյուրները, կարտելների ծագումը ու մոնոպոլիստների գոյացումն առանձնապես հեշտ է լինում»[2]։ Իսկ նավթարդյունաբերության բնագավառում այս տենդենցը չափազանց բնորոշ երևույթ է։

Վ. Ի. Լենինը «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի ամենաբարձր ստադիա» իր հռչակավոր աշխատության մեջ մատնանշել է մոնոպոլիաների կազմավորման այս երեք շրջանը. «1) 1860-ական և 1870-ական թվականները՝ ազատ կոնկուրենցիայի զարգացման բարձրագույն, սահմանային աստիճան։ Մոնոպոլիաները հազիվ նկատելի սաղմեր են միայն։ 2) 1873 թվականի ճգնաժամից հետո՝ կարտելների զարգացման լայն շրջան, սակայն կարտելները դեռ բացառություն են։ Նրանք դեռ հաստատուն չեն։ Նրանք դեռ անցողիկ երևույթ են։ 3) XIX-րդ դարի վերջերի վերելքն ու 1900—1903 թթ. ճգնաժամը. կարտելները դառնում են ամբողջ տնտեսական կյանքի հիմքերից մեկը։ Կապիտալիզմը վերածվել է իմպերիալիզմի»[3]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 257։

[2] Նույն տեղում, էջ 270։

[3] Նույն տեղում, էջ 261։

Նավթի համար պայքարը սկզբում տեղի ունեցավ բախտախնդիր նավթորոնողների միջև, այնուհետև՝ հեռանկարներով հարուստ նորաստեղծ արդյունաբերությունից ծնունդ առած կապիտալիստների միջև՝ հայտնաբերվող նավթային աղբյուրներին և ներքին շուկաներին տիրանալու համար։ Այս երևույթը Վ. Ի. Լենինը հանճարեղորեն պարզաբանել է, ասելով՝ «Կապիտալիստների մոնոպոլիստական միությունները — կարտելները, սինդիկատները, տրեստները — ամենից առաջ ներքին շուկան են բաժանում իրենց միջև՝ ամբողջ երկրի արտադրությունն իրենց ձեռքը գցելով և ավելի կամ պակաս չափով լրիվ տիրելով նրան»[1]։

Մոնոպոլիաները զարգանալով աղատ մրցումից, աղատ մրցման ուղղակի հակադրությանն են վերածվում, այն իմաստով, որ «...գլխավոր մրցող ձեռնարկությունների թիվը հասնում է ընդամենը ինչ-որ երկու դյուժինի»[2], որի հետևանքով փոքր ձեռնարկությունները դուրս են մղվում, դրա հետ միասին շքանում է աղատ մրցումը։ Սակայն մրցումը խոշոր մոնոպոլիաների միջև չի վերանում, դառնում է կատաղի և ընդունում է ավելի սուր բնույթ։

Փաստերը ցույց են տալիս, որ նավթարդյունաբերությունը աղատ մրցման շատ կարճատև շրջան ապրեց, որի ընթացքում ավելի կատաղի կերպով հանդես եկան կապիտալիզմին հատուկ պայքարի բոլոր ձևերը, քան մի որևէ այլ ասպարեզում։ Ըստ էության, նավթի համար մղվող պայքարում հենց սկզբից գործադրվեցին շանտաժի, կաշառքի, խարեության, սարոտաժի, ընդհուպ մինչև մարդասպանության միջոցները։ Եվ ահա այսպիսի պայմաններում էր, որ ծնվեց և զարգացավ տխրահռչակ Ռոկֆելլերի անվան հետ կապված՝ կապիտալիստական երկրների համաշխարհային նավթի խոշորագույն տրեստներից մեկը՝ Ստանդարդ Օյլը։

Ռոկֆելլերը իր կարիերան սկսեց մանրածախ առևտրով։ Այդ տարիներին Դրեյկի[3] կողմից նավթի հայտնաբերումը որոշ շրջաններում մեծ աղմուկ էր հանել և Օյլ Կրիկի շրջանը դարձել էր մրցավազքի ասպարեզ։ Ռոկֆելլերը, նույն պսիխոզով բռնված, 1862 թվականին գնաց հաստատվեց Օյլ Կրիկում։ Նա առաջին իսկ օրերից ըմբռնեց, որ նավթահետախուզական ասպարեզը մեծ անորոշությունների և ռիսկի հետ է կապված։ Եվ ապա օգտվելով հանգամանքից, որ բոլորի ուշադրությունը կենտրոնացած է նավթի նոր

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ. Երևան, 1951 թ., էջ 324։

[2] Նույն տեղում, էջ 258։

[3] Տե՛ս այս աշխատության հավելվածում, էջ 248։

ապրյուրներ որոնելու վրա, իսկույն ևեթ որոշեց մանել նավթամշակման և վաճառահանման ասպարեզը, ուր ամենակարճ ժամանակամիջոցում նրան հաջողվեց տիրապետող դիրք ձեռք բերել։

Կլարկ եղբայրների և ինժեներ Անդրյուզի հետ միասին կառուցեցին, ներկա հասկացողությամբ շատ պրիմիտիվ, նավթաթորման գործարան։ Երեք տարին չլրացած, այդ գործը ապահովեց շատ մեծ շահույթներ։ 1865 թվականին իր ընկերներին վճարելով համապատասխան գումարներ, Ռոկֆելլերը նրանց հեռացրեց գործից։ Այդ ժամանակից սկսած, մեծ շահույթներ ստանալու համար նա ոչ մի միջոցի առաջ կանգ չառավ։ Իր նպատակների իրագործմանը հետապնդեց համառորեն և այնքան անգութ ու կատաղի, որ հետագայում դարձավ աշխարհի ամենատանջի մարդը։

Երբ նավթի արդյունահանումն աճեց և տնկավ տարեկան մեկ միլիոն տոննայից ու դրա փոխադրության հարցը դարձավ չափազանց այժմեական խնդիր, Ռոկֆելլերը, իր տիրապետող դիրքը պահպանելու համար, ձգտեց հսկողություն ձեռք բերել նաև նավթի փոխադրման միջոցների վրա։

Այդ թվականներին նավթի փոխադրման ամենաընդունված միջոցը երկաթուղին էր։ Ուստի, 1870 թվականին իր շուրջը հավաքելով նավթամշակման մի շարք ընկերություններ, Ռոկֆելլերը կազմակերպեց նավթաթորների միություն, որի շնորհիվ նավթի շուկայում ձեռք բերելով որոշ գերիշխանություն, նրա խմբին հաջողվեց երկաթուղային ընկերություններին թելադրել փոխադրման համար իր ուզած պայմանները։ Որո՞նք էին այդ պայմանները։ Ռոկֆելլերի խումբն առաջարկում էր երկաթուղային ընկերություններին իր հետ գաղտնի համաձայնություն կնքել, ըստ որում նրանք պետք է բարձրացնեին նավթի փոխադրման գները, սակայն, մյուս կողմից միության մեջ մտնող ընկերությունների համար պիտի սահմանվեին ցածր գներ։ Դրա դիմաց Ռոկֆելլերը պարտավորվում էր իր միության մեջ մտնող բոլոր գործարանների ամբողջ արտադրությունը փոխադրել այդ երկաթուղային ընկերությունների միջոցով։

Այս գաղտնի համաձայնության շնորհիվ Ռոկֆելլերի խմբին հաջողվեց ապահովել փոխադրման ցածր գներ և միաժամանակ իր մրցակիցների համար ստեղծել աննպաստ պայմաններ։ Օգտվելով իր ձեռք բերած առավելություններից, նա կատաղի պայքար մղեց իր մրցակիցների դեմ, որի հետևանքով շատերը սնանկացան։

Ռոկֆելլերի խմբի և երկաթուղային ընկերությունների միջև կայացած գաղտնի համաձայնությունը շուտով հայտնի դարձավ բոլորին։ Դրա հետևանքով մրցակիցները ամենակատաղի հակա-

հարձակումներ սկսեցին Ռոկֆելլերի և նրա խմբի դեմ։ Մրցակիցների և հասարակական կարծիքի ճնշման տակ դաղտնի համաձայնությունը ջնջվեց։ Սակայն մրցակիցների նկատմամբ Ռոկֆելլերի արդեն իսկ ձեռք բերած առաջնությունը լայն հնարավորություններ տվեց նրան հետագա պայքարում։ Շարունակելով պայքարի ամենանենգ մեթոդները և ֆինանսական կապեր հաստատելով երկաթուղային ամենախոշոր մագնատ Վանդերբիլտի հետ, Ռոկֆելլերի խմբին հաջողվեց ստեղծել իր սեփական տրանսպորտային սիստեմը։

Նավթամշակման արդյունաբերությանը, նավթի փոխադրման սիստեմի մեծ մասին և, վերջապես, նավթի վաճառահանման ներքին շուկաներին տիրանալուց հետո, Ռոկֆելլերը ուզեց իր հեգեմոն դիրքն ապահովել նաև նավթի տեղական աղբյուրների նկատմամբ։ Այդ նպատակով 1874 թվականին նա կազմակերպեց Սենտրալ Սասիեշընը (կենտրոնական միություն), որը դաղտնի կերպով միավորում էր արտաքուստ միմյանցից անկախ, բայց փաստորեն «մեծ տիրոջից» կախյալ նավթամշակման մի շարք ընկերություններ։ Այս տարբեր ընկերությունները զանազան եղանակներով սկսեցին գնել նավթի աղբյուրները։ Երբ սովորական ղիջման վճարի, «համագման» և նման եղանակները սպառված արդյունքները չէին տալիս, դիմում էին խիստ և կատաղի միջոցների։ Մոնոպոլիաների պայքարի այս մոմենտը բնութագրելիս Վ. Ի. Լենինը ասում է «...Մոնոպոլիան իր համար ճանապարհ է հարթում ամենուրեք և ամեն եղանակներով, սկսած ղիջման «համեստ» վճարից և վերջացրած մրցակցի նկատմամբ ամերիկյան դինամիտ «կիրառելով»»[1]։

Ռոկֆելլերը, իր նենգ մերենայություններն ավելի մեծ ազատությամբ իրագործելու համար, որոշեց իր աշխատանքի կենտրոնը փոխադրել Նյու Ջերզեյ նահանգը, որտեղ օրենքները համեմատաբար ավելի մեղմ էին։ Ապա 1882 թվականին այդ նահանգում նա հիմնեց Ստանդարդ Օյլ օֆ Նյու Ջերզեյ նավթի խոշոր մոնոպոլիստական տրեստը և իր շուրջը համախմբեց նավթային 33 խոշորագույն ընկերությունները։

Անցյալ դարի 90-ական թվականներին նրան արդեն հաջողվել էր իր հսկողության տակ վերցնել ԱՄՆ-ի նավթամշակման 90 տոկոսը։ Այս կապակցությամբ Վ. Ի. Լենինը ասում է. «Մեր առջևն է արդեն ոչ թե մանր ու խոշոր, տեխնիկապես հետամնաց և տեխնի-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 270—271։

կապես առաջավոր ձեռնարկությունների կոնկուրենցիոն պայքարը։ Մեր առջևն է մի երևույթ, երբ մոնոպոլիստները խեղդում են նրանց, ովքեր չեն ենթարկվում մոնոպոլիային, նրա ճնշմանը, նրա քմահաճույքին»[1]։ Այդպես շարունակում է. «...սա նշանակում է, կապիտալիզմի զարգացումը հասել է նրան, երբ թեև առաջվա պես «թագավորում է» ապրանքային արտադրությունը և համարվում է ամբողջ տնտեսության հիմքը, բայց իրոք ապրանքային տնտեսությունն արդեն խարխլված է, և գլխավոր շահույթները բաժին են ընկնում ֆինանսական խարդախությունների «հանճարներին»։ Այս մեքենայությունների և խարդախությունների հիմքն արտադրության հանրայնացումն է, սակայն մարդկության վիթխարի առաջադիմությունը, որն այնքան աշխատելով է հասել այս հանրայնացմանը, ծառայում է... սպեկուլյանտների օգտին»[2]։

1890 թվականին, հասարակական կարծիքի ճնշման տակ, սենատում բանավեճ տեղի ունեցավ ընդհանրապես տրեստների և մասնավորապես Ռոկֆելլերի խմբի նենգ գործունեության շուրջը։ Այս բանավեճի հետևանքով ընդունվեց Շերմանի անտի-տրեստ օրենքը, որի համաձայն, տրեստները, այդ թվում և Ստանդարդ Օյլ տրեստը պետք է կազմալուծվեին։ Հասարակական կարծիքը հանգստացնելու համար Շերմանի օրենքը մի դեմագոգիկ փորձ էր ընդդեմ մոնոպոլիզմի և փաստորեն չէր կարող ԱՄՆ-ում արդեն արմատացած մոնոպոլիստական դրությունը խախտել։ Ռոկֆելլերը իր կազմած տրեստը ձևականորեն լուծարքի ենթարկեց և ապա կազմակերպեց 20 քույր-ընկերություններ, որոնք արտաքուստ իրարից անջատ, բայց իրականում իրար հետ սերտորեն կապված էին նրա իշխանության տակ։

Այս նոր մեքենայության շնորհիվ Ռոկֆելլերին հաջողվեց վերականգնել իր խմբի մոնոպոլ դրությունը և տիրապետող դիրքը։ 1904 թվականին նա վերահսկեց իր ձեռքում կենտրոնացրեց ԱՄՆ-ի նավթամշակման գործարանների 84 տոկոսը, արտահանումների 86 տոկոսը, նավթամուղային սիստեմի 95 տոկոսը և, վերջապես, տեղական շուկայի 98 տոկոսը։ Այս պայմաններում, իհարկե, հասարակական աննպաստ կարծիքը տրեստների և մոնոպոլիաների մասին շարունակում էր զարգանալ։ Այդ թվականներին Այդա Տարբել[3]

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 268։

[2] Նույն տեղում, էջ 268—269։

[3] Ida M. Tarbell, The History of the Standard Oil Company, New York, 1950 (առաջին անգամ հրատարակվեց 1902 թվականին)։

անունով մեկը հրապարակեց մի գիրք, որի մեջ մերկացվում էր Ռոկֆելլերի խմբի նենգ գործունեությունը։ Թեոդոր Ռուզվելտը, մեծ թվով քվեներ ապահովելու համար, օգտագործեց հասարակության աննպաստ տրամադրությունները տրեստների դեմ և իր ընտրական կամպանիայում հանդես եկավ «պայքարել տրեստների դեմ» լոզունգով։ Տրեստների, հատկապես Ռոկֆելլերի դեմ պայքարը հասավ մեծ չափերի։

1907 թվականի ամռանը Ռոկֆելլերը դատի տրվեց։ Նա մեղադրվում էր 1462 հանցանքի համար։ Դատարանը հասարակական կարծիքի ճնշման տակ, Ռոկֆելլերին դատապարտեց յուրաքանչյուր հանցանքի համար 20 հազար դոլլարով, որը կազմում էր մի միլիարդ դոլլար՝ ավելի քան 29 միլիոն դոլլար։

Այս դատավճիռը անմիջապես արձագանք գտավ Նյու-Յորքի բորսայում (սակարանում)։ Ռոկֆելլերի մրցակիցներն օգտվեցին այդ հանգամանքից։ Ստանդարդ Օյլի սիստեմում գտնվող բոլոր ընկերությունների բաժնեթղթերը արժեքազրկվեցին։ Այսուհանդերձ Ռոկֆելլերին հաջողվեց հաղթահարել այդ ժամանակավոր դժվարությունները և վերականգնել իր տիրապետող դիրքը։ Ի միջի այլոց նշենք, որ Ռոկֆելլերը դատարանի կողմից սահմանված 29 միլիոն դոլլար տուգանքը չվճարեց։

Ռոկֆելլերը այս բոլոր փորձություններից դուրս գալով, նորից վերակազմակերպեց Ստանդարդ Օյլի սիստեմը և ստեղծեց ձևականորեն իրարից անկախ 35 ընկերություն։ Յուրաքանչյուր ընկերությունը կրում էր Ստանդարդ Օյլ անունը՝ ավելացրած նահանգի անունը։ Այսպիսով, ստեղծվեցին Ստանդարդ Օյլ օֆ Նյու Ջերզեյ, Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիա, Ստանդարդ Օյլ օֆ Ինդիանա և այլ ընկերությունները։

Ռոկֆելլերի խումբը, ներքին շուկաների համար մղվող պայքարից հաղթական դուրս գալուց հետո, սկսեց իր ձեռք բերած հեգեմոն դիրքը տարածել նաև արտաքին համաշխարհային շուկաներում։ Եվ դա պատահական երևույթ չէր։ Վ. Ի. Լենինը, մոնոպոլիաների կողմից շուկաների տիրապետման համար մղվող պայքարի մասին խոսելիս, առաջ է քաշում այն միտքը թե մոնոպոլիաները ներքին շուկան գրավելուց հետո իրենց ձեռքերն երկարում են դեպի արտաքին շուկաները, քանի որ, ասում է նա «կապիտալիզմի ժամանակ ներքին շուկան անխուսափելիորեն կապված է արտաքինի հետ։ Կապիտալիզմը վաղուց է ստեղծել համաշխարհային շուկա»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 324։

Համաշխարհային շուկաներին տիրանալու գործը Ռոկֆելլերը սկսեց Չինաստանի շուկան գավթելու փորձով։ Չինաստանը իր չորս հարյուր միլիոն[1] բնակչությամբ չէր կարող նրա ուշադրությունից վրիպել։ Իսկ, նավթի համաշխարհային աղբյուրներին տիրանալու համար, նա մուտք գործեց Հարավային Ամերիկա։ Պայքարի դուրս գալով նավթի համաշխարհային շուկաների և աղբյուրների համար, Ռոկֆելլերի խումբը դեմ առ դեմ եկավ Դետերդինգի խմբի հետ։ «Սկսվեց մի պայքար,— գրում է Վ. Ի. Լենինը,— որը տնտեսագիտական գրականության մեջ հենց այդպես էլ անվանում են — «աշխարհի բաժանման» պայքար»[2]։ Այդ երկու հսկաների հաջորդական բախումները կազմում են նավթի համար մղվող համաշխարհային պայքարի ընդհանուր պատմությունը։

Ժամանակակից միջազգային հարաբերությունների պատմությունից մեզ հայտնի է, որ նավթային մեծ մոնոպոլիաների պայքարը սրել է իմպերիալիստական մեծ պետությունների միջև արդեն գոյություն ունեցող հակասությունները, որոնք բխում են հենց իմպերիալիզմի էությունից և զարգանում են հատկապես հումքի աղբյուրների ու համաշխարհային շուկաների համար մղվող պայքարի ֆոնի վրա։ Վերցնենք երկու համաշխարհային առավել խոշոր նավթային ընկերությունները՝ Ստանդարդ Օյլը և Ռոյալ Դեչ Շելլը, որոնցից առաջինը՝ ներկայացնում է ամերիկյան նավթային շահերը, իսկ երկրորդը՝ անգլո-հոլանդական։ Այս ընկերությունների միջև պայքարը տեղի է ունենում աշխարհի այն բոլոր մասերում, որտեղ նավթ է հանվում, և վերջիվերջո նրանց շահերը նույնացվել են յուրաքանչյուրի ներկայացրած պետության շահերի հետ։

Այս հանգամանքները եզրակացնել են տալիս, որ երկու խոշոր նավթային մոնոպոլիաների պայքարի պատմությունը միաժամանակ հանդիսանում է այդ իմպերիալիստական տերությունների միջև նավթի համար մղվող պայքարի պատմություն, իսկ ինչ վերաբերվում է նավթային այլ ընկերությունների միջև մղված պայքարին, դա սատելիտային կռիվ է՝ Ռոկֆելլերի և Դետերդինգի գլխավորած մոնոպոլիստական միությունների միջև մղվող պայքարի առանձին մոմենտներ։

Ավգուստ Վիլհելմն Հենրի Դետերդինգը (ազգությամբ հոլանդացի), աշխատում էր Սումմատրայի հյուսիսում, Մեղա բաղա-

---

[1] XIX դարում Չինաստանի բնակչությունը հաշվվում էր 400 միլիոն։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 329։

գում որպես Նեդրլանդիշը Հանդելդ Մասաշատպիժ բանկի ծառայող։ Այդ ժամանակ (սկսած 1889 թվականից) Հոլլանդական Հնդկաստանում նավթային կոնցեսիաները շահագործվում էին Ավգուստ Կեսլերի կողմից։ Նա, ծանոթանալով երիտասարդ Դետերդինգի հետ և գնահատելով նրա վարչական կարողությունները, նրան աշխատանքի ընդունեց իր մոտ։

1900 թվականին, երբ Կեսլերը վախճանվեց, ընկերության ղեկավար նշանակվեց Դետերդինգը, և Կեսլերի հիմնած այդ համեստ ընկերությունը հանդիսացավ նավթի համաշխարհային երկրորդ ամենամեծ խմբի «Ռոյըլ Դեչ Շելլի» հիմնական կորիզը։

Երբ Ռոկֆելլերը պայքարի դուրս եկավ նավթի համաշխարհային տիրապետության համար, չնայած ֆինանսապես իր գերակշռող ուժին, նրան չհաջողվեց շարքից դուրս բերել Դետերդինգին, որովհետև վերջինս նույնքան «ճարպիկ» էր և 1913—1914 թվականներից սկսած նա իր շահերը նույնացնելով անգլիական պետական շահերի հետ, ուժեղ թիկունք էր ապահովել իր համար։

Դետերդինգին հաջողվեց շատ մեծ ճկունությամբ դիմադրել Ռոկֆելլերի բոլոր հարվածներին։ «...Ռոկֆելլերի «Նավթի տրեստը»,— գրում է Վ. Ի. Լենինը,— ցանկանալով զավթել ամեն ինչ, հիմնեց մի «դուստր-ընկերություն» բուն Հոլլանդիայում, գնելով Հոլլանդական Հնդկաստանի նավթային աղբյուրները և կամենալով այս կերպ հարված հասցնել իր գլխավոր թշնամուն, այն է՝ անգլո-հոլլանդական «Շելլ» տրեստին»[1]։ Դետերդինգը իր հակառակորդի այս մանյովրը կանխեց, բայց թողնելով արտոնյալ բաժնեթղթեր և այդ միջոցով վարչական խորհրդում իր ձեռքում պահելով քվեների մեծ մասը։

Ապա իր գործունեության կենտրոնը փոխադրելով Լոնդոն և միանալով Շելլ Տրանսպորտ էնդ Տրեյդինգ ընկերության հետ, Դետերդինգը կազմեց Ռոյըլ Դեչ Շելլը (60 տոկոսը Ռոյըլ Դեչին, 40 տոկոսը Շելլին)։ Այս միջոցով նա իր նավթի համար ստեղծեց սեփական տրանսպորտի սիստեմ։ Հաստատվելով Լոնդոնում, նա կապեր ստեղծեց անգլիական և ֆրանսիական կապիտալի շուկաներում։ Եվ փաստորեն, Ռոյըլ Դեչ Շելլի պայքարը Ստանդարդ Օյլի դեմ սկզբնական շրջանում ֆինանսավորեցին Ռոտշիլդները (ֆրանսիական կապիտալ)։

Ռոտշիլդները նավթային մեծ շահեր ունեին ցարական Ռուսաստանում։ Փաստորեն Բաքվի նավթի տերերն էին Ռոտշիլդները և

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 329։

Նոբել եղբայրները։ 1904—1905 և ապա 1910 թվականներին ցարական Ռուսաստանում տեղի ունեցող ռազմական հալածանքների հետևանքով Ռոտշիլդները ստիպված եղան ռուսական նավթի իրենց շահերը հանձնել Ռոյալ Դեչ Շելլին, որին այս միջոցով հաջողվեց մուտք գործել Ռուսաստան։

Հետագայում Դեթերդինգին հաջողվեց իր գործով շահագրգռել Լորդ Ֆիշերին, որն այդ ժամանակ անգլիական կաբինետում ռազմական նավատորմի մինիստրն էր։ Լորդ Ֆիշերի առաջարկով անգլիական պառլամենտում որոշում ընդունվեց և ռազմական նավատորմը մոտորային շարժիչների անցավ։ Ապա բրիտանական ռազմական նավատորմի մինիստրությունը, ելնելով իր two power standard[1] տարդիցիոն քաղաքականությունից, իր ռազմական նավատորմը վառելանյութով ապահովելու համար որոշեց Ռոյալ Դեչ Շելլի մեջ բաժնետեր դառնալ։

Բրիտանական կառավարության շահերի նույնացումը Ռոյալ Դեչ Շելլի շահերի հետ, անտարակույս, ուժեղացնում էր Դեթերդինգի թիկունքը։ Այնտեղ, ուր Դեթերդինգը ֆինանսական ուժով չէր կարողանում հասնել իր նպատակներին, օգնության էր հասնում Բրիտանական կառավարության քաղաքական ճնշումը։ Բրիտանիայի գաղութներում և նրա ազդեցության տակ գտնվող բոլոր երկրներում Դեթերդինգին հաջողվում էր հեգեմոն դիրք գրավել ինչպես նավթային աղբյուրների նկատմամբ, այնպես էլ նավթի շուկաներում։

Ձգտելով ավելի բարձր շահույթների, Դեթերդինգը չսահմանափակվեց Եվրոպայում և Ասիայում ձևավորած տիրապետող դիրքով, Ստանդարդ Օյլի դեմ նա պայքար ծավալեց նաև Հարավային Ամերիկայում։

Հարավային Ամերիկայի երկրներից Մեքսիկան և Վենեսուելան հանդիսացան անգլիական և ամերիկյան նավթային շահերի բախման գլխավոր վայրերը։ Մեքսիկայի գրեթե բոլոր կառավարական հեղաշրջումների պատճառները կապված են եղել նավթային մոնոպոլիստական շահերի հետ և հանդիսացել են Դեթերդինգի ու Ռոքֆելլերի պայքարի տրամաբանական շարունակությունը։ Հեղաշրջումների ժամանակ տասնյակ հազարավոր մեքսիկացիներ սպանում էին իրար, կարծելով, որ պաշտպանում են իրենց սեփական իրավունքները, բայց իրականում կռվի էին մղվում ամբոխավար

[1] Two power standard անգլիական տրադիցիոն քաղաքական սկզբունք, որի համաձայն, անգլիական ռազմական նավատորմը պետք է միշտ հավասար լիներ երկու այլ մեծ տերությունների ռազմական նավատորմների միացյալ ուժերին։

ավանտյուրիստների կողմից, որոնք հանդիսանում էին տարբեր նավթային տրեստների գործակալները։

Մինչև Ռոկֆելլերի մուտք գործելը, Մեքսիկայում արդեն գործում էր և տիրապետող դիրք էր գրավել նաև ամերիկյան կապիտալիստ Էդուարդ Դոհենին։ Պրեզիդենտ Դիազի օրով, Դոհենիին հաջողվում է 350 հազար դոլլար վճարելով ձեռք բերել կոնցեսիոն իրավունքներ։ Այդ կոնցեսիաներն ընդգրկում էին երկրի գլխավոր նավթաբեր շրջանները՝ մոտ 300 հազար ակր։ Դոհենին իսկույն ևեթ կազմակերպում է մի շարք ընկերություններ, որոնց թվում՝ Պետրոլյում Սեկյուրիտի Կոմպանի, Մեքսիկեն Պետրոլյում օֆ Կալիֆորնիա, Դոհենի Ստոն Դրիլ Կոմպանի և այլն։ Հետագայում բոլորը միանալով, կազմում են Պան Ամերիկեն Պետրոլյում Կոմպանին, որը հանդիսանում էր մեքսիկական նավթի խոշորագույն տրեստը։ Դոհենիի կազմած տրեստը 1910 թվականին արդեն ի վիճակի է լինում արտահանելու ավելի քան երկու միլիոն տոննա նավթ։ Մեքսիկական նավթի ամերիկացի մագնատն սկսում է ստանալ վիթխարի չափերի հասնող շահույթներ՝ շաբաթական մեկ-միլիոն դոլլար։

Այս պայմաններում, իհարկե, Ռոկֆելլերը Մեքսիկա մուտք գործելիս՝ հանձին Դոհենիի հանդիպում է շատ ուժեղ դիմադրության։ Երբ Ռոկֆելլերի գործակալներին չի հաջողվում պրեզիդենտ Դիազին կաշառել (ոչ թե նրա համար, որ Մեքսիկայի պրեզիդենտն անկաշառ էր, այլ, ընդհակառակը, նրա համար, որ նա Դոհենիի կողմից արդեն կաշառված էր), նա դիմում է սաբոտաժի։ Երբ սաբոտաժն էլ չի հաջողվում, սկսում է քաղաքական դավեր սարքել պրեզիդենտ Դիազի դեմ, ընդհուպ մինչև պետական հեղաշրջումներ։ Մեքսիկացիներն սկսում են իրար սպանել երկու ամերիկյան կապիտալիստների ներքին վեճերի պատճառով։

Դոհենին ուժեղ էր և հաջողությամբ դիմադրում էր Ռոկֆելլերի բոլոր հարվածներին։ Ռոկֆելլերը տեսնելով, որ իր դեմ կանգնած է մի այնպիսի ուժ, որին չի կարելի հաշվի չառնել, փոխում է պայքարի սովորական տակտիկան և մրցակից Դոհենիին դարձնում է ընկերակից՝ Պան Ամերիկեն Պետրոլյում տրեստը մտցնելով Ստանդարդ Օյլի օրբիտի մեջ։ Այդ կոմբինացիան նրան նոտեց 50 միլիոն ոսկի դոլլար։

Մեքսիկայում նավթի համար մղվող պայքարը Ռոկֆելլերի և Դոհենիի ընկերակցությամբ չվերջացավ։ Դետերդինգի խումբը, իր թիկունքում ունենալով անգլիական կառավարությունը, փորձում է Ռոկֆելլերի ձեռքից խլել Մեքսիկայում նրա ձեռք բերած նոր տի-

բապետող դիրքը։ Ընդ որում, նավթի համար մղվող կռիվը Մեքսիկայում վեր է ածվում անգլիական և ամերիկյան շահերի հայտնի պայքարին։ Խոշոր նավթային մոնոպոլիաների վեճը Մեքսիկայի ժողովրդի համար նորից դառնում է դժբախտության աղբյուր։ Դետերդինգին հաջողվում է կաշառել պրեզիդենտ Դիազին։ Ապա Մադերոն Ստանդարդ Օյլի փողերով հեղաշրջում է կազմակերպում։ Դիազը պարտվում է։ Բայց Ռոյալ Դեչ Շելլը չի հուսալքվում, կազմակերպում և ֆինանսավորում է նոր հեղաշրջում՝ Հուերտայի գլխավորությամբ։ Այս անգամ Մադերոն է պարտություն կրում։ Ապա իրար հաջորդող հեղաշրջումների հետևանքով պրեզիդենտի աթոռին են նստում՝ Կարենզան, Օբրեգոնը, Կալլեսն։ Նորից վերսկսվում է «նավթային կոմեդիան»[1] և ոչ որ չի իմանում, թե այս կոմեդիան ե՞րբ և ինչո՞վ է վերջանալու։

Բայց այդուհանդերձ Մեքսիկան Իգլին (անգլիական) հաջողվում է ձեռք բերել հարուստ կոնցեսիաներ։ Նրա հորերից մեկը՝ Տերս Ազուլ № 4 տալիս էր օրական 261 հազար բարել նավթ։ Դա համաշխարհային ռեկորդ էր։ Մեքսիկան Իգլը ապահովում է մեծ շահույթներ։ Մի քանի տարվա ընթացքում դիվիդենտները վեց տոկոսի փոխարեն բարձրանում են 62 տոկոսի։ Չնայած, որ կոնցեսիաների մեծ մասը գտնվում է ամերիկացիների ձեռքում (Ամերիկայի բաժինը 51,7 տոկոս, Անգլիայինը՝ 41,6 տոկոս, Մեքսիկայինը՝ 5,2 տոկոս, ուրիշներինը՝ 1,5 տոկոս), այնուամենայնիվ անգլիացիներին հաջողվում է արդյունահանել երկրի նավթի ընդհանուր հանույթի 60 տոկոսը։

Երկրի նավթային հարստությունների միայն 5,2 տոկոսն էր բուն Մեքսիկայի քաղաքացիների ձեռքում։ Անտուան Զիշկան իր գրքում[2] Մեքսիկայում օտարերկրյա կապիտալի դերի մասին խոսելիս, բերում է հետևյալ շատ հետաքրքիր տեղեկությունները. «Երկրի ընդհանուր հարստության 3.616.195.864 դոլլարը պատկանում է 161 հազար օտարերկրացիների, մինչդեռ միայն 3.140.804.135 դոլլարը գտնվում է 17 միլիոն մեքսիկացիների ձեռքում» և, եզրակացնելով, ասում է. «Մեքսիկայում օտարերկրյա կապիտալը երկրի տնտեսության տեր ու տնօրենն է, իսկ օտարերկրյա կապիտալի 79 տոկոսը ներդրված է նավթարդյունաբերության մեջ»։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Անգլիան,

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 330։

[2] Antoine Zischka, La Guerre Secrète pour le Pétrole, Paris, 1934 (vide P. Fontaine, p. 124).

իր ռազմական անմիջական կարիքներից հարկադրված, մեղմացրեց ամերիկյան շահերի դեմ մղվող պայքարի տեմպերը։ Բայց հենց որ պինդադարը ստորագրվեց, Ռոյալ Դեչ Շելլի խումբը Ստանդարդ Օյլի դեմ նոր և շատ ուժեղ հարձակում գործեց աշխարհի այն բոլոր մասերում, որտեղ նավթ կար։

Այնքան ուժեղ եղավ և այնքան մեծ հաջողություններով պսակվեց անգլիական նավթային մոնոպոլիաների հարձակումը, որ 1920 թվականին Սեր Է. Մակքեյը այդ առթիվ հետևյալ հավակնոտ հայտարարությունն արեց. «Այսօր ի վիճակի եմ հայտարարելու, որ Հարավային Ամերիկայում շահագործվող նավթի 2/3-ը գտնվում է անգլիացիների ձեռքում։ Շելլի խումբը հսկում և տիրապետում է աշխարհի բոլոր նավթարեր շրջաններին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Մեքսիկայում, Հոլանդական Հնդկաստանում, Ռումինիայում, Եգիպտոսում, Վենեսուելայում, Տրինիդադում, Հնդկաստանում, Ցեյլոնում, Մալայզիայում, Չինաստանում, Սիամում, Նեղուցներում (Սինգապուր), Ֆիլիպիններում։ Շուտով Ամերիկան պիտի հարկադրված լինի միլիոնավոր ստերլինգներ վճարելով մեզնից գնել այն նավթը, որի չափազանց մեծ կարիքն ունի և որը այսուհետև չի կարողանալու իր սեփական պաշարներից հարկ եղած բանակությամբ ապահովել։ Բացի Մեքսիկայից և Կենտրոնական Ամերիկայի մի քանի երկրներից, աշխարհի բոլոր մյուս մասերը ուժեղ կերպով բարիկադված են ամերիկյան հետագա հարձակումների դեմ»[1] (խոսքը նավթային ընկերությունների մասին է — Հ. Թ.)։

Բայց այս հայտարարությունը, իհարկե, չափազանց պարծենկոտ էր։ Իրականում ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիաներն այնքան վատ դրության մեջ չէին գտնվում և հարվածին պատասխանում էին հարվածով։ Այսպես, օրինակ, Սան Ռեմոյի համաձայնության (ըստ որի, Մուսուլի նավթը բաժանվում էր անգլիացիների ու ֆրանսիացիների միջև) շուրջը տարաձայնություններ ծագեցին և բիչ էր մնացել նավթի համար անգլիացիների ու ամերիկացիների միջև դիվանագիտական հարաբերությունների խզում տեղի ունենար։ Բայց Վաշինգտոնի կոնֆերանսում համաձայնություն կայացավ Մուսուլի նավթի վերաբերյալ, որի հետևանքով այդ խզումը տեղի չունեցավ, և ԱՄՆ-ը, հանձին Ստանդարդ Օյլի, ստացավ Իրաքի նավթի 23,75 տոկոսը։

1937 թվականին Մեքսիկան Իգլի բանվորները պահանջեցին բարձրացնել աշխատավարձը։ Վեճը փոխադրվեց դատարան։ Դա-

[1] P. Fontaine, La Guerre Occulte du Pétrole, Paris, 1949, p. 122.

տական քննությունների ժամանակ հայտնի դարձավ, որ Մեքսիկան Իդլը, համաշխարհային շուկաներում դեմպինգի իր վարած քաղաքականության հետևանքով, մեքսիկական նավթը երկրի ներսում սկսել էր վաճառել 170-ից մինչև 250 տոկոս բարձր գներով։ Դատարանը, հասարակական կարծիքի ճնշման տակ, վճռեց հօգուտ բանվորների։ Անգլիական նավթի մոնոպոլիաները չկատարեցին դատարանի վճիռը և շարունակեցին բանվորների շահագործումը։

Պրեզիդենտ Լազարո Կարդենասը, ելնելով Մեքսիկայի 1917 թվականի սահմանադրության այն հոդվածից, որի համաձայն երկրի բնական հարստությունների շահագործման իրավունքը վերապահվում է Մեքսիկայի քաղաքացիներին, 1938 թ. մարտին հատուկ դեկրետով ազգայնացրեց երկրի նավթային հարստությունները։

Մեքսիկական կառավարությունը համաձայն էր նավթային ընկերությունների վերացված կոնցեսիոն իրավունքների դիմաց վճարել համապատասխան գումարներ։ 1942 թվականին ԱՄՆ-ի նավթային ընկերությունների ֆինանսական ագենտները կարգավորվեցին միջկառավարական համաձայնությամբ։ Անգլիական նավթային ընկերությունները դուրս գալով նավթային հարստություններն ազգայնացնելու որոշման դեմ, սկսեցին բոյկոտել մեքսիկյան նավթը։ Բրիտանական նավթատար նավերը հրաժարվեցին փոխադրել մեքսիկյան նավթը։ Մեքսիկան սկսեց իր նավթը փոխադրել ուրիշ երկրների նավթատար նավերով։ Ապա վաճառելով իր նավթը 5 տոկոսով ավելի ցածր գներով, ուժեղ պայքար մղեց անգլիական նավթային մոնոպոլիաների դեմ։ Գերմանիան և Իտալիան, որոնք ագրեսիվ քաղաքականություն էին վարում և պատրաստվում էին նոր պատերազմի, այդ հանգամանքից օգտվեցին էժան գներով նավթի մեծ պաշարներ ամբարելու համար[1]։

Պրեզիդենտ Կարդենասը[2], համառորեն կանգնեց իր որոշման վրա, չզիջեց իր դիրքերը և, պայքարելով նավթի համաշխարհային մոնոպոլիաների կրկնվող հարձակումների դեմ, միաժամանակ վերջ տվեց Մեքսիկայում նավթի համար մերթ ընդ մերթ ծագող ներքին եղբայրասպան կռիվներին։

Վենեսուելան 1929 թվականին արդյունահանում էր մոտ 19 միլիոն տոննա նավթ և այդ թվականից սկսած՝ նավթարդյունահա-

---

[1] Ըստ էյդուսի տվյալների, Գերմանիայի և Իտալիայի նավթի ամբարած պաշարները երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբներին հաշվվում էին 6—8 միլիոն տոննա։ Տե՛ս Я. Т. Эйдус, Жидкое топливо и война, Москва, 1943, стр. 75.

[2] Պրեզիդենտ Կարդենասը 1955 թ. արժանացավ Միջազգային խաղաղության լենինյան մրցանակի կոչմանը։

նողների շարքում զբաղվում էր երկրորդ տեղը։ Վենեսուելայում անգլիական և ամերիկյան մոնոպոլիստների միջև նավթի համար մղվող պայքարը իր ընդհանուր գծերով նման է Մեքսիկայում մղված պայքարին։

Վենեսուելայի պրեզիդենտ Գոմեզին հաջողվել էր մի տեսակ ժամանակավոր հավասարակշռություն ստեղծել անգլիական և ամերիկյան մոնոպոլիստների շահերի միջև։ Նա օգտվում էր թե՛ մեկից և թե՛ մյուսից և միևնույն ժամանակ լավ էր ծառայում նավթի մոնոպոլիաների շահերին։ Սրա փոխարեն ստացած վարձատրությունները նրան դարձրել էին Հարավային Ամերիկայի ամենահարուստ մարդը։ Վենեսուելայի բռնակալը երկրի ժողովրդին զոհում էր նավթային խոշոր մոնոպոլիաների շահերին։ Մեծ թվով քաղաքական կալանավորներ էր աշխատեցնում նավթի փոխադրման համար կառուցվող ճանապարհների շինարարության վրա։ Վենեսուելայի գյուղացիներին հարկադրում էր երկրի նավթաբեր շրջաններում չափազանց վատ պայմաններում manu militari[1] աշխատելու նավթի մոնոպոլիաների համար։ Վենեսուելայի նավթաբեր շրջանները ամենավատառողջ՝ ճահճային և մալերիկ գոտիներում գտնվելու հետևանքով, նավթարդյունաբերության գործը բանվորների համար դառնում է էլ ավելի դժվար և տաժանելի։

Չնայած ամերիկյան կապիտալի գերակշռմանը, անգլիական ընկերությունները, որոնք ավելի միասնաբար էին գործում, Գոմեզին շահագրգռելով, որոշումներ էին անցկացնում իրենց օգտին։ Սրա դեմ ամերիկյան նավթային մոնոպոլիաները դաղտնի կերպով գինում են Ռաֆայել Ուրբինային, որը պետական հեղաշրջում է կազմակերպում։ Այս փորձը անհաջողության է մատնվում, բայց որոշ ժամանակից հետո Ռոյալ Դեչ Շելլի բանվորները, ամերիկյան դրդումով, գործադուլ են հայտարարում և պահանջում են անգլիական ընկերությունների պետականացում։ Այս գործադուլը ճնշվում է, զենքի ուժով։ Ասա Ռոյալ Դեչ Շելլը, օգտվելով բոլիվարի (վենեսուելական փողի միավոր) դեվալվացիայի քաղաքականությունից[2] գործադուլավոր բանվորներից վրեժ լուծելու համար օժանդակում է, դեվալվացիայի իրագործմանը, որովհետև բոլիվարի արժեքի անկումով ընկնում է բանվորների ռեալ աշխատավարձը։

---

[1] Հարկադրանքով։

[2] Այդ քաղաքականությունը վարում էին արտահանությամբ զբաղվող մի խումբ առևտրականներ՝ իրենց ապրանքները համաշխարհային շուկաներում ավելի էժան գներով վաճառելու համար։

ԱՄՆ-ը երկրորդ համաշխարհային պատերազմից, մյուս կապիտալիստական երկրների համեմատությամբ, դուրս գալով ավելի ուժեղ, ինչպես ամենուրեք, այնպես էլ Վենեսուելայում ձեռք է բերում գերակշռող դիրք։ 1955 թվականին Վենեսուելայում գործում էին հետևյալ գլխավոր նավթային ընկերությունները։

Ամերիկյան կապիտալ			Անգլիական կապիտալ		
Կրեոլ ընկերությունը	11,8	տոկոս	Շելլ ընկերությունը	30,6	տոկոս
Սոկոնի »	3,2	»	Մենդի Դրանդի ընկերութ.	15,0	»
Ռիչմոնդ »	1,1	»	Մերսեդես »	1,1	»
Տեկսաս »	1,1	»	Բրիտիշ »	0,05	»
Սինկլեր »	0,7	»			
Ֆիլիպս »	0,6	»			
Պանամերիկ »	0,5	»			
	52,0	տոկոս		46,15	տոկոս

Բացի Մեքսիկայից և Վենեսուելայից, անգլիական և ամերիկյան նավթային մոնոպոլիաներն իրենց միջև մղվող պայքարը տարածել են նաև նավթարդյունահանման տեսակետից ավելի նվազ նշանակություն ունեցող երկրներում։ Բոլիվիայում ներկայումս տիրապետում է ամերիկյան կապիտալը հանձին Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Բոլիվիա ընկերության։

Բոլիվիայի և Պարագվայի միջև Գրան Շակոյի տարածությունների համար տեղի ունեցող հերթական պատերազմները կապված են նավթային շահերի հետ։ Գրան Շակոն այդ երկու երկրների միջև ընկած 165 հազար քառ. կիլոմետր տարածությամբ մի շրջան է, որը ճահճային է, մացառոտ և ունի չափազանց վատառողջ կլիմայական պայմաններ։ Բայց Գրան Շակոյում գոյություն ունեն նավթային հարստություններ։ Ամերիկյան և անգլիական նավթային մոնոպոլիստները իրենց ոլորտների ազդեցությունը տարածելու համար բոլիվիական և պարագվիական ժողովուրդների միջև պատերազմ հրահրեցին։ Պատերազմը, որ սկսվել էր 1929 թվականին, մի քանի ընդհատումներից հետո վերջացավ 1934 թվականին։ Սպանվածների և վիրավորների թիվը չափազանց մեծ էր։

«Պանորամա դը լ'Ամերիկ Լատին» ֆրանսիական ժուռնալում Ռընո դը Ժուվենելը Գրան Շակոյի պատերազմի մասին գրում էր. «Կռվեցին Ստանդարդ Օյլի և Շելլ Մեքսի (Ռոյըլ Դեչի ֆիլիալներից) համար։ 60 հազար բոլիվիացիներ և 40 հազար պարագվայցիներ սպանվեցին և մահացան ծարավից, քաղցից, դիզենտերիայից, տի-

ֆից և մալարիայից։ 50 հազար մարդ պատերազմից վերադարձան գժված կամ հաշմանդամ, իսկ թոքախտով վարակվածների թիվն այնքան մեծ էր, որ խաղաղության կոնգրեսը 8,5 միլիոն պեզոս վարկ բացեց»[1]։

Այս պատերազմից ամերիկյան և անգլիական մոնոպոլիստները ոչ մի վնաս չկրեցին, այլ, ընդհակառակը, մեծապես օգտվեցին պատերազմող կողմերին զենք և մթերքներ վաճառելով։

Այն ժամանակ, երբ Բոլիվիան իր ժողովրդի համար կործանարար պատերազմ էր մղում հօգուտ ամերիկյան նավթային մոնոպոլիստների, Ստանդարդ Օյլ օֆ Բոլիվիա ընկերությունը Թերմեժո գետի հունով գաղտնի անցկացված նավթամուղով բոլիվիական նավթը փոխադրում էր Արգենտինա, խուսափելով բոլիվիական կառավարությանը հասնող համապատասխան տուրքերը վճարելուց։

1942 թվականին ամերիկյան մամուլը նշում է, որ հարուստ նավթարեր վայրեր են հայտնաբերվել Բրազիլիայի Ալագոսի շրջանում։ Այս «հանկարծակի բախտավոր» զուգադիպությունը (երբ նավթ է հարկավոր, անմիջապես հայտնաբերվում է) բացատրվում է նրանով, որ Բրազիլիայի Ալագոս շրջանում նավթը վաղուց արդեն հայտնաբերված է եղել։ Բայց նավթային մեծ տրեստներն իրենց գործը շատ լավ էին իմանում։ Գերարտադրության վտանգը վերացնելու համար, նրանց անհրաժեշտ էր որոշ ժամանակ ևս թաքցնել Բրազիլիայի հարուստ նավթային պաշարների գոյությունը։

Գերմանացի ինժեներ Ժոզե Բախի, ապա բրազիլացի ինժեներ Պինտո Մարտենզի կողմից Ալագոսի շրջանում կատարված հետախուզական աշխատանքները շատ դրական արդյունքներ տվեցին և հայտնի դարձավ, որ Բրազիլիայի ընդերքը պարունակում է չափազանց հարուստ նավթային պաշարներ։ Սակայն, թե՛ Բախը և թե՛ Մարտենզը խորհրդավոր պայմաններում մահացան։ Առաջինի դիակը գտնվեց Ռիո Մոխիտո գետում, իսկ երկրորդը՝ մահացել էր Պան Ամերիկեն էր վերցին պատկանող ինքնաթիռի մեջ՝ ճանապարհորդելու ժամանակ։

Նման մի շարք այլ արգելքներ ևս եկան համոզելու Կոմպանհիա Պետրոլեո Նացիոնալ բրազիլիական ընկերությանը, որի համար էին աշխատում Բախը և Մարտենզը, որ նույնիսկ իր սեփական հայրենիքում հնարավոր չէ դեմ գնալ ամերիկյան նավթային տրեստների կամքին։

---

[1] P. Fontaine, La Guerre Occulte du Petrole, Paris, 1949, p. 142.

Երբ հետագայում պատերազմի պայմանները ԱՄՆ-ի առջև դրեցին իր սատելիտներին, որոնց թվում և Բրազիլիային, նավթ մատակարարելու պրոբլեմը, ամերիկյան նավթի արհեստները փոխեցին իրենց նախկին քաղաքականությունը Բրազիլիայի նավթի նկատմամբ և սկսեցին իրենք շահագործել այն։

Հանրագումարի բերելով Ռոկֆելլերի և Դետերդինգի պայքարը, որը միևնույն ժամանակ վեր էր ածվում իմպերիալիստական երկու մեծ պետությունների՝ Անգլիայի և Ամերիկայի միջև մղվող պայքարի, պետք է ասել, որ Ստանդարդ Օյլի և Ռոյալ Դեչ Շելլի միջև պայքարը հնարավոր եղավ, որովհետև երկուսն էլ հանդես էին գալիս մոտավորապես հավասար ուժերով։ Եթե մեկը մյուսից ավելի ուժեղ լիներ, պարզ է, որ պայքարը կվերջանար մեկի դուրս մղումով։ Մինչդեռ մինչև այժմ այդ երկուսի միջև պայքարը շարունակվում է։ Իսկ ինչո՞վ բացատրել նրանց ուժերի հավասարությունը։

I. Դետերդինգի դեմ մղած պայքարում Ռոկֆելլերին նպաստում էր այն, որ՝ ա) նա ֆինանսապես ավելի ուժեղ էր, բ) ԱՄՆ-ում գրավելով տիրապետող դիրք, ներքին շուկայում գների բարձրացումով նա կարողանում էր արտաքին շուկաներում կազմակերպել դեմպինգ։

II. Մյուս կողմից՝ Դետերդինգին նպաստում էր այն, որ ա) նրա նավթային աղբյուրներն ավելի մոտ էին համաշխարհային շուկաներին, հետևաբար նա կարողանում էր փոխադրական ծախսերը կատարել խնայողաբար, բ) նրա թիկունքն ավելի ուժեղ էր շնորհիվ Ռոյալ Դեչ Շելլի և անգլիական կառավարության ընկերակցության։

Հետագայում, այսինքն XX դարի առաջին տասնամյակներում, ամերիկյան նավթային մոնոպոլիստները հետևեցին անգլիական նավթային մոնոպոլիստների այս վերջին օրինակին, որոնք հենց սկզբից իրենց շահերը միացրել էին պետական շահերին և, այսպիսով, այդ թվականներից հետո նավթային այս երկու խոշոր մոնոպոլիաների պայքարը վերածվեց կապիտալիստական երկու մեծ պետությունների՝ Անգլիայի և Ամերիկայի պայքարին։

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հավասար ուժերով հանդես եկող այդ երկու խոշոր մոնոպոլիաների միջև կնքվում են պարբերաբար համաձայնություններ, որի շնորհիվ ժամանակավորապես թուլանում է նրանց միջև մղվող պայքարը։ Ռոկֆելլերը և Դետերդինգը ժամանակավոր համաձայնության գալով, նավթի համաշխարհային շուկաները և աղբյուրները բաժանում են իրենց միջև։ «Սակայն աշխարհի բաժանումը երկու հզոր արհեստների

միջև, իհարկե, չի բացառում վերաբաժանումը, եթե զարգացման անհամաչափության, պատերազմների, կրախների և այլնի հետևանքով ուժի հարաբերությունը փոխվում է»[1]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում ուժերի հարաբերակցությունը փոխվելու հետևանքով, մենք այժմ ականատես ենք անգլո-ամերիկյան նավթային մոնոպոլիաների միջև աշխարհի վերաբաժանման նոր փորձի, որը կատարվում է գրեթե ամենուրեք, որտեղ նավթ կա և որը հատկապես ավելի քան սուր բնույթ է ստանում Մերձավոր և Միջին Արևելքում։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 328։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԱՎԹԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մերձավոր և Միջին Արևելքի երկրները[1], *որոնք երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին կապիտալիստական աշխարհի նավթարդյունաբերության մեջ դեռևս աննշան տեղ էին գրավում, հայտնաբերված նավթի հսկայական պաշարների շնորհիվ արդեն գտնվում են առաջին դիրքում, իսկ նավթի արդյունահանման տեսակետից՝ երկրորդ։ 1955 թվականի տվյալների համաձայն, այս երկրների՝ նավթային պաշարները հաշվվում են 14,23 միլիարդ տոննա, որը կազմում է կապիտալիստական երկրների նավթի ընդհանուր պաշարների 64 տոկոսը, մինչդեռ ԱՄՆ-ում կազմում է 18 տոկոս (տե՛ս աղյուսակ 2)։ Թեև ավելի թարմ տվյալների համաձայն այդ պաշարները դեռևս անհամեմատ ավելի շատ են։ 1956 թվականի առաջին ամիսներին Ուալլաս Է. Պրատտը, Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Նյու Ջերզեյի նախկին միցե-պրեզիդենտ, ԱՄՆ-ի Կոնգրեսի կից ատոմային էներգիայի կոմիտեի հանձնարարությամբ Կոնգրեսում հանդես գալով զեկուցումով, համաշխարհային նավթային պաշարների մասին խոսելիս նշեց հետևյալ հետաքրքրաշարժ տեղեկությունները (տե՛ս աղյուսակ 3)*[2]։

Պրատտի տվյալները պիտի ընդունել որոշ վերապահությամբ, քանի որ մինչև այժմ (1956 թվականի առաջին կիսամյակը) ձեռքի տակ չկան այս թվերը հաստատող ուրիշ աղբյուրներ։

1939 թվականին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից ստացված նավթը կապիտալիստական երկրների ընդհանուր նավթահանման նկատմամբ կազմում էր միայն 6 տոկոսը (տե՛ս աղյուսակ 4)։

---

[1] *Թյուրքիա, Իրան, Իրաք, Սիրիա, Լիբանան, Իսրայել, Եգիպտոս և Արաբական թերակղզին։*

[2] *Տե՛ս այս մասին՝* World Petroleum, March, 1956, p. 98.

*Աղյուսակ 2**

Մերձավոր և Միջին Արևելքի նավթային պաշարները, համեմատած ԱՄՆ-ի և կապիտալիստական մյուս երկրների ընդհանուր պաշարների հետ

Տարեթիվ	Միլիարդ տոննաներով				Տոկոսներով	
	Մերձավոր և Միջին Արևելք	ԱՄՆ	կապիտալիստական մյուս երկրներ	ընդհանուր	Մերձավոր և Միջին Արևելք	ԱՄՆ
1939	0,82	2,70	0,28	4,4	18,6	62
1946	3,55	2,99	2,47	9,01	39,4	33,2
1955	14,23	4,01	4,01	22,25	64**	18

Մերձավոր և Միջին Արևելքը ըստ երկրների	Միլիարդ տոննաներով	Տոկոսներով
Սաուդական Արաբիա . . .	4,22	18,9
Կուվեյտ	4,11	18,5
Իրաք	1,94	8,7
Իրան	3,71	16,6
Մ. և Մ. Ա.-ի մյուս երկրները	0,25	1,1

*Աղյուսակ 3**

Հեղուկ նավթի պաշարները

	Միլիարդ տոննաներով	Տոկոսներով
ԱՄՆ	4,795	11,44
Հյուսիսային Ամերիկայի մյուս երկրները . .	0,959	2,28
Հարավային Ամերիկա .	3,699	8,92
Արևմտյան Եվրոպա . .	0,137	0,30
Մերձավոր և Միջին . . Արևելք	31,510	75,10
Հեռավոր Արևելք . .	0,820	1,96
Ընդամենը	41,920	100 տոկոս

* *Հաշվումները կատարված են ըստ հետևյալ աղբյուրների՝* World Petroleum, Sept. 1954, pp. 57—58; Ibid, January 1955, pp. 30–34, 56; Ibid, March, 1956, pp. 9 ; The Petroleum Times, April 13, 1956, p. 230; Foreign Affairs, April 1954, p. 421; Bulletin of the American Association of Petroleum Geologists, August 1954, pp. 1715—1716; Ibid, July 1955; Ibid, July 1956.

** *Ու. Ֆ. Պրատոի տվյալների համաձայն 73 տոկոս, տես* World Petroleum, March, 1956, p. 98.

*Աղյուսակ 4**

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթահանումը, համեմատած կապիտալիստական աշխարհի նավթահանման ընդհանուր նորմաների հետ

Տարեթվեր	Տոկոս	Տարեթվեր	Տոկոս	Տարեթվեր	Տոկոս
1911	0,0	1926	3,4	1941	3,8
1912	0,1	1927	3,3	1942	5,5
1913	0,5	1928	3,5	1943	5,5
1914	0,9	1929	3,0	1944	6,3
1915	0,9	1930	3,5	1945	7,7
1916	1,1	1931	3,4	1946	9,4
1917	1,6	1932	4,0	1947	10,4
1918	2,1	1933	4,0	1948	11,5
1919	2,1	1934	4,4	1949	13,0
1920	1,9	1935	5,3	1950	15,4
1921	2,3	1936	5,5	1951	16,8
1922	2,7	1937	5,8	1952	17,2
1923	2,6	1938	6,1	1953	18,9
1924	3,3	1939	6,0	1954	20,4
1925	3,4	1940	5,1	1955	21,6

Նույն թվականին Հյուսիսային Ամերիկան (ԱՄՆ-ը, Կանադան և Մեքսիկան միասին վերցրած) նավթահանում էր ընդհանուրի 69 տոկոսը, Հարավային Ամերիկայի երկրները՝ 15 տոկոսը։ 1955 թ. այս հարաբերությունները փոխվեցին՝ Հյուսիսային Ամերիկայի երկրները արդյունահանեցին կապիտալիստական երկրների ընդհանուր նավթահանման 48,2 տոկոսը, այդ թվում ԱՄՆ-ը առանձին՝ 44,6 տոկոսը, Հարավային Ամերիկայի երկրները 16,5 տոկոսը, այդ թվում Վենեսուելան առանձին՝ 14,2 տոկոսը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրները՝ 21,6 տոկոս և, վերջապես, մյուս երկրները՝ 13,7 տոկոս (տե՛ս աղյուսակ 5)։

Ինչպես տեսնում ենք, հետպատերազմյան տարիներին նավթարդյունաբերության աստիճանական տեղը աստիճա-

---

* *Հաշվումները կատարված են ըստ հետևյալ աղբյուրների՝* Mikesell and Chenery. Arabian Oil. New York 1949. p. 178; S. H. Longrigg. Oil in the Middle East, London. 1954. p. 276; Bulletin of the American Association of Petroleum Geologists. August 1954; Ibid, July 1955; Ibid, July 1956; World Petroleum, Sept. 1954; Ibid, January 1955; Ibid. November 1955; Ibid, January 1956; Ibid. February 1956; Foreign Affairs. April 1954, p. 421

*Աղյուսակ 5**

Նավթարդյունահանող կապիտալիստական դլխավոր երկրների համեմատական տախտակ

Նավթահանող երկրներ	1939 թ. տոկոսներով	1946 թ. տոկոսներով	1955 թ. տոկոսներով
ԱՄՆ	60,0	62,0	44,6
Վենեսուելա	9,9	14,0	14,2
Մերձավոր և Միջին Արևելք . .	6,0	8,7	21,6
այդ թվում՝			
Իրան	3,7	—	2,1
Սաուդական Արաբիա . . .	0,2	—	6,4
Կուվեյտ	—	—	7,3
Իրաք	1,5	—	4,5
Մ. և Մ. Ա.-ի մյուս երկրները .	0,6	—	1,3
Կապիտալիստական աշխարհի մյուս երկրները	24,1	15,3	19,6
	100,0	100,0	100,0

նարար սկսում են գրավել Մերձավոր և Միջին Արևելքի երկրները։ Սրա հիմնական պատճառներից մեկն էլ այն է, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ուոլլ ստրիտի մագնատները շարունակելով հետապնդել հումքի համաշխարհային աղբյուրները տիրապետելու իրենց քաղաքականությունը և գերշահույթներ կորզելու գործը, իրենց ձեռքն են գցել Մերձավոր ու Միջին Արևելքի բնական հարստությունները, այդ թվում և առաջին հերթին նավթը։ Իսկ նավթի հանույթի հսկայական աճը բացատրվում է նաև նրանով, որ ԱՄՆ-ը, իր հետագա ագրեսիվ ծրագրերի իրագործման համար պատրաստում է ստրատեգիական նյութերի, այդ թվում և նավթի խոշոր պաշարներ։

Չնայած որ ԱՄՆ-ը նավթահանման տեսակետից գրավում է առաջին տեղը և դեռ շարունակում է իր ձեռքում պահել կապիտալիստական աշխարհի նավթի պաշարների մի զգալի մասը, հետևա-

---

* *Հաշվումները կատարված են ըստ հետևյալ աղբյուրների՝* Mikesell and Chenery, Arabian Oil, New York, p. 178; S. H. Longrigg, Oil in the Middle East, London 1954, p. 277; A. Beeby-Thompson, Oil Field, London, 1950, vol. I, pp. 6—7; W. E. Pratt and O. Good, World Geography of Petroleum, Princeton, 1950, pp. 159—229; World Petroleum, July 1954; Ibid. January 1955; Ibid. January 1956; Ibid, February 1956; Ibid, July 1956; The Petroleum Times, March 30, 1956, pp. 210—211.

բար ի վիճակի է նավթի իր կարիքները դեռ երկար ժամանակ լրիվ ապահովելու իր սեփական աղբյուրներից, սակայն նավթային խոշոր արեստները, առավելապես շահույթներ կորզելու իրենց անհագ ձգտումներից ելնելով, վարում են օտար երկրների, այդ թվում և Մերձավոր ու Միջին Արևելքի նավթի պաշարների զավթման քաղաքականություն, միաժամանակ այդ երկրները թե՛ տնտեսապես և թե՛ քաղաքականապես ենթարկելով իրենց տիրապետությանը։

1955 թվականի տվյալները ցույց են տալիս, որ Մերձավոր և Միջին Արևելքի երկրները արդյունահանելով 162 միլիոն տոննա նավթ, կապիտալիստական աշխարհում արդեն գրավել են երկրորդ տեղը։ Դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին (1939 թ.) այս շրջանը արդյունահանել էր միայն 17 միլիոն տոննա նավթ, իսկ պատերազմը ավարտվելուց անմիջապես հետո (1946) 35,6 միլիոն տոննա[1]։

Մերձավոր և Միջին Արևելքի նավթավայրերից 1955 թվականին առաջին տեղը գրավել է Բուրգանը (Կուվեյտում), որը դարձել է կապիտալիստական աշխարհի ամենաարագ արտադրողականություն ունեցող նավթավայրը։ Նույն թվականին միայն այդ նավթավայրը տվել է երկրի ընդհանուր նավթահանման 95 տոկոսը։ Այնուհետև գալիս է Գհաուար նավթավայրը (Սաուդական Արաբիայում) և, վերջապես, Կիրկուկը (Իրաքում), եթե հաշվի չառնենք Ադս ժարին (Իրանում), որտեղ նավթահանումը դադարեցվել էր 1951 թ. օգոստոսից և նորից վերսկսվեց 1954 թ. հոկտեմբերից։ Դեռևս 1946 թվականին միայն Իրանը տալիս էր Մերձավոր Արևելքի երկրների ընդհանուր նավթահանման 55 տոկոսը, որը 1950 թվականին արդեն Մերձավոր Արևելքի մյուս երկրների արդյունահանման աճի հետևանքով իջել էր 36 տոկոսի, իսկ նավթային արդյունաբերության ազգայնացման տարիներին անգլո-ամերիկյան նավթային մոնոպոլիաների կողմից համաշխարհային շուկաներում իրանական նավթը բոյկոտի ենթարկվելով, այն իջել էր 2 տոկոսի։

Առաջին երեք նավթավայրերը միասին 1955 թվականին տվել են Մերձավոր ու Միջին Արևելքի նավթի 75 տոկոսը և կապիտալիստական աշխարհի ընդհանուր նավթահանման 16 տոկոսը[2]։ Դա

---

[1] Ուրիշ տվյալների համաձայն՝ 1939 թվականին 15,81 միլիոն տոննա, իսկ 1949 թվականին 34,95 մլն. տե՛ս S. H. Longrigg, Oil in the Middle East. London, 1954, p. 277.

[2] Հաշվումները կատարված են ըստ հետևյալ աղբյուրների՝ World Petroleum. September 1955, p. 62; Ibid. February 1956; The Petroleum Times. August 19, 1955, p. 867; Ibid. 1956; Bulletin of the American Association of Petroleum Geologists. July 1956.

ցույց է տալիս, որ Մերձավոր և Միջին Արևելքի նավթահորերը անհամեմատ ավելի արտադրունակ են, քան այլ շրջանների նավթահորերը. այսպես, օրինակ, Արևելյան Տեխասում, որը նավթային պաշարներով ԱՄՆ-ի ամենահարուստ շրջանն է համարվում, ըստ Ռ. Ժուանի[1], 1947 թվականին 24 հազար հորից ստացվել է 17 միլիոն տոննա նավթ, մինչդեռ այդ նույն ժամանակաշրջանում Հափտա Կելում (Իրանում) 23 հորից ստացվել է 10 միլիոն տոննա։ Այլ կերպ ասած՝ Իրանի մի նավթահորի միջին արտադրունակությունը 615 անգամ ավելի բարձր է, քան ԱՄՆ-ի հորինը։ Այնուհետև, ուրիշ, ավելի թարմ տվյալների համաձայն, եթե ԱՄՆ-ի նավթահորերի միջին արտադրունակությունը օրական 11—13 բարել է (1,5—1,8 տոննա), ապա Վենեսուելայում միջինը 200 բարել է (27,5 տոննա), իսկ Մերձավոր և Միջին Արևելքում՝ 5200 բարել (712 տոննա)[2]։

Իսկ ինչ վերաբերում է նավթահանման ծախսերին, ապա պիտի ասել, որ ԱՄՆ-ում հանված նավթի յուրաքանչյուր բարելի ինքնարժեքը 1,85 դոլար է, մինչդեռ Վենեսուելայում՝ 0,50 դոլար, իսկ Արաբիայում՝ 0,30 դոլար։ Այս նշանակում է, որ անմշակ նավթի ինքնարժեքը ԱՄՆ-ում 3,7 անգամ ավելի է, քան Վենեսուելայում և 6 անգամ ավելի, քան Արաբիայում[3]։ Շնորհիվ այն հանգամանքի, որ Մերձավոր և Միջին Արևելքում նավթահորերը ավելի արտադրողունակ են և նավթահանման ծախսերը ցածր (որի կարևոր գործոններից մեկն է տեղում գոյություն ունեցող առատ և էժան բանվորական ուժը), ինչպես և շնորհիվ այն հանգամանքի, որ այս երկրները համաշխարհային շուկաների կենտրոնում գտնվե-

---

[1] R. Jouan. Le Pétrole Roi du Monde. Paris, 1949, p. 133.

[2] Foreign Affairs. April 1954. vol. 32. № 3, p. 422; The Petroleum Times, March 4, 1955, p. 264.

[3] Mikesell and Chenery. Arabian Oil, New York 1949, p. 19. Ինչպես երևում է այստեղից, ամերիկյան մագնատները շահագործում են ոչ միայն նավթային ամենաշահութաբեր սեփականները, այլև շարունակում են շահագործել նաև նվազ շահութաբեր նավթահորերը (տվյալ դեպքում ԱՄՆ-ի մեծ թվով անշահութաբեր հորերը), հակառակ այն հայտնի դրության, որի համաձայն կապիտալը հոսում է այնտեղ, ուր իր համար ամենաարագը շահույթներ է ապահովում։ Այս, իհարկե, բացատրվում է նրանով, որ, առաջին՝ նավթարդյունաբերության առպարեզում գոյություն ունեցող մոնոպոլիստական դրությունը հնարավոր է դարձնում շահագործելու նաև անշահութաբեր հորերը, երկրորդ՝ նրանով, որ, ինչպես նշել ենք, ԱՄՆ-ը, համաշխարհային ռեակցիայի գլուխը կանգնած, իր ագրեսիվ նպատակների համար նավթի պահեստներ է պատրաստում, հետևաբար շահագործում է նաև նվազ շահութաբեր հորերը։

լու հետևանքով հնարավոր է դարձել տրանսպորտի համեմատաբար ավելի ցածր գներով նավթը փոխադրել Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի սպառման վայրերը, այս շրջանի նավթի ինքնարժեքը անհամեմատ ավելի ցածր է։

Նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը Արևմտյան Եվրոպայի երկրներն իրենց անհրաժեշտ նավթային մթերքների 77 տոկոսը ստանում էին Հյուսիսային Ամերիկայից և Կարիբյան շրջանից։ 1955 թվականին այս նույն երկրները ներմուծած նավթի 85 տոկոսը մատակարարեց Մերձավոր Արևելքը։

«Էկոնոմիստ» ժուռնալի հաշվումների համաձայն, այդ տոկոսը 1959 թվականին հասնելու է 90-ի[1]։ Մինչդեռ ԱՄՆ-ի մասնակցությունը Եվրոպայի նավթի մատակարարումների մեջ կազմելու է 3 տոկոս։

Նույնը պետք է ասել Հեռավոր Արևելքի նկատմամբ. մինչև 1938 թվականը այստեղ նավթը ներմուծվում էր մեծ մասամբ Հյուսիսային Ամերիկայից, մինչդեռ 1955 թվականին այս . երկրների նավթի սպառումների միայն 12 տոկոսը ներմուծվեց այդ շրջանից, իսկ 57 տոկոսը՝ Մերձավոր և Միջին Արևելքից ու 31 տոկոսը՝ Ինդոնեզիայից։ Իսկ ինչո՞վ բացատրել ամերիկյան նավթի մագնատների այս «զիջումը» և «նահանջը» Եվրոպայի ու Ասիայի շուկաներից Մերձավոր և Միջին Արևելքի նավթի նվաճման առջև։

Կապիտալիստական երկրների նավթարդյունաբերության մեծ մասի կարաելացման հետևանքով ԱՄՆ-ի նավթային խոշոր մոնոպոլիստներին հաջողվել է նավթի կապիտալիստական աշխարհի, աղբյուրների նկատմամբ, ինչպես նաև նավթի համաշխարհային շուկաներում գերիշխող դիրք գրավել, որով նրանց համար այժմ հնարավոր է դարձել Եվրոպայի, Աֆրիկայի և մասամբ Ասիայի շուկաները ողողել Մերձավոր և Միջին Արևելքի նավթով, ձեռք բերել նույն առավելագույն շահույթները և նույնիսկ ավելին, քան ձեռք կբերեին իրենց սեփական նավթի վաճառքից։

Այսպես, օրինակ՝ տխրահռչակ «Մարշալլի պլանով» Ֆրանսիային վաճառված մերձավոր արևելյան նավթի յուրաքանչյուր բարելը արժեր 2 դոլար 03 սենտ, չհաշվելով փոխադրավարձը, մինչդեռ այդ նավթի ինքնարժեքը, կանոնավոր վարձի հետ միասին, բարելը 34 սենտից չէր անցնում։ Այսպիսով, անգլո-ամերիկյան նավթային մոնոպոլիաները Մերձավոր և Միջին Արևելքի նավթի վաճառքից հսկայական գերշահույթներ էին ձեռք բերում։

---

[1] The Economist, London, July 2, 1955, p. 1 (Supplement Oil).

Ֆրանսիական «Մոնդ» թերթի թղթակիցներից մեկի հաշվումների համաձայն, Եվրոպայի «օգնության» պլանով (E. R. P.) Մերձավոր Արևելքից մատակարարված նավթից անգլո-ամերիկյան նավթային տրեստները շորս տարվա ընթացքում ստացած պիտի լինեն մեկ միլիարդ դոլլար գերշահույթ[1]:

«Օրիան»[2] թերթի տվյալների համաձայն, 1946—1954 թվականների ընթացքում Մերձավոր Արևելքի նավթի շահագործումից անգլո-ամերիկյան նավթային մոնոպոլիստները ստացել են 2,5 միլիարդ դոլլար գերշահույթ: Դեռևս 1946 թվականին այդ շահույթները 55 միլոն դոլլարից չէին անցնում, մինչդեռ 1954 թվականին գերշահույթն արդեն կազմում էր ավելի քան 700 միլիոն դոլլար, և եթե 1954 թվականը հիմք ընդունենք, ապա պետք է եզրակացնեք, որ երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև այսօր (1956 թ.), այլ խոսքով ասած վերջին տասը տարիների ընթացքում անգլո-ամերիկյան մոնոպոլիստները Մերձավոր և Միջին Արևելքի նավթային հարստությունների շահագործելու հետևանքով պետք է ստանան ավելի քան 4 միլիարդ դոլլար շահույթ:

Տեղին է նշել, որ 1955 թվականին Մերձավոր և Միջին Արևելքի նավթի 80 տոկոսը արտահանվեց անմշակ վիճակում, 1946 թվականի 22 տոկոսի դիմաց: Այս երևույթը պետք է բացատրել նրանով, որ Իրանի նավթային հարստություններին զուգընթաց Արաբական նավթամշակման գործարանների սիստեմի պետականացման փորձից ելնելով, նավթի միջազգային մագնատները որոշել են նավթամշակման գործարաններ կառուցել առավելապես սպառման վայրերում, այդ կերպ հավերժացնելով Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հում նյութի բազայի նկատմամբ իրենց վաղեմի դիրքը:

Այս բոլորից հետո հասկանալի է, թե ինչու ամերիկյան իմպերիալիստները համաշխարհային տիրապետության համար Անգլիայի դեմ մղած իրենց պայքարում այնքան մեծ նշանակություն են տալիս Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին:

* * *

Մերձավոր և Միջին Արևելքում նավթի գոյացման ու հորատման համար կան երկրաբանական շատ աղանց նպաստավոր պայ-

---

[1] Le Monde, 30 Décembre 1948.

[2] L'Orient, 3 Juillet 1955, Beyrouth.

մաններ։ Այստեղ նավթի գոյացմանը նպաստել են ենթահողում առկա հետևյալ պայմանները.

ա) երկար ժամանակաշրջանի նստվածքայնությունը Թեթիսի[1] գեոսինկլինալում, որը պայմաններ է ստեղծել նավթի գոյացման համար տարբեր հաստակի և տարբեր բնույթի շերտախմբերի մեջ.

բ) Թեթիսը, որպես շատոշող ծով, հարուստ է եղել կենդանական աշխարհով.

գ) ծովի հատակում գտնվող բյուրեղային պլատֆորմի մեծ դիմադրությունը էքստենսիվ ծալքերի գոյացման ժամանակ.

դ) մեծ քանակությամբ ջրամերժ մակերևութային ապարների (ավազաքարերի, թերթաքարերի, դիպսերի, գորշաքարերի, քարաղերի և կավերի ջրամերժ շերտերի) առկայությունը։

Թեպետ այս շրջանում դեռևս սպառիչ կերպով հետախուզական աշխատանքներ չեն կատարվել, բայց և այդպես, նշված տեղեկությունները երկրաբաններից շատերի կողմից բավարարություններ են համարվել եզրակացնելու, որ Մերձավոր և Միջին Արևելքի ընդերքը կապիտալիստական աշխարհի նավթային պաշարներով ամենահարուստ գոտին է։

Մերձավոր և Միջին Արևելքի նավթառատ գոտիներն են՝

1. Հարավ-արևմտյան Իրանի Խուզիստանի պրովինցիայի նավթավայրերի գոտին.

2. Հյուսիսային Իրաքի և Հյուսիս-արևմտյան Իրանի նավթավայրերի գոտին.

3. Սաուդական Արաբիայի և Պարսից ծոցի ծովափնյա նավթավայրերի գոտին.

4. Հյուսիս-արևելյան Եգիպտոսի նավթավայրերի գոտին։

Բացի նշված գոտիներից, կան նաև նավթի գոյացման համար նպաստավոր երկրաբանական ստրուկտուրաներ ունեցող մի շարք այլ վայրեր, որոնք ապագայում կարող են դառնալ նավթային հետախուզումների նոր կենտրոններ։

Խուզիստանի նավթավայրերը։ Այս նավթավայրերը գտնվում են Զագրոսյան լեռնասիստեմի արևմտյան լանջերում, Բուշիրի և Պուշտ-ի-Կուհ կոչված լեռնաշարքի միջև։ Արևմտյան Զագրոսը բաղկացած է լայն անտիկլինալ կատարների շարքից, որոնք ունեն անհավասար տարածում։ Այս կատարներից մեկը՝Պուշտ-ի-Կուհը կազմում է Զագրոսյան սիստեմի արևմտյան ծայրագույն կետի մի մասը Բաղդադի աշխարհագրական լայնությանը հավասար։ Այս

---

[1] Թեթիսը նախապատմական ժամանակաշրջանի օվկիանոս է։

լեռնաշարքն ունի ընդամենը 320 կիլոմետր երկարություն, և իր հանգման կետերում՝ հյուսիս-արևմուտքում և հարավ-արևելքում ծալքային սարուկառուցվածքների զլխիկոր խորասուզման հետևանքով նրան անմիջապես չեն հաջորդում նոր բարձրություններ։ Ուստի Զագրոսյան սիստեմի արևմտյան վերջավորությունը մոտենալով Տիգրիս գետին, իր վարընթացը գետի Միջագետքի հարթավայրը կատարում է հանկարծակի։ Գետի հյուսիս-արևմուտքի և հարավ-արևելքի բարձրավանդակների շրջաններում գոյանում են լայնատարած ցածրավայրային խորշեր, որտեղ դաշտավայրերը տեղ-տեղ աստիճանաբար բարձրանալով, կազմում են մի շարք բրախի անտիկլինալներ, որոնք ուղղվում են դեպի Զագրոսյան սիստեմը։ Ահա այս երկու բրախի անտիկլինալների սիստեմի շրջանակներում են գտնվում Իրանի և Իրաքի ամենահարուստ նավթավայրերը, ընդ որում հարավային խորշում՝ Կարուն գետի հովտում գտնվում են Խուզիստանի նավթավայրերը, իսկ հյուսիսային խորշում՝ Իրաքի և Հյուսիս-արևմտյան Իրանի նավթավայրերը, որոնց միջև որպես բաժանող պատնեշ հանդես է գալիս Պուշտ-ի-Կուհի լեռնային սիստեմը։

Այս բրախի անտիկլինալների հովիտները ծովի մակարդակից 150—250 մետր բարձր են։ Նրանց միջով անցնում են անտիկլինալ բլրակներ, հաճախ մաշված դարավանդներով, որոնց տալիս են բարձրավանդակների կերպարանք։ Այս բլրակներից մեկի՝ Կուհ-ի-Սեհ Կալեյատունի վրա գտնվում են Գաչ Սարան նավթավայրի գլխավոր հորերը։

Խուզիստանի նավթավայրերի ընդերքը կազմված է ավելի քան 300 մետր հզորությամբ կրաքարային մի հսկա շերտից, որը նավթային խոշոր պահեստի դեր է կատարում։ Այս ապարը, որը հայտնի է Ասմարիի կրաքար անունով, օլիգոցեն-միոցեն հասակի է, ոչ այնքան ծակոտկեն, և եթե չլինեին հետագա ժամանակաշրջաններում զոյացած ճեղքվածքները, ապա շահագործելի քանակությամբ նավթի արտահոսում տեղի չէր ունենա։ Ուստի, հորատումներ կատարելու ժամանակ հաշվի են առնվում այս կարևոր հանգամանքը և աշխատանքները կենտրոնացվում են այնպիսի կետերում և այնպիսի ուղղությամբ, որպեսզի կարելի լինի անպայման հանդիպել այդ ներքին ճեղքվածքներին։ Թեև այս որոշ տեխնիկական դժվարությունների հետ է կապված, սակայն հաջողության դեպքում այս հորատման անցքերից ստացվող նավթը հասնում է վիթխարի չափերի։


ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆԱՎԹԻ ԳԵՈԼՈԳԻԱՆ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Նավթակիր
Ջրորոգական
Նոր
Դալեոզոյան և Մեզոզոյան
Մեզոզոյան և Դալեոզոյան
Քեմբրեյան
Կազմեց Հ. Կ. ՄՈՅԱՆ
Հարդարեց Ս. ՊՅՈՒՐԵՂՅԱՆ
ՄԵՍՈՊՈՏԱՄԻԱ
ՊԵՐՍԻԱ
ՍԱՄԱՐԱ
ՄՈՍԿՎԱ
ՍԱՄԱՐԱ
ՍԱՄԱՐԱ
ՍԱՄԱՐ

կու բրախի անտիկլինալների խորշերի հյուսիսում։ Այստեղ կրկնվում են Խուզիստանի ստրուկտուրայի համար բնորոշ բոլոր հատկությունները։ Նույն բրախի անտիկլինալների տոպոգրաֆիան 80—135 կիլոմետր լայնքով, ընթանում է դեպի արևելք երկարող Զագրոսյան լեռնասիստեմին զուգահեռ։ Ծալքավորումը նույնպես ընթանում է նույն տիպի անտիկլինալներով ստորնաբաժանումների գոտում, թեև ավելի խիստ անկումներով դեպի հարավ-արևմուտք։ Նավթի պահեստային շերտախումբը կազմված է էոցեն-միոցենի կրաքարերից և շատ նման է Խուզիստանի Ասմարիի սերիային, թեև դա այստեղ ներկայացնում է ավելի մեծ խտություն։ Այստեղ երեք կարևոր նավթավայրեր են շահագործվում — երկուսը Իրաքում՝ Կիրկուկ և Նաֆտ-Խանեհ, իսկ երրորդը սահմանամերձ, և այս վերջինի հետ ստորերկրյա երակներով կապված Նաֆտ-ի-Շահը՝ Իրանում։

Կիրկուկում 80—100 կիլոմետր երկարությամբ նեղ անտիկլինալում (որը նավթային գմբեթի համար համարվում է արտակարգ մեծություն) ստորերկրյա նավթային պահեստները, Խուզիստանի նավթավայրերի նման, կապված են իրար հետ, որի հետևանքով մինչև այժմ հորատված մի քանի հորերը բավական են համարվում ամբողջ պահեստներում եղած նավթը շահագործելու համար։

Սաուդական Արաբիայի և Պարսից ծոցի ծովափնյա գոտու նավթավայրեր։ Այս շրջանի երկրաբանական պայմանները ներկայացնում են Իրանի և Հյուսիսային Իրաքի պայմանների ուղղակի հակապատկերը։ Նստվածքային շերտերի ծալքավորումը հնագարյան կոնտինենտալ պլատֆորմի առկայության հետևանքով խիստ կրճատված է, ուստի նավթաբեր ստրուկտուրաները խիստ մերկացած լայնատարած անտիկլինալներ են։ Մի քանի վայրերում անտիկլինալ ստրուկտուրաները տեսանելի են հենց մակերեսում, ուրիշ վայրերում, ընդհակառակը, տոպոգրաֆիան ոչ մի կերպ չի օգնում նավթի գմբեթների առկայությունը որոշելու գործում։ Արաբիայի նավթաբեր շերտերը հասակով յուրայից կավճայինի են հասնում, հետևաբար շատ ավելի հին ժամանակների են պատկանում, քան Իրանի և Իրաքի նավթաբեր շերտերը։ Մի ուրիշ տարբերությունն էլ այն է, որ Արաբիայի որոշ շրջաններում նավթաբեր շերտերը գտնվում են ծակոտկեն ավազաքարերի և ոչ թե կրաքարերի միջև։ 1937 թվականին նման ավազաքարային տիպի նավթատար շերտ հայտնաբերվեց Բուրգանում, որը գտնվում է Կուվեյտ քաղաքից 50 կիլոմետր հեռավորության վրա։ Այստեղից ստացված նավթը

լավ որակի է, թեև մի քիչ ավելի թանձր է, քան Իրանի նավթը, իսկ ծծմբային պարունակությունը ցածր է։

Դամամի նավթավայրերի ընդերքը բաղկացած է շատ ծանծաղուտ գմբեթից՝ վեց կիլոմետր երկարությամբ և նավթատար շերտը կազմված է յուրայի հասակի կրաքարերից գորշաքարերի խավով, որը կազմում է ծածկային ապարը։ Ստրուկտուրային շատ նմանօրինակ պայմաններ ունեն նաև Աբկայիկի և Կատիֆի նավթավայրերը, թեև այդ տեղերում յուրայի տիպի նավթային պաշարները գտնվում են մի քիչ ավելի մեծ խորությունների վրա։

Այս նավթավայրի ընդերքը հարուստ է նաև արտեզյան ջրի ավազաններով, որոնք գտնվում են ծակոտկեն շերտերում, անմիջապես նավթաբեր շերտերի վերևում, որի հետևանքով նավթահորերը ենթակա են ջրակալման վտանգի։

Ջեբել Դուխան նավթավայրում (Կատար թերակղզում) նավթային պաշարները գտնվում են յուրայի հասակի կրաքարային շերտերում։

Եգիպտոսի նավթավայրեր։ Եգիպտոսի նավթավայրերը, թվով երկու, գտնվում են Սուեզի ծոցի արևմտյան ափին։ Այս շրջանում երկրաբանական ստրուկտուրան չափազանց բարդ է, շերտերի մի շարք տիպերով, որոնք պատկանում են նախաքեմբերյանից մինչև արդիական ժամանակներին հասնող տարբեր հասակների։ Այստեղ չկան նավթի մեծ դոյացումներին նպաստող այնպիսի ստրուկտուրաներ, ինչպիսիները կան Իրանում, Իրաքում և Սաուդական Արաբիայում։ Թեև նավթի գոյությունն ապացուցող մակերևութային նշաններ կան Սուեզի շրջանում, սակայն հետախուզումները մինչև այսօր գործնական արդյունքներ չեն տվել։ Հուրղադայում հայտնաբերված նավթավայրը վերջին ժամանակներս մոտալուտ ապառման նշաններ է ցույց տալիս։ Այստեղից ստացված նավթը թանձր է, թեև ոչ այնքան, որքան Տիգրիս-Եփրատի շրջանի նավթը, իսկ ծծմբային պարունակությունը համեմատաբար բարձր է։

ԻՐԱՆ

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների սիստեմում նավթը առաջին անգամ հայտնաբերվեց Իրանում։

Իրանի նավթային դաշտերը գտնվում են երկրի հարավ-արևմուտքում՝ Իրաքի սահմանամերձ շրջաններում, հյուսիսում՝ ՍՍՌ-ի սահմանամերձ Իրանական Ադրբեջանի հարավում, ինչպես Կասպյան ծովամերձ շրջաններում, Խորասանում և, վերջապես, արևելքում

Լյուտի անապատի ծայրամասում՝ իրանական Բելուջիստանում։ Երկրի կենտրոնական շրջանում՝ Դաշտի-Կավիրում նույնպես կան նավթային հարուստ շերտերի հետքեր։ Ներկայումս լայն մասշտաբներով շահագործվում են միայն հարավ-արևմտյան ծովամերձ շրջանի նավթային հարստությունները։ Չնայած ամերիկյան մի շարք ընկերություններ ջանացին ձեռք գցել Իրանի հյուսիսային շրջանների հարստությունները, անգամ կնքելով կոնցեսիոն պայմանագրեր, սակայն մեջլիսը դրանցից և ոչ մեկը չհաստատեց։

Իրանի հարավ-արևմտյան շրջանում նավթային շերտերի գոյության մասին առաջին անգամ 1855 թվականին հիշատակել է Վ. Կ. Լոֆտուս անունով մի երկրաբան[1]։ Հետագայում, մինչև Վիլիամ Նոքս Դ'Արսիի կողմից կոնցեսիոն իրավունքների ձեռք բերումը, այս շրջանի նավթային շերտերի գոյության հնարավորությունների հարցով զբաղվել են նաև մի շարք անհատներ ու կազմակերպություններ, որոնց թվում Յուկիուս դը Ռեյտերը, Հոցը, Բանկինգ Կորպորեյշընը ընկերությունը, ինչպես նաև ֆրանսիացի հայտնի ինժեներ-հնագետ Ժ. դը Մորգանը, որի 1892 թվականին կազմած՝ պարսկական ընդերքի նավթային շերտերի շահագործման հնարավորությունների մասին հաշվետվությունը Դ'Արսիի համար բավարար հիմք ծառայեց հետագայում ձեռնարկելու այս շրջանի նավթային պաշարների շահագործումը։

Առաջին հետախուզական աշխատանքներն Իրանում սկսվեցին անցյալ դարի 90-ական թվականներից։ 1891 թվականից մինչև 1893 թվականը Բուշիրի հյուսիս-արևելքում, Դալակի կոչվող վայրում երկու, իսկ Կիշմ կղզում մեկ հորատում կատարվեց Պերժըն Բանկ Մայնինգ Ռայյ Կորպորեյշընը (անգլո-գերմանական կապիտալ) ընկերության կողմից։ Այս երեք հորն էլ ամուլ դուրս գալու պատճառով այդ ընկերությունը 1894 թվականին հարկադրյալ լուծարքի ենթարկվեց։

Դ'Արսիի նախաձեռնությամբ կատարված առաջին հորատումները նույնպես անհաջողության մատնվեցին։ 1902 թվականին Շիա Սուրխ կոչվող վայրում, այնուհետև 1906 թվականին Ռամ Հորմուզի մոտ Մամատայն կոչվող վայրում կատարված հորատման աշխատանքները նույնպես արդյունք չտվեցին։ Միայն 1908 թվականին Լր, որ նավթը, շահագործելի մասշտաբներով, առաջին անգամ հայտնաբերեց Մասջիդ-ի-Սուլեյմանում՝ Պարսից ծոցից 200 կիլո-

[1] W. K. Loftus, «On the Geology of Portions of the Turco-Persian Frontier and of the Districts Adjoining». Quarterly Journal Geological Society. London, vol. XI, 1855, pp. 247—314.

մեծ հետաքրքրության վրա։ Այդ հայտնաբերումից մի տարի անց կազմվեց Անգլո-Պերժին Օյլ Կոմպանին, որը հետագայում վերանվանվեց Անգլո-Իրանիան Օյլ Կոմպանի (այժմ Բրիտիշ Պետրոլյում Կոմպանի)։

1914 թվականին Իրանի նավթի տարեկան հանույթը կազմում էր ոչ ավելի, քան 350 հազար տոննա։ Անգլիական ռազմական նավատորմը՝ այդ թվականներին դեռ նոր էր անցել մազութային շարժիչի։ Այդ հանգամանքը հրատապ հարց էր դնում անգլիական կառավարության առջև՝ ռազմա-ծովային նավատորմը ապահովել համապատասխան վառելանյութով։ Բրիտանական ռազմա-ծովային մինիստրությունը Ուինստոն Չերչիլի առաջարկով 1914 թվականին ձեռք է բերում Անգլո-Պերժին Օյլ Կոմպանիի բաժնեթղթերի 52,5 տոկոսը։

Առաջին իմպերիալիստական պատերազմը խանգարում է Անգլո-Պերժինի հետախուզական աշխատանքներին։ Պատերազմից անմիջապես հետո, անգլիական կառավարությունը մեծ չափով վերսկսում է նավթահետախուզական աշխատանքները։ Արդեն 1919 թվականին Մասջիդ-ի-Սուլեյմանի հանքավայրից ստացվում է մեկ միլիոն տոննա նավթ։ Շարունակվող հետախուզական աշխատանքները 1923 թվականին հայտնաբերեցին Նաֆթ-ի-Շահ նավթավայրը, որը գտնվում է Բաղդադի հյուսիս-արևելքում՝ Իրաքի սահմանամերձ շրջանում։ Տեխնիկական դժվարությունների պատճառով այս նավթավայրը շահագործման հանձնվեց միայն 1935 թվականին։ 1928 թվականին հայտնաբերվեցին երկու չափազանց հարուստ նավթավայրեր ևս՝ Հաֆթ-Կելը (Մասջիդ-ի-Սուլեյմանից 75 կիլոմետր հարավ-արևելք) և Գաչ-Սարանը (ավելի հարավ, գրեթե Պարսից ծոցի ափին՝ Զագրոսյան լեռների լանջին)։ Այս նավթավայրերից առաջինի շահագործումը հնարավոր դարձավ 1929 թվականին, իսկ երկրորդինը՝ 1940 թվականին, երբ կառուցվեցին յուրաքանչյուր նավթավայրից դեպի Աբադանի նավթամշակման գործարանները տանող նավթամուղեր։ Աբադանը սահմանակից է Իրաքին և գտնվում է Շատտ-էլ-Արաբի դեltաբերանում, Բասրահի հյուսիսում։

Հետագայում, 1934 թվականին — հայտնաբերվեց Նաֆթ-Սաֆիդ նավթավայրը, որը գտնվում է Մասջիդ-ի-Սուլեյմանի և Հաֆթ-Կելի միջև. ենթադրվում է, որ նա կապ ունի վերջինիս նավթակիր երակների հետ։ Այս հանքավայրի շահագործումը հնարավոր դարձավ 1945 թվականին, երբ նա ևս նավթամուղով միացվեց Աբադանի նավթամշակման սիստեմին։ 1937 թվականին հայտնաբերվեցին

ևս երկու նոր հանքավայրեր՝ Աղա-Ժարին և Պալանունը, որոնք գտնվում են Հաֆտ-Կելի և Գաչ-Սարանի միջև ընկած տերիտորիայում։

Այս նավթահորերի խորությունը փոփոխական է և կախված է երկրի ընդերքում նավթարեր շերտերի դիրքերից։ Իրանի և առհասարակ Մերձավոր Արևելքի նավթաշերտերը համեմատաբար ավելի մոտ են գտնվում երկրի մակերևույթին, քան այլ երկրներում։ Այդ է պատճառը, որ այս շրջաններում հորատման և շահագործման ծախսերը համեմատաբար փոքր են։

Իրանի նավթը թեթև տեսակի է։ Նրա տեսակարար կշիռը տատանվում է 0,813-ի և 0,865-ի միջև։ Նավթը մշակվում է տեղում՝ Աբադանում, որտեղ գործում է կապիտալիստական աշխարհի նավթամշակման ամենախոշոր գործարանների սիստեմը։

Աբադանի նավթամշակման սիստեմի առաջին գործարաններն սկսեցին կառուցել 1908 թվականից, Մասժիդ-ի-Սուլեյմանի հարուստ նավթավայրի հայտնաբերումից անմիջապես հետո։ 1911 թվականին այդ սիստեմը արդեն հանձնվեց շահագործման։ Այս սիստեմի թորման կարողությունն է տարեկան 25-ից 30 միլիոն տոննա, թեև վերջին իրադարձությունների հետևանքով այժմ այդ սիստեմի հնարավորությունները լրիվ չափով չեն օգտագործվում։ 1954 թ. հոկտեմբերի 29-ից (Կոնսորցիումի ձևերն անցնելու թվականը) մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ը մշակվել է ընդամենը 898 հազար տոննա, իսկ 1955 թ. 14 միլիոն տոննա նավթ։ Նրա հիմնադրման թվականից մինչև 1955 թվականը մշակվել է ավելի քան 350 միլիոն տոննա նավթ։ 6-րդ աղյուսակում բերված տվյալները հաստատում են կապիտալիստական երկրների նավթա-

Աղյուսակ 6

Կապիտալիստական երկրների նավթաթորման խոշորագույն գործարանները

Վայր	Երկիր	Թորման տարեկան կարողութ. (մլն. տոննա)
Աբադան	Իրանում	25
Արուբա	Հոլանդական Անտիլներ	20
Կուրասաո	» »	13
Բաթոն Ռուժ	Լուիզիանա (ԱՄՆ)	10
Պորտ Արթուր	Տեխաս (ԱՄՆ)	10
Բեյտաուն	Տեխաս (ԱՄՆ)	10
Բահրեյն	Բահրեյն	10
Ռաս Տանուրա	Սաուդական Արաբիա	9
Աղեն	Աղեն	5,2

թորման խոշորագույն գործարանների շարքում Աբադանի նավթաթորման գործարանի առաջնությունը։

Աբադանի նավթամշակման գործարանները նշանավոր են նաև նրանով, որ այնտեղ հնարավոր է մշակել նավթի բոլոր ֆրակցիաները և մշակման համար անհրաժեշտ քիմիական զանազան նյութեր, մինչև նման կոմպլեքսային նավթամշակման գործարաններ հաղվադեպ են կապիտալիստական աշխարհում։ Աբադանի նավթամշակման գործարանների սիստեմի արտադրած պրոդուկտների մեջ մտնում են բենզին, կերոսին, քսուքներ, մազութ, բարձր ֆրակցիայի նյութեր, ինչպես, օրինակ, օկտանային բենզիններ, պրոպան, իզո-պրոպան, իզո-պենտան և այլն։ Մշակման, թորման և կրեկինգի պրոցեսի հետ կապված անհրաժեշտ նյութերը նույնպես արտադրվում են տեղում։ Այսպես, օրինակ, ծծմբաջուրն ստացվում է բնական գազերից՝ հատուկ պրոցեսի միջոցով։ Բացի այդ, արտադրվում են նաև ծծմբական թթու, կրաջուր, որոնք ստացվում են ծովի խխունջներից։ Այս հսկայական կոմբինատը ծախսում է ավելի քան 84 հազար կիլովատ ժամ էլեկտրական էներգիա, որը մոտավորապես հավասար է միջին մեծության քաղաքի կողմից սպառվող էներգիային։

Այս բոլորի լույսի տակ միանգամայն հասկանալի է դառնում, թե անգլիական նավթային մոնոպոլիստների համար ինչպիսի ուժեղ հարված էր 1951 թվականին Իրանի նավթային հարստությունների հետ միասին Աբադանի նավթամշակման գործարանների սիստեմի ազգայնացումը իրանական կառավարության կողմից։ Աբադանում, նավթամշակման գործարանների սիստեմին կից կառուցված է նավթաբարձման խոշոր նավահանգիստ, բարձման 15 նավամատույցներով։ Նավահանգստի ընդունման տարողությունն է ամսական 150 նավթատար նավ։ Նավթատար նավատորմը պատկանում էր Բրիտիշ Տանկերզ Կոմպանիին, որը հանդիսանում է Անգլո-Իրանիան Օյլ Կոմպանիի (այժմ Բրիտիշ Պետրոլյում Կոմպանիի) դուստր-ընկերությունը։ 1956 թվականին այդ ընկերությունն ուներ 178 նավթատար նավ՝ 2,55 միլիոն դեդվեյտ[1] տոննա տարողությամբ։

Աղա-Ժարիի նավթավայրի անմշակ նավթը գրեթե ամբողջությամբ արտահանվում է Բանդար Մաշուրի բարձման կայանից։

Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին տարիներին, երբ բրիտանական առևտրական և նավթատար նավատորմը խոշոր

[1] Նավի տարողությունը բեռնաթափված վիճակում։

վնասներ կրեց և երբ Միջերկրական ծովը դաշնակից նավերի համար արգելված գոտի դարձավ, Իրանի նավթի արդյունահանումը զգալի չափով նվազեց, հասնելով տարեկան 6,6 միլիոն տոննայի։ Պատերազմի վերջին տարիներից սկսած երբ Միջերկրականի ճանապարհը վերաբացվեց, Իրանի նավթահանումն ունեցավ մեծ վերելք, զգալի չափով գերազանցելով նախապատերազմյան շրջանի նավթահանման մակարդակը։ Պատերազմից հետո նույնպես Իրանի նավթահանման մակարդակը շարունակեց բարձրանալ մինչև 1951 թվականի ամառը, սակայն երբ նավթային հարաբերությունների աղճատման հետևանքով նավթային մոնոպոլիաները համաշխարհային շուկաներում իրանական նավթը բոյկոտի ենթարկեցին, այս երկրի նավթահանումը խիստ նվազեց։

Իրանը 1911 թվականից մինչև 1955 թվականը արդյունահանել է ընդամենը 370 միլիոն տոննա անմշակ նավթ, որի մեծ մասն ստացվել է Մասջիդ-ի-Սուլեյման նավթավայրից։ Այժմ ամենակարևոր նավթավայրը հանդիսանում է Ագա-Ջարին։ 1939 թվականին, երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, Իրանում արդյունահանված 9,6 միլիոն տոննա նավթի դիմաց 1946 թվականին, պատերազմը վերջանալուց հետո, արդյունահանվել է 19 միլիոն տոննա, իսկ 1950 թվականին, նախքան նավթային հարաբերությունների ապդայնացումը, արդյունահանվել է 31,8 միլիոն տոննա, և 1951 թվականին, մինչև օգոստոս ամիսը՝ 16,8 միլիոն տոննա։ 1954 թ. հոկտեմբերի 29-ից (Կոնսորցիումի ձևքը անցնելու թվականը) մինչև 1954 թ. դեկտեմբերի 31-ը արդյունահանվել է 898 հազար տոննա, չհաշվելով Իրանի պետության կողմից շահագործվող Նաֆտ-ի-Շահ նավթավայրից արդյունահանվող 160 հազար տոննան։ Վերջապես, 1955 թվականին Իրանում արդյունահանվել է 16 միլիոն տոննա նավթ։ Նախնական տվյալների համաձայն 1956 թվականի առաջին կիսամյակին Իրանում արդյունահանվել է 12,1 միլիոն տոննա նավթ։

Վերջին տվյալների համաձայն, Իրանի նավթային պաշարները հաշվվում են 3,71 միլիարդ տոննա (տե՛ս աղյուսակ 2)։ Իրանի գրեթե բոլոր նավթավայրերը Աբադանի նավթամշակման սիստեմի հետ կապված են նավթամուղային խոշոր ցանցով, որն ունի 2300 կիլոմետր ընդհանուր երկարություն։ Միդլ Իստ Պայպ Լայն Կոմպանին ծրագրել էր կառուցել Աբադանից մինչև Միջերկրական ծովի ափը ձգվող նավթամուղ, որի շնորհիվ պետք է մեծ չափերով կրճատվեն տրանսպորտի ծախսերը խուսափելով Սուեզի ջրանցքի տուրքերից։ Այդ նավթամուղի խողովակներն պետք է ունենային 860—910 մի-

լիմետր տրամագիծ, իսկ փոխադրման ունակությունը՝ օրական 75 հազար տոննա նավթ։ Նավթամուղը ծրագրված էր ավարտել 1951 թվականի ամռանը, սակայն հետպատերազմյան տարիներին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, որոնք կապված են անգլո-ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիաների հակասությունների հետ խանգարեցին հիշյալ նավթամուղի ծրագրի կատարմանը։ Այժմ կառուցվում է Ահվազը Թեհրանի հետ կապող նավթամուղ՝ 945 կիլոմետր ընդհանուր երկարությամբ։ Այս գծի առաջին մասը, որը Ահվազը կապում է Աղնոի հետ, անցնում է Տավրոսյան լեռների վրայով, ծովի մակերեսից մոտ 3000 մետր բարձրությամբ։ Այս նավթամուղի խողովակների տրամագիծն է 250 միլիմետր, իսկ փոխադրման ունակությունը՝ տարեկան 2 միլիոն տոննա, և կոչված է սպասարկելու երկրի նավթային մթերքների ներքին պահանջներին։ Այս նավթամուղի կառուցման գործը հանձնված է Ռիչարդ Կոսանեն-Ջոն Բրաուն ընկերությանը (անգլիական կապիտալ) և Սոսիետե Անոնիմ (ֆրանսիական կապիտալ), իսկ խողովակները և այս գծի համար անհրաժեշտ մյուս նյութերը մատակարարելու է Ստիուարդ Էնդ Լոյդ ընկերությունը (անգլո-ամերիկյան կապիտալ)։ Գծի կառուցման ծախսերը պիտի ապահովվեն նավթի հանույթից պետությանը հասնող եկամուտների ֆոնդից։ Սա հանդիսանում է օտարերկրյա կապիտալիստների կողմից Իրանին հասնող նավթային եկամուտները խլելու բազմաթիվ օրինակներից մեկը։

Նավթային հարստությունների շահագործումից Իրանի կառավարության հասանելիք գումարները խլելու նպատակով Կոնսորցիումը և նրա հետ կապված ընկերությունները ճնշման, կաշառքի և նման այլ նենգ մեթոդների դիմելով ձեռք են բերում երկրում մի շարք կոնցեսիաներ, այդ թվում նշենք՝ Կարաջում և Կազրինում կառուցվելիք տեքստիլ գործարանները, որոնց շինության գործը հանձնված է իտալական ֆիրմաներին, այնուհետև, մոտ 6 հազար կիլոմետր նոր ճանապարհների շինությանը, որը հանձնված է Ջոն Մոլլեմ Լիմիտեդ անգլիական ընկերությանը, նոր էլեկտրակայանների կառուցման գործը, որը հանձնված է Սոսիետե Ժենեռալ դը Կոնսարյուկսիոն էլեկտրիկ է Մեքանիք ֆրանսիական ընկերությանը, 4,5 միլիոն դոլար արժողությամբ, Շահրուդ-Մեշհեդի երկաթգծի շինարարության հետ կապված նյութերի մատակարարման գործը նույնպես հանձնված է ֆրանսիական՝ Սոսիետե դ'Էտյուդ Ֆերոմիեր ընկերությանը, որի համար մինչև այժմ հատկացված գումարները հաշվվում են 3,58 միլիոն դոլար։ Մյուս կողմից՝ գեր-

մանական ծանր ինդուստրիայի ամենահայտնի ներկայացուցիչ։ Կրուպ մոնոպոլիստական ընկերությունը արդեն բանակցություն մեջ է գտնվում Իրանի երկաթի, պղնձի և կապարի հանքերի շահագործման համար, ինչպես նաև տարեկան 100 հազար տոննա կարողությամբ ձուլարան կառուցելու համար։ Օտարերկրյա մասնավոր կապիտալի ներթափանցման զուգահեռ ավելանում է նաև կառավարության պարտաբեռնվածությունը։ Միայն 1955 թվականին Իրանի պետության պարտքը ավելացել է ԱՄՆ-ից ստացված 127 միլիոն դոլար վարկերով, Անգլիայից ստացված 10 միլիոն ֆունտ ստեռլինգ և Ֆրանսիայից ստացված 5 միլիարդ ֆրանկ (14,3 միլիոն դոլար) վարկերով։

Ահա ամփոփ, Իրանի նավթային հարստությունների ազգայնացմանը հաջորդող առաջին տարվա հաշվեկշիռը, որը ցայտուն կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի հսկայական թափերով և արագ տեմպերով օտարերկրյա կապիտալը մխրճվում է երկրի արտադրության բոլոր ասպարեզներում ի չիք դարձնելով նավթային հարստություններից պետությանը հասնող եկամուտները։

Իրանում գործող կոնցեսիոն ընկերությունները։ Մինչև Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի հաստատումը այս երկրի նավթային հարստությունները շահագործվում էին Անգլո-իրանական նավթային (նախկինում Անգլո-Պերժին) ընկերության կողմից։ Այս ընկերությունը գտնվում էր անգլիական կապիտալի ձեռքում։ Բաժնեթղթերի 52,5 տոկոսը պատկանում էր անգլիական կառավարությանը, 22 տոկոսը՝ Բիրմա Օյլ Կոմպանիին, իսկ մնացածը գտնվում էր տարբեր կապիտալիստների ձեռքում։ Այս ընկերության կոնցեսիոն ժամկետը 1933 թվականին երկարացվեց մինչև 1993 թվականը, այդ նույն թվականին կոնցեսիոն տարածությունը սահմանվեց երկրի հարավ-արևմուտքի պրովինցիաներում մոտ 256 հազար քառ. կիլոմետր։ Իրանական նավթային արդյունաբերության ազգայնացումից հետո, երբ մոտավորապես երեք տարի այն մնաց երկրի կառավարության ձեռքը, միջազգային մոնոպոլիստներին հաջողվեց Իրանի կառավարությունից նորից խլել այս հարստությունները և ստեղծելով այդ նպատակի համար կազմակերպված միջազգային կոնսորցիում, նավթի շահագործումը հանձնել նրա տնօրինությանը։ Այս կոնսորցիումի մեջ մասնակցում են՝ Բրիտիշ Պետրոլյում Կոմպանին (նախկին Անգլո-իրանական ընկերությունը)՝ 40 տոկոսով (անգլիական կապիտալ), այնուհետև՝ Բատափշե Պետրոլյում Մատատշապիժ (հոլլանդական կապիտալ) 14 տոկոսով, Կոմպանի Ֆրանսեզ դե Պետրոլ (ֆրանսիական կա-

պիտալ)՝ 6 տոկոսով և, յուրաքանչյուրը 8 տոկոսով, հետևյալ հինգ ամերիկյան ընկերությունները՝ Սոկոնի-Մորիլ Կոմպանի, Սատանդարդ Օյլ Կոմպանի օֆ Նյու Ջերզեյ, Սատանդարդ Օյլ Կոմպանի օֆ Կալիֆորնիա, Գուլֆ Օյլ Կորպորեյշընն և Տեկսաս Օյլ Կոմպանի։ Հետագայում ամերիկյան մի շարք այլ մոնոպոլիստական ընկերություններ, ճակատ կազմելով, պայքար ծավալեցին կոնսորցիումի մեջ մասնակցություն ձեռք բերելու համար, որի հետևանքով 1955 թ. ապրիլի 29-ին կայացավ մի նոր համաձայնություն, ըստ որի յուրաքանչյուր ամերիկյան ընկերություն իր իրավունքից զիջելով մեկ տոկոս, ստացված 5 տոկոսը բաժանվեց հետևյալ 12 ընկերությունների միջև՝ Ռիչֆիլդ Կոմպանի 5 տոկոսի 3/12-ը, Ամերիկըն Ինդիպենդընտ Օյլ Կոմպանի 2/12-ը, և 1/12-ը հետևյալներից յուրաքանչյուրին՝ Հանկոկ Օյլ Կոմպանի, Ատլանտիկ Օյլ Կոմպանի, Պասիֆիկ Վեստերն Օյլ Կորպորեյշընն, Սան Յասինտո Օյլ Կոմպանի, Սիգնալ Օյլ Էնդ Գազ Կոմպանի, Սատանդարդ Օյլ Օֆ Օհայո և, վերջապես, Տայդ Վատեր Ասոսիեյտդ Օյլ Կոմպանի։

Աղյուսակ

Իրանի նավթարդյունաբերության ընդհանուր պատկերը

Նավթավայրեր	Հայտնաբերման թվականը	Շահագործման սկիզբը	Հորերի միջին խորություն, մետրերով	Արտադրող հորերի թիվը	Նավթակրող տարածության մակերեսը, քառ. կմ	Նավթի տեսակարար կշիռը	Նավթահանումը 1954 թ. հոկտ. 29-ից մինչև դեկտ. 31-ը	1955 թ. նավթահանումը
Մասջիդ-ի-Սուլեյման	1908	1911	200	32	138	0,836	281.770	ասունների նավթավայր. մասին դեռևս
Նաֆթա-ի-Շահ	1923	1925	800	2	—	0,813	—	
Հաֆթա-Կել	1928	1929	700	21	115	0,833	237.790	
Գաչ-Սարան	1928	1940	820	4	154	0,864	1.930	
Նաֆթա-Սաֆիդ	1934	1945	1000	11	77	0,848	2.507	
Ագա-Ջարի	1937	1945	1500	21	102	0,856	946.768	
Լալի	1938	1948	1650	10	26	0,845	7.741	
Պազանուն	1937	1943	1800	Արդյունահան. են միայն բնակ. գազ.				

Ընդամենը 1,47 մլն[2] 16 միլիոն

[1] Ներկայացնում է արդյունահանումը կոնսորցիումին անցնելուց հետո՝ 1954 թ. հոկտեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 31-ը, մինչև այդ թվականը արդյունահանվել է 3,32 միլիոն տոննա, հետևաբար 1954 թ. ընդհանուր նավթահանումը եղել է 4,8 միլիոն տոննա։

[2] Ուրիշ տվյալների համաձայն (World Petroleum, Nov. 1955, p. 75) 1954 թ. հոկտեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 31-ը արդյունահանումը եղել է 898 հազար տոննա։

Աղբյուրներ՝ Минеральные ресурсы зарубежных стран, выпуск. 15; Минеральные ресурсы Ирана и Афганистана, Москва, 1949, стр. 21; R. Jouan, Le Pétrole Roi du Monde, Paris 1949, p. 132; Bulletin of the



ԻՐԱՆԻ ՆԱՎԹԱՎԱՅՐԵՐԸ

Կազմեց Տ.Կ.ՈՐՅԱՆ
Քարտեզագիր Ս.Տ.ՔՅՈՒՐՅԱՆ

Իրաքում նավթը շահագործելի քանակությամբ առաջին անգամ հայտնաբերվեց Իրանի սահմանամերձ Նաֆտ-Խանեհի շրջանում, 1923 թվականին Անգլո-Պերժըն նավթային ընկերության նախաձեռնությամբ, երկար որոնումներից հետո։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո այս շրջանը Իրաքի նորաստեղծ պետության տերիտորիայի բաղկացուցիչ մասը կազմելու հետևանքով, Անգլո-Պերժըն ընկերությունը չկարողանալով անմիջականորեն շահագործել այդ շրջանի ընդերքի նավթը, ուստի ստեղծեց իր դուստր-ընկերություններից «Խանակին Օյլ Կոմպանին»։

Այս շրջանում հորատումները շարունակվեցին մինչև 1928 թվականը, որից հետո, հորերի թիվը բավարար համարվելու հետևանքով, աշխատանքները ժամանակավորապես դադարեցվեցին։ Նաֆտ-Խանեհի նավթավայրում, հորերի շահագործման համար անհրաժեշտ սարքավորումներից բացի, կառուցվեցին էլեկտրական էներգիա արտադրող հարմարանքներ, տեխնիկական ու վարչական աշխատանքների համար անհրաժեշտ շենքեր, նավթավայրից մինչև Խանակին քաղաքի երկաթուղային կայարանը ձգվող նավթամուղ՝ 100 միլիմետր տրամագծով՝ և, վերջապես, 1927 թվականին ավարտվեց փոքր կարողություն (տարեկան 150.000 տոննա) ունեցող նավթամշակման գործարանը, որը նախատեսված էր բավարարելու հյուսիսային և կենտրոնական Իրաքի նավթային տեղական պահանջները։ 1932 թվականին Անգլո-Պերժըն ընկերությունը հիմնեց Ռաֆիդայն Օյլ Կոմպանի ընկերությունը, որն զբաղվելու էր Խանակին Օյլի կողմից արդյունահանված նավթի վաճառման գործով։

Բացի Խանակինի շրջանից, Մոսուլից ոչ շատ հեռու գոյություն ունեին նավթային խոշոր հարստություններ։ Դեռևս առաջին համաշխարհային պատերազմը չվերջացած, Կայարահի շրջանի նավթի մակերևութային նստվածքները շատ փոքր մասշտաբներով շահագործվում էին Միջագետքում գտնվող անգլիական ռազմական ուժերի կողմից, իսկ Կիրկուկի, Տուզի և Խորմատուի շրջանների նավթը նույնպես շատ փոքր մասշտաբներով և չափազանց պրիմիտիվ միջոցներով դեռևս XIX դարի 90-ական թվականներից շահագործվում էր Նաֆթջի ազգանունը կրող ընտանիքի կողմից։

American Association of Petroleum Geologists, July 1951; Ibid. July 1953 Ibid, July 1955; Ibid. July 1956; V. C. Illing.The World's Oilfields. vol. VI Part 1. London. 1953. p. 73; World Petroleum. Sept. 1955; Ibid. March 1956.

Հետագայում, երբ նավթային խոշոր մոնոպոլիստները երկար պայքարից հետո կազմեցին Իրաք Պետրոլյում Կոմպանին, անմիջապես ձեռնարկեցին հետախուզական աշխատանքների և հայտնաբերեցին նաև մի շարք նոր նավթավայրեր։

1927 թ. հոկտեմբերի 13-ին առաջ նավթ հայտնաբերվեց Մուսուլից մի փոքր դեպի հարավ Կայարահ N 1 հորում 260 մետր խորության։ Երկու օրից հետո, այս անգամ Բաբա-Գարգուրում, հայտնաբերվեց մի ուրիշ նավթահոր՝ օրական 10—12 հազար տոննա արտադրունակությամբ։ Բաբա-Գարգուրի և մի շարք այլ նավթահորերի հայտնաբերումով Կիրկուկի նավթավայրը դարձավ համաշխարհային մասշտաբով հարուստ մի նավթաբեր շրջան, որն սկիզբ առնելով Բաղդադի հյուսիսից, տարածվում է դեպի հյուսիս-արևմուտք։ Երկրաբանների կարծիքով, Կիրկուկի ընդերքի նավթակիր գոտեբը (պահեստը) ունի 80—100 կիլոմետր երկարություն, որը վիթխարի մեծություն է համարվում։ Այդ թվականներին Բաբա-Գարգուրում հորատման աշխատանքներ կատարելիս 507 մետր խորության վրա նավթը ժայթքեց այնպիսի ահռելու ուժով, որ ութ օրվա ընթացքում հազիվ հաջողվեց զսպել։ Այդ ժայթքումը մարդկային զոհեր պատճառելուց բացի, կորստյան մատնեց 100 հազար տոննա նավթ։

1932 թվականին, երբ սկսվեց 26 նավթահորի շահագործումը, անհրաժեշտություն զգացվեց այս նավթավայրից մինչև Միջերկրական ծովի ափը ձգվող նավթամուղ անցկացնել։ Այս նավթամուղը կազմված է զուգահեռ ընթացող երկու խողովակային գծերից, որոնք 241-րդ կիլոմետրից սկսած, Հադիթայի մոտ իրարից բաժանվում են։ Գծերից մեկը, 610 կիլոմետր երկարությամբ, ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք՝ Տրիպոլի (Լիբանանում), իսկ մյուսը, 749 կիլոմետր երկարությամբ, դեպի հարավ-արևմուտք՝ Հայֆա (այժմյան Իսրայելում)։ Երկու գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 1841 կիլոմետր՝ տարեկան 4 միլիոն տոննա փոխադրունակությամբ։ Խողովակների տրամագիծը տատանվում է 254—350 միլիմետրի միջև։ Այս նավթամուղի երկարությամբ տարբեր տեղերում կան կայաններ, որտեղ գործում են նավթի մղման համար հատուկ պատասխան տարբերություններ՝ պոմպեր։ Կիրկուկից մինչև Հադիթա գործում են երեք այդպիսի կայաններ՝ K1, K2, K3։ Այս կայաններից K1-ը ունի վեց նավթամբար՝ յուրաքանչյուրը մոտ 14 հազար տոննա տարողությամբ, մինչդեռ K2, K3 կայաններն ունեն միայն մեկական նավթամբար՝ յուրաքանչյուրը 4500 տոննա տարողությամբ։ Հադիթայից մինչև Տրիպոլի ձգվող գծի վրա գործում են չորս այդպիսի կայաններ՝ T1, T2, T3, T4, նավթի արտամղման

համապատասխան սարքավորումներով, իսկ Հաղիթայից դեպի Հայֆա ձգվող խողովակագծի վրա հինգ այդպիսի կետեր՝ H1, H2, H3, H4, H5։

Սակայն, քանի որ այս նավթամուղի տարողությունը չէր համապատասխանում Իրաքի նավթավայրերի արտադրունակության խոշոր պոտենցիային, ուստի մոնոպոլիստները 1946 թվականին ձեռնարկեցին կառուցելու նոր նավթամուղ՝ վերցնելով ավելի մեծ տրամագծով (406 մմ) խողովակներ։ Նոր նավթամուղի փոխադրունակությունը պիտի լիներ տարեկան 5 միլիոն տոննա։ Այս նավթամուղի դեպի Հայֆա ձգվող ճյուղը, Մերձավոր Արևելքում սկսված իրադարձությունների հետևանքով մնաց անավարտ, իսկ դեպի Տրիպոլի ձգվող գիծը ավարտվեց 1949 թվականին։ Հետագայում կառուցվեց նաև մի նոր մագիստրալ նավթամուղ, որը Կիրկուկի նավթավայրը կապեց Բանիասի հետ (Սիրիայում, Միջերկրական ծովի ափին)։ Այս նավթամուղի կառուցումն ավարտվեց ժամկետից մի քանի ամիս շուտ՝ 1952 թվականի նոյեմբեր ամսին։ Այս գծի փոխադրունակությունն է տարեկան 14 միլիոն տոննա նավթ, խողովակների տրամագիծը՝ 750—800 միլիմետր, երկարությունը՝ 888 կիլոմետր։

Այս գծի վրա մի նոր ճյուղավորում է ավելանալու 120 կիլոմետր երկարությամբ, խողովակների 600 միլիմետր տրամագծով, որը հասնելու է մինչև Տրիպոլիի նավահանգիստը։ Բացի այս մագիստրալ գծերից, կան նաև հորերը նավթավայրերի հավաքման կետերի հետ կապող նավթամուղեր, ինչպես նաև Հարավային Իրաքի նավթավայրերից (Զուբայր, Ռումալիա և այլն) ձգվող մինչև Պարսից ծոցի վրա նավթարարձման նավահանգիստ Ֆաոն (Բասրահից 96 կմ հարավ)։

Ներկա մագիստրալների սիստեմի ընդհանուր փոխադրունակությունը տարեկան 25 միլիոն տոննա է։ Նշված հավելումների շնորհիվ, ինչպես նաև մղման պոմպերի ավելացումով 1955—1956 թթ. ընթացքում այս սիստեմի փոխադրունակությունը բարձրանալու է 34 միլիոն տոննայի։ Այս սիստեմի մեջ անգործածելի է մնացել Հաղիթայից Հայֆա ձգվող ճյուղը, որի ուղղությունը փոխելու և մինչև Սայդոնի (Լիբանան) նավահանգիստը հասցնելու համար ծրագրեր են մշակվում։ Այդ իրականանալու դեպքում Իրաքի նավթամուղերի ընդհանուր տարողությունը ավելանալու է ևս 6 միլիոն տոննայով։

Իրաքի նավթի մեծագույն մասն ստացվում է Կիրկուկի նավթավայրերից։ Վերջին տվյալների համաձայն, միայն այս շրջանի

նավթային պաշարները հաշվվում են 1,35 միլիարդ տոննա։ Կիրկուկից 40 կիլոմետր դեպի հարավ և հարավ-արևելք հայտնաբերվել է Ժամբուր կոչվող նավթավայրը։ Թեև 1929 թվականից սկսած Ժամբուրում կատարվում էին հորատման աշխատանքներ, բայց դրանց տեմպը թույլ էր մինչև 1954 թվականը, երբ վերսկսվեցին ավելի բեղմնավոր աշխատանքներ։ Այժմ արդեն այս նավթավայրում գործում է չորս հոր։ Այնուհետև, Կիրկուկի նավթավայրի կենտրոնից փոքր ինչ դեպի արևմուտք վերջին ժամանակներս հայտնաբերվեց Բայ-Հասան կոչված նավթավայրը, որտեղ այժմ արդեն գործում է հինգ նավթահոր։ Ժամբուրից հարավ Կոր-Մոր կոչված վայրում հորատման աշխատանքները դեռևս դրական արդյունք չեն տվել։

Տիգրիսից դեպի արևմուտք նավթ է հայտնաբերվել հետևյալ չորս վայրերում՝ Կայարահ, Կասաբ, Ժաուան և Նաժմահ։ Այս վայրերում հայտնաբերված նավթը, Իրաքի մյուս շրջանների նավթի համեմատությամբ, տարբերվում է իր որակով՝ ունի 0,950—0,980 տեսակարար կշիռ և 6—8 տոկոս ծծմբի պարունակություն, մինչդեռ Կիրկուկի նավթն ավելի թեթև է՝ ունի 0,820—0,860 տեսակարար կշիռ և 1—2 տոկոս ծծմբի պարունակություն։ Այս վայրերում հայտնաբերված նավթը, որակի պատճառով, ներկա պայմաններում դեռևս ձեռնտու չի համարվում շահագործման համար։

Նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը (1939 թվականին) Մուսուլից 60 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք գործում էր Այն-Զալահ կոչվող նավթավայրը, որը Կիրկուկի հետ համեմատած փոքր է և որի նավթը վերջինի նավթի որակն ունի։

Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին տարիներին Իրաքի նավթի արդյունահանումը ժամանակավորապես նվազեց, սակայն պատերազմի վերջին տարիներից նավթահանումը վերսկսեց աճել և կատարվեցին նոր հորատումներ։ Շարունակվող հետախուզական և հորատման աշխատանքների շնորհիվ շահագործման հանձնվեցին մի շարք նոր նավթավայրեր ու նավթահորեր, որոնց թվում Բուտմահը՝ երկրի հյուսիս-արևմտյան ծայրամասում, Այն-Զալահի մոտ, Զուբայրը և Ռումայլան՝ երկրի հարավ-արևելյան ծայրամասում, Բասրայի շրջանում, և ուրիշները։ Ամուլ են և կամ շահագործման համար դեռ պիտանի չեն հետևյալ նավթավայրերը՝ երկրի հյուսիս-արևմտյան շրջանում Գուսայրը, Ալանը, Ատշանը, Մախուլը, բացի վերևում նշված Կասաբ, Ժաուան, Նաժմահ և Կայարահ վայրերից (թեև այս վերջինում տեղական հումքի բազայի վրա 1954 թվականին կառուցվեց բիտումի մշակման գործարան),

իսկ Երկրի հարավ-արևելյան շրջանում՝ Բաուգաթայնը և Նահր-Ումրը։

Բասրայի շրջանը 1955 թվականին նավթահանել է 7,2 միլիոն տոննա, Կիրկուկը՝ 24,2 միլիոն տոննա։ Այս վերջինի վայրից 1934—1955 թթ. արդյունահանվել է ընդամենը 34,2[1] միլիոն տոննա նավթ։ Իրաքի նավթի արդյունահանումն ըստ տարբեր շրջանների ցույց է տրված աղյուսակ 8-ում։

*Աղյուսակ 8**

Իրաքի նավթարդյունաբերության ընդհանուր պատկերը

Նավթավայրեր	Հայտնաբերման թվականը	Շահագործման սկիզբը	Հորերի քանակը	Հորերի մետր	Նավթի տեսակարար կշիռը	Նավթահանումը միլիոն տոննաներով		
						1939	1946	1955
Կիրկուկ	1927	1932	500	119	0,840	3,8	4,4	24, 2
Այն-Զալահ	1939	1939	—	—	0,860	0,002	—	
Բուտմահ	—	—	—	—	0,840	—	—	1,28
Զուբայր	—	—	—	38	0,885	—	—	—
Ռումալիա	—	—	—	6	0,875	—	—	7,20
Նաֆթ-խանահ	1923	1925	—	—	0,860	—	—	1,10
Ընդամենը	—	—	—	—	—	3,8	4,4	33,70

1952 թվականին, նոր նավթամուղի կառուցումն ավարտելու շնորհիվ Իրաքի նավթահանումն աննախընթաց չափով բարձրացել է։ Նույն թվականին նավթահանումն նախորդ տարվա հետ համեմատած կրկնապատկվելով, 9,08 միլիոն տոննայից հասել է 18,5 միլիոն տոննայի։ 1955 թվականին երկրի ընդհանուր նավթահանումը կազմել է 33,7 միլիոն տոննա։ Նախնական տվյալների համաձայն 1956 թ. առաջին կիսամյակին արդյունահանվել է 16,7 միլիոն տոննա նավթ։

Իրաքի նավթամշակման գործարանների ընդհանուր կարողությունը տարեկան 1,8 միլիոն տոննա է։ Այս գործարաններից առաջինը, մեկ միլիոն տոննա տարողությամբ, գտնվում է Բաղդատի մոտ՝ Դուրահ կոչված վայրում, երկրորդը Ալվանդում (խա-

---

[1] *Ուրիշ տվյալների համաձայն՝ 33,70, տե՛ս* The Petroleum Times March 30, 1956, p. 210.

* *Աղբյուր՝* The Petroleum Times, March 30, 1956, p. 210; World Petroleum, September 1954, p. 68.

նակինի շրջանում), 500 հազար տոննա տարողությամբ, երրորդը՝ Բասրահի մոտ, Մուֆտիեհ կոչված վայրում, տարեկան 150 հազար տոննա տարողությամբ և, վերջապես, չորրորդը՝ Կայարահի մոտ, բիտում պատրաստելու համար, տարեկան նույնպես 150 հազար տոննա տարողությամբ։

1938 թվականին Հայֆայում խոշոր գործարան կառուցվեց Իրաքի նավթի մշակման համար։ 1946 թվականին այդ գործարանն արդեն ի վիճակի էր տարեկան 4 միլիոն տոննա նավթ մշակելու։ Նախատեսված էր այս գործարանի տարողությունը հասցնել տարեկան 7 միլիոն տոննայի, սակայն իսրայելա-արաբական հակամարտությունների հետ կապված վերջին իրադարձությունների հետևանքով Իրաքի նավթի մատակարարումները դադարեցվեցին, ուստի խանգարվեց այդ ծրագրի իրագործումը և նշված գործարանն այժմ աշխատում է իր սովորական տարողությունից շատ ավելի ցածր բեռնվածությամբ։ Հյուսիսային և Հարավային Ամերիկայից ստացված հումքի բաղդի վրա, 1955 թվականին այնտեղ մշակվել է հաղիվ 0,8 միլիոն տոննա նավթ։

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Տրիպոլի հասնող նավթն անմշակ վիճակում փոխադրվում էր Եվրոպա, որտեղ ենթարկվում էր թորման, իսկ տեղական սպառումների համար Իրաքի նավթը նախ փոխադրվում էր Եվրոպա, ապա, այնտեղ մշակվելուց հետո, նա վերադառնում, որի հետևանքով երկրի նավթը տեղական շուկայում վաճառվում էր բարձրացված գներով։ Պատերազմի տարիներին, սակայն, մոնոպոլիստները, ստեղծված պայմաններից ստիպված, կառուցեցին նավթամշակման մի շարք փոքր գործարաններ՝ տեղական պահանջմունքների սպասարկման համար։ Այս գործարաններից մեկը կառուցվեց Տրիպոլիում (Լիբանան)՝ Իրաքի նավթի արտահանման կետում։ 1955 թվականի հունիսին ավարտվեց և շահագործման հանձնվեց Բաղդադից ոչ շատ հեռու՝ Դաուրայում պետական առաջին նավթամշակման գործարանը, տարեկան 1,2 միլիոն տոննա մշակման կարողությամբ։

Երբ Իրանի նավթային հարստությունները ազգայնացվեցին, Անգլո-Իրանիան նավթային ընկերության (այժմ Բրիտիշ Պետրոլյում Կոմպանի) նոր հենարաններ դարձան Իրաքը և Կուվեյտը։

Իրաքում գործող կոնցեսիոն ընկերություններ։ Բացառությամբ Իրանի սահմանամերձ մի փոքրիկ հողաշերտի, որը մտնում է Բրիտիշ Պետրոլյումի (նախկին Անգլո-Իրանիանը) կոնցեսիոն իրավունքների մեջ, Իրաքի տերիտորիայի մնացած բոլոր տարա-



ԻՐԱՔԻ ՆԱՎԹԱՎԱՅՐԵՐԸ

Կազմեց Տ. Կ. ԹՐՅԱՆ
Քարտեզագիր Մ.Տ. ԲՅՈՒՐԵՂՅԱՆԻ

ծությունները գտնվում են Իրաք Պետրոլյում Կոմպանիի և կամ նրա դուստր-ընկերությունների կոնցեսիաների մեջ։

Բացի Իրաքի տերիտորիայից, Իրաք Պետրոլյում Կոմպանիի կոնցեսիաները բազմաթիվ դուստր-ընկերությունների միջոցով տարածվում են նաև Սիրիայում, Լիբանանում, Իսրայելում, Հորդանանում, Պայմանագրային Օմանում, Կատարում, Մուսկատում և Հաղրամաութում։

Երբ, Իրանի օրինակով, արաբական մյուս երկրներում նավթային հարստությունների աղդայնացման օդտին սկսված շարժումը մեծ ծավալ ստացավ, ամերիկյան և անգլիական նավթային մոնոպոլիաները դիմեցին հետևյալ մանյովրին. Իրաքում և Սաուդական Արաբիայում մենաշնորհավարձը բարձրացրին 50 տոկոսի։ Այդ «զիջումը» կապիտալիստական մամուլում մեծ արձագանք գտավ և պրոպագանդայի առիթ ծառայեց։ Իրականում այս նոր համաձայնությունը կեղծիք է, և անցյալի փորձը ցույց է տվել, որ նավթային ընկերությունները ցածր մենաշնորհավարձ վճարելու համար դիմել են մինչև անգամ հաշվեմատյանների կեղծմանը։

ԲԱՀՐԵՅՆ

Անգլիական պրոտեկտորատ Բահրեյնը փոքր կղզիների խումբ է, որը գտնվում է Արաբական թերակղզու արևելյան ծովափից քիչ հեռու, Պարսից ծոցում։ Այս խմբի ամենակարևոր կղզիներն են՝ Բահրեյնը, Մուհարակը, Սիտրան և Ումմ Նասանը։ Այս կղզիների խումբը կոչվում է գլխավոր կղզու անունով, որը տարածությամբ ամենախոշորն է և այդտեղ է ապրում բնակչության մեծ մասը։ Այս կղզում է տեղավորված կառավարական-վարչական ապարատը, և այստեղ են կենտրոնացված երկրի տնտեսության ամենակարևոր ճյուղերը։ Մոտավորապես ձվաձև եղրագծով այդ կղզին ունի շուրջ 45 կիլոմետր երկարություն և 16 կիլոմետր միջին լայնություն։ Կղզու կենտրոնական մասում գտնվում են փոքր բարձրություններ, որոնցից ամենաբարձրը 150 մետրից չի անցնում, ուր և գտնվում են երկրի գլխավոր նավթավայրերը։ Այս բարձրությունները կրում են Ջեբել Դուխան (ծխացող լեռներ) անունը։

Բահրեյնում դեռևս շատ վաղուց հայտնաբերվել են նավթի հետքեր։ Անգլիացի ճանապարհորդ-երկրաբան Պիլգրիմը ամփոփելով 1904—1905 թվականներին այդ կղզում իր կատարած հետախուզումների արդյունքները, 1908 թվականին համապատասխան բացատրություններով և մանրամասնություններով հրատա-

բակից կղզու երկրաբանական քարտեզը, որը օգտակար հիմք ծառայեց հետագա որոնումների համար։ Բահրեյնի նավթավայրերի ընդերքը կազմված է միջին կավճային հասակի թափանցիկ կրաքարերից։ Բահրեյնի առաջին նավթահորը՝ Ջեբել Դուխան № 1-ը շահագործման հանձնվեց 1932 թ. հունիսին, օրական 110—140 տոննա միջին արտադրունակությամբ։ Հետագայում կատարված հանքաբանական ուսումնասիրությունները հիմք տվեցին ենթադրելու, որ կղզու նավթային շերտերը ձգվում են մինչև Արաբական թերակղզին։ Այդ եզրակացությունները Արարիայում կատարվող հետախուզումների հիմնաքարը դարձան։

Բահրեյնի նավթային պաշարները, 1955 թվականի տվյալների համաձայն, հաշվվում էին 30—35 միլիոն տոննա։ Այդ նույն թվականին այս կղզում արդյունահանվել է 1,5 միլիոն տոննա նավթ։ Շահագործման սկզբից մինչև 1955 թվականը Բահրեյնում արդյունահանվել է ավելի քան 25 միլիոն տոննա անմշակ նավթ։ Նավթը մշակվում է տեղում։ 1936 թվականին այնտեղ կառուցվել է նավթաթորման գործարան, որն ի վիճակի է մշակելու, բացի տեղական նավթից, նաև Արաբական թերակղզում հանված նավթի որոշ մասը։ Այս գործարանը, որի մշակման կարողությունն է տարեկան 10 միլիոն տոննա նավթ, նավթամուղի միջոցով կապված է Արաբական թերակղզու նավթավայրերի հետ։ Այս նավթամուղի մի մասը, մոտ 25 կիլոմետր, անցնում է ջրի միջով։

Բահրեյնում շահագործվող նավթավայրերից ամենակարևորը գտնվում է կղզու կենտրոնում, Աուալի գյուղից դեպի հարավ։ Շահագործվող հորերի թիվը առ 1955 թվականը 98 է, հորերի միջին խորությունը 750—1500 մետր, բոլոր հորերի օրական միջին հանումը՝ 4000 տոննա։ Վերջին ժամանակներս այս երկրի հորերի արտադրունակությունը զգալի չափով նվազել է։ Սրա պատճառն այն է, որ նավթակիր շերտերում նավթի մակարդակը ցածրանալով, դժվարեցնում է հանման աշխատանքները, ուստի նավթի մակարդակը բարձրացնելու համար հորերի մեջ են մղում հենց տեղում ստացվող գազը (օրական մոտ 112 հազար խորանարդ մետր), որով նավթահանման պրոցեսը մեծապես հեշտանում է։

Վերջին տվյալների համաձայն, Բահրեյն կղզու նավթարդյունաբերությունը ներկայացնում է հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 9)։

Բահրեյնում գործում է Բահրեյն Պետրոլյում Կոմպանի կոնցեսիոն ընկերությունը, որն ստեղծվել է Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Կալիֆորնիայի և Տեկսաս Օյլ Կոմպանիի կողմից։

	1946 թ.	1955 թ.
Հորերի ընդհանուր թիվը . . .	85	134
Արդյունաբեր հորերի թիվը . . .	64	98
Օրական միջին արդյունահանումը .	3700 տոննա	4000 տոննա
Տարեկան արդյունահանումը . .	1,4 մլն տոննա	1,5 մլն տոննա
Ընդամենը արդյունահանված (սկսած 1932 թվականից)	9,7 մլն տոննա	25 մլն տոննա

ՍԱՈՒԴԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ

Բահրեյն կղզու նավթային պաշարների հայտնաբերումից հետո, նավթային խոշոր մոնոպոլիստներն իրենց ուշադրությունը սևեռեցին դեպի Արաբական մայր ցամաքը, որովհետև, ինչպես վերևում մատնանշել ենք երկրաբանների ուսումնասիրությունները ցույց էին տվել, որ Բահրեյնի նավթային շերտերը ձգվում են մինչև Արաբական թերակղզու արևելյան մասը։

Արաբական թերակղզում նավթի կապակցությամբ առաջին հետախուզական աշխատանքներն սկսվեցին դեռևս 1920-ական թվականներից։ Ջևերը Սինդիկեյտ ընկերության ներկայացուցիչ Ֆրանկ Հոլմզի նախաձեռնությամբ 1923 թվականին երկրաբանական աշխատանքներ կատարվեցին Ալ-Հասայի պրովինցիայում։ Հետագայում 1924—1925 թթ. Անգլո-Պերժը ընկերության նախաձեռնությամբ նոր երկրաբանական ուսումնասիրություններ կատարվեցին Օմանի սուլթանության իշխանության տակ գտնվող ամբողջ տերիտորիաներում։ Սակայն, այս բոլոր աշխատանքները սպասված արդյունքը չտվեցին և միայն 1927 թվականին, Գրլֆ Օյլ Կորպորեյշընի նախաձեռնությամբ կատարված երկրաբանական հետախուզումների շնորհիվ, Արաբական թերակղզու ընդերքում հայտնաբերվեցին նավթաբեր շերտերի հետքեր։

Սաուդական Արաբիայում հորատման առաջին աշխատանքները սկսվեցին 1933 թվականից, սակայն այդ աշխատանքները սպասված արդյունքը չտվեցին։ Թեև տասը հորերի մեջ նավթի հետքեր նկատվեցին, սակայն շահագործման համար ոչ բավարար քանակությամբ։ Վերջապես 1936 թվականին Դամամի շրջանում 1567 մետր խորության վրա մեծ քանակությամբ նավթ հայտնաբերվեց և իսկույն շահագործման հանձնվեց։ Այժմ այդ վայրում կա

ընդամենը 41 նավթահոր, որոնցից 28-ը շահագործվում են։ Դամմամի նավթավայրերը, մինչև Աբկայիկի նավթավայրի հայտնաբերվելը, Սաուդական Արաբիայի նավթավայրերից ամենաարտադրողականն էր։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայտնաբերվեցին և շահագործման հանձնվեցին չորս նոր նավթավայրեր, այն է՝ Աբու Հադրիյա (1940 թ. մարտ)՝ Դամմամից 150 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, Աբկայիկ (1941 թ. փետրվար)՝ 58 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, Կատիֆ (1945 թ. փետրվար)՝ 22 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, և, վերջապես, Բուկա (1947 թ. մայիս), որը այժմ չի շահագործվում։ Հետագայում, 1951—1952 թթ. սկսած, հայտնաբերվեցին և շահագործման հանձնվեցին նաև հետևյալ նավթավայրերը՝ Գհաուար երկարաձիգ նավթավայրը իր հինգ ենթագոտիներով՝ հյուսիսից հարավ Այն-Դար, Շեդգում, Ուսմանիյահ, Հուիյահ և Հարադհ, այնուհետև Ֆադհիլի նավթավայրը, Սաֆանիյահը՝ առաջին ստորջրյա հորը Պարսից ծոցում, որը գտնվում է ափից 3 կիլոմետր հեռավորության վրա Ռաս-էլ-Միշաաբից 18 կիլոմետր դեպի հարավ-արևելք և, վերջապես, նվազ կարևոր նավթավայրերից էլ-Ալաթ, էլ-Ժաուֆ, Մաադալա և այլն։ Մինչև 1953 թվականը Սաուդական Արաբիայի նավթավայրերի սխեմեմում Աբկայիկը գրավում էր առաջին տեղը։ 1954 թվականից սկսած, Այն-Դարը՝ Գհաուար նավթավայրի ենթագոտիներից մեկը, արտադրողականության տեսակետից արդեն գրավել է առաջին տեղը։ Միայն Այն-Դարը արդեն տալիս է երկրի ընդհանուր նավթահանման 40 տոկոսը։

1955 թ. տվյալների համաձայն, Սաուդական Արաբիայի նավթահորերի վիճակի մասին տես աղյուսակ 10։

1955 թվականին Սաուդական Արաբիայի նավթահանումը եղել է ավելի քան 47 միլիոն տոննա։ Իսկ 1956 թվականի առաջին կիսամյակի տվյալներով 25,8 միլիոն տոննա նավթ։ Շահագործման սկզբից (1936 թ.) մինչև 1955 թ. դեկտեմբերը այս երկրի նավթավայրերից ստացվել է ընդամենը 310 միլիոն տոննա նավթ (տե՛ս աղյուսակ 11)։

Այս ընդհանուր նավթահանումից օրական 40—50 հազար տոննան նավթամուղի միջոցով փոխադրվում է Ռաս-Տանուրայի և Բահրեյնի նավթաթորման գործարանները, մնացածը անմշակ վիճակում փոխադրվում է Եվրոպա։

Ռաս-Տանուրայի նավթաթորման գործարանը, որի կառուցումն սկսվել է 1944 թ. սեպտեմբերին, շահագործման է հանձնվել 1945 թ.

*Աղյուսակ 10**

Նավթավայրերը	Հորերի ընդհանուր թիվը	Արդյունաբեր հորերի ընդհանուր թիվը
Աբկայիկ	67	44
Փահաուար — Այն-Զաբ	51	41
Ուսմանիյան	40	11
Շեդգում	13	11
Հուլիյան	2	0
Հարաղհ	9	0
Դամամ	41	28
Կատիֆ	13	9
Աբու-Հաղրիյան	3	0
Ֆադհիլի	1	0
Սաֆանիյան	17	0
Էլ-Ալաթ	1	0
Էլ-Ֆաուզ	1	0
Մաաղալա	1	0
Սորաաիդրաֆիկ ուսումնասիրման		0
№ 1 հոր	1	0
Ընդամենը	261	144

Աղյուսակ 11

Սաուդական Արաբիայի նավթահանման դինամիկան (տոննաներով)

Տարեթվերը	Օրական միջին հանույթը	Տարեկան հանույթը
1936 թ. (շահագործման առաջին տարին)	13,5	2740
1939 թ. (Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին)	1458	538938
1946 թ. (հետպատերազմյան առաջին տարին)	21961	8212328
1955 թ.	129000	47000000

* Աղբյուրներ՝ World Petroleum, September 1954, p. 77; Ibid, September. 1955, p. 80

հոկտեմբերին։ Գործարանի կարողությունն է տարեկան 9—10 միլիոն տոննա։ Այստեղ մշակվում են նավթի զանազան ֆրակցիաները, հատկապես 70 և 72-օկտանի բենզին, կերոսին, դիզելի վառելանյութ, մազութ և այլն։ Բացի նավթամշակման այս հիմնական սիստեմից, նավթավայրերի մոտ գործում են նաև նախնական մշակման մի շարք գործարաններ. այսպես, օրինակ՝ Աբկայիկի նավթավայրում 1954 թ. մարտից սկսեց գործել գազի հավաքման և հորերի մեջ մղման սիստեմը՝ օրական 150 միլիոն խորանարդ ոտնաչափ տարողությամբ, Գհաուար նավթավայրի Շեղգում ենթադրվում նույն տարվա մայիսին ավարտվեց գազ օյլի ստացման գործարանը, և սկսվեց նույն տիպի գործարանի կառուցումը Ուսմանիյում. այս գործարաններից յուրաքանչյուրի տարողությունը նախատեսված է եղել օրական 14 հազար տոննա։ Այնուհետև, մի շարք խոշորացման աշխատանքներ են կատարվում Կատիֆի մղման կայանում, ինչպես նաև այս վերջինի և Աբկայիկի գազ օյլի գործարաններում։

Մերձավոր Արևելքի, այդ թվում Սաուդական Արաբիայի, նավթի փոխադրածախսերը կրճատելու և Սուեզի ջրանցքի տուրքերից ազատվելու համար, նավթային մոնոպոլիաները կառուցել են հսկա նավթամուղային սիստեմ, որը, ի միջի այլոց, Արաբիայի նավթավայրերը մազիստրալ գծով կապում է Միջերկրական ծովի նավահանգիստների հետ։

Ամենավերջին տվյալների համաձայն, Սաուդական Արաբիայի նավթամուղային սիստեմը և արտահանման կետերը (նավահանգիստները) ներկայացնում են հետևյալ պատկերը.

Տրանս-Արաբիան Պայպ Լայն (կրճատ՝ Տապլայն) նավթամուղը, որը Սաուդական Արաբիայի նավթավայրերը կապում է Միջերկրական ծովի ափին Սայդոնի (Լիբանանում) նավահանգստի հետ, հանդիսանում է կապիտալիստական աշխարհի ամենախոշոր միակտոր նավթամուղային սիստեմը։ Այս նավթամուղը մինչև նավթի բարձման կետը հասնելը անցնում է չորս պետությունների՝ Սաուդական Արաբիայի, Հորդանանի, Սիրիայի և Լիբանանի տերիտորիաներով։ Այս նավթամուղային սիստեմի մազիստրալ գծի երկարությունը 1709 կիլոմետր է, իսկ փոխադրունակությունը, որ սկզբում օրական միջինը 48 հազար տոննա էր, այժմ, շնորհիվ նոր հավելումների, արդեն հասել է 80 հազարի։ Նախատեսված էր այս գծի կառուցումը ավարտել 1950 թվականի կեսերին։

Նավթամուղն ավարտվեց սահմանված ժամկետից միայն մի քանի ամիս ուշացումով և նույն տարվա սեպտեմբերի 25-ին շահագործման հանձնվեց։

Տապլայնի կառուցումով Սաուդական Արաբիայի նավթավայրերից մինչև Արևմտյան Եվրոպայի սպառման վայրերը երկարաձգվող ճանապարհը կրճատվեց 5600 կիլոմետրով, այլ խոսքով՝ 15 օրով։ Այս նավթամուղի բացակայության դեպքում Պարսից ծոցի ափերին բարձված նավթատար նավերը Դամմամից մինչև Եվրոպայի նավահանգիստները եկած հեռավորությունը պիտի անցնեին 20 օրում։ Հետևաբար, բացի նրանից, որ այս նավթամուղի շնորհիվ փոխադրածախսերը ճանապարհի տևողության համեմատ կրճատվում են, խնայվում են նաև Սուեզի ջրանցքի տուրքերը, որոնք ամեն մի բարձված նավթատար նավի համար, միջին հաշվով, կազմում են 40 հազար դոլլար։

Տապլայնի մագիստրալ գիծը բաղկացած է երկու հիմնական սեկցիայից։ Այս սեկցիաներից այն, որը սկիզբ առնելով Կայսումահից, այսինքն Սաուդական Արաբիայի հյուսիս-արևելքից, ուղղվում է դեպի Սայդոնի նավահանգիստը և ունի 1205 կիլոմետր երկարություն, պատկանում է Տրանս-Արաբիան Պայպ Լայն ընկերությանը, իսկ այն սեկցիան, որը նույն Կայսումահից դեպի հարավ-արևելք ուղղվելով, հասնում է Արկայիկի նավթավայրին կից նավթի կենտրոնացման և հավաքման կետին, ունի ընդամենը 504 կիլոմետր երկարություն և պատկանում է Արաբիան Ամերիկըն Օյլ Կոմպանիին (Արամկո)՝ Սաուդական Արաբիայի նավթի կոնցեսիոն ընկերությանը։ Տապլայնի արևելյան այս սեկցիան աշխատում է երկու ուղղությամբ, այսինքն՝ հավաքելով Սաուդական Արաբիայի նավթավայրերի նավթը, մի մասն ուղղում է դեպի արևմուտք՝ Միջերկրական ծովի ափը, իսկ մյուս մասը՝ դեպի Պարսկական ծոցի ափին գտնվող նավթի բարձման Ռաս Տանուրա նավահանգիստը։ Այս նավթամուղի արևելյան հատվածն ունի այնպիսի հարմարանքներ, որ հետագա նոր հայտնաբերումների դեպքում հնարավոր կլինի տվյալ նոր նավթավայրերը նոր ենթագծերով կապել հավաքման կենտրոնի հետ։

Տապլայնը անցնում է տարբեր մակերևույթներ ունեցող տերիտորիաներով՝ ավազապատ անապատներով, քարքարոտ դաշտերով, բազալտածածկ տարածություններով և այլն, ինչպես նաև մակերևույթի տարբեր բարձրություններով՝ ամենաբարձր կետը ծովի մակերեսից 1000 մետր բարձրությամբ, իսկ ամենացածրը՝ ծովի մակերեսին հավասար բարձրությամբ։

Այս մոգիստրալ նավթամուղի կառուցման աշխատանքներն սկսվեցին միաժամանակ երկու ծայրամասերից։ Երկու սեկցիաներն իրար միացվեցին Ճանապարհի կեսին, 1950 թ. սեպտեմբերի առաջին օրերին։ Միջերկրականի ափից սկսվող մասի կառուցման աշխատանքները համեմատաբար ավելի հեշտ կատարվեցին, քանի որ Սայդոնից 56 կիլոմետրի վրա գտնվող Բեյրութի նավահանգիստն արդեն ուներ բարձման և բեռնաթափման ամեն տեսակի մեծ հարմարություններ, մինչդեռ Պարսից ծոցի արաբական ափում դեռևս չկար համապատասխան նավահանգիստ։ Ուստի, անհրաժեշտ եղավ այս ծայրամասում, Ռաս-էլ-Միշաաբ կոչվող վայրում, կառուցել նոր նավահանգիստ՝ համապատասխան հարմարություններով։ Եվ, որովհետև այդ ափի մոտ ծովը ծանծաղ է, անհրաժեշտ եղավ կառուցել 5 կիլոմետր երկարությամբ դեպի ծովի խորքերը ձգվող նավամատույց՝ արհեստական կղզյակով։

Ռաս-էլ-Միշաաբից մինչև Հորդանանի խճուղիների սիստեմը ձգվող 1488 կիլոմետր երկարությամբ խճուղի կառուցվեց նավթամուղին համարյա զուգահեռ ուղղությամբ։

Այս մոգիստրալ նավթամուղի խողովակները, որոնց տրամագիծը տատանվում է 750—775 միլիմետրի միջև, ունեն 265 հազար տոննա ծանրություն։ Խողովակների 60 տոկոսը թաղված է հողի մեջ, իսկ 40 տոկոսը տեղավորված է բետոնից պատրաստված հատուկ նստարանների վրա՝ դեռևս մակերեսին, նայած տեղի պայմաններին։

Սայդոնի բարձման կայանը գտնվում է Աբկայիկի հավաքման և նավթի կենտրոնացման կայանից 1720 կիլոմետր հեռավորության վրա։ Սայդոնում կան 16 հատ 25-ական հազար տոննա, մեկ հատ 3,5 հազար տոննա և երեք հատ 2-ական հազար տոննա տարողությամբ նավթամբարներ։

Այս մոգիստրալ նավթամուղի ամբողջ երկարության վրա կա մոտավորապես 6 կայան՝ Աբկայիկը, ամենամեծը, որը միևնույն ժամանակ բոլոր նավթավայրերից հասնող նավթի հավաքման կենտրոնն է, այնուհետև, Նարիյահը, Կայսումահը, Ռաֆհանը, Բաղանահը և Բուրայքը։ Այս կայանները գտնվում են մեկը մյուսից 300 կիլոմետր հեռավորության վրա։ Յուրաքանչյուր կայանի անձնակազմը, 200—300 մարդ՝ հիմնականում (90 տոկոսը) բաղկացած է տեղացիներից։ Ամեն մի կայանի էլեկտրական էներգիայի սպառումը, 1800 կիլովատ, հավասար է 6—7 հազար բնակչություն ունեցող գյուղի էլեկտրական էներգիայի սպառմանը։ Յուրաքանչյուր կայան շուրջ 125 ակր տարածություն ունի։

Նավթամուղի մյուս ծայրից նավթի առաջին տոննան ստանալու համար հարկ եղավ այս գծի խողովակների մեջ լցնել 675 հազար տոննա նավթ և եթե գծի երկարությամբ գտնվող բազմաթիվ նավթամբարներն էլ հաշվի առնվեն, ապա այդ քանակը կբարձրանա 825 հազար տոննայի, այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ի բոլոր նավթահորերից մեկ օրում ստացվող քանակից էլ ավելի։ Այս նավթամուղը նստել է 230 միլիոն դոլլար, չհաշված ենթագծերի վրա ծախսված գումարները։

Նավթամուղի այս մագիստրալ գծից բացի, նավթավայրերից դեպի հավաքման կենտրոնը ձգվում են հետևյալ ենթագծերը՝

1. Արաբիան-Ամերիկեն Q—Q գիծը, որն ունի 432 կիլոմետր երկարություն, օժանդակ գիծ է, և Կատիֆը միացնում է Կայսումահի գլխավոր գծի հետ։

2. Դամամի նավթավայրի նավթամուղային գծերը՝ ա) Արաբիան-Բահրեյն նավթամուղը, 38 կիլոմետր երկարությամբ, որը Դամամը կապում է Ռաս-Տանուրայի նավթամշակման գործարանի հետ. բ) Դամամ-Ռաս-Տանուրա № 2 նավթամուղը, 37 կիլոմետր երկարությամբ, որը նույնպես Դամամը կապում է Ռաս-Տանուրայի գործարանի հետ։

3. Աբկայիկի նավթավայրի նավթամուղային գծերը՝ ա) Աբկայիկ-Դամամ № 1 օժանդակ գիծը, 67 կիլոմետր երկարությամբ. բ) Աբկայիկ-Դամամ № 2 գիծը, 64 կիլոմետր երկարությամբ. գ) Կատիֆ-Աբկայիկ գիծը, 72 կիլոմետր երկարությամբ։

4. Կատիֆի նավթավայրի նավթամուղային սիստեմը, որը բաղկացած է հետևյալ երեք օժանդակ գծերից՝ առաջինը Կատիֆը միացնում է Դամամ Ռաս-Տանուրա գծի հետ, երկրորդը Կատիֆը միացնում է Կայսումահի հետ և երրորդը Կատիֆը միացնում է ուղղակի Ռաս-Տանուրայի հետ։

5. Գհաուար նավթավայրի նավթամուղային գծերը՝ ա) Այն-Դարի գոտին միացնում է Աբկայիկի հետ. բ) Շեդգումը միացնում է Աբկայիկի հետ. գ) Ուսմանիյան միացնում է Շեդգումի հետ, որտեղից գիծը շարունակվում է դեպի Աբկայիկ։

Այս ենթագծերին զուգընթաց կառուցվեցին նաև հետևյալ գծերը.

1. Կատիֆը Ռաս-Տանուրայի նավթամշակման գործարանին միացնող գիծը՝ 29 կիլոմետր երկարությամբ։

2. Կատիֆի գազերի մղման գործարանը Դահրանի հետ կապող գիծը՝ 30 կիլոմետր երկարությամբ։



ՍԱՈՒԴԱԿԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ, ԲԱՀՐԵՅՆԻ և ԿԱՏԱՐԻ ՆԱՎԹԱՎԱՅՐԵՐԸ

Գծագիր Տ. Ա. ԹՐՅԱՆ
Քարտեզագիր Մ. Տ. ՊՅՈՒՐԵՂՅԱՆ

Սաուդական Արաբիայի նավթամուղային այս կոմպլեքսի ընդհանուր տարողությունը 1955 թվականին արդեն հասել էր օրական, միջին հաշվով, 150 հազար տոննայի կամ տարեկան՝ մոտավորապես 54 միլիոն տոննայի։

Նավահանգստային հարմարանքները։ 1955 թվականին Սաուդական Արաբիայի նավթն արտահանվում էր հետևյալ երեք գլխավոր կետերից՝ ա) Սայդոն, Լիբանանում, Տապլայնի վերջին կայանը Միջերկրական ծովի ափին։ Բարձման օրական միջին կարողությունը 80 հազար տոննա. բ) Սիդրահ կղզին, Բահրեյնի բարձման կայանը. գ) Ռաս-Տանուրա, Արաբական մայր ցամաքում, Պարսից ծոցի ափին, որտեղ գործում են բարձման մի շարք նավամատույցներ՝ ամեն կարգի հարմարանքներով։

Սաուդական Արաբիայում գործող կոնցեսիոն ընկերությունն է՝ Ամերիկեն Արաբիան Օյլ Կոմպանի (կրճատ Արամկո), իսկ նավթամուղային սիստեմը շահագործող ընկերությունն է՝ Տրանսարաբիան Պայպ Լայն Կոմպանին (կրճատ Տապլայն)։ Այս երկու ընկերություններն էլ միմյանց հետ սերտ կապեր ունեն։

Կ Ո Ի Վ Ե Յ Տ

Կուվեյտը արաբական փոքր իշխանություն է, որը գտնվում է Արաբական թերակղզու հյուսիս-արևելքում, Պարսից ծոցի ափին։ 1899 թվականից այս երկիրը գտնվում է անգլիական իմպերիալիզմի լծի տակ որպես պրոտեկտորատ։ Երկրի գլխավոր քաղաքը էլ-Կուվեյտն է, որը միևնույն ժամանակ առաջին նավահանգիստը է։ Այդտեղ է ապրում նստակյաց բնակչության մեծագույն մասը։ Բնակչությունը չափազանց հետամնաց և աղքատ է, իսկ երկիրը՝ անբարերար, սակայն նավթային պաշարների տեսակետից Կուվեյտը Մերձավոր և Միջին Արևելքում գրավում է առաջին տեղերից մեկը։ 1955 թվականի տվյալների համաձայն, Կուվեյտի նավթային պաշարները (4,11 միլիարդ տոննա) գերազանցում են ԱՄՆ-ի նավթային պաշարներին։ Եթե նկատի ունենանք, որ Կուվեյտի տերիտորիայի ընդհանուր տարածությունը ԱՄՆ-ի տերիտորիայի ընդհանուր տարածության մեկ հազարերորդից մի քիչ է ավել, ապա կարելի է եզրակացնել, թե այդ երկրի ընդերքում որքան խիտ են նավթային շերտերը։

Կուվեյտում, Բահրա կոչված վայրում կատարված առաջին հորատման աշխատանքները որևէ դրական արդյունք չտվեցին։ Հետագայում, 1937 թվականին, մեծ քանակությամբ նավթ հայտնա-

բերվեց Կուվեյտ քաղաքից մոտ 50 կիլոմետր դեպի հարավ գտնվող Բուրգան կոչված վայրում, որը ներկայումս ոչ միայն երկրի, այլև ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքի և նույնիսկ կապիտալիստական աշխարհի ամենաարտադրողական նավթավայրն է։ Այժմ շահագործման մեջ են գտնվում նաև Մագուա և Ահմադի նավթավայրերը։ Ուսումնասիրման էտապում են գտնվում վերջին ժամանակներս հայտնաբերված Ում-Գուդայրի և Ռաուդաթայնի նավթավայրերը։ Այս վերջինս գտնվում է Կուվեյտ քաղաքից 160 կիլոմետր հյուսիս, Իրաքի սահմանամերձ շրջանում։ Հորերի խորությունը տատանվում է 1100—1600 մետրի սահմաններում։ 1955 թվականին Կուվեյտը արդյունահանել է 55 միլիոն տոննա[1] նավթ, նախնական տվյալների համաձայն, 1956 թվականի առաջին կիսամյակին տվել է 28,8 միլիոն տոննա։ 1938 թվականից մինչև 1955 թվականը նավթավայրերից ստացվել է 250 միլիոն տոննա նավթ, չնայած այն բանին, որ 1938 թվականից մինչև 1946 թվականը Կուվեյտի նավթահանումը եղել է աննշան։

Կուվեյտ Օյլ Կոմպանիի մոտ աշխատում են 700 եվրոպացիներ, հիմնականում անգլիացիներ, մի քանի հարյուր պակիստանցիներ ու հնդիկներ և 5000 տեղացի բանվորներ։ Եվրոպացի բանվորները միատեսակ կերպով գրված են արտոնյալ վիճակի մեջ։

Եթե հանրագումարի բերենք Կուվեյտի նավթի արդյունահանման մասին ամենավերջին տվյալները, ապա կստանանք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 12

	1947 թ.	1955 թ.
Հորերի թիվը	13	169
Շահագործվող հորերի թիվը	13	160
Օրական միջին հանույթը (տոննաներով) . .	6096	145384
Տարեկան հանույթը (միլիոն տոննաներով) . .	3,04	55

Կուվեյտի նավթի փոխադրումները կատարվում են Պարսից ծոցից նավթատար նավերով։ Սակայն ծրագրված է կառուցել մագիստրալ նավթամուղ, որը Կուվեյտի նավթավայրերը կապելու է Միջերկրական ծովի նավահանգիստների հետ։ Այս նավթամուղի կառուցումով մեծապես կրճատվելու են փոխադրածախսերը և Սու-

[1] Ուրիշ տվյալների համաձայն 54,8 միլիոն տոննա, տե՛ս The Petroleum Times, March 30, 1956, p. 210.



ԿՈՒՎԵՅՏԻ ՆԱՎԹԱՎԱՅՐԵՐԸ

Կազմեց Հ. ԱՐՅԱՆ
Քարտեզագիր Ս. Հ. ՔՅՈՒՐՅԱՆ

Նեղի ջրանցքի տուրքերը, ինչպես այդ արդեն տեղի ունի Սաուդական Արաբիայում Տապլայն նավթամուղի շնորհիվ։ Այժմ նավթավայրերից մինչև Պարսից ծոցի ափը արդեն գործում են նավթամուղային համեմատաբար կարճ գծեր։ Նավթավայրերը 100 և 150 միլիմետր տրամագիծ ունեցող խողովակներով կապված են հավաքման կետերի հետ։ Այդ կետերից մինչև Ահմադիի նավթավայրին կից կենտրոնացման գլխավոր կայանը նավթը անցնում է 500 միլիմետրը տրամագիծ ունեցող խողովակների միջով։ Ահմադիի կայանում գոյություն ունեցող նավթամբարների տիպանն ունի 550 հազար տոննա տարողություն։ Ահմադիից մինչև ծովափ՝ Մենա-էլ-Ահմադիի բարձման կայանը, ընդամենը 10 կիլոմետր երկարությամբ, գործում են նավթամուղային չորս գիծ, որոնցից երեքի խողովակների տրամագիծը 600 միլիմետր է, իսկ մեկինը՝ 550 միլիմետր։ Մենա-էլ-Ահմադիում գործում է նավթամշակման գործարան՝ տարեկան 1,5 միլիոն տոննա կարողությամբ։ Այս գործարանը, որը արտադրում է բենզին, կերոսին, գազ օյլ և այլն, հիմնականում սպասարկում է տեղական կարիքներին և խողովակներով կապված է Կուվեյտ քաղաքի մոտ Բանդար Շուվայխի հետ։

Կուվեյտի նավթարարձման կայանը՝ Մենա-էլ-Ահմադին, իր տեսակի մեջ կապիտալիստական աշխարհում ամենախոշորն է։ Այստեղ նավամատույցներում միանգամից հնարավոր է սպասարկել 13 նավթատար նավերի։ Բարձման միջին տևողությունը 18 ժամ է։ Այս նավահանգստում բարձվում է տարեկան 253 նավթատար նավ։ 1954 թվականին այս նավահանգստում բարձվել է 2753 նավթատար նավ, յուրաքանչյուրը միջին հաշվով, 18 հազար տոննա բեռնվածությամբ։

Կուվեյտում գործող կոնցեսիոն ընկերությունն է՝ Կուվեյտ Օյլ Կոմպանի, որի մեջ ներկայացված են հավասարապես թե՛ ամերիկյան և թե՛ անգլիական նավթային մոնոպոլիաները։

ԿՈՒՎԵՅՏԻ ՁԵՂՈՔ ԳՈՏԻՆ

Կուվեյտի Ձեղոք Գոտին գրավում է Կուվեյտի և Սաուդական Արաբիայի միջև ընկած 3200 քառակուսի կիլոմետր տարածություն և գտնվում է այս երկու պետությունների միասնական իշխանության տակ։

1949 թվականից մինչև 1952 թվականն այստեղ միայն փորձնական հորատումներ են կատարվել։ Այդ թվականներին միայն Վաֆրա կոչված շրջանում չորս հորերից երեքը ամուլ են դուրս

Էկել։ 1953 թ. դեկտեմբերի 27-ին շահագործման է հանձնվել Վաֆրայա նավթավայրի առաջին արդյունաբեր հորը։ Այդ տարին Չեզոք Գոտու հորերի օրական միջին արտադրունակությունը հաղիվ 200—475 տոննա էր, 1954 թվականի առաջին կիսամյակից արդեն այն բարձրացել էր օրական 3000 տոննայի, իսկ 1955 թ. արդյունաբերանվում էր՝ օրական միջին հաշվով 4500 տոննա նավթ։

Վաֆրայի նավթավայրում 34 հորից 26-ը արդյունաբեր է։ Վաֆրա նավթավայրում կա նավթահավաքման կայան՝ 7500 տոննա տարողությամբ։ Հավաքման կետից մինչև բարձման կայանը, Կուվեյտի տերիտորիայում, Մենա Աբդուլա կոչված վայրում, ձգվում է 55 կիլոմետր երկարությամբ նավթամուղ, որի խողովակների տրամագիծը 200—250 միլիմետր է։ Մենա Աբդուլայում առ 1955 թ. գոյություն ունեն բարձման հետևյալ հարմարությունները. նավթի հավաքման համար պահեստի երկու նավթամբար՝ յուրաքանչյուրը 10 հազար տոննա տարողությամբ, ինչպես նաև ծովի մեջ երկարող նավթամատուցման խողովակ, որի միջոցով նավթատար նավերին նավթ է մատուցվում ժամում 1100 տոննա։

1954 թվականին Չեզոք Գոտու տերիտորիայում, Ռաս Ալ Զոր վայրի մոտ սկսեցին կառուցել Մենա Սաուդ անունով մի նոր նավամատույց, որն ավարտվեց 1955 թվականին։ Վաֆրայի նավթավայրից մինչև բարձման այս նոր կետը կառուցվեց 40 կիլոմետր երկարությամբ և խողովակների 250 միլիմետր տրամագծով նավթամուղ։

1955 թվականին Կուվեյտի Չեզոք Գոտում նավթ հայտնաբերվեց 2280 մետր խորության վրա, ծակոտկեն կրաքարային շերտերում։ Այս հորի արտադրունակությունն է օրական 350 տոննա նավթ։ Այս նոր հայտնաբերումը բաց է անում մինչև այժմ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների համար անհայտ նոր նավթակիր շերտեր։ Կուվեյտի Չեզոք Գոտու նավթի պաշարները, մինչև այս նոր շերտի երևան գալը, հաշվվում էին 45 միլիոն տոննա։

ԿԱՏԱՐ

Այս երկիրը, որը նույնպես արաբական փոքր շեյխություն է, գտնվում է նույնանուն թերակղզու վրա, Արաբական թերակղզում, Պարսից ծոցում։ Անգլիական պրոտեկտորատ է։ Գլխավոր քաղաքը Էլ-Բիդան է, իսկ՝ գլխավոր նավթավայրը՝ Դուխանը։ Հետախուզական և հորատման աշխատանքներն սկսվել են դեռևս 1938 թվականից, սակայն երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելու պատճառով ժամանակավորապես դադարեցվեցին։ 1947 թվականին

հետախուզման և հորատման աշխատանքները վերսկսվեցին ավելի մեծ թափով։ Այժմ, բացի Դուխանից, գործում է նաև Ալ Խարայիբի նավթավայրը, որը գտնվում է Թիրակղզու համարյա կենտրոնական շրջանում։ Վերջին ժամանակներս Դոհա քաղաքից 56 կիլոմետր դեպի ծովի խորքերը ստորջրյա հորատումներ են կատարվում։

Կատարի նավթավայրերը 120 կիլոմետր երկարությամբ նավթամուղային ցանցով կապված են Պարսից ծոցի ափին գտնվող Ումմ Սայիդի նավահանգստի հետ։ Նավթամուղի օրական միջին փոխադրունակությունը 15 հազար տոննա է։ Ումմ Սայիդի նավահանգիստ·ունի բարձման երկու նավամատույց, որոնց նավթամատուցման ընդհանուր տարողությունն է ժամում 2000 տոննա։ Նավահանգստին կից կա նավթահավաքման կայան՝ ավելի քան 15 նավթամբարներով։

1955 թվականին Կատարում հանվել է 5,5 միլիոն տոննա նավթ։ 1956 թվականի առաջին կիսամյակում՝ 2,6 միլիոն տոննա։ Սկզբից մինչև 1955 թվականը հանվել է ընդամենը 21,3 միլիոն տոննա նավթ։ Կատարի նավթի պաշարները հաշվվում են 195,5 միլիոն տոննա։

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՕՄԱՆ ԵՎ ԴՀՈՖԱՐ-ՕՄԱՆ

Այս շրջանները հանդիսանում են անգլիական գերիշխանության տակ գտնվող մի քանի շեյխություններ, որոնցից ամենակարևորներն են՝ Աբու Դհաբիի, Դուբայի և Դհոֆարի շեյխությունները։ Այս շրջաններում կատարվող աշխատանքները գտնվում են հետախուզական ու էքսպերիմենտալ հորատումների էտապում և դեռևս շահագործելի մասշտաբներով նավթ չի հայտնաբերվել։

1955 թվականին Դհոֆար-Սիտիզ Սերվիս ընկերությունը (Սիտիզ Սերվիս Կորպորեյշընի դուստր ընկերություն) Ռիչֆիլդ Օյլ ընկերության հետ միասին Դաուկա № 1 նավթավայրում կատարած հորատման աշխատանքները 4000 մետր խորության անցում ոչ մի արդյունք չտվեցին։ 1956 թվականի մարտին այս նույն վայրից 120 կիլոմետր դեպի արևելք սկսվեցին հորատման նոր աշխատանքներ, որոնց արդյունքների մասին դեռևս տեղեկություններ չկան։

Ե Մ Ե Ն

1953 թ. ապրիլ ամսին Եմենի կառավարության կողմից հետախուզման իրավունքներ են տրվել Արևմտյան Գերմանիայի նավթային մոնոպոլիստական խմբավորումներից «Դիլման, Բերգբաուա և Բենհայմ» ընկերությանը՝ մինչև 1958 թ. ժամկետով։ Հետախուզ-

ման ծախսերը և հետագայում նավթ հայտնաբերելու դեպքում շահագործումից ստացվելիք օգուտները, բաժանվելու են ընկերության և Եմենի կառավարության կողմից հավասար հարաբերությամբ։ Հինգ տարվա ընթացքում նավթ չհայտնաբերվելու դեպքում կոնցեսիան ըստինության համարվելու է վերջացած։

1954—1955 թթ. այս ընկերության հետախուզական գործունեությունը սահմանափակվեց Եմենի ծովափնյա նեղ հողաշերտի երկարությամբ։ 1955 թվականին 30 տարվա ժամկետով կոնցեսիոն իրավունքներ ձեռք բերեց Եմեն Դեվելոպմենտ Կորպորեյշն ամերիկյան մոնոպոլիստական ընկերությունը։ Նրան հանձնվեցին նաև երկրի այլ հանքային հարստությունների հետախուզման ու շահագործման լայն իրավունքներ։ Կոնցեսիան տարածվում է երկրի տերիտորիայի 3/4 տարածության վրա, ընդամենը ավելի քան 100 հազար քառակուսի կիլոմետր. դուրս է մնում միայն ծովափնյա այն նեղ շերտը, որը գտնվում է գերմանական կոնցեսիաների իրավասության տակ։ Կոնցեսիոն պայմանների համաձայն, եթե 6 տարվա ընթացքում Եմեն Դեվելոպմենտին չհաջողվի համապատասխան հայտնաբերումներ անել, կոնցեսիան ըստինության համարվելու է վերջացած։

ԵԳԻՊՏՈՍ

Նավթի հետքերի առատության շնորհիվ Սուեզի ծոցի շրջանը շատ վաղուց արժանացավ նավթահետախուզողների ուշադրությանը։ Սակայն հետագա հետախուզական աշխատանքները շարդարացրին այս շրջանի նավթային պաշարների հետ կապված հույսերը։ Ընդամենը հայտնաբերվեց ութ նավթավայր՝ Հուրղադա, Ռաս Ղարիբ, Սուդր, Ակլ, Գեմսա, Ռաս Մատարմա, Ուադի Ֆեյրան և Աբու Դուրբա, որոնցից շահագործվում է միայն չորսը։

Եգիպտոսի համարյա բոլոր նավթավայրերը գտնվում են Սուեզի ծոցի շրջանում, Կարմիր ծովի արևմտյան և որոշ չափով էլ արևելյան ափերին։ Այս նավթավայրերի արտադրունակությունը, համեմատած Մերձավոր Արևելքի երկրների այլ շրջանների նավթավայրերի հետ, ցածր է։ Հուրղադայի նավթավայրը արդեն սպառման նշաններ է ցուցաբերում։

Եգիպտոսում վերջին ժամանակներս ինտենսիվ հետախուզական աշխատանքներ են կատարվում։ 1955 թվականին Ինտերնաշընալ Իջիպշըն Օյլ Կոմպանիի հետախուզողները Բելայիմի շրջանում 2500—2750 մետր խորության ստորին միոցեն շերտերում հայտնա-

բերեցին նավթի հետքեր։ Այս ընկերության մեջ հավասար չափով մասնակցում են՝ Սոդհերն Կալիֆորնիա Պետրոլյում Կորպորեշընը (ամերիկյան), Պետրոֆինան (շվեյցարական), Մինեռարիա (իտալական)։

Հետախուզական աշխատանքներ կատարվում են նաև Արևմուտյան անապատում ամերիկյան Կոնորադո Պետրոլյում Կոմպանիի և Սինիոլ Սերվիս ընկերությունների կողմից, որոնք վերջերս միանալով կազմեցին Սահարա Պետրոլյում Կոմպանին։ Այս ընկերության կողմից կատարվող աշխատանքները այժմ կենտրոնացված են Բուրգ-էլ-Արաբ կոչված վայրում Ալեքսանդրիայից 45 կմ դեպի Արևմտյան անապատի խորքերը։ Այստեղ հորատված է 3000 մետր խորությամբ մի հոր։ Ընդերքի ստրուկտուրան Յուրայի կավճային է։ Այստեղ հարուստ նավթային պաշարների հետքեր դեռևս չեն հայտնաբերվել։

1955 թվականին, Եգիպտոսում արդյունահանվել է 1,8 միլիոն տոննա նավթ։

Եգիպտոսում գործում է նավթամշակման երեք գործարան. առաջինը, որի թորման կարողությունը տարեկան 2,3 միլիոն տոննա է, պատկանում է Շելլի նավթային մոնոպոլիստական խմբին, երկրորդը, որը ունի թորման տարեկան 1,3 միլիոն տոննա կարողություն, պատկանում է կառավարությանը, իսկ երրորդը նորակառույց փոքր գործարան է՝ 200 հազար տոննա կարողությամբ։

Եգիպտական կառավարության նախաձեռնությամբ այժմ կառուցվում է Սուեզը Կահիրեի հետ միացնող նավթամուղ, որի կառուցման գործը հանձնված է Դալմին Միլանո իտալական ընկերությանը։

Ամփոփելով Եգիպտոսի նավթարդյունաբերության վերաբերյալ տվյալները, ստանում ենք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 13

Նավթավայր	Հայտնաբերման թվականը	Հորերի թիվը	1955 թ. արդյունահանումը մլն տոննա
Գեմսա . . .	1908	25	Առանձին նավթավայրերի արդյունահանման մասին տվյալներ դեռևս չկա
Հուրղադա . .	1913	139	
Աբու Դուրբա .	1918	28	
Ռաս Ղարիբ . .	1938	154	
Սուդր . . .	1946	33	
Ասլ	1948	28	
Ռաս Մատարմա .	1948	6	
Ուադի Ֆեյրան .	1949	2	
Ընդամենը	—	415	1,8

Մինչև արաբա-իսրայելական 1948 թ. ընդհարումները Իսրայելը (այդ ժամանակ Պաղեստին) հանդիսանում էր Միջերկրական ծովի ափին նավթի արտահանման կարևոր կայաններից մեկը, որտեղ գործում էր նաև նավթամշակման խոշոր գործարան։ Այս երկրի նավթամշակման գործարանը, որը կառուցվել է հատկապես Իրաքի նավթը մշակելու նպատակով, վերջին իրադարձությունների հետևանքով այժմ աշխատում է իր տարողությունից շատ ավելի փոքր մասշտաբներով, Ամերիկայից ներմուծված նավթի հումքի բազայի վրա, տեղական սպառումների համար։ Այս գործարանի տարողությունը տարեկան 4,5 միլիոն տոննա էր և ծրագրված էր այն բարձրացնել 7 միլիոն տոննայի։ Սակայն, Իրաքից նավթի մատակարարումները դադարեցնելու ժամանակ այս գործարանն իր հնարավորություններից անհամեմատ ավելի ցածր բեռնվածությամբ էր աշխատում, տարեկան մշակելով հազիվ 800 հազար տոննա նավթ։

Նախքան առաջին համաշխարհային պատերազմը Պաղեստինում (այժմ Իսրայել) հետախուզումներ են կատարվել և Կուրնուբի շրջանում նավթի հետքեր են հայտնաբերվել։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հետախուզական աշխատանքները կանգ առան։ 1919 թվականին այս աշխատանքները վերսկսվեցին և մի շարք վայրերում նավթի հետքեր հայտնաբերվեցին, այդ թվում Սինայի թերակղզու սահմանամերձ շրջաններում, Հորդանանի հովտում, Մեյալ ծովի ավազանում՝ Ջեբել Ուզդումի մոտերքը, Նաբի Մուսայի շրջանում և այլն։ 1953—1955 թվականներին, հորատման աշխատանքներ են կատարվել Մաղալ, Բեերի, Կարմել, Ռեխոմ և Թել-Սաֆիտ վայրերում, բացի այդ, ներկայումս ուսումնասիրություններ են կատարվում ծովափնյա հարթավայրերում և լեռների լանջերում՝ որոշելու համար ենթահողի երկրաբանական ստրուկտուրան, ինչպես նաև Նեգեֆի նստվածքների կազմը։

1955 թվականի սեպտեմբերից Իսրայելը արդեն մտել է նավթարդյունաբերող երկրների շարքը։ Լասլիդոր-Իսրայել Պետրոլյում Կոմպանիի կողմից 1300 մետր խորության մեջ հայտնաբերվել է բավարար քանակությամբ նավթ, այն վայրում, որտեղ 1954 թվականին հորատման աշխատանքներ էր կատարել Իրաք Պետրոլյում Կոմպանին և որը հետագայում դադարեցվել էր քաղաքական արգելքների հետևանքով։

Իսրայելում դրական արդյունքների են հասել նաև Իսրայել-Ամերիկան Օյլ Կորպորեյշն նավթային ընկերությունը։ Այս ընկերու-

թյան մեջ հավասար չափով մասնակցում են Նյու-Յորքի Բեր, Սոեր-նըզ Էնդ Կոմպանին և Հըսկի Օյլ Կոմպանին, երկուսն էլ ամերիկյան։ Բարայել-Ամերիկեն Օյլ Կորպորեյշընի հետախույզները 1955 թվականի հունվարին գազի պաշարներ են հայտնաբերել Պեսահ-Բիկվա շրջանում, ինչպես նաև Գան Յավնեի ծովափնյա տարածություններում։

ՍԻՐԻԱ ԵՎ ԼԻԲԱՆԱՆ

Սիրիայում նավթահետախուզական աշխատանքները կատարվում են հատկապես Ջեզիրեի շրջանում, երկրի հյուսիս-արևելքում, ինչպես նաև Հալեպ քաղաքի հյուսիսում՝ Մինախիի մոտ, և Դամասկոս-Բաղդադ ճանապարհի հյուսիսային շրջաններում։ Հորատման աշխատանքներ են կատարվել մի շարք վայրերում, այդ թվում՝ Քուրտ Կուլակում,՝ Ադաղից քիչ հյուսիս, Աֆրինից քիչ հարավ մի կետում, Դհիլահի ցածրավայրում՝ Պալմիրից քիչ հարավ և այլն։

Լիբանանում, ամենավերջին տվյալների համաձայն, Բեկաա դաշտում երևան են բերվել նավթի հետքեր։ Սակայն, այս բոլորով հանդերձ, մինչև այժմ այս երկներում ոչ մի շրջան շահագործման չի հանձնվել։

Լիբանանը Բարայելի նման գտնվելով Առաջավոր Ասիայում Միջերկրական ծովի ափին, Մերձավոր Արևելքի նավթի արտահանման համար ունի շափազանց նպաստավոր պայմաններ։ Նա ավելի կարևոր դարձավ հատկապես արաբա-իսրայելական ընդհարումից հետո, երբ արաբական երկրները, բոյկոտելով իրենց երկրներից հոսող նավթի այն մասը, որ գնում էր Հայֆա, ուղղեցին դեպի Լիբանան։ Լիբանանն ունի մի քանի կարևոր նավահանգստաներ, որոնցից ամենագլխավորը Բեյրութն է, ապա գալիս են Տրիպոլին և Բանիասը (Սիրիայում), որոնք միաժամանակ հանդիսանում են Իրաքի նավթամուղային սիստեմի հյուսիս-արևմտյան ճյուղերի վերջին կայանները, և, վերջապես, Սայդոնը, որը Տապլայնի, այսինքն Սաուդական Արաբիայի նավթամուղի վերջին կայանն է։ Ծրագրերի համաձայն, նոր կառուցվող բոլոր մագիստրալ նավթամուղերը, որոնք ուղղվելու են դեպի Միջերկրական ծովի ափը, վերջանալու են Լիբանանի նավահանգիստներում։ Եթե այդ ծրագրերն իրագործվեն, այս նավահանգիստները կդառնան Մերձավոր Արևելքի նավթի արտահանման կարևորագույն կենտրոնները և այն ժամանակ, ըստ նախնական տվյալների, Մերձավոր Արևելքի նավթի 80 տոկոսը

Կարատահանվի Տրիպոլիի, Բանիասի, Սայդոնի և կամ լիբանանյան մի այլ նավահանգստի միջոցով։ Այժմ դեռևս միայն 45 տոկոսն է, որ դնում է Լիբանանի նավահանգիստները։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Մերձավոր Արևելքի համարյա բոլոր երկրները նավթի խոշոր արդյունահանողներ են, իսկ այն մի քանիսը, որոնք նավթի պաշարներով դեռևս համարվում են համեմատաբար ավելի աղքատ, նրանք էլ կարևոր են որպես արտահանման և նավթամշակման կենտրոններ։

Թ Յ Ո Ի Ր Ք Ի Ա

Ռաման նավթավայրը կամ Ռամանդագը գտնվում է վերին Տիգրիսի հովտում Թյուրք-սիրիական սահմանագլխից 95—100 կիլոմետր դեպի հյուսիս։ Այս շրջանի ընդերքի երկրաբանությունը նման է Իրաքի Այն Զալահ նավթավայրի ենթահողի պայմաններին, ուստի նավթը այստեղ ստացվում է կավճային կրաքարային շերտերից։ Այս շրջանում առաջին անգամ նավթ հայտնաբերվեց 1940 թվականին, 1500 մետր խորության վրա։ Այժմ մեկ հորի միջին արտադրունակությունն է օրական 75 տոննա նավթ։

Նավթահետախուզական և առանձին դեպքերում հորատման աշխատանքներ են կատարվում Գարզանում՝ Ռամանդագից քիչ դեպի հյուսիս-արևելք, Կենտալում՝ Ռամանդագից քիչ դեպի արևելք, Ագսիկարայում, Հոջալիում՝ Ադանայի պրովինցիայում, Ռեսանում՝ Ռամանդագից 55 կիլոմետր հյուսիս-արևելք, և այլն։

Բատմանում կառուցվել է նավթամշակման փոքր գործարան։

1955 թվականի հոկտեմբերից, այսինքն նավթային կոնցեսիաների վերաբերյալ նոր օրենքի գործողության մեջ մտնելուց մինչև 1956 թվականի հունվար ամիսը Թյուրքիայի տերիտորիայում նավթային հետախուզությունների համար կոնցեսիաներ են շնորհվել ընդամենը 12 ընկերությունների, որոնցից 9-ը օտարերկրյա կապիտալի ներկայացուցիչներ են։

Այս ընկերություններն են՝ Ամերիկեն Օվերսիզ, Բոլսա Զիկա Օյլ Կորպորեշընն, Դիլման Մոնտան, Ֆելդման Օյլ Էնդ Գազ, Էսսո-Ստանդարդ Ինկորպորեյտրդ, Զիլիլանդ Օյլ Կորպորեշընն, Հըսկի Օյլ Կոմպանի, Իսանդրուլ Թարիի Գազ Լիմիտեդ Շիրկետի, Մոբիլ Օյլ Թյուրք Անոնիմ Օրթաքլըղը (Սոկոնի), Բատատաֆշե Պետրոլյում Շիրքետի, Տայդ Վատեր Ասոսիեյտրդ Կոմպանի, Թյուրքիյե Պետրոլերի։

ԱՎՂԱՆԻՍՏԱՆ

Ավղանիստանի նավթաբեր դաշտերը, որոնք գտնվում են հյուսիսում Տաջիկական ՍՍՌ-ի տերիտորիայի սահմանամերձ շրջանում, տարածվում են դեպի հարավ մինչև Դեշտե-Մարգո հարթավայրը։

Տիրպոլի շրջանում Գերատ քաղաքից 85 կիլոմետր հյուսիս-արևմուտք, այս վերջինը Մեշհեդի հետ կապող խճուղուց ոչ շատ հեռու հայտնաբերվել է ծանր նավթ՝ ասֆալտի մեծ պարունակությամբ։ Նավթային այլ հետքեր հայտնաբերվել են նաև Սերայ-Հոջայի շրջանում, Չարի-Կապուլ խճուղու մոտերքը, այնուհետև՝ Մայմենի շրջանում և այլն։ Այս բոլորով հանդերձ՝ ոչ մի նավթավայր շահագործման չի հանձնվել։ Քաղաքական պայմանների և փոխադրամիջոցների բացակայությունը պետք է համարել այս երկրի նավթային հարստությունների նկատմամբ ցուցաբերված անտարբերության գլխավոր պատճառները։

* * *

Այսպիսով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում իմպերիալիստական աշխարհի մոնոպոլիաների գլխավոր կոնցեսիոն ընկերություններն են՝

Ադեն (Պրոտեկտորատ)

Պետրոլյում Կոնսեշընզ Լիմիտեդ, Իրաք Պետրոլյում Կոմպանիի դուստր ընկերություն։ Կոնցեսիոն տարածությունը՝ *երկրի տերիտորիան լրիվ՝ 179000 քառ. կիլոմետր։*

Բահրեյն

Բահրեյն Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ։ Պատկանելիությունը՝ *Տեկսաս Կոմպանի և Ստանդարդ Օյլ. օֆ Կալիֆորնիա։* Կոնցեսիոն տարածությունը՝ *կղզու ամբողջ տերիտորիան և տերիտորիալ ջրերը՝ 2725 քառ. կիլոմետր։*

Դհոֆար

Դհոֆար-Սիտիլ Սերվիս Պետրոլյում Կորպորեշընն, Սիտիլ Սերվիս Օյլ Կոմպանիի դուստր ընկերություն, մի ժամանակ կոնցեսիոն

պատկանում էր Իրաք Պետրոլյումի օժանդակ ընկերություններից-մեկին։ Կոնցեսիոն տարածություն՝ երկրի տերիտորիան ամբողջությամբ՝ 48 000 քառ. կիլոմետր։

Հաղրամաութ

Պետրոլյում Կոնսեշընզ Լիմիտեդ, Իրաք Պետրոլյումի դուստր ընկերություն։ Կոնցեսիոն տարածություն՝ երկրի ամբողջ տերիտորիան՝ 104 000 քառ. կիլոմետր։

Հորդանան

Տրանսժորդան Պետրոլյում Կոմպանի, Իրաք Պետրոլյումի դուստրը ընկերություն։ Կոնցեսիոն տարածություն՝ երկրի տերիտորիան ամբողջությամբ։

Կուվեյտ

Կուվեյտ Օյլ Կոմպանի Լիմիտեդ։ Պատկանելիություն՝ Անգլո-Իրանիան և Գըլֆ Օյլ հավասար չափով։ Կոնցեսիոն տարածություն՝ երկրի ամբողջ տերիտորիան և տերիտորիալ ջրերը՝ 10 000 քառ. կիլոմետր։

Իրան

1. Բասրահ Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ, Իրաք Պետրոլյումի օժանդակ ընկերություն։ Կոնցեսիոն տարածություն՝ Իրաքի հարավային շրջանները։

2. Իրաք Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ, Կոնցեսիոն տարածություն՝ Բաղդադի և Մուսուլի պրովինցիաները՝ 50 000 քառ. կիլոմետր. ժամկետ՝ 2000 թ.

Պատկանելիություն՝

Անգլո-Սաքսոն Պետրոլյում Կոմպանի (Շելլ)	23, 75 %
Դ'Արսի Էքսպլորեշընզ Կո. (Անգլո-Իրանիան)	23, 75 %
Կոմպանի Ֆրանսեզ դե Պետրոլ	23, 75 %
Նիր Իստ Դեվելոպմենտ Կորպորեշընզ (Ստանդարդ օֆ Նյու Ջերզեյ և Սոկոնի-Վակում)	23, 75 %
Գ. Գյուլբենգյան	5,00 %

3. Խանակին Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ, Անգլո-Իրանիանի դուստր ընկերություն։ Կոնցեսիոն տարածություն՝ Իրանի սահմանամերձ շրջանը։

4. Մուսուլ Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ, Իրաք Պետրոլյումի ժանդակ ընկերություն։ Կոնցեսիոն տարածություն՝ Տիգրիս գետի արևմտյան շրջանը 33° լայնության հյուսիսում։ Ընդամենը 64 000 քառ. կիլոմետր։ Ժամկետ 2007 թ.։

Իսրայել

Անցյալում կոնցեսիան պատկանում էր Պետրոլյում Դեվելոպմենտ Լիմիտեդ (Պալեստայն), այժմ Իսրայելի կառավարությունը (1954 թ. օգոստոսից)՝ հետազոտման իրավունքներ է շնորհել 8 տարբեր ընկերությունների։

Իրան

Նախկինում կոնցեսիան պատկանում էր Անգլո-Իրանիան Օյլ Կոմպանիին։ Սկսած 1954 թ. օգոստոսից, նախկին կոնցեսիան շահագործվում է երկու նոր ընկերությունների միջոցով, Իրանյան Ամերիկյան Էքսպլորատիվ Էն Պրոդուկտիվ Մաասուշապիժ, և Իրանյան Ամերիկյան Ռաֆինաժ Մաասուշապիժ, որոնք կազմակերպվել են կոնսորցիումի կողմից։ Կոնցեսիոն տարածություն՝ 256 հազար քառ. կիլոմետր։ Կոնսորցիումի մասն են կազմում՝

Բրիտիշ Պետրոլյում Կոմպանին (նախկին Անգլո-Իրանյան Օյլ Կոմպանին) . . . . 40% (բրիտանական)
Ռոյալ Դեչ Շելլ . . . . . 14% (անգլո-հոլլանդական)
Կոմպանի Ֆրանսեզ դե Պետրոլ . . . 6% (ֆրանսիական)
Ստանդարդ Օյլ Կո. օֆ Նյու Ջերզեյ, Սոկոնի-Վակում Կո., Գալֆ Օյլ Կո., Ստանդարդ Օյլ Կո. օֆ Կալիֆորնիա, Տեկսաս Օյլ Կոմպանի . . . . . 35% (ամերիկյան)
Ռիչֆիլդ Կո., Ամերիկեն Ինդիպենդենտ Օյլ, Հանկոկ Օյլ Կո., Ատլանտիկ Օյլ Կո., Պասիֆիկ Վեստերն Օյլ Կորպ., Սան Յասինտո Օյլ Կո., Միդնայթ Օյլ Էնդ Գազ Կո., Ստանդարդ Օյլ օֆ Օհայո, Տայդ Վատեր Ասոսիեյթդ Օյլ Կո., 5% (ամերիկյան)։

Մուսկատ

Պետրոլյում Դեվելոպմենտ Կոմպանի Լիմիտեդ, Իրաք Պետրոլյումի դուստր ընկերությունը։

Կուվեյտի Զեզոն Գոտի

Ամերիկեն Ինդիպենդենտ Օյլ Կոմպանի։ Կոնցեսիոն տարածություն՝ տերիտորիան լրիվ, ընդամենը 1900 քառ. կիլոմետր։ Ժամկետ՝ 2008 թ.։

Սաուդական Արաբիայի Զեգոմ Դոտին

Պասիֆիկ Վեստերն Օյլ Կորպորեշըն։ Ամբողջ տերիտորիան։ Ժամկետ 2008 թ.։

Օման

Պետրոլյում Դեվելոպմենտ Կոմպանի Լիմիտեդ, Իրաք Պետրոլյումի դուստր ընկերություն։

Կատար

1. Կատար Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ, Իրաք Պետրոլյումի օժանդակ ընկերություն։ Կոնցեսիոն տարածություն՝ *6560 քառ. կիլոմետր։ Ժամկետ՝ 2010։*

2. Անգլո-Սաքսոն Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ։ Կոնցեսիոն տարածություն՝ *16 320 քառ. կիլոմետր։ Ժամկետ՝ 2127 թ.։*

Սաուդական Արաբիա

Արաբիան Ամերիկըն Օյլ Կոմպանի։ Պատկանելիություն՝ *Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիա՝ 30 տոկոս, Տեկսաս Կոմպանի՝ 30 տոկոս, Ստանդարդ Օյլ օֆ Նյու Ջերզի՝ 30 տոկոս, Սոկոնի-Վակում 10 տոկոս։* Կոնցեսիոն տարածություն՝ *704 000 քառ. կիլոմետր։ Ժամկետ՝ 2005 թ.։*

Պայմանագրային Օման

1. Պետրոլյում Դեվելոպմենտ Լիմիտեդ, Իրաք Պետրոլյումի դուստր ընկերություն։ Կոնցեսիոն տարածություն՝ *10 000 քառ. կիլոմետր։*

2. Դ'Արսի Էքսպլորեշըն Կոմպանի, Անգլո-Իրանիանի օժանդակ ընկերություն։ Կոնցեսիոն տարածություն՝ *20 000 քառ. կիլոմետր։*

3. Դ'Արսի Էքսպլորեշըն Կոմպանի և Կոմպանի Ֆրանսեզ դե-Պետրոլ միասին։ Կոնցեսիոն տարածություն՝ *2000 քառ. կիլոմետր։*

Եմեն

1. Դիլման Բերդրաում և Բենհայմ ընկերություն, գերմանական, հետազոտական կոնցեսիաներ, 9 քառ. կիլոմետր։ Ժամկետ՝ 1958 թ.։

2. Եմեն Դեվելոպմենտ Կորպորեշըն, ամերիկյան։ Կոնցեսիոն տարածություն՝ *100 հազար քառ. կիլոմետր։ Ժամկետ՝ 1984 թ.։*

Մերձավոր և Միջին Արևելքի նավթամշակման գործարանների ընդհանուր բնութագիրը

Երկրներ	Վայրեր	Գործարանների թիվը	Հանձնարարվող ընկերությունները	Մշակման կարողությունը (օրական միջինը տոննաներով)	Մշակման պրոցեսը
1	2	3	4	5	6
Աղեն	Փոքր Աղեն	1	Աղեն Պետրոլյում Ռիֆայնըրի	16.500	S
Բահրեյն	Բահրեյն	1	Բահրեյն Պետրոլյում Կոմպանի	25·500	Cl. բոլոր պրոցեսները, որից 4175 Cr. T. C.
Եգիպտոս	Սուեզ	2	Անգլո-Իջիպշին Օյլ Ֆիլդ Լիմիտեդ Ռաֆինների դը Պետրոլ (պետական)	6.100 1.250	S. C. A., որից 900 Cr T. S A.
Իրան	Արդան	1	Նաֆտնոլ Իրան Օյլ Կո. (պետական), որը այժմ շահագործվում է Կոնսորցիումի կողմից Իրանիան Օյլ Ռիֆայնինգ ընկերության միջոցով)	75.500	Cl. բոլոր պրոցեսները, որից 17.900 Cr. T. S.
	ՄԻՍ	1		13.000	T.
	Կերմանշահ	1	Պետական	300	S.
Իրաք	Բաբա-Գուրգուր	1	Իրաք Պետրոլյում Կոմպանի	1.900	S.
	Ալվանդ	1	Խանակին Օյլ Կոմպանի	1.600	S.
	Բասրահ	1	Բասրահ Օյլ Կոմպանի	475	S.
	Բաղդադ	1	Պետական	3.300	Cl. բոլոր պրոցեսները, որից 1200 Cr. T.
	Կայարահ	1	Պետական	175	A.

1	2	3	4	5	6
Իսրայել	Հայֆա	1	Կոնսոլիդեյտըտ Ռիֆայնըրիզ Լիմիթեդ	11650	S. C. A., որից 2475 Cr. T.
Կուվեյտ	Մինա-էլ-Ահմադի	1	Կուվեյտ Օյլ Կոմպանի	4.150	S.
Լիբանան	Տրիպոլի	1	Իրաք Պետրոլյում Կոմպանի	1.550	S.
	Սայդոն	1	Մեդիտերանեան Ռիֆայնինգ Կոմպանի	1.250	S.
Սաուդական Արաբիա	Ռաս-Տանուրա	1	Արաբիան Ամերիկան Օյլ Կոմպանի	26.000	S. A.
Թյուրքիա	Բաթման	1	Թուրքիյե Պետրոլիլերի Ա. Օ.	35	S. A.

Աղյուսակը կազմել ենք ըստ հետևյալ աղբյուրների՝ World Petroleum, Annual Refinery Issue, July 15, 1953; Ibid. 1954; Ibid, 1955.

Մանրամասնություն.— S [Skimming].— *թեթև ֆրակցիաների ստացում (բենզին, կերոսին և այլն):*
L [Lubricating].— *քսուչ յուղերի ստացում:*
A [Asphalt].— *ասֆալտի ստացում:*
Cr. [Cracking].— *կրեկինգի պրոցես:*
Cl. [Complete].— *բոլոր պրոցեսները:*
C. [Catalyctic].— *կրեկինգ պրոցես կատալիկտիկ եղանակով:*
T. [Thermal].— *կրեկինգ պրոցես ջեռուցման եղանակով:*

*Աղյուսակ 15**

Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունահանումը համեմատած ԱՄՆ-ի և մյուս կապիտալիստական երկրների արդյունահանման հետ 1911—1956 թթ. (միլիոն տոննաներով)

Տարեթիվ	Եգիպտոս	Իրան	Իրաք	Բահրեյն	Սաուդյան Արաբիա	Կուվեյթ	Կատար	Ընդամենը	ԱՄՆ	Կապիտալիստական մյուս երկրներ
1912	0,03	0,04	—	—	—	—	—	0,07	29	48
1913	0,01	0,08	—	—	—	—	—	0,09	33	53
1914	0,10.	0,27	—	—	—	—	—	0,37	35	56
1915	0,03	0,38	—	—	—	—	—	0,41	37	59
1916	0,06	0,45	—	—	—	—	—	0,51	40	63
1917	0,14	0,65	—	—	—	—	—	0,79	45	69
1918	0,27	0,89	—	—	—	—	—	1,16	47	69
1919	0,23	1,11	—	—	—	—	—	1,34	49	77
1920	0,16	1,38	—	—	—	—	—	1,54	58	95
1921	0,18	1,74	—	—	—	—	—	1,92	62	106
1922	0,17	2,32	—	—	—	—	—	2,49	74	118
1923	0,15	2,96	—	—	—	—	—	3,11	81	140
1924	0,16	3,71	—	—	—	—	—	3,87	95	139
1925	0,18	4,33	—	—	—	—	—	4,51	102	148
1926	0,17	4,56	—	—	—	—	—	4, 3	103	150
1927	0,18	4,83	0,11	—	—	—	—	5,12	120	173
1928	0,26	5,36	0,12	—	—	—	—	5,74	121	181
1929	0,27	5,16	0,12	—	—	—	—	5,85	136	204
1930	0,28	5,94	0,12	—	—	—	—	6,34	131	195
1931	0,28.	5,73	0,11	—	—	—	—	6,12	113	187
1932	0,26	6,45	0,10	—	—	—	—	6,81	104	178
1933	0,23	7,08	0,10	—	—	—	—	7,43	121	196
1934	0,21	7,54	0,06	0,01	—	—	—	8,85	121	207
1935	0,17	7,4[illegible]	3,66	0,17	—	—	—	11,49	133	225
1936	0,17	8,20	4,02	0,62	—	—	—	13,03	147	244
1937	0,17	10,16	4,29	1,05	—	—	—	14,76	171	278
1938	0,23	10,19	4,32	1,11	—	—	—	14,85	162	270
1939	0,65	9,58	4,01	1,01	0,53	—	—	15,81	168	278
1940	0,91	8,62	2,65	0,94	0,68	—	—	13,80	179	289
1941	1,19	6,60	1,61	0,91	0,57	—	—	10,88	187	300
1942	1,14	9,40	3,25	0,84	0,59	—	—	15,54	184	282
1943	1,26	9,71	3,78	0,90	0,64	—	—	16,29	200	313
1944	1,32	13,27	4,25	0,91	1,05	—	—	20,80	223	348
1945	1,30	16,84	4,62	0,95	2,84	—	—	26,55	227	356
1946	1,27	19,19	4,60	1,10	7,99	0,80	—	34,95	230	371
1947	1,32	20,19	4,65	1,25	12,15	2,20	—	41,76	247	415
1948	1,89	24,87	3,40	1,50	18,95	6,30	—	56 91	273	465
1949	2,31	26,81	4,10	1,51	23, 0	12,20	0,01	70,15	249	465
1950	2,31	31,75	6,50	1,51	25,90	17,00	1,62	86,60	267	518
1951	2,30	16,72	8,55	1,50	36,90	27,80	2,30	96,19	298	582
1952	2,37	0,75	18,45	1,50	41,00	37,10	3,25	104,44	304	605
1953	2,28	1,13	27,22	1,50	42,23	43,00	3,99	121,80	342	625
1954	1,89	4,80	29,60	1,50	46,50	47,50	4,71	133,36	338	709
1955	1,80	16,00	33,70	0,50	47,60	54,80	5,43	162,10	357	785
1956**	0,95	12,10	16,70	0,75	25,80	28,80	2,60	—	—	—

* S. H. Longrigg. Oil in the Middle East, London. 1954, pp. 276–277. The Petroleum Times, January 6, 1956, p. 14; Ibid. March 30, 1956. p. 210; World Petroleum. February 1956, p. 82; Ibid, March 1956, p. 114.

** *Առաջին կիսամյակը։*

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթի արտահանումները (հազար տոննաներով)

Արտահանումները ըստ ֆրակցիաների	Սառուցական Արաբիա 1954 թ.	Իրաք 1954 թ.	Իրան (առաջին կիսամյակը) 1955 թ.	Կատար 1954 թ.	Բահրեյն 1954 թ.	Կուվեյթ 1954 թ.
Անմշակ նավթ	35559	29540	5656	4697	—	46320
Մշակված նավթ	8749	—	—	—	9410	203
Ընդամենը	44308	29540	5656	4697	9410	46523
Արդյունահանումը	45318	30609	6899	4806	1499	47846
Նավթամշակումը	10315	802	2381	—	10648	1459
Տեղական սպառումները	1945	1064	1227	83	1213	1159
Ներմուծող երկրները						
Արգենտինա	—	—	—	—	—	1562
Ալժիր	17	—	—	—	—	—
Ադեն	—	—	—	—	—	1576
Ավստրալիա	807	—	876	—	1212	487
Բահրեյն	9067	—	—	—	—	—
Բելգիա	213	914	170	—	30	593
Բիրմա	12	—	—	—	14	—
Կանադա	897	—	15	—	—	—
Ցեյլոն	139	—	45	—	197	—
Չիլի	52	—	—	—	—	—
Եգիպտոս	503	—	110	—	—	—
Ֆրանսիա	3164	10206	302	1430	—	5875
Գերմանիա	2586	1580	72	63	—	81
Հոլանդիա	2212	441	341	329	66	4999
Իսրայել	—	—	136	—	—	—
Իտալիա	4994	6692	279	241	—	3246
Ֆորմոզա	—	—	—	—	—	169
Ճապոնիա	5167	—	289	—	—	318
Մալայա-Կիպրոս	—	—	—	—	76	—
Մալայա	177	—	—	—	497	—
Պորտուգալիա	347	670	6	—	—	—
Ֆիլիպիններ	149	—	—	—	254	—
Պակիստան	169	—	—	—	380	—
Հարավային Աֆրիկա	805	—	—	—	272	—
Իսպանիա	1487	14	—	45	—	—
Կանարյան կղզ.	619	—	—	—	—	269
Շվեդիա	503	61	113	228	83	220
Սինգապուր	—	—	—	—	—	111
Սիրիա-Լիբանան	—	848	—	—	—	—
Թյունիս	345		—	—	132	—
Միացյալ Թագավորություն	155	5014	428	1395	1785	20061
ԱՄՆ	4066	180	—	361	15	5879
Ուրուգվայ	140	—	—	—	—	1
Հարավսլավիա	—	394	—	—	—	13
Մնացյալ երկրները	5516	2526	2474	609	*4397	1063
Ընդամենը	44308	29540	5656	4697	9410	46523

* Հաշվումները կատարել ենք ըստ World Petroleum, February 1956, p. 57-ի տվյալների:

*Աղյուսակ 17**

Մերձավոր և Միջին Արևելքի 1955 թվականի նավթարդյունահանումը ըստ պատկանելիության (միլիոն տոննաներով)

Մերձավոր և Միջին Արևելքի երկրները	Պատկանելիություն			
	Անգլո-հոլանդական դաշնակցության պետությունների իրավասության ներքին	ԱՄՆ-ի մոնոպոլիստական իրավասության ներքին	Մոնոպոլիստական դաշնակցության պետությունների դիմադրությամբ	Ընդամենը արդյունահանվել է
Կուվեյթ	27.4	27,4	—	54,8
Սաուդական Արաբիա	—	47,6	—	47,6
Իրաք	17,0	7,6	9,1	33,7
Իրան	8,64	6,4	0,96	16,0
Կատար	2,6	1,3	1,5	5,4
Եգիպտոս	1,5	0,3	—	1,8
Բահրեյն	—	1,5	—	1,5
Զեղոք Գոտի	—	1,3	—	1,3
Ընդամենը	48,5	87,0	26,6	162,1

* The Petroleum Times, March 30, 1955. p. 210.

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Նավթաքար
Նավթաքարների ցուցադրան
Պետական սահմաններ
Կոնցեսիոն սահմաններ
ՄԱՍԱՍՏՐԱԼ ՆԱՎԹԱՍՈՂՔԵՐ
Կիրկուկ - Բանիան 750 ՄՄ.
Արբիլ - Տարտուս 850 300 " (ծրագրված)
Կիրկուկ - Տրիպոլի
Կիրկուկ - Հայֆա 250 350 "
Կիրկուկ - Տրիպոլի
Կիրկուկ - Իսրայելի սահմանը 400 մմ
Տրանս - Արաբիան 750 800 մմ
Նավթամբարային ճեղքվածք
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
Կիլոմետր
Կազմեց Գ. Կ. ԹՈՂՅԱՆ
Խմբագիր Մ. ՊՅՈՒՐԵՂՅԱՆ
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԳԼԽԱՎՈՐ ԿՈՆՑԵՍԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՊՇԵ
ԲԱՐԲԵՆ
ՀՅՈՒՍԻՍ
ՀԱՅՐՍԱՍՏԱՆ
ՀՈՐՇԱՆ
ԿՈՒՎԵՅԹ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ
ԻՐԱՆ
ԻՍՐԱՅԵԼ
ԻՐԱՆ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ
ՍՈՄԱԼԻ
ՍՈՄԱԼԻ
ԱՂԵՍ
ՍՈՄԱԼԻ
ՍՈՄԱԼԻ
ՍՈՄԱԼԻ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ՆԱԽՔԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Իմպերիալիստական էքսպանսիայի հիմնական շարժիչ ուժը հանդիսանում է պայքարը «...հումքի ազբյուրների համար, կապիտալի արտահանության համար, «ազդեցության ոլորտների» համար, այսինքն՝ ձեռնտու գործարքների, կոնցեսիաների, մոնոպոլիստական շահույթների ոլորտների համար և այլն, վերջապես տնտեսական տերիտորիայի համար ընդհանրապես»[1], և ահա այս օրինաչափության համաձայն, օտարերկրյա իմպերիալիզմը մուտք գործեց նաև Մերձավոր ու Միջին Արևելք։

Ի Ր Ա Ն

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների սիստեմում, կարելի է ասել, որ Իրանը առաջիններից մեկը եղավ, որը ենթարկվեց օտարերկրյա իմպերիալիզմի ազդեցությանը։

XIX դարի ընթացքում ցարական Ռուսաստանի և իմպերիալիստական Անգլիայի միջև մղված ուժեղ պայքարը Մերձավոր, Միջին, ինչպես և Հեռավոր Արևելքի երկրները գաղութացնելու համար հանգեց 1907 թվականի անգլո-ռուսական պայմանագրի կնքմանը։ Համաձայն այդ պայմանագրի Հյուսիսային Իրանը անցավ ցարական Ռուսաստանի, իսկ Հարավային Իրանը Անգլիայի ոլորտների

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 401—402։

ազդեցության տակ, ինչպես և կողմնորոշվեց Ավղանիստանի, Տիբեթի մի շարք շրջանների վերաբերյալ առկախ հարցերի լուծումը։

Այս էր ահա, այդ թվականներին տվյալ երկրների նկատմամբ անգլո-ռուսական փոխհարաբերությունների հիմնական առանցքը։ Նշված երկրները դիտվում էին նախ և առաջ որպես բուֆերային պետություններ։

Հետագայում, XX դարի սկզբներից, ցարական Ռուսաստանի և անգլիական իմպերիալիզմի շահագրգռվածությունը Պարսկաստանի, Ավղանիստանի և Տիբեթի նկատմամբ նոր բնույթ ընդունեց։ Այդ երկրները հետաքրքիր դարձան նաև որպես առևտրի շուկաներ և հումքի հավանական աղբյուրներ։ Վ. Ի. Լենինը, հումքի հավանական աղբյուրների մասին խոսելիս, նշում է, որ «ֆինանսական կապիտալի համար նշանակություն ունեն հումքի ոչ միայն արդեն հայտնագործված աղբյուրներն, այլև հնարավոր աղբյուրները, որովհետև մեր օրերում տեխնիկան զարգանում է անհավատալի արագությամբ, և այն հողերը, որոնք այսօր պիտանի չեն, վաղը կարող են պիտանի դարձվել, եթե նոր հնարներ գտնվեն... եթե կապիտալի մեծ ծախսումներ կատարվեն։ Նույնը վերաբերում է հանրային հարստությունների հետախուզումներին, այս կամ այն հումքի և այլնի մշակման ու օգտագործման նոր եղանակներին և այլն, և այլն»[1]։ Եվ հիրավի, հետագա իրադարձությունները Իրանում և Մերձավոր Արևելքի մյուս երկրներում, հատկապես նավթի հարուստ պաշարների հայտնաբերումների ասպարեզում, փայլուն կերպով հաստատեցին իմպերիալիզմի ձգտումները բնութագրող Լենինի այս հանճարեղ հիմնավորումը։

Օտարերկրյա ֆինանսական կապիտալի ներթափանցումը Իրան սկսվել էր դեռևս XIX դարի երկրորդ կեսերից։ Այդ ժամանակներից սկսած անգլիական ֆինանսական շրջանները կառավարական օրգանների հավանավորությամբ ձեռք էին բերել երկրի բնական հարստությունների օգտագործման, հեռագրաթելի անցկացման և այլ մի շարք կոնցեսիաների իրավունք։ 1892 թ. Անգլիայի կողմից Իրանին տրված փոխառության դիմաց որպես երաշխավորություն էր ծառայում երկրի հարավային սահմանների մաքսային, իսկ 1900-ական թվականներից ցարական Ռուսաստանից ստացված 32,5 միլիոն ռուբլու դիմաց փոխառության՝ հյուսիսային սահմանների տուրքերի գանձումները։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 347։

Ցարական Ռուսաստանի կողմից տրված փոխառության պայմաններով Պարսկաստանը պարտավորվում էր, բացի Ռուսաստանից, որևէ այլ պետությունից նոր փոխառություններ չանել, այնուհետև, հյուսիսային շրջանի մաքսային տարիֆները չիջեցնել՝ առանց նախապես ուսումնասիրելու Ռուսաստանի համաձայնությունը, և, վերջապես, առանց ցարական կառավարության հավանության ոչ մի երկաթուղու կառուցում չձեռնարկել։

Ստացված փոխառությունները, Պարսկաստանի՝ ֆինանսական դրությունը և պարտաբերությունը այնպիսի աստիճանի հասցրին երկիրը, որ նա դարձավ անտեսական ու քաղաքականապես կախյալ։ Այս փոխառությունների հետ կապված վարչական պայմանները և բարձր տոկոսները Պարսկաստանի պետական բյուջեի մեջ դեֆիցիտային բալանսը դարձրին խրոնիկական երևույթ։

Օտարերկրյա կապիտալը ներթափանցեց նաև երկրի առևտրի և արդյունաբերության ասպարեզները։ Անգլիական կապիտալը հանձին «Լինչ» ընկերության, կազմակերպեց տրանսպորտի նոր ուղիներ, որոնք ընդգրկում էին Կարուն գետի վրա գործող նավային տրանսպորտի կարևորագույն բաժինը՝ Մուհամմերայից Ահվազ և Ահվազից Շուշտար, իսկ այդտեղից էլ մինչև Իսպահան՝ ցամաքային ճանապարհով, կարավանների միջոցով։ Հնդ-եվրոպական հեռագրական ցանցը նույնպես անգլիական կապիտալի նախաձեռնությունն էր, որը 1870 թվականից սկսած Լոնդոնը կապում էր Թեհրանի հետ, և ապա պարսկական մայրաքաղաքը՝ Կարաչիի հետ։

1872 թվականին անգլիական կապիտալիստ Բարոն դը Ռեյտերին հաջողվում է Պարսկաստանը բազմակողմանի կերպով շահագործելու համար ձեռք բերել մի շարք կոնցեսիաներ։ Այդ կոնցեսիաների շնորհիվ դը Ռեյտերը ձեռք էր բերել երկաթուղային գծեր կառուցելու, երկրում հանքային հետախուզումներ կատարելու և, վերջապես, կենտրոնական բանկ կազմակերպելու լայն իրավունքներ։ Սակայն, ցարական կառավարության ճնշման տակ հետագայում շահը չեղյալ է համարում դը Ռեյտերին շնորհված կոնցեսիաների մեծ մասը, ուստի անգլիացի կապիտալիստին միայն հաջողվում է 1889 թ. կազմակերպել «Պարսկաստանի շահընշահի բան-

---

[1] Որովհետև այդ եկամուտները երաշխիք էին ռուսական փոխառությունների դիմաց։

[2] Ինչպես հայտնի է, Պարսկաստանի անունը պաշտոնապես փոխվեց Իրանի միայն 1935 թվականին. այդ թվականից առաջ տեղի ունեցած իրադարձությունների մասին խոսելիս մենք այս երկիրը նշել ենք Պարսկաստան անունով։

կը»[1], որը մինչև 1927 թվականը, այսինքն Իրանի կենտրոնական բանկի Բանկ-ի-Մելլի-ի-Իրան-ի հիմնվելը կենտրոնական բանկի մի շարք ֆունկցիաներ էր կատարում։ Այս բանկի սկզբնական կանոնադրությունը կազմում էր մեկ միլիոն ֆունտ ստերլինգ՝ իր ժամանակի համար հսկայական մի գումար։ Ի հակակշիռ բանկի ազդեցության ցարական կառավարությունը, շատ չանցած, հիմնում է «Փոխատու բանկ», որը հետագայում վերանվանվում է «Պարսկաստանի դիսկոնտ բանկ»։

Ի տարբերություն ցարական կառավարության դանդաղ, մեթոդիկ և կոմպակտ ներթափանցման, որը գլխավորապես տարածվում էր Պարսկաստանի հյուսիսային շրջաններում, իսկ հաղիվ նկատելի՝ հարավում, անգլիական ներթափանցման պրոցեսը ցիրուցան էր և նկատելի էր երկրի ամեն մի անկյունում՝ հանձինս «Պարսկաստանի շահընշահի բանկի» դրամանյակների, «Հնդ-եվրոպական» հեռագրական ընկերության կայանների և անգլիական այլ առևտրական հաստատությունների։ Բայց, առհասարակ պետք է ասել, որ եթե ցարական կառավարության ազդեցությունը գերակշռում էր պարսկական Ադրբեջանում, Մերձկասպյան պրովինցիաներում և Խորասանում, ապա անգլիական իմպերիալիստների ազդեցությունը գերակշռում էր հատկապես Պարսից ծոցի ափերին գտնվող բոլոր շրջաններում։ Ըստ էության, Պարսից ծոցից Իրանի կապը արտաքին աշխարհի հետ համարյա անգլիական նավատորմի մոնոպոլիան էր։

Պարսկաստանի արտաքին առևտուրը ծովային ճանապարհով ապահովում էին գլխավորապես հետևյալ նավահանգիստները՝ Բենդեր Աբբասը, որը կապվում էր Քիրմանի և Մեշհեդի հետ, Լինգահը, որը կապվում էր Լուրիստանի հետ, Բուշիրը և Մոհամմերահը, որոնք կապվում էին երկրի կենտրոնական պրովինցիաների հետ, և, վերջապես, Բասրահը (Միջագետքում), որը կապվում էր արևմտյան պրովինցիաների հետ։

Օրենը իր գրքում ասում է. «Հարավային Պարսկաստանում Բուշիրը փաստորեն անգլիական ֆիրմաների մայրաքաղաքն է։ Անգլիայի մնայուն պաշտոնական ռեզիդենտը, անգլիական հեռագրական ցանցի վարչության գրասենյակները, անգլիական նավերի մշտնջենական ներկայությունը քաղաքի նավահանգստում — այս

---

[1] 1951—1953 թթ. անգլո-իրանական նավթային վեճի կապակցությամբ իրանական կառավարության պահանջով 1952 թվականի հունվարին լիկվիդացվեց այս բանկը։

բոլորը միասին վերցրած, այս քաղաքին անգլիական բացարձակ գերիշխանության դրոշմ է տալիս։ Սա Պարսկաստանում այն քաղաքն է, որտեղ անգլիերենը ամենագործածական լեզուն է դարձել։ Բուշիրի և նրա շրջակա շրջանների բոլոր առևտրականները, զանազան ֆիրմաներում ծառայող պաշտոնյաները, ֆեոդալ ազատները և մի շարք ցեղապետներ ենթարկվում են անգլիական իշխանություններին»[1]։ Ֆրանսիացի ճանապարհորդի այս վկայությունները, որոնք հիմնված են անձնական դիտողությունների վրա, ցայտուն կերպով պատկերում են անգլիական ներթափանցման իսկական ծավալն ու իսորությունը Պարսկաստանում։

Սայքսը ցարական կառավարության քաղաքականությունը բնութագրելիս ասում է. «...Պարսկաստանում գործող ռուսական բանկերը ֆինանսական մինիստրությանն են պատկանում։ Պատկանելով պետությանը, նրանք առաջին հերթին հետապնդում են քաղաքական նպատակներ...»[2]։

Ցարական իմպերիալիզմի էքսպանսիան ինչպես Պարսկաստան, այնպես էլ այլուր, վերջացավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո, 1921 թվականի սովետա-իրանական պայմանագրի կնքումով։ Այս պայմանագրի համաձայն, Սովետական կառավարությունը հրաժարվում էր այն բոլոր իրավունքներից և կոնցեսիաներից, որ ցարական կառավարությունը անարդարացիորեն պարտադրել է պարսկական կառավարությանը։ Սովետական կառավարության այս նոր քաղաքականությունը Պարսկաստանի և առհասարակ Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդներին ցույց տվեց Ռուսաստանում ստեղծված նոր կարգերի բարյացակամ և մարդասիրական վերաբերմունքը ճնշվածների ու շահագործվածների նկատմամբ, մի վերաբերմունք, որը խորթ է իմպերիալիզմի էությանը։

Մինչ այդ և նախքան առաջին համաշխարհային պատերազմը, Մերձավոր և Միջին Արևելքում, այդ թվում և Պարսկաստանում, բացի Ֆրանսիայից ցարական Ռուսաստանից և Անգլիայից որոշ չափով ներթափանցման փորձեր էին կատարում նաև Գերմանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Այս վերջինի փորձերը այդ ժամանակներում դեռևս երկչոտ էին և նրանք գործում էին համեմատաբար ավելի քողարկված ձևով, հանդես գալով գլխավորապես կուլտուրական ասպարեզում, դպրոցներ և նման այլ հիմնարկներ հիմնադրելով։ Սակայն, Գերմանիայի ներթափանցման փորձերը ավե-

[1] E. Aubin. La Perse d'Aujourd'hui. Paris 1905. 217.
[2] P. M. Sykes. A History of Persia, London, 1915. p. 477.

լի լուրջ բնույթ էին կրում։ Նա մեծապես օգտագործում էր այս շրջաններում անգլիական և ռուսական (ցարական) իմպերիալիստների միջև ծավալվող հակասությունները։

Գերմանիան, առաջին իմպերիալիստական պատերազմում պարտություն կրելու հետևանքով, ժամանակավորապես ասպարեզից դուրս մղվեց։ Գերմանիան, Մերձավոր և Միջին Արևելք և այդ թվում Պարսկաստան թափանցելու նոր փորձերի ձեռնարկից 1925 թվականից, պարսկական կառավարությանը տրամադրելով իր մասնագետներին։ 1929 թվականին Գերմանիայի ու Պարսկաստանի միջև կնքվեց առևտրական պայմանագիր, որի շնորհիվ գերմանական ապրանքներն սկսեցին ողողել պարսկական շուկաները, դուրս մղելով շատ դեպքերում մյուս իմպերիալիստական երկրների ապրանքները։ 1936 թվականին Շահը (այդ ժամանակ «Ռայխ-բանկի» կառավարիչ) այցելելով Իրան, առևտրական նոր պայմանագիր կնքեց, որից հետո այս երկիրը ներմուծվում էին տարեկան ավելի քան 3 միլիոն ֆունտ ստեռլինգի գերմանական ապրանքներ։ Երկրի արդյունաբերության մեջ հետզհետե սկսեցին օգտագործել գերմանական սարքավորումներ։ Այսպիսով, նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը Իրանի արդյունաբերական սարքավորումների մեծագույն մասը մատակարարում էին «Կրուպ», «Դյուզբուրգ», «Տիեֆրաու Բերգեր», «Ֆերստաղ» և նման այլ մոնոպոլիստական ընկերությունները։ Ինչպես այդ բնորոշ է իմպերիալիստների համար, սարքավորումների ներմուծմանը համարյա թե միշտ ուղեկցում էին մեծ թվով ինժեներներ, տեխնիկներ և այլն, որոնք սարքավորումները տեղակայելու և մասնագետներ վարժեցնելու պատրվակով, ուղևորվելով Իրան, իրականում, հանդիսանում էին հիտլերյան գործակալներ։ Ֆաշիստական Գերմանիայի ներթափանցումն այնպիսի մասշտաբների էր հասել, որ արդեն 1932—1933 թթ. վերականգնել էր նախապատերազմյան (1914—1918) չափերը, իր ձեռքը վերցնելով Իրանի առևտրի 8 տոկոսը, իսկ 1940—1941 թվականներին՝ 45 տոկոսը։ Հիտլերյան Գերմանիայի ներթափանցումը Մերձավոր և Միջին Արևելք, այդ թվում Իրան, դարձավ երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին տարիներին։

Ամերիկայի Միացյալ Նահանգների ներթափանցումը Պարսկաստան, սկսվում է միսիոներական դպրոցների ցանցի կազմակերպումով։ 1872 թվականին Թեհրանում հիմնվում է ամերիկյան արական դպրոց, իսկ 1896 թվականին բացվում է աղջիկների բաժինը։ 1904 թվականին Չերչ Միշընբրի Սոսայիտին Բոստահանում կազմակերպում է Սաչուվրան Մեմորիալ Կոլեջը։ Այս դպրոցների

բուն նպատակն էր՝ նախադրյալներ ստեղծել հետագա տնտեսական քաղաքական ներթափանցման համար։ Բարենպատակ կազմակերպությունների քողի տակ ամերիկյան միսիոներական դպրոցների ցանցը կարևոր դեր է խաղում ամերիկյան մոնոպոլիստների հետագա ներթափանցման գործը մեծապես հեշտացնելու համար։ Այդ դպրոցները տարիներ շարունակ պատրաստել և իրենց ոգով դաստիարակել են ուսանողներ, որոնք պատրաստի կադրեր են հանդիսացել ամերիկյան իմպերիալիզմի ներթափանցման հետագա էտապներում։

1911 թվականին Պարսկաստան ուղարկվեց ամերիկյան առաջին տնտեսական պատգամավորությունը՝ Մորգան Շուստերի[1] գլխավորությամբ։ Նույն թվականին Շուստերին հաջողվեց իրեն նշանակել տալ որպես Պարսկաստանի ֆինանսների վարիչ։ Այդ թվականներին այս շրջաններում ամերիկյան իմպերիալիզմը, անգլիական իմպերիալիզմի հետ համեմատած, ավելի երկրորդական դեր էր խաղում, ուստի Ֆորենզ Օֆֆիսը, օգտվելով իր ուժեղ դիրքից, Շուստերին շահագործելով հօգուտ բրիտանական շահերի, միաժամանակ չեղոքացնում է ամերիկյան իմպերիալիզմի՝ Պարսկաստան ներթափանցելու երկչոտ փորձերը։ Անգլիական իշխանությունները մեծ միջոցներ տրամադրելով Մորգան Շուստերին, նրան ներգրավում են իրենց քաղաքական օրբիտի մեջ և դարձնում իրենց շահերի սպասարկուն։ Պարսկական իշխանությունների վրա ճնշում գործելով, Ֆորենզ Օֆֆիսին հաջողվում է 1911 թ. մայիսի 30-ին մեջլիսում որոշում անցկացնել տալ պետական փոխառությունների հսկիչի պաշտոնը Մորգան Շուստերին հանձնելու մասին։ Մեջլիսի նույն տարվա մի նոր որոշման համաձայն, երկրի ֆինանսների վարիչ Շուստերի իրավասություններն ընդլայնվեցին։ Մորգան Շուստերը, հիմնվելով այս որոշման 5-րդ հոդվածի վրա, ըստ որի պետական բոլոր ծախսերի հսկողության պարտականությունները դրվում էին ֆինանսների վարիչի վրա, հրահանգ է տալիս վարչական կազմակերպություններին՝ մաքսերից հասնող բոլոր մուտքերի ավանդները փոխանցել ֆինանսների վարչության հաշվին։ Այս անելով, Շուստերը նպատակ ուներ մաքսերի վարչության պետ Մորնարին, որը վայելում էր ցարական կառավարության հովանավորությունը ենթարկել իրեն։

Ցարական կառավարությունը տեսնելով, որ ֆինանսների վարիչը արդեն դարձել է անգլիական քաղաքականության գործիքը,

[1] Մանրամասնությունները տե՛ս W. Morgan Shuster, The Strangling of Persia, London, 1912.

նրա ազդեցությունը հակակշռելու նպատակով, սկսում է մաքսերի վարչության պետ Մորնարին (Պարսկաստանում այդ ժամանակ մաքսերի գանձումը բելգիական մենաշնորհ էր) հովանավորել Շուստերի դեմ մղած պայքարում։ Շուստերի և Մորնարի միջև պայքարը փաստորեն անգլո-ռուսական (ցարական) հակասությունների մի նոր արտահայտությունը հանդիսացավ։

Ցարական կառավարությունը Շուստերի վարած քաղաքականությունից դժգոհելու բոլոր պատճառներն ուներ։ Ֆինանսների վարիչն իր պաշտոնավարության տարիներին պարսկական փոխառությունների ժամանակ ամեն կերպ նպաստում էր անգլիական ֆինանսական շրջաններին, խոչընդոտներ հարուցելով ռուսական կապիտալի առջև։ Մորնարի և Շուստերի պայքարը պատրվակ ծառայեցնելով, ցարական կառավարությունը ուժեղ ճնշում է գործադրում պարսկական իշխանությունների վրա և սպիտում է նրանց ֆինանսների վարիչին ազատել իր պաշտոնից։

Չնայած Մորգան Շուստերը ծառայում էր անգլիական իմպերիալիզմի շահերին, բայց և այնպես ամերիկյան իմպերիալիզմի հետագա ներթափանցման համար որոշ նախադրյալներ պատրաստեց այն իմաստով, որ ԱՄՆ-ի հետ կուլտուրական կապերի ուժեղացմանը զուգահեռ, ամերիկյան կառավարական շրջանների համար մեծ փորձ ձեռք բերեց այս երկու երկրների հետագա փոխհարաբերությունների օգտին։

Ամերիկյան երկրորդ տնտեսական պատգամավորությունը, որը, նախորդի հետ համամատած, հանդիսանում էր բուն իսկ ամերիկյան ներթափանցման ապարատ, 1922—1927 թվականներին ղեկավարեց դոկտոր Ա. Ս. Միլսպոն։ Միլսպոյի գործունեության այդ կարճատև ժամանակաշրջանում ամերիկյան մոնոպոլիստները մեծ օգուտներ չունեցան, և այդ նրա համար, որ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, Մերձավոր և Միջին Արևելքում, համեմատած եվրոպական մյուս իմպերիալիստական պետությունների գործունեության հետ, ամերիկյան իմպերիալիստները դեռևս առաջնակարգ դեր չէին խաղում։

Իմպերիալիստական այն բոլոր պետությունների շարքում, որոնք այսպես թե այնպես փորձել են ներթափանցել Մերձավոր և Միջին Արևելք, Անգլիան միակը եղավ, որին հաջողվեց համեմատաբար ավելի երկար ժամանակ պահել իր ձեռք բերած դիրքերը։ Անգլիական իմպերիալիզմը Պարսկաստանում նոր և ավելի խորը արմատներ էր գցել երկրում հարուստ նավթային պաշարներ հայտնաբերելուց հետո։ Ճիշտ է, Անգլիան սկսել էր ներթափանցել այս երկիրը

դեռ շատ վաղուց, փաստորեն այն ժամանակից, երբ նա Պարսկաստանը դարձրել էր Հնդկաստանի ճանապարհի վրա որպես կարևոր հանգույցներից մեկը, ինչպես նաև Հնդկաստանի ու արտաքին աշխարհի միջև որպես բուֆեր պետություն, սակայն Պարսկաստանը այդ ժամանակներում Ֆորեյն Օֆֆիսի կողմից կարևոր էր համարվում իր ստրատեգիական դիրքի համար և դեռևս շուներ տնտեսական այն մեծ նշանակությունը, ինչ որ ունեցավ նավթային հակակական հարստությունների հայտնաբերումից հետո։ Հենց այդպես էլ խոստովանում է նույնիսկ բուրժուական պատմաբան Սպայզերը, երբ ասում է՝ «...բացի նրանից, որ Մերձավոր Արևելքը (և, հետևաբար, Իրանը — Հ. Բ.) հանդիսանում է որպես ճանապարհների հանգույց, միջոց դեպի նպատակը, միևնույն ժամանակ, իր սեփական բնական հարստությունների շնորհիվ, այս շրջանը հանդիսանում է նաև, և կարելի է ասել առավել ևս, նպատակ»[1]։

Ինչպես արդեն ասել ենք[2], Պարսկաստանի նավթային հարստությունների մասին առաջին գիտական ուսումնասիրությունը պատկանում է Լոֆտուսին։

Վ. Կ. Լոֆտուսը մի հոդվածում[3] բավական հանգամանորեն նկարագրել է Թյուրքիայի սահմաններին կից տարածվող պարսկական տերիտորիայի երկրաբանությունը, նույն տեղում և գրի է առել իր դիտողությունները նավթային նստվածքների մասին։ Երբ Բարոն Յուլիուս դը Ռեյտերը կոնցեսիաների համար 1872 թվականին արել է իր առաջին դիմումը, նա, անկասկած, աչքի առաջ է ունեցել Լոֆտուսի ուսումնասիրությունը երկրի հարավ-արևմտյան շրջանների նավթային հարստությունների մասին։

Հետագայում, մինչև Դ'Արսիի հանդես գալը, Պարսկաստանի նավթային հարստությունները շատերին են հետաքրքրել։ Բուշիրում հաստատված Հոց ընկերությունը 1884 թվականին շահի հատուկ թույլտվությամբ հորատման աշխատանքներ է ձեռնարկում Դալիկի կոչված վայրում, Ֆարսի պրովինցիայում, որտեղ նավթային նստվածքների հետքեր էին նկատվել դեռևս շատ վաղուց։ Հեռախուզման աշխատանքները ցանկալի արդյունք չտալով, այս ընկերությունը դադարեցնում է իր այդ կարգի աշխատանքները։ 1889 թվականին Դը Ռեյտերը ձեռք է բերում նավթային հարստու-

---

[1] E. A. Speiser. The United States and the Near East, New York, 1950. p. 19.

[2] Տե՛ս մեր այս աշխատության էջ 51։

[3] W. K. Loftus. Quarterly Journal Geological Society, London, 1855, vol. XI, pp. 247—344.

թյունների շահագործման համար մի նոր կոնցեսիա։ Այդ կապակցությամբ նա հիմնում է Պերժին Բանկ Մայնինգ Ռայց Կորպորեշին ընկերությունը, որը, երկու անհաջող հորատումներից հետո (մեկը Դալիկիում, մյուսը Կիշմ կղզում) 1894 թվականին լուծարքի է ենթարկվում։

Պարսկաստանի նավթային հարստությունների հարցով հետաքրքրվողների թվում է եղել նաև ֆրանսիացի հայտնի ինժեներ-հնագետ Դը Մորգանը, որի այդ շրջանի ենթահողի մասին հրատարակած տեղեկությունները Վիլիամ Նոքս Դ'Արսիի համար հետաքրքիր դարձան ծառայեցին ոսոք դնելու այս նոր ասպարեզը։

Ավստրալիացի ինժեներ Վիլիամ Նոքս Դ'Արսին, որը Ավստրալիայում ոսկու հանքերի շահագործումով էր զբաղվում, փոխադրվելով Պարսկաստան, անմիջապես դիմում է շահին՝ կոնցեսիոն իրավունքներ ձեռք բերելու համար։ Այս գործը հաջողեցնելու համար իր նոր կազմած ընկերությանն աշխատակցելու է վերցնում պարսկական շրջաններին ծանոթ և այդ երկրում երկարամյա փորձ ունեցող երկու անձնավորությունների։ Սրանցից մեկը՝ Ա. Լ. Մարիոտ, ֆրանսիացի նախկին գլխավոր հնագետ, երկրում երկար տարիների փորձ և կառավարական շրջաններում կարևոր կապեր ուներ, իսկ մյուսը, Դիվան Բաշի մականունով, ազգությամբ հայ, պարսկական կառավարության բարձր պաշտոնատար անձերից մեկն էր։ Այդ գործում մեծ դեր խաղաց նաև Դը Ռեյտերը, որը վերջնականապես հրաժարվելով նավթային հարստություններ որոնելու իր մտադրությունից, միջամտեց շահի մոտ հօգուտ Դ'Արսիի։

1901 թ. մայիսի 28-ին Դ'Արսիին հաջողվում է Պարսկաստանի շահ Մոզաֆֆեր էդ Դինից ձեռք բերել կայսերական ֆիրման, որով նրան շնորհում էին Պարսկաստանի ընդերքը հետախուզելու և նավթի հայտնաբերման դեպքում 50 տարվա ժամկետով (մինչև 1951 թ. մայիսի 28-ը) այն շահագործելու կոնցեսիոն լայն իրավունքներ։ Ցարական կառավարության ճնշման հետևանքով կոնցեսիայի մեջ չմտցվեցին Պարսկաստանի հյուսիսային հինգ պրովինցիաները, որոնք և դուրս մնացին անգլիական մոնոպոլիստների շահագործման օրբիտից։ Կոնցեսիոն իրավունքներով նախատեսվում էին երկրում նավթամուղեր կառուցելու թույլտվություն, ինչպես նաև էքստերիտորիալ մի շարք առանձնաշնորհումներ, որոնց թվում մաքսային տուրքերից և այլ կառավարական հարկերից ազատում։ Դրա դիմաց Դ'Արսին պարտավորվում էր, կոնցեսիան ստանալուց հետո, երկու տարվա ընթացքում կազմել շահագործող ընկերությունը և նրա հաստատման օրից սկսած պարսկական կառավարության

գանձարանին վճարել 20 հազար ֆունտ ստեռլինգ հնչուն դրամ և ընկերության ակցիաներ 20 հազար ֆունտ ստեռլինգ արժողությամբ, ինչպես նաև ընկերության զուտ շահերի 16 տոկոսը։ Կոնցեսիայի ընդհանուր տերիտորիան՝ 1280 հազ. քառ. կմ, փաստորեն երկրի ընդհանուր տարածության 75 տոկոսն էր։ Մինչև անգամ Նորման Կեմպը, որը անգլո-իրանական նավթային վեճի ժամանակ ի պաշտպանություն անգլո-իրանական ընկերության հանդես եկավ մի գրքով, չի կարողանում այդուհանդերձ ժխտել որ Դ'Արսիի կոնցեսիան չտեսնված չափերով լիբերալ էր, և մեծաշնորհավարձը ողորմելի[1]։

Կոնցեսիայի պայմանների համաձայն, երկու տարի հետո, 1903 թվականին, հիմնվում է Ներստ Էքսպլոյատեշընն Կոմպանին։ Հետագայում, 1909 թվականին, երբ Դ'Արսին կարիք է զգում նոր և հավելյալ կապիտալի, բրիտանական ծովակալության (այն սկսել էր անուղղակի կերպով հետաքրքրվել Պարսկաստանի նավթով) միջնորդությամբ Բուրմա Օյլ Կոմպանին և ֆինանսիստ Զարլզ Գրինվեյը միանալով Դ'Արսիին, կազմում են Անգլո-Պերժին[2] Օյլ Կոմպանին, որը հետագայում վերանվանվեց Անգլո-Իրանիան Օյլ Կոմպանի, երբ 1935 թվականին Պարսկաստանը պաշտոնապես վերջապես ստացավ իր հին պատմական Իրան անունը։ Այս ընկերության սկզբնական կապիտալը կազմում էր 2 միլիոն ֆունտ ստեռլինգ։

Բայց Հարավային Պարսկաստանի նավթային հարստությունների շահագործումը կապված էր, բացի տեխնիկական դժվարություններից, նաև քաղաքական բարդությունների հետ։ Այդ շրջաններում ապրող ժողովուրդները չէին ենթարկվում կենտրոնական իշխանություններին, ուստի անհրաժեշտ եղավ, նախքան լուրջ աշխատանքներ ձեռնարկելը, ապահովել այդտեղ իշխող ցեղապետների շահագրգռվածությունը։ Հետապնդելով այս նպատակը, Դ'Արսիին հաջողվում է շահին համոզելով, հետ վերցնել կայսերական գանձարանին վճարված գումարների ու ակցիաների մի մասը և հատկացնել տեղական ցեղապետներին, որոնք այլապես կարող էին խանգարել նավթի շահագործման հետ կապված հետագա գործողություններին։ Շնորհիվ այս վերջին կարգադրության, Դ'Արսին, կենտրոնական իշխանության կողմից շնորհված կոնցեսիոն իրավունքներից բացի, ապահովեց նաև տեղական ֆեոդալ աղանե-

---

[1] Տե՛ս Norman Kemp. Abadan. London, 1953. p. 14.

[2] Պարսկական։

ի բարյացակամ տրամադրություններն ու նրանց պաշտպանությունը։ Նույն առթիվ բրիտանական կառավարությունը, իր հպատակների կյանքն ու դույքն ապահովելու պատրվակով Հնդկաստանից ուժեր փոխադրեց Պարսկաստան ստեղծելով իր սեփական ռազմական ուժերը, այդպիսով ոտնակոխ անելով տեղական իշխանությունների հեղինակությունը իրենց իսկ երկրի մեջ։

Ընկերության հետագա գործունեության ընթացքն ապահովող այս և նման կարգի առկախ մնացած բոլոր հարցերը լուծելուց հետո, 1908 թվականին Դ'Արսին պաշտոնապես հայտարարում է, թե Մայդան-ի-Նաֆտուն-նում (այժմ Մասջիդ-ի-Սուլեյման) 400 մետր խորության վրա հայտնաբերվել է նավթի հարուստ շերտ։

Վիլիամ Նոքս Դ'Արսիի նավթային զրոնումների պատմությունից երևում է, որ մինչև 1908 թվականը ավստրալիացի ինժենների հետախուզումները դրական որևէ արդյունք չեն տվել։ Չնայած այս իրողությանը, նա, համենայն դեպս, 1901 թվականից սկսած, Պարսկաստանի շահից իր ֆիրմանը ստանալու համար տրամադրել է բավական խոշոր գումարներ, այնուհետև հիմնել է երկու ընկերություն՝ Ֆերստ էքսպլոյտեշընն Կոմպանին և քիչ ժամանակ անց՝ Բախտիարի Օյլ Կոմպանին։ Այս բոլորի համար, բացի իր անձնական հարստությունից, Լոնդոնի ֆինանսական շուկայից ձեռք է բերել այդ ժամանակ մեծ արժեք ներկայացնող 600 հազար ֆունտ ստեռլինգ կապիտալ։ Իսկ ինչո՞վ բացատրել Դ'Արսիի այսքան մեծ պարտավորությունների մեջ մտնելու հանդգնությունը, եթե ոչ նրանով, որ Մասջիդ-ի-Սուլեյմանում կատարվող աշխատանքների արդյունքը նրան արդեն հայտնի էր 1908 թվականից շատ ավելի առաջ։

Պիեր Ֆոնտենը գրում է, որ Դ'Արսին իր հետախուզումների ժամանակ (ուրեմն, ըստ պաշտոնական տվյալների, այդ պետք է եղած լինի 1901—1908 թվականներին — Հ. Բ.) շարունակ կոնցեսիան վաճառելու առաջարկություններ էր ստանում անգլիական Ինտելիջենս սերվիսի գործակալների կողմից[1]։

Մեր կարծիքով, այս նշանակում է, որ նախքան 1908 թվականը անգլիական պաշտոնական շրջաններին նույնպես հայտնի էր նավթային հարուստ շերտերի առկայությունը, բայց այդ պահվում էր գաղտնի։ Գաղտնի էր պահվում, որովհետև, եթե շահը և Բախտիարի ցեղապետներն իմանային իրենց երկրի ընդերքում գտնվող հարստության իսկական մասշտաբները և նշանակությունը, դժվար

[1] Pierre Fontaine. La Guerre Occulte du Pétrole, Paris, 1949, p. 165.

թե համաձայնվեին Դ'Արսիի պայմաններին։ Եվ Ջորենց Օֆֆիսը չէր միջամտում Դ'Արսիի ու շահի միջև տեղի ունեցող բանակցություններին, որովհետև չէր ցանկանում, որ այն տպավորությունն առաջանա (թե՛ պարսկական իշխանությունների մոտ և թե՛ միաժամանակ ցարական կառավարության շրջաններում), թե անգլիական կառավարությունն իսկապես շահագրգռված է այդ պաշարներով։ Անգլիական կառավարության համար շատ հեշտ էր հետագայում, ցանկացած բոպնին, ավստրալիացի կապիտալիստից խլել այդ իրավունքը։ Ահա թե ինչու մինչև շահի ու Բախտիարի ցեղապետների հետ տեղի ունեցող բանակցությունների վերջը և ապա մինչև 1907 թվականի անգլո-ռուսական (ցարական) պայմանագրի կնքումը Պարսկաստանի նավթի հարուստ պաշարների պոտենցիալի մասին պաշտոնական ոչ մի հայտարարություն չի եղել։ Մայքլ Բրուկսը խոսելով Մեյդան-Նաֆթունում 1908 թ. հունիսի 28-ին՝ մեծ քանակությամբ նավթ հայտնաբերելու մասին, ասում է. «...այս հաջողությունը տեղի ունեցավ շատ պատեհ ժամանակին։ Փաստորեն այն ժամանակ, երբ արդեն Ռուսաստանի (ցարական) և Մեծ Բրիտանիայի տրադիցիոն հակամարտությունը Պարսկաստանին տիրապետելու կապակցությամբ վերածվել էր կարևոր նշանակություն ունեցող մի համաձայնության (խոսքը 1907 թվականի անգլո-ռուսական պայմանագրի մասին է — Հ. Թ.)»[2]։ Բրուկսը այդ մոմենտը վերագրում է, այսպես ասած, պատահականության, բայց, ինչպես ասել ենք, դա կանխամտածված քայլ էր։

1914 թ. մայիսին, Բրիտանական կառավարությունը, ելնելով իր ռազմական նավատորմը վառելանյութով ապահովելու պահանջից, Վինստոն Չերչիլի (այդ ժամանակ ռազմա-ծովային մինիստր) նախաձեռնությամբ ձեռք է բերում Անգլո-Պերժին ընկերության արտոնյալ ակցիաների 52 տոկոսը, իսկ սովորական ակցիաների 55 տոկոսը, միևնույն ժամանակ բարձրացնում է ընկերության կապիտալը 4,5 միլիոն ֆունտ ստեռլինգի[3]։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ անգլիական զորքեր իջեցնելը Ֆաոում (Միջագետքի նավահանգիստներից մեկը Պարսից ծոցում) և այդտեղից ծավալվող ռազմական գործո-

---

[1] Ուրիշ տվյալների համաձայն 1908 թ. մայիսի 28-ին։

[2] Майкл Брукс, Нефть и внешняя политика, Лондон, 1949, стр. 59.

[3] Այժմյան կապիտալը տոմարներում արձանագրված է 32.843.752 ֆունտ ստեռլինգ, թեև այս ընկերության ունեցվածքը այժմ արդեն գերազանցում է մի քանի հարյուր միլիոն, ոմանց կարծիքով՝ 300 միլիոն, իսկ ուրիշների կարծիքով՝ մինչև 500 միլիոն ֆունտ ստեռլինգից։

զությունները, որ շարունակվեցին մինչև 1918 թվականի վերջերը, նպատակ ունեին Հնդկաստանի ճանապարհը կերմանա-թյուրքական ուժերի առաջ փակելուց բացի, նաև պաշտպանել Պարսկաստանի իրենց նավթավայրերը։

Առաջին համաշխարհային պատերազմի վերջում Անգլիայի մրցակից իմպերիալիստական տերությունները ժամանակավորապես Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից դուրս գալու հետևանքով, բրիտանական իմպերիալիզմի համար աղատ ասպարեզ բացվեց, որը և շարունակում էր իր հեգեմոնիայի տարածումը Մերձավոր ու Միջին Արևելքում, այդ թվում և Իրանում։ Իրենց ձեռք բերած դիրքերը հավերժացնելու նպատակով Անգլիան Պարսկաստանի վրա է փաթաթում 1919 թ. օգոստոսի պայմանագիրը, որով ըստ էության ամբողջ երկիրը դառնում է Անգլիայի գաղութ։

Այս պայմանագիրն առաջացնում է տեղական ժողովրդի դժգոհություն։ Թեհրանում և երկրի այլ քաղաքներում տեղի են ունենում ժողովրդական պրոթեստներ ու հուզումներ։ Ցույցերի ժամանակ ելույթներ են տեղի ունենում արևմտյան իմպերիալիզմի և հատկապես անգլիական գաղութարարական քաղաքականության դեմ։ Հարևան նորաստեղծ պետության՝ Սովետական իշխանության հմայքն ու հեղինակությունը ժողովրդական լայն մասսաների մոտ գնալով աճում են։ Ադրբեջանում ժողովրդական շարժումներ են տեղի ունենում։ 1920 թվականին Բաքվում, արևելյան ժողովուրդների առաջին համագումարում Պարսկաստանի դելեգացիան և ուրիշ մասնակիցներ հանդես են գալիս Արևելքի երկրները արևմտյան իմպերիալիզմի ազդեցությունից ազատագրելու լոզունգներով։ Նրկրի հարավում Բախտիարի ցեղախմբերը ապստամբվում են անգլիական իշխանությունների դեմ։ Այս բոլոր իրադարձությունները հասցրին Ռիզա Խանի, 1921 թ. փետրվարի 21-ի կառավարական հեղաշրջմանը։

Անգլիական իշխանությունները, պարսիկ ժողովրդի զիմադրությունը թուլացնելու նպատակով, զենք և ամեն տեսակի օգնություն ցույց տալով, հովանավորում են Շեյխ Խազալ Մահմարայի 1925 թվականի ապստամբությունը, որը, սակայն, վերջանում է կենտրոնական իշխանությունների և հակաանգլիական ուժերի հաղթանակով։ Այսպիսով, Իրանում Անգլիայի վարած հակաժողովրդական քաղաքականությունը մատնվում է պարտության։ Բրիտանական իմպերիալիզմը ստիպված է լինում մեկը մյուսի հետևից զիջել իր դիրքերից մի քանիսը։ 1927 թ. ՍՍՌՄ-ի և Պարսկաստանի միջև փոխադարձ հավատարմության հիմունքներով կնքված նոր

պայմանագրի վրա հենվելով, պարսկական կառավարությունը 1928 թ. մայիսի 10-ին որոշում ընդունեց իմպերիալիստական բոլոր տերություններին պայմանագրերով տրված կապիտուլյացիոն ռեժիմը համարել չեղյալ։ 1931 թվականին Հնդ-եվրոպական հեռագրական ընկերության կոնցեսիան նույնպես չեղյալ է համարվում։ 1932 թվականին, հասարակական կարծիքի ուժեղ ճնշման տակ, պարսկական կառավարությունը պահանջում է վերանայել Անգլո-Պերսին նավթային ընկերության կոնցեսիոն պայմանները։ Հաշվապահ Մակլինտոկի պրպտումների հետևանքով հայտնի է դառնում, որ այս կոնցեսիայի անբարենպաստ պայմաններով անգամ պարսկական կառավարությանը հասանելիք գումարները երկար ժամանակ չեն վճարվել։ Նույն թվականի դեկտեմբերի 5-ին դեսպուտատ Դաշտին մեջլիսում հանդես է գալիս այս ընկերության կոնցեսիան լուծարքի ենթարկելու առաջարկությամբ։ Իր ելույթում Դաշտին փաստերով ապացուցում է, որ պետությանը հասնող կոնցեսիոն հատուցումները նվազեցնելու նպատակով, Անգլո-Պերսին ընկերությունը չի վարանել անգամ բալանսները կեղծելով, ոչ ճիշտ տվյալներ տալ նավթահանման մասին։ Դեսպուտատ Դաշտիի ասածներից պարզվում է, որ 1901 թվականից մինչև 1914 թվականն պարսկական կառավարությունն այս ընկերությունից ոչ մի գումար չի ստացել, այնուհետև, մի տարվա համար 9 հազար ֆունտ ստերլինգ շնչին գումար ստանալուց հետո, մինչև 1919 թվականը նորից ոչ մի գումար չի ստացել[1]։ Վերջապես, 1919 թվականից մինչև 1931 թվականը պետական գանձարանը մտել է ընդամենը 10 միլիոն ֆունտ ստերլինգ[2], որը նույնպես չի համապատասխանում կառավարության նկատմամբ այս ընկերության ունեցած պարտավորություններին, որոնք, կոնցեսիայի անբարենպաստ պայմանների բերմամբ, ոչ միայն ծանր չեն, այլև, պիտի ասել, չափազանց շնչին են։ Մինչդեռ այս նույն ընկերությունը անգլիական կառավարությանը միայն մի տարվա համար տվել է 800 հազար ֆունտ ստերլինգ եկամտահարկ։ Բացի այս բոլորից, Դաշտին հիշեցրել է,

---

[1] Ընկերությունը պաշտպանվում էր, թե ցեղախմբերը հարձակվելով վնաս էին հասցրել սարքավորումներին, որի համար պատասխանատու էին համարում պարսկական կառավարությանը։

[2] Ուրիշ աղբյուրների համաձայն (տե՛ս A. W. Ford. Anglo-Iranian Oil Dispute, Los Angeles, 1954) 1901—1932 թվականներին ստացված կոնցեսիոն հատուցումները հաշվվում էին ընդամենը 11 միլիոն ֆ. ս., մինչդեռ, եթե ընկերությունը հարկերից ազատված չլիներ, նորմալ պայմաններում պիտի վճարած լիներ մինիմում 22 միլիոն ֆ. ս.։

որ Դ'Արսիին շնորհված ֆիրմանի մեջ կա մի հոդված, որի համաձայն այս ընկերությունը պարտավոր է պետությանը բաժին հանել նաև դուստր-ընկերությունների շահերից, իսկ Անգլո-Պերժըն ընկերությունը, ավելացրել է Դաշտին, ունի այդպիսի 20 դուստր։

Պարսկական կառավարության նոտան՝ ուղղված Անգլո-Պերժըն ընկերությանը նրա կոնցեսիոն իրավունքների վերանայման հարցի վերաբերյալ, արհամարհանքով անտեսվեց ընկերության կողմից, չնայած նրան, որ այդ նոտայով առաջարկ էր արվում նոր պայմաններով վերանորոգել կոնցեսիան։ Այդուհանդերձ, անգլիական կառավարությունը դիմելով բիրա ուժի, պարսիկ ժողովրդի մեջ սարսափ առաջացնելու նենգ դիտավորությամբ, ռազմական նավեր է ուղարկում Պարսից ծոցը։ Դրությունը սրվում է, մոսսանները կառավարությունից պահանջում են դիմել ավելի կտրուկ միջոցառումների։ Ռիզա Շահի կառավարությունը այս հարցը հասցնում է Ազգերի Լիգա։ Սակայն, Ազգերի Լիգան, որը փաստորեն գտնվում էր անգլիական ազդեցության տակ, փոխանակ հարցը օբյեկտիվորեն լուծելու, ընդհակառակը, ճնշում է գործում պարսկական կառավարության վրա և ստիպում ձևական մի բանի փոփոխություններով հիմնականում ընդունել անգլիական առաջարկները։ Վերջապես, երկար դիմադրելուց հետո, Ազգերի Լիգայի ճնշման և Պարսից ծոցը փոխադրված անգլիական ռազմանավերի թնդանոթների սպառնալիքի տակ, Ռիզա Շահի կառավարությունը տեղի է տալիս։ 1933 թ. ապրիլի 29-ին նոր պայմանագիր է ստորագրվում՝ Պարսկաստանի համար ձևականորեն ավելի «նպաստավոր» պայմաններով։

Որո՞նք էին այդ «նպաստավոր» պայմանները. առաջին՝ Անգլո-Պերժըն ընկերությունը համաձայնում էր հետագայում արդյունահանվելիք անմշակ նավթի յուրաքանչյուր տոննային վճարել 4 շիլինգ. երկրորդ՝ շահաբաժինը 16 տոկոսից բարձրացնել 20 տոկոսի, սակայն այդ էլ այն դեպքում, երբ զուտ շահերի ընդհանուր գումարը գերազանցեր 671.250 ֆունտ ստերլինգ գումարից։ Այս բոլորով հանդերձ՝ Անգլո-Պերժընի կողմից կատարված «զիջումները» դեռևս չէին հասնում նավթարդյունաբերող ուրիշ երկրների առանց այն էլ ոչ այնքան նպաստավոր պայմաններին։

Անգլո-Պերժընի մի ուրիշ «զիջումն» էլ եղավ այն, որ կոնցեսիոն տարածությունները սահմանափակվեցին մինչև 1938 թվականը կոնցեսիայի կեսի չափով, իսկ այդ թվականից հետո 256 հազար քառ. կիլոմետրով։ Սա ձևական «զիջում» էր, քանի որ արդեն մինչև այդ՝ ընկերության շահագործման ոլորտը այս սահմաններից

չէր անցել։ Բայց այս բոլոր ձևական «զիջումների» փոխարեն Անգլո-Պերժընը ձեռք բերեց ժամկետի երկարաձգում 1961 թվականի փոխարեն մինչև 1993 թվականը, այսպիսով, այս կոնցեսիայի պայմանների վերանայումը փաստորեն հանդիսացավ անգլիական նավթային մագնատների հաղթանակ և ոչ թե պարսկական կառավարության, որը իրր թե հանդիսանում էր այդ վերանայման պահանջի հեղինակը։

Նավթային խոշոր հարստությունների գոյությունը Իրանում չէին կարող երկար ժամանակ ամերիկյան նավթային մոնոպոլիստների ուշադրությունից վրիպել։ 1932 թվականին Անգլո-իրանական նավթային ընկերության կոնցեսիայի տարածությունների սահմանափակումը մեծ հույսեր էր ներշնչում ամերիկյան նավթային խոշոր տրեստներին։ Սակայն, փաստը մնում էր փաստ, որ այս երկրում նավթային կարևորագույն դիրքերն արդեն գտնվում էին անգլիական մոնոպոլիստների ձեռքում, ուստի ամերիկյան կապիտալի շրջանները դիմում են ներթափանցման մի շարք այլ միջոցների։ Առաջին հերթին նրանք փորձում են ձեռք բերել երկրի ֆինանսների հսկողությունը։ Այդ նպատակով նրանք մեծ փոխառություններ են տալիս, այնուհետև իրանական շուկան ողողում են ամերիկյան ապրանքներով։

Պարսկական կառավարության նախկին ֆինանսների կառավարիչ, մեղ ծանոթ Մորգան Շուստերի միջնորդությամբ, 1921 թ. նոյեմբերի 22-ին պարսկական կառավարության և Ստանդարդ Օյլ Կոմպանիի միջև բանակցություններ են սկսվում նշված շրջանների նավթային հարստությունների կապակցությամբ, որոնք, սակայն, անհաջողության են մատնվում։ 1923 թ. հունիսին այս շրջաններում կոնցեսիա ձեռք բերելու մի նոր անհաջող փորձ է անում նաև ամերիկյան մի այլ ընկերություն՝ Սինկլեր Օյլ Կոմպանին։

Այնուհետև, ավելի քան տասը տարվա դադարից հետո 1937 թվականին, Ամերիկայի Միացյալ Նահանգների նավթային մոնոպոլիաները նորից միջոցներ են ընձեռում տիրելու Իրանի հյուսիսային շրջանների նավթին։ Ամերիկյան նավթային երկու խոշոր մոնոպոլիստական ընկերություններ՝ Դելավար Օյլ Կոմպանին (Ստանդարդ Օյլի խմբից) և Տեկսաս Օյլ Կոմպանին միասին կազմակերպում են Ամիրանիան Օյլ Կոմպանին։ Մինչ այդ, Տեկսաս Օյլ Կոմպանիին արդեն հաջողվել էր ձեռք բերել Իրանի հյուսիս-արևելքից մինչև Կասպից ծովի հարավ-արևելք տարածվող, ՍՍՌՄ-ի սահմանամերձ տերիտորիայի նավթային կոնցեսիաները։ Այդ կոնցեսիան տարածությունն անցնում է Հովզն Միանաա-

լի շրջանով և վերջանում է Բելուջիստանի սահմանում, Օման ծոցից 80 կիլոմետր հյուսիս-արևելք։

Ամիրանիան Օյլ Կոմպանիի կապիտալը 5 միլիոն դոլլար էր, նրա կոնցեսիոն պայմանների մեջ մտնում էին հետախուզելու, հորատելու, հայտնաբերված նավթը շահագործելու և նավթամուղ կառուցելու իրավունքներ։ Նավթամուղի կառուցման և շահագործման համար կազմակերպվում է Իրանիան Պայպ Լայն ընկերությունը։ Ամիրանիան Օյլ ընկերության կոնցեսիայի ժամկետը 60 տարի էր։ Սակայն, երկրի պրոգրեսիվ հասարակայնության ազդեցության ճնշման տակ Իրանի Մեջլիսը չի վավերացնում կնքված պայմանագրերը։ Բացի դրանից, այդ տարիներին ամերիկյան նավթային մոնոպոլիաների ուշադրությունը սևեռվում է դեպի Սաուդական Արաբիա, ուր հայտնաբերվել էին նավթի հարուստ պաշարներ և որտեղ շահագործման համար կային ավելի բարենպաստ պայմաններ։

1944 թվականի դարնանը Սոկոնի-Վակում Օյլ Կոմպանին և Սինկլեր Օյլ Կոմպանին իրենց ներկայացուցիչներն ուղարկում են Իրան՝ նոր կոնցեսիաներ ստանալու համար բանակցություններ վարելու։ Նույն թվականներին Սովետական Միությունն իրեն սահմանամերձ շրջաններում կոնցեսիաների համար իրանական կառավարության հետ արդեն բանակցությունների մեջ էր գտնվում, և որովհետև ՍՍՌՄ-ի առաջադրած պայմաններն անհամեմատ բարենպաստ էին, ուստի ամերիկացիները, վախենալով, որ այդ առաջադրված պայմաններն իրանական կառավարության կողմից կօգտագործվեն որպես օրինակ, նախընտրեցին հրաժարվել կոնցեսիաներ պահանջելուց և դիմեցին ամենանենգ միջոցների՝ ձախողել Սովետական Միության և իրանական կառավարության միջև վարվող բանակցությունները։ Արդյունքը եղավ այն, որ 1947 թ. հոկտեմբերի 23-ին, ամերիկյան նավթային մոնոպոլիաների գործակալների ճնշման տակ, մեջլիսում որոշում ընդունվեց նոր կոնցեսիաների շնորհումը ժամանակավորապես դադարեցնելու մասին։ Այս կապակցությամբ ԱՄՆ-ի դեսպան Ջորջ Ալլենը հայտարարեց, որ ԱՄՆ-ը պիտի պաշտպանի կոնցեսիաների շնորհումը դադարեցնելու վերաբերյալ իրանական կառավարության ամեն մի որոշում։ Այս հայտարարությունն արվեց մեջլիսի հիշյալ որոշումից գեռևս մեկ ամիս առաջ[1]։

---

[1] New York Times, September 14, 1947.

Ճիշտ է, մինչև Կոնսորցիումի կազմվելը ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստները անմիջականորեն և հետևողական կերպով Իրանում չեն գործել, սակայն, Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Նյու Ջերզեյը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Անգլո-Իրանիանի հետ համաձայնության գալով, 20 տարի ժամկետով իր վրա վերցրեց Իրանի անմշակ նավթի մեծագույն մասի վաճառահանման գործը։ Դրա հետևանքով, այդ ժամանակ, ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստներին հաջողվեց ոչ միայն խախտել անգլիական նավթային հեգեմոնիան Մերձավոր և Միջին Արևելքում, այլև Անգլո-Իրանիանը դարձնել Ստանդարդ Օյլի կցորդը։ Իրանի նավթային հարստությունները պետականացնելու փորձը վերջ տվեց այս համաձայնությանը։

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ԹՅՈՒՐՔԻԱՆ

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Մերձավոր Արևելքի արաբական երկրները մտնում էին Օսմանյան կայսրության կազմի մեջ։ Այդ ժամանակներում Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող երկրների հարաբերությունները օտար տերությունների հետ պայմանավորվում էին Բարձրագույն Դռան արտաքին քաղաքականության ընդհանուր կուրսով։ Եվրոպական պետությունները և Ամերիկայի Միացյալ Նահանգները Մերձավոր Արևելքի արաբական երկրների հետ անմիջականորեն չէին կարող հարաբերություններ ունենալ, այլ այդ կատարվում էր Սուլթանական կառավարության միջոցով։ Հետևաբար, արաբական երկրների այդ ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ելնել Օսմանյան պատմության ընդհանուր ֆոնից։

* * *

Օսմանյան կայսրությունը XVI—XVII դարերում իր քաղաքական ու տնտեսական ամենափայլուն շրջանն էր ապրում։ Այդ այն ժամանակաշրջանն էր, երբ օսմանցիներն սկսեցին նվաճել մի շարք երկրներ՝ արևելյան Անատոլիան, Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը Հյուսիսային Միջագետքը և Բալկանները։ Թյուրքական նավատորմը վերահսկում էր Սև և Միջերկրական ծովերը։ Օսմանցիների իշխանության տակ անցան Էգեյան և Իոնիական ծովերի կղզիները, այնուհետև՝ Ալժիրը, Տրիպոլին և այլն։

Այդ ժամանակներում մեծապես զարգացավ Թյուրքիայի առևտուրը։ Գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը (տնայնագործական և մանուֆակտուրային) բավարարում էին կայսրության բոլոր հիմնական կարիքներին։

Բայց և այնպես, ծաղկման այդ ժամանակաշրջանին զուգահեռ զարգանում էին այնպիսի հակասություններ, որոնք ընկած էին օսմանյան ռազմա-ֆեոդալական հասարակարգի հիմքում։ Արդեն XVIII դարի վերջերին Օսմանյան կայսրության անցյալի փառքից մնացել էր միայն մի մարող ստվեր։ Եվրոպական մեծ տերությունները արդեն իրենց արտաքին քաղաքականության օրակարգի մեջ մտցրել էին, այսպես կոչված, «Արևելյան հարցը», որը հիմնականում հանգում էր Օսմանյան կայսրությունը միմյանց միջև բաժանելու ծրագրին։ Օսմանյան կայսրությունն սկսել էր ընկնել եվրոպական մեծ պետությունների քաղաքական և տնտեսական ազդեցության տակ։ Ճիշտ է, Մերձավոր Արևելքի առևտուրը արդեն վաղուց դարձնված էր օտարերկրացիների՝ վենետիկցիների, ճենովացիների և ուրիշների ձեռքում, սակայն կապիտուլյացիոն ռեժիմի հաստատումով օտարերկրացիների միջամտություններն ավելի լայն ծավալ ընդունեցին, Թյուրքիան ընկավ նախ ֆրանսիական, ապա անգլիական կապիտալի ազդեցության տակ, և երկրի տնտեսությունը, հատկապես արդյունաբերությունը, բռնեց քայքայման ուղին։

Կապիտուլյացիաները, որոնք սկզբում կոչված էին երկրում ապրող և գործող օտարահպատակների, նրանց առևտրի և սեփականությունների օգտին որոշ արտոնություններ շնորհելու համար, հետագայում դարձան Օսմանյան կայսրությունը և նրա ենթակա երկրները ճնշելու ամենաուժեղ գործիքներից մեկը։ Կապիտուլյացիաները Օսմանյան կայսրության մեջ արևմտյան տերությունների տնտեսական և ապա քաղաքական հետագա էքսպանսիայի համար հարմարագույն տրամպլին հանդիսացան։

Կապիտուլյացիաների համաձայն օտարերկրյա վաճառականներին տրվում էին հատուկ արտոնություններ, օրինակ մաքսերի վավերացրած չափ, հարկերից և թյուրքական դատարաններից ազատում և այլն, արտոնություններ, որոնք հետագայում ուժի մեջ մտան նաև Օսմանյան կայսրության ենթակա բոլոր երկրներում։

Այն ժամանակաշրջանում, երբ Եվրոպայում ծավալվում էր արդյունաբերական կապիտալիզմը, Թյուրքիան, կապիտուլյացիոն ռեժիմի հետևանքով, իրավունք չուներ մաքսերը բարձրացնելու, օտար հպատակների առևտուրը հարկելու, օտարներին տեղական դատարանները կանչելու, այլ կերպ ասած՝ զրկված էր արդեն քայքայման

ճանապարհը բռնած իր տնտեսությունը եվրոպական արդյունաբերական կապիտալի ճնշումից փրկելու հնարավորություններից։

Սկսած XIX դարի սկզբներից, երբ եվրոպական արդյունաբերական կապիտալն իր ապրանքների համար շուկաներ էր որոնում, Թյուրքիայի արդյունաբերությունը (տնայնագործական և մանուֆակտուրային) քայքայման ալրոցես էր ապրում։ Օսմանյան կայսրության շուկաները ողողվում են օտարերկրյա ապրանքներով։ Տեղական արհեստանոցները, մանուֆակտուրաները և այլն փակում են իրենց դռները։ Մանր առևտուրը զարգանում է այն աստիճան, որ օտարերկրյա ապրանքներ վաճառող խանութպանների ու շարշիների թիվը մեծ չափեր է ընդունում. օրինակ՝ Կոստանդնիում, Բուլուում և Տրապիզոնում յուրաքանչյուր 10 կամ 15 բնակչին մեկ խանութ էր ընկնում[1]։

Օսմանյան կայսրության տնտեսության բնորոշ գիծը XIX դարում նրա հարաճուն կախվածությունն էր օտարերկրյա կապիտալից և, որպես հետևանք, նրա կիսագաղութային դրությունը։

1853—1856 թթ. ռուս-թյուրքական պատերազմի հետևանքով ստիպված լինելով առաջին անգամ դիմելու օտարերկրյա փոխառությունների, Օսմանյան կայսրությունն ընկավ նաև ծանր ֆինանսական կախման մեջ։ Փոխառությունները ստրկացուցիչ բնույթ էին կրում։ 1854 թվականից մինչև 1878 թվականը օսմանյան կայսրությունը կնքեց 5,2 միլիարդ ոսկի ֆրանկ գումարի փոխառություններ, սակայն դրանցից նա փաստորեն ստացավ միայն 3 միլիարդ, այսինքն նոմինալի 57 տոկոսը, չհաշված կոմիսիոնը, տոկոսը և այդ փոխառությունների հետ կապված այլ ծախսերը։ Այս տիպի փոխառությունները շարունակվեցին մինչև 1914 թվականը։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության պարտքը դեռևս շարունակում էր մնալ 5,5 միլիարդ ոսկի ֆրանկ գումարի սահմաններում։ Պատերազմից հետո, Լոզանի կոնֆերանսում, կատարվեց Օսմանյան կայսրության պարտքերի վերահաշվառում և սահմանվեց 131 միլիոն թյուրքական ոսկի լիրա, որից 84,6 միլիոնը բաժին էր ընկնում Թյուրքիայի նոր կառավարությանը, իսկ մնացած 46,4 միլիոն ոսկի լիրան հաշվեգրվում էր Թյուրքիայից անջատված արաբական երկրների դերիտին։

Արտաքին փոխառությունների գծով Օսմանյան կայսրության բյուջեի պարտավորվածությանը զուգահեռ տեղի էր ունենում օտարերկրյա կապիտալի ներխուժում։ 1856 թվականին Հրապա-

---

[1] La Turquie Contemporaine, Ankara, 1935, p. 46.

բակված խաթթի-հումայունը օտարերկրյա կապիտալի առջև նոր ասպարեզ էր բացում, թույլատրելով օտար հպատակներին բանկեր հաստատել, երկաթուղային և այլ կոնցեսիաներ ձեռք բերել և այլն։ Որպես այս նոր վիճակի հետևանք, երկրի տնտեսության բոլոր կարևորագույն ճյուղերը՝ երկաթուղիները, նավահանգստային տնտեսությունները, հանքերը, մեծ քաղաքներում եղած կոմունալ ձեռնարկություններն անցան օտարերկրացիների լրիվ հսկողության տակ։

Օսմանյան կայսրության էկոնոմիկայում օտարերկրյա կապիտալի գերակշռող դերը հանգեցրեց Օսմանյան կայսերական բանկի հիմնադրմանը 1856 թվականին, 10 միլիոն ֆունտ ստեռլինգ կապիտալով (անգլո-ֆրանսիական կապիտալ)։ Մեծ էր այս բանկի ազդեցությունն ու դերը երկրի էկոնոմիկայում։ Նա, բացի բանկային սովորական ֆունկցիաներից (փոխառությունների և առևտրական գործառնությունների տնօրինում), սկսեց նաև պետական բանկի ֆունկցիաներ կատարել, անգամ բանկ նոտեր թողարկել։

Օսմանյան կայսերական բանկից բացի հիմնվեցին նաև մի շարք այլ բանկեր և առևտրական ու արդյունաբերական հաստատություններ։ Այնուհետև, 1875 թվականից սկսած, եվրոպական կարևորագույն բանկերն իրենց մասնաճյուղերը բացեցին կայսրության կարևոր քաղաքներում և նավահանգիստներում։

Օսմանյան կայսրության մաս կազմող Եգիպտոսը նույնպես ընկավ օտարերկրյա կապիտալի ազդեցության տակ։ Սայիդի և Իսմայիլի իշխանության տարիներին մի փոխառությունը հաջորդում էր մյուսին։ 1876 թվականին պետական պարտքը արդեն հասել էր 94 միլիոն ֆունտ ստեռլինգի, և երկիրը ֆինանսական այնպիսի աղետալի դրության մեջ էր, որ վարկատու երկրները, հանգամանքից օգտվելով, սկսեցին ուղղակի միջամտել Եգիպտոսի ներքին գործերին։ Հիմնեցին պետական պարտքերի կարգավորման կազմակերպություն, կառավարությանը պարտադրեցին կաբինետի մեջ ընդունել երկու օտարերկրացի մինիստրներ։ Դը Բլինիերին (ֆրանսիացի) հանձնվեց հասարակական շինարարությունների մինիստրի պորտֆելը, իսկ Ռիվերը Վիլսոնին (անգլիացի)՝ ֆինանսների մինիստրի պորտֆելը։ Սա Եգիպտոսում արևմտյան իմպերիալիստների ոտնձգությունների առաջին կոնկրետ քայլն էր, որը 1882 թվականին հանգեց անգլիական օկուպացիային։

Երկաթուղային շինարարությունը և երկաթուղիների շահագործումը Օսմանյան կայսրության մեջ հանդիսանում էին օտարերկրյա կապիտալի ներթափանցման հիմնական ուղիներից մեկը։

Օսմանյան կայսրության տերիտորիայում երկաթուղային շինարարության քաղաքականության հիմքերից մեկը Եվրոպան Ասիային միացնող ցամաքային ճանապարհ ստեղծելու արևմտյան իմպերիալիզմի ծրագիրն էր։ Այս միտքը ուսումնասիրության առարկա էր եղել դեռ շատ վաղուց։ XVI դարի վերջերին և XVII դարի սկզբներին Իստ Ինդիա Կոմպանիի (որը գործում էր Հնդկաստանում) և Ինդիշ-Տերկիշ Լևանտայն Կոմպանիի (որը գործում էր Մերձավոր Արևելքում) միջև բանակցություններ են վարվում Եվրոպան Մերձավոր Արևելքի վրայով Հնդկաստանին միացնող կարավանային ճանապարհ ստեղծելու կապակցությամբ։ Հետագայում, 1782 թվականին, անգլիացի ճանապարհորդ Ջոն Սուլիվան Արևմուտքը Արևելքին միացնող ցամաքային ուղեգիծ է առաջարկում, որը անցնելու էր Փոքր Ասիայի և Միջագետքի վրայով։ 1829 թվականին Լոնդոնում Ինդիա Բորդ օֆ Կոնտրոլ կազմակերպության շրջաններում այս հարցը նորից է արծարծվում։ 1830—1832 թթ. Ֆրանսիս Չեզնեյը առաջարկում է կառուցել Միջերկրական ծովի ափը Պարսից ծոցի ափին միացնող երկաթգիծ, որը անցնելով Սիրիայի և Միջագետքի տերիտորիաներով, վերջանալու էր Կուվեյտում, որպես վերջին կայանում։ 1856 թվականին Ֆրանսիս Չեզնեյը իր շուրջը հավաքելով մի քանի ուրիշ կապիտալիստների ևս, Ալեքսանդրետայից Բաղդադ երկաթգիծ կառուցելու կոնցեսիա է ձեռք բերում, որը սակայն չի հաջողվում իրագործել։ Սուեզի ջրանցքի բացման հետևանքով, 1872 թվականին մի նոր ծրագիր է առաջ քաշվում՝ Իզմայիլյան (ջրանցքի վրա քաղաք) միացնել Կուվեյտին։ Ցարական Ռուսաստանը նույնպես, Միջերկրականի ափը Պարսից ծոցի հետ կապող երկաթգծի իր սեփական ծրագիրն ուներ։ Ռուս կապիտալիստ Վլադիմիր Կապնիստը առաջարկում էր Տրիպոլին (այժմյան Լիբանանի տերիտորիայում) Կուվեյտին միացնող ուղեգիծ, որը անցնելու էր Բաղդադի և Կերբելայի վրայով։ Ավելի ուշ ամերիկյան կապիտալիստները նույնպես ներկայացնում են այս ծրագրի մի ուրիշ վարիանտը, այսպես կոչված Չեսաերի պլանը. այս մասին հանգամանորեն կխոսենք հետագա էջերում։

Օտարերկրյա կապիտալիստների կողմից կոնցեսիաների որոնումները վերջիվերջո հանգում են Օսմանյան կայսրության մի շարք շրջաններում երկաթգծերի կոնկրետ կառուցմանը։ Երկաթգծերի շինարարությունը և շահագործումը մինչև առաջին համաշխարհային պատերազմի վերջը գրեթե բացառապես կատարվում էր անգլիական, ֆրանսիական, գերմանական, բելգիական և այլ կապիտալիստների կողմից։ Մինչև 1888 թվականը Օսմանյան կայս-

բության բոլոր գլխավոր երկաթուղիները գտնվում էին բացառապես անգլիական և ֆրանսիական կապիտալի հսկողության տակ։ Այդ թվականից սկսած աստիճանաբար է մտնում նաև օտարերկրյա կապիտալիստների մի նոր խումբ, որը ձեռք է բերում սուլթանական կառավարության կողմից մինչ այդ շնորհված կոնցեսիաներից ամենակարևորը՝ Բաղդադի երկաթգծի կոնցեսիան։ Այդ կոնցեսիան, որը դարձավ Գերմանիայի՝ Թյուրքիա ներթափանցման ողնաշարը, էլ ավելի սրեց անգլո-գերմանական հակասությունները։

Այս երկաթուղիների կառուցման և շահագործման կոնցեսիաներին զուգահեռ, օտարերկրյա կապիտալիստները դրեթե միշտ ձեռք էին բերում երկրի հանքային հարստությունները շահագործելու լայն իրավունքներ։

Երկաթուղիների կառուցումը և նույնիսկ օտարերկրյա կապիտալի նախաձեռնությամբ նավահանգիստների ընդարձակումը մեծապես նպաստում էին առևտրի աշխուժացմանը օտարերկրյա մոնոպոլիստների թելադրած ուղիով, որի հետևանքով եվրոպական արդյունաբերական ապրանքները ողողում էին տեղական շուկաները, մինչդեռ Թյուրքիան սահմանափակվում էր գյուղատնտեսական և հանքային հումույթ մատակարարողի դերով։ Օսմանյան կայսրության տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի գերիշխանությունը Թյուրքիային օր-ավուր մերձում էր տնտեսական, ֆինանսական և քաղաքական սարկության մեջ։ Պետական եկամուտների մեծ մասը գնում էր մարելու պետական պարտքերը։ Երկրի բոլոր երկաթուղիները, բացառությամբ մեկի[1], գտնվում էին օտարերկրացիների հսկողության տակ։ Հանքերի շահագործումը նույնպես հանդիսանում էր օտարերկրյա կապիտալի մենաշնորհը։ Վարկա-բանկային բոլոր հաստատությունները, բացառությամբ գյուղատնտեսական բանկի, պատկանում էին օտար կապիտալին։ Կարևորագույն քաղաքներում կոմունալ սպասարկության հիմնարկներն անդամ կազմակերպել և կառավարվել են օտարների կողմից։ Մաքսային վարչությունը, որը ենթարկվում էր օտարերկրյա իմպերիալիստների կամքին, կապիտուլյացիաների շնորհիվ և հետագայում պետական պարտքերի դիմաց որպես գրավ անցել էր նրանց տնօրինության ներքո։ Եվ վերջապես, մեծաքանակ առևտրի արտաքին շուկան գտնվում էր կամ օտարների և կամ տեղում ապրող ոչ թյուրք

---

[1] *Թյուրքիան Արաբիայի հետ կապող անշահաբեր գիծը՝ Հեջազի երկաթուղին, որը շահագործվում էր կառավարության կողմից։ Այժմ այդ գիծը, որը գտնվում է Սիրիայի, Հորդանանի և Արաբիայի տերիտորիաներում, ոչ ոքի կողմից չի շահագործվում։*

առևտրականների ձեռքում։ Եթե այսպես էր դրությունը մետրոպոլիայում, ապա օտարերկրյա ազդեցությունն առավել ևս շեշտված կերպով էր հանդես գալիս կայսրության ենթակա երկրներում։

Ահա այսպես էր իրերի դրությունը Օսմանյան կայսրության և նրան ենթակա երկրներում, երբ ամերիկյան իմպերիալիզմն սկսեց Մերձավոր և Միջին Արևելք ներթափանցելու իր առաջին փորձերն անել։

Օսմանյան կայսրության ու նրա ենթակա արաբական երկրների և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև առևտրական ու դիվանագիտական հարաբերությունների համար երկար ժամանակ հիմք ծառայեց այս երկու պետությունների միջև 1830 թվականին կնքված պայմանագիրը, թեև նախքան այս պայմանագրի ստորագրումը մոտ կես դար շարունակ ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության զանազան շրջանների միջև գոյություն են ունեցել առևտրական և միսիոներների գործունեության հետ առնչություն ունեցող կապեր։

ԱՄՆ-ի՝ Մերձավոր և Միջին Արևելք, հատկապես արաբական երկրները, ներթափանցելու գործում իրենց գործունեությամբ մեծ դեր են խաղացել միսիոներական կազմակերպությունները։ Ամերիկյան ավետարանական ընկերությունը Մերձավոր և Միջին Արևելքում իր գործունեությունն սկսեց 1816 թվականից։ Երեք տարի հետո՝ 1819 թվականին, Նյու-Յորքում հիմնվում է Ամերիկեն Բորդ օֆ Ֆորենյ Միշընզ կազմակերպությունը։ Այդ թվականից սկսած ամերիկացի միսիոներների գործունեությունը ծավալվում է արտասահմանում։ Ամերիկեն Բորդի բուն նպատակն էր, ինչպես ցույց կտան հաջորդ էջերում բերված փաստերը, նախապրյալներ ստեղծել տնտեսական և ապա քաղաքական հետագա ներթափանցման համար։

Բարենպատակ կազմակերպությունների քողի տակ մեծ դեր էին խաղում ամերիկյան միսիոներական դպրոցների ցանցը։ Այդ դպրոցները տարիներ շարունակ պատրաստել և իրենց ոգով դաստիարակել են բժիշկներ, ինժեներներ, տեխնիկներ, ուսուցիչներ, վարչական ծառայողներ և այլն, որոնք և ամերիկյան ներթափանցման ժամանակ պատրաստի կադրեր հանդիսացան նրանց կողմից հիմնվող ձեռնարկությունների համար։ «Գրեյտ Բրիտեն Էնդ Դեր Իսլամ» աշխատության հեղինակներից մեկը այս կապակցությամբ գրել է. «...ինձ ծանոթ մի ամերիկացի առևտրական, որը Մերձավոր Արևելքում ապրել է ավելի քան 20 տարի, ինձ հայտնել է, թե ամերիկյան ապրանքների տարածման գործում ոչ մի կազմակերպություն և նույնիսկ պրոպագանդայի ոչ մի միջոց չի նպաստել այնքան, որքան այդ

արել են միսիոներական գործունեները։ Նրանք մեր ապրանքների նկատմամբ ճաշակ են մուծել տեղական ժողովրդի մեջ...»[1]։

Սա մեկն է այն բազմաթիվ օրինակներից, որոնք պերճախոս կերպով ցույց են տալիս, թե ինչ օգուտ են տվել միսիոներները ամերիկյան առևտրին։

Ամերիկեն Բորդ օֆ Ֆորեն Միշընզ կազմակերպության հանձնարարությամբ հոգևորականներ Լեվի Պարսընզը և Պլինի Ֆիսկը 1818 թվականին գալիս են Մերձավոր Արևելք՝ տեղում ուսումնասիրելու ընկերության հետագա գործունեության հետ կապված հարցերը։ Եվ փաստորեն այդ թվականից մինչև 1830 թվականը, Բորդի կողմից ուսումնասիրության ժամանակաշրջան պիտի համարել։ Այս կապակցությամբ տեղին է նշել Թյուրքիայի և ԱՄՆ-ի հարաբերություններին վերաբերող հարցերի հայտնի մասնագետ, բուրժուական պատմաբան Գորդոնի հետևյալ խոսքերը. «...այդ թվականներին Թյուրքիան հանդիսանում էր աշխարհի գլխավոր տերություններից մեկը, որը ուներ մոտ 35 միլիոն բնակչություն և նրա տերիտորիան տարածվում էր երեք կոնտինենտների վրա։ Միսիոներների համար այս հանգամանքը առավել ևս կարևոր էր մանավանդ այն պատճառով, որ Օսմանյան կայսրությունը մուսուլմանական աշխարհում գլխավոր դեր էր խաղում»[2]։ Այլ խոսքով ասած, ներթափանցելով Թյուրքիան, նրանք ձգտում էին ազդեցություն ձեռք բերել նաև ամբողջ մուսուլմանական աշխարհի վրա։ Ուշագրավ է նաև հենց նույն էջում Գորդոնի արտահայտած հետևյալ միտքը, «...ուրբ դնելով Թյուրքիա, այս երկու միսիոներները (Պարսընզ և Ֆիսկ — Հ. Ռ.) հիմք դրեցին մի այնպիսի կազմակերպության, որը այժմ արդեն լայն ծավալ է ընդունել և մեծապես նպաստել է Թյուրքամերիկյան փոխհարաբերությունների ընդհանուր զարգացմանը...»։

Մերձավոր և Միջին Արևելքում Ամերիկեն Բորդի առաջին օբյեկտները հանդիսացան Պաղեստինը, Սիրիան, Հայաստանը, Արևմտյան Անատոլիան և Իրանը (այս վերջինի մասին արդեն խոսել ենք)։ 1823 թվականին Նրուսաղեմում բացվեց առաջին միսիան, որը կարճատև կյանք ունեցավ և փակվեց 1827 թվականին։ 1825 թվականին Բեյրութում և 1828 թվականին Իզմիրում բացվեցին մեկական միսիաներ, որոնք նույնպես կարճատև կյանք ունեցան։ 1830 թվականին վերաբացվեց Բեյրութի միսիան, որը և հանդիսա-

---

[1] Great Britain and the East. Omnibus Issue. August 1946.

[2] J. L. Gordon. American Relations with Turkey: 1830—1930. Philadelphia. 1932, p. 221.

ցով միսիոներների հետագա գործունեության հիմնական կորիզը։ Այսուհետև էր, որ Հայաստան և Վրաստան ուղարկվեցին միսիոներների առաջին խմբերը։ 1831 թվականին, Բյուրք-ամերիկյան զիվանագիտական հարաբերությունների հաստատմանը զուգընթաց, Կոստանդնուպոլսում նույնպես բացվեց մի միսիա և տեղ, այդ թվականից սկսած Բորդի գործունեությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում դարձավ ավելի հետևողական ու հսկայական ծավալ ընդունեց։ 1869 թվականին այս միսիոներների թիվն արդեն հասել էր 21-ի, որոնց ղեկավարության տակ գործում էր 185 դպրոց։ Այս միսիաներից ամենակարևորը ներկայումս գտնվում է Բեյրութում, երբ առաջին իսկ օրերից հանդիսացել էր Մերձավոր Արևելքում Բորդի կենտրոնատեղիներից մեկը։ Այդպես էլ վկայում է հոգևորական Ջ. Լ. Սպենսերը իր հանդարտհոգեկան հուշերից մեկում, երբ ասում է՝ «...Սիրիայի ամերիկյան միսիոներների գլխավոր կենտրոնը Բեյրութն է։ Այնտեղ գործում են մի խումբ միսիոներներ, որոնք իրենց երկարամյա գործունեության ընթացքում մեծ ազդեցություն են ձեռք բերել այս շրջաններում...»[1]։

Ամերիկյան միսիոներական կազմակերպության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ նա, գործելով մուսուլմանական երկրներում, նաև նպատակ էր հետապնդում Օսմանյան կայսրության քրիստոնյա փոքրամասնություններին ենթարկելու իր ազդեցությանը, նրանց հենարան և գործիք ծառայեցնելու Մերձավոր և Միջին Արևելքում իրենց հետապնդած ընդհանուր քաղաքականության օգտին։

Միսիոներների այս քաղաքականության հետևանքով Օսմանյան կայսրության գրեթե բոլոր քրիստոնյա փոքրամասնությունները տեղական իշխանությունների կողմից զիտվեցին որպես կասկածելի տարրեր և այդ հանգամանքը որոշ չափով անդրադարձավ փոքրամասնությունների նկատմամբ Թյուրքիայի կառավարության հետագա քաղաքականության վրա։ Այս կապակցությամբ ուշադրավ է այն փաստը, որ Խարբերդի և Մարաշի ջարդերից հետո մի խումբ հայեր, համոզված լինելով, որ կառավարության կասկածները հայերի նկատմամբ ուղղակի հետևանք են միսիոներների վարած անփառունակ քաղաքականության, այդ առթիվ օսմանյան իշխանություններին հանձնել են մի հուշագիր-ուղերձ հետևյալ բովանդակությամբ «...միսիոներները, սրանից 30 կամ 40 տարի առաջ Խարբերդ գալով,

---

[1] Rev. J. A. Spencer. M. A. The East: Sketches of Travel in Egypt and the Holy Land. New York. 1850. pp 481—482.

հիմնական դպրոցներ, որոնք, իբր թե, հետապնդում էին մարդասիրական նպատակներ, սակայն իրենց ուսանողների՝ հայ երեխաների մտքերը թունավորելով, մղեցին նրանց մեր պետության դեմ շհնազանդելու և ապերախտ վերաբերմունք ցուցաբերելու, ինչպես նաև դիմելու ավանտյուրիստական արարքների, որպիսի հանդամանքը պարզ է, անբարենպաստ կերպով պիտի անդրադառնար տեղում ապրող հայ բնակչության վրա։ Գտնում ենք, որ եթե միսիոներները շարունակեն մնալ այստեղ, անպայմանորեն տեղիք պիտի տան նոր վրդովմունքների և այս շրջանի անդորրությունը խանգարելու ասիթների։ Հետևաբար, խնդրում ենք վերին իշխանություններին միսիոներների հետագա գործունեությունը կանխելու համար ձեռք առնել համապատասխան միջոցառումներ, մանավանդ որ մեր երկրում կան բավականաչափ դպրոցներ, որոնք կարող են ծառայել համայնքի երեխաների դաստիարակման գործին»[1]։ Նույն տիպի գրժդոհության փաստերի հանդիպում ենք նաև մյուս փաստաթղթերի բողոքներում, որոնք ուղարկվել են միսիոներների վատնդավոր և վնասակար գործունեության կապակցությամբ։

XIX դարի վերջերին և XX-րդ դարի սկզբներին, երբ ամերիկյան իմպերիալիզմը համաշխարհային շուկաներում և միջազգային քաղաքականության ասպարեզում համեմատաբար ավելի համարձակ դիրք էր ընտել, ԱՄՆ-ի դիվանագիտությունը Օսմանյան կայսրության նկատմամբ սկսեց վարել ավելի խիստ և ագրեսիվ քաղաքականություն։ Միսիոներների գործունեության կապակցությամբ Օսմանյան կառավարության նույնիսկ ամենաչնչին միջամտությունները ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի համար պատրվակ էին ծառայում Բարձրագույն Դռանը անտեղի բողոքներ հղելու և հարձակումներ գործելու։ Արդեն ստեղծվել էր այնպիսի գրություն, երբ ամերիկյան կառավարությունն այլևս չէր թաքցնում իր շահագրգռվածությունը միսիոներների գործունեության նկատմամբ։ Պետական դեպարտամենտի քարտուղար Հյուզը, այդ տարիներին ամփոփելով ԱՄՆ-ի նոր քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և այնտեղ գործող միսիոներների նկատմամբ, հայտարարել էր, որ ամերիկյան միսիոներները պիտի վայելեն պետական դեպարտամենտի անվերապահ պաշտպանությունը։ Ամերիկյան կառավարության համար ոչ մի տարբերություն չկա Ամերիկեն Բորդի և որևէ այլ առևտրական հիմնարկի միջև։ Այդ երկու տիպի կազմա-

---

[1] J. L. Gordon, op. cit., pp. 229—230.

կերպություններն էլ պետք է վայելեն մեր կառավարության պաշտպանությունը և հովանավորությունը[1]։

Թյուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի որդեգրած այս նոր ագրեսիվ քաղաքականության արտահայտություններից մեկը եղավ նաև այն, որ 1895 թ. ապրիլին, իբր թե ամերիկյան քաղաքացիներին պաշտպանելու պատճառաբանությամբ, «Սան Ֆրանցիսկո» և «Մարբլհեդ» ռազմանավերն ուղարկվեցին Բեյրութի և Իզմիրի նավահանգիստները։ Արձագանքելով այս դեպքին, այդ նույն թվականներին «Նյու-Յորք Հերալդ» թերթում լույս տեսավ մի հոդված, որտեղ առաջարկվում էր Իզմիրի նավահանգիստը վերածել զբոսավոր բաղնիքի՝ ամերիկյան ռազմածովային նավատորմի Միջերկրական ծովի էսկադրայի համար։ Այս դեպքի և նշված հոդվածի կապակցությամբ Վաշինգտոնում օսմանյան կառավարության դիվանագիտական ներկայացուցչի հայտնած բողոքին պետական դեպարտամենտի քարտուղարը ցինիկորեն պատասխանելով հայտարարել է, թե մեր (այսինքն՝ ամերիկյան — Հ. Թ.) շահերի պաշտպանության օգտին նման միջոցառումների դիմելը հանդիսանում է յուրաքանչյուր առանձին պետության անվիճելի իրավունքը։ Այնուհետև շարունակելով իր արհամարհական տոնը, պետական քարտուղարը ավելացրել է, թե այն պետությունը, որ դիմում է այդպիսի միջոցների, նա իր արարքների միակ դատավորն է, ուստի և պարտավոր չէ հաշիվ տալ ուրիշներին իր կատարածի համար[2]։

Շարունակելով իր փաստաբղկումները հօգուտ միսիոներական կազմակերպությունների, Ջ. Լ. Գորդոնը մի ամբողջ հատված է նվիրել ցույց տալու համար, թե ինչպես «բարենպաստ» է անդրադարձել ամերիկյան առևտրի վրա Մերձավոր Արևելքում Բորդի ծավալվող գործունեությունը։ Այդ հատվածում բերված են մի շարք անձնավորությունների հայտարարությունները այս մասին։ Գորդոնի ասելով, Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս դոկտոր Թոմաս Հ. Նորտոնը 1903 թվականին հայտնել է այն կարծիքը, թե Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան առևտրի ապագա գերիշխանությունն ապահովելու ամենաազդու գործոններն են այնտեղ գործող ամերիկյան դասատուները, դպրոցները, գրքերը և ամերիկյան կենցաղի ու կուլտուրայի այլ արտահայտիչները։

1909 թվականին ամերիկացի մի ուրիշ հյուպատոս հայտնել է, թե Տորիսա Կոլլեջի շրջանավարտները առևտրի ասպարեզ մտնելիս նա-

---

[1] J. L. Gordon, op. cit., p. 236.

[2] Նույն տեղում, էջ 239։

[3] Նույն տեղում։

խոստումություն են տալիս ամերիկյան ապրանքներին։ Նույն թվականի դեկտեմբերի 7-ին պրեզիդենտ Տաֆտը կոնգրեսում հանդես գալով այս կապակցությամբ ասաց, որ Ամերիկայի նկատմամբ ծավալվող «համակրանքը» հետևանք է Մերձավոր և Միջին Արևելքում գոյություն ունեցող ամերիկյան դպրոցների, համալսարանների և առհասարակ միսիոներների գործունեության։ Ամերիկյան միսիոներները, ավելացրել է ԱՄՆ-ի պրեզիդենտը, փաստորեն գործում են ամերիկյան առևտրականների օգտին[1]։ Այս նույն կապակցությամբ, ավելի ուշ, 1917 թվականին, Բեյրութի ամերիկյան համալսարանի անտեսագիտության ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Էդվարդ Նիկոլիյն ասել է, որ ամերիկյան սովորությունների և կենցաղի ազդեցության տակ տեղական ժողովուրդը հետզհետե նախընտրություն է տալիս ամերիկյան ապրանքներին, հետևաբար միսիոներական կազմակերպությունների ազդեցության ծավալումը մեծապես նպաստում է ամերիկյան առևտրի հետագա զարգացմանը այս երկրներում[2]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Մերձավոր և Միջին Արևելքում գործում էին Ամերիկյան Բորդի 17 կենտրոն, 256 պունկտ, որտեղ գործում էին երկու սեռի պատկանող 174 միսիոներ։ 426 դպրոցից բացի, որտեղ հաճախում էր 25 հազար աշակերտ, գործում էին նաև 9 հիվանդանոց, տպարաններ, հրատարակչական հիմնարկներ, որտեղ միսիոներական պրոպագանդայի համար հրատարակվում էին գրքեր, բրոշյուրներ, ժուռնալներ, թերթեր և այլն։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկյան միսիոներական գործունեությունը Թյուրքիայում և նրա ենթակա արաբական երկրներում նվազեց։ Միսիոներական կենտրոնների, կայանների և դպրոցների մեծ մասը փակվեց։ 1918 թվականին այստեղ մնացող ամերիկյան միսիոներների թիվն իջել էր 36-ի։ Պատերազմից հետո, քեմալական կառավարության քաղաքականության հետևանքով, միսիոներների գործունեությունը Թյուրքիայում մեծապես սահմանափակվեց, կենտրոնը փոխադրվեց Բեյրութ (Լիբանան) և արաբական երկրները դարձան հետպատերազմյան ժամանակաշրջանի նրանց գործունեության ոլորտը։

Օսմանյան կայսրության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև առևտրական, ֆինանսական, միսիոներական և այլ կապերի

---

[1] J. L. Gordon, op. cit., pp. 241-246.

[2] Նույն տեղում, էջ 246։

զարգացման ղուգընթաց հաստատվեցին նաև դիվանագիտական հարաբերություններ։

Հետագայում, այս երկու երկրների միջև առևտրական և դիվանագիտական հարցերը կարգավորելու կապակցությամբ, Կոստանդնուպոլիս են ուղարկվում մի շարք պատգամավորություններ։

Օսմանյան իշխանությունների և պատգամավորությունների միջև բանակցությունները պաշտոնապես սկսվում են 1830 թ. փետրվարի 8-ին և նույն թվականի մայիսի 10-ին երկու կողմերի միջև ստորագրվում է մի պայմանագիր, որը ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության փոխհարաբերությունների պատմության մեջ հայտնի է որպես «1830 թվականի առևտրի և ծովագնացության պայմանագիր»[1]։

1862 թվականին այս երկու պետությունների միջև ստորագրվում է մի նոր պայմանագիր[2], որը, բացառությամբ ներածության, 1-ին և 20-րդ հոդվածների, մյուս բոլոր մանրամասնություններով հար և նման էր Մեծ Բրիտանիայի ու Բարձրագույն Դուռն միջև 1861 թ. ապրիլի 29-ին ստորագրված պայմանագրին[3]։

Մինչև 1930 թվականը[4] ամերիկա-թյուրքական հարաբերությունների հիմքում ընկած էին այս երկու պայմանագրերը, թեև հավելված կարգով եղել են դիվանագիտական մի շարք այլ փաստաթղթեր, որոնց թվում 1874 թ. օգոստոսի 11-ին ստորագրված (Հիժիր 1291) «Հանցագործներ հանձնելու փոխադարձ համաձայնությունը»[5], «Քաղաքացիների հպատակափոխության համաձայնությունը»[6], «Օտարահպատակ կալվածատերերի իրավունքներին վերաբերող արձանագրությունը»[7] և 1875 թ. ապրիլի 22-ին (Հիժիր 1292) «Հպատակափոխության վերաբերող կոնվենցիային» կից լրացու-

---

[1] Ջ. Լ. Դորջոնի մոտ ստորագրության թվականը նշված է մայիսի 10-ը, մինչդեռ Դ. Նորատունկյանի մոտ (G. Noradounguian. Recueil d'Actes Internationaux de l'Empire Ottman, Tome II, Paris, 1900) նշված է մայիսի 7-ը (14 Զիլկադե, 1245 Հիժիր), տե՛ս նշված գրքի էջ 192, փաստաթուղթ № 61։ Այս փաստաթղթի մասին տե՛ս նաև հետևյալ աղբյուրները. Medjmouai, vol. II. p. 2; Moutens, N. R., vol. XI. p. 77, et pp. 81—91; Législation Ottomane, vol. IV. p. 156; State Papers (U. S. A.), vol. XVIII, p. 1351.

[2] G. Noradounguian. Idem. Tome III, pp. 179—180. document 728; Medjmouai, vol. II. p. 6.

[3] Idem. p. 131. document 716.

[4] 1929 թ. հոկտեմբերի 1-ին ԱՄՆ-ի և թյուրքական անսպասելիության միջև ստորագրվեց մի պայմանագիր, որը հայտնի է որպես Անկարայի պայմանագիր։ Այս փաստաթուղթը հրապարակվեց միայն 1930 թ. ապրիլի 21-ին։

[5] G. Noradounguian, Idem, p. 365.

[6] Idem. p. 368.

[7] Idem. p. 370.

ղիչ համաձայնությունը[1]։ Բացի այս դոկումենտներից, ԱՄՆ-ը մասնակցել է նաև օսմանյան կառավարության և այլ պետությունների միջև կնքված մի շարք պայմանագրերի (այս դոկումենտների մասին տե՛ս ներքևում նշված՝ Գ. Նորատունկյանի բազմահատոր գիրքը)։

Առաջին պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո Կոմոդոր Պորտերը ԱՄՆ-ի կառավարության կողմից նշանակվում է Կոստանդնուպոլսում որպես դիվանագիտական ներկայացուցիչ։ 1831 թ. մարտի 2-ին ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչությունը վերածվում է դիվանագիտական միսիայի և, վերջապես, 1906 թ. այդ միսիան վերակազմվում է դեսպանության։

Այդ թվականներից սկսած, բացառությամբ 1917—1919 թվականների, ԱՄՆ-ը միշտ ներկայացված է եղել Կոստանդնուպոլսում դեսպանությամբ, իսկ մյուս քաղաքներում՝ Իզմիրում, Բրուսայում, Բեյրութում, Երուսաղեմում, Դամասկոսում, Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլ արաբական քաղաքներում՝ հյուպատոսություններով։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, անջատված արաբական երկրներում հյուպատոսարանները վերակազմվեցին կամ դիվանագիտական միսիաների և կամ դեսպանությունների։

Ամբողջ XIX դարի ընթացքում ամերիկյան քաղաքականությունը Մերձավոր Արևելքում վարվում էր արևմտյան մյուս իմպերիալիստական պետությունների քաղաքականության օրինակով։ XX դարի հենց սկզբներից ամերիկյան էքսպանսիոնիզմը ավելի ինքնուրույն էր դարձել և ինքն իրեն ավելի էր զգացնել տալիս, մանավանդ այն ժամանակ, երբ ԱՄՆ-ի կառավարությունն սկսեց միջամտել հօգուտ կոնցեսիաներ որոնող ամերիկյան կապիտալիստների, ինչպես նաև այս երկու երկրների միջև առևտրով զբաղվող հաստատությունների։

Այն թվականներին, երբ ԱՄՆ-ը ներթափանցման դեռևս երկչոտ փորձերով էր հանդես գալիս Մերձավոր և Միջին Արևելքի երկրների առևտրում իր անբաժան տիրապետությունն էր հաստատել անգլիական Ինդիշ Լեվանտ Կոմպանին, որին ենթարկվում էին այստեղ գործող եվրոպական և ամերիկյան մյուս առևտրական հաստատությունները։ Այդ ընկերությունը, որին հաջողվել էր օսմանյան իշխանություններից ձեռք բերել հատուկ առանձնաշնորհումներ, ամեն կերպ կաշկանդում էր իր մրցակիցների առևտուրը։ Մինչև անգամ ամերիկյան նավերն ստիպված են եղել Ինդիշ Լեվանտ Կոմպանիին

---

[1] Op. cit., p. 380.

տուրք վճարել Մերձավոր և Միջին Արևելյան ծովային տարածություններում շրջագայելու համար։

1811 թվականին Իզմիրում հաստատվեց Վուդմաս և Օֆֆլեյ ամերիկյան առաջին առևտրական խոշոր ընկերությունը, որը հենց սկզբից բախվեց Ինգլիշ Լևանտ Կոմպանիի հետ։ Դա հանդիսացավ անգլո-ամերիկյան հակասությունների առաջին կոնկրետ արտահայտությունը Մերձավոր Արևելքում։

Ինչպես նշեցինք, 1830 թվականին օսմանյան կառավարության և ԱՄՆ-ի միջև կնքվեց «Առևտրի և ծովագնացության պայմանագիր», որը կարգավորում էր այս երկու պետությունների հետագա հարաբերությունները։ 1862 թվականին նոր պայմանագիր կնքվեց, որը, մի քանի փոփոխություններով, հաստատեց նախկինը։ Այդ թվականներից հետո, երբ այս երկու երկրների միջև փոխհարաբերությունները կարգավորվեցին պայմանագրերի միջոցով և ամերիկյան կապիտալիստական շրջանների առջև Օսմանյան կայսրության շուկաները բացեցին իրենց դռները, ամերիկյան առևտուրը Մերձավոր Արևելքում դանդաղ, սակայն համառ կերպով ծավալվեց։

1862 թվականի պայմանագրի մի հոդվածի համաձայն, ԱՄՆ-ից զենքի ու զինամթերքի ներմուծումն արգելված էր, բայց չնայած այս հանգամանքին, 1876—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ, հաշվի չառնելով պայմանագրի այդ հոդվածը, ամերիկացիները այդ տարիներին մեծ քանակությամբ զենք ու զինամթերք մատակարարեցին թյուրքերին։

XIX դարի երրորդ քառորդից սկսած, երբ նավթը և նավթամթերքներն սկսեցին մտնել համաշխարհային շուկա, ԱՄՆ-ը, որպես նավթարդյունաբերող երկիր, Թյուրքիան և նրա ենթակա արաբական երկրները ողողեց նավթամթերքներով, որի շնորհիվ ամերիկյան ապրանքների ներմուծումները Մերձավոր Արևելքի շուկաները մեծ չափերի հասան։ 1886 թվականին Ռուսաստանը և Ռումինիան հանդես գալով որպես նավթի խոշոր արտահանողներ, ամերիկյան նավթը դուրս մղեցին այս շուկաներից։ Նույն տարիներին ամերիկյան առևտուրը Մերձավոր Արևելքը ներթափանցելուն խանգարում էր նաև այն հանգամանքը, որ այս շրջաններում ծովային տրանսպորտի մենաշնորհը գտնվում էր անգլիական առևտրական նավատորմի ձեռքում, որը, օգտվելով այդ դրությունից, ամերիկյան ապրանքների փոխադրման համար բարձր տարիֆ էր սահմանել։ 1885 թվականի տվյալների համաձայն, օսմանյան կայսրությունից արտահանվող ապրանքների 40 տոկոսը և ԱՄՆ-ից ներմուծվող ապ-

բանքների 90 տոկոսը փոխադրվում էր անգլիական նավերի միջոցով։

Այս գրության հանդեպ երկար ժամանակ չէին կարող անտարբեր մնալ Մերձավոր Արևելքի հետ կապված ամերիկյան առևտրականները, որոնց միջնորդությամբ Նյու-Յորքի Բարբեր նավային ընկերությունը 1899 թվականից Նյու-Յորքի և Մերձավոր Արևելքի նավահանգիստների միջև հաստատում է առաջին ամերիկյան նավային սպասարկությունը։ Ամերիկյան նավերն ասպարեզ մտնելու հետևանքով այս երկու երկրների միջև առևտուրը որոշ չափով աշխուժանում է։ Սակայն շատ չանցած, անգլիական նավային ընկերությունները միանալով, ուժեղ պայքար են ծավալում և դուրս են մղում ամերիկյան նավային ընկերությանը։

Հետագայում հանդես են գալիս նաև գերմանական, իտալական և հունական նավային մի շարք ընկերություններ, որոնց նույնպես, երկար ու դաժան պայքարից հետո, վերջապես հաջողվում է խախտել անգլիական մոնոպոլ դրությունն այս ասպարեզում։ Համբուրգ Ամերիկեն Էնդ Լեվանտ Ատիմշիպ Կոմպանին առաջին գերմանական նավային ընկերությունն էր, որը Նյու-Յորքի և Կոստանդնուպոլսի միջև նավային սպասարկություն հաստատեց։ Համարյա նույն թվականներին այս երկու երկրների նավահանգիստների միջև նավային սպասարկություն հաստատեցին նաև իտալական Ֆլորիո Ռուբրատինո Լայնզ ընկերությունը և հունական Մորտիտիս Ատիմշիպ Կոմպանին ու Դ-ր Հելլենիկ Տրանսատլանտիկ Ատիմ Նավիգեշն Կոմպանին։

XX դարի սկզբներից, ամերիկա-թուրքական առևտրի ընդհանուր զարգացմանը զուգընթաց, երկու երկրների նավահանգիստներն սպասարկող ամերիկյան նավային ընկերությունների թիվը խիստ աճեց։ 1919—1922 թթ. 17 տարբեր ամերիկյան նավային ընկերություններ արդեն կանոնավոր սպասարկություն էին հաստատել ԱՄՆ-ի և Մերձավոր Արևելքի զանազան նավահանգիստների միջև, որի շնորհիվ էլ ներմուծվող ամերիկյան ապրանքների 60 տոկոսը փոխադրվում էր ամերիկյան նավերի միջոցով։ Հետագայում, և հատկապես եգնաժամի տարիներին, այս երկրները սպասարկող ամերիկյան նավային ընկերություններից մի քանիսը ասպարեզից դուրս եկան և մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակը կանոնավոր սպասարկություն ապահովեց Ամերիկեն Էկսպորտ Լայնզ նավային ընկերությունների խումբը։

Այս բոլորով հանդերձ, մինչև XX դարի սկիզբը ԱՄՆ-ի ներթափանցումը Մերձավոր և Միջին Արևելքի երկրները այնքան էլ ուժեղ

չեր և պետական դեպարտամենտի լուրջ ուշադրությանը դեռ չեր արժանացել։ Սակայն, երբ ԱՄՆ-ի կառավարությունը սկսեց հովանավորել ամերիկյան մոնոպոլիստների համաշխարհային շուկաները ներթափանցելու փորձերը, այսպիսով պաշտոնական բնույթ տալով արդեն վաղուց գոյություն ունեցող անգլո-ամերիկյան մոնոպոլիստների հակամարտություններին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների շուկաները ընդհանուր թոհ ու բոհի մեջ չէին կարող բացառություն կազմել։ Ամերիկյան խոշոր մոնոպոլիստական շրջանների ներկայացուցիչ Ալբերտ Բեվերիջը հիմնավորելով ամերիկյան կապիտալի մուտքը համաշխարհային շուկաները, 1898 թ. ապրիլի 27-ին հանդես եկավ մի ծրագրային ճառով, որտեղ, ի միջի այլոց հայտարարեց հետևյալը. «...Ամերիկյան ֆաբրիկանները արդեն սկսել են արտադրել ավելի, քան ամերիկյան հասարակությունն ի վիճակի է օգտագործել, Ամերիկայի հողը արտադրում է ավելի, քան երկիրը կարող է սպառել։ Նախախնամությունը դծել է մեր ուղին։ Համաշխարհային շուկան պետք է լինի և անպայման կլինի մերը։ Եվ այդ մենք ձեռք կբերենք այն իսկ ճանապարհով, որ մեր մայրը (Անգլիան—Հ. Թ.), մեզ սովորեցրել է։ Մենք ամերիկյան ապրանքների տարածման համար աշխարհի բոլոր մասերում պիտի հաստատենք առևտրական սեղաններ։ Օվկիանոսները պիտի ծածկենք մեր առևտրական նավերի շարաններով։ Մեր մեծությանը համապատասխան նավատորմ պիտի կառուցենք։ Մեր առևտրական սեղաններից պիտի ծնվեն մեր դրոշը պարզող գաղութներ։ Առևտրի թևերով սավառնելով, մեր դրոշին պիտի հետևեն մեր բարքերն ու կենցաղը, և ամերիկյան կարգն ու օրենքը, ամերիկյան քաղաքակրթությունը և ամերիկյան ապրելակերպը, որոնք հանդիսանում են ստոծո օգնականը, պիտի թափանցեն այնպիսի ափեր, որտեղ դեռևս տիրում է բռնություն ու խավարամոլություն և այդ երկրները պիտի դարձնեն հոյակապ և փայլուն»[1]։ Բեվերիջի և իր նմանների կողմից «հոյակապ» և «փայլուն» դարձվելու ենթակա երկրների շարքում, անկասկած, գտնվում էին նաև Մերձավոր և Միջին Արևելքի երկրները։

Ամերիկայի իմպերիալիստական հետագա էքսպանսիայի համար նոր հեռանկարներ տեսնելով, ԱՄՆ-ի պաշտոնական շրջանները Երիտասարդ թյուրքերի հեղաշրջումը մեծ համակրանքով են դիմավորում։ Մինչև անգամ պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտը անձամբ համակրանքի և շնորհավորական հեռագիր է ուղարկում Թյուրքիայի նոր ղեկավարներին։

---

[1] E. Preclin et J. Renouvin. «Textes et Documents d'Histoire (1871—1914)», Paris, 1939, pp. 137–138.

Մերձավոր և Միջին Արևելքի նկատմամբ ամերիկյան կառավարական շրջանների շահագրգռվածության մի ուրիշ փաստ եղավ նաև այն, որ 1911 թվականին պրեզիդենտ Տաֆտը հանդես գալով ԱՄՆ-ի և Մերձավոր Արևելքի փոխհարաբերությունները բնութագրող հայտարարությամբ, ի միջի այլոց ասաց. «...չնայած, որ Մերձավոր Արևելքի երկրների հետ առևտուրը մեծ անապահովությունների հետ է կապված, այդուհանդերձ այս երկու շրջանների միջև առևտրի ապագա զարգացման օգտին արդեն իսկ բավական հիմքեր կան...»[1]: Այդ նույն տարին ամերիկյան կառավարությունը, խոսքերից անցնելով գործի, Կոստանդնուպոլսում հաստատում է Ամերիկյան առևտրական պալատը, որը կոչված էր օժանդակելու ամերիկյան առևտրի ներթափանցմանը Օսմանյան կայսրության մասը կազմող բոլոր երկրները:

Ամերիկա-թյուրքական առևտրական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ամերիկյան ֆինանսական կապիտալը նույնպես ներխուժման իր փորձերն է անում: Չեստերի պլանը ամերիկյան կապիտալի՝ Մերձավոր Արևելք ներխուժելու առաջին փորձն էր, որը, մեր ժամանակի փորձերի հետ համեմատած, երկչոտ և չափազանց մանրածավալ նախաձեռնություն էր հանդիսանում:

Նյու-Յորքի առևտրական պալատի և Նյու-Յորք Բորդ օֆ Տրեյդի, ամերիկյան ֆինանսական շրջանները ներկայացնող այս երկու կազմակերպությունների հանձնարարությամբ ադմիրալ Կոլբի Մ. Չեստերը ուղարկվում է Թյուրքիա՝ այդ երկրում ամերիկյան մոնոպոլիստների հաշվին կոնցեսիաներ ձեռք բերելու նպատակով: Չեստերը, 1901 թվականից Կոստանդնուպոլսում գտնվելով, բարձրաստիճան պաշտոնյաների հետ կապեր էր հաստատել:

Շարունակելով ամերիկյան կապիտալիստների համար կոնցեսիաներ ձեռք բերելու գործը, ադմիրալի որդին՝ Արթուր Չեստերը 1908 թվականին պաշտոնական դիմում է ներկայացնում օսմանյան կառավարությանը: Չեստերի՝ Թյուրքիան բազմակողմանիորեն շահագործելու ծրագրի հիմքում ընկած էր առաջին հերթին երկաթուղային սիստեմի կառուցումը: Այս ծրագրով նախատեսված ուղղիծը մի քանի փոփոխություններից հետո համընկավ արդեն գոյություն ունեցող գերմանական կոնցեսիայի նախատեսված գծերին: Սրա հետևանքով Չեստերի և Բեռլին-Բաղդադ երկաթգծի կառուցողների խմբերի միջև պայքարը չափազանց սրվեց: Այս պայքարն էլ ավելի սուր բնույթ ստացավ այն ժամանակ, երբ մեջլիսի հավանու-

[1] J. L. Gordon, op. cit., p. 58.

թյամբ հիշյալ կոնցեսիաների իրավունքներն ընդլայնվեցին կառուցվող երկաթգծերին զուգահեռ 25 կիլոմետր լայնության տարածությունների վրա գտնվող հանքային հարստությունները շահագործելու համար։ Հանդես եկան կոնցեսիաներ որոնողների մի շարք նոր խմբեր։ Որոնողների թվումն էր դոկտոր Բ. Մ. Գլազգոն, ազգությամբ անգլիացի, որը միանալով ամերիկացի ֆինանսիստների մի նոր խմբի՝ Ուայտ Էնդ Կոմպանիին՝ բախման մեջ մտավ Զեստերի խմբի հետ։

Հետագայում, երբ Զեստերի խմբին հաջողվեց գուրս մղել իր մրցակիցներին, նոր և հետագա կոնցեսիաների համար ծավալուն ծրագրեր մշակվեցին։ Այս ծրագրերից մեկի համաձայն երկաթուղային գծեր պիտի անցկացվեին երկրի կենտրոնը Բիթլիսի և Վանի հետ միացնելու համար։ Այս ծրագրով նախատեսված երկաթուղային գծերը Օսմանյան կայսրության կողմից դիտվում էին որպես ռազմաստրատեգիական գծեր, որոնք կենտրոնը կապելով հեռավոր շրջանների հետ, ապստամբությունների ժամանակ հնարավոր պիտի դարձնեին մեծ արագությամբ ուժեր փոխադրել այդ ապստամբությունները ճնշելու համար։ Այս գծերը ձեռնտու էին նաև ամերիկյան կապիտալիստների համար, որովհետև նրանց հայտնի էր, որ այդ շրջաններում գոյություն ունեն նավթի հարուստ պաշարներ։

1909 թվականի վերջերին, օսմանյան պառլամենտի հատուկ հանձնախումբը, որը ուսումնասիրում էր Զեստերի դիմումը, հանձնարարեց կառավարությանը ընթացք տալ այդ դիմումին։ Զեստերն իսկույն ևեթ կազմեց Օտտոման-Ամերիկեն Դևելոպմենտ Կոմպանին, 600 հազար դոլլար սկզբնական կապիտալով։

Եվրոպական մյուս իմպերիալիստական տերությունները Զեստերի բանակցությունների սկզբնական էտապում այնքան էլ մեծ ուշադրություն չդարձրին, սակայն, երբ ծրագիրն սկսեց կոնկրետ ձև ընդունել, նրանք դիմեցին ուժեղ հակամիջոցառումների՝ ամերիկյան կապիտալի ներխուժման առջև Օսմանյան կայսրության շուկան փակելու նպատակով։ Ստեղծված դրությունն ստիպեց ԱՄՆ-ի պետական դեպարտամենտին միջամտել հօգուտ Օտտոման-Ամերիկեն Կոմպանիի։ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Ստրաուսը, այնուհետև պետական դեպարտամենտի քարտուղար Նոքսը անձամբ միջամտեցին ամերիկյան կապիտալիստների այս խմբի օգտին։ 1910 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլիս ժամանեց պետական դեպարտամենտի քարտուղարի տեղակալ Հընտինգտոն Վիլսոնը, որի միջամտությունից հետո Օսմանյան կայսրության մինիստրների խորհուրդը որոշեց վերջնականապես Զեստերի խմբին

շնորհել կոնցեսիան և այդ որոշումը ներկայացրեց պառլամենտի հաստատմանը։ Մինչև պառլամենտի հաստատելը սկսվեց Բալկանյան պատերազմը, և այդպես էլ Չեսաների կոնցեսիան մնաց առանց վավերացման։

Երկաթուղիների համար կոնցեսիաներ որոնելու հետ կապված պայքարը այդ տարիներին ավելի սուր բնույթ էր կրում, քան նավթի համար կոնցեսիաներ որոնելու գործում գոյություն ունեցող հակամարտությունները։ Այդուհանդերձ, փոքր չէր Մերձավոր և Միջին Արևելքի նավթային հարստությունների հավանական աղբյուրների հարցով զբաղվող անձանց և կազմակերպությունների թիվը։ Հանքային հարստությունների մասին 1886 թվականի օրենքը առաջին անգամ վերանայվեց 1901 թվականին, այնուհետև 1906 թվականին այն փոխարինվեց մի նոր, այսպես ասած, կոնցեսիաներ որոնողների համար ավելի «լիբերալ» օրենքով, որը օսմանյան հպատակներին հնարավորություն տվեց կոնցեսիաներ ձեռք բերել, առհասարակ, օտարերկրացիներին վերավաճառելու հաստատմատարությամբ։ Ստանդարդ Օյլ Կոմպանի օф Նյու-Յորքը այդպիսի իրավունքներ ձեռք բերեց Հյուսիսային Անատոլիայի և Պաղեստինի նկատմամբ, թեև նրա կողմից ձեռնարկված հետախուզական աշխատանքները դադարեցվեցին, 1914 թվականի առաջին համաշխարհային պատերազմի պատճառով։ Լոնդոնի ֆինանսական շրջանների ներկայացուցիչ Սիրիա էկսպլորեշընն Կոմպանին 1912 թվականին Սիրիայում ձեռք բերեց հետախուզական աշխատանքներ կատարելու իրավունքներ։ Իսկ Իսաերն Պետրոլյում Կոմպանիի՝ Հաֆֆա Օյլֆիլդ դուստր ընկերությունը իրավունքներ ձեռք բերեց Մեռյալ ծովի արևմտյան շրջաններում հետախուզումներ կատարելու։ Դեռ Կոնսոլիդեյտեդ Օյլֆիլդ օф Սիրիա ընկերությունը, որ կազմակերպվեց 1913 թվականին, Սիրիայի բիտումի նստվածքները շահագործելու գործը չկարողացավ դլուխ բերել և կարճ ժամանակից հետո լուծարքի ենթարկվեց։ Եվ այս նույն նպատակներով կազմակերպվեցին ու հետագայում լուծարքի ենթարկվեցին մի շարք ամերիկյան, անգլիական, գերմանական, ֆրանսիական և այլ օտարերկրյա ընկերություններ ևս, որոնց թվում՝ Բրիտիշ Օտտոման Օյլ Սինդիկեյտ, Անգլո-Օտտոման Օյլֆիլդ Լիմիտեդ, Բաղդադ-Բասրահ Կոնսեշընն Լիմիտեդ, Սայպրոս Օյլ Տրեստ և այլն և այլն, մինչև Տերկիշ Պետրոլյում Կոմպանիի հիմնադրումը, որը հանդիսացավ Իրաք Պետրոլյում Կոմպանիի նախահայրը։

Նավթի կապակցությամբ կոնցեսիաների որոնումները տերիտորիալ տեսակետից ընդգրկեցին, բացի Անատոլիայից, նաև, հատկա-

այնս, Օսմանյան կայսրությանը ենթակա արաբական երկրները՝ Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, Միջագետքը, Արաբական թերակղզում՝ Ասիրը, Հեջազը, Ցարսանի կղզիների խումբը, որտեղ կոնցեսիա էր ձեռք բերել Ցարսան Այլենձ Օյլ Կոմպանին, այնուհետև՝ Կուվեյտը, Հասան, Կատարը, Օմանը և այլն և այլն։

ԻՐԱՔ

Մուսուլի և Բաղդադի շրջաններում նավթային հարստությունների համար մղվող պայքարի պատմությունը փաստորեն ավելի հին է, քան Իրաքի պետությունն ինքը։ Մայկլ Բրուկսը «Նավթ և արտաքին քաղաքականություն» խորագիրը կրող իր գրքում այս կապակցությամբ ասում է. «...Կայսերական (անգլիական — Հ. Բ.) ստրատեգիայի նկատառումները և նավթային հարուստ աղբյուրների հեռանկարները առաջին համաշխարհային պատերազմի վերջում դարձան Իրաքի թագավորության ստեղծման դրդապատճառները»[1]։ Այլ կերպ ասած, Իրաքը, որպես պետություն, ստեղծվեց իր ստրատեգիական դիրքի և նավթային մեծ հարստությունների շնորհիվ։

Ըստ էության, Միջագետքի նավթային հարստությունների համար խոշոր մոնոպոլիստների միջև մղվող պայքարն սկսվել էր դեռևս տիրահռչակ Աբդուլ Համիդ II-ի օրով, երբ Իրաքի պետության կազմակերպման գաղափարն անգամ դեռևս չէր հղացված։ Ինչպես իր տեղում նշել ենք, Բեռլին-Բաղդադ երկաթգծի կոնցեսիոներ Անատոլիշե Այզընբահն Գեղեզշոտ ընկերությունը, ինչպես նաև հանձին Օտտոման Ամերիկեն Դեվելոպմենտ Կոմպանիի Ջեստերի կոնցեսիան, երկաթուղային առանձին գծեր կառուցելու և շահագործելու իրավունքներին զուգահեռ, այդ գծերի երկարությամբ հանքային հարստություններ, այդ թվում հատկապես նավթային հարստություններ, շահագործելու ակնկալություններ ունեին։ Այս հանգամանքն անհանգստություն պատճառեց Մուսուլի և Բաղդադի վիլայեթների հարևան տերիտորիայում գործող Անգլո-Պերժըն նավթային ընկերությանը, մանավանդ նրա համար, որ վերջինի կողմից շահագործվող շրջաններին կից վայրերը գերմանական մոնոպոլիստների մուտք գործելու հետևանքով վտանգվում էին անգլիական հեգեմոն դիրքերը։

Թյուրքիայում և նրան ենթակա արաբական երկրներում նավթային հավանական հարստությունների կապակցությամբ ծավալվող

---

[1] Майкл Буркс, Нефть и внешняя политика, перевод с английского. Москва. 1949. стр. 101.

հակամարտությունները յուրահատուկ բնույթ էին կրում, որովհետև դեռևս առանց լուրջ նավթահետախուզական աշխատանքներ կատարելու և կոնկրետ տվյալներ ապահովելու, տարբեր երկրների մոնոպոլիստական խոշոր խմբավորումների ներկայացուցիչները պայքարի էին դիմել կոնցեսիոն իրավունքներ ձեռք բերելու համար։ Այս հանգամանքը բնորոշելիս Վ. Ի. Լենինը ասում է. «...ֆինանսական կապիտալի համար նշանակություն ունեն ոչ միայն արդեն հայտնաբերված աղբյուրները, այլև հնարավոր աղբյուրները...»[1]։

Այս շրջանի նավթային հարստությունները զավթելու համար մղվող պայքարի պատմության մեջ կարևոր դեր է խաղացել մի ժամանակ Թյուրքիայում Դեսերդինգի շահերի ներկայացուցիչ, ազգությամբ հայ Գալուստ Գյուլբենկյանը։ Նա առաջինն էր, որ օսմանյան իշխանությունների ուշադրությունը հրավիրեց Մուսուլի և Բաղդադի վիլայեթներում գոյություն ունեցող նավթի հարուստ հանքավայրերի վրա։ Այս մասին Գ. Գյուլբենկյանի ներկայացրած տեղեկագիրը հիմք ծառայեց օսմանյան կառավարության և օտարերկրյա մոնոպոլիստների հետագա փոխհարաբերությունների համար։ 1900 թվականից մինչև 1914 թվականն ընկնող ժամանակաշրջանում, չկա Մուսուլի և Բաղդադի վիլայեթների նավթի հարցի հետ կապված մի դեպք, որ Գյուլբենկյանը հանդես եկած չլինի կամ որպես միջնորդ օսմանյան կառավարության և կոնցեսիաներ որոնողների միջև, և կամ որպես տարբեր մոնոպոլիստական խմբավորումների միավորող։ Երկար ժամանակ միմյանց դեմ պայքարող գերմանական և անգլիական մոնոպոլիստական տարբեր խմբավորումներ նրա ճիգերի շնորհիվ միանալով, 1911 թվականին հիմնեցին Աֆրիկան Իսաերն Կոնսեշընզ ընկերությունը, որը մի տարի անց՝ 1912 թվականին վերանվանվեց Տերկիշ Պետրոլյում Կոմպանի։ Այս ընկերության մեջ այդ ժամանակ Գյուլբենկյանի բաժինը կազմում էր 15 տոկոս, որը սակայն, 1914 թվականին, Ֆորեյն Օֆֆիսի ճնշման հետևանքով, իջեցվեց 5 տոկոսի, երբ այս ընկերության մեջ բաժնետեր դարձավ նաև Անգլո-Պերժըն նավթային ընկերությունը։ Այս ընկերությունը արդեն այդ թվականներից վայելում էր անգլիական կառավարության հովանավորությունը։

Տերկիշ Պետրոլյում ընկերության սկզբնական կապիտալը 80 հազար ֆունտ ստեռլինգ էր։ Առաջին բաժնետերերն էին՝ նաշը-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 317։

նել Բանկ օֆ Տերկիյ (անվանապես թյուրքական, սակայն իրականում անգլիական կապիտալ)՝ 35 տոկոսի չափով, Ռոյալ Դեչ Շելլ՝ 25 տոկոսի չափով, գերմանական մոնոպոլիստական խումբը՝ 25 տոկոսի չափով, իսկ մնացածը, ինչպես ասացինք, հասնում էր Ֆինանսիստ Գյուլբենկյանին։

Անգլիական և գերմանական այս երկու մոնոպոլիստական խմբավորումները միանալով, ասպարեզից դուրս մղեցին կոնցեսիաներ որոնողների մյուս տարբեր խմբավորումները։ Ապա, յուրաքանչյուր կողմը իր երկրի դեսպանությունների միջոցով ճնշում գործադրեցին Կոստանդնուպոլսի իշխանությունների վրա՝ այս նորաստեղծ ընկերության օգտին Մուսուլի և Բաղդադի վիլայեթների նավթային հարստությունների նկատմամբ կոնցեսիոն իրավունքներ ձեռք բերելու նպատակով։ 1914 թ. հունիսի 28-ին մեծ վեզիր Սայիդ Հալիմը պաշտոնական գրությամբ կառավարության հավանությունը հայտնեց այս շրջաններում նավթահետախուզման աշխատանքներ կատարելու վերաբերյալ, իրավունք վերապահելով, որ նավթային պաշարների հայտնաբերման դեպքում կոնցեսիայի պայմանները կորոշվեն հետագայում։ Ճիշտ է, այդ դեռևս կոնցեսիայի շնորհում չէր, սակայն դա հանդիսացավ այն պաշտոնական փաստաթուղթը, որը առաջին համաշխարհային պատերազմից հետո Տերկիշ Պետրոլյում Կոմպանիի համար բավարար հիմք ծառայեց Իրաքի նորաստեղծ կառավարության հետ իր հետագա բանակցություններում։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, որը, ինչպես հայտնի է, վերջացավ Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությամբ, իմպերիալիստական պետությունների փոխհարաբերությունները նոր ընթացք ընդունեցին։ Անգլիական նավթային խոշոր մոնոպոլիստները հանգամանքից օգտվելով, փորձեցին իրենց համար պայմաններ ստեղծել Մուսուլի և Բաղդադի նախկին թյուրքական վիլայեթների նավթի հարուստ պաշարները միայնակ շահագործելու համար։

Դեռևս առաջին իմպերիալիստական պատերազմը չվերջացած, Մերձավոր Արևելքում գործող՝ Ինտելիջենս Սերվիսի գործակալ տխրահռչակ գնդապետ Թոմաս Լոուրենսի միջոցով Անգլիան կազմակերպեց արաբական երկրների անջատումը Թյուրքիայից։ Եվ այդ ծրագրի համաձայն, պատերազմից հետո, Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող՝ Մերձավոր Արևելքի երկրները վերակազմակերպվեցին որպես փոքր կախյալ պետություններ՝ Անգլիայի և Ֆրանսիայի մանդատի տակ։ Հայտնի է, որ այդ փոքր կախյալ պե-

տությունների կազմակերպման գործը տեղի ունենալով ոչ այնքան տեղական պահանջների համաձայն, որքան իմպերիալիստական պետությունների տնտեսական, քաղաքական և ռազմա-ստրատեգիական դիշատիչ նկատառումներով և այն էլ նրանց միջև երկար ու ենթակա երկրների համար վնասակար սակարկություններից հետո։

Մանդատային տերությունները հատուկ ուշադրություն էին դարձնում, որպեսզի իրենց ազդեցության ոլորտների մեջ գտնվող նորաստեղծ պետությունների ղեկավարները լինեն իրենց օրիենտացիայի մարդիկ։ Եվ իսկապես, Ֆեյսալը, հետագայում Իրաքի թագավոր, Մերձավոր Արևելքում անգլիական օրիենտացիայի ջերմ պաշտպան, նրանց նավթային մոնոպոլիստական շահերի հլու և հնազանդ սպասավորն էր։ Նրա՝ հայրը, մի ժամանակ Հեջազի թագավորը, և նրա եղբայրը, հետագայում Անդրհորդանանի էմիրը, նույնպես հանդիսանում էին անգլիական քաղաքականության հավատարիմ գործակալներ այս շրջաններում։

Երբ Սիրիայում ֆրանսիական իմպերիալիզմի դիրքերի դեմ Ֆորեյն Օֆֆիսի կողմից հովանավորված Ֆեյսալի պայքարը պարտության մատնվեց, անգլիական կառավարությունը այս վիրջինի ծառայությունները վարձատրելու և միևնույն ժամանակ Մերձավոր Արևելքում իր օգտին շահագործելու նկատառումներով՝ նրան նշանակեց Իրաքի նորաստեղծ պետության թագավոր։

1921 թ. սեպտեմբերին, Ազգերի Լիգան, Լորդ Բալֆուրի նախաձեռնությամբ, Անգլիային հանձնեց Մուսուլի և Բաղդադի նավթաշատ վիլայեթների մանդատը։ Իր մանդատային իշխանությունը ամրապնդելու համար անգլիական կառավարությունը Պերսի Կոքսին և գնդապետ Լոուրենսին հանձնարարեց անմիջապես կազմակերպել կեղծ հանրաքվե։ Շատ շանցած, լեյբորիստական կառավարությունը, Մակ Դոնալդի ղեկավարությամբ, Իրաքի ժողովրդի վզին է փաթաթում անգլո-իրաքյան պայմանագիրը, որը փաստորեն երկիրը վերածում է անգլիական գաղութի։ Իրաքի ժողովուրդը ցույցերով և մասսայական ելույթներով իր դայրույթն է արտահայտում վերևից պարտադրված այդ որոշումների դեմ։

Բյուրքիան, Իրաքի ստեղծումից չափազանց դժգոհ, փորձում է դեթ Մուսուլի վիլայեթը իրեն պահել։ Մուսուլի վիլայեթի, որպես նավթաշատ շրջանի հարցով շահագրգռված էին նաև անգլիական, ֆրանսիական և ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստները։ Անգլիան շահագրգռված էր, որ Մուսուլը միանա Իրաքին, մանդատային մի երկիր, որտեղ Անգլիային վերապահվում էր գերիշխող դեր խաղալու երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ։

Ֆրանսիան նույն նկատառումներից ելնելով, ձգտում էր կենսագործել Սայքս-Պիկոյի 1916 թ. մայիսի 16-ի համաձայնությունը, ըստ որի Սիրիան, Մուսուլի վիլայեթի հետ միասին անցնելու էր Ֆրանսիական մանդատի ներքո: Հայտնի է, որ 1919 թ. ապրիլին անգլիական կառավարությանը հաջողվել էր չեղյալ համարել Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, և Մուսուլի փոխարեն, որպես փոխհատուցում, 1920 թ. ապրիլի 26-ին Սան Ռեմոյի պայմանագրով Ֆրանսիական նավթային մոնոպոլիստներին հանձնվեց Իրաքի նավթային հարստությունների 23.75 տոկոսը: Սակայն, Ֆրանսիան այդ բոլորից բավարարված չէր, և երբ Թյուրքերը առաջ քաշեցին Մուսուլի վիլայեթի հարցը, Կեյ Դ'Օրսեյը (Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունը), վերջինների այս պահանջը հովանավորելով, 1921 թ. հոկտեմբերին Թյուրքական կառավարության հետ ստորագրում է փոխադարձ օգնության պայմանագիր:

Ամերիկայի Միացյալ Նահանգները նույնպես հովանավորեցին Թյուրքիայի վերոհիշյալ պահանջները և մինչև անգամ զենք մատակարարեցին, որովհետև Սայքս-Պիկոյի և ապա Սան Ռեմոյի համաձայնությունների ժամանակ անտեսվել էին ամերիկյան նավթային մոնոպոլիստների շահերը: Բացի այդ, ամերիկյան նավթային մոնոպոլիստները հուսով էին, որ Մուսուլը Թյուրքիային անցնելու դեպքում, Ջեստերի կոնցեսիայի իրավունքների հիման վրա իրենց հնարավորություն պիտի տրվեր այդ շրջանի նավթը շահագործելու:

Ի հակակշիռ Թյուրքիայի այս պահանջների, Անգլիան դիմում է հույներին և հովանավորում նրանց կողմից Թյուրքիայի դեմ մղվող պատերազմը: 1922 թվականին թյուրք-հունական պատերազմը վերջանում է հույների պարտությամբ: Մուսուլի հարցը նորից դառնում է հրատապ, 1925 թվականի սկզբներին հարցը հասնում է Ազգերի Լիգա: Որոշվում է հանձնաժողով ուղարկել իմանալու տեղական ժողովրդի ցանկությունները այդ մասին: Սակայն, հաղիվ էր հանձնաժողովը Մուսուլ հասել, երբ անգլիացիների դրդումով տեղի են ունենում հակաթյուրքական ելույթներ:

Այս իրադարձություններից հաղիվ երկու ամիս հետո, 1925 թ. մարտին, Տերկիշ Պնարոլյում Կոմպանիի կոնցեսիոն իրավունքները պաշտոնապես վավերացվում են Իրաքի նորաստեղծ կառավարության կողմից:

Սակայն, ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստներն նոր իրադրությունից ոչ մի օգուտ չեն ստանում: Այս բոլոր կարգադրությունների ժամանակ նրանց շահերը հաշվի չէին առնվել, որի հետե-

վանքով Ուոլլ սարիտի շրջաններում մեծ հուզում էր առաջացրել ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը այս հարցի կապակցությամբ խիստ բողոք է ներկայացնում անգլիական կառավարությանը։ Վեհը վերջանում է նրանով, որ ամերիկյան նավթային մոնոպոլիստների օգտին զիջվում է 23,75 տոկոսը։

1928 թ. հուլիսի 31-ին ստորագրվեց նոր պայմանագիր (Working agreement) և Տերկիշ Պետրոլյում Կոմպանին վերանվանվեց Իրաք Պետրոլյում Կոմպանիի, մոնոպոլիստական տարբեր խմբավորումների մասնակցության հետևյալ համամասնություններով.

Անգլո-Պերժին (անգլիական կապիտալ) . . .	23,75%
Անգլո-Սաքսոն (Ռոյալ Դեչ Շելլ, անգլո-հոլլանդական կապիտալ)	23,75%
Կոմպանի Ֆրանսեզ դե Պետրոլ (ֆրանսիական կապիտալ)	23,75%
Նիր Բատ Կորպորեյշն (ամերիկյան կապիտալ)	23,75%
Գալուստ Գյուլբենկյան	5,00%

Ընկերության մասնակիցները պարտավորվեցին ենթարկվել 1928 թվականին ստորագրված «կարմիր գծի համաձայնությանը»։ Այս պայմանագրի համաձայն, յուրաքանչյուր պայմանավորվող կողմը պարտավոր էր կարմիր գծով նշված տարածություններում հետախուզումներ չկատարել և ոչ էլ կոնցեսիաներ ձեռք բերել։ Կարմիր գծով նշված տարածությունների մեջ էր մտնում Մերձավոր Արևելքի մեծագույն մասը, այդ թվում Սաուդական Արաբիան։

Այս համաձայնությունը մի քանի խոշոր մոնոպոլիստական խմբավորումների կողմից Մերձավոր Արևելքում նավթային պաշարների հսկողությունը ձեռք բերելու մի ցայտուն օրինակ է։

Զիջելով ամերիկյան նավթային մոնոպոլիաների օգտին Իրաք Պետրոլյում Կոմպանիի ակցիաների 23,75 տոկոսը, անգլիական նավթային մոնոպոլիստները միևնույն ժամանակ «կարմիր գծի» համաձայնությամբ ամերիկյան մոնոպոլիստներին զրկում էին Մերձավոր Արևելքում ծավալվելու հետագա հնարավորություններից։ Հետագայում սակայն, Արաբիայի նավթային պաշարների հայտնաբերման հետևանքով, ամերիկյան մոնոպոլիստներն անտեսեցին այս համաձայնության հետ կապված սահմանափակումները։

Բացի Իրաքի տերիտորիայից, Իրաք Պետրոլյում Կոմպանիի կոնցեսիաները նրա բաժնետիրոջ դուստր-ընկերությունների միջոցով տարածվում են նաև Սիրիայում, Լիբանանում, Իսրայելում, Հոր-

գանանում, Պայմանագրային Օմանում, Կատարում, Մասկատում և Հաղրամաութում: Այս երկրները գրեթե բոլորն էլ հանդիսանում են անգլիական պրոտեկտորատներ և կամ պայմանագրերով ենթարկվում են նրա ազդեցությանը: Ուստի, այս կոնցեսիաները ձեռք բերելու գործում մեծ դեր խաղաց Ֆորեյն Օֆֆիսը, որն իր ազդեցության տակ գտնվող բոլոր շրջաններում ճնշում գործադրելով, թույլ չէր տալիս տեղական իշխանություններին այս կապակցությամբ բանակցությունների մեջ մտնել Իրաք Պետրոլյում Կոմպանիի մրցակից ընկերությունների հետ:

Կոնցեսիոն պայմանագրով Իրաքի կառավարությանը բաժին ընկնող հասույթները, հատկապես սկզբնական շրջանում, Իրանի կառավարության ստացածներից նվազ ողորմելի չէին: Արդյունաբերված նավթի յուրաքանչյուր տոննային կառավարությանը պիտի վճարվեր 4 շիլինգ: Նավթահանումը տարեկան 4 միլիոն տոննայից գերազանցելու դեպքում՝ նաև 60 հազար ֆունտ ստեռլինգ միանվագ գումար: Դրա փոխարեն, սակայն, ընկերությունը վայելում էր էքստերիտորիալ լայն իրավունքներ: Ուստի, ազատված լինելով բոլոր տեսակի՝ հարկերից և տուրքերից, Իրաք Պետրոլյում ընկերությունը խնայում է կառավարությանը հասնող կոնցեսիոն վարձից շատ ավելի խոշոր գումարներ:

Այս կոնցեսիոն պայմանագրի մի հոդվածի համաձայն, սկսած 1926 թ. հուլիսի 16-ից, 25 տարի ժամանակով, Իրաքի կառավարությունը պարտավորվում էր կոնցեսիոն վարձի 10 տոկոսը վճարել թյուրքական կառավարությանը, որպես փոխհատուցում այն բանի համար, որ առաջին կոնցեսիան շնորհելու ժամանակ Իրաքը կազմել է օսմանյան պետության բաղկացուցիչ մասը:

ԱՐԱԲԱԿԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ

Մերձավոր և Միջին Արևելքում գործող ամերիկյան նավթային մոնոպոլիաների մեծ մասը, հիմնականում, խարսխված է Արաբիայում: Արաբիայի տերիտորիան, մոտ 3 միլիոն քառակուսի կիլոմետր տարածությամբ, ընդգրկում է Սաուդական Արաբիան, որը թերակղզու ընդհանուր տարածության ավելի քան 2/3 մասն է կազմում, այնուհետև՝ Եմենը, Բրիտանական գաղութ Ադենը, ինչպես նաև առավել կամ նվազ չափով անգլիական ազդեցության տակ գտնվող մի շարք շեյխություններ, ինչպիսիք են՝ Հաղրամաութը, Մասկատը, Օմանը, Պայմանագրային Օմանը, Կատարը, Կուվեյտը և այլն: Բահրեյնյան կղզիները նույնպես իրենց դիրքով, ժողովուր-

դով, կուլտուրայով ու տնտեսական և հասարակական դրությամբ հանդիսանում են արաբական երկրների բաղկացուցիչ մասը։

Մերձավոր Արևելքի նավթային պաշարների մոտ կեսը գտնվում է Արաբական թերակղզում, իսկ այդ կեսի ավելի քան 70 տոկոսը գտնվում է ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստների ձեռքում։

Սաուդական Արաբիան ներկայումս արդեն գտնվում է ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստների հեգեմոն տիրապետության տակ, թեև ամերիկյան իմպերիալիզմը այդ դիրքերը հարթ ճանապարհով չէ, որ ձեռք բերեց, և մինչև նրա մուտք գործելը այս երկրում դեռևս մեծ էր անգլիական ազդեցությունը։

Վաղուց հայտնի է, որ Սաուդական Արաբիայի և նրա հարակից տերիտորիաների ընդերքը հարուստ են նավթային խոշոր պաշարներով։ Այս շրջաններում առաջին կոնցեսիաները ձեռք բերելու պատմությունն սկսվում է դեռևս 1918—1922 թվականներից։ 1920-ական թվականներին Ֆարսան կղզու կոնցեսիաները (անգլիական կապիտալ), 1923 թվականին Սաուդարդ Ֆրանկո-Ամերիկեն ընկերության կողմից երկու ամերիկացի երկրաբանների կատարած հետախուզական նախնական աշխատանքները, այդ նույն թվականներին Բատերն Ջենեռալ Սինդիկեյտ ընկերության ներկայացուցիչ, Նոր-Զելանդացի ինժեներ Ֆրանկ Հոլմզի գործունեությունը Արաբիայի հյուսիս-արևելյան շրջաններում, Հասայի պրովինցիայում, Կուվեյտում և այլն, հանդիսանում են այս կապակցությամբ բազմաթիվ օրինակներից մի քանիսը միայն։ Սակայն, այն ժամանակ, երբ նավթային խոշոր մոնոպոլիստների ուշադրությունը բևեռված էր Մոսուլի շրջանի վրա, նրանք չէին ուզում իրենց միջև արդեն խոշոր ծավալ ստացած պայքարը տարածել նաև ուրիշ շրջանների վրա։ Նավթային խոշոր մոնոպոլիստները միշտ դեմ են եղել նոր աղբյուրներ շահագործելով արդյունահանումը բարձրացնել, երբ այդ կարող է շուկայի գների վրա բացասաբար անդրադառնալ։ Եվ նշված թվականներին, մոնոպոլիստների այդ մտավախությունը արդարացնող բոլոր պայմաններն էլ առկա էին. կապիտալիստական աշխարհը գտնվում էր տնտեսական ճգնաժամի նախօրյակին։ Ուստի, Ֆորեյն Օֆֆիսը անգլիական նավթային խոշոր մոնոպոլիստների դրդումով, հանձն էր առել Իբն Սաուդին վճարել տարեկան նպաստ (սուբվենցիա), մյուս իմպերիալիստական տերությունների ներթափանցումը կանխելու հաստատ դիտավորությամբ։ Նշված նպաստները, «կարմիր գծի համաձայնության» սահմանափակումները և այս երկուսի վրա ավելացրած Ֆորեյն Օֆֆի-

սի վարած այլամերժ քաղաքականությունը, հանդիսացան այն գլխավոր արգելքները, որոնք միաժամանակ թույլ չտվեցին ամերիկյան նավթային մոնոպոլիաներին ներթափանցել Արաբական թերակղզին, այդ թվում նաև Սաուդական Արաբիա։

Մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը, բացի Ադենից և մի շարք այլ շրջաններից, Արաբական թերակղզին հիմնականում գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ։ Ադենի պրոտեկտորատը, ապա Պարսկական ծոցում Բահրեյնյան կղզիները, Կուվեյտը, Պայմանագրային Օմանը, Մասկատի փոքր շեյխությունները XIX դարից արդեն առավել կամ նվազ չափով գտնվում էին անգլիական ազդեցության տակ։ Իսկ Արաբական թերակղզու կենտրոնական և հնարավոր ներքին շրջանները համեմատաբար ավելի ազատ էին մնացել եվրոպական իմպերիալիզմի ազդեցությունից։

1914 թվականին Անգլիան, օգտվելով այս շրջաններում օսմանյան իշխանության ազդեցության թուլացումից, Նեժդի էմիրի հետ փոխադարձ շեղոքության պայմանագիր է կնքում և այդ նույն առիթով վերջինիս կողմից ճանաչվում է ծովափնյա շրջանների շեյխություններում բրիտանական գերիշխանության փաստը։ Համարյա նույն թվականներին, անգլիական դիվանագիտությանը հաջողվում է իր ազդեցությանը ենթարկել նաև Մեկկայի շերիֆ Հուսեյնին։ Այդ տարիներին այս շրջաններին գերիշխելու համար ուժեղ պայքար էր մղվում տեղական ֆեոդալ էմիրների միջև։ Իբն Սաուդի և նրա հյուսիսային հարևան Շամմարի տիրակալ Ռաշիդի միջև մղվող պայքարի հիմքում ընկած էին առևտրական ուղիներին տիրապետելու և դեպի ծով ելք ապահովելու ձգտումները։ Այդ երկու ֆեոդալ պետերի միջև կռիվը 1921 թ. վերջացավ Ռաշիդի պարտությամբ և նրա տիրապետության տակ գտնվող ողջ տերիտորիայի միացումով Սաուդական Արաբիային։ Մինչդեռ Իբն Սաուդի և Շերիֆ Հուսեյնի միջև ավելի ուշ սկսած պայքարը ծավալվեց հյուսիս-արևմտյան Արաբիայում գերիշխանություն ձեռք բերելու համար։ Գրավելով Հեջազը, Իբն Սաուդը ձեռք էր բերում Արաբիայի արևմտյան ծովափնյա հարուստ շրջանները, Մեկկայի, մուսուլմանների ուխտագնացության հետ կապված խոշոր եկամուտները և միևնույն ժամանակ չեղոքացնում էր Արաբիայում մնացած միակ վտանգավոր մրցակցին։

Ուշագրավ է, որ պատերազմող կողմերը երկուսն էլ անգլիական ոսկի և զենք էին ստանում։ Հուսեյնը ստանում էր Ֆորեյն Օֆֆիսի միջոցով, մինչդեռ Իբն Սաուդը՝ Ինդիա Օֆֆիսի։ Այդ երկերե-

սանի քաղաքականության միջոցով անգլիական դաղութարարները ապահովում էին հաղթող կողմի բարյացակամությունը և միևնույն ժամանակ թուլացնում էին միմյանց։ Առհասարակ պետք է ասել, որ անգլիական և մյուս իմպերիալիստները դաղութային երկրներում իրենց տիրապետությունը ամրապնդելու համար միշտ դիմում են հակասությունները հրահրելու քաղաքականության։

1926 թվականին շերիֆ Հուսեյնի պարտությամբ Հեջազը նույնպես միացավ Նեժդին, և Իբն Սաուդը հռչակվեց թագավոր։ 1930 թվականին Ասիրը ևս միացվելով Իբն Սաուդի թագավորությանը, դարձավ կիսանկախ պրովինցիա։

1931 թվականին Անգլիայի հովանավորությամբ, Իրաքի Ֆայսալ թագավորը և Իբն Սաուդը հանդիպեցին երկու երկրների միջև առկախ մնացած հարցերը կարգավորելու նպատակով։ Այս երկու արաբ թագավորների այդ հանդիպումը տեղի ունեցավ Պարսից ծոցում, անգլիական մի ռազմանավի վրա, անգլիական դիվանագետների ներկայությամբ։ Այդ բանակցությունների ընթացքում, ասում է Պիեր Ֆոնտենը՝ «...Ֆայսալ թագավորը ինքն իրեն դերազանցեց՝ բացի այս երկու երկրներին վերաբերող անմիջական հարցերից, նրան հաջողվեց իր տերերի համար (անգլիական նավթային մոնոպոլիաների — Հ. Բ.) ձեռք բերել մի շարք արտոնություններ»[1]։

1932 թվականին Իբն Սաուդը, իր տիրապետության տակ գտնվող տերիտորիաների միացումը պաշտոնականացնելու նպատակով, իր նոր կազմած պետությանը տալիս է Սաուդական Արաբիա կամ Սաուդիա (Ալ Մամլակա Ալ Արաբիա Աս Սաուդիյա) անունը։ Դեռ մինչև այդ, անգլիական ազդեցությունը այս երկրներում շարունակում էր պահել իր ուժը։ Սակայն, սկսած 1933 թվականից, հակառակ անգլիական նավթային մոնոպոլիաների ուժեղ դիմադրությանը, ամերիկյան նավթային մոնոպոլիաներին հաջողվում է ոտք դնել Սաուդական Արաբիա ու ձեռք բերել լայն կոնցեսիոն իրավունքներ և միաժամանակ քաղաքական ազդեցություն։

Ինչպես հայտնի է, Ֆրանկ Հոլմզը Սաուդական Արաբիայի պրովինցիաներից մեկում՝ Ալ-Հասսայում, կոնցեսիոն իրավունքներ էր ձեռք բերել, սակայն նրան չէր հաջողվել կոնկրետ արդյունքների հասնել։ Ուստի, երբ 1928 թվականին Հոլմզի կոնցեսիայի ժամկետը վերջացավ, խոշոր նավթային մոնոպոլիաների առջև նոր ասպարեզ բացվեց, մանավանդ, որ 1932 թվականին Բահրեյնի նավ-

---

[1] Pierre Fontaine, La Guerre Occulte du Pétrole, Paris, 1949, p. 158.

թային պաշարների հայտնաբերումից հետո, նավթ որոնողների ուշադրությունը արդեն բևեռվել էր Արաբական թերակղզու վրա, որովհետև այդ կղզում կատարված երկրաբանական ուսումնասիրությունները ցույց էին տվել, որ Բահրեյնի նավթի պաշարները երակներով կապված են Արաբական թերակղզու հետ։

Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Կալիֆորնիա ընկերության կոնցեսիոն իրավունքներ ձեռք բերելու առաջին փորձը ձախողվում է։ Այդ ձախողման գործում, անկասկած, մեծ դեր էր խաղում անգլիական նավթային մոնոպոլիստների թիկունքում կանգնած Ֆորեյն Օֆիսը, որը քաղաքական ճնշում էր գործում Իբն Սաուդի վրա, թեև այս հանգամանքը ամենևին չէր հուսահատեցնում ամերիկյան կապիտալիստական շրջաններին։ Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիա ընկերության փորձին զուգահեռ, արաբական շրջանների հետ կապեր ունեցող ամերիկացի միլիոնատեր Չ. Ռ. Կրեյնը[1], 1931 թվականին իր ներկայացուցիչ ինժեներ Կարլ Թվիչելլին ուղարկում է Սաուդական Արաբիա՝ իբր թե արտեզյան ջրհորների սիստեմ ստեղծելու հնարավորություններն ուսումնասիրելու համար։ Սակայն Թվիչելլի գործունեության հետագա ընթացքը ցույց տվեց, որ նրա պրպտումները, ավելի շատ, ուղղված են եղել նավթային որոնումներին։

Հետագայում Կրեյնը այլևս շահագրգռություն չի ցուցաբերում Արաբիայի նավթի նկատմամբ, ուստի, երբ Կարլ Թվիչելլին հաջողվում է Արաբիայի նավթային պաշարների շահագործման համար ձեռք բերել Իբն Սաուդի նախնական համաձայնությունը, վերադառնում է Ամերիկա և բանակցությունների մեջ է մտնում նավթային մոնոպոլիստական շրջանների տարբեր ներկայացուցիչների հետ։ Տեկսաս Օյլ Կոմպանին Արաբիայի նկատմամբ դեռևս մեծ շահագրգռվածություն չէր ցուցաբերում։ Գրլֆ Օյլ Կորպորեյշընը ընկերությունը, Իրաքի նավթային ընկերության մասը կազմելով, պարտավորված էր զգում ենթարկվել «կարմիր գծի համաձայնության» սահմանափակումներին, մինչդեռ Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիան, դեռ շարունակում էր այս երկրի նավթային պաշարների նկատմամբ շահագրգռվածություն ցուցաբերել։ Ուստի, միանալով Թվիչելլին, 1933 թվականի մարտին ներկայացուցիչ է ուղարկում Ջիդդա՝ այս կապակցությամբ վերջնական համաձայնության գալու համար։

---

[1] Չիկագոյի Կրեյն Կոմպանի ձուլարանների՝ մոնոպոլիստական խոշոր ընկերություն խմբերից մեկի՝ բաժնետեր, որը, 1914 թվականից սկսած, ԱՄՆ-ի արտաքին գործերի պետական դեպարտամենտի հետ սերտ կապեր էր հաստատել և մոտիկից շահագրգռություն էր ցուցաբերում Արաբիայի նկատմամբ (այս մասին տե՛ս World Petroleum, November 1955, p. 96)։

Անգլիական մոնոպոլիստները, Իրաք Պետրոլյում Կոմպանիի զեկավարությամբ, մեծ դիմադրություն են ցույց տալիս ամերիկյան նավթային մոնոպոլիստական այս խմբի նոր փորձերին։ Անգլիական և ամերիկյան մոնոպոլիստների միջև պայքարը չափազանց սուր բնույթ է ընդունում։ Երկու կողմերն էլ հանդես են գալիս խոշոր արեստներին հատուկ ամենանենգ մեթոդներով։ Այս պայքարի անդրկուլիսներում իրենց աշխույժ մասնակցությունն են ունենում նաև պետական դեպարտամենտի և Ֆորեյն Օֆֆիսի լավագույն ուժերը։ Սակայն, վերջիվերջո այդ հակամարտությունն ավարտվում է ամերիկյան նավթային մոնոպոլիստների հաղթանակով։ 1935 թ մայիսի 29-ին Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիա ընկերության ներկայացուցիչ Համիլտոնին հաջողվում է, Իբն Սաուդի ներկայացուցիչ շեյխ Աբդուլլա Սուլեյմանից 60 տարի ժամկետով ձեռք բերել Ալ-Հասսա պրովինցիայի նկատմամբ առաջին կոնցեսիոն իրավունքը։ Այս կոնցեսիայի մեջ էին մտնում երկրի արևելյան բոլոր տարածությունները ընդհուպ մինչև դեպի արևմուտք՝ Դահանայի շրջանը, ընդամենը 909 հազար քառակուսի կիլոմետր, ինչպես նաև նախընտրական իրավունքներ Սաուդական Արաբիայի մյուս շրջանների, որոնց թվում և Զեզրա Գոտու վերաբերյալ։ Այս կոնցեսիոն իրավունքների դիմաց Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիան համաձայնում էր, առաջին՝ արքայական գանձարանին միանվագ վճարել 30 հազար ոսկի ֆունտ ստեռլինգ, երկրորդ՝ տարեկան մինիմում վճար 5 հազար ֆունտ ստեռլինգ, երրորդ՝ պետության օգտին երկու վարկ բաց թողնել, ընդամենը 100 հազար ֆունտ ստեռլինգ գումարով, չորրորդ՝ նավթի հայտնաբերման դեպքում արդյունահանված յուրաքանչյուր տոննայի վճարել որպես կոնցեսիոն վարձ 4 շիլինգ (ոսկու կուրսով)։ Այդ բոլորի դիմաց ընկերությունը պետք է վայելեր բոլոր տեսակի էքստերիտորիալ իրավունքները և ազատ էր լինելու մաքսային տուրքերից ու պետական բոլոր մյուս տեսակի հարկերից, որոնք ավելի մեծ գումար էին կազմելու, քան պետությանը հասանելիք կոնցեսիոն գումարները։

Կոնցեսիոն իրավունքներն ստանալուց անմիջապես հետո, Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիան այս երկրի նավթային հարստությունների շահագործման համար հիմնում է Կալիֆորնիա-Արաբիան Ստանդարդ Օյլ Կոմպանի ընկերությունը։

1936 թվականին Իրաք Պետրոլյում Կոմպանին նորից փորձում է մուտք գործել Սաուդական Արաբիա և հաջողվում է Հեջազի և Ասիրի պրովինցիաներում կոնցեսիոն իրավունքներ ձեռք բերել։ Այս շրջանների համար անգլո-ամերիկյան նավթային մոնոպոլիստների

միջև պայքարն այնքան սուր բնույթ չէր կրում, որովհետև ամերիկյան նավթային մագնատներին հայտնի էր, որ այդ պրովինցիաները հեռանկարներից զուրկ են: Եվ այդպես էլ, շատ չանցած, Իրաքի նավթային ընկերությունը հրաժարվեց Հեջազի և Ասիրի կոնցեսիաներից:

Սաուդական Արաբիայի տերիտորիայի որոշ տարածություններ մնացել էին կոնցեսիաներից ազատ: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, միջազգային քաղաքականության խիստ լարվածության պայմաններում, առանցքի պետությունները փորձում են ներթափանցել Մերձավոր և Միջին Արևելք այդ թվում և Սաուդական Արաբիա:

1939 թվականին Իրաքի գերմանական դեսպանը մեկնում է Ջիդդա՝ Իբն Սաուդի առջև միջնորդելու հօգուտ մի խումբ իտալական կապիտալիստների, որոնք փորձում էին Սաուդական Արաբիայում նոր կոնցեսիաներ ապահովել: Այնուհետև, Եգիպտոսի ճապոնական դեսպանը իր երկրի մոնոպոլիստների կողմից Սաուդական Արաբիայի կառավարությանը կոնցեսիոն իրավունքների համար առաջարկեց ամերիկյան պայմաններից շատ ավելի շահագրգիռ պայմաններ: Վերջապես, Արաբիա ներթափանցելու մի նոր փորձ է անում նաև Իրաք Պետրոլյում ընկերությունը: Սակայն, ներթափանցման այս բոլոր նոր փորձերի դեմ հանդես գալով, կաշառքի, շանտաժի, այլ և այլ ապառնալիքների մեթոդներով և ԱՄՆ-ի կառավարության ուժեղ ճնշման ու միջամտության շնորհիվ, Կալիֆորնիա-Արաբիան Օյլ Կոմպանին զուրս մղեց բոլոր տեսակի մրցակիցներին և միաժամանակ ընդլայնեց իր կոնցեսիոն տարածությունները 210 հազար քառակուսի կիլոմետրով, ընդհանուր կոնցեսիոն տարածությունը հասցնելով 1.127 հազար քառակուսի կիլոմետրի, որը կազմում է Սաուդական Արաբիայի տերիտորիայի մոտ 50 տոկոսը: Սա հանդիսանում է աշխարհում ամենախոշոր կոնցեսիաներից մեկը, որը հավասար է ԱՄՆ-ի ողջ տերիտորիայի մեկ ութերորդական մասին կամ բրիտանական կղզիների ընդհանուր տարածության քառապատիկին:

Բեն Բահրեյնի նավթային հարստությունների շահագործումն ավելի վաղ սկսվեց, սակայն այդ պաշարների սահմանափակ ծավալի հետևանքով պայքարը անգլո-ամերիկյան նավթային մոնոպոլիաների միջև չընդունեց այն սուր բնույթը, ինչ որ ընդունեց Սաուդական Արաբիայում և, նրանից առաջ, Իրաքում:

1925 թվականին Բահրեյնի շեյխը կոնցեսիոն իրավունքներ շնորհեց անգլիական նավթային մոնոպոլիստներից Իստերն Ջենե-

բալ Սինդիկեյտին, որովհետև կղզին անգլիական պրոտեկտորատ էր։ Սակայն 1928 թվականին այս կոնցեսիան փոխանցվեց ամերիկյան նավթային մոնոպոլիստներին։ Փոխանցումը կատարվեց անգլիական և ամերիկյան նավթային մոնոպոլիստների միջև մըղված ուժեղ պայքարից հետո։ Անգլիական մոնոպոլիստների դիմադրությունը շարունակվեց մինչև 1934 թվականը, երբ վերջնականապես կազմակերպվեց Բահրեյն Պետրոլյում Կոմպանին՝ Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիայի դուստր-ընկերությունը։ Այս ընկերությունը ձևականության համար գրանցվեց որպես բրիտանական ընկերություն Կանադայում։ 1936 թվականին Բահրեյն Օյլ ընկերության բաժնետեր դարձավ նաև Տեկսաս Օյլ Կոմպանին։

Բահրեյնում ձեռք բերված հաջողությունները Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Կալիֆորնիային մղեցին կոնցեսիաներ որոնելու նաև անգլիական ազդեցության տակ գտնվող արաբական տերիտորիայի մյուս մասերում։ Սակայն, այս ուղղությամբ այդ ընկերության ձեռնարկած փորձերը թե Կատարում և թե Պայմանագրային Օմանում հանդիպեցին անգլիական նավթային մոնոպոլիստների ուժեղ դիմադրությանը։ Հետագայում բրիտանական կառավարության ուժեղ ճնշման տակ այս երկրների կոնցեսիոն իրավունքները շնորհվեցին Իրաք Պետրոլյումի դուստր-ընկերություններին՝ Պետրոլյում Դևելոպմենտ (Կատար) Լիմիտեդին և Պետրոլյում Դևելոպմենտ (Տրուշել Օման) Լիմիտեդին։

Անգլիական պրոտեկտորատ Կուվեյտում ամերիկյան նավթային մոնոպոլիստների կատարած փորձերը նույնպես հանդիպեցին անգլիական նավթային մոնոպոլիստների ուժեղ դիմադրությանը։ Ահա թե ինչու Կուվեյտում կոնցեսիաներ ձեռք բերելու կապակցությամբ Իստերն Գըլֆ Օյլ Կոմպանիի (ամերիկյան ընկերություն) 1931 թվականի դիմումը երկրի իշխանությունների կողմից կատեգորիկ մերժվում է, քանի որ այս երկիրը լինելով անգլիական պրոտեկտորատ, ստիպված էր ենթարկվել Կոլոնիալ Օֆֆիսի դիկտատին։ Այս մերժման հետևանքով ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը դիմում է անգլիական կառավարությանը և, վերջապես, երկար բանակցություններից հետո համաձայնություն է կայանում ու Անգլո-Իրանիան Օյլ Կոմպանիի և Գուլֆ Օյլ Կոմպանիի հավասար մասնակցությամբ հիմնվում է Կուվեյտ Օյլ Կոմպանին, որն այժմ շահագործում է Մերձավոր և Միջին Արևելքի՝ նավթի պաշարներով ամենահարուստ շրջաններից մեկը։

Չեզոք Գոտիների կապակցությամբ նույնպես անգլիական և ամերիկյան նավթային մոնոպոլիստների միջև երկար ժամանակ

պայքար մղվեց։ Կուվեյտի, Իրաքի և Սաուդական Արաբիայի միջև տեղի ունեցող սահմանային վեճերը կարգավորելու համար 1922 թվականին ստեղծվեց այս երեք արաբական պետությունների սահմանների միջև տարածվող Չեզոք Գոտին։ Չեզոք Գոտու ընդերքի շահագործումն սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. այս մասին կանդրադառնանք հաջորդ գլխում։

Եգիպտոսում նավթային հարստությունները շահագործում է Անգլո-Իջիպշին Օյլֆիլդ ընկերությունը, որի մեջ, որպես բաժնետեր մասնակցում են Ռոյըլ Դեչ Շելլ անգլո-հոլլանդական նավթային արհատը, Անգլո-Իրանիանը (այժմ Բրիտիշ Պետրոլյում) և եգիպտական կառավարությունը։ Եգիպտոսի նավթային հարստությունների շահագործման մեջ գերիշխում է անգլիական կապիտալը։

Սիրիայի, Անդրհորդանանի և Պաղեստինի տերիտորիաներում. նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը, գլխավոր կոնցեսիոնները փաստորեն Իրաք Պետրոլյում Կոմպանին էր, որը գործում էր դուստր ընկերությունների միջոցով։ Անդրհորդանանում գործում էր Պետրոլյում Դեվելոպմենտ (Տրանսժորդան) Լիմիտեդ ընկերությունը, Սիրիայում՝ Սիրիա Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդը, իսկ Պաղեստինում՝ Պետրոլյում Դեվելոպմենտ (Պալեստայն) Լիմիտեդը։

Նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը, ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստների գործունեությունը, որը, հիմնականում, սահմանափակվում էր Սաուդական Արաբիայով, Բահրեյնով ու մասամբ Կուվեյտով, և այն էլ սահմանափակ մասշտաբներով, անգլիակն հեգեմոն դիրքերը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում խախտելու բնույթ չէր կրում։ Սակայն պատերազմից հետո Սաուդական Արաբիան, որպես տրամպլին ծառայելով, մեծապես նպաստեց Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան իմպերիալիստների հետագա տնտեսական և քաղաքական ձգտումների իրագործմանը, որի հետևանքով առավել ևս սրվեցին այդ երկու իմպերիալիստների միջև արդեն գոյություն ունեցող հակամարտությունները։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՕՏԱՐԵՐԿՐՅՈՒ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ԱՅԴ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ[1]

Նավթի դերը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Իմպերիալիզմի դարաշրջանի բնորոշ առանձնահատկություններից մեկն է հանդիսանում պայքարը հումքի աղբյուրների համար: Այդ պայքարը սուր բնույթ է կրում, որովհետև հումքի համաշխարհային աղբյուրներն արդեն բաժանված են խոշորագույն մոնոպոլիստական միավորումների և նրանց թիկունքում կանգնած իմպերիալիստական պետությունների միջև, որոնք նպատակադրվում էին նոր պատերազմների միջոցով վերաբաժանելու հումքի աղբյուրները: Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում իմպերիալիստական պետությունների խնդիրն էր՝ ղենքի ուժով վերաբաժանել աշխարհի հումքի աղբյուրները: Ժամանակակից պատերազմները պահանջում են նյութական հսկայական միջոցներ, իսկ ռազմական մեծ նշանակություն ունեցող հումքերի շարքում նավթը գրավում է առաջնակարգ տեղ: Առաջին և մանավանդ երկրորդ համաշխարհային պատերազմի փորձը ցույց տվեց, որ կռվի ժամանակ մեծ նշանակություն ունի բանակների մեխանիզացված և մոտորիզացված լինելը: Իսկ ինքնըստինքյան հասկանալի է, որ առանց հեղուկ վառելանյութի հնարավոր չէ մոտորները, մանավանդ ռազմական խոշոր մեքենաները շարժման մեջ դնել:

Այս պայմաններում, պարզ է, որ ժամանակակից բանակների ռազմական ուժը հաճախ չափվում է գործողությունների ժամանակ ապառված նավթամթերքների քանակով և ոչ թե տանկերի ինք-

---

[1] Ընդգրկում է մինչև 1939 թվականի առաջին կիսամյակը:

նավթիների, նավերի ու ռազմական այլ մեքենաների թվով։ Բանակների ռազմական ուժն արտահայտվում է այն ժամանակ, երբ այդ բոլոր ռազմական մեքենաները գործողության մեջ են մտնում։

Նավթի ռազմական մեծ նշանակությունը առաջին անգամ պաշտոնապես նշվեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ 1917 թվականի դեկտեմբերի 15-ին Ժորժ Կլեմանսոն Վուդրո Վիլսոնին ուղղած իր հեռագրով կոչ արեց, որպեսզի նա, որպես պրեզիդենտ, օգտագործելով իր հեղինակությունը, ստիպի ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստներին ժամանակավորապես հրաժարվել միջմոնոպոլիստական պայքարից և վերսկսել նավթի առաքումը դեպի Եվրոպա՝ դաշնակից պետություններին։ «Եթե դաշնակիցները չեն ուզում պարտվել,— մատնանշում էր Կլեմանսոն,— ապա կենսական է, որ վերջին վճռական բախումների ժամանակ ֆրանսիական ուժերն ունենան անհրաժեշտ քանակությամբ նավթ»։ Այնուհետև ավելացնում էր Ֆրանսիայի պրեմիեր-մինիստրը. «Նավթի ամեն մի կաթիլը հավասարարժեք է զինվորի արյան ամեն մի կաթիլին»։

Այն պահին, երբ Կլեմանսոն ուղարկում էր իր հեռագիրը, ֆրանսիական ռազմական ուժերի՝ նավթի միջին սպառումը արդեն հասել էր ամսական 57 հազար տոննայի, մինչդեռ ամսական միջին ներմուծումներն իջել էին 30 հազար տոննայի։ Բայց ինչո՞վ բացատրել ամերիկյան նավթի մատակարարումների նվազեցումը Եվրոպայի դաշնակից պետություններին այն ժամանակ, երբ ԱՄՆ-ը Անտանտայի կողմն էր դառնում։

Սայկս-Պիկոյի համաձայնությամբ Անգլիան և Ֆրանսիան իրար մեջ բաժանել էին Մուսուլի նավթային հարստությունները։ Այս բաժանման ժամանակ անտեսել էին Ստանդարդ Օյլին, որի պատճառով Ռոկֆելլերը կատաղել և ուզում էր իր վրեժը լուծել Ռոյալ Դեչ Շելլից և Անգլո-Պերժըն Օյլից, որոնք այդ համաձայնության գլխավոր հովանավորողներն էին, ընդ որում նա նվազեցնում է նավթի արտահանումները դեպի ռազմաճակատ։ Այդ ֆվականներին Դետերդինգը հնարավորություն չուներ մենակ բավարարելու դաշնակիցների բոլոր պահանջները։ Ռոկֆելլերի համար նշանակություն չուներ, թե ո՞ր կողմը կշահեր պատերազմը։ Նա, բնության, հետևյալ կերպ էր դատում։ Եթե Գերմանիան հաղթանակ տանի, նա պատերազմից այնքան հոգնած և ուժասպառ դուրս կգա, որ ԱՄՆ-ի հետ մի կերպ համաձայնության եկը կգտնի։ Եթե Անգլիան ու Ֆրանսիան շարքից դուրս գան, Ռոկֆելլերի առջև Մերձավոր և Միջին Արևելքում ազատ ասպարեզ կբացվի։ Այդ դեպքում,

անտարակույս, նրան կհաջողվի համաձայնության գալ գերմանական և թյուրքական ֆինանսական շրջանների հետ, որովհետև Մուսուլի նավթի շահագործման համար նրանք անպայման կունենան ամերիկյան կապիտալի կարիքը։ Այնուհետև, միաժամանակ, նա հնարավորություն կունենա ապատ կերպով նվաճելու Ռոյալ Դեչ Շելլի գրաված դիրքերը Եվրոպայում, Ասիայում և Հարավային Ամերիկայում։ Բայց պրեզիդենտ Վիլսոնի ուժեղ ճնշման տակ, որ հետևանք էր ռազմաճակատում ստեղծված բացառիկ լուրջ դրության, Ռոկֆելլերը ժամանակավորապես տեղի տվեց և իր նավթատար նավատորմն ուղղեց դեպի Եվրոպա, դաշնակից պետությունների նավահանգիստները, որպիսի հանգամանքն Անտանտայի երկրներին օգնեց հաղթանակով դուրս գալ առաջին համաշխարհային պատերազմից։

Դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմը չսկսված, Գարֆիասի, Ուեստելլի և Ռիստերի հաշվումների համաձայն[1], արդեն 1937 թվականին կապիտալիստական մի շարք կարևոր երկրներում ռազմական նպատակների համար (ռազմա-ծովային նավատորմի և բանակների) նավթամթերքների սպառումը ներկայացնում էր հետևյալ պատկերը. Ֆրանսիա՝ 890 հազար տոննա կամ երկրում սպառվող նավթամթերքների 12 տոկոսը, Անգլիա՝ 1.750 հազար տոննա կամ 16 տոկոսը, Ճապոնիա՝ 1.050 հազար տոննա կամ 20 տոկոսը և, վերջապես, Իտալիա՝ 735 հազար տոննա կամ 24 տոկոսը[2]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նավթի դերն ու նշանակությունը շատ ավելի մեծացավ։ 1939—1945 թվականների պատերազմի տարիների նավթի սպառման նորմաներն անհամեմատ ավելի բարձր էին քան 1914—1918 թվականների առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գործողության մեջ գտնվող տանկերի թիվը եղել է 4600 և ինքնաթիռներինը՝ 4500, մինչդեռ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գործողության մեջ գտնվող տանկերի թիվը եղել է 64 հազար և ինքնաթիռներինը՝ 145 հազար։ Պատերազմական գործողությունները 1914—1918 թվականներին տարածվել էին մաքսիմում 1200 կմ խորությամբ, իսկ 1939—45 թվականներին՝ 4500 կմ խորությամբ։ Բացի այդ, պետք

---

[1] Տե՛ս „Zeitshrift", № 9. 1938.

[2] Л. Шнирт, Минеральное сырье и война, Политиздат. Москва. 1941 г., стр. 150.

է նկատել, որ ժամանակակից տիպի տանկերի և ինքնաթիռների յուրաքանչյուր միավոր, շնորհիվ իր ավելի մեծ հզորության ու տարողության, այժմ ավելի շատ վառելանյութ է սպառում, քան հին տիպի տանկերի և ինքնաթիռների յուրաքանչյուր միավորը։

Նավթի սպառման քանակն ավելանալուց բացի, աճել է նավթից ստացվող տեսակների թիվը և բարձրացել է մշակվող նավթի որակը։ 1914—1918 թթ. պատերազմի տարիներին զանազան նավթամթերքներից ամենից ավելի օգտագործվել է մազութը։ Այսպես, օրինակ, 1918 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ռազմաճակատ ուղարկված 4,2 միլիոն տոննա նավթամթերքների 60 տոկոսը եղել է մազութ, 21 տոկոսը՝ բենզին, 14 տոկոսը՝ կերոսին և միայն 3,4 տոկոսը՝ բարձր ֆրակցիայի ինքնաթիռների բենզին։ Մինչդեռ 1939—1945 թթ. պատերազմի տարիներին, նավթի սպառման քանակական աճման զուգընթաց, փոխվեցին նաև օգտագործվող տեսակների տոկոսային հարաբերությունները և բարձր ֆրակցիայի, այդ թվում օկտանային բենզինի տոկոսը անհամեմատ մեծացավ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նավթի մատակարարման տեսակետից գերակշռությունը գտնվում էր հակահիտլերյան կոալիցիայի մեջ մտնող երկրների կողմը՝ արտադրության տեսակետից 97 տոկոսը[1], պաշարների տեսակետից, ըստ Ա. Շպիրտի տվյալների, 92—95 տոկոսը[2]։

Պատերազմի ընթացքում առանցքի պետությունների ժամանակավոր հաջողությունները նավթային պաշարների և արդյունահանված նավթի հարաբերությունները մասամբ փոխեցին հօգուտ ագրեսորների։ Բայց, չնայած այդ փոփոխություններին, գերակշռությունը միշտ մնաց հակահիտլերյան կոալիցիայի մեջ մտնող երկրների կողմը։

Պատերազմի նախօրյակին հիտլերյան Գերմանիայի պահեստներում կար 5—7 միլիոն տոննա նավթ, արդյունահանվում էր տարեկան 650 հազար տոննա բնական նավթ և արտադրվում էր 3,6 միլիոն տոննա սինթետիկ նավթ։ Իսկ Իտալիայում արդյունահանվում էր 237 հազար տոննա նավթ։

Առանցքի երկրները գրավելով Եվրոպայում՝ Ֆրանսիան, Ավստրիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Ալբանիան, իսկ

---

[1] А. А. Санталов, Современные проблемы нефти в капиталистических странах, стенограмма публичной лекции, Москва, 1946, стр. [illegible]

[2] А. Шпирт, Минеральное сырье и война, Москва, 1941, стр. 151.

Ասիայում՝ Հոլանդական Հնդկաստանը (այժմ Ինդոնեզիան), Մալայան, իսկ ինչպես այդ երկրների նավթի բոլոր պահեստները և նավթարդյունաբերության ամբողջ սիստեմը։

Այսուհանդերձ, առանցքի տերություններին ոչ մի ժամանակ չհաջողվեց ձեռք բերել նման գերակշռություն։

Հարոլդ Ուասբնի տվյալների համաձայն, պատերազմող երկրների նավթի արդյունահանումը 1941 թվականին ուներ հետևյալ պատկերը.

Մի կողմից դաշնակից պետությունները, այդ թվում բացի ՍՍՌՄ-ից, նաև ԱՄՆ-ը, Կանադան, Մեքսիկան, Տրինիդադը, Վենեսուելան, Կոլոմբիան, Պերուն, Էկվադորը, Արգենտինան, Եգիպտոսը, Իրանը, Իրաքը, Բահրեյն կղզին, Սաուդական Արաբիան, Հնդկաստանը, Բիրման, Հոլանդական Հնդկաստանը, Բորնեոն՝ 2166 միլիոն բարել ընդհանուր արդյունահանմամբ, մյուս կողմից՝ առանցքի պետությունները, այդ թվում Ռումինիան, Գերմանիան, Լեհաստանը, Ավստրիան, Հունգարիան, Ալբանիան, Ճապոնիան, Սախալինը, Գերմանիայի ու Ճապոնիայի սինթետիկ նավթն էլ հաշված՝ 126 միլիոն բարել ընդհանուր արդյունահանմամբ։ Տոկոսային հարաբերությամբ 94,5 տոկոսն ընկնում էր դաշնակիցներին, իսկ 5,5 տոկոսը՝ առանցքի պետություններին[1]։

Այս պայմաններում, իհարկե, հիտլերյան գերագույն հրամանատարությունը իր հետագա ռազմական տակտիկական պլաններում առաջին տեղը տվեց նավթային աղբյուրներով հարուստ շրջանների գրավմանը։ Սկսվեց արշավ նավթի համար։ Բացի այդ, հիտլերյան հետախուզական օրգանները Մերձավոր և Միջին Արևելքում՝ Սիրիայում, Պաղեստինում, Իրանում, Իրաքում, Թյուրքիայում, ֆաշիստական լրտեսական ցանցի միջոցով աշխատում էին այդ երկրները գրաված պրոպագանդ ընդդեմ դաշնակիցների։ Սակայն, գերմանական գերագույն հրամանատարության այս բոլոր ավանտյուրիստական պլանները չիրագործվեցին շնորհիվ հերոսական Սովետական բանակի կողմից հիտլերյան հորդաներին հասցված խորտակիչ հարվածների։

Հակահիտլերյան կոալիցիայի մեջ մտնող կապիտալիստական երկրների շարքում նավթի մատակարարումների տեսակետից կարևոր դերը խաղացին, հիմնականում, ԱՄՆ-ը, Վենեսուելան, Մեր-

---

[1] M. S. Hessel, W. J. Murphy, F. D. Hessel. Strategic Materials in Hemisphere Defense, section on Petroleum, by H. S. Wason, New York, 1942, pp. 192—193.

ձավոր և Միջին Արևելքը։ Պատերազմի պայմաններից առաջացող պահանջների չափազանց մեծ աճը ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի առջև դրեց մի քանի սուր պրոբլեմներ։ Այս պրոբլեմների լուծումը դժվարանում էր հատկապես նրա համար, որ ԱՄՆ-ում նավթարդյունաբերությունը գտնվում էր մի քանի խոշոր մոնոպոլիստների ձեռքում, որոնք ելնելով ամենից առաջ իրենց սեփական օգուտներից, անտեսում էին ժողովրդի ընդհանուր շահերը։

Հենց այս դրությունից ելնելով, ԱՄՆ-ի կառավարությունը 1941 թվականին կազմակերպեց «Պատերազմական ժամանակաշրջանի նավթային վարչությունը» (Petroleum Administration for War), մի պետական օրգան, որը կոչված էր ղեկավարելու ԱՄՆ-ի և նրա ազդեցության տակ գտնվող շրջանների նավթարդյունաբերությունը իր բոլոր ճյուղերով[1]։

Պատերազմի տարիներին նավթի մատակարարման հետ կապված գլխավոր հարցերն էին, առաջին՝ արդյունահանման պրոբլեմը, երկրորդ՝ նավթաթորման պրոբլեմը, երրորդ՝ փոխադրման պրոբլեմը։ Այս վերջին պրոբլեմը, պարզ է, որ ամենագժվարն էր։ Եվ թշնամու հարձակումները հենց սկզբից ուղղվեցին դաշնակից պետությունների նավթային տրանսպորտի սիստեմի քայքայմանը։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ երրորդ պրոբլեմի հաջող լուծումից էլ կախված էր առաջին և երկրորդ պրոբլեմների լուծումը, քանի որ նավթարդյունահանման և նավթաթորման միակողմանի աճումը ոչ մի նշանակություն չէր կարող ունենալ, եթե հնարավոր չլիներ արդյունահանած նավթամթերքները փոխադրել ռազմաճակատ։

Արդյունահանման պրոբլեմը։ Նախապատերազմյան տարիներում նավթարդյունաբերության բոլոր ճյուղերի թերզարգացածությունը որոշ չափով օգնեց բավարարելու պատերազմի առաջին տարիներին նավթի աճած պահանջները։ Բայց այդ, իհարկե, բավական չէր պատերազմի հարաճուն պահանջները բավարարելու համար։ Պատերազմի ժամանակաշրջանի նավթային վարչության ղեկավարությամբ, պատերազմի չորս տարիների ընթացքում փորվեց ընդամենը 17.684 հոր, որի հետևանքով նավթի արդյունահանումն աճեց մոտ 27 տոկոսով։ Այս նոր հորատումների շնորհիվ նավթի օրական արդյունահանումը 1941 թվականի մայի-

---

[1] Պատերազմի ժամանակաշրջանում այս վարչության գործունեության վերաբերյալ մանրամասնությունները տե՛ս «A History of Petroleum Administration for War», Washington, D. C., 1946.

սի 540 հազար տոննայի դիմաց, 1945 թվականի մայիսին կազմում էր 700 հազար տոննա։

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը բուրժուական գրականության մեջ տարածված էր այն կարծիքը, թե պատերազմի ժամանակ հում նյութի պակասն զգալի պիտի լինի միայն առանցքի տերությունների համար և հատկապես նավթի կապակցությամբ։ Իսկ ԱՄՆ-ի և Անգլիայի համար բավական է միայն, որ նրանք իրենց նավթային ապրյուրների ծորակները բաց անեն, որպեսզի ստանան իրենց պահանջներին համապատասխան քանակությամբ վառելանյութը։ Բայց պատերազմի փորձը ցույց տվեց, որ այնքան էլ հեշտ չէր նավթարդյունաբերության հետ կապված բոլոր պրոբլեմների լուծումը։ Նավթի արդյունահանման մոտ 27 տոկոս աճը կատարվեց տեխնիկական ամենամեծ դժվարությունների և մոնոպոլիստական ու հասարակական հակադիր շահերի ամենախիստ բախումների պայմաններում։

«Պատերազմի ժամանակաշրջանի նավթային վարչությունը» գործելով անգլիական նուչնանման օրգանի հետ համերաշխ, ծրագրեր մշակեցին Կարաիբյան շրջանի և Մերձավոր ու Միջին Արևելքի նավթը շահագործելու համար։ 1943 թվականին պլանով նախատեսված 668 հորատումներից (որի 48 տոկոսը Կարաիբյան շրջանում) հաջողվեց իրագործել 500-ը, 1944 թվականին նախատեսված 1000-ի դիմաց՝ 734-ը, 1945 թվականին նախատեսված 1365-ի դիմաց՝ 409-ը միայն։

Չնայած հորատումների պլանների թերակատարմանը, բայց և այնպես նավթի արդյունահանումը այդ շրջաններում աճեց 61 տոկոսով։

Նավթամշակման պրոբլեմը։ Պատերազմական պայմաններից առաջացող՝ վառելանյութի բացառիկ պահանջները լրիվ բավարարելու համար բավական չէր միայն լուծել նավթի արդյունահանման պրոբլեմը։ Նավթը իր անմշակ վիճակում ոչ մի բանի պետք չէ։ Բանակը իր օդային, ցամաքային ու ծովային ուժերի համար նավթամշակման արդյունաբերությունից անընդհատ մեծ քանակությամբ տարբեր ֆրակցիաների և բարձր որակի վառելանյութ էր պահանջում։ Օդային ուժերը, բացի 100 օկտանի տեսակից, որը անհրաժեշտ էին օդային մեծ դորձողությունների ժամանակ, պահանջում էր նաև 91, 87 և 73 օկտանի տեսակներ, որոնք օգտագործվում էին օդաչուների մարզման և պատրաստման կապակցությամբ։ Ցամաքային ուժերը պահանջում էին 80 օկտան վառելա-

նյութ մարդատար և բեռնատար ավտոմոբիլների, տանկերի և այլի համար։ Ծովային ուժերը համապատասխան ֆրակցիաների նավթ էին պահանջում, հիմնականում դիզել մոտորներով աշխատող ռազմանավերի, սուզանավերի, ցամաքահանման բարժաների և այլ տիպի նավերի համար։

1941 թվականին ԱՄՆ-ի նավթամշակման բոլոր գործարանները միասին մշակում էին օրական 550 հազար տոննա, իսկ պատերազմի վերջին շրջանում՝ 715 հազար։ Մինչև հիտլերյան լծից ազատ կապիտալիստական մյուս երկրներում նավթամշակումը այդ նույն ժամանակամիջոցում աճեց 40 տոկոսով։

Պատերազմի տարիներին «նավթային վարչության» կողմից նավթամշակման արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում էր 927 միլիոն դոլար։ Այս գումարից 867 միլիոնը տրամադրվեց 100 օկտան բարձր ֆրակցիայի մշակման սարքավորումների կապակցությամբ։ Այս կարգի ներդրումները ամերիկացի հարկատուներից մեծ զոհողություններ պահանջեցին, մինչդեռ այդ ներդրումներից վերջիվերջո օգտվեցին նավթային խոշոր մոնոպոլիստները, որովհետև պատերազմից հետո նրանք այդ սարքավորումներին տիրացան գրեթե անվճար։

Նախապատերազմյան տարիներին ամերիկյան ռազմական ուժերի կողմից 100 օկտանի օրական սպառումները 560 տոննայից չեն անցել։ Պատերազմի վերջին տարիներին այդ նույն տիպի վառելանյութի օրական սպառումներն արդեն հասել էին 90 հազար տոննայի։

100 օկտանի տիպի վառելանյութի արտադրության համար անհրաժեշտ նյութերից տետրաէթիլ կապարը չափազանց հազվագյուտ էր։ 1944 թվականին այս նյութի համաշխարհային արտադրությունը եղել է շատ բարձր, բայց և այնպես 130 հազար տոննայից չի անցել։

Նավթամշակման արդյունաբերությունը, բացի վառելանյութից, արտադրեց նաև ռազմական նշանակություն ունեցող բազմաթիվ այլ նյութեր։ Նավթամշակման պրոցեսի ընթացքում ստացվում էր կոքս, որը օգտագործվում էր ալյումինի և նիկելի արդյունաբերության մեջ։ Նավթաթորումից ստացվում էր նաև տոլուոն, որը շատ մեծ նշանակություն ունի պայթուցիկ նյութեր պատրաստելու գործում։ Այդպես ստացվում էր սինթետիկ կաուչուկի բաղադրության մեջ մտնող մի շարք այլ նյութեր, որոնց թվում բուտադին, ստիրոն և այլն։

Պատերազմի ժամանակ նավթամշակման գործարանները սիստեմատիկ կերպով ենթարկվեցին կատաղի հարձակումների։ 1942 թվականի փետրվարին գերմանական սուզանավերը ուժեղ կերպով ամրակոծեցին Արուբա կղզու նավթամշակման հսկա գործարանը և բավական լուրջ վնասներ պատճառեցին։ Այնուհետև, օդային հարձակումների ժամանակ նավթաթորման գործարանները գրեթե միշտ էլ ամրակոծման կարևոր օբյեկտներ էին հանդիսանում։

Սակայն պատերազմի վերջում ամրակոծումների արդյունքները քննելիս հայտնի դարձավ, որ ամերիկյան և անգլիական ինքնաթիռները թշնամու տերիտորիան ամրակոծելու ժամանակ հատուկ ուշադրություն էին դարձնում, որպեսզի չվնասեն նավթաթորման այն գործարանները, որոնք այս կամ այն ձևով կապեր ունեին Ռոկֆելլերի և Դետերդինգի մոնոպոլիստական սիստեմների հետ։ Այս նկատառումներից ելնելով, անգլո-ամերիկյան օդային ուժերը Գերմանիայում նավթաթորման գործարանները լուսա հնարավորին խնայեցին։ Այնուհետև, սինթետիկ նավթի արդյունաբերությունը նույնպես գրեթե անվնաս մնաց, որովհետև այն հետաքրքրում էր նավթի ամերիկյան և անգլիական մագնատներին։ Մինչդեռ Ճապոնիայում նավթաթորման գործարանները անխնա կերպով ոչնչացվեցին, որովհետև դրանք Ճապոնական շուկայում անցանկալի մրցակիցներ էին ամերիկյան նավթային մագնատների համար։

Տրանսպորտի պրոբլեմը։ Պատերազմի տարիներին նավթի տրանսպորտի պրոբլեմն առանձնապես ավելի դժվար եղավ լուծել, քան նավթարդյունահանման և նավթամշակման պրոբլեմները, որովհետև տրանսպորտի սիստեմն ավելի հեշտ խոցելի էր թշնամու հարձակումների ժամանակ, քան նավթահորերը և նավթաթորման գործարանները։

Պատերազմի առաջին տարիներին, հատկապես 1942 թվականին, գերմանական սուզանավերի կողմից մեծ թվով նավթատար նավերի խորտակման հետևանքով, մի շարք շրջաններում նավթահանման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվեցին։ Նախքան պատերազմը, Ամերիկայում Մեքսիկյան ծոցի մոտիկ շրջաններից (Տեկսաս և Լուիզիանա) անմշակ նավթի մեծ տոկոսը նավթատար նավերով փոխադրվում էր ԱՄՆ-ի արևելյան ափերը, որ տեղավորված է նավթամշակման գործարանների 40 տոկոսը։ Երբ պատերազմի հետևանքով նավթատար նավերն օգտագործվեցին ռազմաճակատի մատակարարումների համար, Տեկսասի և Լուիզիանայի նավթը փոխադրելու նոր հարց առաջացավ։ Այդ նույն ժամանակներում ԱՄՆ-ի նավթաբեր այլ շրջաններից նավթի փոխադրում-

ները դեպի նավթամշակման գործարանները, արտադրության արտասովոր աճի հետևանքով խառնաշփոթ վիճակ առաջացրին նավթի տրանսպորտի սիստեմում։ Ստեղծված նոր իրադրությունը ներքին տրանսպորտի ողջ սիստեմի անհապաղ վերակազմակերպման հարց դրեց պետական իշխանության առջև։

Այն ժամանակ, երբ հարկադրված էին միայն նավթատար նավերով կատարել նավթամթերքների մատակարարումները ռազմաճակատին, ներքին փոխադրումների համար մնում էր օգտագործել երկաթուղին, նավթամուղը, դեռային տրանսպորտը և ավտոցիստերնները։ Նավթի տրանսպորտի տեսակները 1941 թվականին ներկայացնում էին հետևյալ պատկերը. նավթատար նավեր՝ 95 տոկոս, նավթամուղ՝ 2 տոկոս, այլ միջոցներ՝ 3 տոկոս։ 1945 թվականին այս հարաբերությունները բոլորովին փոխվեցին և ստացվեց հետևյալը. նավթատար նավեր՝ 22 տոկոս, երկաթուղի՝ 30 տոկոս, նավթամուղ՝ 40 տոկոս, դեռային բարժաներ՝ 8 տոկոս։

Պատերազմի սկզբում ԱՄՆ-ի ցիստերն վագոնների ընդհանուր թիվը եղել է 145 հազար, յուրաքանչյուրը 30 տոննա միջին տարողությամբ, բարժաների թիվը՝ 1400։ Ավտոցիստերնների թիվը եղել է 106 հազար, իսկ նավթամուղի երկարությունը՝ 200 հազար կմ, նավթատար նավերի թիվը՝ 353 մեծ և 285 փոքր տարողություններ։

Թեև թշնամու գործողությունների հետևանքով մեծ թվով նավթատար նավեր խորտակվեցին, սակայն հետագայում նրանց թիվը աճեց և պատերազմի վերջում ընդունեց հետևյալ պատկերը.

Աղյուսակ 18*

Կապիտալիստական երկրների նավթատար նավերի տարողությունը (1000 տոննայով)

	1939 թ.	%	1945 թ.	%
Մեծ Բրիտանիա և դոմինիոններ	3.264	28.5	2.900	18,3
ԱՄՆ	2.801	24.5	9.500	60,0
Նորվեգիա	2.118	18.5	1.500	9,4
Շվեդիա	159	1.4	370	2,3
Պանամա	470	4.7	600	3,7
Այլ երկրներ	2.625	23.0	1.000	6.3
Ընդամենը	11.437	100.0	15.870	100,0

* М. Брукс, Нефть и внешняя политика, перевод с английского, Москва, 1949, стр. 42.

Պատերազմի տարիներին նավթամուղի սիստեմն աճեց 20.000 կիլոմետրով։ Նորակառույց ամենազլխավոր երկու սիստեմներն էին «Բիգ ինչ»՝ 2300 կմ և «Լիտլ բիգ ինչ»՝ 2740 կմ երկարությամբ։

Պատերազմի չորս տարիների ընթացքում ցիստերն վագոնների միջոցով օրական միջին մինիմում փոխադրումները կազմում էին 83 հազար տոննա, միջին մաքսիմումը՝ 145 հազար տոննա, բարժանների միջոցով օրական միջին մինիմումը՝ 11 հազար տոննա, միջին մաքսիմումը՝ 18 հազար տոննա, նավթամուղի միջոցով օրական միջին մինիմումը 7000 տոննա, օրական միջին մաքսիմումը՝ 108 հազար տոննա։

Ելնելով այս կարգի բազմաթիվ փաստերից, պետք է եզրակացնել, որ նավթը համաշխարհային տնտեսական կյանքում գրավել է առաջին տեղերից մեկը, պատերազմի ժամանակ այն ստանում է ավելի մեծ նշանակություն, և որ պատերազմներն անհնարին են դառնում առանց նավթի։

Անգլո-ամերիկյան իմպերիալիզմի հակասությունների արմատները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. պայքար հումքի աղբյուրների, ապրանքի շուկաների, հաղորդակցության և ռազմա-ստրատեգիական տիրապետող դիրքերի համար։ Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում միջազգային տեսարի տապալելից դուրս մղվեցին պարտված գլխավոր երկրները Եվրոպայում՝ Գերմանիան, Ասիայում՝ Ճապոնիան, որոնք նախքան պատերազմը մեծ դեր էին խաղում միջազգային շուկաներում, հանդիսանալով միևնույն ժամանակ Ամերիկայի և Անգլիայի ամենալուրջ մրցակիցները։ Ֆրանսիան, Իտալիան, Հոլանդիան, Բելգիան և նման երկրորդ կարգի այլ իմպերիալիստական երկրներ, որոնք նախքան պատերազմը միջազգային շուկաներում նկատելի դիրքեր էին գրավում, պատերազմի գործած տրհավիրքների հետևանքով, պատերազմին հաջորդող տարիներին գտնվում էին տնտեսապես քայքայված վիճակում։ Այս պայմաններում, ինքնըստինքյան պարզ է, որ մինչև պարտված և պատերազմից մեծապես տուժած երկրների վերականգնումը, «Մարշալի պլանի» լուծը թոթափելը և որպես ուժեղ մրցորդներ միջազգային շուկաները նրանց մուտք գործելը, Ամերիկան և Անգլիան պիտի շարունակեին մնալ հիմնական մրցակիցները կապիտալիստական երկրների միջազգային տնտեսական կյանքում։

Նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը Ամերիկան և Անգլիան համարյա թե հավասար ուժերով էին հանդես գալիս

միջազգային պայքարի ասպարեզում։ ԱՄՆ-ը, որպես առաջին կարգի արտահանող երկիր, իսկ Անգլիան, որպես առաջին կարգի ներմուծող երկիր, երկուսը միասին վերցրած, 1939 թվականի տվյալների համաձայն, իրար միջև բաժանել էին կապիտալիստական երկրների համաշխարհային ողջ արտահանումների 24 տոկոսը և ներմուծումների 26 տոկոսը։

Պատերազմից հետո այս հարաբերությունները փոխվեցին։ Ճիշտ է, Անգլիան դեռևս շարունակում է միջազգային շուկաներում նկատելի դեր խաղալ, բայց այնուամենայնիվ նա պատերազմի հետևանքով չափազանց թուլացավ, մինչդեռ ԱՄՆ-ը կապիտալիստական մյուս երկրների համեմատ զարգացման առավել մեծ շանսերով պատերազմից դուրս եկավ։

Ճապոնիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հոլանդիայի, Բելգիայի թուլացման պայմաններում, ԱՄՆ-ը համաշխարհային շուկաներում պայքարելու ժամանակ իր հարվածներն ուղղում է, հիմնականում, Անգլիայի դեմ, որը, իհարկե, որքան էլ որ թուլացած լինի, այդ հարվածներին պատասխանում է իր հնարավորությունների չափով։ Այստեղից էլ այժմյան պայքարի խիստ սրումը այս երկու տերությունների միջև։

«Պատերազմի ժամանակ,— ափսոսալով ասում է Հեչիսոնը իր գրքի առաջաբանում,— երկու անգլո-սաքսոնական տերությունները նույն սպառնալիքի առջև չափազանց ներդաշնակությամբ դործակցեցին ու կռվեցին։ Բայց երբ խաղաղությունը վերահաստատվեց, Ամերիկան և Անգլիան վերստին դարձան առևտրական մրցակիցներ։ Հաշվի առնելով այս երկու երկրների ներկա վիճակը, ընդորում երկուսն էլ իրենց տնտեսությունը փրկելու համար ստիպված են՝ մեծացնել արտահանումների քանակը ու արտաքին առևտրի ասպարեզում շարունակել իրենց ագրեսիվ քաղաքականությունը, ուստի Ամերիկայի և Անգլիայի միջև բախումների հավանականությունը շարունակվելու է»[1]։

Կապիտալիստական երկրների ներկա միջազգային հարաբերություններում ԱՄՆ-ի ու Անգլիայի միջև ծավալվող պայքարը ընդունելով որպես փաստ, այժմ տեսնենք, թե որո՞նք են նրանց միջև գոյություն ունեցող հակասությունների արմատները։ Մեր հետագա տողերում, հիմնվելով հետպատերազմյան իրադարձությունների վրա, պետք է աշխատենք ցույց տալ այս երկու կապիտալիս-

---

[1] K. Hutchison. Rival Partners. New York, 1946, p. vii. (ընդգծումները մերն են—Հ. Թ.)։

տական մեծ տերությունների ժամանակակից հակասությունների արմատները։

* * *

Պատերազմը չլուծեց և չէր էլ կարող լուծել մինչև 1939 թվականը կապիտալիստական երկրներում արդեն գոյություն ունեցող տնտեսական բազմաթիվ պրոբլեմները։ Պատերազմը ընդհակառակը, ավելի սրեց այդ պրոբլեմները և դրանց վրա ավելացրեց մի շարք նոր պրոբլեմներ ևս։

Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո բոլոր պատերազմող երկրների առջև ծառացավ մի կարևոր պրոբլեմ՝ վերակազմել երկրի տնտեսությունը ռազմական էկոնոմիկայից խաղաղ ժամանակվա էկոնոմիկայի ռելսերի վրա[1], ու ըստ հնարավորին, կասեցնել գործազրկության աճող տեմպը, գների բարձրացումը, ինֆլյացիան և նման այլ երևույթները։ Բայց այս հիմնական պրոբլեմն առաջ բերող տնտեսական և քաղաքական գործոնները տարբեր կապիտալիստական երկրներում արտահայտվեցին տարբեր ձևերով։

ԱՄՆ-ը և Անգլիան բռնեցին այս պրոբլեմի լուծման նույն ուղին, այն է՝ ամեն կերպ ուժեղացնել իրենց արտահանումները։ ԱՄՆ-ը այդ ուղին բռնել էր պատերազմի պայմանների բերմամբ ընդլայնված իր արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը համապատասխան չափերով բեռնավորելու և դրանով իսկ ճգնաժամի ու գործազրկության վտանգից խույս տալու համար, Անգլիան, ընդհակառակը այդ ուղին բռնել էր իր պատերազմական պարտքերը վճարելու և իր աճող ներմուծումները բալանսավորելու նպատակով։ Նույն պրոբլեմը, լուծման նույն ուղին, բայց այդ պրոբլեմն առաջացնող տարբեր արմատներ։ Որո՞նք են այդ արմատները։

Նախքան պատերազմը ամերիկյան արդյունաբերությունը արդեն գործում էր թերբեռնվածության պայմաններում, գործազրկության և ճգնաժամերի մշտական սպառնալիքի տակ։ Պատերազմի

---

[1] Թեև վերջին ժամանակներս կապիտալիստական պետությունները ըմբռնելով, որ ճգնաժամերից և գործազրկության սպառնալիքից ուրիշ ելք չկա, իրենց էկոնոմիկան վերսին փոխադրեցին ռազմական էկոնոմիկայի ռելսերի վրա։ Տիրապետող կապիտալիստական շրջանները չեն կարողանում անտեսական ճգնաժամից ելք գտնել և հույս են դնում նոր պատերազմի վրա, նկատի ունենալով ռազմական պատվերների հաշվին բեռնավորել արդյունաբերությունը և դրանով իսկ իրենց համար ապահովել ավելի բարձր գերշահույթներ։

տարիներին երկրի արդյունաբերությունն անհամեմատ զարգացավ, հիմնականում ռազմաճակատի պահանջները բավարարելու ուղղությամբ։ Երբ խաղաղությունը վերահաստատվեց, անհրաժեշտ եղավ արտադրության մասշտաբները կրճատել և անցնել խաղաղ ժամանակի սպառման առարկաների արտադրությանը։ «Գների հսկողության վարչության» պետ Չեսթեր Բոուլզը իր ճառում հետևյալ միտքն արտահայտեց. «Հետպատերազմյան ժամանակաշրջանում ծավալվող պրոբլեմները նման են 1918 թվականին ծավալված պրոբլեմներին։ Բայց այս անգամ նրանք ավելի խիստ կլինեն, որովհետև 1918 թվականին երկրի ընդհանուր էկոնոմիկայի միայն 25 տոկոսն էր գտնվում ռազմական ռելսերի վրա, մինչդեռ 1945 թվականին՝ 50 տոկոսը»[1]։ ԱՄՆ-ի արդյունաբերության մեջ ռազմական սեկտորը և այդ թվում ծանր արդյունաբերությունն զգալիորեն զարգացել էր, մինչդեռ լայն սպառման ապրանքների արտադրությունը՝ կրճատվել։

Այս պայմաններում, երբ պատերազմը վերջացավ, անհրաժեշտ եղավ ծանր արդյունաբերության որոշ ճյուղերում արտադրությունը կրճատել, մեծ թվով գործարաններ փակել, որի հետևանքով էլ գործազուրկների թիվն աճեց։ Մյուս կողմից՝ լայն սպառման ապրանքների արտադրության սեկտորը պատերազմի ժամանակ կրճատված լինելու հետևանքով, մինչև նրանց լայնացվելը, որոշ ժամանակ հնարավոր չէր արտադրել ժողովրդի պահանջներին համապատասխանող քանակությամբ։ Այստեղից էլ առաջացավ գների խիստ բարձրացումը։ Կարճ ասած, պատերազմից անմիջապես հետո ԱՄՆ-ի էկոնոմիկային սպառնում էր երկու լուրջ վտանգ՝ գործազրկություն և գների ինֆլյացիա։ Նույնիսկ Ամերիկյան արդ. տեսագետ գոկտ. Ջուլյուս Հիրշի տվյալների համաձայն, պատերազմից հետո, արդյունաբերության ամենանորմալ բեռնվածության պայմաններում, աշխատանքով պետք է ապահովեին 48 միլիոն մարդ, իսկ այս նշանակում էր՝ գործազուրկների թիվը աճելով, հասնելու էր 12 միլիոնի[2]։

Այս կրկնակի սպառնալիքից ելք գտնելու համար, Ամերիկայի մոնոպոլիստական շրջանները հույսը դնում էին արտաքին շուկաների վրա, ձգտելով օտար երկրների շուկաների հաշվին բեռնավորել արդյունաբերությունը և դրանով իսկ իրենց համար ապահովել ավելի բարձր գերշահույթներ։

---

[1] New York Herald Tribune. March 20, 1945.

[2] Տես այս մասին K. Hutchison. Rival Partners, New York, 1946, p. 47.

Հեչիսընը այս կապակցությամբ իր գրքում մի ամբողջ գլուխ է հատկացնում հետևյալ շատ հատկանշական վերնագրով՝ «ԱՄՆ-ը կարո՞ղ է արդյոք գործազրկության սպառնալիքը արտահանել»[1]։

Հեղինակը այս գլխում զարգացնում է այն թեզը, որ ամերիկյան կապիտալիստական շրջաններում բոլորն էլ համաձայն են, որ գործազրկության սպառնալիքը կանխելու և արտերազմական ժամանակաշրջանի դեպրեսիաները վերականգնելու համար միակ ելքը դանվում է արտադրության ավելցուկների արտահանման մեջ, հարկ եղած դեպքում դեմպինգի քաղաքականություն վարելու միջոցով։ Ուոլլ սարիտի տնտեսական տեսաբանները հույս են տածում այսպիսի միջոցներով իրենց համար մեծ շահույթներ ապահովել և միաժամանակ մասսայական գործազրկության վտանգը դեթ ժամանակավորապես կասեցնել։ Թեև այստեղ պետք է ասել, որ Ուոլլ սարիտի մոնոպոլիստներին գործազրկության աճն այնքան չի անհանգստացնում, որքան այդ գործազուրկների մոտ զարգացող համակրանքն ու վստահությունը սոցիալիզմի երկրի նկատմամբ։

Եվրոպայի և այլ կապիտալիստական երկրների շուկաներում ամերիկյան ապրանքները մրցելով և դուրս մղելով տեղական ապրանքները, այդ երկրների արդյունաբերությունը պետք է անշարժության մատնեն, որի հետևանքով գործազուրկների թիվը պետք է աճի և, այսպիսով, ԱՄՆ-ի մոնոպոլիստական շրջանները ցինիկորեն խոստովանում են՝ «Մեզ համար հնարավոր կլինի մեր ապրանքներին զուգընթաց արտահանել նաև մեր երկրի գործազրկությունը օտար երկրներ»։

Այս հարցի կապակցությամբ վկայակոչելով Ուիլյամ Կլեյտոնին, մի ժամանակ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտում ասիստենտ քարտուղար, Հեչիսընը հետևյալ ցիտատն է բերում.

«Այժմ մեր տարեկան արտահանումների ընդհանուր գումարը անցնում է 14 միլիարդ դոլլարից։ Մեզ բնավ ձեռնտու չի լինի պատերազմից հետո մեր արտահանումները կրճատել և հասցնել, ասենք, դեպրեսիայի տարիների (1929—1932) մակարդակին՝ 2—3 միլիարդ դոլլարի։ Մեր լավագույն տնտեսագետների կարծիքով, անհրաժեշտ է, որպեսզի մեր արտահանումների մակարդակը 10 միլիարդ դոլլարից ավելի չկրճատվի, հակառակ դեպքում մեր գործազուրկների թիվը անչափ կաճի և մենք հնարավորություն չենք ունենա մեր ազգային եկամուտը երկար ժամանակ պահել նորմալ պայմանների մակարդակի՝ 150 միլիարդ դոլլարի վրա։ Այլ

[1] K. Hutchison. Rival Partners. New York, 1946, p. 53.

խոսքով ասած՝ եթե ցանկանում ենք, որ մեր արդյունաբերությունը գործի նորմալ բնականության պայմաններում, ապա անհրաժեշտ է, որ մենք շարունակենք արտահանել նախապատերազմյան շրջանի հետ համեմատած երեք անգամ ավելի մեծ բանակությամբ»[1]։

Կլեյտընի այս կարծիքը՝ տարեկան մինիմում 10 միլիարդ դոլար դոլարի արտահանումների մասին, բաժանում են նաև Ուոլլ ստրիտի մոնոպոլիստները և պետական դեպարտամենտում նրանց գործակալները։ Բայց անհրաժեշտ է, որ արտահանումների դիմաց ներմուծող երկրները վերջիվերջո վճարեն և այդ պետք է անեն ապրանքով, դոլլարով կամ ոսկով։ Այստեղից ծագում են մի շարք կնճռոտ պրոբլեմներ, որոնց մասին խոսելը կարող է մեզ շատ հեռուները տանել, ուստի ասենք միայն այսքանը, որ կապիտալիստական երկրների մեծ մասը ներկա պայմաններում չի արտադրում այնպիսի ապրանքներ, որոնց կարիքը ԱՄՆ-ը անմիջականորեն ունի, հետևաբար, վճարումները ապրանքով չեն կարող լինել։ Իսկ նրանց դոլլարի և ոսկու ռեզերվներն արդեն վաղուց սպառվել են։ Բայց ինչպե՞ս է լուծում ԱՄՆ-ը այս պրոբլեմը։ Նա փոխառություններ է տալիս և պարտադրում է, որ իր տված փողով, իրենից ապրանքներ գնեն։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ Ուոլլ ստրիտի մոնոպոլիստների այս կոմբինացիան, որը արտահայտվում է «Մարշալլի» և այլ տիպի կեղծ օգնության պլաններով, շատ շանցած՝ ԱՄՆ-ին կկանգնեցնի փակուղու առջև։

Սրանք են, ամփոփ, ԱՄՆ-ի տնտեսական կյանքում ծավալվող հետպատերազմյան ժամանակաշրջանի իրադարձությունները, որոնք հանդիսանում են Ամերիկայի և Անգլիայի հետպատերազմյան ժամանակաշրջանի հակասությունների արմատները։

Այժմ փորձենք տալ անգլիական արտահանման քաղաքականության արմատները։

Ընդունված է անգլիացիներին անվանել «առևտրական ազգ»[2]։ Անգլիացիներն իրենց առևտրական գործառնությունները տարածելով միջազգային շուկաներում, և հատկապես գաղութներում, ապահովել են մեծ շահույթներ։ Այդ շահույթները կուտակելու հետևանքով գոյացել է կապիտալի հսկայական ավելցուկ։ Այնուհետև սկսել են ապրանքների արտահանմանը զուգընթաց արտահանել նաև կապիտալը։ Տարիների ընթացքում կապիտալի արտահանումը կապ-

---

[1] K. Hutchison, Rival Partners. New York. 1946, p. 53. Կլեյտընի ելույթը ապիոյով, 1945 թ. մարտի 9-ին։

[2] Խոսքը, ինարկե, իշխող դասակարգի և մանր բուրժուազիայի մասին է։

մել է Անգլիայի ընդհանուր արտահանումների մի պատկառելի տոկոսը։ Հետագայում Անգլիան սկսել է ավելի շատ ապրանք ներմուծել, քան արտահանել։ Ապրանքների ներմուծման և արտահանման դեֆիցիտային բալանսը Անգլիան հավասարակշռել է արտասահմանյան երկրներում ներդրված վիթխարի կապիտալներից հասնող դիվիդենտներով։ Այդ ժամանակից՝ անգլիական աղքը «առևտրական աղքից» վեր է ածվել «ռանտիե աղքի»։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին միջին-տարեկան ներմուծումները կազմել են 866 միլիոն ֆունտ ստեռլինգ, դրա դիմաց արտահանումները կազմել են 478 միլիոն ֆունտ ստեռլինգ։ Եվ այսպիսով, XIX դարի վերջին քառորդից սկսած, Անգլիան ներմուծել է ավելի մեծ քանակությամբ և մեծ արժեքով ապրանք, քան արտահանել է։ Անգլիան իր արտաքին առևտրի այս դեֆիցիտային բալանսը հավասարակշռել է «աննկուլյթ արտահանումների» միջոցով։ Աննկուլյթ արտահանումների մեջ մտնում են առևտրական նավատորմի շահույթները, ֆինանսական և բանկային ծառայություններից ստացվող եկամուտները, վերջապես, օտար երկրներում կապիտալ ներդրումներից ստացվող դիվիդենտները։

Սուլի[1] տվյալներից ելնելով, հնարավոր է եզրակացնել, որ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին Անգլիայի ներմուծումների ընդհանուր գումարի դիմաց բալանսը հավասարակշռվել է՝ արտահանումներով (55,30 տոկոս), առևտրական նավատորմի ծառայություններից հասնող եկամուտներով (12,11 տոկոս), միջազգային շուկայում ֆինանսական և բանկային ծառայություններից հասնող եկամուտներով (4,52 տոկոս), դիվիդենտներով (23,55 տոկոս) և, վերջապես, 4,52 տոկոսը եղել է դեֆիցիտ։ Այս հարաբերությունները ցույց են տալիս, թե որքան մեծ տեղ է գրավում անգլիական արտաքին առևտրի բալանսում արտասահմանյան երկրներում անգլիական կապիտալ ներդրումներից ստացված դիվիդենտների հատվածը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի վիթխարի ծախսերը կլանեցին օտար երկրներում անգլիական կապիտալ ներդրումներից 2000 միլիոն ֆունտ ստեռլինգ, որի հետևանքով այս աղբյուրից

---

[1] G. Soule. Americas Stake in Britains Future. New York, 1945, p. 22.

Արտահանումներ	478	մլն. ֆ. ս.
Նավային արտասպորտից ստացվող եկամուտներ	103	» »
Ֆինանսական ծառայություններից ստացված եկամուտներ	40	» »
Դիվիդենտներ օտար երկրներում կապիտալ ներդրումներից	203	» »
Դեֆիցիտ	40	» »

ստացվող եկամուտները 50 տոկոսով նվազեցին։ Այնուհետև, արտասահմանյան երկրներում անգլիական կապիտալ ներդրումների այս վիթխարի նվազումին զուգընթաց, Անգլիան պատերազմից դուրս եկավ նույնքան վիթխարի դումարների հասնող պարտքերով։ Պատերազմի տարիներին Արգենտինայից, Հնդկաստանից, Եգիպտոսից, Պորտուգալիայից և մի շարք այլ երկրներից նա ստացել է մեծ քանակությամբ հում նյութեր և սննդամթերքներ, որոնց գնման նրա պարտքը հասել է 4000 միլիոն ֆունտ ստերլինգի։ Եթե այդ պարտքի մարումը հաշվենք հարյուրին 4, ապա նրա բալանսում կստանանք տարեկան 160 միլիոն ֆունտ ստերլինգ լրացուցիչ ելք։ Բացի այդ, պատերազմի ժամանակ առևտրական նավատորմը մեծ կորուստներ է կրել, մյուս կողմից՝ ամերիկյան առևտրական նավատորմն աճել, դարձել է լուրջ մրցակից, ուստի նավային փոխադրումներից ստացվող եկամուտները նույնպես պակասել են։

Հիմնվելով այս տվյալների վրա, Հեչիսոն Անգլիայի արտաքին առևտրի բալանսը ներկայացնում է հետևյալ կերպ.

Բ Ա Լ Ա Ն Ս*

Ելք	Մուտք
Ներմուծում . . . . 866 մլն. ֆ. ս.	Արտահանում . . . . 478 մլն. ֆ. ս.
Պարտքերի գումար տոկոսային և ամորտիզացիոն վճարումներ (օտար երկրներում) 160 մլն. ֆ. ս.	Առևտրական նավատորմի ծառայություններ . . . . . 70 մլն. ֆ. ս.
	Ֆինանսական ծառայություններ . . . . . 40 մլն. ֆ. ս.
	Օտար երկրներում կապիտալ ներդրումներից ստացված դիվիդենտներ . . . . . 100 մլն. ֆ. ս.
1.026 մլն. ֆ. ս.	688 մլն. ֆ. ս.
	Դեֆիցիտ . . . . . 388 մլն. ֆ. ս.
	1.026 մլն. ֆ. ս.

Այսպիսով, անգլիական արտաքին առևտրի բալանսի մեջ դեֆիցիտը 40 միլիոն ֆունտ ստերլինգից աճել, հասել է 338 միլիոն ֆունտ ստերլինգի։ Այլ խոսքով ասած, Անգլիայի արտաքին առևտրի դեֆիցիտը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, նախապատերազմյան ժամանակաշրջանի հետ համեմատած, աճել է մոտ 8 և կես անգամ։

* K. Hutchison. Rival Partners, New York, 1946. p. 110.

Այս պայմաններում Անգլիայի «ռանտիե ազգի» դրությունը սպառնալիքի տակ է դնվում։ Իր տնտեսությունը վերականգնելու և վիթխարի չափերի հասնող տարեկան դեֆիցիտը հավասարակշռելու համար Անգլիային անհրաժեշտ է դեռ բավական երկար ժամանակ նվազեցնել ներմուծումները և ավելացնել արտահանումները։

Բռնելով արտահանումների ուժեղացման ուղին, Անգլիան համաշխարհային բոլոր շուկաներում բախվում է ԱՄՆ-ի հետ, որը, ինչպես տեսանք, նույնպես վարում է արտահանման ագրեսիվ քաղաքականություն։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ ապրանքների արտահանման ուժեղացումը անխուսափելիորեն կապված է արտադրության մասշտաբների զարգացման հետ, իսկ արդյունաբերությունը անհրաժեշտորեն պահանջում է հումքի և էներգիայի աղբյուրների ավելացություն։ Այս պատճառով էլ անգլիական և ամերիկյան իմպերիալիստների միջև շուկաների համար մղվող պայքարին զուգընթաց, պայքար է մղվում նաև հումքի համաշխարհային աղբյուրներին տիրանալու համար։

Անգլիական կղզիները չափազանց աղքատ են բնական հարստությունների տեսակետից։ Բացի քարածխից և ավելի նվազ քանակությամբ երկաթից, այս երկրի ընդերքից, ինդուստրիալ մասշտաբներով, ուրիշ տեսակի հումքեր չեն ստացվում։ Ըստ էության, որպեսզի Անգլիան կարողանա շարժման մեջ դնել իր խոշոր արդյունաբերությունը, նրան անհրաժեշտ են Եգիպտոսի և Հնդկաստանի բամբակը, Մերձավոր և Միջին Արևելքի ու Ինդոնեզիայի նավթը, Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի հանածոները և իր ժողովրդին կերակրելու համար՝ Ավստրալիայի ու Արգենտինայի միսն ու ճարպեղենը, Ավստրալիայի և Կանադայի ցորենը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների մրգերը և այլն և այլն։ Մինչդեռ Ամերիկայի տերիտորիայի ընդերքն անհամեմատ ավելի հարուստ է։ Այսուհանդերձ չի կարելի ասել, որ հում նյութերի տեսակետից այս վերջինը հարյուր տոկոսով բավարարում է իր պահանջները, ԱՄՆ-ը չի արտադրում կամ շատ քիչ քանակությամբ է արտադրում մարգանեց, խրոմ, նիկել, պլատին, անագ, արդյունաբերության մեջ օգտագործվող ադամանդը, կաուչուկ, թեյ, սուրճ, կակաո, վուշ, կանեփ, բուսական յուղեր և նման այլ նյութեր։ Ըստ Վաշինգտոնի «Ազգային պլանավորման ասոցիացիայի» 1944 թվականին հրապարակված տեղեկությունների[1], ԱՄՆ-ի արդյունաբերության մեջ

[1] America's New Opportunities in World Trade. Washington, National Planning Association 1944.

օգտագործվող նյութերի 20—25 տոկոսն ստացվել է արտասահմանյան աղբյուրներից։ Թեև ճիշտ է, որ ասոցիացիայի հայտարարությունը միտումնավոր կերպով չափազանցված է և ուղղված է օտարերկրյա հում նյութի աղբյուրների համար ամերիկյան մոնոպոլիստների ոտնձգությունները արդարացնելուն, սակայն պետք է ասել, որ որոշ նյութերից ԱՄՆ-ի ընդերքը աղքատ է։ Եվ այս հանգամանքից օգտվելով, ԱՄՆ-ը ոչ միայն իր համար անհրաժեշտ հումույթին, այլև համաշխարհային բոլոր տեսակի հումույթների աղբյուրներին տիրապետելու ուղի է բռնել։ Այս պայմաններում, պարզ է, որ անգլիական և ամերիկյան մոնոպոլիստները միմյանց դեմ առ դեմ են գալիս ոչ միայն արտաքին շուկաներում, այլև հումույթի համաշխարհային աղբյուրներում։

Հումույթի համաշխարհային աղբյուրների և արտաքին շուկաների հետ մշտական կապը թե՛ խաղաղ և թե՛ պատերազմների ժամանակ պահպանելու համար, Անգլիան և ԱՄՆ-ը ձգտում են ձեռք բերել համաշխարհային հաղորդակցության ճանապարհները և սրանց հետ կապված ստրատեգիական դիրքերը։ Այստեղից էլ երկու իմպերիալիստական պետությունների միջև բախումը համաշխարհային ճանապարհների և ռազմա-ստրատեգիական դիրքերի համար։

Սրանք են, ամփոփ, անգլո-ամերիկյան իմպերիալիստների հակասությունների ընդհանուր արմատները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Այս ֆոնի վրա է զարգանում նաև այդ տերությունների այժմյան պայքարը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում։

* * *

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը անգլիական իմպերիալիզմը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում դեռևս տիրապետող դիրք էր գրավում, իր ձեռքում կենտրոնացնելով նավթային աղբյուրների մեծագույն մասը, հաղորդակցության միջոցների գլխավոր հանգույցները և, վերջապես, ներքին ու արտաքին մեծաքանակ առևտրի մոնոպոլիան։ Նրան էր պատկանում նաև այս շրջանի քաղաքական գերիշխանությունը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ ֆաշիստական գլխավոր պետությունները, ելնելով իրենց շահերից, փորձեցին կապիտալիզմի համաշխարհային սիստեմի ներսում ստեղծված դրությունը զինված ուժերով փոխել, իսկ ԱՄՆ-ը և Անգլիան, ձգտում էին իրենց ձեռք բերած տիրապետող դիրքերը՝

«ատոմային քվոտա» պահպանել և նույն ոգիով համաշխարհային շուկաներում գերմանական ու ճապոնական մրցակցությունից ազատվել, կոալիցիա կազմելու առանցքի պետությունների դեմ։ Ահա թե ինչու՞ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան պատերազմի տարիներին մի կողմ թողնելով իրենց միջև գոյություն ունեցող հակասությունները, ժամանակավորապես «գործակցեցին»։

Այդ ժամանակներում Անգլիան համաձայնեց, որ Հեռավոր Արևելքը, հատկապես Ճապոնիան և Չինաստանը դառնան գերազանցապես ամերիկյան ազդեցության ոլորտը, սակայն այն պայմանով, որ անգլիական առևտրական շահերը այդ շրջաններում հաշվի առնվեն։ Մյուս կողմից՝ ԱՄՆ-ը համաձայնեց, որ Մերձավոր և Միջին Արևելքը դառնա գերազանցապես անգլիական ազդեցության ոլորտը, պայմանով, որ ամերիկյան նավթային շահերը ոտնակոխ չլինեն։ Ահա այս պայմաններում է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այս երկու դիշատիչ իմպերիալիստական տերությունների միջև կայացավ աշխարհը թալանելու մի տեսակ «համաձայնություն»։

Նկատելով վերոհիշյալ պայմաններից, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան պատերազմի տարիներին «համագործակցեցին» նաև Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, չնայած նրան, որ այս շրջաններում ևս, ինչպես բազմիցս նշել ենք, նրանց միջև դեռևս վաղուց գոյություն ունեին հակասություններ։ Սակայն, այդ հակասությունները դեռևս չէին ընդունել այն չափազանց սուր բնույթը, ինչ որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։

Պատերազմի հատկապես առաջին տարիներին, երբ ԱՄՆ-ը Մերձավոր և Միջին Արևելքում գործող բրիտանական ուժերին «Լենդ-Լիզի» համաձայն նյութական օժանդակություն էր ցույց տալիս, ամերիկյան ներթափանցման սահմանափակության պատճառով, այս շրջանում անգլիացիները դեռևս լուրջ մրցակցություն չէին զգում։ Որ ԱՄՆ-ը նույնքան շահագրգռված էր, որպեսզի Մերձավոր և Միջին Արևելքը առանցքի տերությունների ձեռքը չընկնի, այդ մասին անգլիացիները կասկածելու պատճառներ չունեին։

Դեռևս պատերազմի մասնակից չդարձած, ԱՄՆ-ը Մերձավոր և Միջին Արևելք էր ուղարկում մեծ քանակությամբ ռազմական և այլ սպառման մթերքներ, որոնք կոորդինացվում և բաշխվում էին Միլլ Իսա Սբպպլայ Սենտրը կազմակերպության[1] միջոցով։ Երբ պատերազմի մասնակից դարձավ, ԱՄՆ-ը իսկույն ևեթ, 1942 թ.

[1] Մատակարարման Միջին-Արևելյան կենտրոն։

մային ամսից անդամակցեց Միդլ Իսթ Սքոպլայ Սենտրին։ Այս կազմակերպությունը պատերազմի տարիներին, այնուհետև մինչև լիկվիդացվելը՝ 1945 թ. սեպտեմբեր ամիսը, իր հսկողության տակ վերցնելով Մերձավոր և Միջին Արևելքի արտաքին առևտուրը և տնտեսության այլ կարևոր ճյուղերը, հետևապես և երկրի բաղաքական դեմքը, այս երկրները ենթարկեց անգլիական և ամերիկյան մոնոպոլիստների կամայականությանը։

Միդլ Իսթ Սքոպլայ Սենտրը, որը հիմնվեց 1941 թ. ապրիլին, կոչված էր անգլո-ամերիկյան իմպերիալիզմի շահերին ենթարկել Մերձավոր և Միջին Արևելքի ողջ էկոնոմիկան։ Այս կազմակերպությանը հաջողվել էր իր գործունեության ամենաառաջին ժամանակաշրջանում առավել կամ նվազ չափով իր ազդեցությանը ենթարկել Եգիպտոսի, Սուդանի, Տրիպոլիտանիայի (Աֆրիկայում), Կիրենայկայի, Սոմալիի, Էրիտրեայի, Եթիոպիայի, Ադենի, Սաուդական Արաբիայի, Անդրհորդանանի (այժմ Հորդանան), Պաղեստինի (այժմ մասամբ Իսրայել), Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Իրանի, Կիպրոսի, Մալտա կղզու և, վերջապես, առանձին դեպքերում էլ Թյուրքիայի էկոնոմիկան։ Սենտրի ազդեցությունը տարածվում էր 9 միլիոն քառակուսի կիլոմետր տարածության վրա, որտեղ ապրում էր 100 միլիոն բնակչություն։ Ընդգրկված երկրներից վեցը ձևականորեն անկախ էին, չորսը հանդիսանում էին մանդատային երկրներ, չորսը՝ բրիտանական գաղութ, մեկը՝ կոնդոմինիում և, վերջապես, երեքը հանդիսանում էին թշնամուց գրաված երկրներ։

Այս կազմակերպության գործունեությունն ունեցավ չորս էտապ։ Առաջին էտապում Սենտրը, ելնելով պատերազմի տարիներին տրանսպորտային միջոցների սակավությունից, իր գործունեությունը սահմանափակեց նրանով, որ իր հսկողության տակ վերցրեց Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ներմուծումների գործը։ Երկրորդ էտապում այս կազմակերպության ղեկավար շրջանները նկատելով, որ ստեղծված նոր պայմանների բերմամբ միջազգային առևտուրը արդեն ծավալվել է[1], իսկույն ևեթ այդ առևտուրը «հովանավորելով», իրենց հատուկ նենգությամբ, այն արձանագրեցին որպես Սենտրի նախաձեռնությունը։ Երրորդ էտապում Սենտրը սկը-

---

[1] Նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը արևմտյան իմպերիալիզմը ամեն կերպ խանգարում էր Մերձավոր Արևելքի երկրների միջև միջազգային առևտրի զարգացմանը, որպեսզի այս շրջանը որոշ ապարեզներում ինքնարավ չդառնա։ Սակայն, պատերազմի տարիներին այդ առևտուրը ակամա զարգացավ և 1938 թվականի 7 տոկոսի դիմաց հասավ 33 տոկոսի։

ունեց իր վճռական միջամտությունն ունենալ տեղական արդյունաբերության մեջ։ Եվ, վերջապես, չորրորդ էտապում, երբ պատերազմը իր վախճանին էր մոտենում, ուստի Միջի Բատ Սըպալայ Սենատը այլևս ոչ մի «իրավական» հիմք չուներ արդարացնելու իր գոյությունը, Սենատի ատատուսը տեսական դարձնելու ու պատերազմից հետո ևս իմպերիալիստների հսկողությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրների էկոնոմիկայում հավերժացնելու համար որոշ փորձեր կատարվեցին։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ արդյունքներ տվեց Միջի Բատ Սըպալայ Սենատի գործունեությունը հիշյալ երկրներում։ Առաջին՝ ոչռազմական ապրանքների ներմուծումները նվազեցին երեք և կես անգամ։ Երկրորդ՝ հացահատիկների բաշխման գործը անցավ այդ կազմակերպության հսկողության տակ։ Երրորդ՝ տեղական արդյունաբերությանը Սենատը տվեց իր ցանկացած ուղղությունը։ Եվ, վերջապես, չորրորդ՝ այլ և այլ միջոցառումների շնորհիվ այս երկրների ողջ էկոնոմիկան ուղղակի կամ անուղղակի կերպով ենթարկվեց կազմակերպության հսկողությանը։ Վերցնելով Մերձավոր և Միջին Արևելքի տնտեսության դեկը, Սենատը, այդ երկրները իր ազդեցությանը ենթարկեց նաև բաղաքականապես։

Միջի Բատ Սըպալայ Սենատի ղեկավարությունը, որը կազմված էր բացառապես անգլիական և ամերիկյան մոնոպոլիստական շրջանների ամենաակտիվ ներկայացուցիչներից, երկար ժամանակ հանդես էր գալիս Մերձավոր Արևելքի տեղական արդյունաբերությունը քաջալերելու գաղափարի դեմ, չնայած որ պատերազմի պայմանները հրամայական պահանջ էին առաջադրում այդ ուղղությամբ։ Սակայն, տրանսպորտային միջոցների պակասը և տեղում բարձր ստեղծած անգլիական և այլ պետությունների ռազմական ուժերի մեծ պահանջմունքները վերջիվերջո Սենատի ղեկավարներին ստիպեցին վիջել և թույլատրել որոշ տեսակի ապրանքների արտադրությունը, այդ ևս այս կազմակերպության խիստ հսկողության տակ։ Անգլիական և ամերիկյան կապիտալի շրջանակներին մտահոգում էր այն հանգամանքը, որ տեղական արդյունաբերության ամրապնդման դեպքում, պատերազմից հետո Մերձավոր Արևելքի շուկաները կփակեն իրենց դռները օտարերկրյա ապրանքների առջև։ Մեծ Բրիտանիայի կառավարական շրջանների հիշողության մեջ դեռևս թարմ էր մնացել առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված դրությունը, երբ Եգիպտոսը և մասամբ Սիրիան տեքստիլ արդյունաբերության որոշ ճյուղերում ինքնարավ դառնալու ավյալներ էին ձեռք բերել և երկրորդ համաշխարհային պատերազմի նախօր-

յակին Եղիպտոսը ցածրորակ բամբակեղեն գործվածքների, ինչպես նաև շաքարի, սպիրտի (ցածրորակ տեսակի), ապակու և շշերի, ցեմենտի արտադրության ասպարեզում իր պահանջները արդեն բավարարում էր։

Ելնելով, ուրեմն, պատերազմի հետևանքով ստեղծված պայմաններից Միդլ Իսթ Սբպպլայ Սենտրը հարկադրված սկսեց խիստ հսկողության տակ «հովանավորել» Մերձավոր և Միջին Արևելքի նորաստեղծ արդյունաբերությունը։ Այդ «հովանավորության» ոճն ու մեթոդը այնպիսին էին, որ չէին կարող տեղացիների մոտ այդ կազմակերպության գործելակերպի նկատմամբ կասկած և տարակուսանք չառաջացնել։ Սենտրը իր թե գտնում էր, որ անհրաժեշտ է քաջալերել և հարկ եղած դեպքում օգնել ու օժանդակել արդյունաբերության միայն այնպիսի ճյուղերին, որոնք պատերազմից հետո «կարդարացնեն» իրենց գոյությունը։ Իսկ տեղացի արդյունաբերողները գտնում էին, որ Սենտրի նման պայմանը շատ առաձգական է։ Ինչպե՞ս պիտի որոշել, թե արդյունաբերության որ ճյուղն է, որ պատերազմից հետո ինքն իրեն կարդարացնի։ Մի՞թե այս սկզբունքը չի կարող չարաշահումների առիթ չտալ։ Իրականում այդ կազմակերպության ղեկավարության կողմից որդեգրված այս սկզբունքը իր սաղմի մեջ արատավոր էր և ուղղված էր միայն ու հատկապես տեղական արդյունաբերության նորմալ զարգացումը խանգարելուն։ Ինչպես է, որ կապիտալիզմի սիստեմում (որտեղ տիրում է սանձարձակ մրցակցության օրենքը, որտեղ օրինավոր է համարվում դեմպինգը և կապիտալիզմի սիստեմին հատուկ մի շարք այլ անարխիկ երևույթներ, որտեղ սպառնում է պարբերական ճգնաժամերի վտանգը) պատերազմի պայմաններում արդյունաբերության շահարեր համարվող որոշ ճյուղեր կարող են հետպատերազմյան ժամանակաշրջանում իրենց գոյությունը չարդարացնել, մանավանդ, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Մերձավոր Արևելքի երկրները ենթարկված լինելով արևմտյան իմպերիալիզմի ազդեցությանը, իրենց ազատ չեն զգում մաքսային հովանավորյալ տարիֆներով պաշտպանել իրենց նորածին ինդուստրիան։ Սակայն, Սենտրը չէր ելնում այդ մտավախությունից, այլ, ինչպես նշել ենք, միայն և միայն տեղական արդյունաբերությունը և առանձին դեպքերում գյուղատնտեսությունը սխալ ուղու վրա դնելու հետին դիտավորություններից։

Միդլ Իսթ Սբպպլայ Սենտրի արատավոր գործունեությունը պատկերացնելու համար տեղին է նշել Սիրենայիկայի նախկին կառավարիչ Լորդ Ռեննելի զրքում բերված հետևյալ փաստը.

«...Թեև պատերազմի տարիներին Կիրենայկայում (Բարքե դաշտավայրում) ցորենի ցանքատարածության ընդլայնումն օգտակար էր համարվում Սենտրալի զեկավարների կողմից, սակայն պատերազմից հետո նրանք պտնում էին, որ լայն մասշտաբներով ցորենի մշակումը տնտեսական ոչ մի արդարացուցիչ հիմք չունի...»։ Ռեննելն իր այդ գրքում ասում է, որ 1945 թվականին հրահանգ էր ստացել այդ շրջանի ցանքատարածությունը 10 հազար ակրով կրճատելու մասին, սակայն այս հրահանգը դեռ ի կատար չածած՝ ստացել է մի նոր հրահանգ, որով նրան հանձնարարում էին, ընդհակառակը, ցորենի ցանքատարածությունն ընդլայնել որքան հնարավոր է առավելագույն չափով։ Այս անհեթեթության պատճառը, ընդգծում է հեղինակը, այն է, որ սկզբում Վաշինգտոնը և Լոնդոնը ձգտում էին Կիրենայկայի ցորենը միջազգային շուկայից դուրս մղել, մինչև անգամ այդ երկիրը վերածել հացահատիկ ներմուծողի, սակայն, երբ նկատվել է, որ այդ տարին Ավստրալիայում, Կանադայում և ԱՄՆ-ում ցորենի բերքը եղել է ցածր, իսկույն ևեթ հակառակ բովանդակություն կրող երկրորդ հրահանգն են տվել[1]։

Ինչպես հայտնի է, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը բրիտանական կապիտալը և առևտուրը մերձավոր արևելյան շուկաներում գերիշխում էին։ Անգլիան գիտեր, որ պատերազմից հետո ամերիկյան իմպերիալիզմի ծավալման նոր թափի առջև անպայման հարկադրված պիտի լինի դիջել իր դիրքերը, ուստի միանգամայն դեմ էր Միդլ Իստ Սըպպլայ Սենտրալի լիկվիդացման գաղափարին. նա հույս ուներ, որ այս կազմակերպության պահպանումով իրեն կհաջողվեր պատերազմից հետո ևս իր ձեռքում պահել այդ երկրների տնտեսության հսկողությունը և այդպիսով, զսպել ամերիկյան իմպերիալիզմի սանձարձակ ներթափանցումը։

Ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ պատերազմից հետո, Անգլիան իր քայքայված տնտեսությամբ ի վիճակի չէր բավարարելու մերձավորարևելյան շուկաների պահանջներին, մյուս կողմից էլ չէր ուզում,՝ որ մի ուրիշը այդ դերը կատարի, ուստի Միդլ Իստ Սըպպլայ Սենտրալի միջոցով նա կարողացավ կաշկանդել ամերիկյան առևտուրը այս շուկաներում, որպիսի հանգամանքը անընդհատ բախումների տեղիք էր տալիս կազմակերպության անգլիական և ամերիկյան ներկայացուցիչների միջև։

---

[1] Lord Rennel of Rodd, British Military Administration of occupied territories in Africa, London, 1948, p. 470.

Այս կազմակերպության շրջաններում անգլո-ամերիկյան հակամարտությունները առավել ևս սրվեցին, երբ 1944 թ. հունվարին ամերիկյան արտահանողները շրջանցելով Միջ Իսա Սբոպլայ Սենատորի հեղինակությունը, մերժեցին ճանաչել նրա իրավասությունը Մերձավոր Արևելքի այն երկրների նկատմամբ, որոնք ուղղակի անգլիական օկուպացիայի տակ չէին գտնվում և սկսեցին այդ շուկաները ողողել իրենց ապրանքներով։ Այս դեպքը եկավ մի անգամ ևս հաստատելու, թե որքան խախուտ էին անգլո-ամերիկյան «գործակցության» հիմքերը։ Գաղտնիք չէր, որ Սենատորի ներսում ներմուծումների հսկողության իրավունքը, որը գտնվում էր անգլիացիների ձեռքում, ամերիկացիները հալիվ էին հանդուրժում։ Ամերիկացի արտահանողները ուրիշ էին սպասում լիկվիդացնելու իրենց համար բոլորովին աննպաստ անգլո-ամերիկյան այս «համագործակցությունը»։ Սենատորի ներսում ծավալվող տարաձայնությունների հետևանքով ամերիկյան ներկայացուցչության ղեկավար Լանդիսը 1945 թվականի սկզբներին հրաժարվեց այդ կազմակերպությունից։ Հրաժարվելուց անմիջապես հետո հանդես գալով Ֆիլադելֆիա քաղաքում «Քաղաքական և հասարակական գիտությունների ակադեմիայում», Լանդիսը մանրամասնորեն բացատրեց Միջ Իսա Սբոպլայ Սենատորի ներսում գոյություն ունեցող անգլո-ամերիկյան հակամարտությունների պատճառները։

Լանդիսի հրաժարումով վերջ տրվեց անգլիացիների այն բոլոր հույսերին, թե պատերազմից հետո ևս հնարավոր կլինի պահպանել Սենատորի գոյությունը։ Իսկ Վաշինգտոնի շրջանները մի անգամ ընդմիշտ համոզվեցին, որ պատերազմը վերջանալուց հետո ԱՄՆ-ի առևտրականների համար ամենաձեռնտուն այս կազմակերպության շուտափույթ լիկվիդացումն է։

Պատերազմից հետո այս կազմակերպության լիկվիդացման առաջին գլխավոր պատճառը եթե համարենք անգլո-ամերիկյան հակամարտությունը, ապա երկրորդ գլխավոր պատճառը անպայման պետք է համարել տեղական ժողովրդի ատելությունն արևմտյան իմպերիալիզմի և նրա կողմից հովանավորվող բոլոր տիպի կազմակերպությունների նկատմամբ։

Միջ Իսա Սբոպլայ Սենատորի ղեկավարությունը այս կազմակերպության հիմնադրման օրից մինչև լիկվիդացումը իր գործու-

---

[1] J. M. Landis, Anglo-american cooperation in the Middle East, Annals of the Academy of Political and Social Sciences, vol. 240, July 1945, էջ. 64—72.

նեությանը մասնակից չդարձրեց տեղական իշխանություններին։ Այդ իհարկե դաղութարարների յուրահատուկ վերաբերմունք է տեղական ժողովուրդների նկատմամբ։

Որո՞նք էին Միդլ Իստ Սըպպլայ Սենտրի նկատմամբ տեղական ժողովրդի և իշխանությունների ատելության պատճառները։

Առաջին՝ այն հանգամանքը, որ այս կազմակերպությունը անգլո-ամերիկյան իմպերիալիզմի ձեռքում մի նոր միջոց էր պատերազմի ժամանակաշրջանում Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդներին ճնշելու համար։

Երկրորդ՝ այս կազմակերպությունն ատելի էր այդ երկրների պրոգրեսիվ տարրերի համար, որովհետև նա ոչ միայն չէր ձգտում բարելավելու ժողովրդական մասսաների դրությունը, այլև աշխատում էր հավերժացնել մասսաների շահագործումը։

Երրորդ՝ տեղական մասնակցության բացակայությունը։

Չորրորդ՝ այս կազմակերպությունը նույնքան էլ ատելի էր տեղական շահագործող դասակարգի համար, որովհետև անգլո-ամերիկյան իմպերիալիստները հաճախ անտեսում էին տեղական բուրժուազիայի և առհասարակ իշխող դասակարգի շահերը։

Հինգերորդ՝ այս կազմակերպությունն ատելի էր այդ երկրների ժողովրդի լայն մասսաների համար, որովհետև նրան չհաջողվեց, գուցե և չցանկացավ վիթխարի չափերի հասնող ինֆլյացիայի առաջն առնել։ Պատերազմի տարիներին կենսամթերքների գները Եգիպտոսում աճեցին երեք անգամ, Իրաքում՝ չորս անգամ, Սիրիայում և Լիբանանում՝ հինգ անգամ, Իրանում՝ յոթ անգամ[1] և այլն։ Եվ այս դեպքում չէր ներկայացնում գների աճման իսկական պատկերը։ Կառավարական և օկուպացիոն իշխանությունների կողմից ճանաչված և ընդունված պաշտոնական գներին զուգընթաց կային նաև սև շուկայի գները, որոնք նշվածների հետ համեմատած, է՛լ ավելի վիթխարի չափերի էին հասել, և այդ հանգամանքը մեծապես սահմանափակում էր լայն մասսաների գնողունակությունը։

Այս կազմակերպության լիկվիդացման պատճառներից մեկն էլ պիտի համարել անգլո-ամերիկյան իմպերիալիստների հակասությունները Սենտրի ներսում։ Ճիշտ է, պատերազմի տարիներին այս երկու պետությունները իրար հետ «գործակցեցին», սակայն այդ մի դրություն էր, որ հավիտ թե հանդուրժելի էր հատ-

---

[1] Աղբյուրները, A. R. Prest, War Economics of Primary Producing Countries, Cambridge 1948; A. W. Ford, Anglo-Iranian Oil Dispute, 1951 – 1952, Los Angeles, 1954, p. 37, p. 248.

կապես Ուոլլ սթրիթի մագնատների համար, որոնք իրենց ի վիճակի էին զգում, պատերազմի տարիների սահմանափակումների վերացումից հետո, անգլիական կապիտալը և առևտուրը դուրս մղելու համաշխարհային շուկաներից։

Հետպատերազմյան տարիների ամերիկյան էքսպանսիոնիզմը բնութագրելիս, Հ. Կլոդը[1] գրում է, որ նա ոչ մի սահման չի ճանաչում։ ԱՄՆ-ը ֆինանսական և արդյունաբերության տարածքում այնպիսի վիթխարի հզորության է հասել, որ մերժում է ուրիշ երկրների մասնակցությունը «ազդեցության ոլորտների» և «տերիտորիալ անեքսիաների» գործում։ Ամերիկյան իմպերիալիզմը, որի հավակնությունները չափազանց մեծ են, այժմ հետապնդում է ոչ թե աշխարհի վերաբաժանման նպատակ, այլ աշխարհի անբաժան և միայնակ տիրապետություն։ Եվ որպես ամերիկյան մոնոպոլիստական շրջանների այս տեսակետի թարգման, պրեզիդենտ Տրումենը հանդես գալով, ասաց՝ «...մեզ վիճակված է լինել աշխարհի առաջնորդը...»[2]։ Ուստի ԱՄՆ-ին հարկավոր էր դիմադրել և փշրել այն բոլոր խոչընդոտները, տնտեսական, թե քաղաքական, որոնք արգելակում էին ամերիկյան էքսպանսիայի ընթացքը։ Այս նշանակում էր նաև, որ ԱՄՆ-ը պետք է փշրեր Անգլիայի ցուցաբերած դիմադրությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում։ Անգլիական կապիտալիստական շրջանները դիտեին, որ ապատ մրցման պայմաններում ի վիճակի չէին դիմանալու ամերիկյան մոնոպոլիստների կրկնվող հարվածներին, ուստի համառ կերպով ձգտում էին այս կազմակերպությունը պահել նաև հետպատերազմյան տարիներին։ Արձագանքելով Միտիի ցանկությանը, անգլիական մամուլը պատերազմին անմիջապես հաջորդող տարիներին հանդես եկավ անգլիական և ամերիկյան «համագործակցությունը» շարունակելու թեզիսով։ Միդլ Թաուն Սքոլլայ Սենտրը, գրավում էր այդ մամուլում[3], այս երկու պետությունների միջև տնտեսական և քաղաքական «համագործակցության» մի ցայտուն օրինակ է, որը պետք է շարունակել նաև պատերազմից հետո։ Անգլիացիների այս ցանկությունը, բնորոշ կերպով արտահայտել է «Новое Время» ժուռնալը, որ «...երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում, Մերձավոր Արևելքի երկրներում ազգային-ազատագրական շարժման

---

[1] H. Claude, Où va l'Impérialisme Américaine. Paris, 1950, p. 166.

[2] Պրեզիդենտ Տրումենի ճառը Ֆորտ Բեննինգում, 1950 թ. ապրիլի 24-ին։

[3] Տե՛ս Economist, Statist, Spectator, Financial Times, Daily Mail, London Times, և այլի 1946 և 1947 թվականների համարները։

զարգացման նոր թափի պայմաններում, անգլիական իմպերիալիզմը իրեն թուլացած զգալով հանգում է այն համոզմանը, որ առանց ԱՄՆ-ի գործակցության իրեն չի հաջողվի խեղդել ժողովուրդների անկախության համար մղած պայքարը։ Հենց դրա հետևանքով, Անգլիայի ղեկավար շրջանները առաջարկեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որպեսզի նրանք ևս մասնակից դառնան այս շրջանում «քաղաքական կայունությունը» պահպանելու գործում, այսինքն՝ մասնակցեն Մերձավոր և Միջին Արևելքի գաղութացման գործին։ Ուոլլ ստրիտը իսկույն ևեթ օգտվեց այս առիթից։ Հետևանքը եղավ այն, որ քիչ ժամանակից հետո ԱՄՆ-ը այնքան ամուր ոտք դրեց Թյուրքիայում, որ Սաուդական Արաբիայից հետո այս երկիրը դարձավ ամերիկյան իմպերիալիզմի երկրորդ կարևորագույն հենարանը։ Սակայն, շատ չանցած, Ուոլլ ստրիտի կրտսեր ընկերակիցը նկատեց, որ ինքը արդեն «բաց է թողել այծը բանջարանոցում»[1]։ Եվ իսկապես, օգտվելով Անգլիայի տնտեսական և քաղաքական թուլացումից, ԱՄՆ-ը սկսել էր շահագրգռություն ցուցաբերել նույնիսկ իր կրտսեր ընկերակցի վաղեմի գաղութների և ազդեցության ոլորտների նկատմամբ։ Այդ ոլորտներից մեկն էր նաև Մերձավոր ու Միջին Արևելքը։ Նավթը, այս տերիտորիաների ռազմա-ստրատեգիական նշանակությունը և, վերջապես, սպառման շուկաները հանդիսանում էին այն գլխավոր դրդիչները, որոնք է՛լ ավելի ուժեղացնում էին ամերիկյան իմպերիալիզմի շահագրգռվածությունը այս երկրների նկատմամբ։

Անգլիական իմպերիալիստները, որոնց հաջողվել էր Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծել «բրիտանական նավթային բլոկ», պատերազմից հետո ամերիկյան նավթային մոնոպոլիստների ուժեղ ճնշման հետևանքով զիջեցին իրենց հեգեմոն դիրքերը, այստեղ ևս դառնալով ամերիկյան հետպատերազմյան ընդհանուր քաղաքականության կցորդը։

Երկրորդ համաշխարհային պատերազմը հաղթ վերջացած, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում գործող «Ամերիկյան տնտեսական միսիայի» նախագահ Կլեյբրտսոնը առաջ քաշեց այդ երկրները ամերիկյան էքսպանսիային ենթարկելու անհետաձգելի հարցը։ Մինչ այդ Ուոլլ ստրիտի մագնատները իրենց գործունեությունն արդեն տարածել էին նաև Մերձավոր ու Միջին Արևելքում։ Վերջին տասը տարվա տվյալները (1944—1954) ցույց են տալիս, որ Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան կապիտալ ներ-

---

[1] Новое Время, 1950, март 1, № 9, стр. 3—8.

դրումները եղել են 2595 միլիոն դոլլար, որը կազմում է օտարերկրյա ընդհանուր կապիտալ ներդրումների (3823 միլիոնի) 68 տոկոսը։ Այս ընդհանուր կապիտալ ներդրումների 90 տոկոսը կատարվել է նավթարդյունաբերության ասպարեզում (այս կապակցությամբ տե՛ս աղյուսակ 19)։ Բացի այդ, տխրահռչակ «4-րդ կետի»[1] պայմանների համաձայն, ԱՄՆ-ը 1945 թվականից մինչև 1952 թվականը, այս երկրներում ծախսել է 2500 միլիոն դոլլար[2]։ Պարզ է, որ այս կեղծ «օգնության» փոխարեն նա ձեռք է բերել հատուկ արտոնություններ, որոնց հետևանքով այդ երկրները ստրկացրել է։ Այնուհետև, փաստեր կան, որ այդ գումարի մեծագույն մասը ծախսվել է ռազմական նշանակություն ունեցող օբյեկտների վրա։

Աղյուսակ 19

Ամերիկյան նավթային մոնոպոլիաների՝ Մերձավոր և Միջին Արևելք ներթափանցելու ժամանակագրական պատկերը

Ներթափանցման տարեթվերը	Նավթարդյունաբերող երկրները	Մասնակցության բաժինը տոկոսով
1927—1928	Իրաք	23,75
1930-1931	Բահրեյն	100,00
1933—1939	Սաուդական Արաբիա	100,00
1934—1946	Կուվեյտ	50,00
1954	Իրան	40,00

Բրիտիշ Յունայտեդ Պրեսի Մերձավոր Արևելքի թղթակիցը հիմնվելով հետպատերազմյան իրադարձությունների վրա, ամերիկյան ներթափանցումը բնութագրելիս ընդգծում է հիմնական հինգ ձևերը.

1. Մերձավոր և Միջին Արևելքում մինչ այդ գործող ամերիկյան նավթային ընկերությունները պատերազմից հետո ավելացնելով իրենց կապիտալ ներդրումները, տարածում և ընդլայնում են իրենց

---

[1] Տխրահռչակ 4-րդ կետը Տրումենի պրեզիդենտության ժամանակ ընդունված օրենքներից է, որը, այսպես կոչված, անտեսական հետամնաց երկրներին կեղծ օգնություն ցույց տալու պատրվակով ծառայում է ամերիկյան իմպերիալիզմի՝ օտար երկրներ ներթափանցելու գործին։

[2] E. C. Mattison. A Survey of American Interests in the Middle East, Washington, D. C., 1953, p. 11.

գործունեությունը ու փորձում են ավելի մեծ դեր խաղալ այդ երկրների տնտեսության մեջ։

2. Ամերիկյան էքսպորտ-իմպորտ բանկը Մերձավոր և Միջին Արևելքում խոշոր վարկեր բաց թողնելով, խթանում է ամերիկյան ֆինանսական կապիտալի ներթափանցումը։

3. Պետական դեպարտամենտը ամեն մի առիթով միջամտում է այդ երկրներում գործող ամերիկյան առևտրականների օգտին։

4. Ամերիկյան օդային տրանսպորտի ընկերություններն այս երկրների վրայով անընդհատ նոր մարշրուտներ են հաստատում։

5. Եվ, վերջապես, ամերիկյան ծովային տրանսպորտի ընկերությունները Միջերկրականում ու Կարմիր ծովում, ինչպես նաև Հնդկական օվկիանոսում ու Պարսից ծոցում նոր բազաներ են ստեղծում[1]։

Այսպիսով, եթե առաջ անգլիական մոնոպոլիաներն էին իրենց ձեռքում պահում Մերձավոր և Միջին Արևելքի նավթային հարստությունների մեծագույն մասը, ապա ներկայումս, Սաուդական Արաբիայի նավթային խոշոր պաշարների հայտնաբերումից և իրանական նավթի վերաբերյալ վերջին «համաձայնությունից» հետո, գերիշխող դիրք են գրավել ամերիկյան մոնոպոլիաները (ըստ 1955 թ. տվյալների, Մերձավոր և Միջին Արևելքի նավթային պաշարների 60 տոկոսը)[2]։

Ինչ վերաբերվում է նավթահանմանը, ապա անգլիական մոնոպոլիաների բաժինը Մերձավոր և Միջին Արևելքում, 1939 թվականի 70 տոկոսի դիմաց, 1954 թվականին իջավ 28%-ի, իսկ ամերիկյանը 15%-ի դիմաց բարձրացավ 65%-ի։ Այս հարաբերության դինամիկան ըստ տարիների ներկայացնում է հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 20)։

Եթե առաջ այս երկրներում մեծաքանակ առևտրի մոնոպոլիան պատկանում էր Անգլիային, ապա այժմ արդեն այս շուկաներում գերազանցապես իշխում են ամերիկյան ապրանքները։ 1953 թվականի տվյալների համաձայն, ԱՄՆ-ից Լիբանան ներմուծված ապրանքների ընդհանուր արժեքը կազմել է 42,6 միլիոն լիբանանյան լիրա, մինչդեռ այս երկիրը Ֆրանսիայից ներմուծել է 31,0 միլիոն լիբանանյան լիրա արժողությամբ ապրանք, իսկ Անգլիայից՝ ըն-

---

[1] Great Britain and the East. August 1946, M E. p. 48.

[2] 1947—1948 թթ. Մերձավոր Արևելքի նավթային պաշարների 52 տոկոսը դեռևս գտնվում էր անգլիական մոնոպոլիաների ձեռքում, իսկ ամերիկյան մոնոպոլիաներին էր պատկանում միայն 42 տոկոսը (այս մասին տե՛ս Mikesell and Chenery, Arabian Oil, New York, 1949, p. 27)։

Աղյուսակ 20

Տարեթվեր	Մերձավոր Արևելքի նավթահանումը միլիոն տոննաներով	Ամն-ի բաժինը	
		միլիոն տոննաներով	տոկոսներով
1939	17,0	2,6	15,3
1947	58,9	21,2	36
1950	87,6	40,6	46,3
1951	97,5	56,0	57,2
1952	105,0	61,5	58,5
1953	121,8	71,5	58,7
1954	133,3	86,6	65,0
1955	162,1	87,0	54,0[1]

դամենը 25,1 միլիոն լիրայի։ Սիրիան ԱՄՆ-ից այդ նույն թվականին ներմուծել է 37,7 միլիոն սիրիական լիրա արժողությամբ ապրանք, մինչդեռ Անգլիայից՝ 33,3 միլիոն լիրայի, իսկ Ֆրանսիայից՝ 32,7 միլիոն լիրայի[2] և այլն։ Այստեղ պետք է նշել, որ եթե հաշվի չառնենք նավթի և նավթամթերքների արտահանումները (քանի որ նավթարդյունաբերությունը Մերձավոր և Միջին Արևելքի տնտեսության մեջ գրավում է յուրահատուկ տեղ), «Օրիան» թերթի տվյալների համաձայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այս երկրներում ներմուծումներն ավելի արագ տեմպերով են աճել, քան արտահանումները։ Նույն թերթի ասելով, պատերազմին հաջորդող 10 տարիները այս կապակցությամբ կարելի է բաժանել 3 հատկանշական ժամանակաշրջանների. առաջին՝ 1945—1949 թվականները, որը ապրանքների գների անկման և տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջան կարելի է համարել, երկրորդ՝ 1950—1952 թվականները, Կորեայի պատերազմի հետևանքով հումքի գների բարձրացում, ուստի առևտրի արհեստական աշխուժացում, և վերջապես 1953—1954 թվականները, «Բումի» ազդեցության թեթևացում, գների անկում, շուկայի աշխուժացման թուլացում[3]։

Եթե առաջ անգլիական իմպերիալիզմը իր ձեռքում էր պահում դեպի այդ երկրները տանող ջրային կոմունիկացիաները, տպա այժմ

---

[1] 1955 թվականի ամերիկյան բաժնի անկումը բացատրվում է նրանով, որ Իրանի նավթարդյունահանման վերականգնման հետևանքով անգլոհոլանդական մոնոպոլիաների բաժինը բարձրացավ։

[2] Middle Eastern Affairs, August - September, 1954, pp. 292 – 293.

[3] L' Orient, 3 Juillet, 1955. Beyrouth.

Միջերկրական ծովում ամերիկյան նավերի երթևեկը անհամեմատ աճել է, Պարսից ծոցում կան ամերիկյան բազմաթիվ բազաներ, որոնք խախտել են անգլիական հեգեմոնիան[1]։

Եթե առաջ այս երկրներում կային միայն անգլիական օդանավակայաններ, այժմ այդ տերիտորիաների օդային տարածությունների հսկողությունը նույնպես անցել է ամերիկացիների ձեռքը։ Ամերիկյան օդային տրանսպորտի այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են՝ Պան-Ամերիկը Ուորլդ Էրվեյզ և Տրանս-Ուորլդ Էրվեյզ, այժմ ավելի մեծ աշխուժություն են ցուցաբերում Մերձավոր և Միջին Արևելքում, քան անգլիական Բրիտիշ Օվերսիզ Էրվեյզը և այլ ընկերությունները։ Բացի այդ, այսպես առերևույթ տեղական օդային տրանսպորտի ընկերություններից շատերը իրականում հանդիսանում են ամերիկյան օդային տրանսպորտի մոնոպոլիաների դուստր-ընկերություններ, օրինակ՝ Սաուդական Արաբիայի Օդ-ընկերությունը, Եթովպիական Օդ-ընկերությունը, Սիրիա-Լիբանանի Օդ-ընկերությունը և ուրիշներ[2]։

Ամերիկայի Միացյալ Նահանգների ներթափանցումը Մերձավոր և Միջին Արևելքի երկրները,— գրում է «Սոլհ էլ Օմահ» տեղական հասարակական կարծիքը արտահայտող ժուռնալներից մեկը, սկսվեց Սաուդական Արաբիայով։ Ձեռք բերելով Սաուդական Արաբիայի նավթային հարստությունների շահագործման համար լայն կոնցեսիաներ, ամերիկացիները այս երկրի տնտեսությունը ենթարկեցին իրենց ազդեցությանը, և նրանց հաջողվեց շատ կարճ ժամանակի ընթացքում դուրս վանել անգլիական ազդեցության նույնիսկ վերջին մնացուկները։ Սաուդական Արաբիայից հետո հերթը հասավ Բյուրքիային, որը, թերթի ասելով, վեր է ածվել ամերիկյան դաղութի։ Ապա եթե սրանց վրա ավելացնենք Իսրայելի նորաստեղծ պետությունը, շարունակում է հոդվածագիրը, մենք, ուրեմն, կանգնած կլինենք այն փաստի առաջ, որ Մերձավոր և Միջին Արևելքի կարևորագույն ռազմա-ստրատեգիական դիրքերի մեծ մասը այժմ արդեն դանվում է ամերիկացիների հսկողության տակ։ Այնուհետև,

---

[1] Արդեն այդ երկրների հետ կանոնավոր կապ է պահպանվում ծովային տրանսպորտի հետևյալ մոնոպոլիստական խոշորագույն ընկերությունների միջոցով՝ Pacific Far East Line; United States Line, Inc.; U. S. Petroleum Carriers, Inc.; American Export Lines, Inc., American President Lines, Inc.; Isthmian Steamship Lines; Likes Brothers Shipping, Inc.; North American Shipping and Trading Company; Overseas Tankship Corporation.

[2] F. C. Mattison, A Survey of American Interests in the Middle East, Washington, D. C., 1953, pp. 27—28.

խոսելով Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների մասին Իրանում, թերթը նշում է, որ հակասությունները այս երկու իմպերիալիստական պետությունների միջև Իրանում նույնպես ստացել են չափազանց սուր բնույթ։ Այստեղ ԱՄՆ-ը փորձում է իր հեգեմոնիան տարածել ֆինանսական և ռազմական կնքած օգնություն ցույց տալու պատրվակով։ Իսկ ինչ վերաբերում է Սիրիային և Լիբանանին, «Սոլհ էլ Օմահ» թերթը նշում է, որ այդ երկրներում ևս այս երկու իմպերիալիստական տերությունների միջև տեղի է ունենում կատաղի պայքար։ Զգտելով ամրապնդել իր խարխլված դիրքերը, Մեծ Բրիտանիան առաջ էր քաշում Մեծ Սիրիայի ծրագիրը՝ իր վասալ Հորդանանի գլխավորությամբ։ Զգտելով ձախողել Անգլիայի այս փորձերը, ԱՄՆ-ը, մյուս կողմից՝ ստիպում էր սիրիական կառավարությանը դաշինքի մեջ մտնել Թյուրքիայի հետ։ Վերջապես, վերլուծելով անգլո-ամերիկյան հակասությունների ողջ ընթացքը Եգիպտոսում, թերթը եզրակացնում է, որ այդ երկրում նույնպես անգլիական գիվանագիտությունը տեղի է տալիս ԱՄՆ-ի դիվանագիտությանը[1]։

Ինքնին հասկանալի է, որ ամերիկյան էքսպանսիայի այս տարածումն ուժեղացնում էր անգլո-ամերիկյան հակամարտությունը։ Իրադարձությունները ցույց են տալիս, որ Անգլիան իր դիրքերը զիջում է, ոչ հեշտությամբ։ Պայքարը անգլիական և ամերիկյան խոշոր մոնոպոլիաների միջև շատ սուր բնույթ է ընդունել։ Այդ պայքարում իմպերիալիստական այս երկու պետությունների մոնոպոլիստները դիմում են ամեն միջոցի, անգամ կառավարական հեղաշրջումների և բարձրաստիճան պետական գործիչների սպանության։ Ակնհայտ փաստեր կան, որ Մերձավոր և Միջին Արևելքում ներկայումս քաղաքական իրադարձությունների վրա մեծապես ազդում է անգլո-ամերիկյան հակամարտությունը, որն այս շրջանում ծավալվում է հատկապես նավթային խոշոր մոնոպոլիաների միջև մղվող պայքարի ֆոնի վրա։

Մերձավոր և Միջին Արևելքում անգլո-ամերիկյան հակասությունները արտահայտվում են նաև միջարաբական կռիվներում։ Սաուդի և Հաշիմի դինաստիաների միջև վաղուց ի վեր գոյություն ունեցող հակակրանքը շարաշահվում է անգլո-ամերիկյան մրցակիցների կողմից։ Իրաքը և մինչև վերջին ժամանակները Հորդանանը, որոնք զեկավարվում են Հաշիմի դինաստիային պատկանող թագավորների միջոցով, Անգլիայի հետ կապված են եղել մի շարք այնպի-

---

[1] Տե՛ս «Սոլհ էլ Օմահ», Կահիրե, 1949 թ., հուլիս։

սի ստրկացուցիչ պայմանագրերով, որոնք փաստորեն այդ երկրները վերածում են անգլիական իմպերիալիզմի վասալների։ Սաուդական Արաբիան, որի ամբողջ տնտեսությունը գտնվում է ամերիկյան մոնոպոլիստների ձեռքում, փաստորեն դարձել է Մերձավոր և Միջին Արևելքում յանկիների իմպերիալիզմի հենարանը։ Այնուհետև, եթե հաշվի առնենք Իսրայելի և ասրաբական երկրների միջև գոյություն ունեցող հակամարտությունը, որի հիմքում նույնպես ընկած են անգլո-ամերիկյան իմպերիալիստների հակասությունները, ապա կստանանք հետպատերազմյան Մերձավոր և Միջին Արևելքի ընդհանուր խառնաշփոթ պատկերը, որը լի է նոր հակասություններով, որոնք առավել ևս հրահրվում են անգլիական և ամերիկյան մոնոպոլիստների միջև մղվող պայքարից բխող ինտրիգների հետևանքով։

Ի Ր Ա Ն

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան իմպերիալիստների ներթափանցումը Իրան հասնում է զգալի չափերի, մեծ անհանգստություն պատճառելով անգլիական շրջաններին։ Պատերազմի առաջին իսկ տարիներից սկսած՝ ամերիկյան ապրանքները ողողում էին իրանական շուկան։ 1940 թվականին ամերիկյան ապրանքների ներմուծումը Իրան, նախորդ տարվա հետ համեմատած, աճում է 150 տոկոսով։ Այժմ արդեն ԱՄՆ-ը կարևոր տեղ է գրավում Իրանի արտաքին առևտրի մեջ։

1942 թվականին ամերիկյան իմպերիալիզմին հաջողվում է Իրանին պարտադրել կառավարության կից ընդունելու 60 ամերիկացի խորհրդատուների մի խումբ՝ մեկ ծանոթ Միլսպոյի գլխավորությամբ, որը միաժամանակ նշանակվում է Իրանի ֆինանսների ընդհանուր վարիչ։ Դոկտոր Ա. Ս. Միլսպոն վայելում էր իր այս պաշտոնի հետ կապված ամենալայն լիազորություններ, որոնք փաստորեն նրան դարձնում էին երկրի ողջ էկոնոմիկայի տերն ու տնօրենը։

Այդպիսի կարևոր և պատասխանատու պոստում Միլսպոյի ներկայությունը մեծ նշանակություն ունեցավ անգլիական մոնոպոլիստների դեմ ամերիկյան մոնոպոլիստների մղած պայքարում, քանի որ նա փաստորեն հանդիսացավ ամերիկյան մոնոպոլիստական շահերի պաշտպանը Իրանում։

Շուստերը, թեև ազգությամբ ամերիկացի էր, բայց այդ ժամանակ Պարսկաստանում ամերիկյան մոնոպոլիստների դեռևս

թույլ գործունեության հետևանքով առավելապես ծառայում էր անգլիական մոնոպոլիստների շահերին։ Մինչդեռ հետագայում, Միլսպոյի ծառայության ժամանակ, երբ ամերիկյան մոնոպոլիստների գործունեությունը Մերձավոր Արևելքում արդեն ընդունել էր ավելի մեծ մասշտաբներ և ավելի հետևողական բնույթ, ֆինանսների վարիչը ոչ միայն չէր ծառայում անգլիական մոնոպոլիստական շահերին, այլև ընդհակառակը, վնասում էր և, ուժեղ պայքար ծավալելով նրանց դեմ, ձգտում էր ըստ հնարավորին չեզոքացնել բրիտանական ազդեցության նույնիսկ վերջին մնացորդները։

Այդ նույն ֆոնի վրա զարգացող անգլո-ամերիկյան հակասությունները Իրանում էլ ավելի սրվեցին 1947 թվականի աշնանը, երբ տեղական կառավարությունը հրապարակեց «Երկրի վերակառուցման յոթնամյա ծրագիրը»։ Այդ ծրագիրը ֆինանսավորելու ցանկությունը նոր ուժգին սանձեց Ուոլլ ստրիտի և Սիտիի տերերի միջև պայքարի համար։ Այս պայքարում անգլիական կապիտալիստները պարտվեցին, քանի որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քաղաքականապես և ֆինանսապես թուլացած լինելով, նրանք անմիջապես տրամադրելի խոշոր գումարներ չունեին։ Մինչդեռ ԱՄՆ-ի կապիտալիստները իրանական կառավարությանն առաջարկեցին 250 միլիոն դոլլարի հասնող վարկեր բաց անել, որոնց հետ, սակայն, կապված էին ստրկացուցիչ պայմաններ, այդ թվում նաև այն, որ նշված այդ գումարները պետք է ծախսվեն ամերիկացիներից կազմված հատուկ հանձնաժողովի դիտակցությամբ և հրահանգությամբ։

Պարզ է, որ ամենակաշառված կառավարությունն անգամ չէր կարող առանց որևէ դիմադրություն ցուցաբերելու համաձայնել ամերիկացիների առաջարկած այսպիսի ստրկացուցիչ պայմաններին։ Հակառակ դրան, շատ չանցած, «Երկրի վերակառուցման յոթնամյա ծրագիրը» մշակելու գործը հանձնվեց Օվերսիզ Կոնսալտանտ Ինկորպորեյտեդ ֆիրմային, որը Ստանդարդ Օյլ օֆ Նյու-Ջերզեյի օժանդակ ընկերություններից մեկն է։

1949 թվականին Վաշինգտոնից Թեհրան ուղարկվեցին «Երկրի վերակառուցման յոթնամյա ծրագիրը» մշակողների եզրակացությունները ու ցուցումները՝ ամփոփված հինգ ստվարածավալ հատորներում, ընդամենը 1250 էջ։ Ծրագիրը նախատեսում էր յոթը տարվա ընթացքում 650 միլիոն դոլլար ծախսումներ։ Այնուհետև ծրագրի իրագործման կապակցությամբ ամերիկացի մասնագետներ օգտագործելու հարցի շուրջը բանակցություններ սկսվեցին երկու կառավարությունների միջև։

Իրանում անգլիական ազդեցության թուլացման մի ուրիշ վիճաստը եղավ այն, որ 1947 թվականին իրանական կառավարությունը հանդգնեց, թեև երկչոտ կերպով, ցանկություն հայտնելու վերանայել 1933 թվականին Անգլո-Իրանական նավթային ընկերության հետ կնքված համաձայնությունը։

Իրանական կառավարության և Անգլո-Իրանական նավթային ընկերության միջև երկար բանակցություններից հետո, Ֆորեյն Օֆֆիսի ճնշման տակ, 1949 թ. հուլիսի 17-ին կայացավ նոր համաձայնություն։ Ըստ այս նոր համաձայնության, կոնցեսիոն վճարը աննշան կերպով բարձրացվեց, սակայն մյուս բոլոր ստրկացուցիչ պայմանները մնացին անփոփոխ։ Համաձայնությունն ստորագրող կողմերն էին՝ Իրանի ֆինանսների մինիստր Աբբաս Ղոլի Գոլշայան և Անգլո-Իրանական նավթային ընկերության ներկայացուցիչ Նեվիլ Գասը։

Ամրապնդելով Անգլո-Իրանական նավթային ընկերության դիրքերը, այս նոր համաձայնությունը, միաժամանակ խորտակում էր ամերիկյան նավթային մոնոպոլիստների բոլոր հույսերը Իրանի նավթի նկատմամբ։ Ուստի Ուոլլ ստրիտի գործակալների միջամտության հետևանքով, այդ համաձայնագիրը 1949 թ. հուլիսի 26-ին մեջլիսում չվավերացվեց։

Սակայն, 1950 թ. հունիսին, երբ անգլիական օրիենտացիայի ջատագով գեներալ Ռազմարան իշխանության գլուխ է անցնում, նոր պրեմյեր-մինիստրը իսկույն ևեթ լուծում է Օվերսիզ Կոնսալտանտ Կորպորեյշընի հետ կնքված համաձայնությունները և միաժամանակ կարգադրում է, որպեսզի Իրանում գործող բոլոր ամերիկացի «մասնագետները» երկրից հեռացվեն։ Ռազմարան հետ է կանչում իրանցի այն բոլոր սպաներին, որոնք ուղարկվել էին Ամերիկա՝ կատարելագործվելու և, վերջապես, Թեհրանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Գրեյդիին հայտնում է, թե Իրանը այլևս ամերիկյան օգնության կարիքը չի զգում։

Կողմնակից լինելով 1949 թ. հուլիսի 17-ի համաձայնությանը, Ռազմարան խոսք է տալիս Անգլո-Իրանիան նավթային ընկերության ներկայացուցչին, որ ինքը ամեն ջանք կգործադրի, որպեսզի հիշյալ համաձայնությունը վավերացվի մեջլիսի կողմից։ 1951 թ. մարտի 2-ին մեջլիսում հանդես գալով ի պաշտպանություն Անգլո-Իրանիան ընկերության, Ռազմարան կաշվից դուրս էր գալիս ապացուցելու, որ երկրի նավթային հարստություններն ազդայնացնելու դեպքում իրանական կառավարությունն ստիպված պիտի լինի այդ ընկերությանը որպես փոխհատուցում վճարել մի վիթխարի գու-

մար՝ 300—500 միլիոն ֆունտ ստեռլինգ և որ առհասարակ ցանկալի չէ անգլիական կառավարությանը թշնամացնել։

Այսպիսի իրադրության մեջ, որը մեծապես վնասում էր ամերիկյան հեղինակությանը Իրանում և, մանավանդ, ի չիք էր դարձնում Ուոլլ ստրիտի մոնոպոլիստների տածած բոլոր հույսերը, ինքնըստինքյան հասկանալի է, որ Ռազմարայի կառավարության հակաամերիկյան նոր քաղաքականությունը դուր չեկավ ամերիկյան մոնոպոլիստներին։ Օգտագործելով ժողովրդական լայն մասսաների իրավացի պահանջները երկրի նավթային հարստություններն ազգայնացնելու կապակցությամբ, ԱՄՆ-ի մոնոպոլիստներն սկսեցին լայն պրոպագանդա ծավալել այդ ուղղությամբ։ Այս անելով, Ուոլլ ստրիտի մագնատները հետապնդում էին երկու նպատակ, առաջին՝ Անգլո-Իրանական նավթային ընկերության լիկվիդացումով ջլատել անգլիական ազդեցությունը Իրանում, երկրորդ՝ Իրանի կառավարությանը պարտադրել անգլիական կապիտալի ու մասնագետների փոխարեն օգտագործել ամերիկյանը։

Նրանք բնավ չէին պատկերացնում, որ իրանական ժողովուրդը կարող է այս հարցի կապակցությամբ վճռականություն ցուցաբերել և որոշել այդ հարստությունների շահագործումը վերակազմակերպել ամբողջովին և բացառապես տեղական միջոցներով։

Ռազմարան, որ կողմնակից էր 1949 թվականի համաձայնությանը, ուժեղ դիմադրում է երկրի նավթային հարստություններն ազգայնացնելու ժողովրդի ցանկությանը։ Այս պայմաններում Ռազմարայի՝ իշխանության գլուխ լինելը արդելք էր հանդիսանալու ամերիկյան ծրագրերի իրագործմանը։ 1951 թ. մարտի 7-ին Ռազմարան սպանվեց։ ԱՄՆ-ի դեմ ծավալվող անբարենպաստ քաղաքականությունն իսկույն ևեթ դադարեց։

Նյու-Յորքի «Դեյլի Ուորկեր»-ի թղթակիցը 1951 թ. մայիսի 18-ի համարում այս կապակցությամբ գրում է. «...Պետական դեպարտամենտի օդնական քարտուղար Մակգին Իրան և Մերձավոր Արևելք է ուղարկվել հատուկ հանձնարարություններով։ Նրա միսիան մեզ շատ է հիշեցնում Ջոն Ֆոստեր Դալլեսի միսիան Կորեայում։ Մակգիի այցելությունը Թեհրան՝ տարօրինակ կերպով զուգադիպում է Ռազմարայի սպանությանը և մեջլիսում Իրանի նավթը ազգայնացնելու որոշման հետ»։

Ռազմարային հաջորդող Հուսեյն Ալայի կառավարությունը չկարողանալով կողմնորոշել նավթի ազգայնացման կապակցությամբ անգլիական թե ամերիկյան օրիենտացիա վարելու հարցում, շատ կարճատև կյանք (ընդամենը 51 օր) է ունենում, ուստի Մո-

սադդիկը, որ մեջլիսում օպոզիցիայի լիդեր և «ազգային ճակատի» անդամ էր, նավթի ազգայնացման հարցի ջատագովներից ամենաուժեղը, ապրիլի 28-ին հրավիրվում է նոր կառավարություն կազմելու։

Մինչ այդ 1951 թ. մարտի 8-ին այս նպատակի համար մեջլիսի անդամներից կազմած հատուկ հանձնաժողովը առաջարկել էր ժողովին հաստատել երկրի նավթային հարստությունները ազգայնացնելու որոշումը։ Մի շաբաթ անց, մարտի 15-ին մեջլիսը ընդունում է Իրանի նավթային հարստությունները ազգայնացնելու կապակցությամբ որոշում, որը մարտի 20-ին ստանում է սենատի հավանությունը։ Ապրիլ ամսին ավելի մանրամասն որոշում է անցկացվում, որը թե՛ մեջլիսի և թե՛ սենատի կողմից իսկույն ևեթ հաստատվում է։

Հաշվի առնելով ժողովրդական լայն մասսաների ցանկությունը, նորընտիր պրեմյեր-մինիստրը մեջլիսի 1951 թ. մայիսի 2-ի նիստում պահանջում է ստուգել Անգլո-Իրանական նավթային ընկերության հաշիվները։ Այս կապակցությամբ դոկտոր Մոսադդիկը հայտարարում է, թե Իրանին պետք է վերադարձվի այն ամբողջ գումարը, որ զեղչվել է Մեծ Բրիտանիայի նավատորմին նավթամթերք վաճառելու ժամանակ։ Ընկերությունն իրավունք չուներ բրիտանական նավատորմին նավթ վաճառել համաշխարհային շուկայում գոյություն ունեցող գներից ավելի ցածր։ Նույն առթիվ նա հայտնել է այն կարծիքը, որ Անգլո-Իրանական նավթային ընկերության հետ 1933 թվականի կնքված պայմանագիրն ստորագրված լինելով ճնշման տակ, չի կարող օրինական համարվել։

Երկրի նավթային հարստություններն ազգայնացնելու մասին իրանական կառավարության որոշումը, և այդ հարցի կապակցությամբ Մոսադդիկի ելույթը մեծ հուզում առաջացրեց Լոնդոնի պաշտոնական շրջաններում։ Լոնդոնի ֆինդային բորսայում Անգլո-Իրանական նավթային ընկերության ակցիաների գները խիստ ընկան։ Այս կապակցությամբ 1951 թ. մարտի 16-ին «Դեյլի Ուորկը»-ի թղթակիցը գրում է. «...Վերջին իրադարձությունները Սիտիի վրա անդրադառնալու հետևանքով, սովորական ակցիաների գները 3 միլիոն ֆունտ ստեռլինգով ընկան, այդպիսով՝ Պարսկաստանի պրեմյեր-մինիստր գեներալ Ռազմարայի սպանությունից հետո ակցիաների գների անկումը հասավ 9 միլիոն ֆունտի»։ Մինչդեռ Թեհրանում «...ազգայնացման մասին մեջլիսի միաձայն որոշումը իրանական ժողովրդի կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ։ Պառլամենտի շենքի առջև մեծ բազմություն էր հավաքվել այն ժամանակ,

երբ «նավթի հանձնաժողովը» կատարում էր իր աշխատանքները։ Որոշումները բուռն ծափահարություններով ընդունվեցին ժողովրդի կողմից»։

Այդ որոշման դեմ անգլիական կառավարության միջոցառումների մասին նույն հոդվածում նշվում է. «...Այդ ազգայնացման որոշումը չեղյալ համարելու համար Բրիտանիան դիվանագիտական ճանապարհով և գաղտնի կերպով ազդեցություն է գործում պալատական շրջանների, ինչպես նաև պառլամենտի ազդեցիկ անդամների և, վերջապես, իրանական կառավարական այլ շրջանների վրա»։ Այնուհետև ավելացնում է «Դեյլի Ուորկերը»-ի թղթակիցը. «...Իրանական ժողովուրդը չի հասկանում բրիտանական լեյբորիստական կառավարության վարած քաղաքականությունը այս հարցում. նա, որ կողմնակից է ազգայնացման սկզբունքներին, ինչի համար այդքան համառ է պայքարում և այդ պայքարի մեջ այնքան նենգ մեթոդների է դիմում՝ խանգարելու համար մի ուրիշ երկրում բնական հարստությունները ազգայնացնելու ծրագրերը»։

Այս իրադրության մեջ Անգլո-Իրանական նավթային ընկերությունը իրանական կառավարությանը խոստանում է փոքր ինչ ավելացնել կոնցեսիոն վճարը, ինչպես նաև վճարել 40 միլիոն ֆունտ ստեռլինգ որպես հատուցում՝ անցյալում իրանական կառավարության հասանելիք չվճարված գումարների փոխարեն։ Սակայն ընկերության այս առաջարկին Իրանի պետական և հասարակական բոլոր շրջանները միահամուռ պատասխանում են, թե իրանական ժողովուրդը դեմ է վաճառվելու գաղափարին։

Նույն թվականի մայիսի 19-ին Անգլիան նորից առաջարկում է իրանական կառավարությանը դելեգացիա ուղարկել Թեհրան՝ երկրի նավթային հարստությունների ազգայնացման որոշման կապակցությամբ ստեղծված անհամաձայնությունների շուրջը բանակցություններ վարելու համար։

Քննարկելով անգլիական կառավարության այս առաջարկությունը, Իրանի մինիստրների խորհուրդը եկավ այն եզրակացության, որ Իրանի կառավարությունն ամեն կերպ պետք է իրագործի Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման օրենքը։

Պատասխանելով անգլիական կառավարության մայիսի 19-ի նոտային, իրանական կառավարությունը հայտնում է, թե ինքը ոչ մի անհրաժեշտություն չի տեսնում բանակցելու Մեծ Բրիտանիայի կառավարության հետ, քանի որ այս հարցում միայն Անգլո-Իրանական նավթային ընկերությունն է շահագրգռված կողմը։

Իրանական կառավարության պատասխանը զայրույթ է պատճառում անգլիական կառավարական շրջաններին, որոնք զրպարտչական և մեղադրական լուրերի կամպանիա են ծավալում Մոսադդիկի կառավարության դեմ։ Իրանի պրեմյեր-մինիստրը, համայն աշխարհի առջև պարզելու համար իրանցիների տեսակետի արդարացիությունը, մայիսի 25-ին պրես-կոնֆերանսի է հրավիրում տեղական ու օտար մամուլի ներկայացուցիչներին և բոլորին հայտնում է երկրի նավթային հարստությունների ազգայնացման մասին որոշում ընդունելու պատճառները։

Իր հայտարարության մեջ Իրանի պրեմյեր-մինիստրը ի միջի այլոց նշում է իրանական ժողովրդի կյանքի ծայրահեղ աղետալի պայմանները, թեև այդ նույն ժողովուրդը միաժամանակ ունի հարստությունների հսկայական աղբյուրներ։ Այնուհետև նա ընդգծում է այն միտքը, որ Իրանը աղքատությունից փրկելու համար անհրաժեշտ են կապիտալներ, որոնք կարելի է ստանալ միայն երկու ճանապարհով՝ դիմելով արտաքին փոխառությունների, կամ օգտագործելով ներքին ռեսուրսները, որոնց հսկայական մասը կազմում են հարավային Իրանի նավթի վիթխարի եկամուտները։ Վերջին մի քանի տարիների ընթացքում օտարերկրյա փոխառությունների շուրջը վարած բանակցությունները դրական արդյունք չեն տվել, որովհետև այդ փոխառությունների հետ կապված են եղել ստրկացուցիչ պայմաններ, ուստի այժմ Իրանը կարող է իր ժողովրդի աղքատությանը վերջ տալ միայն նավթից ստացվող եկամուտներով։ Ազատվելով նախկին Անգլո-Իրանական նավթային ընկերությունից, Իրանը կվերացնի ինտրիգների ու կաշառակերության աղբյուրը, կդադարեցնի նախկին այդ ընկերության ոչ մի բանով չարդարացվող բոլոր միջամտությունները երկրի ներքին գործերին, և, այդպիսով, կամրապնդի և կապահովի երկրի էկոնոմիկան ու անկախությունը։

Շարունակելով, այնուհետև Մոսադդիկը մատնանշում է, որ անշուշտ, սա Իրանի ժողովրդի ներկա վատ դրությանը ամբողջովին վերջ չի տա, քանի որ այդ կապված է սոցիալ-քաղաքական սիստեմի վերափոխման հարցի հետ, բայց եթե Իրանի նավթի պետականացման հետևանքով ստացվող եկամուտները իրենց նպատակին, այսինքն ժողովրդի կարիքներին ծառայեն, ի՛նչ խոսք, որ դրանից երկրի տնտեսությունը մեծապես կշահի։

Պրես-կոնֆերանսի վերջում Մոսադդիկը հայտարարում է, որ եթե անգլիական կառավարությունը կամ որևէ այլ կառավարություն պնդի, որպեսզի նախկին Անգլո-Իրանական նավթային ընկերությու-

նը շարունակի գործել, ապա դա կհանդեցնի կործանարար հետևանքների ամբողջ աշխարհի համար, և ոչ մի ուժ ի վիճակի չի լինի կանխելու այն լուրջ իրադարձությունները, որոնց առաջացման համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ։

Ըստինքյան հասկանալի է, որ Իրանի այդ ժամանակվա պրեմյեր-մինիստրը նավթի ազգայնացման հարցում վայելում էր ժողովրդական լայն մասսաների հովանավորությունը, որը նրան քաջալերում էր այսպիսի ուժգնությամբ դիմադրելու իմպերիալիստների մեքենայություններին։ Ճիշտ է, որ ժողովրդական լայն մասսաների վճռականությունն այս հարցի կապակցությամբ մեծ կշիռ և թափ էր հաղորդում Մոսադդիկի վարած քաղաքականությանը, այնուամենայնիվ իրանական ժողովրդի դիմադրության մեջ հարկավոր է հաշվի առնել նաև Ուոլլ ստրիտի գործակալների մեքենայությունները, որոնք ուղղված էին ամեն կերպ չեզոքացնելու անգլիական ազդեցությունը Իրանում։ Որպես փաստ նշենք Տեկսաս Օյլ Կոմպանիի ներկայացուցչի հայտարարությունը, թե իր ընկերությունը պատրաստ է վիջելու ընդհանուր շահերի 60 տոկոսը, եթե Իրանի կառավարությունը իրեն հանձնի նավթի շահագործման իրավունքը։ Այնուհետև, Սոկոնի-Վակում Օյլ Կոմպանիի նույն տիպի առաջարկը՝ ընդհանուր շահերի 65 տոկոսի վիջումով, և վերջապես, Արամկոյի 72 տոկոսի առաջարկը։

Սակայն, երբ ամերիկյան նավթային խոշոր մոնոպոլիստների բոլոր առաջարկները մնում են ապարդյուն և երբ նրանք սկսում են այս կամ այն չափով ըմբռնել Իրանի ժողովրդի վճռականությունը տվյալ հարցի նկատմամբ, Ուոլլ ստրիտի մագնատները պետական դեպարտամենտի մարդկանց սանկցիա են տալիս բացահայտ միջամտության դիմելու։

ԱՄՆ-ի կառավարական միջամտությանը տալով պրո-անգլիական գունավորում, Ուոլլ ստրիտի մագնատները հետապնդում էին, առաջին՝ անգլիացիներին սիրաշահելու քաղաքականություն, որպեսզի Հեռավոր Արևելքում ԱՄՆ-ի վարած ագրեսիվ քաղաքականությունը պաշտպանություն գտնի Անգլիայի կողմից, երկրորդ՝ իրանցիներին երկյուղ ներշնչել, որպեսզի նրանք տեղի տան բազմակողմանի հարձակումների առջև և նախընտրեն համաձայնություն գալ ամերիկացիների հետ։

Այս կրկնակի նկատառումներից ելնելով, Տրումենը անձնական նամակ է ուղարկում Իրանի պրեմյեր-մինիստր Մոսադդիկին, այնուհետև, շատ չանցած՝ Թեհրան է ժամանում ԱՄՆ-ի պրեզիդենտի

անձնական խորհրդատու Ավերել Հարրիմանը՝ Իրանի նավթի ազգայնացման հարցի շուրջը բանակցություններ վարելու։

Մեկնաբանելով պրեզիդենտ Տրումենի կողմից Իրանի պրեմիեր մինիստր Մոսադդիկին ուղարկված նամակի բովանդակությունը և այդ առթիվ նրա անձնական ներկայացուցիչ Ավերել Հարրիմանի այցելությունը Թեհրան, տեղական մամուլը մեծ զայրույթով նշում էր, որ ԱՄՆ-ի պրեզիդենտի այդ փորձերը պառլամենտական ու քաղաքական շրջաններում, ինչպես նաև ժողովրդի բոլոր խավերում դնահատվում են որպես Իրանի ներքին գործերին ամերիկյան միջամտության նոր փորձեր։

Այնուհետև իրանական մամուլում արծարծվում է այն հարցը, որ ժողովրդական մասսաների և կառավարության վճռական դիրքը պետք է համոզի Ուոլլ ստրիտի և Սիտիի տերերին, որ իրանական ազգը վերջնականապես որոշել է վերացնել Անգլո-Իրանական նավթային ընկերությունը, երկրից արտաքսելով և հեռացնելով անգլիական գործակալներին ու լրտեսներին։

Չնայած այս բոլորին, անգլիացիները փորձում են նոր բանակցություններ վարել իրանական կառավարության հետ և, միաժամանակ, անցյալի փորձի վրա հենվելով, ծավալում են իրանական ժողովրդի դեմ «ներվերի պատերազմը»։ Պարսից ծոցը ուղարկելով ռազմանավեր[1], բրիտանական ուժերի թիվը ավելացնելով Իրանի սահմանակից վայրերում, Կիպրոս փոխադրելով պարաշյուտիստների գնդեր և այլն։ Բրիտանական ռազմական օդային ուժին (Ռոյալ էր Ֆորսի) պատկանող «Մետեոր» և «Վամպիր» տիպերի ռեակտիվ ինքնաթիռներ քննական թռիչքներ էին կատարում Աբադանի սահմանամերձ օդային տարածություններում, որոնք հաճախ էլ խախտում էին Իրանի օդային սահմանները, նպատակ ունենալով տարատեսակ ազդել տեղական բնակչությանը և իշխանություններին։ Սակայն ոչ մի սպառնալիք չի թուլացնում իրանական ժողովրդի կամքն ու վճռականությունը։ 1951 թ. հուլիսի 2-ին մեջլիսի նիստում անգլիական սպառնալիքների դեմ հանդես են գալիս շատ դեպուտատներ, հայտնելով իրենց բողոքը։

Անգլիական դելեգատների և իրանական կառավարության միջև հաջորդ բանակցությունները նույնպես ապարդյուն են անցնում։ Անգլիական կառավարությունը կոպիտ կերպով արհամարհելով իրանական կառավարության՝ իր երկրի հարստություններն ազգայնացնելու սուվերեն իրավունքը, դիմում է Հաագայի միջազգային դա-

[1] Աբադանի և Բասրահի առաջ խարիսխ էին գցել Մորիթիուս, Ֆլամինգո, Էրալիուս, Զերոն, Զեկերզ, Զիֆտեյն և Զիվալրուս ռազմանավերը։

տարանին, պահանջելով ժամանակավոր միջոցառումներ ձեռնարկել պաշտպանելու, այսպես ասած, «Անգլիայի իրավունքները Իրանում»՝ մինչև նավթի հարցի վերաբերյալ որոշում ընդունվելը։

Իրանի ներքին գործը որպես միջազգային պրոբլեմ ներկայացնելու իր նոր փորձը լեյբորիստական կառավարությունը լրացնում է այս երկրի դեմ ուղղված հարձակումներով։ Արտաքին գործերի մինիստր Մորրիսոնը համայնքների պալատում սպառնալից տոնով հայտարարություններ է անում Իրանի կառավարության հասցեին։

Իրանի պատասխանը Հաագայի միջազգային դատարանի հրավերին լինում է վճռական։ Իրանի կառավարությունը, ասվում է պատասխանում, չի ճանաչում այդ դատարանի իրավասությունը քննարկելու նավթի հարցի կապակցությամբ անգլիական կառավարության «դանդատը» Իրանի կառավարության գործողությունների դեմ։

Այնուհետև, այդ պատասխանում նշվում է երկրի նավթարդյունաբերության ազգայնացում անցկացնելու Իրանի սուվերեն իրավունքի անվիճելիությունը և ընդգծվում է, որ հաշիվների և այլ պահանջների կարգավորման գծով իրանական կառավարությունը գործ ունի մասնավոր առևտրական ընկերության՝ նախկին Անգլո-Իրանական նավթային ընկերության և ոչ թե անգլիական կառավարության հետ, որը, այսպիսով, ոչ մի հիմք չունի «դանդատ» հարուցելու միջազգային դատարանում։

Բայց և այնպես, չնայած որ կողմերից մեկն այս հարցում չէր ընդունում դատարանի իրավասությունը, անգլիական իմպերիալիզմի կամակատար Հաագայի միջազգային դատարանը 1951 թ. հուլիսի 5-ին իր եզրափակիչ նիստում, իրանական կառավարության ներկայացուցիչների բացակայությամբ որոշում է ընդունում, խախտելով իրավական բոլոր կանոնները։

Դատարանի որոշումը հիմնականում հանգում է այն բանին, որ հանձնարարվում է հարցը կարգավորել «երկու կառավարությունների միջև»։ Հատկապես, որոշումը պահանջում է, որպեսզի ձեռք չառնվեն այնպիսի միջոցառումներ, որոնք կարող են խանգարել նավթահանքերի շահագործմանը այն ծավալով, որով այդ կատարվում էր մինչև 1951 թվականի մայիսի 1-ը։ Անգլո-Իրանական նավթային ընկերության աշխատանքները պետք է կատարի այն նույն դիրեկցիան, որը դրանով զբաղվել է մինչև նշված թվականը։ Այլ կերպ ասած, առաջարկվում է վերադառնալ այն դրությանը, որ գոյություն ուներ մինչև նավթարդյունաբերության ազգայնացման

վերաբերյալ օրենքի կենսագործման մեթոդների մասին օրենք ընդունելը և երբ Անգլո-Իրանական նավթային ընկերության վարչությունը զեռևս ամրոցջովին, առանց վերահսկողության, կառավարում էր բոլոր նավթային գործերն ու ձեռնարկությունները Իրանի հարավում։

Հաագայի միջազգային դատարանի ոչ մի բանով չարդարացվող այս որոշումը, համենայն դեպս, ձայների բացարձակ մեծամասնությամբ չի ընդունվում։ Դատարանի անդամներ Վենյարսկին (Լեհաստան) և Բազավին (Եգիպտոս) մատնում են իրենց հատուկ կարծիքը, որ Միջազգային դատարանն իրավասու չէ քննարկելու Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման հարցը։

Իրանի ժողովուրդը, Հաագայի միջազգային դատարանի որոշման դեմ գայրացած, բողոքի նամակներ ու հեռագրեր է ուղարկում մեջլիսի առանձին անդամներին, պահանջելով կառավարությունից տեղի չտալ և ամուր մնալ երկրի նավթային հարստությունների ազգայնացման հարցում։

Քաջալերվելով ժողովրդի վճռականությունից, պրեմյեր-մինիստր Մոսադդիկը հենց նույն օրը հայտարարում էր, որ Իրանը չի ճանաչում Հաագայի Միջազգային դատարանի իրավասությունը, ուստի մտադիր չէ ընդունելու որևէ որոշում այն հարցի նկատմամբ, որ նրա իրավասությանը ենթակա չէ և չի էլ կարող ենթակա լինել։

Պաշտպանելով հանդերձ Իրանի նավթի ազգայնացման հարցում անգլիական տեսակետը, ամերիկյան մոնոպոլիստները ճիգ ու ջանք չեն խնայում Իրանի էկոնոմիկայում գերակշռող դիրք ապահովելու համար, անշուշտ, ի վնաս անգլիական ազդեցության։ Ավերել Հարրիմանը, որպես Տրումենի հատուկ էմիսար, հուլիսի 16-ին ժամանում է Թեհրան՝ իբրև անգլո-իրանական վեճի մեջ պաշտոնական արբիտր։ Ավերել Հարրիմանը՝ ԱՄՆ-ի կառավարության մեջ ամերիկյան մոնոպոլիստների հայտնի ներկայացուցիչը, իրականում մեկն է նրանցից, ովքեր ուղղություն են տալիս Սպիտակ տան արտաքին քաղաքականությանը։ Նա Մորգանների մոնոպոլիստական միավորման ամենատաքի ընկնող ներկայացուցիչներից մեկն է։ Ուստի, մեզ բոլորովին էլ չպետք է զարմացնի Թեհրանի բրիտանական դեսպան Շեպհերդի այն հայտարարությունը, թե Հարրիմանի Թեհրան գալը ոչ մի օգուտ չի բերելու անգլո-իրանական վեճին։

Հարրիմանի Թեհրան այցելելու դրդապատճառների կապակցությամբ ժողովրդի մեջ այն կարծիքն էր տարածվել, թե իրանական նավթային ձեռնարկություններում ամերիկյան մասնագետներ

օգտագործելու հարց է ծագել։ Ըստ Ասոշիեյթդ Պրես գործակալության թղթակցի հայտարարության, Լոս Անժելոսից ինչ-որ ամերիկյան տեխնիկական մի ֆիրմա առաջարկել էր ուղարկել ամերիկացի 2500 մասնագետներ՝ անգլիական անձնակազմին փոխարինելու և նավթաթորման գործարանները գործարկելու համար։

Չնայած Հարրիմանի գրությունների մանրամասնությունների մասին պաշտոնական հաղորդագրության բացակայությանը, տեղական մամուլը պնդում էր, որ Հարրիմանը ձգտում էր այս կոնֆլիկտից առավելագույն օգուտ ապահովել ամերիկյան նավթային ընկերությունների համար։

Հետագայում պարզվեց, որ նավթի հարցից բացի, Հարրիմանը բանակցություններ էր վարում նաև այլ տնտեսական հարցերի շուրջը, որոնք ուղղակի առնչություն ունեն Իրանում ամերիկյան ազդեցության անսահմանափակ ուժեղացման հետ և, միաժամանակ, ուղղված են Անգլո-Իրանական նավթային ընկերության հետ միասին անգլիական ազդեցությունը վերջնականապես Իրանից դուրս մղելու նպատակին։

«Նյու-Յորք Հերալդ Տրիբյուն»-ի թղթակից Բիհարդի հաղորդումից պարզվում է, որ Իրանի կառավարությունը, չհամաձայնելով հանգերձ անգլիական դելեգատների հետ, մյուս կողմից ոչ մի պատրաստակամություն չի ցուցաբերում համաձայնել Հարրիմանի հետ, որը բերում է անգլիականից ոչ նվազ ստրկացուցիչ Ուոլլ ստրիթի առաջարկները։ Այնուհետև, Բիհարդի ասածներից պարզվում է, որ չկարողանալով ապահովել իրանական կառավարության համաձայնությունը հօգուտ ամերիկյան առաջարկների, Հարրիմանը 1951 թ. հուլիսի 19-ին ապատնալից տոնով հայտարարել է՝ «...իրանցիներին չի հաջողվի վաճառել ոչ մի գույլ նավթ, եթե այդ հարցում նրանք անդրդվելի մնան իրենց դիրքերում»[1]։

1951 թ. սեպտեմբերի 29-ին անգլիական կառավարությունը այս հարցի կապակցությամբ դիմում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին։ Նա իր այդ դիմումը պատճառաբանում է նրանով, որ իրանական կառավարությունը չի կատարել Միջազգային դատարանի որոշումը, որը, ինչպես հայտնի է, Իրանը գնահատեց որպես կոպիտ ոտնձգություն իրանական ժողովրդի սուվերեն իրավունքների դեմ, ինչպես նաև նրանով, որ Իրանից հեռացվեցին նավթի անգլիական մասնագետները։

---

[1] New York Herald Tribune, July 23, 1951.

Մեկնաբանելով իրանական նավթի հարցը ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին հանձնելու մասին անգլիական կառավարության դիմումը, Լոնդոնի «Դեյլի Ուորկեր» թերթը իր 1951 թ. սեպտեմբերի 29-ի համարում գրում է. «...անգլիական կառավարությունն արդեն մի բանի օր շարունակ խնդրում է ամերիկացիներից, որպեսզի նրանք պաշտպանեն Իրանին Անվտանգության Խորհուրդ կանչելու առաջարկը։ Ըստ երևույթին սեպտեմբերի 28-ի առավոտյան ստացվել է Միացյալ Նահանգների անհրաժեշտությունը»։

Անգլիական կառավարության հիշյալ դիմումի առթիվ Իրանի արտաքին-մինիստրի տեղակալ Ֆաթեմին արևելա-կոնֆերանսում մի անգամ ևս շեշտեց իրանական ժողովրդի ու կառավարության վճռականությունը, երկրի նավթային հարստություններն ազգայնացնելու հարցի նկատմամբ և հայտարարելով, որ Իրանի դելեգացիան Անվտանգության Խորհրդին իրավունք է դարձնում, որ նա Խորհրդին իրավասու չի համարում քննարկելու տվյալ հարցը։

1951 թ. հոկտեմբերի 1-ին Նյու-Յորքում սկսվում է Անգլիայի խնդրանքով հրավիրված Անվտանգության Խորհրդի նիստը՝ Իրանի դելեգատների բացակայությամբ։ Ժողովին նախագահում է Մունիզը (Բրազիլիա)։ Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 29-ին ներկայացված բանաձևի նախագծում Անգլիան դանդաղեցնում է այն բանի դեմ, որ Իրանը չի կատարել Միջազգային դատարանի հուլիսի 5-ի որոշումը։ Անգլիայի կողմից մտցված բանաձևը Իրանին կոչ է անում ենթարկվել դատարանի որոշմանը, թույլ տալ անգլիական անձնակազմին շարունակելու մնալ Աբադանում, չնայած իրանական կառավարության հակառակ որոշմանը։

Այս նիստում Սովետական Միության ներկայացուցիչը ելնելով փոքր ազգերի սուվերեն իրավունքները պաշտպանելու սովետական արտաքին քաղաքականությունից, հայտարարեց, որ անգլիական կառավարության դիմումը Անվտանգության Խորհրդին՝ Անգլո-Իրանական նավթային ընկերության գործի առթիվ Միջազգային դատարանի որոշմանը իրանական կառավարության ենթարկվելուց հրաժարման դեմ, հանդիսանում է միջամտություն Իրանի ներքին գործերին։

Հակառակ իրանական տեսակետի բացահայտ իրավացիությանը ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդում, ըստ սովորականի գործի դնելով, քվեարկության մեքենան, անգլո-ամերիկյան իմպերիալիստները ապահովեցին անգլիական դանդաղը օրակարգի մեջ մտցնելու որոշում։

Այսպիսի անիրավացի որոշման հանդեպ իրանական թերթերը և այդ թվում նույնիսկ այն թերթերը, որոնք մինչև վերջ Մոսադդիկի կառավարության նկատմամբ օպոզիցիոն կերպով էին տրամադրված, զայրույթով նշեցին, որ Անվտանգության Խորհուրդը իրավասու չէ քննարկել այս հարցը, ընդգծելով միաժամանակ, որ ամբողջ իրանական ժողովուրդը միասնական է օտարերկրյա ճնշման և ագրեսիայի դեմ։

Այս որոշման դեմ բողոքի ցույցերով հանդես են գալիս նաև հարյուր հազարավոր իրանական ժողովրդական մասսաները։ Սեպտեմբերի 30-ին վաղ առավոտվանից փակվում են Թեհրանի բոլոր գործարաններն ու հիմնարկները, կանգ է առնում քաղաքի տրանսպորտը։ Նույն օրը ժողովրդական բազմահազար մասսաներ ուղղվում են դեպի Բահարիստանի հրապարակը՝ մեջլիսի դիմաց։ Զանազան քաղաքական պարտիաների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ելույթներ ունենալով հայտնում են իրենց զայրույթը Անվտանգության Խորհրդի որոշման դեմ և իրենց վճռականությունը երկրի նավթային հարստությունների ազգայնացման հարցում։

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդում ԱՄՆ-ի մանդատարները հանդեցին այն բանին, որ որոշում անցկացվեց, որպեսզի Իրանի նավթի Ազգային ընկերության ակցիաները հանձնվեն Վերակառուցման և Զարգացման Միջազգային բանկին, որտեղ գերակշռում է ամերիկյան կապիտալը։ Թվում է, որ Ուոլլ ստրիտի ճնշման տակ Սիտիի տերերը մեծ դժկամակությամբ ընդունեցին ամերիկյան այս նոր առաջարկը, որն ուղղված էր Իրանի էկոնոմիկայի ստրկացման գործում գերակայությունը Անգլիայից խլելու նպատակին։

1952 թ. փետրվարի 11-ին Թեհրան է ժամանում Վերակառուցման և Զարգացման Միջազգային բանկի վիցե-պրեզիդենտ Գարները։ Ուոլլ ստրիտի մոնոպոլիստների այս նոր ներկայացուցիչը ժամանելուց անմիջապես հետո ժուռնալիստներին դրավոր հայտարարություն է բաժանում, որի մեջ նշում է, որ ինքը Թեհրանում բանակցություններ է վարելու այնպիսի բազայի վերաբերյալ, որը կարող էր ստեղծել իր ներկայացրած բանկը՝ իրանական նավթարդյունաբերության աշխատանքի վերականգնման համար։

Գարների ժամանման կապակցությամբ «Քեյհան» թերթը նշում է, որ «Իրանական կառավարությունը չի կարող անել ոչ մի բացառություն և դուրս գալ նավթարդյունաբերության ազգայնացման վերաբերյալ մեջլիսի ընդունած օրենքի սահմաններից»[1]։

[1] «Քեյհան», 11 փետրվարի, 1952 թ.։

Երբ ամերիկյան մոնոպոլիաների բոլոր առաջարկները այս ուղղությամբ մնում են ապարդյուն, և երբ մեկ ընդմիշտ համոզվում են, որ Իրանի ժողովուրդը անհողդողդ է այս հարցի նկատմամբ, Ուոլլ ստրիթի մագնատները, միանալով անգլիական նավթային մոնոպոլիաներին, ուժեղ պայքար են ծավալում իրանական նավթի պետականացման օրենքի դեմ։ Նրանք մինչև անգամ հեղաշրջում են կազմակերպում, օգնում են դեներալ Զահեդիին, տապալում Մոսադդիկի օրինական կառավարությունը, և, վերջապես, այս բոլոր մեքենայությունների արդյունքում 1954 թ. սեպտեմբերին Թեհրանում իրանական կառավարության և միջազգային կոնսորցիումի միջև ստորագրվում է երկրի նավթային հարստությունների շահագործման վերաբերյալ «համաձայնագիր»։

Այս «համաձայնագրի» ստորագրումը իրանական ժողովրդական լայն մասսաների մեջ դայրույթ առաջացրեց։ Դեմոկրատական բոլոր կազմակերպություններն անխտիր, և այդ թվում «Ազգային դիմադրության շարժումը», «Իրանի ժողովրդական պարտիան», «Երրորդ ուժի պարտիան», «Իրան» պարտիան և ուրիշներ, բողոքի հայտարարություններ հրատարակեցին «համաձայնագրի» կնքման դեմ։ Կառավարությունը, երկրում անընդհատ ծավալվող դժգոհությունը կանխելու նպատակով, դիմեց վարչական միջոցների, մինչև անգամ կեղծ «փորձագետների» հիման վրա «կոմունիստական գործունեության» մեջ մեղադրեց այն անձանց, ովքեր հանդես էին գալիս նավթի վերաբերյալ «համաձայնագրի» դեմ։ Ընդհանրապես, որ մեջլիսի շատ դեպուտատներ ու սենատորներ դեմ էին նավթային հիշյալ «համաձայնագրին», բայց և այնպես չհամարձակվեցին բացեիբաց արտահայտվել այդ մասին։ Եվ այսպիսով, տեսորի, վախի ու սարսափի պայմաններում էր, որ մեջլիսում և ապա սենատում «վավերացվեց» ամբարշտակ այդ «համաձայնագիրը»։

Մյուս կողմից՝ այս «համաձայնագրի» կողմնակիցների շրջանում ստորագրման լուրը բոլորովին այլ կերպ ընդունվեց։ ԱՄՆ-ի պրեզիդենտը, Իրանի շահը և Անգլիայի արտաքին գործերի մինիստրը շնորհավորական հեռագրեր փոխանակեցին։ «Նյու-Յորք Թայմս» թերթը այս «համաձայնագրի» ստորագրումը որակեց որպես արևմտյան դիվանագիտության խոշոր հաղթանակ։ Իսկ Իրանի կառավարական շրջաններում կաշվից դուրս էին գալիս ժողովրդին համոզելու համար, թե այս «համաձայնագրի» շնորհիվ իրանական նավթը համաշխարհային շուկաներում ձևաբ կրելի իր նախկին դիրքը, ապա երկրի եկամուտները անհամեմատ կաճեն, հետևաբար և երկիրը «կփրկվի» այժմյան տնտեսական ծանր զրությունից։

Իրանական նոր կառավարության առաջ քաշած այս փաստարկումները, որոնք ամենևին չէին համապատասխանում իրականությանը, չեն կարող դիմանալ ոչ մի անկաշկանդ քննադատության։

Քննենք «համաձայնագրին» վերագրվող առավելությունները, ելակետ ընդունելով հետևյալ չորս չափանիշները[1]։

Առաջին՝ պետական բյուջեի օգուտը նավթարդյունաբերությունից։ Անգլո-իրանական նավթային ընկերության կողմից իրանական կառավարությանը վճարված ամենաարագ կոնցեսիոն վճարը եղել է (1948—1949) 30 միլիոն դոլար։ Այդ տարին պետական բյուջեն եղել է 300 միլիոն դոլար, ուստի, օտարերկրյա կապիտալի կողմից շահագործվելու պայմաններում, նավթարդյունաբերությունից հասնող եկամուտը կազմել է տարեկան պետական բյուջեի միայն 10 տոկոսը, այն էլ ամենաարագահաղորդ տարին։

Երկրորդ՝ նավթարդյունաբերության բաժինը ազգային եկամուտի մեջ։ Իրանի ազգային եկամուտի մասին թեև վիճակագրական ճշգրիտ տվյալներ չկան, սակայն կան մոտավոր ենթադրական հաշվումներ։ ՄԱԿ-ի կողմից 1952 թվականին հրատարակված միամյա վիճակագրական տեղեկագրի տվյալների համաձայն, վերջին տարիների ընթացքում Իրանի ազգային միջին տարեկան եկամուտը եղել է 1800 միլիոն դոլար։ Հարց է ծագում, թե նավթարդյունաբերությունն ի՞նչ համամասնությամբ է իր մասնակցությունը բերում ազգային եկամուտում։ Եթե նույնիսկ Անգլո-իրանական նավթային ընկերության բանվորների թիվը հաշվենք 100 հազար (թեև նորմալ տարիներին մաքսիմումը 60 հազարից չի անցել), և եթե յուրաքանչյուր բանվորի տարեկան եկամուտը հաշվենք, գերազանցելով բարձր նորմաներով, 500 դոլար, ապա կստացվի 50 միլիոն դոլար, այսինքն այն գումարը, որ նավթարդյունաբերությունից հասնում է Իրանի բանվորությանը որպես աշխատավարձ։ Այնուհետև, նույնպես վերջին տվյալներից ելնելով, եթե նավթային ընկերության կողմից տեղական շուկայում կատարված ուղղակի և անուղղակի գնումների ընդհանուր արժեքը հաշվենք 20 միլիոն դոլար և այս բոլորը գումարենք վերևում նշված կոնցեսիոն վճարի հետ, ապա դուրս կգա, որ նավթարդյունաբերությունն ազգային ընդհանուր եկամուտին մասնակցում է 100 միլիոն դոլարով, որը կազմում է ընդհանուրի 6 տոկոսը միայն։

Երրորդ՝ աշխատանքով ապահովելու հարցը։ Իրանի վարձու աշխատողների թիվը հաշվվում է ավելի քան 5 միլիոն։ Նավթարդյունա-

---

[1] Այս մասին տվյալներ քաղել ենք՝ The Nation, New York. Sept. 11, 1954, pp. 209—211.

բերության մեջ, ինչպես նշել ենք, զբաղված է եղել առ-առավելն 100 հազար մարդ, որ նշանակում է երկրի աշխատավորների ընդհանուր թվի չնչին տոկոսը միայն։

Զորորդ՝ նավթարդյունաբերության դերը երկրի ընդհանուր էկոնոմիկայում։ *Իրանական ժողովրդի մեծամասնությունը, փաստորեն 85 տոկոսը, ապրում է պրիմիտիվ գյուղատնտեսության պայմաններում, հետևաբար նավթարդյունաբերությունից անմիջական ոչ մի օգուտ նրան չի հասնում, հատկապես երկրի սոցիալ-տնտեսական ներկա հարաբերությունների տեսակետից։*

Այս բոլորից հետևում է, որ Իրանի ներկա տնտեսական տագնապալից դրությունը հետևանք չէ երկրի նավթային հարստություններն տիրապետելու կապակցությամբ ձեռնարկված գործողությունների, ինչպես միտումնավոր կերպով ուզում են վերագրել համաշխարհային նավթի մոնոպոլիստները և նրանց հնազանդ ծառա Իրանի նոր կառավարության ղեկավարները։ Ճիշտ է, որ երկրի էկոնոմիկան և պետական բյուջեն շատ աննախանձելի դրության մեջ են, սակայն այս հանգամանքն վերագրել իրանական նավթի ազգայնացմանը, այդ կնշանակի ամենակոպիտ կերպով խեղաթյուրել իրականությունը։ Իրանի տնտեսական վատ դրության պատճառներն ավելի խոր արմատներ ունեն։ Երկրի ազգաբնակչությունն հետևանք է գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների։

Իսկ ինչո՞ւ Մոսադդիկի կառավարությունը Իրանի նավթի ազգայնացումից հետո չկարողացավ նավթարդյունաբերությունը վերակազմակերպել և իրանական նավթը դուրս բերել համաշխարհային շուկա։

«Նյու-Յորք Թայմս»-ի 1953 թ. օգոստոսի 26-ի համարում լույս տեսած մի հոդվածից պարզվում է, որ Իրանի նավթի ազգայնացման կապակցությամբ մոնոպոլիստներին անհանգստացնում էր ոչ թե Անգլո-Իրանական նավթային ընկերությանը հասանելիք կոմպենսացիայի հարցը, որքան համաշխարհային շուկաներում նավթի գների վրա հավանական անդրադարձումը այն դեպքում, երբ Մոսադդիկի կառավարությանը հաջողվեր արտահանել իր երկրի նավթը[1]։ *Այնուհետև, նույն թվականի օգոստոսի 30-ի համարում հրապարակված մի ուրիշ հոդվածում ասվում էր, որ եթե իրանական նավթը, կարտելներից անկախ, կարողանար մուտք գործել համաշխարհային շուկաները, ապա այդ ժամանակ նավթի համաշխարհա-*

---

[1] New York Times, August 26, 1953.

յին գների վրա անպարագրելիորեն պիտի լինի չափազանց անբնական[1]։ Եվ իրոք, նկատելով այս կարգի մտավախություններից, նավթի միջազգային կարտելները արգելեցին Իրանի նավթի մուտքը համաշխարհային շուկա։

Ոչ մի տարակույս, որ Զահեդիի կառավարական հեղաշրջումը կապված էր Իրանի նավթի հարցի հետ։ Փաստեր կան, որ հեղաշրջումը կատարվեց այն ժամանակ, երբ Մոսադդիկին հաջողվել էր Ճապոնիային վաճառել 3 միլիոն դոլլարի արժողությամբ նավթ, և որ նույն նպատակով իտալական և ուրիշ կառավարությունների հետ բանակցություններ մեջ էր մտել[2]։

Նոր «համաձայնագրի» մասին հրապարակված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ այդ «համաձայնագրի» հիմքը կազմել են համարյա նույն ստրկացուցիչ պայմանները, որոնք Անգլո-իրանական նավթային ընկերության կողմից առաջարկվում և իրանական ժողովրդի կողմից կտրականապես մերժվում էին։ Այսպես, օրինակ՝ Անգլո-Իրանական նավթային ընկերության կոնցեսիայի ժամկետն էր մինչև 1993 թվականը. կոնսորցիումին շնորհելով 25 տարվա ժամկետ պլյուս 15 տարով (երեք անգամ հինգ տարով) ժամկետը երկարաձգելու իրավունք, ստացվում է նույն 1993 թվականը։ Այնուհետև, «համաձայնագրի» մյուս պայմանների քննարկումից պարզվում է, որ նավթահանման, մշակման, արտահանման և վաճառման բոլոր գործառնությունները ղեկավարելու է կոնսորցիումը և որ վարչության մեջ, բացառությամբ երկու իրանական ներկայացուցիչների, մյուս բոլոր ղեկավար անդամները լինելու են օտարերկրացիներ։ Վերջապես, կոնցեսիոն վճարի հիմք է ընդունվել 50 տոկոսը։ Բայց չէ՞ որ այս երկրի նավթային հարստություններն ազգայնացնելու ժամանակ Անգլո-Իրանական

---

[1] Idem, August 30, 1953.

[2] Իրանական նավթը գնելու ամենաշահավետ առաջարկն արեց ամերիկացի Ա. Բ. Դեյվիս անունով մի ֆինանսական «Տեկսոմա» ընկերության կողմից՝ Տեկսաս նահանգի Դալլաս քաղաքից։ Դեյվիսը ցանկանում էր գնել մինչև 1,5 միլիոն տոննա անմշակ նավթ, արժեքը վճարել Իրանում ամերիկյան դոլլարով, փոխադրությունը գնորդի հաշվին։ Նույն ոգեթով ամերիկացի այս ֆինանսիստը առաջարկում էր Իրանի կառավարության ցանկության դեպքում, տրամադրել նավթային տեխնիկներ և մասնագետներ՝ անգլիացիներին փոխարինելու համար։ Սակայն Իրանի ժողովուրդը դեմ էր բոլոր տեսակի օտարերկրյա մասնակցությանը։

[3] Այսպես են խոստովանում մինչև անգամ իրենք՝ նավթային խոշոր մոնոպոլիաների ներկայացուցիչները. տե՛ս World Petroleum, Sept. 1954, pp. 50—57.

նավթային ընկերությունն առաջարկել էր այս նույն պայմանը, որը իրավացիորեն մերժվել էր։ Այստեղ ընթերցողի ուշադրությունը պետք է հրավիրել այն բանի վրա, որ 50 տոկոս կոնցեսիոն վճարի համաձայնությունը՝ դա կեղծ «զիջում» է, քանի որ դրա մեջ են մտնում նաև պետական հարկերը, մաքսային և բոլոր տեսակի այլ տուրքերը, ուստի կոնցեսիոն վարձի տակ չափը իմանալու համար, պետք է հանել նշված հոդվածները։

Բացի այդ, «համաձայնագրի» բացասական կողմերից պետք է համարել նաև այն, որ իրանական կառավարությունը պարտավորվում է Անգլո-Իրանական նավթային ընկերությանը վճարել (10 տարվա ընթացքում), որպես փոխհատուցում, 25 միլիոն ֆունտ ստեռլինգ, այնուհետև այն, որ տարբերությունների ամորտիզացման գումարից շահերից պիտի հանել տարեկան 6,7 միլիոն ֆունտ ստեռլինգ։ Այս բոլորից հետո դժվար է հասկանալ, թե վերջիվերջո առաջին տասը տարիների ընթացքում ի՞նչ եկամուտ է ստանալու իրանական կառավարությունը երկրի նավթային հարստությունների շահագործումից։

Կոնսորցիումին մասնակցում են՝ Անգլո-Իրանիան Օյլ Կոմպանի (այժմ Բրիտիշ Պետրոլյում), որի բաժինը կազմում է 40 տոկոս, Ռոյըլ Դեչ Շելլ՝ 14 տոկոս, Կոմպանի Ֆրանսեզ դե պետրոլ՝ 6 տոկոս, իսկ մնացած 40 տոկոսը հավասար չափով պատկանում է հետևյալ հինգ ամերիկյան ընկերություններին՝ Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Նյու Ջերզի, Սոկոնի — Վակում Օյլ Կոմպանի, Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Կալիֆորնիա, Գալֆ Օյլ Կորպորեշն և Տեկսաս Կոմպանի։ Կոնսորցիումը գործելու է երկու նոր ընկերությունների միջոցով, որոնք գրանցվել են Հոլանդիայում[1]։

Այս բոլորի քննարկումից պարզվում է, որ Զահեդիի կառավարությունը երկրի նավթային հարստությունների շահագործումը հանձնեց օտարերկրացիներին և այն էլ այնպիսի պայմաններով, որոնց դեմ իրանական ժողովուրդը երեք տարի շարունակ համառ և պատվավոր պայքար մղեց։

Սակայն սա մի էտապ է օտարերկրյա ազդեցությունից ազատագրվելու համար իրանական ժողովրդի պայքարի պատմության մեջ։ Զահեդիներ և Հուսեյն Ալաներ կգան ու կգնան, բայց մի օր ժողովուրդն իր ճակատագիրը նորից իր ձեռքը կվերցնի ու Անգլո-

---

[1] Iraanse Aardolie Exploratie en Productie Maatschappij, N. V. (*Նավթահետախուզական և նավթահանման իրանական ընկերություն*), և Iraanse Aardolie Raffinage Maatschappij, N. V. (*Իրանական նավթամշակման ընկերություն*)։

Իրանական ընկերությունը լիկվիդացնելու և երկրի նավթային հարստություններն ազգայնացնելու Մոսադդիկի կառավարության փորձը դաս կծառայեն նույն կարգի սխալները չկրկնելու համար։ Ուստի չի կարելի ասել, որ իրանական ժողովրդի այդ պայքարը իզուր է անցել։ Այդ պայքարում ձեռք բերված ամեն մի հաջողություն միաժամանակ վկայում է այն մասին, որ այլևս ժողովուրդներին չի կարելի անցյալի նման ստրկության մեջ պահել։

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ի Ր Ա Ք

1939 թվականի սեպտեմբերին, անգլո-իրաքյան պայմանագրի համաձայն, Իրաքի կառավարությունը խզեց իր դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ։ Պատերազմի առաջին երկու տարիներին Իրաքում աչքի ընկնող իրադարձություններ տեղի չունեցան։ 1940 թվականի մարտին պրեմյեր-մինիստր Նուրի-էս-Սայիդին փոխարինեց օպոզիցիայի լիդեր Ռաշիդ Ալի էլ Գայլանին։

Նոր պրեմյեր-մինիստրը հայտնի էր իր հակաանգլիական տրամադրություններով։ Նա սկսեց պրո-գերմանական քաղաքականություն վարել, մինչև անգամ Իտալիան պատերազմի մեջ մտնելուց հետո դեմ եղավ այս վերջինի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու գաղափարին։ Շատ չանցած, 1941 թվականի հունվարին, Անգլիայի ճնշման տակ Ռաշիդ Ալին տապալվեց, և նրա տեղը պրեմյեր-մինիստրի պաշտոնին նշանակվեց գեներալ Տահա-էլ Հաշիմին։

Նույն թվականի ապրիլի 4-ին, առանցքի պետությունների աջակցությամբ, Ռաշիդ Ալին և բանակի չորս գնդապետներ կառավարական հեղաշրջում կազմակերպելով, տապալեցին Տահայի կառավարությունը։ Բրիտանական ռազմական իշխանություններն իսկույն ևեթ Իրաքի իրենց կայազորն ուժեղացրին, Հնդկաստանից Բասրահ փոխադրելով մեծ թվով բրիտանական զինվորներ։ Ռաշիդ Ալիի կողմնակիցների և բրիտանական ուժերի միջև ընդհարումներ սկսվեցին նույն տարվա մայիսին։ Ռաշիդ Ալին պաշտպանության մինիստր Սայիդ Նաժի Շամբատին ուղարկեց Անկարա գերմանական դեսպան Ֆոն Պապենից օգնություն խնդրելու համար։ Առանցքի

պետությունները հարկ եղած օգնությունը չկարողացան ցույց տալ։ Շատ չանցած, անգլիական ուժերը կարողացան Ռաշիդ Ալիի ապըստամբությունը խեղդել արյան մեջ։

1941 թվականի հոկտեմբերին նորից պրեմյեր-մինիստր նշանակվեց հայտնի անգլիասեր Նուրի-էս-Սայիդը։

1942 թվականին Իրաք հասավ ամերիկյան ռազմական միսիան։ Պատերազմի հաջորդ տարիներին կարևոր իրադարձություններ տեղի չունեցան, սակայն լուռ պայքար էր մղվում անգլիական և ամերիկյան իմպերիալիստների միջև թե՛ Միջի-Իստ Սբպպլայ Սենտրը կազմակերպության ներսում և թե՛ առհասարակ Բաղդադի քաղաքական կյանքում։ Անգլիական իմպերիալիզմը հովանավորում էր Նուրի-էս-Սայիդի կողմից առաջ քաշված Արաբական Լիգա և «Մեծ Սիրիա» ստեղծելու գրկնակի գաղափարները, հույս ունենալով, որ Հաշիմի դինաստիայի ղեկավարությամբ այդ գաղափարների իրագործումը պատերազմից հետո անգլիական իմպերիալիզմի համար լավագույն հենարան կդառնա Մերձավոր Արևելքի երկրներում գերիշխանությունը պահպանելու համար։ Պարզ է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները հանդես էին գալիս այն ամենի դեմ, ինչը անգլիական իմպերիալիզմի դիրքերը Մերձավոր Արևելքում ամրապնդելու նպատակ էր հետապնդում։

Հետագայում, 1945 թվականի մայիսին, պրեզիդենտ Տրումենի անձնական հրավերով, Իրաքի ռեգենտը այցելում է Վաշինգտոն։ Այդ այցելության առաջին հետևանքը եղավ Իրաք-ամերիկյան հարաբերությունների ամրապնդումն ի հաշիվ անգլիականի, այնուհետև հետագա տարիներին ամերիկյան «4-րդ կետի» կիրառումը Իրաքում։ Այդ նույն տարին Իրաքի ամերիկյան դիվանագիտական միսիան վերակազմակերպվում է դեսպանության, նույնը կատարվում է Վաշինգտոնի Իրաքի դիվանագիտական ներկայացուցչությունում։

ՍԻՐԻԱ ԵՎ ԼԻԲԱՆԱՆ

Երբ ֆրանսիական պառլամենտը մերժեց հաստատել 1936 թվականի ֆրանս-սիրիական դաշնագիրը, Սիրիայի քաղաքական շրջաններում մեծ հուզում առաջացավ։ Այդ դաշնագրով նախատեսվում էր ճանաչել Սիրիայի անկախությունը։ Իրար հետևից կառավարական ճգնաժամեր տեղի ունեցան, մինչև որ 1939 թ. հուլիսի 7-ին Ֆրանսիայի ճնշման տակ Սիրիայի պրեզիդենտը իր պաշտոնից հրաժարվեց։ Նույն թվականի հուլիսի 10-ին Ֆրանսիայի գերագույն կոմիսար Դարրիել Պուան, վերացրեց կոնստիտուցիան, ցրեց

պաշտամունքը և նշանակեց քաղաքական խորհուրդ, որը կոչված էր երկիրը կառավարելու ֆրանսիական իշխանությունների հսկողությամբ։ Միաժամանակ Ջերել Դրուզը, Լատակիան և Ջեզիրայի հյուսիս-արևելյան շրջանը դեկրետով անջատեց և ենթարկեց այդ նպատակի համար կազմված ֆրանսիական վարչությանը։ Այնուհետև, նա սկսեց ուժեղ պայքար ծավալել տեղական բոլոր պրոդրեսիվ կազմակերպությունների, այդ թվում, հատկապես, Կոմունիստական պարտիայի դեմ։

Ահա այսպես էր իրերի դրությունը Սիրիայում երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին։

Նույնպիսի միջոցառումների դիմեցին նաև Լիբանանում, թեև պրեզիդենտը, որպես ֆրանսիական իմպերիալիզմի հլու կամակատար, մնաց իր պաշտոնում։ Սակայն, կառավարական կարգերը վերացվեց և նրա փոխարեն նշանակվեց միանձնյա քարտուղար, որը երկիրը կառավարում էր բյուրոկրատիայի օգնությամբ և ֆրանսիական իշխանությունների հովանավորությամբ։

Թեև ֆրանսիական օկուպացիոն ուժերի նկատմամբ տեղական ժողովուրդը բացահայտ դիմադրություն չէր ցուցաբերում և չէր էլ կարող ցուցաբերել, սակայն ժողովրդական լայն մասսաների ցասումն անսահման էր։ Ժողովրդի հիշողության մեջ դեռևս թարմ էին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտյան իմպերիալիստների կողմից տրված խոստումները, որոնցից և ոչ մեկը չիրականացվեց։ Ֆրանկո-թյուրքական նախաձեռնությամբ Սիրիայի տերիտորիայից դեռևս նոր էր անջատվել Ալեքսանդրետայի սանջակը։ Դեռևս շարունակվում էր արևմտյան իմպերիալիստների լուծը Մերձավոր Արևելքի արաբական երկրներում։ Այս բոլորը վառ էին պահում արաբ ժողովրդի ատելությունը եվրոպական իմպերիալիստների նկատմամբ։

Այս տեսակետի օգտին է խոսում այն փաստը, որ Ֆրանսիայի անկումից (1940 թ. հունիսին) և Վիշիի կառավարության հաստատումից հետո, երբ Սիրիայում և Լիբանանում այդ կառավարության ներկայացուցիչ գեներալ Դենցը առանցքի տերությունների ներկայացուցիչներին բոլոր հնարավորությունները տալիս էր Մերձավոր Արևելքում իրենց քայքայիչ գործունեությունը կատարելու համար, արաբների ատելությունը մասսան և ոչ մի դեպքում չհամագործակցեց։ Արաբները հավասարապես հակակրում էին թե՛ առանցքի իմպերիալիստներին և թե՛ դաշնակից իմպերիալիստներին։

Վիշիի իշխանություններն բոլոր հնարավորություններն ընձեռել էին գերմանա-իտալական իմպերիալիստներին՝ Սիրիա-Լի-

բանանում իրենց պրոպագանդայի օջախ և հետագա հարձակումների հենարան ստեղծելու համար։ 1940 թ. օգոստոսին Բեյրութ հասավ զինադադարի դեմանա-իտալական հանձնաժողովը։ Դրան հետևեցին մի շարք այլ հանձնաժողովներ, պաշտոնական ու կիսապաշտոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ, առևտրականներ և «տուրիստներ»։ Գերմանական արտաքին գործերի մինիստրության՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների բաժնի վարիչ Հեր Ֆոն Հենտիգը իր գործունեության կենտրոնը հաստատեց Բեյրութում։ Պարզ է, որ այս գրության առջև նույնպես դաշնակից պետությունները երկար ժամանակ անտարբեր չէին կարող մնալ։ Ուստի, 1941 թ. հունիսի 8-ին, բրիտանական և «ազատ Ֆրանսիայի» ուժերը միասին հարձակվեցին Սիրիայի ու Լիբանանի վրա՝ այս երկրները առանցքի տերությունների ազդեցությունից ազատելու համար։ Նույն թվականի հուլիսի 14-ին զինադադար կնքվեց։ Սիրիան և Լիբանանը, որոնք նույնպես մտան բրիտանական միջին-արևելյան հրամանատարության գոտու մեջ, օկուպացիայի ենթարկվեցին բրիտանական 9-րդ բանակի կողմից։ Այս երկրները ամենասպառ են ներգրավելու համար, բրիտանացիները նրանց մացրեցին ստերլինգ բլոկի գոտու մեջ։

Կռվի ժամանակ Անգլիայի և «ազատ Ֆրանսիայի» ուժերի հրամանատարությունները արաբ ժողովրդին խոստացան վերահաստատել նրա անախտությունը, ուստի Վիշիի կառավարության և առանցքի պետությունների գերիշխանությունից ազատվելուց հետո Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների և այսպես ասած «ազատագրող» իշխանությունների միջև նոր փոխհարաբերություններ ստեղծվեցին։

Այդ նոր փոխհարաբերությունների հիմքում էին, մի կողմից՝ արաբ ժողովրդի պահանջը, որ «ազատագրող» իշխանությունները հարգեն անկախության մասին իրենց արած խոստումները, մյուս կողմից՝ «ազատ Ֆրանսիայի» ներկայացուցիչների դիմադրությունը, որոնք խուսափում էին կռվի պայմաններում արված այդ կեղծ խոստումները կատարելուց և, վերջապես, երրորդ կողմից՝ այն փորձերը, որ բրիտանական իշխանությունները, ելնելով Ֆրանսիայի դիրքերը Մերձավոր Արևելքում թուլացնելու և արաբների մոտ իրենց վարկը ուրիշի հաշվին բարձրացնելու կրկնակի ցանկություններից, պնդում էին հեռացնել ֆրանսիական զորքերը, սակայն, միևնույն ժամանակ, շարունակում էին իրենց ուժերը պահել այս երկրներում։

Այս գրության հանդեպ չէր կարող երկար ժամանակ անտարբեր մնալ տեղական ժողովուրդը, որը հանդես գալով ֆրանսիական և անգլիական օկուպացման դեմ, բարձրացրեց անկախության համար պայքարի դրոշը։

ՍԱՈՒԴԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Սաուդական Արաբիան չեզոք մնաց։ Պատերազմի, հատկապես սկզբի տարիներին, ամերիկյան իմպերիալիզմը Սաուդական Արաբիայում այժմյան ազդեցությունը դեռևս ձեռք չէր բերել, իսկ անգլիական իմպերիալիզմի ազդեցությունն այնքան ուժեղ չէր, որքան ծովափնյա մյուս շրջաններում։ Այդուհանդերձ, Սաուդական Արաբիան, ի տարբերություն Թյուրքիայի, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իր չեզոքությամբ ավելի շուտ հակվում էր դաշնակից պետությունների կողմը։

Լինելով չեզոք պետություն, Սաուդական Արաբիայում պատերազմի տարիներին մեզ հետաքրքրող իրադարձություններ տեղի չունեցան, եթե չհաշվենք այն, որ ամերիկյան իմպերիալիզմն սկսեց այս երկիրը ոտք դնել հենց այդ տարիներին։

Մինչև 1940 թվականը Ամերիկայի Միացյալ Նահանգները Սաուդական Արաբիայի հետ նույնիսկ դիվանագիտական հարաբերություններ չէին հաստատել։ Ոչ Ջիդդայում (գլխավոր նավահանգիստ և Սաուդական Արաբիայի արտաքին գործերի մինիստրության կենտրոն) և ոչ էլ Էր-Ռիյադում (մայրաքաղաքը) չկային ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչներ։ Սկսած 1933 թվականից, ամերիկյան նավթային մոնոպոլիստները Սաուդական Արաբիայում գործում էին առանց իրենց կառավարության պաշտոնական պաշտպանության։ Սակայն, այդ ժամանակ ամերիկյան նավթային մոնոպոլիստների գործունեությունը դեռևս սահմանափակվում էր հետախուզական աշխատանքներով, ուստի պետական դեպարտամենտի միջամտությունը, հենց իրենց՝ նավթայինների կողմից դիտվում էր ոչ անհրաժեշտ և նույնիսկ վնասակար, որովհետև այդ հանգամանքը կարող էր գրավել անգլիական նավթային խմբավորումների ուշադրությունը։

Պատերազմի տարիներին, Սաուդական Արաբիայում գործող ամերիկյան նավթային ընկերությունը՝ Արաբիան Ամերիկեն Օյլ Կոմպանին, իր դիրքերը ուժեղացնելու համար, օգտվելով այս երկրի ծանր ֆինանսական դրությունից, Իբն Սաուդին առաջարկում է

30 միլիոն դոլլարի վարկ բաց թողնել ընկերության օգտին արվելիք մի շարք առանձնաշնորհումների դիմաց։ Եվ, որովհետև Արաբիան Ամերիկան Օյլ Կոմպանին այդ ժամանակ համապատասխան դումարներ չուներ, ընկերությունն իսկույն ևեթ իր ներկայացուցչին ուղարկում է Վաշինգտոն, որտեղ նրան հաջողվում է 1941 թ. ապրիլին այդ փոխառությունը կատարել տալ պետական բյուջեից, որ, այլ խոսքով, նշանակում է՝ նավթային մոնոպոլիաների օգտին արտոնություններ ձեռք բերելու համար բեռը բարձել ամերիկյան հարկատուի վզին։ Հետագայում, նոր առանձնաշնորհումներ ձեռք բերելու համար Արամկոյի ղեկավարներին հաջողվում է պետական դեպարտամենտին համոզել Սաուդական Արաբիային ևս լենդ-լիզ շնորհել, մի բան, որ օրինական չէր, քանի որ այս երկիրը պատերազմի մեջ չէր գտնվում, ուստի պրանից օգտվելու իրավունք չուներ։

ԱՄՆ-ից հաճախակի ֆինանսական օգնություն ստանալով, Իբն Սաուդը վերջիվերջո ընկավ ամերիկյան իմպերիալիզմի ճանկերի մեջ։ Ամերիկյան իմպերիալիզմի ներթափանցումը Սաուդական Արաբիա սկսեց ավելի զգալի դառնալ։ Շատ չանցած, 1943 թվականին, ամերիկյան հրամանատարությունը անհրաժեշտ գտավ Մերձավոր Արևելքում ստեղծել մի մնայուն հզոր ռազմա-օդային բազա։ Ճիշտ է, պատերազմի տարիներին ամերիկացիները Արաբիանում իրենց համար կառուցել էին մի հսկա օդանավակայան, սակայն նրանք գիտեին, որ երկար ժամանակ այդ իրենց ձեռքում չեն կարող պահել, ուստի Պարսից ծոցի դռան՝ Դահրանում, որտեղ գտնվում է Արաբիան-Ամերիկան Օյլ Կոմպանիի կենտրոնատեղին, կառուցեցին մի վիթխարի օդային բազա։

Դահրանի օդանավակայանը, որը արտասահմանում գտնվող ամերիկյան օդանավակայաններից ամենախոշորն ու կատարելագործվածն է, ամերիկյան ժողովրդի վրա նստեց 4 միլիոն դոլլար։

Ծավալելով ներթափանցումը Սաուդական Արաբիա, ամերիկյան իմպերիալիզմն սկսեց միջամտել նաև երկրի տնտեսության այլ ասպարեզներում։ 1942 թվականից Սաուդական Արաբիայում սկսեց գործել «ամերիկյան գյուղատնտեսության միսիան», որը առերևույթ խորհրդատու մարմին էր հանդիսանում, սակայն իրականում ձգտում էր վերահսկողի դիրք ձեռք բերել երկրի գյուղատնտեսության մեջ։ 1943 թվականին դեներալ Ռոյսի ղեկավարությամբ էր-Ռիյադ է ժամանում ամերիկյան զինվորական միսիան, որին հաջողվում է Սաուդական Արաբիայի բանակը մարզելու գործը իր վրա վերցնել։ Նույն տարին, ամերիկյան իշխանությունների

հատուկ հրավերով, Իբն Սաուդի որդիներից երկուսը՝ էմիր Ֆայսալը և էմիր Խալիդը այցելում են Ամերիկայի Միացյալ Նահանգները։

Արդեն 1945 թվականի սկզբներին Սաուդական Արաբիայի կախումը ամերիկյան իմպերիալիզմից այնպիսի աստիճանի էր հասել, որ Իբն Սաուդը, որը իշխանության գլուխ անցնելուց ի վեր երկրից չէր հեռացել, հարկադրված եղավ գնալ Եգիպտոս՝ Ալեքսանդրիայի ջրերում կանգնած ամերիկյան ռազմանավի վրա ԱՄՆ-ի պրեզիդենտի հետ հանդիպում ունենալու համար։ Այդ հանդիպումից քիչ հետո, 1945 թ. մարտի 1-ին, Սաուդական Արաբիան պատերազմ հայտարարեց Գերմանիայի դեմ։ Դա ավելի շատ ձևական բնույթ ուներ, քանի որ պատերազմն արդեն մոտենում էր իր վախճանին և, բացի դրանից, Սաուդական Արաբիան չէր էլ կարող վճռական ազդեցություն գործել պատերազմի ընթացքի վրա։ Հետագա իրադարձությունները ցույց տվին, որ այդ արվեց նրա համար, որպեսզի ինչպես մի շարք այլ երկրներ, Սաուդական Արաբիան նույնպես իրավունք ձեռք բերեր Միավորված Ազգերի Կազմակերպության մեջ մասնակցելու և, այդպիսով, այդ կազմակերպությունում ԱՄՆ-ի կողմնակիցների թիվն ավելացնելու համար։

ԵԳԻՊՏՈՍ

Երբ երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվեց, Եգիպտոսը ազգային անկախություն ձեռք բերելու համար պայքարի մեջ էր գտնվում անգլիական իմպերիալիզմի դեմ։ Բրիտանական դիվանագիտությունը, պալատական շրջանների հետ միասին ձգտում էր չլատել այդ ժամանակ մեծ ժողովրդականություն վայելող Վաֆդ պարտիայի ուժն ու հեղինակությունը։ Հետապնդելով այդ նպատակը, նա քաջալերում էր հակառակ պարտիաների ստեղծումը և եղածների ուժեղացումը ու հակառակություն, թշնամանք և անձնական հակակրություն էր սերմանում քաղաքական, նացիոնալիստական շրջաններում և նույնիսկ Վաֆդի ներսում։

Այսպիսի իրադրության պայմաններում, Եգիպտոսի քաղաքական շրջաններում մի տեսակ խառնաշփոթություն էր առաջացել։ Ոմանք հավատում էին, որ պիտի հաղթանակեն առանցքի պետությունները, ոմանք էլ, ընդհակառակը, գտնում էին, որ վերջինները հաղթանակելու են դաշնակից պետությունները։ Սակայն, ժողովրդական լայն մասսաների համակրանքը հակաֆաշիստական կոալիցիայի և Սովետական Միության կողմն էր։

Պատերազմի տարիներին, հանգամանքներից օգտվելով, անգլիական իմպերիալիզմը Եգիպտոսում ավելի սանձարձակ էր գործում։ 1939 թ. սեպտեմբերին անգլիական իշխանությունները երկրում հայտարարեցին արտակարգ դրություն, գրաքննություն մտցրին, եգիպտական կառավարությանն ստիպեցին դիվանագիտական հարաբերությունները խզել առանցքի պետությունների հետ և, վերջապես, իրենց ձեռքը վերցրին երկրի հաղորդակցության բոլոր միջոցները։ Եգիպտոսը դարձավ Մեծ Բրիտանիայի գլխավոր բազան Մերձավոր Արևելքում։ Հետագայում այդ բազայից օգտվեցին նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Եգիպտական տերիտորիայում օտարազգի զինվորների թիվը հասնում էր կես միլիոնի։ Այնտեղ կային՝ բրիտանական, հնդկական, ավստրալիական, նոր զելանդական, հարավ-աֆրիկյան, լեհական, չեխական, հունական, հարավսլավիական, ամերիկյան և այլ ազգերի պատկանող զինվորներ։ Կահիրեն դարձել էր ռազմական և քաղաքական կարևորագույն կենտրոնը Մերձավոր Արևելքում։ Ինչպես հայտնի է, Միդլ-Իստ Սքոպլայ Սենտրը անգլո-ամերիկյան կազմակերպության կենտրոնը գտնվում էր Կահիրեում։ Պատերազմի տարիներին Եգիպտոսում տեղի ունեցան մի շարք շատ կարևոր քաղաքական կոնֆերենցիաներ։ Մերձավոր Արևելքում գործող լենդ-լիզի վարչությունը նույնպես իր կենտրոնը հաստատել էր Կահիրեում։

Երկրի ներքին կյանքում ուշադրության արժանի իրադարձություններից կարելի է նշել պարտիաների ու քաղաքական գործիչների միջև տեղի ունեցած պայքարը իշխանություն ձեռք բերելու համար։ Այդ պայքարի մեջ անգլիական իմպերիալիզմը մեծ դեր էր խաղում, ձգտելով իշխանության գլուխ կանգնեցնել իր կամակատար մարդկանց։

Երբ պատերազմ սկսվեց, կառավարության գլուխ էր կանգնած Ալի Մահերը։ Սկզբնական շրջանում նա համագործակցում էր անգլիական իշխանությունների հետ, սակայն, երբ ռազմաճակատներում արձանագրվեցին մի շարք անգլիական անհաջողություններ, Ալի Մահերը, փոխելով իր քաղաքականությունը, սկսեց դիմադրություն ցույց տալ անգլիական իշխանություններին։

Ալի Մահերը երկար չմնաց իր պաշտոնում, անգլիական ճնշման հետևանքով թագավորը նրա փոխարեն պրեմյեր-մինիստր նշանակեց մեկ ուրիշի։ Թեև առանցքի պետությունների կողմնակիցները շարունակեցին գործել, սակայն նրանց չհաջողվեց խանգարել անգլիական գործողությունների ընդհանուր ընթացքը, որովհետև անգլիացիների ձեռքում էին գտնվում երկրի ստրատեգիական բոլոր

կետերը, ներքին և արտաքին անվտանգության մարմինները։ Ներքին անվտանգության ղեկավարը անգլիացի էր։ Խառն դատարանի առաջին դատախազը նույնպես անգլիացի էր, ցենզուրան գտնվում էր անգլիական հսկողության տակ։ Սահմանապահ ուժերի ղեկավարությունը նույնպես գտնվում էր անգլիացիների ձեռքում։

Շարունակելով ջլատել ներքին դիմադրության ուժերը, անգլիական դիվանագիտությունը փորր ի շատե ժողովրդականության վայելող Վաֆդի պարտիայի ղեկավարների հետ լեզու գտավ և պարտադրեց թագավորին պրեմյեր-մինիստր նշանակել Մուստաֆա էլ Նահասին։ Նահասը, անգլիական իմպերիալիզմի վաղեմի այդ թշնամին, զարմանալի կերպով հնազանդվեց անգլիական իմպերիալիստների կամքին և անվերապահորեն համագործակցեց նրանց հետ։

Այդ տարիներին Վաֆդի շարքերում պատեհապաշտությունը և կաշառակերությունը մեծ չափերի էին հասել։ Վաֆդի ղեկավարության նեխված հատվածը կողմնակից էր անգլիական իմպերիալիզմի հետ գործակցելու, քանի որ, իշխանության գլուխ անցնելով, հնարավորություններ էին ստեղծվում սպեկուլյացիայի, կաշառակերության և հարստացնող գործարքներ կատարելու համար։

Այս պայմաններում Վաֆդի պարտիայի կայուն հատվածը Մարրամ Էրեյդի գլխավորությամբ հեռանալով պարտիայից, կազմում են նոր պարտիա էլ Կուտլա (բլոկ) անունով։ Այս դեպքը բացասարար է անդրադառնում Վաֆդի և, հատկապես, նրա լիդերի՝ Նահասի հեղինակության վրա։ Կուտլա պարտիան հրապարակում է մի սև գիրք, որտեղ Նահասին և նրա գործակիցներին մերկացնում է որպես կաշառակերների և անգլիական իմպերիալիզմին վաճառվածների։

Նահասի հեղինակության անկումը անգլիական դիվանագիտությանն ստիպում է վերանայել Եգիպտոսի ղեկավարության հարցը։ 1945 թ. հունվարին նոր ընտրություններ են տեղի ունենում և պառլամենտի մեծամասնությունն անցնում է սաադիստների և կուտլայականների ձեռքը։

Պատերազմի վերջի տարիներին անգլո-ամերիկյան իմպերիալիստները ձգտելով հետագայում կազմվելիք Միացյալ Ազգերի Կազմակերպության մեջ իրենց օգտին քվեների թիվն ավելացնել, ստիպում են Եգիպտոսին առանցքի պետությունների դեմ պաշտոնապես պատերազմ հայտարարել։ Մինչ այդ Եգիպտոսը խզել էր իր դիվանագիտական հարաբերությունները առանցքի պետությունների հետ, սակայն պատերազմի մեջ չէր գտնվում։

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Մերձավոր Արևելքի արաբական երկրներում շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություններից ուշադրության արժանի են մանդատների լիկվիդացումը, արաբա-հրեական ռազմական ընդհարումները, Իսրայելի պետության ստեղծումը, ֆրանսիական իմպերիալիզմի ազդեցության ջլատումը, անգլիական իմպերիալիզմի դիրքերի թուլացումը, ամերիկյան իմպերիալիզմի ներթափանցման ուժեղացումը և, վերջապես, պրոգրեսիվ տարրերի ղեկավարությամբ ազգային-ազատագրական շարժումների աշխուժացումը, ժողովրդական լայն մասսաների էմանսիպացիան և պայքարի ծավալումը ներքին ու արտաքին ճնշման դեմ։ Այս ընդհանուր փոփոխությունների ֆոնի վրա է, որ զարգացան և շարունակում են զարգանալ այն բոլոր իրադարձությունները, որոնք, շնորհիվ այս երկրների միջազգային աճող նշանակության, մեծ արձագանք են գտնում միջազգային քաղաքական հարաբերություններում։

Հետպատերազմյան տարիներին ստեղծված նոր պայմանների հետևանքով, որի առաջին արտահայտություններից մեկն եղավ Հնդկաստանի նախկին քաղաքական ստատուսի փոփոխությունը, անգլիական դիվանագիտությունը հարկադրված եղավ վերանայել իր ընդհանուր քաղաքականությունն Ասիայի, Մերձավոր և Միջին Արևելքի ու Աֆրիկայի երկրների նկատմամբ։ Հնդկաստանում իրենց դիրքերի զգալի թուլացումը հավասարակշռելու համար, անգլիական քաղաքական շրջանները հետզհետե ավելի ու ավելի համոզվեցին, որ անհրաժեշտ է ուժեղացնել Աֆրիկայի անգլիական գաղութները։ Ֆորեյն Օֆֆիսի քաղաքականության այս նոր կուրսը, համենայն դեպս, չէր նվազեցնում Սուեզի ջրանցքի և նրան շրջապատող ու հարևան արաբական երկրների նկատմամբ անգլիական իմպերիալիզմի շահագրգռվածությունը։ Ճիշտ է, Սուեզի ջրանցքից զրկվելու դեպքում անգլիական իմպերիալիզմի համար հնարավոր էր շրջանցել Աֆրիկայի կոնտինենտը և առանց մեծ ուշացումների պահպանել իր կապը այդ գաղութների հետ, սակայն, Մերձավոր Արևելքից հրաժարվելու դեպքում չէ՞ որ այդտեղ անմիջապես պիտի փոխարիներ մի ուրիշ իմպերիալիստական պետություն և, առաջին հերթին, Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Եվ այդ դեպքում ի՞նչ պիտի լիներ այդ շրջանում անգլիական նավթային շահերի վիճակը, որքա՞ն ողորմելի պիտի լիներ անգլիական ապրանքների համար տեղական շուկաների և Անգլիան Ասիայի հետ կապող ճանապարհների դրությունը։ Հենց սրանով էլ պետք է բացատրել Ֆորեյն Օֆ-

ֆիսի աշխույժ գործունեությունը Մերձավոր Արևելքի արաբական երկրների հետ առանձին-առանձին դաշինքներ կնքելու և միջարաբական կազմակերպություններն ու ծրագրերը հովանավորելու ուղղությամբ։ Այդ ձեռնարկումների թվում կարելի է նշել՝ «Միջին Արևելյան հրամանատարություն» ստեղծելու փորձերը, Մեծ Սիրիայի ծրագիրը, Արաբական Լիգան, անգլո-իրաքյան և անգլո-հորդանանյան դաշինքները և, վերջապես, այդ քաղաքականության ամենավերջին արտահայտությունը՝ Բաղդադի պակտը։ Մերձավոր Արևելքի երկրների նկատմամբ անգլիական շահագրգռվածությունը ընդգծելով, լեյբորիստական կառավարության արտաքին գործերի մինիստր Բևինը 1948 թ. հունվարի 22-ին հանդես եկավ պառլամենտում, որտեղ ի միջի այլոց նշեց՝ որ Մեծ Բրիտանիայի հարաբերությունները Մերձավոր Արևելքի արաբական երկրների հետ հիմնված են երկար տարիների արագիցիայի վրա։ «Ես,— ասել է Բևինը,— մի քանի անգամ հայտնել եմ Ամերիկայի Միացյալ Նահանգների և այլ պետությունների ներկայացուցիչներին, որ Մերձավոր Արևելքի անդորրությունը համաշխարհային խաղաղության համար շատ կարևոր է, և որ այս շրջանը անգլիական կայսրության ընդհանուր քաղաքականության մեջ ամենակենսական կետերից մեկն է համարվում»։ Նույնանման հայտարարություններով հետագայում հանդես են եկել նաև կոնսերվատիվ կառավարության ղեկավար անդամներ, որոնց թվում՝ Չերչիլը, Իդենը, Մակ Միլլանը. Սելվին Լլոյդը և ուրիշներ։ Հետևաբար, անգլիական իմպերիալիզմի դիրքերը խախտելու ընդունակ բոլոր իրադարձությունները՝ ինչպես, 1936 թ. անգլո-եգիպտական պայմանագրի վերանայումը, Պաղեստինից անգլիական ուժերի դուրս գալը, Սուեզի ջրանցքի դատուց հեռանալը, Սուդանի անկախության հռչակումը, Կիպրոսի վերջին դեպքերը և այլն, տեղի են ունենում բրիտանական դիվանագիտության ամենաուժեղ դիմադրության պայմաններում։

ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԳԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Արաբական լիգայի ստեղծմանը նպաստում էին երկու հանգամանք. առաջին՝ համագործակցելու աճող ցանկությունը արաբների մոտ, հատկապես արտաքին հարաբերությունների ասպարեզում, և երկրորդ՝ բրիտանական հովանավորությունը հօգուտ լիգայի ստեղծման։

Եթե նկատի ունենանք իմպերիալիստական պետությունների մոտ տարագիցիա դարձած «բաժանիր և տիրիր» սկզբունքը, ապա ինչո՞վ բացատրել այն փաստը, որ անգլիական իմպերիալիզմը

Մերձավոր Արևելքի արաբական երկրներում թուլացած իր դիրքերն ամրապնդելու համար դիմում է արաբական միասնության օգտին գործող այս կազմակերպությունը հովանավորելու քաղաքականությանը։

Ինչպես նշեցինք, առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով ստեղծված նոր պայմանները Ֆորեյն Օֆֆիսին ստիպեցին վերանայել իր տրադիցիոն քաղաքականությունը Արևելքի երկրների նկատմամբ։ Հիրավի, այդ թվականներին Մեծ Բրիտանիան ստիպված հրաժարվեց Օսմանյան կայսրության ամբողջականությունը պաշտպանելու իր տրադիցիոն քաղաքականությունից, առաջին համաշխարհային պատերազմից հետո որդեգրեց նոր քաղաքականություն, ձգտելով իր հովանավորության տակ ստեղծել արաբական պետությունների ֆեդերացիա։ Վերջինս պիտի փոխարիներ նախկին Օսմանյան կայսրությանը, որը մինչ այդ մի տեսակ ապահովության դուռ էր հանդիսանում անգլիական կայսրության ճանապարհների վրա Մերձավոր Արևելքի շրջաններում։ Ելնելով այս հանգամանքներից, առաջին համաշխարհային պատերազմը դեռ չվերջացած, անգլիական դիվանագիտությունը բանակցություններ մեջ է մտնում Հեջազի Շերիֆ Հուսեյնի հետ, որը այդ թվականներին Հաշեմի դինաստիայի ամենաաչքի ընկնող դեմքն էր։ Սակայն, հետպատերազմյան պայմանները թույլ չտվին լրիվ իրագործել արաբա-անգլիական այդ ծրագիրը։ Բրիտանական դիվանագիտությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արաբներին արած իր խոստումներին զուգընթաց խոստումներ էր արել նաև ֆրանսիական իմպերիալիստներին, ինչպես նաև սիոնիստական կազմակերպությանը՝ Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու կապակցությամբ։ Այս երկու հանգամանքները, ինչպես նաև նշված շրջաններում նավթի պաշարները զավթելու կապակցությամբ մղվող պայքարը, վերջապես, Իբն Սաուդի հաջողությունները այն գլխավոր խոչընդոտներն էին, որոնց պատճառով ձախողվեց արաբական Հաշեմի դինաստիայի գլխավորությամբ ֆեդերացիա ստեղծելու ծրագրի իրագործումը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին տարիներին, երբ Ֆրանսիան պարտություն կրելու հետևանքով դուրս էր մղվել Մերձավոր Արևելքի արաբական երկրներից, և դեռ ԱՄՆ-ը մուտք չէր գործել այդտեղ, անգլիական իմպերիալիզմն իր անբաժան տիրապետությունն էր հաստատել այդ երկրներում։ Թվում էր, թե արդեն համապատասխան պայմաններ էին ստեղծվել Ֆորեյն Օֆֆիսի համար իրագործելու իր վաղեմի երազը՝ արաբական երկրների ֆեդերացիայի ծրագիրը։ Այս նոր քաղա-

քականության հետ էր կապված նաև արաբական պետությունների 1939 թվականի կոնֆերենցիան, որը հովանավորություն գտավ Լոնդոնի կողմից։

Երբ 1941 թվականին բրիտանական ռազմական ուժերը Վիշիի իշխանություններից Սիրիան և Լիբանանը գրավեցին, փաստորեն Մերձավոր Արևելքի արաբական երկրներից միայն Սաուդական Արաբիան և Եմենն էին մնացել անգլիական ազդեցությունից դուրս։ Անգլիական դիվանագիտությունն անմիջապես ուզեց օգտվել այս գրությունից ու ստեղծել անգլիական հովանավորության ներքո մի մեծ պետություն և կամ պետությունների ֆեդերացիա։ Անգլիական իմպերիալիզմի նախաձեռնությամբ ստեղծվելիք՝ արաբական երկրների այս ֆեդերացիան պետք է լիներ բավական միասնական, որպեսզի կարողանար մերձավորարևելյան բրիտանական կայսերական ճանապարհների պահապանը հանդիսանալ և, միաժամանակ, ոչ այնքան ուժեղ, որպեսզի հետագայում մի օր այդ ֆեդերացիան նույն ճանապարհների համար վտանգ դառնար։

Անգլիական իմպերիալիզմի ենթադիտության այս նոր կուրսի առաջին թարգմանը հանդիսացավ արաբների կողմից Իրաքի պրեմյեր-մինիստր Նուրի էս-Սայիդը, որն իր հակումներով հայտնի էր որպես անգլիական օրիենտացիայի ջատագով։ 1942 թվականին Նուրի էս-Սայիդը հրատարակեց իր, այսպես կոչված, «Կապույտ գիրքը», որտեղ նրա կողմից մշակված էին արաբական երկրների միավորման ծրագրի ընդհանուր գծերը։ Այդ գրքում նախատեսվում էր Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Անդրհորդանանը և Իրաքը միացնել ֆեդերատիվ կապերով։ Այսպիսով, պիտի ստեղծվեր «բարեբեր մահիկ»-ի[1] սահմաններում արաբական երկրների մի բավական խոշոր միավոր։

Այս ծրագրի կողմնակիցները գտնում էին, որ իրար հարևան արաբական երկրների այս միավորումը լինելու է առաջին համեստ քայլը բոլոր արաբական երկրների վերջնական միավորման ճանապարհին[2]։

Բրիտանական կառավարությունն իր անվերապահ հավանությունը տվեց Նուրի էս-Սայիդի առաջարկած ծրագրին։ Չէ՞ որ իրականության մեջ դա անգլիական իմպերիալիզմի նախաձեռնությունն էր, և Նուրին նրա ձեռքում մի հասարակ գործիք (խամաճիկ)։

---

[1] «Բարեբեր մահիկը» կամ «շնորհալի կիսալուսինը» Մերձավոր Արևելքում արաբական երկրների համեմատաբար ամենարարելեր տերիտորիան է։

[2] Այս ծրագիրը, որը 1943 թվականին Բաղդադում (Իրաք) առանձին բրոշյուրով հրատարակվեց, «Արաբների անկախությունը և միավորումը» վերտառությամբ, արաբական լայն մասսաներին մատչելի չդարձավ։

Փաստն այն է, որ Նուրի էս-Սայիդը դեռևս հանդես չեկած Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Անտոնի Իդենը 1941 թ. մայիսի 29-ին հայտարարել էր, որ արաբական երկրներում աճում է արաբական ժողովուրդների միավորման գաղափարի կողմնակիցների թիվը։ Այս միավորումն իրագործելու համար արաբները կարիք ունեն օգնության։ «Մենք,— ասել է Իդենը,— պատրաստ ենք այդ գործում նրանց օգնելու։ Մեզ թվում է, որ արաբների այդ ցանկությունը բնական երևույթ է, և նրանք իրավացի են իրենց այդ ձգտման մեջ։ Բրիտանական կառավարությունը պիտի պաշտպանի այդ ուղղությամբ մշակվող ամեն մի ծրագիր»[1]։

1943 թ. փետրվարի 24-ին անգլիական պառլամենտում հանդես գալով, արտաքին գործերի մինիստր Իդենը մի անգամ ևս ընդգծեց բրիտանական կառավարության դիրքը հօգուտ Մերձավոր Արևելքի արաբական երկրների միավորման ծրագրերի։ Սակայն, իր հայտարարության մեջ զգուշությամբ նա շեշտեց այն հանգամանքը, որ այս ուղղությամբ նախաձեռնության իրավունքը պատկանում է արաբներին։ Իդենը տվյալ դեպքում, փորձում էր թաքցնել անգլիական միջամտության փաստը այս ծրագրի իրագործման կապակցությամբ։ Նա համոզված էր, որ եթե արաբական լայն շրջաններում հայտնի դառնար անգլիական հովանավորությունը նշված ծրագրի նկատմամբ, ապա ուրեմն այդ միավորումը առաջուց իսկ դատապարտված կլիներ ձախողման, քանի որ այդ պայմաններում ֆեդերացիան չպիտի կարողանար ապահովել արաբ մասսաների համակրանքը և վայելել նրանց վստահությունը։

Նուրի էս-Սայիդի ծրագիրը հենց արաբական իսկ շրջաններում ստացված համակրանքը չգտավ։ Այդ ծրագրին դեմ էր Եգիպտոսը, որովհետև արաբական ֆեդերացիայի ստեղծումով (որտեղ նա բացակայում էր) արաբական աշխարհում այս երկրի առաջատար դիրքը վտանգվում էր։ Դեմ էր նաև Սաուդական Արաբիան, որը չէր կարող հանդուրժել մի այդպիսի նոր միավորում, որի գլուխ էր կանգնելու իր վաղեմի թշնամի հաշիմիդների դինաստիան։ Եվ, վերջապես, այս ծրագրին դեմ էին նաև Սիրիան ու Լիբանանը, որտեղ տիրող «քառասուն ընտանիքները» նախընտրում էին իրենց ռեսպուբլիկական օլիգարխիան, քան մի թագավորություն, որը կարող էր վտանգել այս երկրների քաղաքական և տնտեսական կյանքում այդ ընտանիքների սերնդից սերունդ ժառանգած տիրապետող դիրքերը։

---

[1] The Times, London, May 30, 1941.

Պարզ է, որ այս պայմաններում Նուրի էս-Սայիդի ծրագիրը դատապարտված էր ձախողման։ Բրիտանական դիվանագիտությունն իսկույն ևեթ եգիպտացիներին հանձնարարում է նախաձեռնությունը վերցնել իրենց ձեռքը։ Շատ չանցած, Եգիպտոսի պրեմյեր-մինիստր Մուստաֆա էլ-Նահասը պառլամենտին ի հաստատություն է ներկայացնում արաբական լիգա ստեղծելու ծրագիրը։

Մուստաֆա Նահասի ծրագիրը, որը փաստորեն արաբական երկրների միավորման ավելի թույլ ձևն էր և, հետևաբար, չէր վտանգում առանձին արաբական պետությունների սուվերենությունը, ավելի լայն հավանություն գտավ արաբական առանձին պետությունների իշխող տարրերի կողմից, քան Նուրի էս-Սայիդինը, որը հաշիմիդյան դինաստիայի ծրագիրն էր։ Այդուհանդերձ, այս ծրագիրը նույնպես անընդունելի էր Սաուդական Արաբիայի և Լիբանանի կառավարությունների համար։ Միայն Լորդ Մոյնի (անգլիական կառավարության լիազորը Մերձավոր Արևելքում) ուժեղ միջամտությունն էր, որ այս երկու պետություններին ստիպեց համաձայնել մասնակցելու արաբական լիգային։

Արաբական Լիգայի ստեղծումը։ Մերձավոր Արևելքի յոթ արաբական երկրների[1] ներկայացուցիչները 1944 թ. հոկտեմբերի 7-ին Ալեքսանդրիայում ստորագրեցին մի արձանագրություն, որտեղ նշվում էին արաբական լիգայի հիմնական սկզբունքները։ Արձանագրության մեջ մերժվում էր միավորման ֆեդերատիվ տիպի ծրագիրը, դրա փոխարեն ընդհանուր հավանություն էր գտնում ավելի թույլ կապերով միացած արաբական սուվերեն պետությունների համագործակցության ծրագիրը։ Հատուկ հոդվածով ապահովվում էր Լիբանանի ազգային սուվերենությունը։ Արձանագրության մեջ կար նաև երկու կարևոր պայման։ Ըստ առաջին պայմանի, Լիգայի անդամները պարտավորվում էին, առանց նախօրոք կազմակերպության անդամների հետ խորհրդակցելու, օտար պետությունների հետ ոչ մի համաձայնագիր չստորագրել։ Ըստ երկրորդ պայմանի, լիգայի անդամներին արգելվում էր միջամտել միմյանց ներքին գործերին։

Այս երկու պայմաններից առաջինը հանդիսացավ անգլիական դիվանագիտության հաղթանակը, որովհետև այդ նշանակում էր, որ Լիգայի անդամ արաբական երկրներն իրավունք չունեին առանց այս կազմակերպության համաձայնության օտար երկրների հետ

---

[1] Եգիպտոս, Սաուդական Արաբիա, Իրաք, Սիրիա, Լիբանան, Եմեն և Անդրհորդանան (այժմ Հորդանան)։

նոր պայմանագրեր կնքելու (այսպիսով, անուղղակի կերպով ենթարկվում էին անգլիական իմպերիալիզմի հսկողությանը, որը այդ ժամանակ դեռևս հովանավորում էր Լիգային)։ Իսկ երկրորդ պայմանը հանդիսանում էր Եգիպտական դիվանագիտության հաղթանակը, քանի որ հաշիմիդների դինաստիայի ներկայացուցիչները զրկվում էին Մեծ Սիրիա ստեղծելու ծրագրի օգտին իրենց հարևան երկրներում պրոպագանդա անելու իրավունքից։

Արձանագրության ստորագրումից վեց ամիս հետո, 1945 թ. մարտի 22-ին, արաբական Լիգան վերջնականապես հիմնվեց։ Կահիրեում հավաքված՝ Մերձավոր Արևելքի արաբական երկրների ներկայացուցիչները ստորագրեցին համապատասխան վավերագրերը։ Վարչական ապարատը բաղկացած էր մի խորհրդից և վեց կոմիտեներից։ Խորհուրդը գումարելու էր տարեկան երկու ժողով (մարտ և հոկտեմբեր ամիսներին), իսկ հարկ եղած դեպքում հնարավոր էր արտակարգ ժողովներ գումարել Լիգայի որևէ անդամի պահանջով։ Լիգան պիտի ունենար մի մնայուն ընդհանուր քարտուղար։ Առաջին քարտուղարը նշանակվեց Աբդուր-Ռահման Ազզամը (եգիպտացի)։

Լիգան ստեղծվեց Մերձավոր Արևելքի արաբական երկրների միասնականությանը նպաստելու և համագործակցության կրկնակի նպատակներով, սակայն կանոնադրության մեջ արձանագրված մի շարք սահմանափակումները, ինչպես նաև անդամ երկրների միմյանց նկատմամբ ունեցած անվստահությունը խանգարեցին այդ հիմնական նպատակների լրիվ իրագործմանը։ Բացի այդ, Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում կային մի շարք հակասություններ՝ հակասություններ իմպերիալիստական պետությունների միջև այս երկրների տիրապետման համար ու հակասություններ գաղութարարների և ճնշվողների միջև, միջարաբական հակասություններ և, վերջապես, հակասություններ այս երկրների տարբեր դասակարգերի միջև։ Այս բոլորը, Լիգայի կազմակերպման առաջին իսկ օրից խանգարիչ գործոններ դարձան և պաճառ հանդիսացան ստեղծելու մի այնպիսի կազմակերպություն, որի միավորող ուժը այնքան թույլ էր, որ այս միությունը հաղիվ էր ծառայում իր նպատակին։

Լիգայի գործունեությունը։ Լիգայի ոչ քաղաքական գործունեությունն ընդգրկում էր՝ կազմակերպության անդամ երկրների միջև կուլտուրական կապերի ընդլայնումը, արաբական ձեռագրերի և պատմական հին վավերագրերի հավաքումն ու պահպանումը, արաբ գիտնականների, ինժեներների, բժիշկների, հնագետների և սոցիոլոգների պարբերական խորհրդակցությունների և կոնֆերենցիաների կազմակերպումը։ Լիգան ստեղծեց նաև իր հատուկ ինֆոր-

մացիոն գործակալությունը, հովանավորեց անգամ երկրների միջև տնտեսական համագործակցությունը, կազմակերպեց հրեական ապրանքների բոյկոտը (սրը, սակայն, այնքան էլ էֆեկտիվ չեղավ)։

Պիտի նշել, որ քաղաքական տապարեղում Լիգայի անդամների միասնականությանը նպաստող գործոններ հանդիսացան, առաջին՝ Պաղեստինի կապակցությամբ արաբա-իսրայելական հակամարտությունը և երկրորդ՝ օտարերկրյա իմպերիալիզմի ճնշումից ազատագրվելու ընդհանուր և համատարած ցանկությունը։

Հետագայում Մերձավոր Արևելքում զարգացող ներքին ու արտաքին հակասությունների բերմամբ Լիգան դադարեց լրիվ չափով Ֆորեյն Օֆֆիսի գործիքը լինելուց և առանձին դեպքերում մինչև անգամ բախվեց անգլիական իմպերիալիզմի շահերի հետ։ Փաստորեն, այն ժամանակվանից, երբ Մերձավոր Արևելքի արաբական երկրներում աշխուժացավ ազգային-ազատագրական շարժումը, Լիգան անգլիական կառավարության համար ավելի շուտ անհանգստության աղբյուր դարձավ, քան հնազանդ գործակալ։ Եգիպտոսը Լիգայի մեջ հանդիսացավ հակաանգլիական շարժման ղեկավարը, ուստի չպետք է զարմանալ, որ վերջերս, Անգլիայի դրդումով, այս կազմակերպության մեջ ձգտումներ առաջացան Լիգան դարձնելու միայն Առաջավոր Ասիայի արաբական երկրների միավորում, դուրս մղելով այնտեղից Աֆրիկայի ներկայացուցչությունը և, հետևաբար, Եգիպտոսը։

ՄԵԴՕ-Ի[1] ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Երբ արևմտյան իմպերիալիստները մի անգամ ընդմիշտ համոզվեցին, որ ներկա իրադրության պայմաններում հնարավոր չէ այլևս Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդներին պատտադրել կնքելու իրենց համար ստրկացուցիչ պայմանագրեր և նրանց ներգրավել իրենց նախաձեռնությամբ ստեղծված քաղաքական և ռազմական բլոկների մեջ, հրաժարվեցին «Միջին-արևելյան հրամանատարություն» ստեղծելու ծրագրից ու դիմեցին նույն նպատակին ծառայող, սակայն տեղական նախաձեռնության տեսք ունեցող, «Մերձավոր Արևելքի պաշտպանության կազմակերպության» ստեղծմանը։ Անհրաժեշտ էր, որ Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների մոտ այնպիսի տպավորություն ստեղծվեր, թե իրենց պաշտպանության

---

[1] ՄԵԴՕ կամ MEDO ներկայացնում է Middle East Defense Organisation-ի առաջին տառերը, որ նշանակում է Մերձավոր Արևելքի պաշտպանության կազմակերպություն, ու հայտնի է որպես Բաղդադի պակտ։

գործը տեղական նախաձեռնության պտուղ է, որ այդ կազմակերպության ղեկավար պոստերը գտնվում են տեղացիների ձեռքում։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստների այս նոր մոտեցման առաջին պտուղը եղավ Թյուրք-պակիստանյան համաձայնագիրը, որին հաջորդեց Թյուրք-իրաքյան պակտը 1955 թվականի փետրվարի 24-ին։ Այս պակտի ստորագրումը մեծ հուզում առաջացրեց բոլոր արաբական երկրներում։ Նույն տարվա մարտի 1-ին Եգիպտոսը և Սիրիան ի հակակշիռ նշված պակտի, արաբական երկրների համագործակցության դաշինք կնքեցին, որին, շատ չանցած, միացավ նաև Սաուդական Արաբիան։ Հորդանանի քաղաքականությունն այս հարցի նկատմամբ երկար ժամանակ մնաց անորոշ։ Այս երկրի իշխանության գլուխ կանգնած դինաստիայի կապերը Իրաքի Հաշիմյան դինաստիայի հետ, այնուհետև անգլո-հորդանանյան դաշինքը, որը մինչև վերջին ժամանակները ուժի մեջ էր, Հուսեյն թագավորին հնարավորություն ընձեռեցին որոշ ժամանակ իր ժողովրդի կամքին հակառակ քաղաքականություն վարել։ Հուսեյն թագավորի այցելությունը Պակիստան մի փորձ էր մերձենալու Անկարա-Կարաչի առանցքին։ Նույնպիսի փորձով հանդես եկավ Լիբանանի պրեմյեր-մինիստր Սամի էս Սոլհը, որը Անկարայում բանակցություններ վարելուց հետո հայտարարեց, թե Մերձավոր Արևելքում խաղաղությունն ապահովելու համար անհրաժեշտ է զարգացնել բարեկամական և բարի դրացիական հարաբերություններ, Լիբանանի, արաբական մյուս երկրների և Թյուրքիայի միջև։ Սակայն, արաբական ժողովրդական լայն մասսաների հակակրանքը այդ կարգի պակտերի նկատմամբ այնքան ուժեղ էր, որ ոչ Լիբանանի և ոչ էլ Հորդանանի կառավարությունները չհամարձակվեցին այդ բլոկի մեջ մտնել, և Իրաքը արաբական երկրներից եղավ միակը, որը մասնակցեց Բաղդադի պակտին։

1955 թվականի մարտի 30-ին, երբ Անգլիան միացավ Թյուրք-իրաքյան պակտին, այս պայմանագրի բնույթը քողազրկվեց, և բոլորին պարզ դարձավ, թե այդ կազմակերպությունն իրականության մեջ ինչ է հետապնդում։ Շատ չանցած Ֆրանսիան նույնպես հրավիրվեց մասնակցելու այդ պակտին, սակայն Հյուսիսային Աֆրիկայում նրա համար ստեղծված դժվարությունները թույլ չտվեցին մտնելու այս կարգի նոր պարտավորությունների մեջ։ ԱՄՆ-ը նույնպես քաղաքական նկատառումներով դեռևս չի մասնակցում նշված պակտին, թեև անվերապահորեն հովանավորում է այն։

1955 թվականի հուլիսի 1-ին Պակիստանի կառավարությունը հայտարարեց, որ ինքը որոշել է Թյուրք-պակիստանյան պակտին

պուգընթաց մասնակցել նաև Թյուրք-Իրաքյան պակտին։ Իրաքի և Պակիստանի միջև այս ուղղությամբ համաձայնագիր կնքվեց նույն թվականի սեպտեմբերի 23-ին։ 1955 թվականի հոկտեմբերին, Թյուրքիայի պրեզիդենտի Թեհրան այցելելուց հետո, Իրանի պրեմյեր-մինիստր Հյուսեյն Ալան նույնպես հայտարարեց Բաղդադի պակտին մասնակցելու վերաբերյալ իր կառավարության որոշումը։

Բաղդադի պակտի մասնակիցների առաջին կոնֆերանսը բացվեց Իրաքի մայրաքաղաքում 1955 թվականի նոյեմբերի 21-ին։ Այս կոնֆերանսում Թյուրքիան, Իրաքը, Իրանը և Պակիստանը ներկայացված էին իրենց պրեմյեր-մինիստրներով, իսկ Մեծ Բրիտանիան հանձին Ֆորեյն Օֆֆիսի մինիստր Մակ Միլլանի։ ԱՄՆ-ը, այս պակտի մասնակից չլինելով հանդերձ, կոնֆերանսում ներկայացված էր դելեգատների մի մեծ խմբով։

Բաղդադի պակտի դեմ ուղղված շարժումը արաբական երկրներում այժմ գլխավորում է Եգիպտոսը, որը, ինչպես հայտնի է, վարում է անկախ քաղաքականություն և հանդես է գալիս օտարերկրյա բոլոր տեսակի միջամտությունների դեմ։ 1955 թվականի սեպտեմբերի 27-ին Եգիպտոսի պրեմյեր-մինիստր Գամալ Աբդել Նասերը պատասխանելով անգլո-ամերիկյան բողոքներին Չեխոսլովակյան զենքի մատակարարումների առթիվ, ի միջի այլոց նշեց, որ Եգիպտոսը պետք է շարունակի այն ուղին, որը դծված է Եգիպտական ռևոլյուցիայի կողմից, մեկ ընդ միշտ պետք է թաթափեն իմպերիալիզմի լուծը Եգիպտոսում, վերջ տան օտարերկրյա ազդեցությանը, ինչպես նաև դրսից եկող բոլոր տեսակի ճնշումներին։ Այնուհետև պրեմյեր-մինիստրը հայտարարեց, որ ուժեղ բանակ ստեղծելու համար անհրաժեշտ է զինամթերք։ Արևմտյան տերությունները զենքի մատակարարումների հետ կապում են Եգիպտոսի համար անընդունելի պայմաններ, որը վճռականապես մերժում ենք։ Վերջում Գամալ Աբդել Նասերը եզրափակում է, որ իր ինքնուրույն ու անկախ քաղաքականությամբ Եգիպտոսը դեմ է բոլոր տեսակի օտարերկրյա միջամտություններին և դրանցից բխող պակտերին ու բլոկներ կազմելու առաջարկներին։

* * *

Նշված բոլոր հակասությունները, որոնք փաստորեն բխում են իմպերիալիզմի էությունից, պարզ է, որ մեծ չափով դժվարացնում են անգլո-ամերիկյան միասնական ռազմական ագրեսիվ ծրագրերի

իրագործմանը Մերձավոր և Միջին Արևելքում։ Մերձավոր Արևելքի երկրները անգլո-ամերիկյան իմպերիալիստների կողմակերպած ագրեսիվ բլոկի մեջ ներքաշելու փորձը չափազանց մեծ արգելքների է հանդիպում շնորհիվ այն հանգամանքի, որ այս շրջաններում գնալով ուժեղանում է մասսաների ազգային-ազատագրական պայքարը և աճում է խաղաղության կողմնակիցների թիվը։

Եֆրայիմ Սպայզերը[1] «ԱՄՆ-ը և Մերձավոր Արևելքը» իր գրքում, խոսելով արևմտյան իմպերիալիստական տերությունների՝ Մերձավոր Արևելքի երկրները ներթափանցելու կապակցությամբ տեղական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների խանգարիչ դերի մասին, հետևյալ հետաքրքիր միտքն է հայտնում։ «Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ Մերձավոր Արևելքի երկրներում ազգային-ազատագրական շարժումների ակտիվացումը դաշնակից տերությունների կողմից մեծապես քաջալերվում էր»։ Այս ասելով, գրքի հեղինակը, ըստ էության, աչքի առաջ է ունեցել այն հանգամանքը, որ նշված շարժումներն այդ ժամանակ նպաստում էին Գերմանիայի դաշնակից Օսմանյան կայսրության թուլացմանը։ Սակայն, պատերազմից հետո, երբ նախկին Օսմանյան կայսրության մաս կազմող՝ Մերձավոր Արևելքի երկրները մանդատով հանձնվեցին Անտանտայի երկրներին, այլ կերպ ասած, մի գաղութատիրոջից փոխանցվեցին մի ուրիշ գաղութատիրոջ, «...այն ժամանակ այս նույն շարժումը (ազգային-ազատագրական —Հ. Բ.) դիտվեց որպես անհանգստության աղբյուր»[2]։

Չնայած օտարերկրացիների դրդումով տեղական իշխանությունների կողմից ծավալվող հալածանքներին ու հետապնդումներին, Մերձավոր Արևելքում գործող պրոգրեսիվ կազմակերպությունների համախոհների թիվը գնալով աճում է։

Մերձավոր Արևելքի երկրների ժողովուրդներն անդուլ պայքար են մղում գաղութային ստրկության դեմ, ազգային անկախություն ձեռք բերելու համար։ Այդ պայքարի ավանգարդում կանգնած է բանվոր դասակարգը, որը պրոգրեսիվ պարտիաների ղեկավարությամբ իր շուրջն է համախմբում ավելի ու ավելի մեծ թվով համախոհներ և տեղական ամենամարտունակ ազգային ուժերը։

---

[1] Ամերիկացի արևելագետ, պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի կառավարության կից գործող «Պետական ստրատեգիական վարչության» արևելյան բաժնի պետ։

[2] E. A. Speiser, The United States and the Near East, Cambridge, Mass., 1950, pp. 92—93,

Գերմանական ֆաշիզմի և ճապոնական իմպերիալիզմի դեմ Սովետական Բանակի տարած պատմական մեծ հաղթանակները, ինչպես նաև դաղութատեր պետությունների զգալի թուլացումը, նպաստավոր պայմաններ ստեղծեցին Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի համար։

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն այժմ ուղղված է անգլիական, ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիզմի, ներքին ռեակցիայի և իշխանության գլուխ անցած իմպերիալիստական վարձկանների դեմ, որոնք հիտլերյան Գերմանիայի ջախջախումից հետո, սկսել են ծառայել Ուոլլ ստրիտի և Սիտիի կապիտալին։

Սակայն վերջին քաղաքական իրադարձությունները ցույց են տալիս, որ Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդներն այլևս չեն ուզում ապրել հին ձևով, և որ օտարերկրյա իմպերիալիստները, ինչպես նաև նրանց թիկադրանքով շարժվող տեղական իշխող դասակարգերը, չեն կարող ըստ առաջնության կառավարել նրանց։

Հաջող պայքար մղելու համար Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդները, պրոգրեսիվ պարտիաների ղեկավարությամբ, ստեղծել և իրենց շուրջն են համախմբել պրոֆմիութենական, գյուղացիական, երիտասարդական, կանանց, խաղաղությունը պաշտպանողների և նման այլ դեմոկրատական-մասսայական կազմակերպություններ։

Դեմոկրատական և հակաիմպերիալիստական հիշյալ կազմակերպությունների անխոնջ պայքարը և նրանց շուրջը խմբված հասմախոհ ուժերի հարատևն ակտիվությունը վիժեցնում են անգլո-ամերիկյան իմպերիալիստների ռազմական ու տնտեսական պլանները, որոնք ուղղված են Մերձավոր Արևելքը հակասովետական հակադեմոկրատական ռազմական պլացդարմի և ստրատեգիական բազայի վերածելու նպատակին, մի բան, որի հաջողության կամ ձախողման հետ է կապված ազգային-ազատագրական պայքարի հետագա ճակատագիրը։

Ժողովրդական այս լայն շարժման բուռն վերելքի մեջ վտանգ տեսնելով իրենց պլանների համար, անգլո-ամերիկյան իմպերիալիստները բոլոր ջանքերը գործադրում են, որպեսզի իշխանության գլուխ կանգնած կալվածատիրական-ֆեոդալական նեոֆաշիստների կլիկի օգնությամբ ճնշեն ժողովրդին և վիժեցնեն նրա ազգային-ազատագրական պայքարը։ Իրանի կառավարության գլուխ կանգնած ներքին ռեակցիան, անգլո-ամերիկյան իմպերիալիստների ուղղակի պաշտպանությամբ, 1946 թ. դեկտեմբերին Իրանական Ադրբեջա-

նում և երկրի մի շարք այլ նահանգներում մասսայական դատապատան տեսավ դեմոկրատական կազմակերպությունների հետ։

Դեմոկրատական կազմակերպությունների հետ դատապատան տեսնելուց հետո, անգլո-ամերիկյան իմպերիալիստները, օգտագործելով իրանական ռեակցիան, ուժեղացրին Իրանի ստրկացման իրենց միջոցառումները։

Չնայած կառավարության ռեպրեսիաներին, Իրանի ժողովրդական պարտիան՝ Թուդեհը, և մյուս դեմոկրատական կազմակերպությունները, բնավ չդադարեցրին իրենց պայքարը երկիրն ստրկացնելու բոլոր փորձերի դեմ։ Ինչպես հայտնի է, 1948 թվականին, ապա 1952 թվականին պայքար ծավալեցին անգլո-իրանական նավթային ընկերության դեմ, «յոթնամյա պլանի» դեմ և, վերջապես, Իրանը ամերիկյան և անգլիական մոնոպոլիաների ռազմա-հոմքային կցորդ դարձնելու և երկրի ժողովուրդը ստրկացնելու բոլոր ձգտումների դեմ։ Քաջալերվելով մասսաների ազատագրական ինքնարուխ ելույթներից, Իրանի ժողովրդի ազգային իրավունքների պաշտպանությամբ հանդես եկան նաև պետական ծառայողների ստվար մասը, համալսարանի պրոֆեսորներն ու ուսանողները և ինտելիգենցիայի ամենաառաջավոր ու անկաշառ տարրերը։

Իրանի կառավարության ղեկավարները՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների կամակատարները, ձգտելով հաճելի դառնալ իրենց տերերին, ուժեղացրին հալածանքը երկրի անկախության համար պայքարող դեմոկրատական ուժերի դեմ, պրոգրեսիվ կազմակերպությունները հայտարարեցին օրենքից դուրս։ Այնուհետև, ժողովրդական պարտիան, պրոֆմիությունների միացյալ խորհուրդը, որը մտնում է Պրոֆմիությունների համաշխարհային ֆեդերացիայի մեջ, Իրանի դեմոկրատական երիտասարդության կազմակերպությունը, որը մտնում է Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիայի մեջ, Իրանի կանանց դեմոկրատական կազմակերպությունը, որը մտնում է Կանանց միջազգային դեմոկրատական ֆեդերացիայի մեջ, ինչպես նաև գյուղացիական դեմոկրատական կազմակերպությունը, հարկադրված եղան դադարեցնել իրենց լեգալ գործունեությունը։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստների թելադրանքով գործող իրանական ռեակցիոն կառավարության ագրեսիվ քաղաքականությունը առաջացրեց երկրի ժողովրդի և համաշխարհային պրոգրեսիվ շրջանների արդարացի զայրույթն ու վրդովմունքը։ Սակայն, չնայած ամեն տեսակ ռեպրեսիաներին, Իրանի ժողովուրդը շարու-

նակում է հովանավորել և քաջալերել ժողովրդական պարտիայի ղեկավարությամբ ընդհատակում գործող բոլոր դեմոկրատական կազմակերպությունների պայքարը երկրի անկախության, խաղաղության և դեմոկրատիայի համար։

Այնուհետև, 1949 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում Թավրիզում, Մարաղայում, Թառում, Թեհրանում և մյուս քաղաքներում միտինգներ ու ցույցեր կազմակերպվեցին կեղծ ընտրությունների դեմ, կառավարության և նրա օտարերկրյա խորհրդականների կողմից մեջլիսի դեպուտատության թեկնածուներ պարտադրելու դեմ։ Նույն տարում ժողովրդական պարտիան ընդհատակից բաց թողած թռուցիկներում արտահայտելով իրանական ժողովրդի կամքը, հայտարարում էր, որ «...Իրանի ժողովուրդը չի պատերազմի Սովետական Միության դեմ» և միաժամանակ երկրի աշխատավորներին ու բոլոր ազնիվ դեմոկրատներին կոչ էր անում միանալ ու պայքարել «...հանուն կայուն խաղաղության, ազգային անկախության ու լավագույն ապագայի»։

1952—1954 թվականներին Իրանի նավթային հարստությունների ազգայնացման համար մղվող պայքարում, ամենահետևողական դերը խաղաց ժողովրդական պարտիան, երկրի մասսաներին պայքարի մղելով այդ նպատակը անշեղորեն իրագործելու համար։

Հայրենասիրական թերթերը հետևողականորեն մերկացնում էին ամերիկյան և անգլիական իմպերիալիստների ոտնձգությունները Իրանում, որոնց ամենավերջին նմուշներից են եղել երկրի նավթային հարստությունների ազգայնացման արդարացի որոշման դեմ Ֆորեյն Օֆֆիսի և պետական դեպարտամենտի միջամտությունները, Միջազգային բանկի (որտեղ տիրապետում է ամերիկյան կապիտալը) ներկայացուցիչների ինտրիգները՝ ուղղված Իրանի էլ ավելի ստրկացմանը, և Բաղդադի պակտի մեջ Իրանի ներդրավումը։

Սիրիայի և Լիբանանի ժողովուրդը դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Վիշիի ֆաշիստական կառավարության լծից հաղիվ ազատված, ընկավ նախորդներից ոչնչով չտարբերվող դեգոլականների տիրապետության տակ։

Գեներալ Կատրուն (դեգոլականների կառավարության ներկայացուցիչը Սիրիայում և Լիբանանում) 1941 թվականի մայիսի 27-ին հայտարարեց ֆրանսիական իշխանությունների «բարի» մտադրությունները մանդատները վերացնելու և այդ երկրներին անկախու-

թյուն շնորհելու մասին։ Հետագայում այս հայտարարությանը պաշտոնական բնույթ տրվեց և նոյեմբերի 26-ին Սիրիան ու Լիբանանը հռչակվեցին անկախ։ Չնայած այս բոլորին, գեղոլականները գործնականում չհարգեցին իրենց խոստումները և շարունակեցին Սիրիան ու Լիբանանը պահել իրենց լծի տակ և կառավարել ըստ իրենց քմահաճույքի։

Գեղոլական իշխանությունների ոչ մի բանով չարդարացվող այս կամայական վերաբերմունքը Սիրիայում և Լիբանանում առաջացրեց քաղաքական ճգնաժամ, որը 1943 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հասավ իր գագաթնակետին։

Հիրավի, Լիբանանի պրեզիդենտ Շեյխ Բիշարա էլ Խուրին 1942 թվականի սեպտեմբերի 21-ին պրեմյեր-մինիստր է նշանակում ազգային պարտիայի պարագլուխ Ռիադ էլ-Սոլհին։ Նոր պրեմյերը, պաշտոնի նշանակվելուց անմիջապես հետո, ծրագիր է ներկայացնում Լիբանանի կոնստիտուցիան փոխելու մասին։ Նոր կոնստիտուցիայի նախագծի համաձայն, ջնջվում էին նախկինում եղած այն բոլոր հոդվածները, որոնցով բացառիկ իրավունքներ էին տրվել ֆրանսիական իշխանություններին, որպես մանդատարների։ Այս նախագիծը, որի նպատակն էր պաշտոնական բնույթ տալ Լիբանանի նոր դրությանը, կոչվեց «Երկրի անկախության խարտիա»։

«Երկրի անկախության խարտիա»-ի նախագիծը գեղոլական իշխանություններին դուր չեկավ։ Նրանք անվանական անկախություն շնորհելով ձգտում էին այն պահել թղթի վրա ու շարունակել իրենց նախկին կամայական իշխանությունը և իրենց (այսինքն՝ ֆրանսիական նոր գաղութարարների) ճնշման տակ պահել Սիրիայի ու Լիբանանի ժողովուրդներին։ Ուստի, 1943 թվականի նոյեմբերի 5-ին, գեղոլական իշխանությունների գերագույն կոմիտարը (այդ ժամանակ պրն. Հելու) այս կապակցությամբ կոմյունիկե է հրապարակում, որի մեջ հայտնում է, թե «...հին կոնստիտուցիայի տեքստում կան հոդվածներ, որոնց համաձայն միջազգային օրգանները Ֆրանսիայի վրա պարտականություններ են դրել Սիրիայի ու Լիբանանի նկատմամբ։ Այդ հոդվածները չի կարելի միակողմանի կարգով ջնջել, առանց փոխադարձ համաձայնության. ըստ որում Լիբանանի կառավարության որոշումը կոնստիտուցիայի փոփոխման մասին հայտարարում եմ անվավեր»։

Պրն. Հելուի կոմյունիկեն, որը ոչ մի բանով Լիբանանի, որպես անկախ երկրի, նոր ստատուսին և նրա սուվերենիտետին չէր համապատասխանում, փաստորեն բացահայտ միջամտություն էր մի

անկախ երկրի ներքին գործերին։ Ուստի, անտեսելով այդ կոմյունիկեի բովանդակությունը, մինիստրների խորհուրդը նոյեմբերի 8-ին պառլամենտի վավերացմանն է ներկայացնում «Երկրի անկախության խարտիա»-ի նախագիծը, որն ընդունվում է ձայների մեծամասնությամբ և մեծ ոգևորությամբ։

Դեգոլական իշխանությունները, կատաղած, ձերբակալել են տալիս Լիբանանի պրեզիդենտ Բիշարա էլ Խուրիին, պրեմյեր-մինիստր Ռիադ էլ-Սոլհին, մինիստրներին և Ազգային պարտիային պատկանող դեպուտատներին ու նրանց բանտարկում են Ռաշայի բերդում։ Դեգոլական իշխանությունների ներկայացուցիչ՝ գերագույն կոմիսար Հելուն, շարունակելով իր դաժան դատաստանը ժողովրդի և երկրի ղեկավարների նկատմամբ, ցրում է պառլամենտը, գրաքննություն է հաստատում և արտակարգ դրություն հայտարարում։ Այնուհետև, փորձում է կամակատար մարդկանցից կառավարություն կազմել, պրեզիդենտ նշանակելով ֆրանսիացիների հայտնի գործակալ Էմիլ Էդդեին։ Մարիոնետային այս կառավարությունը տեղական ժողովրդի կողմից բոյկոտի է ենթարկվում։ Կառավարական պաշտոնյաները հրաժարվում են աշխատել։ Ժողովուրդը դիմադրություն է կազմակերպում դեգոլական իշխանությունների և նրանց կազմած կառավարության նկատմամբ։ Տեղի են ունենում մասսայական ցույցեր, որոնք վերածվում են փողոցային ուժեղ մարտերի։ Ֆրանսիական իշխանություններին ծառայող ուժերը կրակում են ժողովրդի վրա։ Երկու կողմից էլ լինում են մեծ թվով վիրավորներ և սպանվածներ։

Հին կառավարության այն անդամները, որոնք խույս էին տվել ձերբակալությունից, քաշվում են Լիբանանի լեռները, Բշամուն գյուղը, զինված դիմադրություն են ցույց տալիս և կազմում են ժամանակավոր կառավարություն։ Այս կառավարության պրեզիդենտ է նշանակվում Հարիր Աբի Շահլան, իսկ պրեմյեր-մինիստր՝ Էմիր Մաժիդ Արսլանը։

Երկրի ներքին գործերում ֆրանսիական իմպերիալիստների այս միջամտությունը առաջ է բերում Լիբանանի ժողովրդի բոլոր խավերի, արաբական երկրների ժողովուրդների ազատասեր հատվածի, ինչպես նաև ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկանց զայրույթն ու վրդովմունքը։

Կառավարական ճգնաժամը տևում է 10 օր՝ 1943 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 22-ը։ Երկիրն ստրկացնելու ֆրանսիական իմպերիալիստների այս փորձը ձախողվելով, վերածվում է քաղաքական սկանդալի։ Համաշխարհային հասարակական կարծիքի

հնշման տակ դեգոլականները տեղի են տալիս և նոյեմբերի 22-ին լեգալ կառավարությունը նորից իշխանության գլուխ է անցնում։ Ներկայումս այս թվականը Լիբանանում նշվում է որպես ազգային տոն։

Դեգոլական իշխանությունների և սիրիական կառավարության միջև տարաձայնությունները բախումների են վերածվում այն ժամանակ, երբ ֆրանսիացիները փորձում են հանդես գալ ազգային բանակ կազմելու մասին սիրիական կառավարության որոշման դեմ։ Այս երկու իշխանությունների միջև հարաբերություններն էլ ավելի սրվում են 1944 թվականի փետրվարին, երբ ֆրանսիական ուժերի ընդհանուր հրամանատար գեներալ Բեյնեն նշանակվում է գերագույն կոմիսար։

Այս անձնավորությունը իր անցյալ գործունեությամբ արժանացել էր սիրիական ժողովրդի խիստ հակակրանքին։ Այնուհետև, երբ գեներալ Բեյնեն 1945 թ. մայիսի 18-ին Սիրիայի և Լիբանանի կառավարություններին ներկայացրեց ֆրանսիական կառավարության կողմից առաջարկվող պայմանագրի նախագիծը, ըստ որի այս երկու երկրների անկախությունը սահմանափակվում էր միայն կուլտուրական և անտեսական բնագավառներով, իսկ Ֆրանսիան շարունակում էր իրեն վերապահել երկրի սարատեղիական կետերում օդային, ծովային և ցամաքային ուժերի համար բազաներ ապահովելու իրավունքներ, ահա այդ ժամանակ ժողովրդի բոլոր խավերի մոտ առաջացած զայրույթը վերածվեց բողոքի մասսայական ցույցերի։

Նախատեսելով, որ իրենց առաջարկն անպայման պետք է առաջ բերի ժողովրդի դժգոհությունը, ֆրանսիական իշխանությունները երեք օր առաջ, այսինքն մայիսի 15-ին, արդեն բարձրանված ուժեր էին ցամաք հանել ժողովրդի հնարավոր պոռթկումները ճնշելու համար։

Սիրիայի և Լիբանանի կառավարությունների ներկայացուցիչները Շթաուրայում հանդիպում են քննելու համար երկու երկրներին վերաբերող ֆրանսիական կառավարության ստրկացուցիչ առաջարկը և մայիսի 19-ին համաձայնության են գալիս միասին դիմադրելու ֆրանսիական իմպերիալիստների այս նոր ոտնձգություններին։

Ժողովրդի բողոքի մասսայական ցույցերը հետզհետե վերածվում են բախումների։ Մայիսի 19-ից մինչև 28-ը Սիրիայում դրությունը չափազանց լարված էր։ Ֆրանսիական տանկերը և զրահապատ մեքենաները շրջում էին քաղաքների ու գյուղերի փողոցնե-

բում։ Մայիսի 29-ին գեղջկական ուժերը տանկերով, զրահապատ մեքենաներով և ամեն տեսակի զենքերով հարձակման անցան ժողովրդի դեմ։ Դամասկոսի պառլամենտի շենքը ռմբակոծեցին։ Դիմադրողներից նրանք, ովքեր գերի ընկան, ֆրանսիական սենեգալցի զինվորների կողմից գազանաբար գլխատվեցին։ Նույնպիսի հարձակումներ եղան նաև Հոմսի, Համայի, Հալեպի, Դեր Զորի, Հուրանի և Ջեբել Դրուզի ժողովուրդների դեմ։ Այս վերջին երեք շրջաններում ժողովուրդը զենքով դիմադրեց և ֆրանսիական ուժերի դեմ ձեռք բերեց որոշ հաջողություններ։ Մեծ թվով ֆրանսիական զինվորներ գերի բռնվեցին, ռազմական ինքնաթիռներ ոչնչացվեցին և մի քանի կարևոր ռազմականացված կետեր գրավվեցին։

Անգլիական իշխանությունները, որոնք այդ թվականներին Սիրիայում և Լիբանանում նույնպես զինված ուժեր ունեին, ելնելով ֆրանսիական ազդեցությունը Մերձավոր Արևելքում նվազեցնելու և անգլիականը մեծացնելու, այնուհետև տեղում ազգային-ազատագրական շարժումը ճնշելու եռակի բաղաքականությունից, ֆրանսիական ուժերին արտոնեցին մի որոշ ժամանակ խժդժություններ անել, բայց հետո, երբ համայն աշխարհը վրդովված բողոքում էր, նրանք սկսեցին միջամտել և հանդես գալ որպես «աղատարարներ»։ Այսպիսով, վերջ տրվեց արյունալի կռիվներին։

Սակայն, Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների կողմից այսքան մեծ զոհողություններով ձեռք բերված անկախությունը ձևական էր և գործնական որևէ դրական արդյունք չտվեց։ Ֆրանսիական իմպերիալիստներին վտարելուց հետո, ամերիկյան ու անգլիական իմպերիալիստներին հաջողվեց այս երկրներում կառավարության գլուխ կանգնեցնել իրենց կամակատարներին և կամ արդեն իշխանության գլուխ կանգնածներին կաշառել։

Ամերիկյան ու անգլիական իմպերիալիստների վարձկան՝ Սիրիայի և Լիբանանի այն ժամանակվա կառավարական շրջանները՝ ձգտելով ամեն կերպ օգնել իրենց տերերի ռեակցիոն պլանների իրագործմանը, ուժեղացրել էին հալածանքը երկրի անկախության համար պայքարող ուժերի դեմ։ Լիբանանում Կոմունիստական պարտիան և պրոգրեսիվ այլ կազմակերպություններ հայտարարվել են օրենքից դուրս։ Պետական ծառայողներին արգելել են զբաղվել քաղաքական գործունեությամբ և լինել որևէ այլ քաղաքական պարտիայի անդամ։ Ժողովրդի կամքն արտահայտող թերթերից շատերն արգեն փակվել են։ Այսպես, օրինակ, Սիրիայում լույս տեսնող «Ալ Մանար» թերթը փակվել էր այն բանի համար, որ հրապարակել էր ռազմական հեղաշրջման հետևանքով տապալ-

ված կառավարության ղեկավար Մարուֆ էլ-Դավալիբին ազատ արձակելու մասին խաղաղության սիրիական կողմնակիցների պահանջը, և «Պրավդա» թերթի հաղորդումը Մոսկվայում Միջազգային տնտեսական խորհրդակցություն հրավիրելու մասին։ Սակայն, այս բոլոր կազմակերպությունները ժողովրդին անպաշտպան չթողնելով, հանուն երկրի անկախության, խաղաղության և փայլուն ապագայի, շարունակում են իրենց գործունեությունը անլեգալ պայմաններում։ Իմպերիալիստների կողմից երկրի օկուպացման սպառնալիքն ուժեղացնելու հետևանքով, Լիբանանում իր աշխատանքը վերսկսեց օտարերկրյա օկուպացման դեմ պայքարի ազգային կոնդրեսը, որը գործել էր 1943—1946 թվականներին և այնուհետև իր գործունեությունը դադարեցրել էր երկրի անկախության մասին օտարերկրացիների կեղծ խոստումների հետևանքով։ 1951 թվականի հոկտեմբերի 30-ին տեղի ունեցավ կոնդրեսի նիստը, որտեղ հավանություն տրվեց հետևյալ բանաձևին. «Մերձավորարևելյան պետությունների սպառազինման մասին ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի 1950 թվականի մայիսի եռակողմանի դեկլարացիան և «համատեղ պաշտպանության մասին» չորս տերությունների (ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Բյուրբիայի) առաջարկները նիստը դիտում է որպես սպառնալիք երկրի անկախությանը և հանձնարարում է Ազգային կոնդրեսին՝ 1. հրապարակել մանիֆեստ այն մասին, որ չորս տերությունների առաջարկները հակասության մեջ են գտնվում միջազգային իրավունքի հետ. 2. հայտարարել, որ հայրենիքը գտնվում է վտանգի մեջ. Ազգային կոնդրեսի նիստերը շարունակել մինչև հատուկ որոշումը. 3. կոնտակտ հաստատել բոլոր արաբական ժողովուրդների ու կառավարությունների հետ՝ նոր պատերազմի սպառնալիքի դեմ մղվող պայքարում ջանքերը միավորելու համար»։

Կոնդրեսի միայյալ նիստը հանդես այն եզրակացության, որ կառավարությունն իրավունք չունի առանց ժողովրդի համաձայնության որևէ որոշում ընդունելու չորս տերությունների առաջարկների վերաբերյալ։

1955 թվականի սեպտեմբերի 20-ին Սիրիայի պրեմյեր-մինիստր Սայիդ ալ-Ղազալին ներկայացնելով իր կառավարության հետագա գործունեության ծրագիրը, ի միջի այլոց նշեց, որ ինքը միջոցներ չի խնայելու ստեղծելու համար կենտրոնական բանկ՝ բանկ-նոտերի էմիսիայի իրավունքով, մի իրավունք, որը դեռևս գտնվում է Բանկ դը Սիրիի (ֆրանսիական կապիտալ) ձեռքում։ Իսկ ինչ վերաբերում է սիրիական կառավարության արտաքին քաղաքա-

կանությանը, Սայիդ ալ-Ղազալին հայտարարեց, որ 1. Սիրիան լինելով արաբական երկիր, պետք է միշտ ելնի արաբների ընդհանուր շահերից և օգնի բոլոր արաբական երկրներին, որոնք ձգտում են ձեռք բերել իրենց ազգային անկախությունը և անրաժան սուվերենությունը, 2. Սիրիան պետք է պայքարի համաշխարհային խաղաղության օգտին ու պաշտպանի ՄԱԿ-ի կանոնադրությունը և Արաբական Լիգայի սկզբունքները, 3. ոչ մի պետության դեմ թշնամական տրամադրություններ չունենալու հետևանքով կառավարությունը գտնում է, որ նրա համար իմաստից զուրկ է թյուրքիրաքյան և նման այլ պակտերի մեջ Սիրիայի մասնակցությունը, 4. Սիրիայի միակ թշնամին Իսրայելի պետությունն է։ Արաբական մյուս երկրների հետ միասին սիրիական կառավարությունը պիտի պաշտպանի իր սերիտորիայի ամբողջականությունը։

1955 թվականի հոկտեմբերին Սիրիայի, Լիբանանի և Հորդանանի պառլամենտներն իրենց ժողովներում ընդունեցին շնորհավորական բանաձևեր, ուղղված Եգիպտոսի պրեմյեր-մինիստր Գամալ Աբդել Նասերին, անգլո-ամերիկյան իմպերիալիստների կողմից ճնշման վերջին փորձերի դեմ նրա խրոխտ կեցվածքի համար։ Ուրիշ երկրներից զենք և ռազմամթերք ստանալու վերաբերյալ եգիպտական կառավարության որոշումը պատրվակ ծառայեցնելով, անգլո-ամերիկյան իմպերիալիստներն ուզում էին մի անգամ ևս միջամտել այս երկրի ներքին գործերին։ Սիրիական պառլամենտի բանաձևում նշված էր, որ դեպուտատների ժողովը հայտնում է իր համակրանքը և պաշտպանում է եգիպտական կառավարության վարած քաղաքականությունը, որը ձգտում է արդիական զենքերով զինել եգիպտական բանակը։ Դեպուտատների ժողովը հանդես է գալիս այս հարցի նկատմամբ որոշ օտարերկրյա կառավարությունների կողմից բարձրացրած աղաղակների դեմ և գտնում է, որ այդպիսի վերաբերմունք նշանակում է ուրիշ երկրների կողմից միջամտություն Եգիպտոսի ներքին գործերին։ Համակրանք հայտնելով այն երկրների նկատմամբ, որոնք պատրաստ են զենք և ռազմամթերք մատակարարել արաբական երկրներին, առանց այդ գործարքի հետ պայմաններ դնելու, առանց քաղաքական սակարկությունների, դեպուտատների ժողովը հրավիրում է սիրիական կառավարությանը հետևել Եգիպտոսի օրինակին։

Եգիպտոսում վերջին ժամանակներս ազգային-ազատագրական շարժումը և օտարերկրյա իմպերիալիստների դեմ ժողովրդական լայն մասսաների դիմադրությունը ուժեղ թափ ընդունեցին, երբ անգլիական իմպերիալիստները, անտեսելով 1936 թվականի ան-

գլո-եգիպտական ստրկացուցիչ պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին եգիպտական կառավարության պատմական որոշումը, շարունակեցին առաջվա նման մեծ թվով զինված ուժեր պահել Եգիպտոսի տերիտորիայում, մի բան, որը հակասում էր Եգիպտոսի սուվերենությանը։

Այնուհետև, շարունակելով ճնշում գործել եգիպտական կառավարության վրա, անգլո-ամերիկյան իմպերիալիստները փորձեցին Եգիպտոսը ներգրավել «Միջին արևելյան հրամանատարության» ագրեսիվ բլոկի մեջ։

1936 թվականի անգլո-եգիպտական պայմանագիրը և Սուդանի վերաբերյալ 1899 թվականի կոնվենցիան չեղյալ հայտարարելու մասին օրենքներն ընդունվելուց հետո, ներքին գործերի մինիստր Սիրաջ էդ-Դին փաշան հանդես գալով Եգիպտոսի դեպուտատների պալատում, հաղորդեց, որ Եգիպտոսի կառավարությունը որոշել է մերժել չորս տերությունների առաջարկները, այսպես կոչված, «Միջին արևելյան հրամանատարություն» ստեղծելու վերաբերյալ։ Նա հայտարարեց, թե կառավարությունը կշարունակի այն քաղաքականությունը, որ ձևակերպել է պրեմյեր-մինիստր Նահաս փաշան և արժանացել է պառլամենտի հավանությանը։

Սիրաջ էդ-Դին փաշայի հայտարարությունն ընդունվեց բուռն ծափահարություններով։

Զգալով դուրս գալ անգլո-եգիպտական լարված հարաբերությունների հետևանքով ստեղծված դժվարին վիճակից, որը խանգարում էր իմպերիալիստների կողմից Մերձավոր Արևելքում ագրեսիվ բլոկ կազմելու գործին, անգլո-ամերիկյան դաղութարարները դիմում են հետևյալ մանյովրին։ Անգլիացիների ու ամերիկացիների դրդումով, ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և թյուրքական դեսպանները, յուրաքանչյուրն առանձին, 1951 թվականի հոկտեմբերի 13-ին Եգիպտոսի արտաքին գործերի մինիստրին հանձնում են նոտաներ, որոնցով եգիպտական կառավարությանն առաջարկվում էր մասնակցել, այսպես կոչված, «Միջին արևելյան հրամանատարության» սիստեմին, որից հետո, իբր թե, հնարավոր պիտի լինի բանակցել անգլիական ուժերը Եգիպտոսից դուրս հանելու հարցի մասին։

Այդ առաջարկները հանգում էին հետևյալին. 1936 թվականի անգլո-եգիպտական պայմանագիրը պետք է փոխարինվեր «Միջին արևելյան հրամանատարություն» ստեղծելու վերաբերյալ նոր միջազգային համաձայնագրով. հրամանատարության շտաբի կենտրոնատեղին պետք է գտնվեր Եգիպտոսի տերիտորիայում՝ Սուեզի

ջրանցքի «պաշտպանությունը» իրագործելու համար. ԱՄՆ-ը պիտի մտներ «Միջին արևելյան հրամանատարության» մեջ և մասնակցեր այդ ամբողջ շրջանի, ներառյալ Եգիպտոսի «պաշտպանությանը»։ Առաջարկների տեքստում ասվում էր, թե իբր ԱՄՆ-ը չի դրավի Անգլիայի տեղը որպես Միջին Արևելքում «անվտանգության» մասին հոգ տանող գլխավոր տերություն։

Չորս տերությունների առաջարկում նշվում էր, որ եթե Եգիպտոսը միանա ստեղծվող նոր «հրամանատարությանը», Անգլիան կհամաձայնվի շեղյալ հայտարարելու 1936 թվականի անգլո-եգիպտական պայմանագիրը և դուրս բերելու անգլիական այն զինված ուժերը, որոնք չեն դրվի «Միջին արևելյան հրամանատարության» տնօրինության տակ։ Այսպիսով, երեք Արևմտյան տերությունների և մարիոնետային Թյուրքիայի առաջարկները հանգում էին այն բանին, որպեսզի ամեն կերպ Եգիպտոսը պահպանեն որպես ամերիկա-անգլիական ագրեսիվ բլոկի ռազմական բազա։

«Ալ-Մըսրի» թերթը, մեկնաբանելով չորս տերությունների առաջարկները, 1951 թվականի հոկտեմբերի 14-ի համարում, գրում էր. «Չորս տերությունների առաջարկների էությունն այն է, որպեսզի ամրացվեն իմպերիալիզմի դիրքերը Եգիպտոսում և Սուդանում...։ Ընթերցողները, ծանոթանալով այդ առաջարկներին, կհասկանան, որ դրանք իրականում հանդիսանում են ծանր շղթաներ, որոնցով իմպերիալիզմը կապկպում է Եգիպտոսը՝ երկրում իր ազդեցությունն ուժեղացնելու նպատակով։ Այդ առաջարկներն էլ ավելի մեծ վիրավորանք են հասցնում Եգիպտոսին, քան 1936 թվականի խայտառակ պայմանագիրը, որ ժողովուրդը պատռել է։ ...Եգիպտոսը պայքար է սկսել իմպերիալիզմի դեմ, և աշխարհում ոչ մի բան նրան չի կարող ետ դարձնել պայքարի այդ ուղուց։ Չորս տերությունները,— ընդգծում է թերթը,— սխալ են կատարում, եթե նրանք առանց հաշվի առնելու իրերի իսկական դրությունը, մտցնում են առաջարկներ, որոնք չեն համապատասխանում Եգիպտոսի ազգային ձգտումներին։ Եգիպտոսը ցանկանում է իր ապագա քաղաքականությունը որոշել իր սեփական հայեցողությամբ և լիակատար անկախության պայմաններում»։

Հետագայում, հասարակական կարծիքի ուժեղ ճնշման տակ Եգիպտոսի մինիստրների խորհուրդը կատեգորիկ կերպով մերժեց չորս տերությունների առաջարկները, հայտնելով, որ դրանք չեն համապատասխանում եգիպտական ժողովրդի ազգային իդեալներին։

Եգիպտական հասարակայնությունը պայքարով դիմավորեց չորս տերությունների առաջարկները, դրանք դնահատելով որպես

Եգիպտոսը սարկայնելու փորձ՝ իմպերիալիստների նոր ագրեսիվ պլաններին նրան «կամավոր» մասնակից դարձնելու պատրվակով, և դիմից բողոքի մասսայական ցույցերի, անգլո-ամերիկյան իմպերիալիստներին դուրս վտարելու նշանաբանով։ Բողոքի ցույցերը տարածվեցին երկրի գլխավոր քաղաքներում։ Սուեզի ջրանցքի դոտում անգլիական ուժերը միջամտեցին և կրակ բաց արին խաղաղ ցուցարարների վրա։ Սպանվեցին և վիրավորվեցին մեծ թվով խաղաղ բնակիչներ, որոնց թվում շատ կանայք և երեխաներ։ Սուեզի ջրանցքի շրջանը անգլիական հրամանատարության կողմից հայտարարվեց արգելված գոտի։

Եգիպտոսի ներքին գործերի մինիստրության կոմյունիկեի համաձայն, անգլիական զորքերը շրջապատել էին Աբու Սուվեյրը և Իսմայիլիայի ջրանցքի արևմտյան ափին գտնվող երկու գյուղեր և այնտեղ խուզարկություններ կատարել։ Ինչպես հաղորդվում է կոմյունիկեում, բնակիչներին դուրս էին արել իրենց տներից և աղամարդկանց տեղավորել փշալարից պատրաստված ցանկապատի ներսը՝ կանանցից ու երեխաներից առանձին։ «Ալ-Մըսրի» թերթը 1952 թվականի հունվարի 11-ի իր համարում հաղորդել էր, որ այդ օպերացիային մասնակցել է 1500 անգլիական զինվոր։ Ձերբակալվել են մեծ թվով եգիպտացի գյուղացիներ։

Այս իրադարձությունների հանդեպ ժողովրդի ցասումը մեծ է լինում։ Կահիրեի ուսանողներից կազմվում են պարտիզանական ջոկատներ, որոնք մեկնում են դեպի Սուեզի ջրանցքի գոտին՝ աղատելու իրենց բանտարկված եղբայրներին։

Ժողովրդի դիմադրությունը մեծ չափերի է հասնում և 1952 թ. հունվարի 25—26-ին Կահիրեում տեղի են ունենում փողոցային մարտեր։

Տեսնելով, որ երկրի անկախության համար մղվող պայքարում վերջին հաշվով կարող է տուժել անգլո-ամերիկյան իմպերիալիստների վարձկան իշխող խավը, Թագավորը դեկրետով պաշտոնից ազատում է պրեմյեր-մինիստր Նահաս փաշային և հայտնի ռեակցիոներ, նախկինում ֆաշիստների հետ համագործակցող Մահեր փաշային հանձնարարում է կաբինետ կազմել։ Մահեր փաշայի՝ նոր կառավարություն կազմելու փորձերը անհաջողության մատնվելու հետևանքով, այս անգամ հրավիրվում է նույնքան ռեակցիոներ, Վաֆդ պարտիայից վտարված Ալ Հիլալի փաշան։ Այնուհետև դեկրետով ցրում են պառլամենտը, որտեղ մեծամասնություն էին կազմում վաֆդիստները և որոշում է ընդունվում նույն թվականի մարտը նոր ընտրություններ անցկացնել։

1952 թվականի հունիսին Եգիպտոսում տեղի ունեցած պետական հեղաշրջումը և գահից Ֆարուկ թագավորի հարկադրաբար հրաժարումը, հետևանք էին մի շարք դեպքերի, որոնց մեջ հիմնականը եգիպտական ժողովրդի ազգային ազատագրական պայքարի ուժեղացումն էր։ Այն պայքարի, որը ուղղված է թե օտարերկրյա իմպերիալիստների և թե նրանց վարձկան կառավարության դեմ։ Ինչպես հետագայում իրադարձությունների ամբողջ ընթացքը ցույց տվեց, Եգիպտոսի աշխատավորության դեպի ազատությունն ու անկախությունն ունեցած ձգտումը անմիջական ազդեցություն է գործել ուղղությունն շարժման հետ կապված դեպքերի զարգացման վրա։

Նրանք, ովքեր կազմակերպեցին և հաջող ընթացքի մեջ դրեցին կառավարական հեղաշրջումը, բոլորովին անծանոթ և համեստ ծագում ունեցող մարդիկ էին։ Դյուրի ճնշված ֆելահների և քաղաքի ինքնագիտակցություն ձեռք բերած մասսաների կողմից հեղաշրջումը կազմակերպողները դիտվեցին որպես երկրին բարիք բերող մարդիկ, որպես ազատության ասպետներ։ Դպրոցների աշակերտությունը և համալսարանների ուսանողությունը ողջունեցին նրանց որպես երկրի ազատարարների։

Արտաքին քաղաքականության կապակցությամբ, նոր կառավարությունը պետք է առաջին հերթին լուծեր Կահիրեի և Լոնդոնի փոխհարաբերությունների հարցը, երկրի ներքին գործերի կապակցությամբ պետք է անհապաղ լուծեր մի շարք սոցիալ — տնտեսական հարցեր, և անցկացներ ռեֆորմներ։

Լոնդոնի հետ բանակցությունները անգլիական իմպերիալիզմի ուժեղ դիմադրության հետևանքով երկար ձգձգվեցին։ Երկար ու ձիգ բանակցություններից հետո, եգիպտական կառավարության հետևողական ճիգերը երկրի ամբողջական անկախությունը ձեռք բերելու ուղղությամբ հանդեցրին երկրից անգլիական ռազմական ուժերը հեռացնելու կապակցությամբ 1954 թվականի հոկտեմբերի 19-ի անգլո-եգիպտական նոր պայմանագրի ստորագրմանը։ Ի կատարումն այս պայմանագրի, 1956 թ. հունիսին երկրից հեռացվեց բրիտանական վերջին զինվորը։ Նույն ամսի 20-ին բովանդակ երկրում մեծ շքեղությամբ տոնվեց Եգիպտոսի անկախության տարեդարձը։

Եգիպտոսի կառավարության հրավերով երկրի ազգային տոնի առթիվ կայացած հանդեսներին ներկա գտնվեց նաև ՍՍՌՄ կառավարության դելեգացիան՝ արտաքին գործերի մինիստր Շեպիլովի գլխավորությամբ։ Նա Սովետական կառավարության և Սովետական Միության ժողովուրդների անունից ամենասրտագին շնորհավո-

բանքներ հաղորդեց և բարեկեցության ու բարգավաճման բարեկամական ցանկություններ հայտնեց Եգիպտոսի աշխատասեր ու քաջարի ժողովրդին՝ արաբական մեծ կուլտուրայի կրողին ու ջատագովին, և լավագույն հաջողություններ մաղթեց Եգիպտոսի կառավարությանն ու նրա ականավոր ղեկավարներին։

Եգիպտոսի ազգային տոնի՝ անկախության և ռեսպուբլիկայի օրվա առթիվ 1956 թվականի հունիսի 19-ի երեկոյան Կահիրեի «Ռեսպուբլիկա» հրապարակում տեղի ունեցած բազմամարդ ժողովրդական միտինգում պրեմյեր-մինիստր Գամալ Աբդել Նասերը քաղաքական ծրագրային ճառով հանդես գալով նշեց, որ Եգիպտոսի ժողովուրդը մեծ հաղթանակ է տարել։ Վերջ է տրված բազմամյա օկուպացիային, երկրի ամբողջ տերիտորիայում ծածանվում է միմիայն եգիպտական դրոշակը, որ Եգիպտացիները իրենց սրտում զգում են այն ազատությունը, որի համար պայքարել էին նրանց հայրերն ու պապերը։ Այսուհետև Եգիպտոսը պատկանում է ձեզ,— դիմելով ժողովրդին հայտարարեց պրեմյեր-մինիստրը,— այլ ոչ թե մի բուռ շահագործողների։ Այժմ Եգիպտոսի տերը դուք եք՝ ժողովուրդը, և ոչ թե օկուպանտները, ոչ թե շահագործողները։ Հասնելով օտարերկրյա զորքերի էվակուացմանը, մենք իրականացրինք այն նպատակներից միայն մեկը, հանուն որոնց կատարվեց ռևոլյուցիան։ Այնուհետև պրեմյեր-մինիստրը ժողովրդին կոչ արեց բազմապատկել երկրի վերածնման նպատակին ուղղված իր ջանքերը։ Այժմ, ասաց նա, երբ մենք մեզ ազատ ենք զգում, մենք բոլորս պետք է համատեղ հասնենք սոցիալական արդարության։ Մենք լի ենք վճռականությամբ մեր երկրում ապահովելու իսկական սոցիալական արդարություն։ Մենք ձգտում ենք հասնել առողջ դեմոկրատական կյանքի։

Կանգ առնելով արտաքին քաղաքականության հարցերի վրա, Գամալ Աբդել Նասերը ընդգծեց, որ Եգիպտոսը իր անկախությունը կպաշտպանի բոլոր միջոցներով և, եթե պահանջվի, մինչև անգամ արյան գնով։ Մենք ամեն հնարավոր բան կանենք օտարերկրյա ագրեսիայից մեզ պաշտպանելու համար և կամրապնդենք մեր բանակը։ Մենք պատրաստ ենք համագործակցելու բոլոր նրանց հետ, ովքեր ուզում են մեզ օգնել։ Մենք իմպերիալիստական ձգտումներ չունենք, մենք ուզում ենք պահպանել մեր անկախությունը և ցանկանում ենք ազատագրել արաբական բոլոր երկրները։

Այս բոլոր իրադարձությունները ցույց են տալիս, որ գաղութների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները երբեք չեն ունեցել այնպիսի թափ, ինչպես մեր օրերում։

Այդ երկրների ժողովուրդները գնալով ավելի վճռականությամբ են հանդես գալիս իմպերիալիստական ճնշման դեմ, հանուն խաղաղության, հանուն իրենց երկրների հարստությունները և իրենց բախտը անձամբ տնօրինելու իրավունքի։

Իմպերիալիստական ճնշումն առաջ է բերում ժողովրդական մասսաների աճող դիմադրություն, որը իր արտահայտությունն է գտնում ազգային-ազատագրական և խաղաղության համար մղվող պայքարում։

Չնայած իմպերիալիստների միջև գոյություն ունեցող հակասություններին և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների աճող դիմադրությանը, անգլո-ամերիկյան դաղութարարները հանդես են գալիս միացյալ ճակատով խաղաղության պատվար՝ Սովետական Միության ու ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ։ Նրանք Միջին Արևելքում բլոկներ ստեղծելու պլաններ են մշակում այդ երկրները ներգրավելու իրենց ագրեսիվ ռազմական խմբավորումների մեջ և նրանց տերիտորիաները վերածելու Ատլանտյան բլոկի կողմից գլխավորվող պետությունների զինված ուժերի պլացդարմի։

Այդ պլանների իրագործումը, որոնք արտահայտում են ԱՄՆ-ի և մյուս իմպերիալիստական պետությունների համաշխարհային տիրապետության ձգտումները, նշանակում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ներգրավումը նոր համաշխարհային պատերազմի նախապատրաստման մեջ։ Այդ բանը հենց այդպես էլ ընդունվում է Մերձավոր և Միջին Արևելքի ժողովրդական մասսաների կողմից, որոնք հետզհետե ավելի ուժեղ պայքար են ծավալում օտարերկրյա իմպերիալիզմի դեմ և չեն ցանկանում երրորդ համաշխարհային պատերազմ նախապատրաստողների ենթադ մերենայությունների գործիքը դառնալ։

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Աշխատությունը տպագրության հանձնելուց հետո Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում տեղի ունեցան քաղաքական խոշոր նշանակություն ունեցող իրադարձություններ, որոնք իրենց հետ բերելով մի շարք նորություններ, շարունակեցին զարգանալ այն հիմնական դրույթների համաձայն, ինչ մենք հանդել էինք աշխատության ընթացքում։

Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում վերջերս զարգացող և միջազգային խոշոր նշանակություն ունեցող իրադարձություններից ուշադրության են արժանի՝ ա) եգիպտական կառավարության կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացումը, բ) անգլո-ֆրանսիական դաշնաթարթերի և Իսրայելի հարձակումը Եգիպտոսի վրա, գ) եգիպտական ժողովուրդի քաջարի դիմադրությունը և այդ ագրեսիայի ձախողումը, որտեղ մեծ նշանակություն ունեցավ նաև արաբական մյուս երկրների, ինչպես և սոցիալիզմի լագերի ու բոլոր խաղաղասեր պետությունների և ժողովուրդների պաշտպանությամբ հանդես գալու փաստը, դ) վերջապես, ԱՄՆ-ի վարած երկերսանի քաղաքականությունը, որը սկզբում հանդես եկավ որպես անգլո-ֆրանկո-իսրայելական ագրեսիոն գործողություններին «տատրկող», ապա այդ ագրեսիայի վիժումից հետո առաջ քաշեց Մերձավոր և Միջին Արևելքը միայնակ տիրապետելու համար նոր պլան։ Արդարև, «Էյզենհաուերի դոկտրինան», որը իրավացիորեն շատերի կողմից որակվում է որպես «ԱՄՆ-ի նավթային դոկտրինա», հանդիսանում է այս բոլոր իրադարձությունների «ապոֆեոզը», որը իր մեջ պարփակում է այն հիմնականը, ինչ մենք փորձել ենք մեր գրքում ապացուցել։

«Էյզենհաուերի դոկտրինան» փաստորեն Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում տնտեսական և քաղաքական ներթափանցման ամերիկյան նախկին ծրագրերի շարունակությունն է, որը այս անգամ հիմնվում է զինված ուժի վրա, և որպես այդպիսին ավելի քան

ագրեսիվ է։ ԱՄՆ-ը այդ պլանով փորձում է շահագործել արաբական պետությունների տնտեսական ժամանակավոր դժվարությունները և նրանց առաջարկում է իր «օգնությունը»։ Այդ մեղ հիշեցնում է «Տրումենի դոկտրինան», որը նույնպես իր ժամանակին Արևելքի ժողովրդական լայն զանգվածների դիմադրությանն արժանացավ։ Հանրահայտ է, որ տնտեսական և ռազմական կեղծ օգնության քողի տակ Ամերիկայի Միացյալ Նահանգները նախ և առաջ ձգտում են պաշտպանել իրենց նավթային մոնոպոլիաների շահերը, որոնք արդեն վերհսկում են Մերձավոր և Միջին Արևելքի նավթային հարստությունների մեծագույն մասը (տես այս կապակցությամբ մեր աշխատության երկրորդ գլուխը), միևնույն ժամանակ ասպարեզից դուրս վանելով իրենց մրցակիցներին՝ անգլիական և ֆրանսիական իմպերիալիստներին, միայնակ անօրինելու համար այս շրջանի բնական հարստությունները, շուկաները, ստրատեգիական դիրքերը և միջազգային ճանապարհների կարևորագույն հանգույցները։

Հետապնդելով այս նպատակը ԱՄՆ-ի դաղութարարները իրենց ոտնձգությունները արդարացնելու նպատակով առաջ են քաշում այդ երկրներում ստեղծված «վակուումի» (դատարկության) առասպելը, որը մեծ վիրավորանք և իրավացի դայրույթ է առաջացրել տեղական ազգայնական շրջաններում։

Այս դոկտրինայի նկատմամբ ժողովրդական լայն մասսաների մոտ առաջացած դայրույթն ու ցասումը իր արժանի արձագանքը գտնելով արևելյան մի շարք երկրների պետական դեկավար շրջաններում, արաբական կառավարությունները, ու Ասիայի և Աֆրիկայի երկրների Բանդունգի կոնֆերանսին մասնակցած շատ պետությունները արդեն այդ պլանի դեմ են արտահայտվել։

Կահիրեում, 1957 թ. հունվարի 18-ին տեղի ունեցած արաբական մի քանի երկրների դեկավարների հանդիպման ժամանակ, որտեղ և քննարկվեցին այս երկրների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, «Էյզենհաուերի դոկտրինայի» նկատմամբ արաբական երկրների վերաբերմունքի հարցը օրակարգի մեջ առաջնահերթ տեղ էր գրավում, ու ձևոք էր բերվել փոխադարձ համաձայնություն։ Սակայն, ինչպես միշտ, ԱՄՆ-ի մոնոպոլիստական շրջանները դիմել են բոլոր տեսակի միջոցների արաբական միասնությունը քայքայելու համար։ Ուստի, 1957 թ. հունվարի 31-ին Վաշինգտոնում տեղի ունեցած բանակցությունները ԱՄՆ-ի գլխավորությամբ՝ Էյզենհաուերի և Սաուդական Արաբիայի թագավոր՝ Իբն Սաուդի միջև հանգեց այս երկու երկրների միջև նոր պայմա-

նագրի ստորագրմանը, որտեղ և այս վերջինի կողմից հավանություն տրվեց տիրահռչակ դոկտրինային։ Ուշագրավ է այն փաստը, որ այս բանակցությունների ժամանակ կարևոր դեր խաղացին Մերձավոր և Միջին Արևելքում գործող ամերիկյան նավթային խոշոր ընկերությունները։ Մամուլի հաղորդումների համաձայն Սպիտակ տանը այն ճաշկերույթին, որը պրեզիդենտ Էյզենհաուերը տվել է Իբն Սաուդ թագավորի պատվին, ներկա են եղել խոշորագույն մոնոպոլիաների ներկայացուցիչները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կապեր ունեն Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունաբերության հետ։

Այնուհետև, ավելի ուշ, 1957 թ. փետրվար ամսի 25—27-ին տեղի ունեցած արաբական չորս պետությունների կոնֆերանսում, Սաուդական Արաբիայի թագավորը ԱՄՆ-ի պրեզիդենտի հետ իր բանակցությունների մասին տվեց մանրամասն տեղեկություններ։ Կոնֆերանսի վերջում հրապարակվեց համատեղ կոմյունիկե։ ՏԱՍՍ-ի, 1957 թ. 28 փետրվարի, հաղորդման համաձայն կոմյունիկեում նշված է, թե «...խորհրդակցության մասնակիցները հավատում են իրենց ձգտումը՝ համագործակցություն հաստատելու այն պետությունների հետ, որոնք իրենց հերթին ձգտում են բարեկամության արաբական երկրների հետ՝ սուվերենությունը, շահերը և այն քաղաքականությունը հարգելու հիման վրա, որն արաբական երկրներն անհրաժեշտ են գտնում վարել։ Արաբական երկրները վերստին հաստատում են իրենց վճռականությունը՝ հետու կանգնել զանազան տեսակի կոնֆլիկտներից և հավատարիմ մնալ դրական չեզոքության քաղաքականությանը»։

«Նրանք նաև ընդգծում են այն փաստը, նշում է ՏԱՍՍ-ը, որ արաբական աշխարհի պաշտպանությունը պետք է լինի արաբական երկրների գործը նրանց իրական անվտանգության լույսի տակ և պետք է զանվի օտարերկրյա պակտերի շրջանակներից դուրս»[1]։

ԱՄՆ-ի դաղութարարական նոր ծրագրերի իմաստը բոլորի համար պարզ է։ Եգիպտոսի դեմ ագրեսիվ պատերազմի ձախողումից հետո, ամերիկյան իմպերիալիզմը ձգտում է Մերձավոր և Միջին Արևելքում բռնել անգլո-ֆրանսիական իմպերիալիստների տեղը, նոպատակադրելով ճնշելու այդ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները։ Բոլոր երկրների խաղաղասեր հասարակայնությունը և հատկապես այն երկրների, որոնք իրենց

---

[1] Սովետական Հայաստան, 1957 թ. 29 փետրվարի։ Ընդգծումը մերն է։ (Հ. Թ.)։

վրա կրել են ու դեռևս կրում են դաղութային լուծը «էյզենհաուերի դոկտրինային» արդեն տվել են իր արժանի գնահատականը, որակելով այդ որպես զավթողական մի պլան, որը անտեսական ճնշման և շանտաժի մեթոդներով հետապնդում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրները գաղութացնելու և իր համար հումքային բազա դարձնելու քաղաքականություն։

Հետապնդելով այսպիսի նպատակ, «էյզենհաուերի դոկտրինայի» հռչակումից քիչ ժամանակ հետո, ամերիկյան իմպերիալիզմը միացավ Բաղդադի պակտի ռազմական հանձնաժողովին այդ կազմակերպության մեջ նույնպես ղեկավարություն ձեռք բերելու և միևնույն ժամանակ այդ պակտը, որը դատապարտվում է արաբական լայն խավերի կողմից, նորից կյանքի կոչելու համար։

Սակայն մեր ժամանակի անուրանալի երևույթներից է այն հանգամանքը, որ նախկինում ճնշված բոլոր երկրների ժողովրդական լայն խավերը պայքարի են ելել խաղաղության, ազատության ու դեմոկրատական կարգերի հաստատման համար։ Իմպերիալիստական շրջանները, որոնք չեն ուզում հաշտվել իրերի այս դրության հետ ճիգ ու ջանք չեն խնայում մարդկության կյանքում զարգացման այս նորմալ ընթացքը խանգարելու համար։ Իմպերիալիստների այս նոր դավերը զալիս են միայն և միայն միջազգային լարվածությունը սրելու, լուրջ սպառնալիքի տակ դնելով աշխարհի խաղաղության գործը։ Սակայն, իմպերիալիստները ի վիճակի չեն կասեցնելու Արևելքի ժողովուրդների ազգային ազատագրական հզոր զարթոնքի վերելքը, ետ դարձնելու նրա պատմական զարգացման անիվը։

Կողմնակից լինելով մեծ և փոքր ժողովուրդների անկախ ու անկաշկանդ զարգացմանը, իրավունքները ճանաչելու և հարգելու սկզբունքներին, Սովետական Միության, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի, ինչպես և ժողովրդա-դեմոկրատական երկրների կառավարությունների միջև փոխադարձ համաձայնություններ են կայացել ամեն կերպ պաշտպանելու Մերձավոր և Միջին Արևելքի երկրների արդարացի ձգտումը. դիմադրելու գաղութարարների բոլոր տեսակի պլաններին, ու զորավիգ կանգնելու ժողովրդական լայն խավերի այն սրբազան պահանջին, որը հետապնդում է ապրելու ազատ ու անկախ կյանքով, իրենց ճակատագիրը իրենք իսկ անօրինելու անկաշկանդ իրավունքով։

Այս բոլորով հանդերձ, ինչպես միշտ, ելնելով համաշխարհային խաղաղությունը ու ժողովուրդների անվտանգությունը պահպանելու և խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքներից, Սովե-

տական կառավարությունը իր բարերար ազդեցությունը գործելու համար 1957 թ. փետրվարի 11-ին համանման նոտաներ հղելով ամերիկյան, անգլիական և ֆրանսիական կառավարություններին առաջ է քաշում առաջարկներ՝ Մերձավոր և Միջին Արևելքի խաղաղության ու անվտանգության և այդ շրջանի երկրների ներքին գործերին չմիջամտելու հարցի վերաբերյալ։

Ինչպես հայտնի է, նշված նոտաներում Սովետական կառավարության ծրագիրը ղեկավարվում է հիմնականում ներքոհիշյալ վեց սկզբունքներով։

«1. Մերձավոր և Միջին Արևելքում խաղաղություն պահպանել վիճելի հարցերը բացառապես խաղաղ միջոցներով, բանակցությունների մեթոդի հիման վրա կարգավորելու ուղիով։

2. Չմիջամտել Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ներքին գործերին. հարգել այդ երկրների սուվերենությունն ու անկախությունը։

3. Հրաժարվել մեծ տերությունների մասնակցությամբ ստեղծվող ռազմական բլոկների մեջ այդ երկրները ներքաշելու ամեն մի փորձից։

4. Վերացնել օտարերկրյա բազաները և օտարերկրյա զորքերը դուրս հանել Մերձավոր և Միջին Արևելքի երկրների տերիտորիայից։

5. Փոխադարձաբար հրաժարվել Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին զենք մատակարարելուց։

6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրների տնտեսական զարգացմանը նպաստել՝ ընդսմին այդ երկրների արժանապատվության ու սուվերենության հետ անհամատեղելի առանց որևէ քաղաքական, ռազմական կամ ուրիշ պայման ներկայացնելու»։

Սովետական կառավարության այս վեց սկզբունքները, որոնք հակադրվում են «էյզենհաուերի դոկտրինային» հանդում են այն բանին, որին ձգտում են Մերձավոր և Միջին Արևելքի ժողովրդական լայն զանգվածները, ինչպես և խաղաղության, ժողովուրդների իրավահավասարության, անկախության, բարի-դրացիական հարաբերությունների և խաղաղ գոյակցության կողմնակից մեծ և փոքր երկրների բոլոր պետությունները։

Երևան, 12 ապրիլի, 1957 թ.»

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատմական ակնարկ: *Հին ժամանակների ճանապարհորդը՝ դեռևս մեր թվարկությունից առաջ՝ կասպից ծովի ափերը եղերելիս, սարսափի և զմայլանքի զգացմունքներով համակված, հեռվից դիտում էր Ապշերոնի թերակղզուց բարձրացող «անմար» բոցերը, այն թերակղզուց, որտեղ հետագայում կառուցվելու էր համաշխարհային նշանակություն ունեցող նավթարդյունաբերական քաղաքներից մեկը, Սովետական Միության նավթարդյունաբերության կենտրոններից կարևորագույնը և հնագույնը՝ Բաքու քաղաքը։*

Երկրից երկինք բարձրացող ահավոր բոցերը անտիկ մարդկության համար անբացատրելի, խորհրդավոր երևույթ էր, որից մարդը կամ խույս էր տալիս սոսկումով և կամ, իր տգիտության շնորհիվ ահարեկված, խոնարհվում էր նրա առջև ու դարձնում իր պաշտամունքի առարկան։ Անտիկ աշխարհից մինչև այժմ մնացած բազմաթիվ մեհյաններն ու պաշտամունքի վայրերը, որոնք հաճախ հանդիպում են Արևելքի երկրների նավթաշատ շրջաններում, վկայում են այդ և միաժամանակ օգտակար ուղեցույցներ են հանդիսացել մի շարք նավթահորերի հայտնաբերման գործում։ Այդպիսիներից են եղել Բաքվից 20 կմ հեռու Սուրախանիից հարավ-արևմուտքում և Մասմիդ-ի-Սուլեյմանում (այժմյան Իրանում) գտնվող հին տաճարները, որոնք հատուկ անցքերի միջոցով կապված լինելով հողի ընդերքի այն շերտերի հետ, որտեղից բնական գազեր էին բխում, իրենց խորաններն ու զոհասեղանները սնել են «անսպառ» բոցերով։ Այդ «ահեղ» նյութը, որը խրախուսել է անտիկ սնոտիապաշտության ֆանտազիան, իրականում ուներ այնպիսի հատկություններ, որոնք ավելի ուշ, և մինչև XIX դարը, մարդկության համար դարձան օգտակար. իսկ XX դարի մարդկության համար՝ անհրաժեշտ։

Այն նյութը, որ մենք այսօր բիտում ենք կոչում, բաղդեացիներն իրենց ժամանակ շինարարության մեջ օգտագործել են աղյուսը աղյուսին կպցնելու և ջրամբարների պատերն ու ջրմուղային սիստեմները անջրանցիկ դարձնելու համար։ Հին եգիպտացիները, իրենց դիակները զմրսելու համար, մինչ այդ օգտագործված նատրոնի փոխարեն սկսեցին գործածել բիտումից այն բաղադրությունը, որի մեջ մտնում էր բաղդեացիներից վերցրած բիտումը և որը կոչեցին «մումիա» ու հենց այդտեղից էլ առաջացավ «մումիա» բառը։

Փյունիկեցիները, որոնք առևտրական ժողովուրդ էին և մեծ ճանապարհորդներ, այս սև նյութից փոխադրեցին Հռոմ։ Հռոմայեցիներին այս նյութը հայտնի դարձավ իր բուժիչ հատկություններով և օգտագործվեց նաև տները լուսավորելու համար։

Անտիկ աշխարհը այս նյութն օգտագործեց նաև պատերազմների մեջ։ Այսպես, օրինակ, երբ Աղեքսանդր Մեծի զորքերը պաշարել էին բարելացիներին, վերջիններս նրանց դեմ օգտագործեցին նավթի մեջ թաթախված հրկիզող գնդեր։ Նույնանման միջոցների դիմեցին սիրիացիները Լուկուլլոսի լեգեոնների դեմ իրենց պաշտպանողական կռիվներում, և հայերը Լուկուլլոսի զորավար Սեկստիլլուսի դեմ մեր թվականությունից առաջ 69 թվականի ամռանը։ Տիգրանակերտը պաշտպանելիս։

Չինաստանում, մարդկային քաղաքակրթության այդ հնագույն օջախում, արդեն շատ վաղուց օգտագործել են նավթով վառվող պրիմիտիվ ճրագներ։ «Վառվող ջուրը», ինչպես անվանում էին ճապոնացիները, օգտագործվում էր դեռևս մեր թվարկությունից առաջ 615 թվականին։

Բաքվի շրջանում՝ Բալախանիում, ըստ Դուբկինի[2], 1735 թվականին արդեն գործում էր 52 նավթահոր 200 հազար փութ տարեկան արդյունահանմամբ։ Տեղական խանը մեծ հարստություն էր դիզում այս գաղտնահոս նյութի արտահանումով, որը տակերի մեջ կարավաններով Պարսկաստանից[3] վրաքով փոխադրվում էր դեպի ծովափը և ապա՝ Եվրոպա։ Սակայն, այս շրջանի նավթարդյունաբերության սկիզբը պետք է համարել XIX դարի առաջին տասնամյակները՝ ռուսների կողմից Կովկասի և այդ թվում Բաքվի խանության գրավումից հետո։ Այդ թվականներին Աղեքսանդր Առաջին թագավորը հետաքրքրվելով նավթի պրոբլեմով, Պետերբուրգի Գիտությունների կայսերական ակադեմիային հանձնարարեց ուսումնասիրել այդ նյութի գործնական հատկությունները։

1823 թվականին ռուս դյուզայի Դուբինինը Հյուսիսային Կովկասում կառուցում է նավթաթորման գործարան, որը, թեև պրիմիտիվ, սակայն իր տեսակի մեջ առաջինն է լինում։ Յոթը տարի հետո, 1830 թվականին, ռուս ինժեներ Վոռոնոյեսկիկովը Բաքվի մոտ կառուցում է մի քիչ ավելի կատարելագործված նավթաթորման գործարան։ Այս երկուսին հաջողվում էր անմշակ նավթից լուսավորության համար յուղ ստանալ, սակայն աշխատանքի մեթոդները և սարքավորումներն այնքան պրիմիտիվ էին, որ ստացված նյութն անորակ էր։

1859 թվականին Բաքվի շրջանում Վիտը՝ Սվյատոյ կղզում, իսկ Կոկորևը՝ Սուրախանիում մեկական նավթաթորման գործարան են կառուցում։

Տեխնիկական անհաջողությունների հանդիպելով, Կոկորևը դիմում է հայտնի քիմիկոս պրոֆ. Մենդելեևին, որն իր առաջադրած նոր մեթոդներով հիմք դրեց ռուսական նավթարդյունաբերական տեխնիկային, որից հետագայում մեծապես օգտվեցին նաև օտար երկրների նավթի մասնագետները։

Ինչպես Բաքվի խանների տիրապետության, այնպես էլ ցարական իշխանության առաջին օրերին, նավթավայրերը հանդիսանում էին պետական սեփականություն և շահագործման համար մասնավորների կողմից վարձակալվում էին չորս տարի ժամանակով։ Պարզ է, որ այդ պայմաններում վարձակալները շահագրգռված չէին խոշոր կապիտալ ներդրումներ անելու և հիմնական սարքավորում-

---

[1] Petroleum Times, Sept. 16, 1955, p. 143.

[2] И. М. Губкин, Учение о нефти, М.—Л., 1932, стр. 4.

[3] Ինչպես հայտնի է, Պարսկաստանի անունը պաշտոնապես փոխվեց Իրանի միայն 1935 թվականին, այս թվականից առաջ տեղի ունեցած իրադարձությունների մասին խոսելիս մենք այս երկիրը պիտի հիշենք Պարսկաստան անունով։

ներ տեղադրելու։ Ահա թե ինչու նավթարդյունաբերության զարգացումը այդ ժամանակաշրջանում որոշ չափով կասեցվեց։

1872 թ. փետրվարին, պրոֆ. Մենդելեևը, որը միաժամանակ վարում էր Կովկասի հանքային վարչության դիրեկտորի պաշտոնը, կառավարությանը ներկայացրեց «նավթային հարստությունների շահագործման» իր նոր ծրագիրը, որի հետևանքով վարձակալման հին ձևին վերջ տրվեց։

Այդ թվականից սկսած, Բաքվի շրջանի նավթային հարստությունները շահագործվում էին կոնցեսիոն հիմունքներով։ Առաջին գլխավոր կոնցեսիոներները եղան նախկին վարձակալներ Կոկորևը, Միրզոևը, Վերմիշևը և ուրիշներ։ Կոնցեսիաների սիստեմը, վարձակալման սիստեմի համեմատությամբ, անշուշտ, ավելի պրոգրեսիվ էր և պահանջում էր խոշոր կապիտալ ներդրումներ կատարել ու ավելի հիմնական սարքավորումներ կիրառել, թեև այս սիստեմը, նավթարդյունաբերության ազգայնացման սիստեմի համեմատությամբ, ավելի հետադիմական էր։ Կոնցեսիաներ շնորհվելուց անմիջապես հետո նավթի արդյունահանումն սկսեց մեծ վերելք ապրել այս շրջանում։ 1873 թվականին նավթահանումն աճեց 3,9 միլիոն փութ, նախորդ տարիների 1,4 միլիոն փութի դիմաց, այնուհետև, 1876 թվականին այն հասավ 11 միլիոն փթի, 1882 թվականին՝ 50 միլիոն, 1901 թվականին՝ 706 միլիոն փթի, այսպես գերազանցելով ԱՄՆ-ի նույն թվականի արդյունահանմանը։

Եվրոպական Ռուսաստանում Իոսիֆ Հեկկերը անմշակ նավթի թորումով առաջին պատրաստեց պատրուգավոր լամպ վառելու յուղը, որը հետագայում կոչվեց կերոսին։ 1815 թվականից սկսած, Ռուսաստանի Դրոգոբիչ քաղաքի փողոցները լուսավորելու համար օգտագործում էին այս նյութը։ Շատ չանցած, Պրագան հետևեց նույն օրինակին։ Դեղագործ Իգնաս Լուկասևիչը 1853 թվականին ավելի հաջող թորելով, ստացավ առավել մաքուր վառելյուղ։ Նույն տարին Լվովի հիվանդանոցը լուսավորվեց այս վառելանյութով։

Եվրոպայում, 1745 թվականից սկսած, նավթի հումքից նկնելով, բացի դեղորայքից, սկսեցին պատրաստել նաև առանցքների և շփվող մասերի համար քսուքներ և նավերի հատակը ջրի ներծծումից ապահովելու համար՝ ձյութ։ Եվրոպայում մինչև այժմ հայտնաբերված ամենակարևոր նավթային պաշարները գտնվում են Ռուսաստանում, Ռումինիայում, Լեհաստանում, Ավստրիայում, ավելի փոքր քանակությամբ՝ Ալբանիայում, Հունգարիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում և Անգլիայում։

Ամերիկայում բնիկներին նավթը ծանոթ էր իր բուժիչ[1] հատկություններով։ 1840 թվականին Սամուել Կիները, տեսնելով, որ Իրոկուայի հնդիկները գարշա-

[1] Մի ժամանակ, մինչև անգամ գիտական և բժշկական շրջաններում, մեծ հավատ կար նավթի բուժիչ հատկությունների նկատմամբ։ Սրանից հիսուն տարի առաջ լույս տեսած՝ նավթի տեխնիկային վերաբերող մի ժուռնալում հանդիպում ենք, այս կապակցությամբ, հետևյալ հետաքրքիր հաղորդմանը ...մեզ վաղուց ծանոթ է նավթը իր բուժիչ հատկություններով, սակայն նորություն է այն, որ հիմա արդեն այս հարցով սկսել են զբաղվել նաև այնպիսի հռչակավոր բժիշկներ, ինչպիսիք են՝ դոկտոր Վիլլիամ Լվարտը և դոկտոր Վ. Դաֆիլդ Ռորինսոնը, որոնք գտել են, որ նավթի միջոցով հնարավոր է բուժել ժանտատենդը, թոքախտը, լուծը, փորհարությունը և աղիքային հիվանդությունների տարբեր տեսակները։ (Տե՛ս The Petroleum Review, January 6, 1905).

հում նյութը վաճառելով մեծ շահույթներ են ապահովում, որոշից այդ նյութի վաճառքը կազմակերպել առևտրական մասշտաբներով։

1854 թվականին նավթի հետքեր երևացին Բրուվեր, Ուատսըն և ընկերության աղջաբանին կից հողամասում։ Այդ նույն ընկերությունը, քիմիկոս Ջորջ Բիսելի ղեկավարությամբ, ստեղծեց Ռոկ Օյլ Կոմպանին, որը հետագայում իր հետախուզական աշխատանքները տարածեց նաև ընկերության սեփական հողամասերից դուրս։ 1857 թվականին հետախուզական աշխատանքների ղեկավարությունը հանձնվեց էդուին Լորենտայն Դրեյկին, որն իր աշխատանքներն սկսեց ամենապրիմիտիվ մեթոդներով։ Դրեյկի հետախուզությունները երկար ժամանակ դրական որևէ արդյունք չտվեցին։ Նա արդեն հուսալքության ու սնանկության եզրին էր հասել, երբ 1859 թ. օգոստոսի 27-ին 32 մետր խորության վրա հայտնաբերվեց այդ ժամանակվա համար առատ նավթ, օրական 1,5 տոննա արտադրունակությամբ։

Դրեյկի հայտնաբերումը ամերիկացի նավթայինները համարում են ԱՄՆ-ում արդի նավթարդյունաբերության հիմնաքարը, որովհետև նրա օրինակին հետևեցին բազմաթիվ ուրիշներ և երկրի տնտեսության մեջ նավթարդյունաբերության տեսակարար կշիռն այդ թվականից հետո սկսեց անընդհատ աճել։

1880 թվականին թշվառության և մոռացության մեջ մահացավ էդուին Լորենտայն Դրեյկը։

Այդ թվականներից հետո սկսվեց նավթային աղբյուրներին և ներքին ու արտաքին շուկաներին տիրանալու համար հենդ և անբարեխիղճ պայքարի մի շրջան։ Նավթարդյունաբերության պատմության այդ հատվածը նկարագրել ենք մեր աշխատության առաջին գլխում։

Նավթի բնական հատկություններ։ Տարբեր շրջաններից և հաճախ նույն շրջանի տարբեր հորերից ստացված նավթերը միմյանցից տարբերվում են մի շարք հատկություններով[1]։

Նավթաբանությունը այս տարբերությունների բոլոր պատճառների մասին դեռևս մինչև այժմ իր վերջին խոսքը չի ասել։ Այնուամենայնիվ, նշվում են, գիտականորեն բացատրելի հետևյալ երկու պատճառները. առաջին՝ նավթը, որպես ածխածնի (86 տոկոս) և ջրածնի (13 տոկոս) միացում, պարունակում է նաև փոքր քանակությամբ ածխաջրածինների համար օտար նյութեր, ինչպիսիք են՝ ծծումբը, թթվածինն և այլն, ու որովհետև այս օտար նյութերը զանազան նավթերի մեջ գտնվում են տարբեր հարաբերություններով (տես աղյուսակ 21), այս-

---

[1] Այսպես, օրինակ, Ապշերոնի թերակղզու նավթը, ամերիկյան նավթի համեմատությամբ, տարբեր հատկություններ ունի։ Ապշերոնի նավթի մեջ թեթև տարբերը կազմում են 5 տոկոս, միջինները, որոնցից ստացվում է լուսավորող յուղը կամ կերոսինը՝ 30 տոկոս, իսկ մնացածները ծանր տարբեր են, մինչդեռ ամերիկյան նավթի մեջ թեթև տարբերը կազմում են 20 տոկոս։ Բաքվի և ամերիկյան նավթերի տարբեր հատկությունների հետևանքով, և շնորհիվ նրան, որ քսուքները ծանր տարբերից են ստացվում, այս ասպարեզում ռուսական տեխնիկան հենց սկզբից շատ ավելի է զարգացել քան ամերիկյանը, և պատահական չէ, որ միջազգային շուկաներում ռուսական քսուքները շատ ավելի են գնահատվել։ 1878 թվականին Փարիզի ունիվերսալ ցուցահանդեսում ռուսական քսուքներին շատ բարձր գնահատական տվեցին և հռչակեցին որպես լավագույններ։

Նավթավայրերը	Տեսակարար կշիռը	Տոկոսներով					
		C	H	S	O	N	մոխիր
Բալախանի . . .	0,882	87,40	12,50	—	0,10	—	—
Բինագադի . . .	0,913	85,49	12,01	0,41	2,40	—	—
Գրոզնի	0,906	86,41	13,00	0,01	0,40	0,07	0,12
Զելենկեն . . .	0,8736	86,40	12,40	—	0,37	—	0,50
Ֆերգանա . . .	0,872	85,79	13,61	0,03	—	—	0,02
Մախալին . . .	0,944	87,74	12,04	—	0,22	—	—
Նեֆտեդաղ . . .	0,873	86,64	12,44	—	0,37	0,14	0,05
Պենսիլվանիա . .	0,801	86,10	13,89	0,06	—	0,09	—
Կալիֆորնիա (Միդվեյ)	0,958	86,58	11,61	0,22	0,25	0,74	—
Տեկսաս (Սպինդել)	0,913	85,05	12,30	1,75	—	0,92	—
» (Բոմոն) .	0,912	85,03	12,30	1,75	—	0,92	—
Հանովեր . . .	0,892	80,40	12,70	—	6,90	—	—
Պեշելբրոն . . .	0,968	85,60	9,60	—	4,50	—	—
Զանաև	0,952	82,60	11,80	—	5,60	—	—
Յավա	0,923	87,10	12,00	—	0,90	—	—
Բիրմա	—	83,80	12,70	—	3,50	—	—
Գալիցիա (արևելյան)	0,870	82,20	12,60	—	5,70	—	—
Գալիցիա (արևմտյան) . . .	0,885	85,30	12,50	—	2,10	—	—
Ռումինիա (Բուքուռենաուի) . . .	0,862	82,60	13,50	—	4,90	—	—
Ռումինիա (Կամպինա) . . .	0,846	86,03	13,26	0,13	—	—	—
Իրան	0,837	85,40	12,80	0,06	0,75	0,75	—
Իրաք (Կիրկուկ) .	0,820—0,860	—	—	2,00	—	—	—
(Կայարահ) .	0,950 - 0,980	—	—	6,00	—	—	—
(Կասար) .	—	—	—		—	—	—
(Ժաուան) .	—	—	—		—	—	—
(Նաժմահ) .	—	—	—		—	—	—
Կուվեյտ . . .	—	—	—		—	—	—
Սաուդական Արաբիա . . .	—	—	—	—	—	—	—
Բահրեյն . . .	—	—	—	—	—	—	—

* Աղբյուրներ. И. М. Губкин. Учение о нефти, М.—Л., 1932, стр. 35 A. Beeby - Thompson, Oil Field Exploration and Development, London; 1950, pp. 135, 510, 517, 523.

տեղից էլ առաջանում են տարբեր աղբյուրներից ստացվող նավթերի տարբեր հատկություններ։ Երկրորդ՝ նավթը առաջանում է երկար դարերի ընթացքում երկրի ընդերքում կուտակված նյութերի սինթեզման պրոցեսի հետևանքով։ Բնության կողմից կատարվող սինթեզում ջրածինն ու ածխածինը միանում են չափազանց բարձր ճնշման տակ և միաժամանակ շփման մեջ են մտնում հանքային, բուսական և կենդանական մնացորդների հետ, որոնք տարբեր վայրերում ունենալով տարբեր առանձնահատկություններ, տարբեր ձևերով են անդրադառնում պրոցեսի մեջ գտնվող նավթի վրա, որի հետևանքով ստացվում են տարբեր հատկություններ ունեցող նավթեր։ Այս պայմաններում կատարվող սինթեզը զուգամասնության պրոցես է, որի համաձայն, նույն բանաձևի նյութերը հաճախ արտահայտվում են միմյանցից տարբեր հատկություններով։ Նավթի տարբեր տեսակները միմյանցից տարբերվում են իրենց գույնով, հոտով, թանձրությամբ և մի շարք այլ հատկություններով, ինչպես նաև նավթաբորումից ստացվող ֆրակցիաների տոկոսային տարբեր հարաբերություններով։ Այսպես, օրինակ, եթե նավթերի որոշ տեսակներ թորելով հնարավոր է հասցնել ջրի թափանցկության, ապա ուրիշ տիպի նավթեր, որոնց թվում Պենսիլվանիայի նավթը, թորելիս ստացվում է մուգ դեղին հեղուկ, իսկ Մեքսիկայինը՝ սև, Ինդոնեզիայինը՝ ձիթապտղի կանաչ, կովկասյանը՝ մուգ և այլն։ Բացի այդ, եթե Վենեսուելայի նավթը թորելիս ստացվում է բարձր ֆրակցիայից մեծ տոկոս, ընդհակառակը, Մեքսիկայի նավթից ստացվում է ցածր ֆրակցիայի մեծ տոկոս։

Նորմալ ջերմաստիճանում անմշակ նավթը լինում է երեք տարբեր վիճակներում՝ գազային, հեղուկ և թանձր։ Գազային վիճակը, համեմատած հեղուկ վիճակի հետ, ներկայացնում է խտացման ավելի թեթև աստիճան, ընդ որում տեսակարար կշիռն ավելի ցածր է։ Թանձր նավթը, համեմատած հեղուկ վիճակի հետ, ներկայացնում է խտացման ավելի ուժեղ աստիճան, ընդ որում տեսակարար կշիռն ավելի բարձր է։ Նավթը թանձր վիճակ է ընդունում, երբ որոշ պատճառներով օքսիդացման է ենթարկվում և նրա միջից թեթև տարրերը ցնդում են։

Նավթի հոտը սովորաբար տհաճ է։ Անմշակ նավթից երբեմն առաջանում են ածխաջրածնային գազեր, որոնք մարդու օրգանիզմին վնաս են հասցնում և հաճախ թեթևակի հարբեցնում են։

Անմշակ նավթի ջերմատեղծ հատկությունը, լավագույն քարածխի համեմատությամբ մինչև 1,4 անգամ բարձր է։ Մշակված նավթի ջերմատեղծ հատկությունը բարձրանում է տարբեր ֆրակցիաների համեմատությամբ։ Քանի որ նավթի ջերմատեղծ հատկությունը մյուս տեսակի բոլոր վառելանյութերից բարձր է, ուստի միևնույն թվով ջերմային միավորներ ստանալու համար անհրաժեշտ են տարբեր վառելանյութերի հետևյալ քանակները (տե՛ս աղյուսակ 22)։

Առհասարակ նավթի բռնկման ջերմությունը 30° Ց-ից չի անցնում, բայց թեթև որակի և բարձր ֆրակցիայի նավթերը կարող են բռնկվել 0° Ց-ում։

Սրանք են, ամփոփ, թեկուզ և տարբեր աղբյուրներից ստացվող նավթի ընդհանուր բնական հատկությունները։ Իսկ այն հարցին, թե այս նյութը իր բաղադրանյութերով ինչպե՞ս է առաջացել, պատասխանում է, թեև առայժմ ոչ այնքան ապահով կերպով, նավթի երկրաբանությունը։

Նավթի երկրաբանությունը։ Անցյալում նավթահետախուզական աշխատանքները կատարվել են ոչ գիտական հիմունքների համաձայն։ Դիպվածը մեծ դեր է խաղացել նավթի առաջին աղբյուրների հայտնաբերման գործում։ Բնական ժայթքումները, շատրվանները, երկրի ընդերքից գազերի արտաթափանցումը և, վեր-

Աղյուսակ 22

Տարբեր վառելանյութերի ջերմատուն հատկությունը

Վառելանյութը	Միավորը	Վառելանյութը	Միավորը
Նավթ	1	Մերենայական տորֆ	2,09
Կոքս (ածխի) . . .	1,37	Սոճու փայտ . .	2,24
Անթրացիտ	1,44	Կեչու փայտ . . .	2,29
Գինու սպիրտ 95° . .	1,54	Գազ	2,59
		Աթար	3,04

չապես, երկրի մակերևույթին բիտումի և նման այլ հետքերը հանդիսացել են նավթային հարստությունների միակ արտաքին նշանները։

Այժմ դնալով նավթային հետախուզության գործը արդեն դարձել է ինքնուրույն գիտություն։ Այս գիտության մեջ առաջին դերը խաղում է երկրաբանությունն իր տարբեր ճյուղերով և, հատկապես, պալեոնտոլոգիայով և պալեոբոտանիկայով։ Բնական է, որ նավթի տեսակների բազմազանությունն այս գիտության մեջ որոշ դժվարություններ է առաջացնում։ Այդ բազմազանությունից ելնելով, նավթի կազմավորման ու ծագման հարցի շուրջը առաջացել են մի քանի տեսություններ, որոնք, եթե համեմատենք լինեն, պիտի հանգեն հիմնական երկու տեսության։

Առաջին տեսությունը, որն ունի ավելի մեծ թվով հետևորդներ, դա՝ օրգանական տեսությունն է։ Ըստ այս տեսության, նավթի առաջացումը հետևանք է երկրի ընդերքում բուսական ու կենդանական նստվածքների և բնական այլ պայմանների փոխազդեցության։ Այսպես, ուրեմն, երբ Երկրագունդը ենթարկվել է ներքին փոփոխությունների և երբ հին օվկիանոսները, հին բուսական ծածկոցն ու կենդանիները սուզվել են երկրի խորքերը, մինչև ներկա ձևն ընդունելը, հիշյալ նստվածքները հաղարամյակներ շարունակ մնալով երկրի խորքերում, զանազան ներքին գործոնների (ներքին ջերմության, բարձր ճնշումների, կատալիզատորների դեր խաղացող մի շարք այլ նյութերի) ազդեցության տակ, բնության այդ վիթխարի լաբորատորիայում առաջացրել են նավթը։

Բազմաթիվ փաստեր գալիս են այս տեսությունը հաստատելու։ Այսպես, օրինակ, աղի ջրերը համարյա միշտ ուղեկցում են նավթային հարստություններին։ Համարյա բոլոր նավթային շերտերը պարունակում են ձկների, խեցեմորթների, մոլուսկների և հին շրջանի ծովային այլ կենդանիների բրածոներ։ Եվ եթե նավթարեր շերտերի երկրաբանական բարտեզները համեմատելու լինենք հնագույն դարաշրջանի օվկիանոսների ու ծովերի բարտեզների հետ, ապա կնկատենք բազմաթիվ նմանություններ։

Երկրորդ տեսությունը ունի ավելի փոքր թվով հետևորդներ։ Ըստ այս տեսության, նավթն առաջացել է երկրի ընդերքում տեղի ունեցած ֆիզիկական և բի-

---

* И. М. Губкин. Учение о нефти, М.—Л., 1932, стр. 7; A. Beeby — Thompson. Oil Filed Exploration and Development, London, 1950. vol. I, p. 517.

միական պրոցեսների հետևանքով։ Ծովերի ու գետերի ջրերը ներծծվելով դեպի երկրի ընդերքը, հանդիպել են ալկալային մետաղների ու մետաղային ածխածինների, որի հետևանքով առաջ են եկել քիմիական նոր միացություններ, որոնք տարբեր բնական կատալիզատորների ներկայությամբ վերածվել են նավթի։

Նավթահանում։ Նավթի հանույթը մեծ մասամբ կատարվում է հորերի միջոցով, չափազանց հազվագյուտ դեպքերում՝ նաև ստորերկրյա անցքեր բաց անելով։ Այս վերջին սիստեմը օգտագործում են Գերմանիայում ու Ֆրանսիայում և, հատկապես, նավթահորերի ապատման այն ստիճանում, երբ ոչ ինքնուրույն կերպով և ոչ էլ պոմպերի միջոցով հնարավոր չի լինում ստանալ տրապպերի (նավթային շերտերի) մեջ մնացած նավթը։

Երկրաբանների ուսումնասիրությունից երևելով, հետախույզները որոշում են այն կետերը, որտեղ հնարավոր է հորատել։ Այնուհետև, անմիջապես սկսում են հորատման աշխատանքները, բայց միշտ չէ, որ դրական արդյունքներ են ստանում։ Ներկայումս, երբեմն էլ կարգացած է երկրաբանական դիտությունը, այնուամենայնիվ նավթահետազոտության ասպարեզում գիտությունը որոշ դեպքերում դեռևս չի կարողանում ասել իր կոնկրետ խոսքը։ Երկրաշերտը ծակելու աշխատանքները, որոնք կապված են մեծ ծախսերի հետ, հաճախ բացասական արդյունքներ են տալիս նույնիսկ ամենամեծ խորություններում։ 1955 թվականի վերջերին ԱՄՆ-ում կային հորեր, որտեղ նույնիսկ 4500—5000 մետր խորության վրա նավթ չի հայտնաբերվել։

Նավթահորերը ունենում են տարբեր խորություն, նայած երկրի ընդերքում նավթարեր շերտերի դրված դիրքերին։ 36 մետր խորության վրա առաջին անգամ նավթի հայտնաբերումը Դրեյկի կողմից ի հարկե բացառիկ դեպք էր։ Այժմ ԱՄՆ-ում նավթահորերի միջին խորությունը տատանվում է 250 մետրից մինչև 2700 մետրի միջև։ Շահագործվող հորերից ամենախորը (4769 մ) գտնվում է Ուայոմինգում։ Ավելի խոր հորեր՝ մեկը Օկլահոմայի շրջանում (5943 մ), իսկ մյուսը Կալիֆորնիայի շրջանում (5898 մետր) մնացել են ամուլ։ Վերջին տվյալների համաձայն, ԱՄՆ-ում մինչև այժմ փորված հորերի 81,4 տոկոսը ամուլ է։ Մերձավոր Արևելքի նավթահորերը, ընդհակառակը, ներկայացնում են բոլորովին այլ պատկեր։ Այս մասին հանդամանորեն խոսում ենք համապատասխան գլխում։

Երբ հորերի խորությունը հաճախ կիլոմետրերով է հաշվվում, պարզ է, որ հորատման աշխատանքները կապված են լինում մեծ դժվարությունների հետ։ Հորատման Դրեյկի մեթոդը, ապա նաև այն մեթոդը, որ XIX դարի վերջերին Եվրոպայում օգտագործում էին բահի և բրիչի օգնությամբ, արդեն մտել են հորատման տեխնիկայի հնությունների թանգարանը։ Ներկայումս նավթի հորեր բաց անելու համար հիմնականում երեք մեթոդ են օգտագործում։ Առաջին մեթոդը իրագործվում է դեռևս ուժեղ և անընդհատ կրկնվող հարվածներ հասցնելով, երկրորդը՝ փորիչ ռոտորի, իսկ երրորդը փորիչ տուրբինի միջոցով։ Հետաքրքիր է նշել, որ չինացիներն արդեն դարեր առաջ օգտագործել են հորատման թեև պրիմիտիվ, բայց շատ ռացիոնալ մեթոդ, որը հիմնականում նման է ներկայումս օգտագործվող հարվածների մեթոդին։

Այսօր օգտագործվող երեք մեթոդներն էլ կիրառվում են գիտության բոլոր տվյալների համաձայն և այդ գործի կատարման համար անհրաժեշտ են մեծ թվով փոքրաչափ հորատող մասնագետներ և ավելի մեծ թվով հորատող բանվորներ։ Աշխատանքներն սկսում են առաջին հերթին 6—7 մետր խորությամբ և 3—4 բառակուսի մետր մակերեսով փոսեր բաց անելով։ Այդպիսի փոսի պատերը ցե-

մենտով պատում են և այդ հանդիսանում է այսպես կոչված նախահորը, որը նավթագործների տերմինարանությամբ անվանվում է ներքնահարկ։ Այս ներքնահարկի վրա է, որ փայտից կամ առավելապես մետաղից կառուցում են նավթահան աշտարակը։

Նավթահան աշտարակները հանդիսանում են, այսպես ասած, հորատման դաղդահներ, որոնց վրա ամրացվում են հորատման գործիքները։ Հորատման առաջին մեթոդի համաձայն, նավթահան աշտարակներից կախված մի ծանր մարմին միալար հարվածներ է տալիս գետնին, որը այդ հարվածների տակ փորվում է։ Անցքի տրամագիծը, նայած նախատեսված հորի խորությանը, լինում է 50—90 սանտիմետր։ Հարվածող ծանրությունը կշռում է 250 կիլոգրամից մինչև մեկ ու կես տոննա, նայած գետնաշերտի տեսակին։ Այդ ծանր մարմինն ունի կարծր սուր ծայր և փշրելու հատկություն։ Անցյալում հարվածների թիվը մի րոպեում 30—60-ից չէր անցնում, իսկ այժմ արդեն տեխնիկան այնքան է զարգացել, որ հարվածների թիվը մի րոպեում անցնում է 200-ից։ Հորատման գործողությունները մեկ-մեկ ընդհատում են, որպեսզի ամրարիչները փշրված հողը կամ ժայռերը դուրս հանեն։ Այնուհետև, խողովակներ են իջեցնում հորերի պատերը հնարավոր փլուզումներից ապահովելու համար։ Այս մեթոդը թեև դեռ շատ է օգտագործվում, բայց ռոտորների և տուրբինների միջոցով հորատումն ավելի ռացիոնալ մեթոդ է։ Հորատման այս երկրորդ մեթոդի համաձայն, օգտագործում են պողպատյա հատուկ ռոտորներ, որոնց ծայրերը շափազանց սուր և պինդ են։ Ռոտորը ուղղահայաց պտտվելով, ծակում է հողաշերտը։ Ներկայումս փորիչ ռոտորի պտույտների թիվը հասնում է րոպեում 600-ի։ Հորատման այս կատարելագործված մեթոդների միջոցով, երբ շատ կարծր ժայռեր են ծակում, ժամում փորում են մինչև 2 սանտիմետր, իսկ փափուկ երկրաշերտի դեպքում, նույն ժամանակամիջոցում հնարավոր է լինում փորել մինչև 30 մետր։

Կա նաև տուրբինային հորատման մեթոդ։ Սովետական տեխնիկան տուրբինային հորատման առաջարկում աշխարհում ամենակատարելագործվածն է։

1955 թվականի մայիս և հունիս ամիսներին Հռոմում տեղի ունեցած նավթի համաշխարհային չորրորդ կոնգրեսում սովետական դելեգացիայի անդամ՝ Տ. Ա. Տրեբինի հաղորդումը տուրբինային հորատման սովետական մեթոդի մասին, մեծ հետաքրքրություն առաջացրեց ներկաների մոտ։

Այս հաղորդման համաձայն տուրբինային հորատման մեթոդը առաջին անգամ կիրառվեց Սովետական Միությունում՝ 1925 թվականին։ Այս մեթոդի առաջին հեղինակներից մեկն էր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Ա. Կասպեյշուիկովը։ Սովետական ինժեներներ՝ Պ. Պ. Շումիլովի, Ռ. Ա. Բոանենսյանի, Ե. Ի. Տաժիլևի և Մ. Տ. Գուսմանի նախաձեռնությամբ, 1935 թվականին տուրբինային հորատման այս մեթոդը կատարելագործվելով լայն գործածության մեջ մտավ Սովետական Միության գրեթե բոլոր նավթավայրերում ու դարձավ ռոտորային հորատման մեթոդի լուրջ մրցակիցը։

Այս մեթոդի ամենակատարելագործված կոմպլեքսի տուրբինների արագությունն արդեն հասել է րոպեում 500—900 պտույտի, մինչև 30—35 տոննա դիմադրության պայմաններում։ 1954 թվականին Բաքվի Բուզովնայի շրջանում տուրբինային մեթոդով հորատված մի շարք հորերի փորման միջին արագությունը ժամում 25—40 մետրի հասավ։ Բուզովնիի փորձը ցույց տվեց, որ տուրբինը-փորիչը ներկա կատարելագործված վիճակում հնարավոր է մեծ հաջողությամբ կիրառել փորելու համար բոլոր տեսակի ապարները։

1956 թվականի փետրվար և մարտ ամիսներին Մոսկվայում բանակցություններ տեղի ունեցան ամերիկյան Դրեսեր Ինդաստրիզ ընկերության վիցե-պրեզիդենտ Օ'Կոնորի և Մաշինոէքսպորտ Համամիութենական միավորման միջև՝ ԱՄՆ-ում նավթահորեր փորելու համար սովետական կոնստրուկցիայի տուրբինային հորատիչներ արտադրելու իրավունքի լիցենզիա ՍՍՌՄ-ից ձեռք բերելու նպատակով։

Կայացած համաձայնությամբ նախատեսվում է Դրեսեր Ինդաստրիզ ընկերությանը հանձնել այնպիսի տեխնիկական փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են սովետական կոնստրուկցիայի տուրբինային հորատիչներ արտադրելու համար, որոնք օգտագործվում են տարբեր ամրության ապարներում նավթահորեր և գազահորեր փորելիս, ինչպես նաև ԱՄՆ գործուղվել մի խումբ սովետական ինժեներներ՝ փորձնական փորմանը մասնակցելու համար։

Սովետական տուրբինային հորատման այս ամենակատարելագործված մեթոդի մասին Ուորլդ Պետրոլյում ժուռնալի 1955 թվականի մարտի և ապրիլի համարներում և Պետրոլյում Թայմս ժուռնալի 1955 թվականի հոկտեմբեր ամսի համարում[1] հոդվածներ են լույս տեսել, որտեղ բավական մանրամասն նկարագրվում են այս ասպարեզում սովետական առաջավոր մեթոդները և հիշվում են սովետական մի շարք ականավոր մասնագետների անուններն ու աշխատությունները։

Չնայած հորատման ներկա բարձր տեխնիկային, աշխատանքների ընթացքում վթարանքները դեռևս անխուսափելի չեն։ Լինում են դեպքեր, երբ նավթահորը գործարկելուց հետո մի քանի օրում ջրակալվում է։ Հաճախ հորատման գործիքները փշրվում և թաղվում են հորերի մեջ։ Այնուհետև լինում են այլ տեսակի զանազան վթարանքներ, որոնց հաճախ ուղեկցում են հրդեհներ։ Այս բոլորի հետևանքով հորատման աշխատանքների ընթացքը խիստ դանդաղում է։

Հորատման պրոցեսում նավթային շերտի հասնելու նշանները բազմազան են։ Կամ սկսում են գազեր դուրս գալ և կամ փշրված հողերն ու ժայռերը հորերից հանելու ժամանակ նկատվում են նավթի հետքեր։ Պատահում է, որ նավթը ինքնուրույն կերպով հանկարծ դուրս է ժայթքում ներքին գազերի ճնշման տակ։ Ժայթքումը զսպելու գործն ինքնին լուրջ պրոբլեմ է։ Այսպիսի ժայթքումներից ամենաուժեղը, որ եղել է Մեքսիկայում, ունեցել է մինչև 400 մետր բարձրություն, իսկ հոսած նավթի քանակը հասել է օրական 70 հազար տոննայի։ Այդպիսի դեպքերում ոչ մի ճիգ չի ինայվում ժայթքումը զսպելու, որովհետև այդ երևույթը, բացի նյութական մեծ վնասներ պատճառելուց, նաև հրդեհի մեծ վտանգ է սպառնում։ Ժայթքումները զսպելու համար օգտագործում են զանազան մեթոդներ։ Օգտագործվող միջոցները պետք է ի վիճակի լինեն դիմանալ յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրի վրա 150 կիլոգրամ ճնշման։ Այդպիսի հորերը, ժայթքումը զսպելուց հետո, դառնում են հեշտ շահագործելի, քանի որ նավթը այդ պայմաններում հորերի խորքից դուրս է հոսում ինքնուրույն կերպով։

Ընդհանրապես նավթահորերում գտնվող նավթի մի որոշ մասը, հաճախ 25-ից մինչև 40 տոկոսը, հորերի մեջ մնում է անօգտագործելի։ Նավթի այդ մասի շահագործումը կապված է մեծ ծախսերի հետ։ Հաճախ փորձում են հորերի մեջ ջուր, օդ և այլ գազեր մղելու միջոցով արհեստականորեն ճնշումներ ստեղծել

---

[1] World Petroleum, March 1955, p. 85; Idem, April 1955, p. 85; The Petroleum Times, October 28, 1955, pp 1085, 1088—1092.

մնացած նավթի արտամղման կարողությունը բարձրացնելու համար։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ նավթի կարիքն էլ ավելի էր զգացվում, ԱՄՆ-ում գիմեցին վերը մատնանշված միջոցներին։ Համենայն դեպս, ինչպիսի միջոցներ էլ որ ձեռնարկվեն, հորերի պաշարներն անսահման չեն։ Ըստ վիճակագրական տվյալների, 1859 թվականից մինչև 1955 թվականը ԱՄՆ-ում փորված 1,25 միլիոն նավթահորերից ներկայումս շահագործվում է մոտ 850 հազարը։ Բայց պետք է նկատել, որ հորատման տեխնիկայի հետագա զարգացման շնորհիվ, նավթահորերի շահագործումը ներկայումս տևում է մինչև քսան տարի՝ նախկին երկու տարվա դիմաց։

Ինչ վերաբերվում է հետազոտական և հորատման ծախսերին, ապա պետք է ասել, որ, ձեռքի տակ եղած տվյալներից երևալով, մի խումբ հետախուզիչների միջին ծախսերը կազմում են տարեկան 10—20 հազար դոլլար, մի հոր փորելու ծախսերը հասնում են 100—250 հազար դոլլարի։ Քանի որ երկրաբանական հետախուզման ու հորատման աշխատանքները կապված են չափազանց մեծ ծախսերի հետ, ուստի կապիտալիստական հասարակարգում ինքնաֆինանսավորման պայմաններ են ստեղծվում, որպեսզի նավթարդյունաբերությունը հենց սկզբից կենտրոնացվի մոնոպոլիստական խոշոր ընկերությունների ձեռքում։

Նավթի մշակումը։ Նավթը իր անմշակ վիճակում ածխաջրածինների և զանազան այլ նյութերի բազմաբնույթ է։ Նավթը, նախքան արդյունաբերության և տրանսպորտի մեջ օգտագործելը, ենթարկվում են զտման ու թորման հատուկ պրոցեսների։ Նավթամշակումը ներկայումս համաշխարհային արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկն է։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը նավթամշակման տեխնիկան Եվրոպայում ավելի շատ էր զարգացած, քան ԱՄՆ-ում։ Իսկ դա պատահական չէր, որովհետև այդ ժամանակներում գիտության ու տեխնիկայի, ինչպես նաև արդյունաբերության մակարդակը Եվրոպայում ավելի բարձր էր, քան ԱՄՆ-ում։ 1920 թվականից հետո էր, որ ԱՄՆ-ը առաջին համաշխարհային պատերազմից տնտեսապես ուժեղացած դուրս գալով, արդյունաբերության մեջ սկսեց աստիճանաբար գերազանցել Եվրոպային։ Օգտվելով Եվրոպայի տեխնիկայից ու փորձից և հենվելով տեղական նպաստավոր պայմանների վրա, ի դեմս տեղական նավթային մեծ հարստությունների և ներքին մեծ շուկայի, ԱՄՆ-ի կապիտալիստներն ստեղծեցին նավթամշակման խոշոր գործարաններ։

Նավթամշակումը հիմնականում զտման և թորման պրոցես է։ Այդ պրոցեսում հենվում են ածխաջրածինների այն հատկությունների վրա, երբ ջերմության որոշ աստիճաններում նրանք կամ գոլորշիանում են և կամ խտանում, այսինքն թանձրանում են։ Ընդ որում, ելնելով նավթի մեջ գտնվող զանազան կոմպոնենտներից, յուրաքանչյուրին հատուկ եռման աստիճաններից, հանույթը ենթարկելով տարբեր ջերմաստիճանների և այս կերպ անջատելով նյութի բաղկացուցիչ մասերը, ստանում են տարբեր ֆրակցիաներ։ Այս պրոցեսն ընդհանրապես կոչվում է ֆրակցիոնալ թորում։ Նավթաթորման մի ուրիշ ձևը՝ «կրեկինգ պրոցեսը» մոլեկուլների անջատման պրոցես է։ Նավթամշակման յուրաքանչյուր էտապում ստացվում են մեծ թվով տարբեր տեսակի նյութեր, որոնց մի մասն օգտագործվում է որպես էներգիայի աղբյուր, իսկ մյուս մասն արդյունաբերության այլ և այլ ճյուղերում՝ որպես հումք։ Որքան նավթաթորման տեխնիկան զարգանում է, այնքան ավելի է հնարավոր դառնում մեծացնել բարձր ֆրակցիաների ստացման տոկոսը և ավելացնել ստացվող տեսակների թիվը։ Այսպես, օրինակ, 1909 թվականին նավ-

թամշակումից ստացվում էր 11 տոկոս բենզին, 1930 թվականին այդ տոկոսն արդեն բարձրացել էր 47-ի։ Բացի այդ, վերջին տարիներս հատուկ պրոցեսի միջոցով սկսեցին պատրաստել հեպտան, իզո-օկտան, 70-օկտան ավիացիոն բենզինի տեսակներ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ինքնաթիռների մեջ սկսեցին օգտագործել 100-օկտան բենզին՝ 81-օկտան բենզինի փոխարեն։ Այս 100-օկտանի գործածության շնորհիվ 16 տոկոսով մեծացավ գործողության շառավիղը, 27 տոկոսով՝ բարձրության առաստաղը, 40 տոկոսով՝ բարձրանալու արագությունը և այլն։ Պարզ է, թե այս նյութը ինչպիսի մեծ նշանակություն ունեցավ պատերազմի ընթացքի համար։ Նավթաթորումից ստացվող բազմազան մյուս ֆրակցիաները, որոնց թվում բուտանը և իզոբուտանը օգտագործվում են սինթետիկ կաուչուկի արտադրության մեջ, իսկ տոլուոլը, քսիլենը և այլն՝ ռազմական նպատակների համար։

Աղյուսակ 23*

Տարեթվեր	1932	1933	1934	1935	1936	1937	1938
Օկտանի թվերը . .	82,3	87,3	90,2	91,0	93,0	96,0	98—100

Նավթամշակումը ներկայումս հանդիսանում է արդյունաբերության ամենակարևոր ճյուղերից մեկը։ ԱՄՆ-ում առ 1955 թվականը նավթամշակման արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կազմում էին 5,5 միլիարդ դոլար, հսկայական մի գումար։

1955 թվականին կապիտալիստական երկրների նավթաթորման արդյունաբերությունը ներկայացնում էր հետևյալ պատկերը. ԱՄՆ-ը, որը գրավում էր առաջին տեղը, ուներ 326 նավթաթորման գործարան, օրական 1,16 միլիոն տոննա մշակման կարողությամբ։ Ամերիկյան երկու կոնտիննենտների մյուս երկրները միասին վերցրած՝ ունեին նավթաթորման 114 գործարան, օրական 265,4 հազար տոննա մշակման կարողությամբ։ Արևմտյան Եվրոպայում կար 137 նավթաթորման գործարան, օրական 337,6 հազար տոննա մշակման կարողությամբ։ Մերձավոր և Միջին Արևելքում թեև նավթաթորման գործարանների թիվը փոքր էր՝ ընդամենը 14, բայց մշակման կարողությունը բարձր էր և օրական թորվում էր 186 հազար տոննա։ Աշխարհի ամենախոշոր նավթաթորման գործարանը հանդիսանում է Աբադանինը (Իրան)՝ տարեկան 20—25 միլիոն տոննա մշակման կարողությամբ, ապա գալիս են՝ Արուբայինը (Հոլանդական Անտիլներ), Բատոն Ռուժինը (Լուզիանա, ԱՄՆ), Պորտ Արթուրինը (Տեխաս, ԱՄՆ), և այլն։ Այս մասին տե՛ս աղյուսակ 24։

Հաջորդ աղյուսակը ցույց է տալիս կապիտալիստական երկրների նավթաթորման կարողությունը տոկոսային հարաբերություններով։ Բայց այս հարաբերությունները, իհարկե, փոփոխական են և կապված նոր գործարանների հետագա կառուցումների ընթացքի հետ։ Վերջին տվյալների համաձայն, 1954 թվականին կապիտալիստական երկրների նավթաթորման գործարաններում մշակվել է ընդամենը 747 միլիոն տոննա նավթ։

---

[1] Աղբյուր. Я. Т. Эйдус, Жидкое топливо и война, М.—Л., 1943. стр. 40.

Աղյուսակ 24*

Կապիտալիստական երկրների նավթաթորման խոշորագույն գործարանները

Վայրը	Երկիրը	Տարեկան մշակման կարողություն միլիոն տոննաներով
Աբադան	Իրան	25
Արուբա	Հոլանդական Անտիլներ	22
Կուրասաո	» »	15
Բատոն Ռուժ . . .	ԱՄՆ (Լուիզիանա)	10
Պորտ Արթուր . . .	ԱՄՆ (Տեքսաս)	10
Բեյտաուն	» »	10
Ռաս Տաննուրա .	Սաուդական Արաբիա	9,5
Բահրեյն	Բահրեյն կղզիները	9

Աղյուսակ 25**

Կապիտալիստական երկրների նավթաթորման գործարանների մշակման կարողությունը ըստ երկրների 1955 թ.

(տոկոսային հարաբերություններով)

ԱՄՆ	53,17
Մեծ Բրիտանիա	3,88
Կանադա	3,78
Վենեսուելա	3,21
Հոլանդական Արևմտյան Հնդկաստան	4,04
Իրան	3,93
Իտալիա	2,81
Ֆրանսիա	3,48
Սաուդական Արաբիա	1,19
Հոլանդիա	1,60
Ճապոնիա	1,35
Գերմանիա (Արևմտյան) . . .	1,77
Բահրեյն	1,11
Արգենտինա	1,26
Ադեն	0,76
Ինդոնեզիա	1,41
Մյուս երկրները	11,25

* Հաշվումները կատարել ենք ըստ հետևյալ աղբյուրների՝ World Petroleum, Annual Refinery Review, 1955, (July 15);

** Հաշվումները կատարել ենք ըստ հետևյալ աղբյուրների՝ World Petroleum, July 15, Annual Refinery Review, p 136; The Petroleum Times, May 27, 1955, p. 562; Ibid, June 24, 1955, p. 659; Ibid, Sept. 16, 1955, p. 941.

Աղյուսակ 26

Կապիտալիստական երկրների նավթամշակման գործարանները ըստ պատկանելության առ 1955 թ. (հազար տոննաներով)

Երկրներ	Անձնական կապիտալով գործարաններ	ԱՄՆ-ի քաղաքացիների կապիտալով գործարաններ	Մյուս օտարերկրյա կապիտալով գործարաններ	Ընդամենը
1	2	3	4	5
Արևմտյան Եվրոպա				
Անգլիա	21.220	8.000	—	29.220
Ֆրանսիա	7.435	6.220	13.265	26.920
Իտալիա	2.431	5.347	13.862	21.640
Հոլանդիա	10.000	1.550	—	11.550
Արևմտյան Գերմանիա	2.160	2.550	6.390	11.100
Բելգիա	900	1.250	2.600	4.750
Մյուսները	—	487	5.123	5.610
Ընդամենը	44.146	25.404	41.240	110,790
Տոկոսներով	39,9	22,9	37,2	100
Լատինական Ամերիկա				
Հոլանդական Արևմտյան Հնդկաստան	10.000	22.000	—	32.000
Վենեսուելա	10.865	16.135	—	27.000
Մեքսիկա	—	—	12.800	12.800
Արգենտինա	1.050	1.610	6.985	9,645
Տրինիդադ	5.750	250	—	6.000
Մյուսները	250	2.960	7.070	10.280
Ընդամենը	27.915	42.955	26.855	97.725
Տոկոսներով	28,4	43,9	27,7	100
Հյուսիսային Ամերիկա				
ԱՄՆ	25.200	393.685	—	418.885
Կանադա	3.325	12.370	13.675	29.370
Ընդամենը	28.525	406.055	13,675	448.255
Տոկոսներով	6,4	90,6	3,0	100

1	2	3	4	5
Մերձավոր և Միջին Արևելք				
Իրան	10.000	10.000	5.000	25.000
Բահրեյն	—	10.250	—	10.250
Սաուդական Արաբիա . . .	—	9.500	—	9.500
Ադեն	5.000	—	—	5.000
Իսրայել	4.280	—	—	4.280
Եգիպտոս	2.200	—	1.300	3.500
Մյուսները	1.239	995	936	3.170
Ընդամենը . .	22.719	30.745	7.236	60.700
Տոկոսներով . .	37,43	50,66	11,91	100
Հեռավոր Արևելք				
Ինդոնեզիա	7.415	3.250	—	10.665
Ճապոնիա	625	2.518	4.357	7.500
Ավստրալիա	2.460	220	195	2.875
Բրիտանական Բորնեո . . .	2.370	—	—	2.370
Մյուսները	850	1.900	920	3.670
Ընդամենը . .	13.720	7.888	5.472	27.080
Տոկոսներով . .	50,7	29,1	20,2	100
Կանադյան կղզիներ . . .	—	—	1.600	1.600
Հարավային Աֆրիկա . . .	—	750	—	750
Ֆրանսիական Մարոկկո . .	—	—	150	150
Ընդամենը . .	—	750	1.750	2.500
Տոկոսներով . .	—	30,0	70,0	100
Կապիտալիստական երկրներ .				
Ընդամենը . .	127.025	503.797	116.228	747.050
Տոկոսներով . .	17,0	67,47	15,53	100

* *Հաշվումները կատարել ենք ըստ հետևյալ աղբյուրների՝* The Petroleum Times, May 27, 1955, p. 562; Ibid, June 24, 1955, p. 659; Ibid, Sept. 16, 1955, p. 941; World Petroleum, July 15, 1955, Annual Refinery Review, p. 136,

Նավթաթորման արդյունաբերությունը պահանջում է խոշոր կապիտալների մոբիլիզացում, ուստի համաշխարհային տնտեսության այս ճյուղում առաջացել է կապիտալի մեծ կենտրոնացում։ Աշխարհի նավթամշակման գործարանների մեծագույն մասը գտնվում է մի քանի մոնոպոլիաների ձեռքում, որոնք միաժամանակ տիրապետելով փոխադրական միջոցներին, հանդես են գալիս որպես նավթի համաշխարհային շուկաների տերն ու տնօրենը։ Աղյուսակ 26-ը ցույց է տալիս կապիտալիստական երկրների նավթամշակման ազդունաբերության ընդհանուր պատկերը ըստ մոնոպոլիստական խմբավորումների։

Տրանսպորտը։ Նավթահորերից մինչև սպառողին հասնելը նավթը ենթարկվում է մշակման և փոխադրական բազմաթիվ ու բազմատեսակ գործողություններին։ Նավթի առանձնահատկություններն առաջացրել են փոխադրման յուրահատուկ սիստեմներ։ Հիմնականում նավթը փոխադրվում է նավթատար նավերի, նավթամուղի, երկաթուղու (ցիստերն վագոններով) և ավտոմոբիլների միջոցով։

Անցյալում նավթը փոխադրել են տակերի մեջ՝ կարավաններով, և կամ տակառների մեջ՝ ձիերով ու սայլերով։ 1878 թվականից սկսած պատրաստել են հատուկ տիպի գետային բարժաններ և ցիստերն նավակներ ու նավեր, որոնք նավթատար նավերի նախատիպերը հանդիսացան։ Ռուսաստանում այդ տիպի առաջին նավերն սկսեցին աշխատել Կասպից ծովում և ապա՝ Վոլգա գետում։ Վ. Գ. Շուխովի նախաձեռնությամբ կառուցված առաջին նավթատար նավը կոչվեց Ալեքսանդր։ Հետագայում Կասպից ծովում սկսեցին գործել նաև Ռուսիա, Նեվա, Վոլգա, Կամա, Զորոաստր նավթատար նավերը։

Երկաթուղային տրանսպորտի մեջ, մինչև այդ օգտագործվող տակառները հետզհետե փոխարինվեցին ցիստերն վագոններով։ Առաջին ցիստերն վագոններից յուրաքանչյուրի տարողությունը եղել է 16 խոր. մետր։ Այժմ արդեն այդ վագոնների կրկնակի ցիստերները պարունակում են 50 խոր. մետր, այլ խոսքով՝ 40 տոննա։ Փորբաթանակ փոխադրումները կատարվում են թիթեղյա բիդոնների մեջ։

Նավթի ծովային փոխադրումները կատարվում են նավթատար նավերի միջոցով, որոնք, ոչ այլ ինչ են, բայց եթե ոչ կատարելագործված բարժաններ, միայն ավելի մեծ մասշտաբի։

Մինչև համաշխարհային երկրորդ պատերազմը նավթատար նավերի միջին արագությունը ժամում 10—12 ծովային մղոնից չէր անցնում, իսկ տարողությունը 10—12 հազար տոննա էր։ Բայց պատերազմի փորձը ցույց տվեց, որ այս տիպի նավթատար նավերը ենթակա են թշնամու սուզանավերի հարձակմանը, ուստի սկսեցին կառուցել ժամում մինչև 14 ծովային մղոն արագություն ունեցող նավթատար նավեր, որոնց համար ավելի հեշտ էր խույս տալ թշնամու սուզանավերից։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նավթատար նավերի կորուստը տհավոր չափեր ընդունեց։ Եռ 1941 թ. ապրիլ ամիսը կորուստները եղան 182 նավթատար նավեր, որից 123-ը պատկանում էին ԱՄՆ-ին։ Այս պայմաններում, պատերազմական գործողությունների պահանջը բավարարելու համար, սկսեցին կառուցել մեծ թվով նոր նավթատար նավեր։ 1939 թվականի 1700 նավթատար նավի (17 միլիոն տոննա տարողությամբ) դիմաց 1947 թվականին նավթատար նավերի թիվը հասավ 1900-ի (24 միլիոն տոննա տարողությամբ)։ Այդ տարիներին Մեծ Բրիտանիան առաջին տեղից իջավ երկրորդ տեղը և, այդպիսով, ԱՄՆ-ի նավթատար նավատորմը դարձավ կապիտալիստական աշխարհում ամենախոշորը։

*Աղյուսակ 27**

Նավթատար նավատորմի աճումը կապիտալիստական երկրներում

Տարեթիվ	Նավթատար նավ	Տարողություն միլիոն տոննաներով
1939	1700	17
1947	1900	24
1955	2693	39

Այժմ կապիտալիստական երկրների նավթատար նավատորմը բաղկացած է հետևյալ պատկերը. (տե՛ս աղյուսակ 28)։

Նավթը, շնորհիվ իր հեղուկ և գազային վիճակի, հնարավոր եղավ հենց սկզբից փոխադրել խողովակների միջոցով։ Առաջին նավթամուղային սիստեմը, իհարկե, պրիմիտիվ էր։ 1860-ական թվականներին Օյլ Կրիկից (ԱՄՆ) մինչև երկաթուղային ամենամոտիկ կայարանը, 5 կիլոմետր երկարությամբ, կառուցվեց առաջին նավթամուղներից մեկը, որի խողովակների տրամագիծը 50 միլիմետր էր միայն։ Հետագայում փորձը ցույց տվեց, որ իրոք, նավթի փոխադրության ամենաձեռնտու միջոցը նավթամուղն է։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ում երկու հսկա նավթամուղային սիստեմներ կառուցվեցին՝ «Բիգ Ինչ», 2360 կիլոմետր երկարությամբ, խողովակների 610 մմ տրամագծով և «Լիտլ Բիգ Ինչ», 2740 կիլոմետր երկարությամբ, խողովակների 508 մմ տրամագծով։ Այս երկու նավթամուղների կառուցման վրա ծախսվեց 138,5 միլիոն դոլլար, անշուշտ, հարկատուների հաշվին։

ԱՄՆ-ի տերիտորիայում 1955 թվականին նավթամուղների ընդհանուր երկարությունը կազմում էր 211.200 կիլոմետր՝ նախապատերազմյան 202.240 կիլոմետրի դիմաց։ Կապիտալիստական մյուս երկրների նավթամուղային ցանցն անհամեմատ ավելի փոքր է։ Կանադայի նավթամուղի երկարությունը 6400 կիլոմետր է, Մեքսիկայինը՝ 2539, Իրանինը՝ 2500, Իրաքինը, վերջին հավելումների շնորհիվ, ավելի քան 6000, Արաբիայինը՝ մոտ 2700 կիլոմետր և այլն։

Նավթամուղի կառուցումը պահանջում է խողովակագործական և ինժեներական բարձր տեխնիկա։ Նավթամուղի կառուցումը կախված է տվյալ շրջանի առանձնահատկություններից։ Նավթամուղը կառուցելուց հետո, նրա հետ կապված օպերատիվ աշխատանքը թեթև է։ Բացի հերթական նորոգումներից և հերթական հսկողությունից, ուրիշ աշխատանք չի պահանջվում։ Նավթամուղային տնտեսության մեջ մտնում են վերամղման պոմպային կայանները, որոնք գտնվում են յուրաքանչյուր 100—200 կիլոմետր հեռավորության վրա, ինչպես նաև պարբերական մաքրման սարքավորումներ և վթարների հատուկ ազդանշիչներ։ Նավթամուղը հավասարապես ծառայում է անմշակ նավթի, մշակված նավթի և բնական գազերի փոխադրումների համար։

Ուրեմն ինչպես տեսնում ենք, ընդհանրապես նավթային խոշոր մոնոպոլիստներն իրենց գործունեությունը չեն սահմանափակում նավթահորերի շահագործմամբ,

---

* *Աղբյուրներ՝* R. Jouan. Le Petrole Roi du Monde, Paris, 1949, p. 69; World Petroleum, July 1955, pp. 32—37; The Petroleum Times. Sept. 16. 1955. pp. 957—958.

*Աղյուսակ 28**

Կապիտալիստական երկրների նավթատար նավատորմը ըստ 1955 թ.

Երկրներ	Նավթատար նավերի թիվը	Ընդհանուր տարողություն գեղվեյտ տոննա	Տոկոսը ընդհանուրի համեմատությամբ
ԱՄՆ	546	8.469.289	21,71
Անգլիա	537	7.280.785	18,66
Նորվեգիա	376	5.746.390	14,73
Պանամա	202	3.401.054	8,72
Լիբերիա	156	3.327.512	8,53
Ֆրանսիա	108	1.585.421	4,06
Իտալիա	122	1.747.919	4,48
Շվեդիա	78	1.207.580	3,09
Հոլանդիա	100	997.035	2,56
Ճապոնիա	61	969.384	2,48
Դանիա	42	669.975	1,72
Արգենտինա	48	456.237	1,17
Կանադա	50	339.996	0,85
Գերմանիա	27	391.925	0,81
Իսպանիա	29	248.559	0,64
Բրազիլիա	15	225.988	0,58
Հոնգոնգ	12	239.134	0,61
Հունաստան	19	258.447	0,66
Մեքսիկա	21	201.179	0,52
Վենեսուելա	32	194.888	0,49
Ֆինլանդիա	13	171.581	0,44
Պորտուգալիա	8	96.954	0,25
Թյուրքիա	9	86.829	0,22
Բելգիա	8	120.062	0,31
Կոստա-Ռիկա	2	22.521	0,06
Ուրուգվայ	2	33,230	0,08
Չիլի	3	26.447	0,07
Շվեյցարիա	1	7.850	0,02
Մարոկկո	3	31.397	0,08
Կորեա (Հարավային)	4	16.788	0,04
Պակիստան	1	9.760	0,02
Կոլումբիա	2	7.065	0,02
Պերու	4	17.786	0,05
Դոմինիկյան հանրապետություն	1	3.156	0,01
Նոր Զելանդիա	1	3.030	0,01
Սիամ	1	2.000	0,01
Սաուդական Արաբիա	1	47.000	0,12
Եգիպտոս	2	25.400	0,06
Հարավային Աֆրիկա	1	24.600	0,06
Իսրայել	1	10,889	0,03
Բուլգարիա	1	3.350	0,01

* *Մանրամասնություն.— Եթե նկատի ունենանք, որ Պանամայի և Լիբերիայի նավթատար նավատորմը փաստորեն հանդիսանում է ամերիկյան սեփականություն, ապա ԱՄՆ-ի նավթատար նավերի թիվը պիտի հաշվել 802, իսկ տարողությունը՝ 15.197.855 գեղվեյտ տոննա, այլ կերպ ասած ընդհանուրի 38,96 տոկոսը:*

Աղբյուր՝ World Petroleum, July 1955, pp. 32–37 *թեև ուրիշ տվյալների համաձայն (տես* The Petroleum Times, Sept. 16, 1955, pp. 957—958) *ԱՄՆ-ի*

այլ նրանք ընդգրկում են նաև նավթամշակման ու տրանսպորտի բնագավառները։ Ըստ էության, նավթի արդյունաբերության մեջ տիրապետող դիրք գրավելու համար հարկավոր է միաժամանակ հսկել նավթի արդյունահանման հետ կապված այդ երեք ճյուղերին։

Աղյուսակ 29

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ում կառուցված երկու գլխավոր նավթամուղային սիստեմները

	«Բիգ Ինչ»	«Լիտլ Բիգ Ինչ»
Ընդհանուր երկարությունը կմ-ով	2360	2740
Տրամագիծը մմ-ով	610	508
Խողովակների սիստեմի և նավթամբարների ընդհանուր կշիռը, տոննայով	366.437	293,615
Մղիչ պոմպերի թիվը	101	100
Նավթի օրական թողարկումը ըստ նախատեսվածի, տոննայով	43.000	33.000
Նավթի օրական թողարկումը (մինչ այժմ մաքսիմում կատարվածը), տոննայով	47.900	34.300
Ընդհանուր սիստեմի արժեքը մլն. դոլլարով	78,5	60

Նավթատար նավերի տարողությունը հաշվվում է 6.668.262, իսկ Անգլիայինը՝ 8.003.151 գեղվեյտ տոննա։ Դուցն սա պետք է բացատրել նրանով, որ այս երկրորդ աղբյուրի մեջ հաշվի չի առնված ԱՄՆ-ի պետությանը պատկանող նավթատար նավատորմը, ինչպես նաև նրանով, որ առաջին աղբյուրը հաշվի չի առել 2000 տոննա գեղվեյտ տարողությունից պակաս տարողություն ունեցող նավերը, մինչդեռ երկրորդ աղբյուրը հաշվի է առել մինչև 500 տոննա գեղվեյտ տարողություն ունեցող նավթատարները, իսկ հայտնի է, որ փոքր տարողությամբ նավթատար նավերով Անգլիան հարուստ է (Հ. Թ.)։

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ (ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Մեր աշխատության մեջ ընդգրկված երկրները (Իրանը, Իրաքը, Արաբական Թերակղզին, Սիրիան, Լիբանանը, Հորդանանը՝ Պաղեստինի տերիտորիայի նրան ավելացրած մի մասով և, վերջապես, Եգիպտոսը) թեև գտնվում են քաղաքակրթության տարբեր աստիճաններում և կազմում են իրարից անջատ պետական միավորներ, սակայն աշխարհագրական դիրքի, սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակի, կուլտուրայի, բարքերի ու կենցաղի, և եթե բացառենք Իրանը, նաև լեզվի տեսակետից ընդհանուր շատ բաներ ունեն։

Այս երկրները միասին վերցրած, գրավում են 6,5 միլիոն քառ. կիլոմետր տարածություն, իսկ բնակչության թիվը, մոտավոր տվյալներով, կազմում է 65—70 միլիոն (տե՛ս աղյուսակ 30)։

Աղյուսակ 36

Երկրներ	Տարածություն քառ. կիլոմետր	Բնակչություն	Բնակչության խտություն քառ. կմ-ին
Սաուդական Արաբիա	2.380.800	7.000.000	3
Ադեն	192	130.000	677
Հադրամաութ	286.720	650.000	2
Եմեն	189.440	4.500.000	24
Մուսկատ-Օման	209.920	550.000	3
Պայմանագրային Օման	15.360	80.000	5
Կատար	20.480	25.000	1
Կուվեյտ	15,360	250.000	16
Բահրեյն	545	120.000	220
Եգիպտոս	988.667	24.000.000	23
Իրաք	448.000	5.000.000	11
Հորդանան	96.000	1.600.000	16
Լիբանան	10.182	1.329.000	132
Իրան	1.607.608	19.140.000	12
Սիրիա	184.320	3.329.000	18
Ընդամենը	6.453.594	68.644.000	10

Աշխարհագրական դիրքի տեսակետից այս երկրները գտնվում են ծովային, ցամաքային և օդային այն հանդուցային ճանապարհների վրա, որոնք Եվրոպան միացնում են Հնդկական ու Խաղաղ օվկիանոսների և Ասիայի երկրների հետ։

Իրաքը, Սիրիան, Լիբանանը և Հորդանանը կարևոր են որպես ցամաքային «կամուրջ» Արևմտյան Եվրոպայից դեպի Իրան և Հնդկաստան տանող ճանապարհների վրա, այնուհետև, որպես «միջանցք», որը Մերձավոր Արևելքի հարուստ նավթավայրերը նավթամուղների խոշոր ցանցով կապում է Միջերկրական ծովի ափի հետ։ Եգիպտոսը այս տեսակետից կարևոր է շնորհիվ Սուեզի ջրանցքի, որը անցնում է նրա տերիտորիայով, Միջերկրական ծովը կապելով Կարմիր ծովի հետ։ Եվ, վերջապես, այս բոլոր երկրները և Արաբական թերակղզին հավասարապես կարևոր են՝ որպես Արևմտյան երկրները Արևելյան երկրների հետ կապող օդային մագիստրալ ուղիների վրա անհրաժեշտ կայաններ։

Բացի նրանից, որ Մերձավոր Արևելքի երկրներից մի քանիսը կարևոր նշանակություն ունեն գյուղատնտեսական մի շարք անհրաժեշտ պրոդուկտներ արտադրելու իրենց հնարավորությունների շնորհիվ, նրանք նոր և շատ կարևոր նշանակություն ստացան նաև այն բանից հետո, երբ 20-րդ դարի առաջին տասնամյակներից սկսած այնտեղ հայտնաբերվեցին նավթային հարուստ պաշարներ։ Այնուհետև, արդյունաբերությամբ չափազանց թույլ այս երկրները, մոտ 65 միլիոն բնակչությամբ, արևմտյան կապիտալը որպես կարևոր շուկաներ է համարում իր ապրանքների համար։ Իսկ ռազմա-ստրատեգիական տեսակետից այդ երկրները, ՍՍՌՄ-ի հարավային սահմաններում իրենց գրաված դիրքի բերմամբ արևմտյան իմպերիալիզմի կողմից դիտվում են որպես հարմարագույն պլացդարմ։

* * *

Ինչպիսի՞ Մերձավոր Արևելքի երկրների մակերևույթը բազմազան է։ Իրանը հանդիսանում է լեռնաշղթաներով շրջապատված մի ընդարձակ սարահարթ, որ կազմում է երկրի կենտրոնական մասը։ Ցածրադիր վայրերը գտնվում են միայն Կասպից ծովի ու Պարսից ծոցի ափերին և Կարուն գետի հովտում։ Հյուսիսում, Կասպից ծովի ափերի երկարությամբ տարածվում է Էլբրուս լեռնաշղթան։ Հյուսիս-արևմուտքում բարձրանում է Հայկական լեռնաշխարհը, որի մի մասը տարածվում է Իրանի ներկա տերիտորիայում։ Հարավ-արևմուտքում և հարավ-արևելքում ընկած են մի շարք իրար զուգահեռ լեռնաշղթաներ, որոնք պատկանում են Զագրոսյան լեռնասիստեմին։

Բացառությամբ հյուսիսի և հյուսիս-արևելքի բարձրադիր շրջանների, որտեղ գտնվում են Հայկական Տավրոսյան և Զագրոսյան լեռների ճյուղավորումները, Իրաքի մակերևույթի մեծ մասը կազմում է երկու գետերի՝ Եփրատի ու Տիգրիսի միջև ընկած լայնատարած հարթավայր, որը դեպի հարավ գնալով ավելի է ցածրանում և կազմում դեպի Պարսից ծոցն ուղղված Իրաք-էլ-Արաբի՝ ճահիճներով հարուստ ցածրավայրը։ Այս լայնատարած հարթավայրի վերին մասը՝ էջ-Ջեզիրան (կղզի), բացառությամբ գետերի ու օազիսների մոտ գտնվող բարեբեր շրջանների, շոր տափաստան և հարթ անապատ է, թեև տեղ-տեղ այդ հարթությունը հյուսիս-արևմուտքից խախտվում է Ջեբել Սինջարով և հյուսիս-արևելքից՝ Ջեբել Համրինով, որը Զագրոսյան լեռնասիստեմի ճյուղավորումներից մեկն է։

Արաբական թերակղզին փաստորեն Հյուսիսային Աֆրիկայի անապատների և կիսաանապատների շարունակությունն է, որոնցից բաժանված է Կարմիր ծովով։

Թերակղզին մեծ մասամբ ներկայացնում է ոչ այնքան մեծ բարձրություններով շրջապատված մի հսկայական սարահարթ։ Թերակղզու ամենաբարձր և ամենից ավելի լավ ոռոգվող մասում գտնվում է Եմենը, որտեղ գյուղատնտեսության և առհասարակ նստակյաց կյանք վարելու համար համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններ գոյություն ունեն։

Սիրիայի մակերևույթը մեծ մասամբ բարձրավանդակային է, իսկ Լիբանանը իրենից ներկայացնում է լեռնաշխարհ, բացառությամբ Բեկաա դաշտի։ Սկսած Սիրիայի հարավային սահմանից մինչև Նահր-էլ-Քեբիր գետի հովիտը, ծովի ափին համարյա զուգահեռ ձգվում են Ջեբել Լիբանանի լեռնաշղթաները։ Ավելի հյուսիս, մինչև Լատակիայի շրջանը, անցնում են Ջեբել Անսարիա և Ջեբել Ակրա լեռները։ Դեպի արևելք, այս լեռներին համարյա զուգահեռ, ձգվում է բարձրությունների երկրորդ շարքը՝ Էն-Նուսրան, Ջեբել Շեյխը և Ջեբել Շարքին (Անտի-Լիբանանը), այնուհետև Ջեբել Զավիան, Ջեբել Ալան և այլն։ Լեռնաշարքերի միջև կան տարածություններ, որոնց թվում ամենակարևորներն են՝ Նահր-էլ-Ասի (Օրոնտես) գետի հովիտը և Բեկաա դաշտը։ Այդ լեռներից դեպի արևելք տարածվում է մի սարահարթ, որը աստիճանաբար ցածրանում է դեպի Եփրատի հովիտը։

Հորդանանը և Իսրայելը միասին ներկայացնում են Սիրիայի ու Լիբանանի ռելյեֆի շարունակությունը, որը դեպի հարավ ձգվելիս մեղմանում և նմանվում է Արաբական թերակղզու ռելյեֆին։ Այստեղ, Լիբանանի և Անտի-Լիբանանի բավական բարձրագիր լեռների փոխարեն կան ավելի ցածր բարձրություններ, որոնք, էսդրելոնի դաշտավայրը հասնելով, հանկարծակիորեն վերջանում են։ Ավելի հարավ՝ Կարմելը, Յուդեն և Աջլունը հանդիսանում են հիշատակության արժանի մյուս լեռները։ Այս բարձրություններին հակադրվում են Մեծայալ ծովը և Ղոր ցածրավայրը, որտեղ մակերևույթը որոշ տեղերում այնքան է իջնում, որ հասնում է ծովի մակարդակից մինչև 394 մետր ավելի ցածր։

Եգիպտոսը իրենից ներկայացնում է մի հսկա ցածրավայր՝ ռելյեֆի խիստ միօրինակությամբ, մի քանի բացառություններով։ Կարմիր ծովի ափին կան նրան զուգահեռ ձգվող ոչ բարձր, քարքարոտ, չոր ու ցամաք լեռներ։ Եգիպտոսի տերիտորիայի մեծագույն մասը (96 տոկոս) պատկանում է Հյուսիսային Աֆրիկայի անապատների և կիսանապատների սիստեմին, բացառությամբ Նեղոսի հովտի, որտեղ և չափազանց խիստ վիճակում ապրում է երկրի համարյա ամբողջ բնակչությունը։

Կլիման։ Ռելյեֆի այսպիսի բազմազանության և ծովերի նկատմամբ տարբեր դիրքերի շնորհիվ, հիշատակված երկրների կլիման նույնպես բազմազան է։

Իրանում կլիման մերձարևադարձային է, տեղումների անհամաչափ և ոչ բավարար քանակով։ Մայրամասերի լեռները՝ փակում են խոնավ քամիների մուտքը դեպի ներքին շրջանները, որի հետևանքով Իրանի կենտրոնական շրջանների համար բնորոշ են խիստ ցամաքային, անապատային կլիման, տար ամառ և ցուրտ ձմեռ։

Մերձկասպյան ցածրավայրի համար բնորոշ է տեղումների մեծ քանակ, մինչդեռ Պարսկական ծոցի չորային ափերը ենթարկվում են Արաբական անապատների ազդեցությանը։

Իրաքի կլիման մերձարևադարձային է։ Բնակա և Իրաքը Միջերկրական ծովին չի հարում, սակայն, այդուհանդերձ, վերջինի ազդեցությունն զգալի է։ Իրաքի կլիման խիստ փոխվում է մակերևույթը հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք բարձրանալու և Պարսից ծոցի ազդեցությունից հեռանալու հետ միասին։ Հյուսիս-

արևելյան մասում ամառը շոգ է, ձմեռը բարեխառն, սակայն այստեղ բարձրադիր շրջաններում լինում են բավական զգալի սառնամանիքներ։ Իրաքում մթնոլորտային տեղումները քիչ են և լինում են գլխավորապես ձմեռը։ Դեպի հարավ, Պարսից ծոցի մերձակա շրջաններում կլիման ավելի խոնավ է և մթնոլորտային տեղումներն ավելի առատ։ Առհասարակ այս երկրի կլիմայի համար բնորոշ է շոգ ու չոր ամառ և մեղմ ու համեմատաբար խոնավ ձմեռ։

Արարական թերակղզին, բացառությամբ Եմենի և հարավ-արևելյան ծովափնյա մի քանի շրջանների, չափազանց չորային և մթնոլորտային տեղումներով աղքատ է։

Սիրիան և Լիբանանը կրում են Միջերկրականի ազդեցությունը։ Այդ երկրում լինում է չոր ամառ և անձրևոտ ձմեռ։ Սառնամանիք և ձյուն լինում է լեռների բարձրադիր շրջաններում։ Առհասարակ ծովափնյա շրջանները համեմատաբար ավելի խոնավ են, մինչդեռ ներքին շրջանները, որտեղ լեռնաշղթաները արգելք են հանդիսանում ծովի բարենպաստ հոսանքներին, ավելի չոր են և ցամաքային։

Հորդանանը Իսրայելի հետ միասին ունեն նույն կլիմայական պայմանները, ինչ որ Սիրիան ու Լիբանանը՝ չոր ամառ և անձրևոտ ձմեռ, իսկ ներքին շրջաններում (տվյալ դեպքում Հորդանանի արևելյան շրջաններում) կլիման համեմատաբար ավելի ցամաքային է։

Եգիպտոսի կլիման չոր է և շոգ, մթնոլորտային տեղումներով չափազանց աղքատ, որի հետևանքով մշակելի տարածությունը սահմանափակվում է Նեղոսի հովտում, որտեղ գոյություն ունեն ոռոգման հնարավորություններ։

Գետերը։ Իրանի գետերը, բացառությամբ Կարունի, նավարկելի չեն։ Անձրևների և ձյունահալման դեպքում գետերը արագահոս են, չորային ժամանակ ծանծաղանում և որոշ դեպքերում ցամաքում են։ Լճերից ամենակարևորը Ուրմիան է։ Թթխտ ազդեցության հետևանքով լճում ձկներ չկան։ Կենտրոնական տարահարթում կան նաև ուրիշ աղի լճեր։

Իրաքի ամբողջ տերիտորիան հատվում է երկու հզոր գետերով՝ Տիգրիսով (Շատտ-էլ-Դիջլա) և Եփրատով (Շատտ-էլ-Ֆուրատ), որոնք իրենց ստորին հոսանքներում միանալով, կազմում են Շատտ-էլ-Արաբը։ Տիգրիսը ավելի ջրառատ է, քան Եփրատը, և իր մեջ է ընդունում մի քանի վտակներ, որոնց թվում Մեծ Զաբը, Փոքր Զաբը և Դիյալը։ Եփրատը Իրաքի տերիտորիայում ոչ մի վտակ չի ընդունում։

Արարական թերակղզին գետերի տեսակետից չափազանց աղքատ է։ Կան ՕԱՂԻՆԵՐ և ուադիներ[1]։

Սիրիայի, Լիբանանի գետերը պատկանում են Միջերկրական ծովի և Պարսից ծոցի ավազաններին։ Միջերկրական ծովը թափվող գետերից ամենագլխավորներն են՝ Նահր-էլ-Ասի (Օրոնտես), Նահր-էլ-Լիտանի, Նահր-Իբրահիմ և Նահր-էլ-Քելբ. բոլորն էլ ոչ նավարկելի։ Սիրիայի տերիտորիայի արևելյան շրջանում հոսում է Եփրատը, որն ընդունում է երկու կարևոր վտակներ՝ Նահր-էլ-Բելիքը և Խաբուրը։ Այստեղ Եփրատը որոշ տեղերում նավարկելի է։ Սիրիայի տերիտորիայով աննշան տարածության վրա հոսում է Տիգրիսը, որը միևնույն ժամանակ Իրաքի հետ սահման է կազմում։

---

[1] Ուադիները անձրևներից գոյացած ժամանակավոր գետակներ են, որոնք մի ժամանակ ցամաքում են։

Հորդանանը և Իսրայելը ավելի քիչ գետեր ունեն, քան Սիրիան և Լիբանանը։ Մովսիսյան շրջանում հիշատակության արժանի միակ գետը Նահր Աուժանն է։ Հորդանանը, որ այս երկրների կարևորագույն գետն է, անցնում է երկուսի միջով։ Լճերից ամենակարևորը Մեսալ ծովն է, որը ծովի մակերեսից 394 մետր ցածր է, ջուրը չափազանց աղի է և կենդանիներից զուրկ։ Հորդանանի հիշատակության արժանի մյուս գետերից են Յարմուկը և Յարքոկը։

Եգիպտոսի միակ գետը Նեղոսն է, որը աշխարհի խոշորագույն գետերից է, ջրառատ և նավարկելի։ Նեղոսի ջրերը ոռոգման աղբյուր են, որի շնորհիվ Եգիպտոսը դարձել է բնակեցիկ։ Կան նաև օազիսներ և ուադիներ։

Բուսականությունը։ Բուսական աշխարհը տարբեր շրջաններում տարբեր է. նայած կլիմայական պայմաններին և ռելիեֆի տարբերություններին, ինչպես նաև անձրևների և գետերի խաղացած դերերին։ Ահա թե ինչու Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներում նկատվում է բուսականության բազմազանություն։

Իրանում, էլբրուսի հյուսիսային լանջում, Կասպյան ծովամերձ շրջանը անտառներով և բուսականությամբ չափազանց հարուստ է։ Այս շրջանի մերձարևադարձային խոնավ պայմանները թույլ են տալիս մշակելու մի շարք կարևոր կուլտուրաներ, որոնց թվում ցիտրուս, արմավենի, բամբակ, բրինձ և այլն։

Բուսականության համար պայմանները բարենպաստ են նաև Պարսից ծոցի առափնյա մի քանի շրջաններում և Կարուն գետի հովտում, որտեղ տարածված են արմավենին, կոկոսենին և այլ արժեքավոր կուլտուրաներ։

Իրանի հյուսիս-արևելյան մասի նախալեռների հարթություններում գտնվում է մի չոր, բարբարոս տափաստան, որը ծածկված է պարսկական վարդի, էֆեդրայի և այլ նոսր թփիկներով։ Լեռների լանջերին կան պիստակի թփուտներ։ Իրանի միջին մասը իրենից ներկայացնում է կավա-աղուտային տափաստան և անապատ նոսր թփիկներով։ Գետերի և գետակների հովիտներում կա համեմատաբար ավելի հարուստ բուսականություն։

Իրաքի այն մասերում, որտեղ տիրապետում են չոր տափաստանները, ամառվա շոգ և չոր ժամանակ բուսականությունը խանձվում է։ Գետերի հովիտներում, որտեղ բուսականությունն ավելի հարուստ է ու մշտադալար, աճում են արմավենու և ուռենու անտառներ։ Այդ շրջանների հողա-կլիմայական պայմանները բարենպաստ են հացահատիկի, բամբակի, բրնձի, լորազգիների և այլ արժեքավոր կուլտուրաների համար։ Արմավի ծառի տնկարանների տարածության տեսակետից Իրաքը գրավում է աշխարհում առաջին տեղը (30 միլիոն ծառ)։

Սիրիայի և Լիբանանի առափնյա շրջաններում բուսականությունն ունի միջերկրածովյան բնույթ։ Այդտեղ հասնում են ցիտրուսների գրեթե բոլոր տեսակները, այնուհետև՝ ձիթենի, կաղնի, դափնի, արմավենի, թզենի և այլն։ Սիրիայի արևելյան մասում, որտեղ տիրում են անապատային չոր պայմաններ, ձմեռային անձրևների ժամանակ աճում են՝ օշինդր, ընդեղեն բույսեր, փշավոր խոտեր, բուրավետ խոտեր և այլն։

Հորդանանում և Իսրայելում բուսականությունը հիմնականում նման է Սիրիայի և Լիբանանի բուսականությանը։ Մովսիսյան շրջաններում գտնվող ցիտրուսային պտուղների պլանտացիաները մեծ նշանակություն ունեն երկրի տնտեսության համար։

Արաբական թերակղզին, բացառությամբ Եմենի և Ասիրի, բուսականությամբ չափազանց աղքատ է։ Սյուտեղ աճում է արմավենի և չորային պայմաններին հատուկ այլ բուսականություն։

Եգիպտոսի տերիտորիայի մշակելի մասը — Նեղոսի հովիտը — երկրի ընդհանուր տերիտորիայի 4 տոկոսն է կազմում։ Այդտեղ աճում են միջերկրածային և առանձին դեպքերում արևադարձային կլիմաներին հատուկ տարբեր տեսակի բույսեր։ Եգիպտոսում, անձրևների բացակայության պայմաններում, ոռոգումը հիմնական դեր է խաղում գյուղատնտեսության մեջ։

Ֆաունան։ Կենդանական աշխարհը նույնպես, նայած ռելյեֆի և կլիմայական պայմաններին, տարբեր տեղերում տարբեր է։ Վայրի կենդանիների նկատմամբ այս տարբերություններն զգալի են, սակայն ընտանի կենդանիների տեսակները Մերձավոր և Միջին Արևելքի գրեթե բոլոր երկրներում նույնն են։ Անապատային շրջաններում ուղտը, այծը և ոչխարը ամենասովորական տիպերն են, մշակված շրջաններում, բացի նշված տեսակներից, կա նաև գոմեշ, կով և այլն։

ԷԿՈՆՈՄԻԿԱՆ

Ընդհանուր բնութագիրը։ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում գյուղատնտեսությունը գերակշռում է արդյունաբերությանը, որը որոշ չափով, և այն էլ մի քանի շրջաններում միայն, սկսեց զարգանալ վերջին տասնամյակներում։

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների տնտեսական հետամնացությունն արդյունք է նրա անցյալից ժառանգած և մինչև այժմ շարունակվող տնտեսական հին հարաբերությունների առկայության և արտաքին քաղաքական անբարենպաստ ազդեցության։ Ընդամենը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում դեռևս շարունակվում են գոյություն ունենալ կիսաֆեոդալական շահագործման պայմանները, որոնց վրա ավելանում է օտարերկրյա իմպերիալիստների հարկադրանքի ծանր լուծը և այս բոլորը, պարզ է, որ արգելակում են այս երկրների նորմալ զարգացմանը։ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների զարգացման յուրահատկությունը նրանց հարաճուն տնտեսական կախվածությունն է օտարերկրյա կապիտալից, որպիսի հանդամանքը այդ երկրները վեր է ածում գաղութների կամ, լավագույն դեպքում, կիսագաղութների։

Չնայած արտաքին փոխառությունների գծով այս երկրների մեծ պարտաբեռնվածությանը, այստեղ դեռևս շարունակվում է օտարերկրյա կապիտալի ներխուժումը։ Մինչև վերջին ժամանակները ուժի մեջ էր կապիտուլյացիաների ռեժիմը, որի հիման վրա օտարերկրյա կապիտալիստներն ավելի նպաստավոր դրության մեջ էին, քան տեղի ձեռնարկատերերը։

Օտարերկրացիների օգտին շնորհված կոնցեսիաների հետևանքով Մերձավոր և Միջին Արևելքի երկրների տնտեսության կարևորագույն ճյուղերը՝ երկաթուղիները, նավահանգստային տնտեսությունը, մեծ քաղաքների կոմունալ ձեռնարկությունները, հանքերը և հատկապես նավթարդյունաբերությունը շարունակում են մնալ օտար-երկրացիների ձեռքում։

Առաջին և մանավանդ երկրորդ համաշխարհային պատերազմների հետևանքով արդյունաբերությունը, տեղական կապիտալի հիման վրա, որոշ չափով զարգացավ։ Սակայն, չնայած Մերձավոր և Միջին Արևելքի մի քանի երկրներում արդյունաբերության որոշ ճյուղերի զգալի զարգացմանը, այս երկրները, ամբողջովին

վերցրած, դեռևս հիմնականում պահպանում են իրենց ազրարային տեսքը, և գյուղատնտեսությունը շարունակում է պահպանել հին ժամանակներից ժառանգած իր հնամենությունը։

Թեև Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներում գյուղատնտեսությունը որոշ չափով ներգրավվել է համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ (այսպես, օրինակ, Եգիպտոսը՝ իր բամբակով, Իրաքը՝ իր արմավով, Սիրիան և Լիբանանը՝ իրենց ձեթով և մեսարոով, նախկին Պալեստինյան տերիտորիան՝ իր ցիտրուսային պտուղներով, Իրանը՝ իր շոր մրգերով և այլն), հետևաբար և, հենց այս պատճառով, մի բանի ճյուղերում զարգացել է առևտրական հողագործությունը, սակայն Մերձավոր և Միջին Արևելքի գյուղերում դեռևս, հիմնականում, պահպանվում են փակ տնտեսության կիսաֆեոդալական մնացուկները, իսկ Արաբական թերակղզում՝ քոչվորական տնտեսությունը։ Այդ մնացուկները, պլյուս այս երկրների ազրարային մյուս ընդհանուր պայմանները — հողազրկությունը, սակավահողությունը, և այլն, ու մյուս կողմից վաշխառուների տիրապետությունը — դեռ մինչև օրս արգելակում են այդ երկրների տնտեսության ազատ զարգացումը։

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո այստեղ ուժեղացավ ԱՄՆ-ի տնտեսական էքսպանսիան, որը հակասության մեջ մտավ արդեն մինչև այդ գոյություն ունեցող անգլիական ազդեցության հետ։

ԱՄՆ-ի կապիտալիստները վերջին մի բանի տարիներում արդեն իրենց ձեռքն են վերցրել այս երկրների արտաքին առևտրի մեծագույն մասը։ Ընդամենը, օգտվելով գյուղատնտեսության արտադրանքի վաճառահանման գործում այս երկրների ունեցած դժվարություններից, ամերիկացի բայանչիները ներկայումս այդ արտադրանքը գնում են շափազանց իջեցրած գներով։ Ամերիկյան ֆիրմաները կընդունում են նաև մի շարք պայմանագրեր՝ երկարաժամկետ՝ խճուղիներ, արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու և նավթային ու այլ կոնցեսիաներ ձեռք բերելու համար։

Գյուղատնտեսությունը։ Չնայած գյուղատնտեսության համար պիտանի, սակայն դեռևս չյուրացված հողերի հսկայական տարածությունների առկայությանը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում ցայտուն կերպով արտահայտված է հողազրկության և հողատակավորության երևույթը։ Լավագույն հողերի մեծ մասը կենտրոնացված է խոշոր հողատերերի և որոշ երկրներում մասամբ էլ օտարերկրյա հողագործական ընկերությունների ձեռքում, իսկ ավելի փոքր բարերար հողերի յուրացումը կապված է խոշոր կապիտալ ներդրումների (ոռոգման, պարարտացման, ճանապարհների անցկացման, փոխադրական միջոցների ստեղծման և այլն) հետ, որը հասարակ գյուղացիության ճնշող մեծամասնության ուժերից վեր է։

Իրանում և Իրաքում մշակված տարածությունները այդ երկրների տերիտորիաների 10-ական տոկոսն են կազմում, Սիրիայում՝ 6,8 տոկոսը, Եգիպտոսում՝ 4 տոկոսը, Արաբական թերակղզում՝ նույնիսկ այս վերջինից էլ պակաս։ Մշակված հողերը գլխավորապես գտնվում են գետահովիտներում և ծովափնյա շրջաններում, որոնք մթնոլորտային տեղումներով համեմատաբար ավելի հարուստ են։ Եփրատի և Տիգրիսի հովիտները, Սիրիայի և Լիբանանի ծովափնյա բուսականությամբ շատ հարուստ գոտին և, վերջապես, Նեղոսի հովիտը միասին վերցրած՝ կազմում են մի կամարաձև կանաչ միջանցք, որը այնպիսի ուժեղ կոնտրաստ է ներկայացնում շրջակա-

չոր ու անապատային շրջանների հետ համեմատած, որ արաբներն այդ ամբողջությունն անվանում են «արաբերեր մահիկ»[1]։

Մերձավոր և Միջին Արևելքի գյուղատնտեսության մեջ հողագործությունը և անասնապահությունը ունեն առավել կամ նվազ չափով համահավասար նշանակություն։ Այս կապակցությամբ բացառություն են կազմում Եգիպտոսն ու Լիբանանը, որտեղ գերիշխող զբաղմունքը հողագործությունն է, և Արաբական թերակղզին, որտեղ բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է։

Գյուղատնտեսության մեջ, որը այս երկրների տնտեսության հիմքն է հանդիսանում, զբաղված է աշխատավոր բնակչության մոտ 75—80 տոկոսը։ Գյուղատնտեսության տեխնիկան ծայր աստիճան ցածր է։ Պրիմիտիվ գութանը դեռ մինչև այսօր հանդիսանում է հողամշակման տիրապետող գործիքը։ Քիմիական պարարտանյութերի կիրառումը մինչև վերջին ժամանակներս անհայտ էր Մերձավոր Արևելքի գյուղացիական լայն մասսաներին։ Տրակտորները և գյուղատնտեսական մյուս բիչ թե շատ բարդ մեքենաները կիրառվում են չափազանց սահմանափակ չափով և այն էլ միայն մի քանի կալվածատիրական խոշոր տնտեսություններում։ Գյուղատնտեսության ցածր մակարդակի ցուցանիշներից մեկն էլ արհեստական ոռոգման խիստ սահմանափակ չափերն են, չնայած որ այս երկրների շատ շրջաններում, մթնոլորտային տեղումների սակասի հետևանքով, ջրի շատ մեծ կարիք է զգացվում։ Այս տեսակետից Եգիպտոսը և մասամբ Իրաքը բացառություն են կազմում։ Հատկապես Եգիպտոսում ոռոգման սիստեմը համեմատաբար շատ է զարգացած, բայց այդու հանդերձ, կան հսկայական տարածություններ, որոնք մթնոլորտային տեղումների ու ոռոգման սիստեմի բացակայության պատճառով չեն օգտագործվում և այդ տարածությունները պիտանի դարձնելու ուղղությամբ դեռ ոչինչ չի կատարվում։

Տեղական և օտարերկրյա շահագործման հանդեպ հետզհետե աճող դիմադրությունից վախենալով, տեղական կառավարությունները, ԱՄՆ-ի թելադրանքով, Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներում վերջերս հողային «ռեֆորմ» անցկացնելու փորձեր են կատարում և կամ այդ ուղղությամբ ծրագրեր են մշակում։

Իրանում վերջին ժամանակներս հրապարակված օրենքի համաձայն, գյուղացու բաժինը իբր թե 20 տոկոսով պիտի ավելանա ի հաշիվ կալվածատիրոջ բաժնի։ Եգիպտոսում «հողային ռեֆորմի» համաձայն կառավարությանն իրավունք է վերապահվում 80 հեկտարից ավելի հող ունեցող կալվածատերերից, հատուկ ֆոնդի միջոցով, գնել ավելորդ հողամասը և վաճառել գյուղացիներին[2]։

---

[1] Մեր գրականության մեջ հիշվում է որպես «շնորհալի կիսալուսին»։

[2] Եգիպտոսում «հողային ռեֆորմի» օրենքն ընդունվեց 1952 թ. սեպտեմբերի 9-ին։ Այս օրենքը գործողության մեջ մտավ 1953 թ. հուլիսի 23-ին։ «Հողային ռեֆորմի» օրենքն ընդունելու պահին, այսինքն 1952 թվականին, Եգիպտոսի մշակված հողերի տարածությունը կազմում էր 5 962 660 ֆեդան (մեկ ֆեդանը հավասար է մոտավորապես մեկ ակրի), որը գտնվում էր 2 760 661 մանր և խոշոր կալվածատերերի ձեռքում։ Այդ նույն թվականին երկրի բնակչությունը հաշվվում էր 21 միլիոն, մինչդեռ XX դարի սկզբին, երբ բնակչությունը հաշվվում էր 11 միլիոն միայն, մշակվող հողերի տարածությունը 5 097 000 ֆեդան էր։ Այլ խոսքով ասած՝ 50 տարվա ընթացքում (անգլիական իմպերիալիզմը, տիրող դասակարգերին հովանավորելու քաղաքականության շնորհիվ) բնակչության կրկնակի աճի դիմաց մշակված հողերի տարածությունն աճել է ընդամենը 1,19 տոկոսով, որի հետևանքով բնակչու-

Արդյունաբերություն: Չնայած հանքային խոշոր ռեսուրսներին և տեխնիկական կուլտուրաներ աճեցնելու մեծ հնարավորություններին այդուհանդերձ, արդյունաբերությունը (բացառությամբ նավթարդյունաբերության) Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում ծայր աստիճան թույլ է զարգացած։

Իրանում, Իրաքում և Արաբական Միացյալ Թագավորությունում նավթարդյունաբերությունը այդ երկրների ընդհանուր արդյունաբերության մեջ գրավում է առաջին տեղը։ Սակայն, այստեղ շահագործումը կատարվում է բացարձակապես օտարերկրյա կապիտալի կողմից և արտադրանքը հիմնականում արտահանվում է, ուստի նավթարդյունաբերությունը, երկրի ընդհանուր տնտեսությունից կտրված լինելով, յուրահատուկ դրություն և անհավասարակշռություն է ստեղծում այդ երկրների արդյունաբերության ամբողջ սիստեմում։

Իրանի ընդերքը, բացի նավթային ռեսուրսներից, հարուստ է նաև մի շարք այլ հանածոներով՝ քարածուխով, կապարով, նիկելով, արծաթով, ոսկով, գրաֆիտով, աղով, ծծումբով, մարգանեցով և այլն։ Սակայն այդ բոլորը շատ քիչ են ուսումնասիրված և համարյա չեն օգտագործվում։ Իրանում արդյունաբերության մեջ տնայնագործական և ֆաբրիկա-գործարանային սիստեմները գործում են կողք կողքի։ Գորգագործությունը, գեղարվեստական իրերի արհեստը և կտավագործության որոշ տեսակներ դեռևս հիմնականում, գտնվում են տնայնագործական վիճակում։ Բամբակազտման, տերտիլ գործվածքների մի շարք ճյուղերը, ձեթ-օճառի, ցեմենտի, լուցկու, սննդի ու համի, մետաղամշակման ու ռազմական և մի շարք այլ ճյուղեր մտնում են ֆաբրիկա-գործարանային սիստեմի մեջ։

Իրաքում նույնպես, արդյունաբերությունն, անշան բացառությամբ, ունի տնայնագործական-արհեստագործական բնույթ։ Մետաքսյա և մի շարք այլ գործվածքների արտադրությունը գտնվում է տնայնագործների ձեռքում։ Ֆաբրիկա-գործարանային տիպի ձեռնարկների շարքում կան լրդի, մահուդի, ցեմենտի, լուցկու, ծխախոտ-սիգարետի, կաշու, ձեթ-օճառի գործարաններ և թեթև արդյունաբերության պատկանող մի շարք այլ ձեռնարկություններ։

Սիրիայում, Լիբանանում և Հորդանանում նույնպես նման դրություն է տիրում։ Այդ երկրներում նույնպես արդյունաբերության մեջ գերակշռում է տնայնագործական-արհեստագործական սիստեմը, թեև կան ֆաբրիկա-գործարանային տիպի մի շարք ձեռնարկություններ, որոնց թվում նշենք՝ ցեմենտի արտադրությունը, տերտիլի մի քանի ճյուղերը, սեռնդ-համի նույնպես միայն մի քանի ճյուղերը, ասֆալտի զտման, լուցկու, ծխախոտ-սիգարետի, մետաքսի և բրդի, բիմիական նյութերի, նավթաթորման գործարանները և այլազաններ։

թյան և հատկապես գյուղացիության ապրանացումը վիթխարի չափերի հասավ։

Այս օրենքին ենթակա են 2115 խոշոր կալվածատերեր, որ նշանակում է յուրաքանչյուր 10000 կալվածատերոջից միայն 8-ը։ Այս խոշոր կալվածատերերի ձեռքում է գտնվում երկրի մշակված հողային տարածությունների 19 տոկոսը, այսինքն 1 208 491 ֆեդան, որից 600 000 ֆեդանն է ենթակա «սենֆորմի» օրենքին, այդ նշանակում է՝ երկրի մշակված ընդհանուր հողային տարածության համարյա 10 տոկոսը։ Մինչև այժմ բաժանման համար գրանցված է 254 532 ֆեդան, որից բաժանված է 49 163 ֆեդան։ Այս բաժանումը արդեն տարածվել է 13 442 գյուղական ընտանիքի կամ 79 180 մարդու վրա։ (մանրամասնությունները տե՛ս Asian Review, January 1955, pp. 79—81)։

Արաբական թերակղզում, ինչպես ասացինք, բացառությամբ վերջին ժամանակներս զարգացած նավթարդյունաբերության, որը ամբողջովին գտնվում է օտարերկրյա կապիտալի ձեռքում, այլ արդյունաբերություն համարյա գոյություն չունի, իսկ աննշան չափով եղածը, հիմնականում, տնայնագործական-արհեստագործական բնույթ ունի։

Մերձավոր Արևելքի երկրների սիստեմում Եգիպտոսը արդյունաբերության տեսակետից ամենազարգացածն է, չնայած դրան, երկրի տնտեսության մեջ դեռևս շարունակվում է գերակշռել գյուղատնտեսությունը։

Եգիպտոսում կան ֆաբրիկա-գործարանային տիպի մի շարք ձեռնարկություններ, որոնցից մի քանիսը իսկական կոմբինատներ են։ Տեքստիլ արդյունաբերության մեջ, հատկապես բամբակյա լժանագին գործվածքների ճյուղում, Եգիպտոսը գտնվում է ինքն իրեն բավարարելու ճանապարհին, սակայն, տեքստիլ արդյունաբերության մյուս ճյուղերում, զարգացման ներկա պայմաններում, դեռևս երկար ժամանակ կախված կմնա Եվրոպայի, Ճապոնիայի և ԱՄՆ-ի արդյունաբերությունից։ Բացի տեքստիլ գործարաններից, կան նաև ցեմենտի, շաքարի, սպիրտի և այլ խոշոր գործարաններ։ Այս ճյուղերում և բամբակագործման ասպարեզում Եգիպտոսը ինքն իրեն համարյա բավարարում է։ Կան նաև սննդի-համի, լուցկու, ձեթ-օճառի, ծխախոտ-սիգարետի, ապակու, շշի, մետաղաձուլման (տեղական ջրգ-երկաթի հումքով) և այլն գործարաններ։ Այս բոլոր ձեռնարկություններում տեղական կապիտալն սկսել է որոշ դեր խաղալ, թեև օտարերկրյա կապիտալը երկրի տնտեսության մեջ շարունակում է գերիշխել։

Արտաքին առևտուրը։ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների էկոնոմիկայում արտաքին առևտուրը բավական մեծ դեր է խաղում։ Պատճառները բազմազան են։ Այս երկրները արդյունաբերության տեսակետից հետամնաց լինելով, արդյունաբերական ապրանքների խիստ կարիք են զգում։ Մյուս կողմից՝ լինելով հիմնականում գյուղատնտեսական երկրներ, ներմուծվող արդյունաբերական ապրանքների դիմաց նրանք հարկադրված են արտահանել գյուղատնտեսական մթերքներ։ Արտահանումների մեջ մեծ տեղ են գրավում հանքային պրոդուկտները, որոնց թվում անմշակ նավթը և դտված նավթի որոշ ֆրակցիաներ, ինչպես նաև տեխնիկական կուլտուրաների մի ստվար սերիա։ Եվ վերջապես, այս երկրներում, որոնք գտնվում են Եվրոպայի ու Ասիայի տարբեր երկրների մերձեցման կետում, մեծ չափով զարգացել է նաև տարանցիկ առևտուրը։ Այսպես, օրինակ, Սիրիայի-Լիբանանի վրայով տարանցիկ մեծ առևտուր է ծավալվում մի կողմից՝ Արևմտյան Եվրոպայի, Անգլիայի ու ԱՄՆ-ի և մյուս կողմից՝ Ասիայի մի շարք երկրների և, հատկապես, Իրաքի, Իրանի ու սրանց հարևան այլ երկրների միջև։

Սուեզի ջրանցքի շնորհիվ Եգիպտոսը նույնպես տարանցման կարևոր կենտրոն է, իսկ Ալեքսանդրիան, որպես տարանցման նավահանգիստ, սպասարկում է նաև Սուդանին ու Աֆրիկայի այլ մերձավորագույն շրջաններին։

Բնակչություն։ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում տերիտորիալ տեսակետից բնակչությունը շատ անհավասարչափ է բաշխված։ Ամենից ավելի խիտ են բնակեցված ծովափնյա շրջաններն ու դետահովիտները, որոշ չափով նաև օազիսները։

Թեև այս երկրների գերակշռող բնակչությունը՝ արաբ, թյուրք և իրանցի մուսուլմաններ են, սակայն կան նաև զգալի քանակությամբ այլ ազգի փոքրամասնություններ։ Փոքրամասնությունները կազմում են այս երկրների ընդհանուր բնակ-

ջության 18—20 տոկոսը։ Փորրամասնությունների մեջ կան քրիստոնյաներ իրենց տարբեր և բազմազան աղանդներով, ինչպես նաև այլ ազգի մուսուլմաններ, ինչպիսիք են քուրդեր, եզդիներ և այլն։ Մուսուլմաններն էլ իրենց հերթին բաժանվում են սուննիների, շիաների, իզմայիլների և բազմաթիվ այլ աղանդների։

* * *

*Աղյուսակ 31**

Կապիտալիստական երկրների նավթարդյունահանումը 1955 թվականին

Երկրներ	Միլիոն տոննաներով
Հյուսիսային Ամերիկա	
ԱՄՆ	357,0
Կանադա	16,5
Մեքսիկա	13,0
Ընդամենը	386,5
Հարավային Ամերիկա	
Վենեսուելա	111,7
Կոլումբիա	5,7
Արգենտինա	4,5
Տրինիդադ	3,4
Պերու	2,3
Մյուս երկրները	1,9
Ընդամենը	129,5
Արևմտյան Եվրոպա	
Ավստրիա	3,8
Գերմանիա	3,0
Մյուս երկրները	2,1
Ընդամենը	8,6
Մերձավոր և Միջին Արևելք	
Կուվեյտ	54,8
Սաուդական Արաբիա	47,6
Իրաք	33,7
Իրան	16,0
Կատար	5,4
Նգիսլոոս	1,8
Բահրեյն	1,5
Զեղոք գոտի	1,3
Ընդամենը	162,1
Հեռավոր Արևելք	
Ինդոնեզիա և Նոր Գվինեա	12,2
Բրիտանական Բորնեո	5,5
Մյուս երկրները	1,8
Ընդամենը	19,5

* The Petroleum Times, January 6, 1956, p. 14; Ibid, March 30, 1956, p. 210; World Petroleum, February 1956, p. 82; Ibid, March 1956, p. 114.

*Աղյուսակ 32**

Նավթային պաշարներով հարուստ կապիտալիստական երկրների արդյունահանումը տոկոսային հարաբերություններով

Գլխավոր նավթարդյունահանող երկրներ	1939 թ. տոկոս	1952 թ. տոկոս	1953 թ. տոկոս	1954 թ. տոկոս	1955 թ. տոկոս
ԱՄՆ	60,0	51,0	49,5	47,7	44,1
Վենեսուելա . . .	9,8	14,6	13,5	13,9	14,3
Իրան	3,7	—	0,2	0,4	2,3
Սաուդական Արաբիա .	0,2	6,7	6,5	6,9	6,3
Կուվեյտ	—	6,1	6,5	7,0	7,0
Իրաք	1,5	3,0	4,4	4,6	4,6
Կանադա	0,32		1,7	1,9	2,5
Մեքսիկա	1,96		1,5	1,7	1,7
Ինդոնեզիա . . .	2,64		1,6	1,6	1,5

* The Petroleum Times, June 10, 1955, p. 618; Ibid, January 6. 1956, p. 1; World Petroleum, July, 1954, p. 33; Ibid, November 1955, 85.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Աբդուլ Համիդ II — 135
Աբդուլլա Սուլեյման — 146
Ազզամ Աբդուլ-Ռահման — 218
Ալեն Ջորջ — 114
Ալեքսանդր 1 — 246
Ալեքսանդր Մեծ — 246
Ալ Հիլալի — 234
Ալի-Մահեր — 210, 234
Անդրյուզ — 22
Անտուան Ջիսշկա — 30
Ավգուստ Կեսլեր — 27
դ'Արսի — 51, 105—108, 112
Արսլան Էմիր Մաժիդ — 227

Բադավի — 194
Բալֆուր — 138
Բեյնն — 228
Բևվեն — 213
Բիհարդ — 195
Բիշարա Խուրի — 226, 227
Բիսել Ջորջ — 248
Բլիներ — 118
Բրուվեր — 248
Բևերիջ Ալբերտ — 131

Գամել Աբդել Նասեր — 221, 231—236
Գաբրիել Պուտ — 204
Գարներ — 197
Գարֆիաս — 152
Գլադդո Բ. Մ. — 133
Գյուլբենգյան Գ.— 89, 136, 137, 140
Գոմեզ — 33
Գոլշոյան Աբրաս Ղուլի — 186
Գորդոն Ջ. Լ. — 122, 126, 132
Գրեյդի — 186
Գրինվեյ — 107
Գուբիին — 246
Գուսման Մ. Տ.— 253

Դալլես Ջոն-Ֆոստեր — 187
Դաշտի — 111
Դաֆիլդ Վ.— 247
Դեսերդինգ Ավգուստ Վիլհելմ Հեռրի — 26—29, 36, 136, 151
Դիազ — 29, 30
Դիվան Բաշի — 106
Դոհենի Էդուարդ — 29
Դրեյկ — 21, 248, 252
Դուբինին — 246

Զահեդի — 198, 201, 202

Էդդե Էմիլ — 227
Էլ Հաշիմի Տահա — 203
Էյդուս — 32
Էյզենհաուեր — 238, 239, 241, 242
Էվարտ Վ.— 247

Թվիչելլ Կարլ — 145

Ժոզե Բախ — 35
Ժուան Ռ.— 43

Իբն Սաուդ — 143, 147, 208, 209, 214, 239, 240
Իդեն — 213, 216
Իզմայիլ — 118
Իսանեսյան Ռ.— 253

Լանդիս — 175
Լենին Վ. Ի.— 5, 20, 21, 23—27, 30, 37, 97, 98, 136
Լովրինգ Թ. Ս.— 8
Լոուրենս — 138
Լուվասիևիչ Ի.— 247
Լուկուլլոս — 246
Լոֆտուս Վ. Կ.— 51, 105

Խալիդ Էմիր — 209

Կապելյուշնիկով Մ. Ա.— 253
Կապնիստ Վլադիմիր — 119
Կալլեռ — 30
Կարդենաս — 15, 32
Կարենզա — 30
Կատրու — 225
Կիեր Ս.— 247
Կլարկ — 22
Կլեյտրն Ուիլյամ — 163, 164
Կլեմանսո Ժորժ — 151
Կենտ — 14
Կոլբի Մ. Չեստեր — 132
Կլոդ Հ.— 177
Կոկորև — 247, 248
օ'Կոնոր — 254
Կրեյն Չ. Ռ.— 145

Հարիր Աբի Շահլա — 227
Համիլտոն — 146
Հաշիմ — 183, 204, 214, 220
Հարիման Ավերիլ — 191, 192, 194, 195
Հելու — 226, 227
Հեկկեր Ի.— 247
Հյուզ — 123
Հենտիզ Հեր Ֆոն — 206
Հըշիսըն — 161, 163—167
Հերման Լեի — 20
Հոց — 51
Հուվերտա — 30
Հուսեյն Ալա — 188, 221—223

Մագերո — 30
Մակդի — 188
Մակ Դոնալդ — 138
Մակ Միլան — 213, 221
Մաքեյ-Սեր Է.— 31
Մահեր — 234
Մայկել Բրուկս — 135
Մարիոտ Ա. Լ.—106
Մարշալլ — 160
Մարուֆ Էլ-Դավալիբ — 230
Մաքրամ Էբեյդ — 211
Մենդելեև — 246, 247
Միլսպո Ա. Ս.— 104, 184, 185
Միրզոև — 247
Մոդաֆֆեր-Էդ-Դին — 106
Մոյն Լորդ — 217
Մունիզ — 196
Մոսադդիկ — 187, 188, 180—191, 194, 197, 198, 201, 202, 204
Մորգան Ժ.— 51, 194
Մորրիսոն — 193
Մորնար — 103

Նահաս — 232, 234
Նաֆտչի — 60
Նեվիլ Դաս — 186
Նիկելիյ — 126
Նոբել — 28
Նորատունկյան Գ.— 127, 128
Նորման Կեմպ — 107
Նորտոն Թոմաս Հ.— 125
Նուրի-էս Սայիդ — 203, 204, 216, 217

Շավքաթ Սայիդ Նաժի — 203
Շեյխ Խազալ —110
Շեպիլով — 235
Շեպհերդի — 194
Շերման — 24
Շերիֆ Հուսեյն — 144, 214
Շպիրտ — 153
Շուխով Վ. Գ.— 260
Շումիլով Պ. Պ.—250
Շուատեր Մորգան — 103, 106, 113, 184

Չեստրը — 119, 132, 133, 135
Չերչիլ Ուինստոն — 52, 109, 213

Պապեն ֆոն — 203
Պարսընզ Լեվի — 122
Պերի Կոքս — 138

Պիեր Ֆոնտեն — 35, 108
Պիլգրիմ — 67
Պինտո Մարտենզ — 35
Պլինի Ֆիսկ — 122
Պորտեր — 128

Ջուլյուս Հիրշ — 163

Ռազմարա — 186, 187
Ռաշիդ Ալի էլ Գայլան — 203, 204
Ռեյտեր Յուլիուս — 51, 99, 105, 106
Ռեննել Լորդ — 173, 174
Ռիադ էս Սոլհ — 226, 227
Ռիզա Խան — 110, 112
Ռիստեր — 152
Ռոկֆելլեր — 21—29, 36, 151, 152
Ռոյս — 208
Ռոտշիլդ — 28, 29
Ռուզվելտ Թեոդոր — 25, 132
Ռուզվելտ Կերմիտ — 9

Սայիդ Ալ Ղազալ — 131, 132
Սայիդ — 118
Սայիդ Հալիմ — 137
Սամի էս Սոլհ — 220
Սելվին Լլոյդ — 213
Սիրազ էդ-Դին — 232
Սեկստիլյոս — 246
Սպայդեր — 105, 222
Սպենսեր Ջ. Լ. — 123
Սարաուս — 134
Սուլիվան Ջոն — 119

Վանդերբիլտ — 23
Վենյարսկի — 194
Վերմիշև — 247
Վիլսոն Հընտիգտոն — 134
Վիլսոն Վուդրո — 151, 152
Վիլսոն Ռիվեր — 118
Վիտ — 246
Վոսկոպոյնիկով — 246

Տաժիև Ս. Ի. — 254
Տարբել Այդա — 24
Տաֆտ — 132
Տրումեն — 179, 191, 192, 194, 204

Ուալլաս Է. Պրատտ — 8, 9, 38, 39
Ուատսըն — 248
Ուեստելլ — 152
Ուրբինա Ռաֆայել — 33

Օրբեգոն — 30

Ֆաթեմի — 196
Ֆայսալ — 138, 144, 209
Ֆարուկ — 235
Ֆիշեր Լորդ — 28
Ֆրանկ Հոլմզ — 69, 142, 145
Ֆրանսիս Ջեղնել — 119

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Աբադան — 45, 52—55, 192, 196, 208, 256, 257
Աբկայիկ — 50, 70—75
Աբու-Դհարի — 82
Աբու Դուրբա — 83, 84
Աբու Հաղրիա — 70, 71
Աբու-Սուվեյր — 234
Ադսիկարայ — 87
Ադեն — 14, 53, 88, 92, 95, 143, 171, 257, 259, 264
Ադանա — 87
Ադրբեջան — 100, 110
Ազազ — 86
Ազնո — 56
Ալագոս — 35
Ալան — 63
Ալբանիա — 153, 154, 247
Ալեքսանդրիա — 209, 217, 273
Ալեքսանդրետտա — 119, 128, 205
Ալժիր — 18, 95, 116
Ալ Խարայիր — 82
Ալ-Հասա — 69, 146
Ահմադի — 78, 80
Ահվազ — 56, 99
Աղվանիստան — 88, 97, 98
Ամերիկա — 30, 31, 36, 40, 160—165, 167—170, 174, 175
Ամերիկայի Միացյալ Նահանգներ — 5, 6, 23, 24, 31, 32, 34, 36, 38, 42, 44, 57, 77, 95, 101, 102, 113—115, 121, 122, 124, 126—131, 134, 139, 140, 145, 147—149, 151, 154—159, 192, 194, 196, 207—210, 212—214, 220—222, 230, 232, 233, 236, 238—240, 247, 248, 252, 254—258, 260—263, 270, 271, 273—275
Այն Դար — 70, 75
Այն Զալահ — 63, 64
Անատոլիա — 116
Անգլիա — 5, 14, 16, 18, 30, 36, 57, 97, 98, 100, 101, 104, 109, 110, 138, 143, 144, 152, 156, 159, 160—162, 165—170, 174, 178, 180, 181, 189, 196—198, 206, 212, 215, 219, 220, 230—233, 247, 258, 262, 263, 273
Անդրհորդանան — 138, 149, 171, 215
Անկարա — 203, 220
Աղա-Ժարի — 42, 48, 53—55, 58
Անտի-Լիբանան — 266
Ասլշերոն — 245, 248
Աջլուն — 266
Ասլ — 83, 84
Ասիա — 19, 44, 97, 98, 155, 160, 168, 212, 219, 239, 265, 273
Ասիր — 135, 147
Ամմարի — 47, 48
Ավստրալիա — 14, 95, 161, 262
Ավստրիա — 18, 153, 154, 247, 275
Ատշան — 63
Արաբիա — 13, 38, 43, 50, 53, 67, 69, 77, 135, 141—144, 147, 261
Արաբական անապատ — 266
Արաբական երկրներ — 240, 242
Արաբական Թերակղզի — 265—267, 269—273
Արգենտինա — 17, 35, 95, 154, 167, 168, 257, 258, 262, 275
Արուբա — 158, 256, 257

Արևմտյան Անատոլիա — 123
Արևմտյան Եվրոպա — 14, 44, 73, 256, 267, 273
Արևմտյան Զագրոս — 46
Արևելյան Տեքսաս — 43
Աֆրիկա — 18, 19, 44, 86, 168, 212, 219, 239, 273

Բաբա Գարդուր — 60
Բագանահ — 74
Բալախանի — 246, 249
Բալկաններ — 116
Բախտիար — 109
Բահրա — 77
Բահրենյան կղզիներ — 11, 13, 53, 66—69, 77, 145, 148, 249, 257, 259, 264, 275
Բանդունդ — 239
Բանիաս — 86
Բաուոն Ռուժ — 53, 253—257
Բաղդադ — 46, 52, 60, 65, 88, 92, 95, 96, 119, 135—138, 204, 213, 221, 225
Բայ-Հասան — 63
Բասրահ — 52, 62, 63, 65, 203
Բաքու — 27, 246, 248, 253
Բելայիմ — 83
Բելգիա — 95, 160, 258, 262
Բանիաս — 62
Բեկաա — 86, 267
Բեյրութ — 74, 86, 125, 126, 128, 206
Բենդեր Աբբաս — 100
Բենդեր Մաշուր — 53
Բենդեր Շուվայխ — 80
Բեյտաուն — 53, 293
Բեերի — 85
Բելուջիստան — 51, 114
Բինադադի — 249
Բիրմա — 11, 19, 95, 154, 249
Բիթլիս — 133
Բոլիվիա — 34
Բոլու — 117
Բորնէո — 11, 20, 153, 259, 275
Բրազիլիա — 18, 35, 36, 196, 262
Բրուսա — 128
Բուդվնա — 253
Բուկա — 70
Բուշիր — 46, 51, 100—101
Բուրգան — 42, 78
Բուրդ-էլ-Աբար — 84
Բուսմահ — 63, 64

Գալիցիա — 249
Գան Յավնն — 86
Գաշ-Սարան — 47, 48, 52, 53, 58
Գարզան — 87
Գեմսա — 83, 84
Գերատ — 88
Գերմանիա արևմտյան — 18, 82, 257, 258
Գերմանիա — 11, 95, 101, 102, 120, 137, 151, 153, 154, 159, 160 203, 209, 222, 223, 247, 252, 262, 275
Գհաուար — 70—72
Գհաուար-Այն Դար — 71
Գրան-Շակո — 34
Գրոզնի — 249
Գուսայր — 63

Դալակ — 51
Դալիկ — 105
Դահանա — 146
Դահրան — 75, 208
Դամամ — 69, 70, 71, 73, 75
Դամասկոս — 86, 128, 229
Դանիա — 262
Դեշտե-Կավիր — 51
Դեշտե-Մարգո — 88
Դեր Զոր — 229
Դիյալ — 267
Դհոֆար — 82, 88
Դհոֆար-Օման — 82
Դհիլահ — 86
Դոմինիկյան ռեսպուբլիկա — 262
Դրոգորիչ (քաղաք) — 247
Դուրայ — 82
Դուխան — 81, 82

Եգիպտոս — 11, 31, 38, 50, 83, 84, 92, 95, 96, 116—118, 135, 147, 149, 154, 160, 167, 168, 171, 172, 176, 183, 194, 209—211, 217—221, 234—236,

238, 249, 262, 264, 266—271, 273, 275
Եմեն — 81, 82, 91, 142, 215, 264, 265, 267
Եվրոպա — 18, 28, 44, 65, 73, 117, 119, 151—153, 165, 171, 246, 247, 252, 255, 265, 273
Եվրոպական Ռուսաստան — 247
Երուսաղեմ — 227
Եփրատ — 265—267, 270

Զադրոս — 45, 48, 52, 267
Զանտե — 249
Զուրայր — 61—63

Էլ Ալաթ — 70, 71
Էլ Բիդա — 80
Էլբրուս — 265, 268
Էլ Ժաուֆ — 69—70
Էկվադոր — 17, 154
Էն-Նաբրա — 267
Էշ-Ջեզիրա — 265
Էսդրելոն — 267
Էր-Ռիյադ — 207, 209
Էրիտրեա — 171

Թառ — 225
Թավրիզ — 225
Թել-Սաֆիդ — 85
Թեհրան — 56, 99, 102, 110, 192, 194, 197, 198, 221, 225
Թյուրքիա — 38, 92, 94, 104, 116—118, 120, 122, 123, 125, 126, 129, 132, 136, 138, 154, 171, 178, 182, 183, 185, 188, 189, 191, 198, 207, 220, 221, 231, 239, 262
Թուրայիֆ — 73

Ժաուան — 63

Իզմիր — 124, 125, 128, 129
Ինդոնեզիա — 5, 11, 19, 44, 154, 188, 251, 257, 259, 274, 275
Իսպանիա — 95, 99, 102, 262
Իռլանդիա — 262
Իսրայել — 38, 67, 85, 86, 90, 92, 95, 141, 184, 212, 231, 238, 262, 266—268
Իտալիա — 18, 95, 152, 153, 160, 161, 203, 247, 257, 258, 262
Իրան — 11, 38, 39, 41, 49—51, 53, 56—59, 65, 67, 79, 90, 92, 96—100 113, 114, 123, 141, 154, 172, 176, 184—192, 201, 221, 223, 225, 249, 257, 259, 261, 264, 268, 270—275
Իրանական Ադրբեջան — 50, 223
Իրաք — 11, 38, 39, 41, 47, 49, 50, 52, 59, 61—65, 85, 89, 92, 96, 138—141, 144, 146, 147, 149, 154, 171, 173, 183, 203, 204, 215, 220, 221, 249, 261, 264—268, 270—275
Իրաք-էլ-Արաբ — 265
Իրուվուա — 247

Լալի — 58
Լատակիա — 205, 268
Լեհաստան — 11, 153, 154, 194, 247
Լիբանան — 38, 62, 67, 72, 77, 86, 87, 92, 95, 141, 170, 180, 183, 205, 206, 215—217, 220, 225—231, 264—268, 270—273
Լիբերիա — 263
Լինգահ — 100
Լյուտ — 51
Լոզան — 117
Լոնդոն — 99, 108, 119, 134, 174, 235
Լվով — 248
Լոս-Անժելոս — 195
Լուրիստան — 100

Խաբուր — 268
Խաղաղ Օվկիանոս — 265
Խանակին — 59
Խարբերդ — 124
Խորասան — 50, 59, 100
Խուզիստան — 46—49

Կազրին — 56
Կահիրե — 84, 128, 210, 218, 234—236, 239
Կայառահ — 63

Կանադա — 11, 15, 95, 147, 148, 154, 257, 258, 261, 262, 264, 275
Կանարյան կղզ.— 259
Կասաբ — 63
Կալիֆորնիա — 249, 252
Կասպից ծով — 114, 245, 260, 264
Կարաիբյան — 5, 10, 16, 44, 65, 157
Կարաչի — 99, 220
Կարմել — 85, 267
Կարմիր ծով — 83, 180, 265, 266
Կարուն — 99, 265, 275
Կաստամոն — 117
Կատար — 50, 66, 67, 81, 82, 91, 141, 142, 264, 275
Կայսումահ — 73—75
Կատիֆ — 50, 70, 71, 75
Կերբելահ — 119
Կիրկուկ — 42, 48, 59, 60, 62—64
Կիրենայկա — 171, 173—175
Կիշմ — 51
Կիպրոս — 171, 192, 213
Կոլոմբիա — 17, 153, 262, 275
Կուկաս — 246, 247
Կոստա-Ռիկա — 262
Կորեա — 181, 187, 262
Կոր-Մոր — 63
Կոստանդինուպոլիս — 127, 128, 130, 132, 134, 137
Կարաչ — 56
Կուբա — 18
Կուհ-ի Սեհ-Կալեյոուն — 47
Կուվեյտ — 11, 39, 41, 76, 78, 80, 81, 89, 92, 96, 119, 142, 148, 149, 249, 264, 274, 275
Կուրասաո — 53, 257
Կուրնուր — 85

Հաագա — 192—194
Հագիթա — 60, 62
Հաղրամաութ — 67, 89, 141, 264
Հալեպ — 229
Համա — 229
Հայաստան — 121, 122
Հայկական լեռ — 265
Հասա — 142
Հանովեր — 249
Հարավային Ամերիկա — 12, 15, 17, 26, 31, 33, 39, 40, 65, 164, 259, 262
Հարավսլավիա — 95
Հարավային Աֆրիկա — 95
Հարավային Իրաք — 62
Հարադհ — 70, 71
Հայֆա — 60, 62, 65, 86
Հաֆտ Կել — 43, 48, 52, 53, 58
Հեջազ — 135, 138, 144, 147
Հեռավոր Արևելք — 39, 44, 170, 191
Հոլլանդիա — 14, 95, 154, 160, 161, 202, 257, 258, 262
Հոլլանդական Հնդկաստան — 27, 31, 257, 258
Հոջալի — 87
Հորդանան — 67, 72, 74, 85, 89, 141, 183, 220, 231
Հնդկաստան — 11, 19, 31, 97, 105, 108, 109, 119, 154, 203, 212
Հնդկական Օվիկիանոս — 180, 265
Հյուսիսային Ամերիկա 39, 44, 65
Հյուսիսային Աֆրիկա — 220, 266, 267
Հոնդուրաս — 262, 264, 268
Հռոմ — 245, 253
Հուրան — 229
Հովզե Միանտալ — 114
Հուրղադա — 83, 84
Հուիյահ — 70, 71
Հունաստան — 263
Հունգարիա — 153, 154, 247

Ղոր — 267

Ճապոնիա — 95, 154, 160, 161, 170, 201, 257, 259, 262, 273

Մասգալա — 70, 71
Մագուա — 78
Մազալ — 85
Մալայա — 31—35, 154
Մալտա — 95, 171
Մախուլ — 63
Մահմարա — 110
Մամատայն — 51
Մայդան-ի Նաֆտուն — 108, 109
Մայմեն — 88

Մարաղա — 225
Մարաշ — 124
Մասժիդ-ի Սուլեյման — 48, 51—53, 55, 58, 245
Մարոկկո — 18, 263
Մեծ Բրիտանիա — 95, 127, 170, 172, 183, 188, 189, 210, 213, 214, 216 221, 257
Մեծ Զաբ — 267
Մեկկա — 143, 144
Մինա Աբդուլլա — 81
Մենա Սաուդ — 81
Մեշհեդ — 88, 100
Մեռյալ ծով — 85, 266, 268
Մերձավոր Արևելք — 8, 10, 14, 44, 45, 53, 62, 72, 83, 86, 87, 98, 105, 110, 115, 119, 125, 128, 130, 138, 140, 142, 172, 173, 175, 205, 206, 208, 210, 212—220, 222, 223, 229, 230, 232, 233, 252, 265, 271, 273
Մերձավոր և Միջին Արևելք — 5, 7, 9, 10, 12, 13, 19, 34—46, 50, 56, 77, 78, 81, 88, 97, 101, 102, 104, 121, 122, 124, 126, 129, 131, 132, 134, 142, 147, 149, 151, 155, 156, 168, 173, 175—180, 182, 185, 187, 206, 212, 219, 222 223, 236, 238—242, 256, 268—273
Մերձկասպյան ցածրավայր — 266
Մերսիկա — 11, 14, 15, 28—31, 33, 34, 154, 250, 254, 258, 261, 262, 274, 275
Մերսիկյան ծոց — 158
Մինա էլ Ահմադի — 80
Մինախի — 86
Միջին Արևելք — 9
Միջերկրական ծով — 55, 60, 62, 72, 74, 77, 85, 86, 116, 119, 180, 265—267
Մոսկվա — 254
Միջագետք — 47, 59, 116, 119, 135
Մուհամմարա — 99, 100
Մուհարաք — 67
Մասկատ — 67, 90, 141, 143, 264
Մուսուլ — 31, 59, 60, 63, 89, 135—138, 140, 142, 151, 152
Մուֆտիեհ — 65

Յարբոկ — 269
Յալա — 249
Յարմուկ — 268
Յուդեա — 266

Նաբի Մուսա — 85
Նաժմահ — 63
Նահր Աուժան — 268
Նահր-էլ-Ասի — 266, 267
Նահր-էլ-Բելիք — 267
Նահր-էլ-Քեբիր — 266
Նահր-էլ-Քելբ — 267
Նահր-Իբրահիմ — 267
Նահր-Ոմար — 64
Նարիյահ — 74
Նաֆտեհ Դաղ — 249
Նաֆտ Խանեհ — 59, 64
Նաֆտ-Սաֆիդ — 48, 52, 58
Նաֆտ-ի Շահ — 52, 55, 58
Նյու-Յորք — 25, 121, 130, 132, 196, 220
Նոր-Գվինեա — 19
Նեղոս — 266, 268, 270
Նեա — 260
Նոր Զելանդիա — 262
Նորվեգիա — 158, 262
Նոր Կվինեա — 274

Շահրուդ Մեշեդի — 56
Շատ-էլ Արաբ — 52, 267
Շիա-Սուրխ — 51
Շեղգոմ — 70—72, 75
Շթաուբա — 228
Շիլի — 262
Շվեդիա — 95, 159, 262
Շվեցարիա — 262
Շուշտար — 99

Զարի Կապուլ — 88
Զեղոբ Գոտի — 96, 149, 275
Զելիկեն — 249
Զինաստան — 26, 31, 170, 246
ԶԺՌ — 241
Զեխոսլովակիա — 221
Զիլի — 95

Պաղանում — 53, 58
Պակիստան — 95, 97, 121, 122, 263
Պալմիր — 86
Պանամա — 159
Պարագվայ — 34
Պաղեստին — 86, 116, 122, 134, 135, 149, 154, 171, 213, 215, 219, 271
Պայմանագրային Օման — 91, 141, 142, 148, 264
Պարսկաստան — 101—106, 108—110, 184, 246
Պանամա — 263
Պարսից ծոց — 46, 49, 51, 52, 67, 70, 73, 74, 77, 80, 81, 82, 100, 109, 112, 119, 144, 180, 208, 265—268
Պենսիլվանիա — 240, 250
Պնշելբրոն — 249
Պետահ-Թիկվա — 86
Պերու — 17, 55, 263, 275
Պուշտ-ի Կուհ — 46, 47
Պորտ-Արթուր — 53, 256, 257
Պորտուգալիա — 95, 167, 262
Պրագա — 247

Ջերել Աչան — 266
Ջերել Ակրա — 266
Ջերել Անսարիա — 266
Ջերել Դրուզ — 205, 229
Ջերել Դուխան — 50, 68
Ջերել Ջավիա — 267
Ջերել Լիբնան — 266
Ջերել Շարբի — 266
Ջերել Շեյխ — 266
Ջերել Սինջար — 265
Ջերել Ուզդոմ — 85
Ջիդդա — 146, 147
Ջեզիրե — 86, 205

Ռամանդաղ — 87
Ռամ Հորմուզ — 51
Ռաշա — 227
Ռաս Ադ Ջոբ — 81
Ռաս Ալ Միշաբ — 70, 74
Ռաս Դարիբ — 83, 84
Ռաս Մատարմա — 83, 84
Ռաս Տանուրա — 73, 75, 77, 257
Ռաուդաթայն — 64, 78
Ռաֆհան — 74
Ռեխմե — 85
Ռեսան — 87
Ռումալիա — 62—64
Ռումինիա — 11, 18, 31, 129, 153, 154, 247, 249,
Ռուսաստան — 10—12, 28, 97, 99, 101, 109, 119, 129, 247, 260

Սայդոն — 62, 72—74, 86
Սախալին — 154, 249
Սայքս Պիկո — 139, 151
Սան-Ռեմո — 31, 139
Սաուդական Արաբիա — 11, 39, 46, 49, 50, 53, 66, 67, 69, 70, 72, 73, 77, 80, 86, 91, 92, 96, 114, 140, 142, 144—149, 154, 171, 178, 180, 182, 184, 207—209, 215—217, 220, 239, 240, 249, 257, 259, 262, 265, 274, 275
Սաուդական Արաբիայի Ջեզոք գոտի — 91
Սաֆանիյահ — 70, 71
Սերայ-Հոջայ — 88
Սիամ — 31, 264
Սինգապուր — 31, 95
Սինայի թերակղզի — 85
Սիտրա — 67, 77
Սիրիա — 38, 67, 72, 86, 95, 116, 119, 122, 134, 135, 138, 139, 141, 149, 154, 171, 172, 176, 181, 183, 204—206, 213, 215, 216, 218, 220, 225, 226, 228, 229, 231, 264—268, 270, 272, 273
ՍՍՌՄ — 6, 10, 14, 50, 111, 114, 154, 209, 225, 235, 241, 245, 253, 254, 265
Սոմալի — 171
Սուդան — 171, 213, 232, 233
Սուդր — 83, 84
Սուեզ — 50, 84
Սուեզի ծոց — 50, 83
Սուեզի ջրանցք — 55, 72, 73, 119, 212, 213, 232, 234, 238, 265, 273
Սուրախանի — 245

Սումմատրա — 19, 26
Սև ծով — 116
Վան — 133
Վաշինգտոն — 31, 125, 168, 171, 175, 185, 204, 207, 209, 239
Վաֆրա — 91
Վենեսուելա — 10, 11, 14, 16, 28, 31—34, 41, 43, 154, 155, 251, 257, 258, 262, 274, 275
Վիշի — 206
Վոլգա — 260
Վրաստան — 123

Տավրոս — 56, 266
Տաջիկական ՍՍՌ — 88
Տեկսաս — 250
Տիգրանակերտ — 247
Տիգրիս — 50, 63, 265, 267, 270
Տրապիզոն — 117
Տրինիդադ — 154, 258, 275
Տրիպոլի — 60, 62, 65, 86, 97, 98, 116, 119, 171

Յեյլոն — 31, 95

Ուադի Ֆեյրան — 83, 84
Ում-Գուդայր — 78
Ուրմիա — 267
Ուրուգուայ — 95, 262
Ումանիլա — 70—72
Ոմմ Նասան — 67
Ում Սայիդ — 82

Փարիզ — 249
Փոքր Ասիա — 119
Փոքր Զաբ — 267

Քիրման — 100
Քուրտ — Կուլակ — 86

Օման — 67, 91, 142, 143
Օմանի ծոց — 114
Օկլահոմա — 252
Օյլ Կրիկ — 21

Ֆադիլ — 70, 71
Ֆաո — 109
Ֆարսան — 135
Ֆերդանա — 250
Ֆիլադելֆիա — 175
Ֆիլիպիններ — 31, 95
Ֆորմոզա — 95
Ֆինլանդիա — 262
Ֆրանսիա — 11, 14, 16, 18, 95, 138, 139, 151—153, 160, 161, 181, 284, 206, 214, 220, 227, 231, 247, 252, 257, 258, 262

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ադեն Պետրոլյում Ռիֆայնըրի — 92
Ազգային դիմադրության շարժում — 199
Ազգային պլանավորման ասոցիացիա — 169—170
Ազգերի լիգա — 112, 138, 139
Ամերիկյան առևտրական պալատ — 132
Ամերիկյան ավետարանական ընկերություն — 121
Ամերիկրն Բորդ օֆ Ֆորեյն Միշընզ — 121, 123, 125, 126
Ամերիկյան գյուղատնտեսական Միսիա — 209
Ամերիկրն Էկսպորտ Լայնզ — 131
Ամերիկրն Ինդիպենդընտ Օյլ Կոմպանի — 58, 90
Ամերիկյան Ռազմական Միսիա — 205
Ամերիկյան Տնտեսական Միսիա — 179
Ամերիկրն Օվրսիզ — 87
Ամիրանիան Օյլ Կոմպանի — 114
ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտ — 124—126, 134, 140, 146, 149, 156, 165, 166, 192, 208
Անատոլիշ Այզընբահն Դեգելշաֆտ — 135
Անգլո Իջիպշըն Օյլֆիլդ Կոմպանի — 92, 149
Անգլո Իրանիան Օյլ Կոմպանի — 52, 54, 57, 65, 89, 90, 91, 107, 114, 115, 149, 187, 188, 191, 193, 194, 197, 200—204
Անգլո Պերժըն Օյլ Կոմպանի — 52, 57 60, 69, 107, 111, 112, 113, 136, 137, 140, 152
Անգլո Սաքսոն Պետրոլյում Կոմպանի — 89, 91, 140
Անգլո-Էկվադորյան Օյլֆիլդ — 17
Անգլո-Օտտոման Օյլֆիլդ Լիմիտեդ — 135
Ասոշիեյտեդ Պրես — 196
Ատլանտիկ Օյլ Կոմպանի — 58, 90
Արաբական Լիգա — 205, 214, 218, 219, 220
Արաբիան Ամերիկրն Օյլ Կոմպանի — 73, 77, 91, 93, 208, 209
Արամկո — 73, 77, 192, 209
Աֆրիկան Իստերն Կոնսեշընզ — 136

Բախտիարի Օյլ Կոմպանի — 108
Բահրեյն Պետրոլյում Կոմպանի — 68, 88, 92, 148
Բաղդադ-Բասրահ Կոնսեշընզ Լիմիտեդ — 135
Բաղդատի պակտը — 214, 222, 241
Բանկինգ Կորպորեշընզ — 51
Բանկ-ի Մելլի-ի Իրան — 100
Բասրահ Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ — 89, 92
Բատաֆուշ Պետրոլյում Մաատուշալիժ — 57
Բատաֆուշ Պետրոլյում Շիրքեթի — 87
Բարբեր Նավային ընկերությունը — 130
Բեռլին-Բաղդադ-երկաթգծային ընկերությունը — 133, 135
Բեր-Սաերնգ Էնդ Կոմպանի — 86
Բիրմա Օյլ Կոմպանի — 57, 107
Բոլսա Չիկա Օյլ Կորպորեշընզ — 87

Բրիտանական ռազմա-ծովային մինիստրությունը — 52
Բրիտիշ Կոնտրոլլդ Օյլֆիլդ — 16
Բրիտիշ Պետրոլյում Կոմպանի — 16, 34, 52, 54, 65, 90, 149, 203
Բրիտիշ Տանկերզ Կոմպանի — 54, 57
Բրիտիշ Օտտոման Օյլ Սինդիկեյտ — 135
Բրիտիշ Օվերսիզ Էրվեյզ — 183
Բրուվեր, Ուատսոն և ընկերություն — 249

Գլֆ Օյլ Կորպորեյշն — 13, 17, 58, 69, 89, 90, 146, 149, 203
Գների հսկողության վարչություն — 169

Դալմին Միլանո ընկերություն — 84
Դ'Արսի Էքսպլորեյշն Կոմպանի (Անգլո-Իրանիան) — 89, 91
Դելաուար Օյլ Կոմպանի — 114
Դիլման, Բերգբաում և Բենհայմ ընկերություն — 82, 91
Դիլման Մոնտան ընկերություն — 87
Դհը Կոնսոլիդեյտեդ Օյլֆիլդ օֆ Սիրիա կոմպանի — 134
Դհը Հելլենիկ Տրանսատլանտիկ Ստիմ Նավիգեյշն Կոմպանի — 130
Դհոֆար-Սիտիզ Սերվիս Կոմպանի — 82, 88
Դյուզբուրգ ընկերություն, — 102
Դոհենի Սոոն Դրիլ Կոմպանի — 29
Դրեսեր Ինդուստրիզ ընկերություն — 255

Եմին Դեվելոպմենտ Կորպորեյշն — 83, 91
Երրորդ ուժի պարտիան — 199

Էսսո-Ստանդարդ Ինկորպորեյտեդ — 87
Էքսպորտ-Իմպորտ Բանկ — 181

Թյուրքիյե Պետրոլերի — 87, 93

Ինգլիշ Լեվընտ Կոմպանի — 129
Ինգլիշ-Տերկիշ Լեվընտայն Կոմպանի — 119
Ինդիա Բորդ օֆ Կոնտրոլ — 119
Ինտերնեյշընալ Իջիպշըն Օյլ Կոմպանի — 83
Ինտերնեյշընալ Պետրոլյում Կոմպանի — 17
Իստ Ինդիա Կոմպանի — 119
Իստերն Պետրոլյում Կոմպանի — 134
Իստամբուլ Թարիի Գազ Լիմիտեդ Շիրկետի — 87
Իստերն Գրլֆ Օյլ Կոմպանի — 149
Իստերն Ջենեռալ Սինդիկեյտ — 142, 148
Իսրայել-Ամերիկեն Օյլ Կորպորեյշն — 35, 86
Իրանսե Ասրդոլիե Ռաֆինաժ Մաստրսշապիժ — 90
Իրանսե Ասրդոլի Էքսպլորատիե էն Պրոդուկտիե Մաստսշապիժ — 90
Իրանի ժողովրդական պարտիա — 199
Իրանի Նավթի Ազգային ընկերություն — 198
Իրանիան Պայպ Լայն Կոմպանի — 114
Իրան պարտիա — 199
Իրանիան Օյլ Ռիֆայնինգ — 92
Իրաք Պետրոլյում Կոմպանի — 61, 67, 85, 89, 90—93, 135, 140, 141, 146, 149

Լագո Օյլ էնդ Տրանսպորտ Կոմպանի — 16
Լապիդոթ-Իսրայել Պետրոլյում Կոմպանի — 85
Լինչ ընկերություն — 99

Խանակին Օյլ Կոմպանի Լիմիտեդ — 69, 89, 92

Մովային Տրանսպորտի Դեպարտամենտ (ԱՄՆ-ի) — 7

Կալիֆորնիա-Արաբիան-Ստանդարդ Օյլ Կոմպանի — 147
Կարաիրյան Պետրոլյում Կոմպանի — 16
Կեյ դ'Օրսեյը — 139
Կոլոնիալ Օֆֆիս — 149
Կոմպանի դե Պետրոլ դը լա Թյունիզի — 19
Կոմպանի ֆրանսեզ դե Պետրոլ — 57, 89—91, 140, 203
Կոմպանհյա Պետրոլես Նացիոնալ — 85
Կոնորադո Պետրոլյում Կոմպանի — 84

Կոնսոլիդեյտեդ Ռիֆայնըրիզ Լիմիտեդ — 93
Կոնսոլիդեյտեդ Օյլ Կոմպանի — 13
Կոնսորցիում — 53, 55, 56, 90, 92, 115, 199, 202, 203
Կուվեյտ Օյլ Կոմպանի — 80, 93, 149
Կրեոլ Սինդիկատ — 16, 34
Կրուպ (տրեստ) — 57, 102

Հաագայի Միջազգային Դատարան — 193, 196
Համբուրգ Ամերիկըն էնդ Լեվանտ Սամշիպ Կոմպանի — 130
Հանկոկ Օյլ Կոմպանի — 58, 90
Հըսկի Օյլ Կոմպանի — 86, 87
Հնդ-Եվրոպական հեռագրական ընկերություն — 99, 110, 111
Հոյ և ընկերությունը — 105

Մաշինո էկսպորտ — 255
Մեդիտերանեան Ռիֆայնինգ Կոմպանի — 93
ՄԵԴՕ (Բաղդադի պակտ) — 5, 220
Մենդի Դրանդե Օյլ Կոմպանի — 34
Մերսեդես Օյլ Կոմպանի — 34
Մերձավոր Արևելքի Պաշտպանության Կազմակերպություն — 220
Մեքսիկըն Իգլ Կոմպանի — 30—32
Մեքսիկըն Պետրոլյում օֆ Կալիֆորնիա — 29
Միավորված Ազգերի Կազմակերպություն (ՄԱԿ) — 196—198, 200
Միդլ Իստ Պայպ Լայն Կոմպանի — 55
Միդլ Իստ Սրպսլայ Սենտրը — 171—178, 205, 211
Միներարիա ընկերություն — 84
Միջին Արևելյան հրամանատարությունը — 214, 220, 233, 234
Մորիլ Օյլ Թյուրք Անոնիմ Օրթաքլըղը (Սոկոնի) — 87
Մորաիտիս Ստիմշիպ Կոմպանի — 130
Մուսուլ Պետրոլյում Կոմպանի Լիմիտեդ — 90

Յասիմենտոս Պետրոլիֆերոս Ֆիսկալես — 17

Նաշընալ Բանկ Օֆ Տերկիյ — 137
Նաշընալ Իրան Օյլ Կոմպանի — 92
ՆԱՏՕ (Ատլանտյան Պակտ) — 5
Նեդրլանդիշը Հանդելզ Մաատսշապիժ — 27
Նիր Իստ Դեվելոպմենտ Կորպորեշըն — 89
Նիր Իստ Կորպորեշըն — 140
Նյու-Յորքի առևտրական պալատ — 132
Նյու-Յորք Բոյդ օֆ Տրեյդ — 132

Շելլ Յունյըն Օյլ Կորպորեշըն — 13
Շելլ Տրանսպորտ էնդ Տրեյդինգ — 27

Ուայտ էնդ Կոմպանի — 138

Չեստերի խումբը — 133, 134
Չերչ Միշընարի Սոսայիտի — 102

Պան Ամերիկըն էր Վեյզ (ընկերություն) — 35
Պան Ամերիկըն Պետրոլյում Կոմպանի — 29
Պան Ամերիկըն Ուորլդ էրվեյզ (ընկերություն) — 183
Պանտեպեկ Օյլ Կոմպանի — 34
Պասիֆիկ Վեստերն Օյլ Կորպորեշըն — 58, 90, 91
Պատերազմական ժամանակաշրջանի նավթային վարչություն — 156, 158
Պարսկաստանի Դիսկոնտ բանկ — 100
Պարսկաստանի Շահընշահի բանկ — 99, 100
Պետական, Երկրաբանական վարչություն (ԱՄՆ.) — 7
Պետրոլյում Դեվելոպմենտ Կոմպանի Լիմիտեդ — 90, 91
Պետրոլյում Դեվելոպմենտ (Տրանսժորդան) Լիմիտեդ — 149
Պետրոլյում Դեվելոպմենտ (Կատար) Լիմիտեդ — 91, 148
Պետրոլյում Դեվելոպմենտ (Պալեստայն) Լիմիտեդ — 90, 149
Պետրոլյում Դեվելոպմենտ (Տրուշըլ Օման) Լիմիտեդ — 91, 148

Պետրոլյում Կոնսոլիդեյթեդ Լիմիթեդ — 88, 89
Պետրոլյում Սեկյուրիտի Կոմպանի — 29
Պետրոլիեոս Մեքսիկանոս — 15
Պետրոլ դը Կարակաս — 16
Պետրոֆինա — 84
Պերժըն Բանկ Մայնինգ Ռայց Կորպորեյշըն — 51, 106

Ջուֆֆա Օյլֆիլդ ընկերություն — 134
Ջենեռալ Սինդիկեյտ — 69
Ջիլիլանդ Օյլ Կորպորեյշըն — 87
Ջոն Մովլեմ Լիմիթեդ — 56

Ռայխ Բանկ — 102
Ռաֆիդայն Օյլ Կոմպանի — 60
Ռաֆինըրի դը Պետրոլ — 99
Ռիչարդ-Կոստեյն-Ջոն-Բրաուն ընկերություն — 56
Ռիչմոնդ Պետրոլյում Կոմպանի — 34
Ռիչֆիլդ Կոմպանի — 58, 82, 90
Ռոկ Օյլ Կոմպանի — 249
Ռոյըլ Դեչ Շելլ — 15—17, 19, 25—28, 30, 31, 33, 34, 36, 90, 137, 140, 149, 152, 153, 203

Սահարա Պետրոլյում Կոմպանի — 84
Սայպրըս Օյլ Տրեստ — 135
Սան Յասինտո Օյլ Կոմպանի — 58, 90
Սաութ Ամերիկըն Գոլֆ — 17
ՍԵԱՏՕ — 5
Սենտրալ Ասոսիեյշըն — 23
Սիգնալ Օյլ էնդ Գազ Կոմպանի — 58, 90
Սինկլեր Պետրոլում Կոմպանի — 34
Սինկլեր Օյլ Կոմպանի — 113, 114
Սիտիզ Սերվիս Կոմպանի — 13, 82, 84, 88
Սիրիա էկսպլորեյշըն Կոմպանի — 134
Սիրիա Պետրոլյում Կոմպանի Լիմիթեդ — 149
Սոդհերն Կալիֆորնիա Պետրոլյում Կորպորեյշըն — 84
Սոսիետե Անտրեպոզ (ընկերություն) — 56
Սոսիետե դ' էտյուդ Ֆերովիեր — 56
Սոսիետե Ժենեռալ դը Կոնստրուկսիոն էլեկտրիկ է Մեքանիք — 56
Սոսիետե դ' էտյուդ դը Ռիշերշ է դ' էքսպլուատասիոն — 18
Սոսիետե Նոր Աֆրիկեն դը Պետրոլ — 19
Սոկոնի-Մորիլ Օյլ Կոմպանի — 58
Սոկոնի-Վակում Օյլ Կոմպանի — 13, 34, 89, 90, 94, 114, 192, 203
Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Նյու-Յորք — 134
Ստանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիա — 13, 25, 58, 68, 88, 90, 91, 145—148, 203
Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Նյու-Ջերզեյ — 9, 13, 17, 23, 25, 38, 57, 89 90, 91, 119, 186, 203
Ստանդարդ Օյլ օֆ Ինդիանա — 13, 25
Ստանդարդ Օյլ Կոմպանի օֆ Բոլիվիա — 34, 35
Ստանդարդ Օյլ օֆ Օհայո — 58, 90
Ստանդարդ Օյլ խումբը — 15, 17, 21, 24—31, 34, 36, 113, 114, 115, 152
Ստիուարց էնդ Լոյդ ընկերություն — 56
Ստյուվըրտ Մեմորիալ Կոլեջ — 102

Վերակառուցման և Զարդացման Միջազգային բանկ — 198
Վենեսուելա Պետրոլյում (ընկերություն) — 16
Վենեսուելա Օյլ Կոնսոլիդեյթ — 16
Վուդմաս և Օֆֆլեյ ընկերություն — 129

Տայդ Վատեր Ասոսիեյտեդ Օյլ Կոմպանի — 58, 87, 90
Տապլայն (ընկերություն) — 72, 73, 77, 80, 86
Տեկսաս Կորպորեյշըն — 13, 34, 58, 192
Տեկսաս Օյլ Կոմպանի — 68, 88, 90, 91, 114, 146, 148, 203
Տերկիշ Պետրոլյում Կոմպանի — 135, 137, 140
Տիֆֆրաու Բերդեր (ընկերություն) — 102
Տրանս-Ատլանտիկ էրլայնզ (ընկերություն) — 183
Տրանսժորդան Պետրոլյում Կոմպանի — 89

Տրանս-Արաբիան Պայպ Լայն Կոմպանի — 72, 73, 77
Տրոպիկալ Օյլ Կոմպանի — 17

Փոխատու բանկ — 100

Օսմանյան Կայսերական Բանկ — 118
Ստանդարդ-Ամերիկան Դևելոպմենտ Կոմպանի — 133, 135
Օվերսիզ Կոնսալտանտ Ինկորպորեյտեդ 186, 187

Ֆարսան Այլենդ Օյլ Կոմպանի — 133
Ֆելդման Օյլ էնդ Գազ կոմպանի — 87
Ֆերոստալ (ընկերություն) — 102
Ֆերստ էքսպլոյտեշըն Կոմպանի — 107, 108

Ֆիլիպս Պետրոլյում Կոմպանի — 13, 34
Ֆլորիո Ռուբբատինո Լայնզ — 130
Ֆորեյն Օֆֆիս — 103, 105, 109, 137, 138, 141, 143—146, 187, 213, 215, 220, 222, 226

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՌՈՒՍԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

Муравьев И. М. и Крылов А. П. Эксплуатация нефтяных месторождений, часть I, Баку, 1950.

Тихонов Н. Ю. Нефт. Изд. III, М.—Л., 1949.

Требин Ф. А. Нефтепроницаемость песчаных коллекторов. М.—Л., 1949.

Щелкачев В. Н. и Ланук Б. Б. Подземная гидравлика. М.—Л. 1949.

Андреев Г. Экспансия нефтяных монополий США и ее империалистический характер, „Международная жизнь", № 6, 1955.

Жуков Е. В. Конференция стран Азии и Африки в Бандунге и ее историческое значение. „Международная жизнь", № 5, 1955.

Кузминов И. Углубление общего кризиса капитализма после второй мировой войны. „Международная жизнь", № 1, 1955.

Леонтьев И. Ленинская теория империализма и современность. „Международная жизнь", № 4, 1955.

Редакционная. Заговор против мира в Азии. „Международная жизнь", № 3, 1955.

Авсенов М. Англо-американская борьба за нефть после второй мировой войны. М., 1954.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Գլուխ առաջին

Կապիտալիստական երկրների նավթարդյունաբերության վիճակը: Պայքար նավթի աղբյուրների և շուկաների համար 7

Գլուխ երկրորդ

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթային հարստությունների ընդհանուր բնութագիրը 38

Գլուխ երրորդ

Օտարերկրյա իմպերիալիզմի ներթափանցումը Մերձավոր ու Միջին Արևելք և պայքարը նրանց միջև նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը 97

Գլուխ չորրորդ

Օտարերկրյա իմպերիալիստների հակասությունները Մերձավոր և Միջին Արևելքում երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և այդ հակասությունների սրումը պատերազմից հետո . 150

Վերջաբանի փոխարեն 238
Հավելված 243
Անձնանունների ցուցակ 276
Տեղանունների ցուցակ 279
Կազմակերպությունների և ընկերությունների ցուցակ 286
Օգտագործված ռուսերեն գրականության ցուցակ 290

ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԻ ԹՐՅԱՆ

Նավթարդյունաբերության տեղաբաշխումը
և անգլո ամերիկյան իմպերիալիստների հակասությունները
Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներում

Պատ. խմբագիր Ա. Մ. Եղիազարյան
Հրատ. խմբագիր Ա. Ս. Խաչատրյան
Տեխ. խմբագիր Լ. Ա. Ազիզբեկյան
Վերստուգող սրբագրիչ Ա. Հ. Ալանյան

ՎՖ 06353 Հրատ. № 1384 ԽՀԽ 375 Պատվեր 443 Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 24/XI 1956 թ., ստորագրված է տպագրության 10/V 1957 թ., տպ. 18¼ մամուլ+2 ներդիր: Հրատ. 16,8 մամուլ,
Թուղթ 60×92¹/₁₆ . Գինը կազմով 10 ռ. 60 կ.

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան 124:

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպվել է	Պետք է լինի
42	տողատ. վ. 2	1949	1946
51	վ. 12	Նոկոս Դ'Աբսիի	Նոքս Դ'Արսիի
107	վ. 16	միջնուրդությամբ	միջնորդությամբ
121	ն. 19	տո: 1810 թվականին	տո, 1819 թվականին
173	ն. 2	Սիրենայկայի	Կիրենայկայի

Fa.64.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0014751

ЦЕНА
Б
от 11364